

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

**Պողոսի նամակները անհանգիստ
եկեղեցուն:**

1 և 2 Կորնթացիս

ԲՈՒ ԱԹԼԻ
ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՅ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 6

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ,

ՏԵԽԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս մեկնաբանության գրքում կիրառվող հապավումները.....	6
Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը ձեզ օգնել	8
Աստվածաշունչը ճիշտ կարդալու ուղեցույց: Ստուգված ճշմարտության ինքնուրույն ուսումնասիրություն.....	11
1 Կորնթացիա թղթի ներածությունը.....	21
1 Կորնթացիա 1.....	29
1 Կորնթացիա 2.....	81
1 Կորնթացիա 3.....	105
1 Կորնթացիա 4.....	123
1 Կորնթացիա 5.....	141
1 Կորնթացիա 6.....	154
1 Կորնթացիա 7.....	177
1 Կորնթացիա 8.....	208
1 Կորնթացիա 9.....	220
1 Կորնթացիա 10.....	241
1 Կորնթացիա 11.....	261
1 Կորնթացիա 12.....	288
1 Կորնթացիա 13.....	312
1 Կորնթացիա 14.....	324
1 Կորնթացիա 15.....	349
1 Կորնթացիա 16.....	386
2 Կորնթացիա թղթի ներածությունը.....	401
2 Կորնթացիա 1.....	408
2 Կորնթացիա 2.....	430
2 Կորնթացիա 3.....	443
2 Կորնթացիա 4.....	456
2 Կորնթացիա 5.....	469
2 Կորնթացիա 6.....	487
2 Կորնթացիա 7.....	500
2 Կորնթացիա 8.....	509
2 Կորնթացիա 9.....	524
2 Կորնթացիա 10.....	538
2 Կորնթացիա 11.....	547
2 Կորնթացիա 12.....	560
2 Կորնթացիա 13.....	576
Հավելված 1: Հունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները.....	585
Հավելված 2: Տեքստային քննադատություն.....	597
Հավելված 3: Բացատրական բառարան.....	602
Հավելված 4: Վարդապետական սկզբունքներ.....	615

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐ

Կանչված, 1 Կոր. 1:1.....	30
Եկեղեցի(<i>ekklesia</i>), 1 Կոր. 1:2.....	32
Նոր Կտակարանի սրբություն/սրբացում, 1 Կոր. 1:2.....	33
Սուրբեր, 1 Կոր. 1:2.....	34
Խաղաղություն (<i>eirēnē</i>) [Նոր Կտակարան], 1 Կոր. 1:3.....	36
Հայր Աստված, 1 Կոր. 1:3.....	37
Գոհություն, 1 Կոր. 1:4.....	39
Անմեղ, անարատ, հանցագուրկ, առանց նախատինքի, 1 Կոր. 1:8.....	44
Հավատք, վստահություն և հավատարմություն Հին Կտակարանում (778), 1 Կոր. 1:9.....	47
<i>Koinōnia</i> (հաղորդակցություն), 1 Կոր. 1:9.....	51
Աստծո Որդին, 1:9.....	51
Մխիթարություն, 1 Կոր. 1:10.....	53
Տիրոջ Անունը Նոր Կտակարանում, 1 Կոր. 1:10.....	54
Մկրտություն, 1 Կոր. 1:17.....	57
Այս դարը և եկող դարը, 1 Կոր. 1:20.....	62
ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը, 1 Կոր. 1:21.....	63
Համբերել, 1 Կոր. 1:21.....	65
Մեսիա, 1 Կոր. 1:23.....	67
Ընտրություն/նախասահմանություն և աստվածաբան. հավասարակշռ. կարիքը, 1 Կոր. 1:24.....	68
Մարմին (<i>SARX</i>), 1 Կոր. 1:26.....	71
Օրինական ուժը վատնել(<i>katargeō</i>), 1 Կոր. 1:28.....	72
Արդարություն, 1 Կոր. 1:30.....	74
Փրկագին/փրկանք/ազատագրում, 1 Կոր. 1:30.....	77
Լուսավորում, 1 Կոր. 2 ներած.....	82
Ներշնչանք, 1 Կոր. 2 ներած.....	83
Պողոսն օգտագործում է « <i>HUPER</i> » նախդիրը բարդ բառեր կազմելու համար, 1 Կոր. 2:1.....	84
Խորհուրդ, 1 Կոր. 2: 1.....	85
Ավարտ կամ իրականացում (<i>TELOS</i>), 1 Կոր. 2:6.....	89
Հավիտյան, 1 Կոր. 2:7.....	91
Փառք (<i>doxa</i>), 1. Կոր. 2:7.....	94
Աստծո Անունները, 1 Կոր. 2:8.....	94
Երրորդություն, 1 Կոր. 2:10.....	98
Սուրբ Հոգին որպես Անձ, 1 Կոր. 2:10.....	99
Կրակ, 1 Կոր. 3:13.....	113
Հունարեն «փորձություն, փորձ» տերմինները և դրանց նշանակության երանգները, 1 Կոր. 3:13.....	114
Հունարեն բայերի ժամանակաձևերը փրկության մասին, 1 Կոր. 3:15.....	116
Սուրբ, 1 Կոր. 3:17.....	118
Պողոսն օգտագործում է « <i>KOSMOS</i> » տերմինը, 1 Կոր. 3:22.....	121
Ծառա առաջնորդ, 1 Կոր. 4:1.....	124
Ուղարկված, 1 Կոր. 4:9.....	134
Աստծո թագավորությունը, 1 Կոր. 4: 20.....	138
Հոգին (<i>PNEUMA</i>) Նոր Կտակարանում, 1 Կոր. 5:3.....	145
Պարծանք, 1 Կոր. 5:6.....	148
Թթխմոր, 1 Կոր. 5:6.....	149
Չար արարքներն ու առաքինությունները Նոր Կտակարանում, 1 Կոր. 5:9.....	151
Ուխտադրժում, հավատուրացություն, 1 Կոր. 6:10.....	161

Հավատացյալի ժառանգությունը, 1 Կոր. 6:10.....	163
Ցանկացած պահին Հիսուսի վերադարձը, բայց ոչ դեռ, 1 Կոր. 6:14.....	171
Կանայք Աստվածաշնչում, 1 Կոր. 7:5.....	182
Ծումապահություն, 1 Կոր. 7:5.....	185
Անձնական չարը, 1 Կոր. 7:5.....	186
Պողոսի հորդորը ստրկության դեմ, 1 Կոր. 7:21.....	197
Հարստություն, 1 Կոր. 7:30.....	201
Մարմին և Հոգի, 1 Կոր. 7:34.....	204
Խրատել, շինություն լինել, գորացնել, 1 Կոր. 8:1.....	210
Մոնոթեիզմ, 1 Կոր. 8:5.....	212
Կործանում, 1 Կոր. 8:11.....	218
Կնիք, 1 Կոր. 9:2.....	222
Բարնաբաս, 1 Կոր. 9:6.....	225
Պողոսի կարծիքը մովսեսական օրենքի մասին, 1 Կոր. 9:9.....	227
Տեքստային քննադատություն, 1 Կոր. 9:9.....	228
Վարձքերի և պատիժների աստիճանները, 1 Կոր. 9:26.....	237
Կարմիր ծովը, 1 Կոր. 10:1.....	243
Զատիկը, 1 Կոր. 10:16.....	251
Դիվական, 1 Կոր. 10:20.....	252
Քրիստոնյայի ազատությունը և պատասխանատվությունը, 1 Կոր. 10:23.....	255
Արդյո՞ք քրիստոնյաները պետք է դատեն միսյանց, 1 Կոր. 10:29.....	258
Գլուխ (<i>kephalē</i>), 1 Կոր. 11:3.....	265
Աստվածաշնչի մոտեցումը ալկոհոլի և հարբեցողության հանդեպ, 1 Կոր. 11:21.....	279
Ուխտ, 1 Կոր. 11:25.....	283
Հոգին Աստվածաշնչում, 1 Կոր. 12:1.....	290
Անեծք (<i>anathema</i>), 1 Կոր. 12:3.....	294
Քրիստոնեությունը համագործակցություն է, 1 Կոր. 12:7.....	298
Հին Կտակարանի Մարգարեություն, 1 Կոր. 12:10.....	299
Ողորմություն (<i>hesed</i>), 1 Կոր. 13:1.....	314
Հույս, 1 Կոր. 13: 13.....	322
Նոր Կտակարանի Մարգարեություն, 1 Կոր. 14:1.....	327
Ամեն, 1 Կոր. 14:16.....	335
Միրսը, 1 Կոր. 14:25.....	339
Կանայք ծառայության մեջ, 1 Կոր. 14:34.....	343
Կանայք լուռ մնան, 1 Կոր. 14:34.....	343
Հնազանդություն (<i>hupotassō</i>), 1 Կոր. 14:34.....	344
Վաղ Եկեղեցու <i>Kerygma</i> , 1 Կոր. 15:1.....	353
Կանգնել (<i>histēmi</i>), 1 Կոր. 15:1.....	355
Հարությունը, 1 Կոր. 15:4.....	358
Հարությունից հետո Հիսուսի հայտնվելը, 1 Կոր. 15:5.....	359
Տասներկու թիվը, 1 Կոր. 15:5.....	360
Հակոբոս, Հիսուսի մարմնավոր եղբայրը, 1 Կոր. 15:7.....	361
Անդրանիկ, 1 Կոր. 15:20.....	366
Նոր Կտակարանյան տերմիններ Քրիստոսի վերադարձի համար, 1 Կոր. 15:23.....	367
Սկիզբ/ճագում (<i>archē</i>), 1 Կոր. 15:24.....	369
Իշխանություն (<i>exousia</i>), 1 Կոր. 15:24.....	369
Հրեշտակները Պողոսի գրվածքներում, 1 Կոր. 15:24.....	372

Հիմար, 1 Կոր. 15:36.....	377
Կործանել, ավերել, ապականել (<i>phtheirō</i>), 1 Կոր. 15:42.....	379
Խորհուրդ, 1 Կոր. 15:51.....	381
Եղջյուրներ որոնք օգտագործվել են Իսրայելի կողմից, 1 Կոր. 15:52.....	383
Տասանորդ, 1 Կոր. 16:2.....	389
«Դուռ» Նոր Կտակարանում, 1 Կոր. 16:9.....	392
Զորանալ, 1 Կոր. 16:13.....	395
Մարանաթա, 1 Կոր. 16:22.....	399
Սոֆիստներ, 2 Կոր. Ներած.	401
Տիմոթեոս, 2 Կոր. 1:1.....	411
Նեղություն, 2 Կոր. 1:4.....	415
Երաշխիք, Գրավ, 2 Կոր. 1:7.....	417
Այն Օրը, 2 Կոր. 1:14.....	422
Փրկության վստահություն, 2 Կոր. 1:21.....	426
Առատ (<i>perisseuō</i>), 2 Կոր. 2:7.....	434
Խորհուրդներ, ծրագրեր, <i>Scemes</i> , 2 Կոր. 2:11.....	436
Տիտոս, 2 Կոր. 2:13.....	438
Պողոսի փառաբանությունը, աղոթքը և գոհ. Ա-ծուն, 2 Կոր. 2:14.....	438
Համարձակություն, քաջություն, 2 Կոր. 3:12.....	450
Հիսուսը և Հոգին, 2 Կոր. 3:17.....	453
Նորոգվել, 2 Կոր. 4:16.....	467
Որտե՞ղ են գտնվում մահացածները, 2 Կոր. 5:6.....	475
<i>Ktisis</i> , 2 Կոր. 5:17.....	482
Ապաշխարությունը Հին Կտակարանում, 2 Կոր. 7:8.....	504
Ողորմություն տալ, 2 Կոր. 9:9.....	529
Խոստովանություն, 2 Կոր. 9:13.....	535
Երկինքները և երրորդ երկինքը, 2 Կոր. 12:2.....	563
Սատանան, 2 Կոր. 12: 7.....	565
Տկարություն, 2 Կոր. 12:9.....	568
Ճշմարտությունը Պողոսի գրվածքներում, 2 Կոր. 13:8.....	580

ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

- AB Խարիսի Աստվածաշնչյան մեկնաբանությունները, իսր. Ուիլյամ Ֆոքսուել և Դեյվիդ Նոել Ֆրիդմեն/ Anchor Bible Commentaries, ed. William Foxwell Albright and David Noel Freedman
- ABD Խարիսի Աստվածաշնչի Բառարան (6 հատոր), իսր. Դեյվիդ Նոել Ֆրիդմեն/ Anchor Bible Dictionary 6 vols., ed. David Noel Freedman
- AKOT Հին Կտակարանի Վերլուծական Բանալի, Ջոն Ջոզեֆ Օուենս/ Analytical Key to the Old Testament by John Joseph Owens
- ANET Մերձավոր Արևելքի Հնագույն Տեքստեր, Ջեյմս Բ.Պրիտչարդ /Ancient Near Eastern Texts, James B. Pritchard
- BDB Հին Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան, Ֆ.Բրաուն, Ս.Ռ.Դրայվերի և Ս.Ս. Բրիգգ/ A Hebrew and English Lexicon of the Old Testament by F. Brown, S. R. Driver and C. A. Briggs
- IDB Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), իսր. Ջորջ Ա.Բաթրիք/ The Interpreter's Dictionary of the Bible (4 vols.), ed. George A. Buttrick
- ISBE Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, (5 հատոր), իսր. Ջեյմս Օր/ International Standard Bible Encyclopedia 5 vols., ed. James Orr
- JB Երուսաղեմի Աստվածաշունչ /Jerusalem Bible
- JPSOA Սուրբ Գիրքը ըստ Մագորեթիկ Տեքստի` Նոր Թարգմանություն/ The Holy Scriptures According to the Masoretic Text: A New Translation
Ամերիկայի հրեական հրատարակչությունը / (The Jewish Publication Society of America)
- KB Հին Կտակարանի եբրայերեն և արամերեն բառարան, Լյուդվիգ Կոհլեր և Վոլտեր Բաումգարտներ/ The Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament by Ludwig Koehler and Walter Baumgartner
- LAM Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Ջորջ Մ.Լամսա/ The Holy Bible From Ancient Eastern Manuscripts (the Peshitta) by George M. Lamsa
- LXX Մեպտուագինդ (հունարեն-անգլերեն) Ջոնդերվան, 1970/ Septuagint (Greek-English) by Zondervan, 1970
- MOF Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Ջեյմս Մոֆֆատ/ A New Translation of the Bible by James Moffatt
- MT Մագորեթիկ եբրայերեն տեքստ/ Masoretic Hebrew Text
- NAB Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ/ New American Bible Text
- NASB Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ /New American Standard Bible
- NEB Նոր Անգլերեն Աստվածաշունչ /New English Bible
- NET Նոր Անգլերեն Թարգմանություն, երկրորդ Բետա հրատարակչություն / New English Translation, Second Beta Edition
- NIDOTTE Հին Կտակարանի աստվածաբանության և էկզեգետիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, իսր. Ուիլյեմ Ա.Վան Գեմերեն/ New International Dictionary of Old Testament Theology and Exegesis (5 vols.), ed. Willem VanGemeren

NIV	Նոր Միջազգային Տարբերակ /New International Version
NJB	Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ/ New Jerusalem Bible
NRSV	Նոր Վերանայված Ստանդարտ Աստվածաշունչ/ New Revised Standard Bible
OTPG	Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոդ Ս.Բիլի, Ուիլյամ Ա.Բենկս և Բոլին Սմիթ/ Old Testament Passing Guide by Todd S. Beall, William A. Banks and Colin Smith
REB	Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ /Revised English Bible
RSV	Վերանայված Ստանդարտ Տարբերակ /Revised Standard Version
SEPT	Սեպտուագինդ, հունարեն-անգլերեն, Ջոնդերվան, 1970 /The Septuagint (Greek-English) by Zondervan, 1970
TEV	Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից / Today's English Version from United Bible Societies
YLT	Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգ/ Young's Literal Translation of the Holy Bible by Robert Young
ZPEB	Ջոնդերվանի Պատկերազարդ Աստվածաշնչի Հանրագիտարան, (5 հատոր)իսմբ. Մերրիլ Ս. Տեննիյ /Zondervan Pictorial Encyclopedia of the Bible (5 vols.), ed. Merrill C. Tenney

Հեղինակի խոսքը: Ինչպես կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը մտային և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հեղինակի ներշնչվածության չափը բուն հեղինակի մոտ, այնպես որ Աստծո պատգամը հասկանալի և կիրառելի լինի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը որոշիչ է, բայց նաև դժվար է այն սահմանել: Դա իր մեջ ներառում է բաց լինել Աստծո առաջ և հեշտությամբ ընդունել Աստծո ասածները: Մարդու մեջ պետք է լինի ծարավ (1) Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, և (3) Նրան ծառայելու հանդեպ: Այս գործընթացը ներգրավվում է աղոթք, խոստովանություն և կյանքի փոփոխություն: Մուրբ Հոգին մեկնաբանության գործընթացում որոշիչ դեր է խաղում, բայց ինչու՞ անկեղծ, աստվածապաշտ քրիստոնյաները Աստվածաշունչը տարբեր կերպ են հասկանում: Դա մեր համար մնում է գաղտնիք:

Գործընթացի մտային կողմը նկարագրել հեշտ է: Մենք պետք է լինենք հետևողական և նախապատվությունը տանք տեքստին, այլ ոչ թե անձնական կամ եկեղեցական համոզմունքներին: Մենք բոլորս էլ գտնվում ենք որոշակի պատմական պայմանների շրջանակներում: Մեզին ոչ ոք չի կարող լինել օբյեկտիվ և չեզոք մեկնաբան: Այս մեկնաբանությունը առաջարկում է ուշադիր և տրամաբանական մոտեցում, որը հիմնված է մեկնաբանության երեք սկզբունքների վրա, որոնք կօգնեն մեզ խուսափել մոլորություններից:

Առաջին սկզբունք

Առաջին սկզբունքը ամփոփվում է նրանում, որ պետք է հաշվի առնել պատմական իրավիճակը, երբ գրվել է համապատասխան գիրքը, որը առիթ է հանդիսացել հեղինակի համար գրելու տվյալ գիրքը: Բուն հեղինակն ուներ նպատակ և պատգամ՝ փոխանցելու մարդկանց: Տեքստը չի կարող մեզ համար նշանակել մի բան, որը երբեք չի նշանակել բուն, ներշնչված հեղինակին: Դա հասկանալու բանալին ոչ թե մեր պատմական, զգացմունքային, մշակութային, անձնական կամ եկեղեցական կարիքն է, այլ հեղինակի մտադրությունը: Կիրառությունը սերտ կապված է մեկնաբանության հետ, բայց ճիշտ մեկնաբանությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Հարկ է հստակ ընդգծել, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր տեքստ ունի մեկ և միայն մեկ իմաստ: Դա այն իմաստն է, որը հենց բուն աստվածաշնչյան հեղինակը, գտնվելով Մուրբ Հոգու գործության ներքո, մտադրվել է փոխանցել իր ժամանակակիցներին: Իսկ հենց այդ իմաստն էլ կարող է ունենալ լայն կիրառություն տարբեր մշակույթներում և իրավիճակներում: Բայց բոլոր կիրառությունները պետք է կապակցված լինեն գլխավոր ճշմարտության հետ, որը փոխանցում է մեզ հեղինակը: Այդ իսկ պատճառով, այս ուսուցողական սերտողության մեկնաբանությունը կազմված է այնպես, որ կտա անհրաժեշտ պատկերացում աստվածաշնչյան յուրաքանչյուր գրքի մասին:

Երկրորդ սկզբունք

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները ճիշտ որոշելու համար է: Յուրաքանչյուր աստվածաշնչյան գիրք իրենից ներկայացնում է մեկ ամբողջական փաստաթուղթ: Մեկնաբաններն իրավունք չունեն առանձնացնել ճշմարտության մեկ ասպեկտ՝ մերժելով մյուսները: Ուստի, մենք պետք է հակված լինենք հասկանալու աստվածաշնչյան ամբողջ գրքի նպատակը, նախքան գրական բաժինների առանձին մեկնաբանելը: Գրքի առանձին մասերը-գլուխներ, պարբերություններ կամ համարներ-չեն կարող նշանակել այն ինչ չի նշանակում ամբողջ բաժինը: Մեկնաբանությունը պետք է ամբողջի դեղուկտիվ մոտեցումից գնա դեպի մասերի ինդուկտիվ մոտեցմանը: Ուստի այս սերտողության մեկնաբանությունը կօգնի վերլուծել յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը ըստ պարբերությունների: Գրքի գլուխների և համարների բաժանումները ներշնչված չեն, բայց օգնում են մեզ որոշել տեքստի կառուցվածքային սահմանները:

Մեկնաբանությունը պարբերության մակարդակի վրա- ոչ թե նախադասության, արտահայտության կամ բառի կարող է հանդիսանալ իբրև բանալի, բացահայտելու աստվածաշնչյան հեղինակի մտադրության իմաստը: Պարբերությունները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, հաճախ կոչվում է թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարբերության մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, բառակապակցություն և նախադասություն ինչ-որ կերպ կապված է այս ընդհանուր թեմային: Դրանք սահմանափակում, ընդարձակում, բացատրում են և/կամ հարցադրում: Ճիշտ մեկնաբանելու միակ ճշմարիտ կերպը՝ հետևել հեղինակի մտքին պարբերությունից պարբերություն, աստվածաշնչյան գրքի մի բաժնից մյուսին: Այս մեկնաբանության սերտողությունը նախատեսված է օգնել մարդկանց՝ ժամանակակից անգլերեն թարգմանությունները համեմատելու համար: Այս թարգմանություններն ընտրվել են, որովհետև նրանք հետևեցին թարգմանության տարբեր մոտեցումներին:

Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴): Այս թարգմանությունը պարբերությունների է բաժանվել ժամանակակից գիտնականների կողմից:

1. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV) - սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *TextusReceptus* (համընդհանուր ընդունված տեքստ): Այս թարգմանության պարբերությունների բաժանումները ավելի երկար են քան մյուս թարգմանություններինը: Այս երկար բաժինները օգնում են ավելի հեշտ տեսնել ընդհանուր թեմամները:
2. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV) - կատարելագործված բառացի թարգմանություն է: Սա կազմում է միջանկյալ կետ հետևյալ երկու ժամանակակից թարգմանությունների միջև: Այս թարգմանության պարբերությունների բաժանումները բավականին օգտակար են թեմաները ճիշտ որոշելու համար:
3. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)- դինամիկ հավասարագոր թարգմանություն է հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից: Սա փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս ընթերցողը կամ քարոզիչը կարողանա հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարբերությունների բաժանումը ավելի շատ կապված է խոսացողի հետ քան թեմայի, այնպես ինչպես NIV (Նոր Միջազգային Թարգմանություն) է: Մեկնաբանության այսպիսի մոտեցումը օգտակար չէ: Հետաքրքիր է նշել, որ թե UBS⁴ և թե TEV հրատարակված են նույն կազմակերպության կողմից, բայց նրանց պարբերությունների բաժանումները տարբեր են:
4. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)- դինամիկ հավասարագոր թարգմանություն է, հիմնված ֆրանսերեն կաթոլիկ թարգմանության վրա: Սա շատ օգտակար է համեմատած եվրոպական մոտեցման հետ պարբերությունների բաժանումների առումով:
5. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգված թարգմանությունը (NASB), որը բառացի թարգմանություն է: Այս մեկնաբանության մեջ ես օգտվել եմ այս թարգմանությունից:

Երրորդ սկզբունք

Երրորդ սկզբունքը կայանում է Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ կարդալու մեջ, որպեսզի կարողանալ ընկալել լայնամասշտաբ հնարավոր իմաստը (իմաստային դաշտ/ semantic) որ

կարող են ունենալ աստվածաշնչյան բառերն ու արտահայտությունները: Հաճախ հունարեն արտահայտությունը կամ բառը կարելի է հասկանալ մի քանի ձև: Այս տարբեր թարգմանությունները օգնում են նկատել այդ առանձնահատկությունները և օգնում հասկանալ ու բացատրել հունարեն ձեռագրերի տարբերությունները: Մյուսնք չեն ազդում վարդապետական հարցերի վրա, բայց օգնում են մեզ ավելի մոտ լինել բնագրին:

Այս մեկնաբանությունը ուսումնասիրողին առաջարկում է մեթոդ, բավականին արագ ստուգելու իր սեփական հասկացողությունը տեքստի վերաբերյալ: Այն չի նշանակում ինչ-որ միանշանակ մեկնաբանություն, այլ ավելի հակված է տալ լրացուցիչ տեղեկություն և մտածելու կարողություն: Հաճախ, այլ աստվածաշնչյան հնարավոր մեկնաբանություններ օգնում են մեզ ձերբազատվել սեփական տեսակետներից և չլինել այդքան սահմանափակ, դոգմատիկ և աղանդավորական: Մեկնաբանները պետք է պատկերացում ունենան հնարավորինս շատ մեկնաբանությունների մասին, որպեսզի գիտակցե, թե որքան երկիմաստ կարող են լինել հին տեքստերը: Ապշեցուցիչ է, թե ինչքան քիչ համաձայնություն կա քրիստոնյաների միջև, որոնք իրենց համար Աստվածաշունչը հռչակում են որպես ճշմարտության աղբյուր:

Ժամանակին այս սկզբունքները օգնել են ինձ հաղթահարել շատ համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ ծայրաստիճան ուշադիր վերաբերվելու հին բնագրերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ դրանք օրհնություն կլինեն նաև ձեզ համար:

Բոբ Աթլի
Հունիս 27, 1996

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՍՏՈՒԳՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարո՞ղ ենք մենք ճանաչել ճշմարտությունը: Որտե՞ղ է այն գտնվում: Կարո՞ղ ենք այն ստուգել տրամաբանությամբ: Կա՞ արդյոք գերագույն հեղինակություն: Կա՞ արդյոք գերագույն հեղինակություն: Կա՞ արդյոք իրականում ինչ-որ անկասկած և կատարյալ մի բան, որը կարող է շարժել մեր կյանքը և ամբողջ աշխարհը: Ո՞րն է կյանքի իմաստը: Ինչու՞ ենք մենք այստեղ: Ու՞ր ենք գնում: Այս հարցերն այն հարցերն են, որոնց շուրջ լրջորեն խորհել են մտավորականները և որոնք հանգիստ չեն տվել մարդկային բանականությանը ժամանակի սկզբից սկսած (Ժող. 1:13-18; 3:9-11): Ես հիշում եմ իմ անձնական որոնումները իմ սեփական կյանքի կենտրոնի համար, ինչի շուրջ ամեն ինչ պետք է պտտվի: Ես Հիսուսին, որպես իմ կյանքի Տեր ու Փրկիչ ընդունել եմ փոքր հասակում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիք վկայությունների վրա: Ես երբ չափահաս դարձա, իմ և իմ աշխարհի մասին հարցերը նույնպես մեծացան: Պարզ մշակութային և կրոնական կլիշեները իմաստ չմտցրեցին այն գործնական կյանքի փորձառության մեջ, որի մասին ես կարդացել կամ առընչվել եմ: Դա շփոթության, փնտրտությունների, կրքոտ ցանկությունների ժամանակն էր, և հաճախ անհույս լինելու զգացողությունը, որը գոյություն ուներ դաժան, իրական աշխարհում, որտեղ ես ապրում էի:

Շատերը պնդում էին, որ իրենք ունեն այս հիմնական հարցերի պատասխանները, բայց ուշադիր և երկար մտածելուց հետո, ես հայտնաբերեցի, որ այդ պատասխանները հիմնված էին (1) անձնական փիլիսոփայությունների, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառությունների, կամ (4) հոգեբանական պատկերացումների վրա: Իսկ ինձ հարկավոր էր որոշ պնդումներ, որոշակի ապացույցներ, խելացի փաստարկներ, որի վրա կարող էի կառուցել իմ աշխարհայացքը, իմ ամբողջականության կենտրոնը, իմ կյանքի իմաստը: Ես այդ ամենը ձեռք բերեցի Աստվածաշնչի ինքնուրույն սերտորության ժամանակ: Ես սկսեցի փնտրել ապացույցներ վստահելի լինելու մասին, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական վստահելիությունը, ինչը հաստատվում էր հնէաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշտագրիտ իրականացումը, (3) 1600 տարիների ընթացքում գրված աստվածաշնչյան պատգամի համաձայնեցվածությունն ու միասնականությունը, և (4) մարդկանց անձնական վկայությունները, որոնց կյանքերը ամբողջությամբ փոխվել էին Աստվածաշնչի հետ շփվելուց հետո: Քրիստոնեություն, որպես հավատքի միացյալ համակարգ, ունի կարողություն լուծելու մարդկային կյանքի բարդ հարցերն ու խնդիրները: Այդ ամենը միասին ոչ միայն ինձ տվեց հստակ աշխարհայացքի համակարգ, այլ աստվածաշնչյան հավատքի փորձառություն, որն իմ կյանքում բերեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել էի իմ կյանքի այդ ամբողջականության կենտրոնը՝ Քրիստոսը, որին ես ճանաչեցի Սուրբ Գրքի միջոցով: Դա հիասքանչ փորձառություն էր, զգացմունքային թեթևացում: Սակայն ես մինչև հիմա հիշում եմ այն ցնցումն ու ցավը, երբ իմ առջև բացվեցին այն փաստերը, թե ինչքան շատ հիմնավորված, բայց տարբեր մեկնաբանություններ կան, երբեմն նույնիսկ նույն եկեղեցիների և աստվածաբանական դպրոցների միջև: Աստվածաշնչի ներշնչվածությունը կամ վստահելիությունը հաստատելը ընթացքի վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս կարող եմ վստահել կամ մերժել տարբեր և իրարամերժ մեկնաբանությունները հասկանալու համար բարդ աստվածաշնչյան տեքստերը, եթե նրանցից ամեն մեկը առանձին ներկայացնում է դրա հեղինակությունը և վստահության արժանի լինելը: Այս առաջադրանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հաբատքի ուխտագնացությունը: Ես գիտեի, որ իմ հավատքն առ Քրիստոս բերել էր ինձ մեծ խաղաղություն և ուրախություն: Իմ միտքը փափագում էր գտնել ինչ-որ բացարձակ ճշմարտություններ (1) իմ մշակույթի արժեքների հետ կապված (փոստ-մոդեռնիստական); (2) իրար բախվող կրոնական համակարգերի դոգմատիզմը (աշխարհի կրոններ); և (3) հարանվանական

գործազանտություն: Իմ որոնումների ընթացքում իրական վստահելի մոտեցումների հին գրականության մեկնաբանության ժամանակ, ես զարմանալի կերպով հայտնաբերեցի իմ սեփական շփոթությունները՝ պատմական, մշակութային, հարանվանական և գործնական փորձառության հետ կապված: Ես հաճախ կարդացել եմ Աստվածաշունչը, որպեսզի գտնեմ պնդումներ իմ կարծիքների և տեսանկյունների համար: Ես օգտագործեցի այն որպես դոգմայի աղբյուր, որպեսզի գրոհեմ ուրիշների վրա, վերահաստատելով իմ սեփական անհուսալի և անկայուն կարծիքները: Այնքան վցավալի էր ինձ համար ընդունել այդ փաստը:

Չնայած, ես երբեք չեմ կարող ամբողջությամբ օբյեկտիվ լինել, ես կարող եմ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող լինել: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները ճանաչելով և ընդունելով դրանց առկայությունը: Ես դեռևս ազատագրված չեմ դրանցից, բայց դիմադրել եմ իմ իմ սկարությունները: Մեկնաբանը հաճախ Աստվածաշունչը ճիշտ ընթերցելու ամենավատ թշնամին է: Թույլ տվեք ինձ, սիրելի ընթերցող, թվարկել կանխակարծիքներից մի քանիսը, որոնց վրա է հիմնված Աստվածաշնչի իմ ուսումնասիրությունը, որպեսզի դուք կարողանաք ինձ հետ միասին ստուգել դրանք:

I. Կանխակարծիքներ

- Ա. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն միակ ճշմարիտ Աստծո միակ ներշնչված հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բուն աստվածային հեղինակի (Սուրբ Հոգու) մտադրության լույսի ներքո, մարդ-գրողների միջոցով, որոնք ապրել են որոշակի պատմական իրավիճակներում:
- Բ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է սովորական մարդու համար և բոլոր մարդկանց համար: Աստված գտավ այնպիսի միջոց, որպեսզի հստակ մեզ ապի այն ամենը, ինչ եղել է տվյալ պատմական և մշակութային կոնտեքստի մեջ: Աստված չի թաքցնում ճշմարտությունը- Նա ուզում է, որ մենք հասկանանք: Աստվածաշունչը չպետք է մեզ համար նշանակի մի բան, որը չի նշանակել առաջին ընթերցողի կամ լսողի համար: Այն հասկանալի է ամենահասարակ մարդու համար, և իր մեջ պարունակում է սովորական մարդկային հաղորդակցության ձևեր և մեթոդներ:
- Գ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն ունի ամբողջական, միավորված պատգամ և նպատակ: Այն չի հակասում ինքն իրեն, չնայած որ իր մեջ պարունակում է դժվար և պարադոքսալի հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքն՝ Աստվածաշունչն է:
- Դ. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (բացի մարգարեություններից) ունի մեկ և միայն մեկ իմաստ՝ հիմնված բուն, ներշնչված հեղինակի մտադրության վրա: Չնայած մենք երբեք չենք կարող բացարձակ վստահ իմանալ հեղինակի մտադրությունը, շատ ցուցիչներ կօգնեն մեզ որոշել դրանք.
 1. գրական ժանրը ընտրված պատգամի փոխանցման համար
 2. պատմական կոնտեքստը և/կամ որևէ իրավիճակ, որը առիթ է հանդիսացել տեքստը գրելու համար
 3. ամբողջ գրքի գրական կոնտեքստը, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժին
 4. գրական բաժինների կառուցվածքի ուրվագիծը կամ պլանը, կապված ամբողջ պատգամի հետ
 5. յուրահատուկ քերականական առանձնահատկություններ պատգամը փոխանցելու համար
 6. ընտրված բառեր՝ պատգամը ներկայացնելու համար
 7. զուգահեռ հատվածներ


Այս պահերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրության համար: Բայց նախքան Աստվածաշնչի ճիշտ

ընթերցանության իմ մեթոդը բացատրելը, թույլ տվեք նկարագրել մի քանի ոչ պիտանի մեթոդներ, որոնք օգտագործվում են մեր օրերում, ստեղծելով մեկնաբանության բազմազանություն, որոնցից պետք է համառորեն խուսափել:


II. Անհամապատասխան կամ ոչ պիտանի մեթոդներ

1. Անտեսելով աստվածաշնչյան գրքերի գրական կոնտեքստը, և օգտագործելով յուրաքանչյուր նախադասություն, արտահայտություն կամ նույնիսկ առանձին բառեր, իբրև հաստատված ճշմարտություն, որը ոչ մի կապ չունի հեղինակի մտադրության կամ ավելի լայն կոնտեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «անհրաժեշտ ապացույցներ տեսքով մեջ»:
2. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փոխարինելով ենթադրյալ պատմական կոնտեքստով, որն ունի շատ քիչ կամ ընդհանրապես չունի հիմք բուն տեքստից:
3. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, այն կարդալ որպես առավոտյան լրագիր, որը հիմնականում գրված է ժամանակակից անհատ քրիստոնյաների համար:
4. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փորձել այլաբանորեն մեկնաբանել այն, փոխելով տեքստի իմաստը փիլիսոփայական/աստվածաբանական քննարկման, որը ոչ մի կապ չունի առաջին ունկնդիրների և բուն հեղինակի մտադրությանը:
5. Անտեսելով ուղերձի իմաստը, փոխարինելով ինչ-որ մեկի սեփական աստվածաբանական համակարգի հետ, սիրած վարկածիկամ կենսական նպատակահարմարությամբ, որը ոչ մի կապ չունի բուն հեղինակի նպատակի և պատգամի իրական իմաստի հետ: Այսպիսի բան հաճախ պատահում է Աստվածաշնչի սկսնակ ընթերցողների հետ, օգտագործելով այս օրինակը սեփական հեղինակությունը պնդելու համար: Սա հաճախ վերաբերվում է որպես «ընթերցողի արձագանքը» (ինչ է այն նշանակում ինձ համար) մեկնաբանությանը:

Բոլոր գրավոր ինֆորմացիայի մարդկային հաղորդակցության մեջ գոյություն ունի երեք կապակցված բաղադրիչներ:



Անցյալում Աստվածաշնչի ընթերցանության տարբեր մեթոդներ կենտրոնացել են երեք բաղադրիչներից մեկի վրա: Բայց որպեսզի իրապես հաստատվի Աստվածաշնչի եզակի ներշնչվածությունը, այս սխեման ավելի հարմար է:



Իրականում, բոլոր երեք բաղադրիչները պետք է ներգրավված լինեն մեկնաբանության գործընթացի մեջ: Երբ իմ առջև դրված է առաջադրանք, գտնել ինչ-որ մի բանի պնդում, իմ ամբողջ մեկնաբանությունը կենտրոնացվում է առաջին երկու բաղադրիչների վրա՝ բուն հեղինակը և տեքստը: Հնարավոր է այս ամենի միջով չափ առկա է իմ ոչ ճիշտ գործածումը, որի հետ ես ստիպված եմ եղել բախվել (1) տեքստերին չհիմնավորված այլաբանական կամ հոգևոր իմաստ տալ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանություն (ինչ է այն նշանակում ինձ համար): Չարաշահում կարող է ծագել յուրաքանչյուր փուլում: Մենք միշտ պետք է ստուգենք մեր շարժատիվները, համոզմունքները, ուսումնասիրության մեթոդները և գործնական կիրառությունները: Բայց ինչպե՞ս այս ամենը հսկել, եթե չդրվի մեկնաբանության հստակ սահմաններ, հստակ չափանիշներ: Եվ հենց այս իրավիճակում է հեղինակի մտադրությունը և տեքստի կառուցվածքը ներկայացնում են մի շարք չափանիշներ, որոնք թույլ են տալիս ինձ որոշել հնարավոր մեկնաբանության թույլատրելի սահմանները:

Այսպիսով Աստվածաշնչի ընթերցանության այս ոչ պիտանի մեթոդների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության և մեկնաբանության այն մի քանի հնարավոր մոտեցումները, որոնք տալիս են որոշակի վստահության աստիճան և տրամաբանորեն չեն հակասում իրար:

III. Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության հնարավոր մեթոդները

Այստեղ ես չեմ քննարկում մեկնաբանության հատուկ ժանրերի յուրահատուկ մեթոդներ, այլ ներկայացնում եմ ընդհանուր հերմենևտիկական սկզբունքներ, որ ընդունելի են ամեն տեսակ աստվածաշնչյան տեքստերի համար: Լավ գիրք է տարբեր ժանրերի մեկնաբանության առանձնահատկությունների մասին «Ինչպե՞ս կարդալ Աստվածաշունչը իր բոլոր արժեքներով» Գորդոն Ֆի և Դուգլաս Ստուարտ, տպագրված Ջոնդերվան» (*How To Read The Bible For All Its Worth*, by Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդի մեջ, նախևառաջ, կենտրոնանում եմ այն ընթերցողի վրա, ով ինքնուրույն չորս անգամ կարդում է աստվածաշնչյան տեքստը, և ամեն անգամ թույլ տալիս, որ Սուրբ Հոգին մեկնաբանի դրա նշանակությունը: Այդ կերպ, Սուրբ Հոգին տեքստը և ընթերցողը հարստավում են առաջին տեղում և ոչ թե երկրորդական: Այս մոտեցումը նաև պաշտպանում է ընթերցողին մեկնաբանների կողմից հասցվելիք մեծ ներգործությունից: Մի անգամ այսպիսի արտահայտություն եմ լսել «Աստվածաշունչը ծատ լույս է սփռում մեկնաբանությունների վրա»: Եվ սա չի նշանակում, որ տեքստի ուսումնասիրության համար բավարար չեն մեկնաբանությունները, բայց դրանք կարելի է օգտագործել զգույշ և համապատասխան ժամանակին:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնաբանությունների համար պնդումներ գտնել հենց տեքստից: Հինգ բնագավառներ, որոնք տալիս են մեզ, համենայնդեպս, որոշակի վստահություն:

1. պատմական կոնտեքստը
2. գրական կոնտեքստ
3. քերականական կառուցվածքներ (շարահյուսություն)
4. այն ժամանակվա բառային կիրառությունը
5. համապատասխան գուգահեռ հատվածներ
6. ժանրը

Մեր մեկնաբանությունը պետք է լինի բանական և տրամաբանական: Աստվածաշունչը մեր միակ հավատքի և ճիշտ գործնական ապրելակերպի աղբյուրն է: Ցավալի է, որ քրիստոնյաները հաճախ չեն համաձայնվում այն բանի հետ, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը, կամ ինչ-որ այն պնդում է: Ընթերցանության չորս շրջանները անհրաժեշտ են այն բանի համար, որ կարողանանք տեսնել բոլոր անհրաժեշտ առանձնահատկությունները ճիշտ մեկնաբանելու համար:

1. Ընթերցանության առաջին շրջան

- ա. Մեկ շնչով կարդացեք գիրքն ամբողջությամբ: Կարդացեք այն ևս մեկ անգամ ուրիշ թարգմանությունով, ցանկալի է ուրիշ թարգմանության տեսության տեսանկյունից
 - (1) բառացի (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ հավասարազոր (TEV, JB)
 - (3) վերապատմում (Living Bible, Amplified Bible)
 - բ. Գտեք ամբողջ գրվածքի կենտրոնական նպատակը: Որոշեք նրա թեման:
 - գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական բաժինը, գլուխը, պարբերությունը կամ նախադասությունը, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման:
 - դ. Որոշեք ստեղծագործության գրական ժանրը
 - (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմություն
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստուն գրականություն, սաղմոս)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ բանաստեղծական)
 - դ) Օրենսգիրք
 - (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմություններ (Ավետարաններ, Գործք)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Վախճաբանական գրականություն
2. Ընթերցանության երկրորդ շրջան
- ա. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ քննարկվող հարցերը:
 - բ. Ընդգծեք գլխավոր թեմաները, մեկ նախադասությամբ շարադրեք դրանց բովանդակությունները:
 - գ. Համեմատեք ձեր եզրակացությունը այս ամենի մասին սսերտողության գրականության հետ:
3. Ընթերցանության երրորդ շրջան
- ա. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել պատմական իրավիճակը և հատուկ իրավիճակը, որն առիժ է հանդիսացել այդ գիրքը գրվելու համար:
 - բ. Թվարկեք պատմական առանձնահատկությունները, որոնք նշված են տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) գրվելու տարեթիվը
 - (3) ում համար է գրվել
 - (4) ինչի համար է գրվել
 - (5) մշակութային կոնտեքստի առանձնահատկությունները, որոնք կապված են գրվելու նպատակի հետ
 - (6) ակնարկ պատմական մարդկանց և իրադարձությունների մասին
 - գ. Ընդարձակեք ձեր ուսումնասիրությունը պարբերության մակարդակի վրա և հատկապես գրքի այն հատվածը, որն ուզում եք մեկնաբանել: Միշտ գտեք և ընդգծեք գրական բաժինը: Սա կարող է լինել մի քանի գլուխներ կամ պարբերություններ: Սա կօգնի ձեզ հասկանալ հեղինակի տրամաբանությունն ու տեքստի կառուցվածքը:

- դ. Ստուգեք պատմական իրավիճակի մասին ձեր եզրակացությունները՝ օգտագործելով տեղեկատու ձեռնարկներ:
- 4. Ընթերցանության չորրորդ շրջան
 - ա. Կարդացեք ուսումնասիրվող հատվածը կրկին մի քանի թարգմանություններով
 - (1) բառացի (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ հավասարագոր (TEV, JB)
 - (3) վերապատմում (Living Bible, Amplified Bible)
 - բ. Փնտրեք գրական կամ քերականական կառուցվածքներ
 - (1) կրկնվող արտահայտություններ, Եփ. 1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքներ, Հռ. 8:31
 - (3) հակասող գաղափարներ
 - գ. Պարզեք հետևյալ պահերը
 - (1) կարևոր բանալի տերմիններ
 - (2) անսովոր տերմիններ
 - (3) կարևոր քերականական կառուցվածքներ
 - (4) բարդ բառեր, արտահայտություններ և նախադասություններ
 - դ. Փնտրեք համապատասխան զուգահեռ հատվածները
 - (1) փնտրեք ամենահստակ ուսուցանող հատվածը ձեր թիմային համապատասխան, օգտվելով, (1) «սխտեմատիկ աստվածաբանություն» գրքերից, (2) աստվածաշնչյան թարգմանություն մեկնաբանություններով և տեղեկատվական նյութերով, (3) համաբարբառներից
 - (2) Փնտրեք հնարավոր պարադոքսային զույգեր նույն թեմային պատկանող: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ կան «դիալեկտիկական զույգերի» մեջ; հարանվանական շատ բախումներ առաջանում են տեքստը կիսով չափ ընդունելու համար: Ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և մենք պետք է փնտրենք ամբողջ պատգամը որպեսզի պահենք մեր մեկնաբանության մեջ սուրբգրային հավասարակշռությունը:
 - (3) Փնտրեք զուգահեռներ նույն գրքի մջ, նույն հեղինակի մոտ և նույն ժանրի տեքստերի մեջ; Աստվածաշունչը իր իսկ սեփական լավագույն մեկնաբանն է, որովհետև այն ունի մեկ հեղինակ: Սուրբ Հոգին:
 - ե. Օգտվեք լրացուցիչ ուսուցողական նյութերից, ստուգելու համար ձեր դիտարկումները պատմական կոնտեքստի և կոնկրետ դեպքի շուրջ, կապված գիրքը գրելու հետ
 - (1) ուսուցողական Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանություններ (այս փուլում թույլ տվեք հավատացյալներին անցյալի և ներկայի օգնել ձեզ և ուղղել ձեր անձնական սերտողությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Հիմա մենք կնայենք կիրառության հարցերին: Դուք բավականին ժամանակ ծախսեցիք, որպեսզի հասկանաք տեքստի սկզբնական նշանակությունը; հիմա ձեր առջև դրված է առաջադրանք դա ճիշտ կիրառել ձեր կյանքում, ձեր մշակույթում: Ես որոշում եմ աստվածաշնչյան տեքստ

հեղինակությունը որպես «այն բանի հասկացողություն, թե ինչ է ասել հեղինակն իր ժամանակին, և դրա կիրառությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բուն հեղինակի մտադրության մեկնաբանությանը, թե ժամանակի մեջ և թե տրամաբանությամբ: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի հասկացածը մեր օրերում մինչև որ չհասկանանք թե ինչ նշանակություն ունեն էր այն ժամանակվա մարդկանց համար, ում համար որ գրվել է դա: Չի կարելի աստվածաշնչյան տեքստին իմաստ տալ, որը երբեք չի բովանդակել:

Այստեղ ձեր ուղեցույցը կլինի մանրամասն ուսումնասիրությունը պարբերությունների մակարդակով (ընթերցանության ցիկլ #3): Կիրառությունը պետք է կատարվի պարբերության մակարդակով և ոչ թե բառի: Բառերն ունեն նշանակություն միայն կոնտեքստում, արտահայտություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում, նախադասություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում: Միակ ներշնչված անձը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում դա բուն հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Մուրբ Հոգու լուսավորությամբ: Բայց լուսավորումը ներշնչանք չէ: «Այսպես է ասում Տերը» ասելու համար մենք պետք է ամբողջությամբ ենթարկվենք բուն հեղինակի մտադրությանը: Կիրառությունը պետք է կապված լինի հիմնականում ամբողջ գրվածքի, հատուկգրական բաժնի և պարբերության մակարդակի մտքի զարգացումը ընդհանուր մտադրության հետ:

Թույլ մի տվեք մեր օրերի խնդիրներն ու պահանջները մեկնաբանեն Աստվածաշունչը, թող Աստվածաշունչը խոսի: Բհարկե, դա մեզանից շատ ջանք է պահանջում, որ կարողանանք տեքստից սկզբունքներ քաղել: Եվ դրանք կգործեն միայն այն ժամանակ, երբ տեքստը հաստատի դա: Դժբախտաբար, շատ անգամ մեր սկզբունքներից շատերը հենց «մերն են», և ոչ թե այն ինչ տեքստն իրականում պարունակում է:

Աստվածաշունչը կիրառելու ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ (բացի մարգարեությունից) ամեն մի աստվածաշնչյան տեքստ ունի միայն մեկ իմաստ: Այդ իմաստը կապված է բուն հեղինակի մտադրությանը, որը ներկայացնում է իր օրերի ճգնաժամերն ու կարիքները: Շատ հնարավոր կիրառություններ կարող են դուրս բերվել այս մեկ իմաստից: Տեքստի կիրառությունը հիմնված կլինի կոնկրետ մարդկանց կարիքներից, բայց պետք է կապված լինի բուն հեղինակի տված իմաստին:

V. Մեկնաբանության հոգևոր ասպեկտը

Մինչև այս պահը ես քննարկել եմ տրամաբանական և տեքստային գործընթացը, որպես կարևոր հիմք՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու և կիրառելու համար: Հիմա թույլ տվեք համառոտ շարադրել մեկնաբանության գործընթացի հոգևոր կողմը: Այստեղ ինձ շատ են օգնում հետևյալ քայլերը

1. Աղոթք Մուրբ Հոգու օգնության համար (հմմտ. 1 Կոր. 1:26-2:16).
2. Աղոթք անձնական ներման և գիտակցական մեզբից մաքրվելու համար (հմմտ. 1 Հովհ. 1:9).
3. Աղոթք Աստծուն ճանաչելու մեծ ցանկություն ունենալու համար (հմմտ. Սաղ. 19:7-14; 42:1; 119:1).
4. Բացահայտված ճշմարտության անհապաղ կիրառում քո սեփական կյանքում
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Շատ դժվար է պահել հավասարակշռությունը տրամաբանական գործընթացի և Մուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև: Հետևյալ մեջբերումներն օգնել են հավասարակշռության մեջ պահել այդ երկուսը

1. Ջեյմս Ու. Սայր «Մուրբ Գրքի Աղավաղում», էջ 17-18 (James W. Sire, *Scripture Twisting*, pp. 17-18):

«Լուսավորումը պայծառացում է բոլոր Աստծո ժողովրդի միտքը, և ոչ թե միայն ինչ-որ հոգևոր բարձր խավի: Աստվածաշնչյան քրիստոնեության մեջ չկա գուրու դասակարգ, ոչ հատուկ լուսավորվածներ, ոչ հատուկ մարդիկ, որոնց միջոցով է միայն ճիշտ մեկնաբանությունը տրվում: Եվ քանի որ Սուրբ Հոգին է տալիս հատուկ պարզներ իմաստության, գիտության և հոգևոր խորաթափանցության, Նա չի նշանակում այդ պարզներով օժտված քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանողները: Բայց Իր ժողովրդից ամեն մեկը պատասխանատու է սովորելու, խորհելու և մտածելու ամեն ինչ Աստվածաշնչի միջոցով, որը հեղինակություն է բոլորի համար և նաև նրանց համար, ում Աստված տվեց բացառիկ կարողություններ: Ամփոփելով ասեմ, որ ամբողջ այս գրքի ընթացքում ես պնդում եմ, որ աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է թ ամբողջ մարդկությանը, այն հանդիսանում է անձեռնմխելի հեղինակություն ամեն ինչում, ինչի մասին որ այն չբացահայտված գաղտնիք չէ, բայց կարող է բավականին լավ հասկանալի լինել սովորական մարդու համար ցանկացած մշակույթ ներկայացնող»:

2. Կյորկեգորա, Բերնարդ Ռամ «Բողոքական աստվածաշնչյան մեկնաբանություն», էջ 75 (Kierkegaard, found in Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*, p. 75):
Համաձայն Կյորկեգորայի Աստվածաշնչի քերականական, լեքսիկոնային և պատմական սերտողությունը անհրաժեշտ էր, բայց նախևառաջ կարևոր է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Որպեսզի Աստվածաշունչը կարդացվի որպես Աստծո Խոսք, պետք է կարդալ այն սաստիկ վախենալով, ծածուկ, լարված սպասումով, Աստծո հետ հարաբերություն ունենալով: Աստվածաշունչ կարդալ չմտածելով կամ անփութորեն, կամ ակադեմիական և մասնագիտական մոտեցմամբ, նշանակում է Աստվածաշունչը չկարդալ որպես Աստծո Խոսք: Բայց երբ մարդը կարդում է այն, որպես սիրային նամակ, այդժամ նա իրականում կարդում է այն որպես Աստծո Խոսք»:
3. Հ. Հ. Ռոլուեյ «Աստվածաշնչի պատշաճությունը», էջ 19 (H. H. Rowley in *The Relevance of the Bible*, p. 19):
«Աստվածաշնչի ոչ մի մտային հասկացություն, որքան էլ որ այն ամբողջական լինի» չի կարող բացահայտել նրա բոլոր գանձերը: Այսպիսի հասկացողությամբ չի կարելի չարաշահել, քանի որ այն հանդիսանում է անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, որը ապահովում է ամբողջական հասկացողությունը: Բայց, որպեսզի ամբողջական լինի, այն պետք է հոգևոր գանձերը առաջնորդի հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության համար անհրաժեշտ է ավելին քան միայն մտային զգոնությունը: Հոգևոր բաները կարելի է տեսնել միայն հոգևոր տեսողությամբ, դրա համար Աստվածաշունչ ուսումնասիրող մարդը պետք է գտնվի հոգևոր զգայունության իրավիճակում, ունենա խիստ փափագ Աստծուն փնտրելու, որպեսզի իրեն հանձնի Աստծուն, եթե նա ուզում է անցնել իր գիտական հետազոտությունը այս ամենահարուստ ժառանգության բացահայտմանը հասնելով»:

VI. Այս մեկնաբանության մեթոդը

«Մեկնաբանության ուղեցույց»-ը նախատեսված է Աստվածաշնչի ձեր մեկնաբանության գործընթացի մեջ օգնել ձեզ հետևյալ կերպ

1. Հակիրճ պատմական ակնարկ, որը ներկայացնում է աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք: «Ընթերցանության #3 շրջան» անելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացվում է կոնտեքստի տեսությունը: Սա կօգնի ձեզ տեսնելու, թե ինչ կառուցվածք ունի գրական բաժինը:

3. Յուրաքանչյուր գլխի կամ գրական բաժնի սկզբում պարբերության բաժանումները և պատկերավոր վերադիրները ներկայացված են մի քանի ժամանակակից թարգմանություններով
 - ա. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերդուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴)
 - բ. 1995-ի Նոր Ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB),
 - գ. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV)
 - դ. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)
 - ե. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)
 - զ. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն: Նրանք պետք է հաստատվեն կոնտեքստի հիման վրա: Համեմատելով մի քանի ժամանակակից թարգմանություններ, որոնք կատարված են տարբեր թարգմանչական տեսությունների և աստվածաբանական տեսանկյուններից, մենք կարող ենք վերլուծել բուն հեղինակի մտքի ենթադրյալ կառուցվածքը: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ գլխավոր ճշմարտություն: Սա կոչվել է «գլխավոր թեմա» կամ «տեքստի կենտրոնական միտք»: Այս միացնող միտքը բանալին է ճիշտ պատմական և քերականական մեկնաբանության: Երբեք չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել հիմնվելով մեկ պարբերությունից փոքր հատվածի վրա: Նաև հիշեք, որ յուրաքանչյուր պարբերություն կապված է իրեն շրջապատող պարբերությունների հետ: Ահա թե ինչու պարբերության համար կարևոր է ունենալ ամբողջ գրքի պլանը: Մենք պետք է կարողանանք հետևել թեմայի տրամաբանական զարգացմանը ըստ ներշնչված հեղինակի:

4. Բոք Ատլեի մոտեցումն այսպիսին է, որ ճիշտ մեկնաբանություն ստանալու համար պետք է կատարել համար առ համար սերտողություն: Սա ստիպում է մեզ հետևել բուն հեղինակի մտքերին: Նշումները մեզ օօգտակար տեղեկություն են տալիս մի քանի բաժիններում, դրանք են
 - ա. գրական կոնտեքստ
 - բ. պատմական, մշակութային առանձնահատկություններ
 - գ. քերականական ինֆորմացիա
 - դ. բառային սերտողություն
 - ե. կարևոր գուգահեռ հատվածներ

Որոշակի դեպքերում մեկնաբանության մեջ, 1995-ի Նոր Ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB), լրացված է մի քանի այլ ժամանակակից թարգմանությունների հղումներով:

- ա. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV), - սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ):
- բ. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV), որը բառացի տարբերակն է Եկեղեցիների Ազգային Խորհրդի կողմից, որը Վերստուգված Ստանդարտ Թարգմանությունն է:
- գ. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV), դինամիկ հավասարագոր թարգմանություն է հրատարակված ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից:

դ. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB), որը անգլերեն թարգմանություն է հիմնված
ֆրանսերեն կաթոլիկ դինամիկ հավասարագոր թարգմանության վրա
Նրանք, ովքեր հունարեն կարդալ չեն կարող, համեմատելով անգլերեն թարգմանությունները
կկարողանան լուծել շատ խնդիրներ, որոնց հետ առընչվում են տեքստն ուսումնասիրելու
ժամանակ

ա. ձեռագրային տարբերակներ

բ. բազմիմաստ բառեր

գ. քերականորեն բարդ տեքստեր և կառուցվածք

դ. Երկիմաստ, անորոշ տեքստեր

Չնայած անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, նրանք նշում են
տեքստի այն հատվածները, որոնք պահանջում են ավելի խորը և մանրակրկիտ
ուսումնասիրություն:

Յուրաքանչյուր գլխի վերջում կան կարևոր հարցեր քննարկման համար, որոնք կօգնեն
կենտրոնացնել ձեր ուշադրությունը այդ գլխի ընդհանուր թեմաների մեկնաբանության
արդյունքների վրա:

1 ԿՈՐՆԹԱՅԻՍ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ
(ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՆՀԱՆՔԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՆ)

I. 1 ԿՈՐՆԹԱՅԻՍ ԹՂԹԻ ՅՈՒՐԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- Ա. Այն ավելի հաճախ և ավելի շուտ է մեջբերվել վաղ եկեղեցու հայրերի կողմից, քան Պողոսի ցանկացած այլ գրվածքները, ինչն էլ ցույց է տալիս դրա կարևորությունն ու օգտակարությունը:
- Բ. Մուրատորյան հատվածում, որը Հռոմի կանոնական գրքերի ցանկից էր (200-ական թվականներ), այն Պողոսի առաջին գրվածքների ցանկում է, որը նույնպես ցույց է տալիս իր կարևորությունը:
- Գ. Պողոսը այս գործնական նամակում տարբերություն է դնում իր անձնական կարծիքների և Տիրոջ պատվիրանների միջև: Այնուամենայնիվ, դա հիմնված է ցանկացած առարկայի վերաբերյալ Հիսուսի ուսմունքների իմացության վրա: Եթե նա կարողանար փոխանցել Հիսուսի խոսքերը: Նա հավատում էր, որ Նրա կարծիքները նույնպես ներշնչված էին և հեղինակային (տես 1 Կոր. 7:25, 40):
- Դ. Եկեղեցական կրթության համար Պողոսի առաջնորդության սկզբունքն էր անհատ հավատացյալների ազատությունն ընդդեմ նրանց միասնական պատասխանատվության, որը հիմնված է ոչ թե օրենքի, այլ սիրո վրա: Ամբողջ եկեղեցու առողջությունն ու աճը փոխարինում է ցանկացած անձնական նախասիրություն կամ արտոնություն (տես 1 Կոր. 12: 7):
- Ե. Այս նամակը (2 Կորնթացիսի հետ միասին) մեզ է տալիս Նոր Կտակարանի եկեղեցու, նրա կառուցվածքի, մեթոդների և պատգամի մասին վաղ շրջանի օրինակներ: Այնուամենայնիվ, պետք է նաև հիշել, որ այս եկեղեցին պրոբլեմատիկ էր՝ ոչ բնորոշ Պողոսի համայնքին:

II. ԿՈՐՆԹՈՍ ՔԱՂԱՔԸ

- Ա. Հունաստանի հարավային մասի ձմեռային տրանսպորտային գոտիները (Cape Malea) շատ վտանգավոր էին: Ուստի շատ կարևոր է, որ հողատարածքի երկարությունը հնարավորինս կարճ լինի: Կորնթոսի աշխարհագրական դիրքը՝ Կորնթոսի ծոցի (Բոնյան ծովի) և Մարոնական ծոցի (Էգեյան ծով) միջև չորս մղոն հեռավորության վրա, կազմել է խոշոր առևտրային, նավահանգստային (մասնագիտացված է բրուտի և հատուկ պղնձագործության այլ տեսակների մեջ) և ռազմական կենտրոն: Պողոսի օրերում, բառացիորեն, հանդիպեցին արևելքի և արևմուտքի մշակույթները:
- Բ. Կորնթոսը նաև հունա-հռոմեական աշխարհի խոշոր մշակութային կենտրոնն էր, քանի որ այն հյուրընկալել էր երկամյա Իսթմիան խաղերը, որոնք սկսվել էին Ք.ա. 581թ-ին (Պոսելյոնի տաճարում): Միայն Օլիմպիական խաղերը Աթենքում, ամեն չորս տարին, մրցակցում էին իրենց չափերով և կարևորությամբ (Thucydides, Hist 1.13.5):
- Գ. Ք.ա. 146թ. Կորնթոսը ապստամբեց Հռոմի դեմ (այսինքն՝ Աքեյան լիգա) և կոտորվեց հռոմեացի զենեքավ Լուցիուս Մունիուսի կողմից, իսկ հունական բնակչությունը լուծարվեց ստրկության մեջ: Իր տնտեսական և ռազմական նշանակության պատճառով այն վերակառուցվել էր կամ 46թ.-ին կամ 48թ.-ին Հուլիոս Կեսարի կողմից: Այն դարձավ հռոմեական գաղութ, որտեղ հռոմեացի զինվորներն անցան թոշակի: Դա

Հռոմի միմիկան էր ճարտարապետության և մշակույթի բնագավառում և մ.թ.ա. 27թ.-ին Աքայում գտնվող Հռոմի (այսինքն՝ սենատոր) վարչական կենտրոնն էր: Այն դարձավ կայսերական նահանգ Ք.ա. 15թ.-ին:

- Դ. Աֆրոդիտե տաճարի տարածքը եղել է Հին Կորնթոսի ակրոպոլիսը, որը բարձրանում է ավելի քան 1880 ոտնաչափ բարձրության վրա: Այս տաճարին կցված էին 1000 մարմնավաճառներ (Strabo, Geography, 8.6.20-22): «Կորնթացի» անվանումը (այսինքն՝ *Korinthiazesthai*, որը կազմված Արիստոֆանեսի կողմից [Ք.ա.450-385]), որը կորցնելու հումանիշն է, իսայտառակ ապրելակերպը: Այս տաճարը, ինչպես քաղաքի մեծ մասը, ավերվել է երկրաշարժից՝ Պողոսի գալուց մոտ 150 տարի առաջ, և դա նույնպես Ք.ա. 77թ.-ին էր: Անորոշ է, շարունակվե՞լ է արդյոք պտղաբերության աստծո պաշտամունքը Պողոսի օրոք : Հռոմեացիներից ի վեր Ք.ա. 146 թ.-ին քաղաքը ավերվել է, և սպանել կամ ստրկացրել իր բոլոր քաղաքացիներին, քաղաքի հույն բուրմունքը փոխարինվել է հռոմեական գաղութային կարգավիճակով (Pausanias II.3.7): Այս հռոմեական մշակութային կոնտեքստում, հունական մշակույթի փոխարեն, 1 Կորնթացիները նշանակալի տարբերությամբ է թարգմանում:

III. ՀԵՂԵՆԱԿԸ

- Ա. Այն քաղաքը, որտեղ Պողոս Առաքյալը եկավ իր երկրորդ միսիոներական ճանապարհորդության ժամանակ, գրված է Գործք 18:1-21-ում: Հիսուսը տեսիլքով հայտնեց Պողոսին, որ շատերը կհավատան, և ոչ մի ընդդիմություն էլ չի լինի (տես Գործք 18: 9-10):
- Բ. Պողոսի միսիոներական ռազմավարությունը՝ եկեղեցի հիմնելն էր, իր օրերում եղած մեծ քաղաքներում, իմանալով որ դարձի եկած այցելուները, ճամփորդող վաճառականները և նավաստիները կտարածեն ավետարանը, երբ որ վերադառնան իրենց տները: Տեղական եկեղեցու պատասխանատվությունն էր՝ ավետարանչություն և աշակերտություն անել այդ վայրերում:
- Գ. Պողոսը Կորնթոսում գտավ Աքիլային և Պրիսկիլլային, ինչպես նաև հրեա հավատացյալ վրանագործներին կամ կաշվե աշխատողներին: Նրանք ստիպված էին դուրս գալ Հռոմից 49թ.-ին Կլավդիոսի հրամանով (Orosius, Hist. 7:6:15-16) ցանկացած հրեական ծեսերի կամ արարողությունների դեմ (տես Գործք 18:2): Պողոսը միայնակ էր եկել Կորնթոս: Թե՛ Շիդան, և թե՛ Տիմոթեոսը նշանակվել էին Մակեդոնիայում (տես Գործք 18: 5): Նա շատ հուսահատված էր (տես Գործք 18: 9-19; 1 Կոր. 2:3): Սակայն նա հաստատվեց և մնաց տասնութ ամիս Կորնթոսում (տես Գործք 18:11):
- Դ. Այս գրքի Պողոսի հեղինակությունը հաստատվեց Հռոմի Կլեմենտի կողմից, որը գրել է Կորնթոսին 95-96թթ. (I Clement 37: 5, 47: 1-3, 49: 5): Այս նամակի Պողոսի հեղինակությունը երբեք չի կասկածվում, նույնիսկ ժամանակակից աստվածաբան գիտնականների կողմից:

IV. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Պողոսի Կորնթոսի այցի տարեթիվը հաստատվել է Դելֆիում գտնված Կլավդիոս կայսեր կողմից: Այնտեղ նշվեց, որ Գաղիոնը բղեշխ էր, 51թ. հուլիսից մինչև 52թ.-ի հուլիսը (տես Գործք 18: 12-17), հետևաբար կարելի է ենթադրել, որ Պողոսը ժամանեց Կորնթոս 49-50թթ.-ին:

- Բ. Պողոսի նամակի տարեթիվը կլինի երևի 50-ականների կեսերին: Նա գրեց այն Եփեսոսից, որտեղ ծառայեց երկուսից (տես Գործք 19:10) երեք տարի (տես Գործք 20:31):
- Գ. Ստորև բերված է Պողոս Առաքյալի նամակների ժամանակագրությունը F. F. Bruce-ի և Murry Harris-ի աննշան փոփոխություններով:

<u>Գիրք</u>	<u>Ամսաթիվ</u>	<u>Գրվելու վայրը</u>	<u>Կապը _____ Գործք</u> <u>Առաքելոցի հետ</u>
1 Գաղատացիս	48թ.	Սիրիական Անտիոք	Գործք 14:28; 15:2
2 1 Թեսաղոնիկեսիս	50թ.	Կորնթոս	Գործք 18:5
3 2 Թեսաղոնիկեցիս	50թ.	Կորնթոս	
4 1 Կորնթացիս	55թ.	Եփեսոս	Գործք 19:20
5 2 Կորնթացիս	56թ.	Մակեդոնիա	Գործք 20:2
6 Հռոմեացիս	57թ.	Կորնթոս	Գործք 20:3
7-10 Բանտային նամակներ			
Կողոսացիս	60-ականների սկիզբ	Հռոմ	
Փիլիմոն	60-ականների սկիզբ	Հռոմ	
Եփեսացիս	60-ականների սկիզբ	Հռոմ	
Փիլիպեցիս	62-63թթ. վերջ	Հռոմ	Գործք 28:30-31
11- Զորրորդ միսիոներական		Եփեսոս (?)	
13 ճամփորդությունը			
1 Տիմոթեոս	63թ. (կամ ուշ,	Մակեդոնիա	
Տիտոս	63թ. բայց հետո		
2 Տիմոթեոս	64թ. 68թ.)	Հռոմ	

V. ՆԱՄԱԿԸ ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

- Ա. Այս նամակի ստացողը հիմնականում հեթանոսներից կազմված նորաստեղծ եկեղեցին էր: Կորնթոսի բնակչությունը ռասայական և մշակութային խառնուրդ էր: Մենք գիտենք հնագիտությունից և Սուրբ Գրքից (տես Գործք 18:4-8), որ Կորնթոսում ժողովարան է եղել:
- Բ. Հռոմեական զինվորները բնակություն հաստատեցին Կորնթոսում, երբ նրանք ավարտում էին բանակի քսանամյա ծառայությունը: Կորնթոսը ազատ քաղաք էր, հռոմեական գաղութ և հռոմեական Աքայա գավառի մայրաքաղաքը:

- Գ. Նամակը, կարծես, արտացոլում է մի քանի խմբեր եկեղեցում՝
1. Հույն մտավորականները, որոնք դեռ հպարտանում էին իրենց փիլիսոփայական ավանդույթներով՝ փորձում էին միավորել քրիստոնեական հայտնությունն, իրենց հին սովորույթներին ու մտածած ավանդույթներին,
 2. Հռոմեացի բարձրաստիճան դեմքեր և սոցիալական վերնախավ,
 3. հավատացյալ հրեա զորակազմը հիմնականում կազմված էր «աստվածավախ» հեթանոսներից, ովքեր հաճախում էին ժողովարան
 4. մեծ թվով դարձի եկած ստրուկներ

VI. ՆԱՄԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Պողոսը լսեց չորս աղբյուրներից եկած խնդիրների մասին Կորնթոսում
1. Քղուէի ընտանիքը, 1 Կոր. 1:11
 2. եկեղեցու խնդրանքներից մի նամակ, 1 Կոր. 7:1,25; 8:1; 12:1; 16:1,12
 3. անձնական հանդիպում Ստեփանոսի, Փորտունաստի և Աքայիկոսի հետ, 1 Կոր. 16:17
- Հնարավոր է նաև, որ նամակը (#2) բերվել է այս մարդկանց կողմից (#3):
 Հետաքրքիր է, որ Murry Harris-ը ուրվագծել է 1 Կորնթացիս գիրքը՝ հիմնված Պողոսի եկեղեցու մասին ստացած տեղեկության՝
1. բանավոր խոսք Քղուէի ընտանիքի անդամներից, որի արդյունքում Պողոսը գրեց 1 Կոր. 1-4 գլուխները
 2. բանավոր խոսք եկեղեցու ներկայացուցիչներից (Ստեփանոս, Փորտունաստ և Աքայիկոս), պատասխանը 1 Կոր. 5-6 գլուխներում
 3. գրավոր հարցեր եկեղեցուց, պատասխանը 1 Կոր. 7-16 գլուխներում:
- Բ. Եկեղեցին հստակ էր դառնում, տարբեր առաջնորդներ քարոզելով՝ Պողոսը, Ապոլոսը, Պետրոսը և հավանաբար Քրիստոսը (տես 1 Կոր.1:12): Սակայն եկեղեցին բաժանվում էր ոչ միայն առաջնորդների տեսակների վրա, այլև մի քանի բարոյական խնդիրների և հոգևոր պարզների օգտագործման: Հակամարտության հիմնական կետը Պողոս առաքյալի հեղինակությունն էր (հատկապես 2 Կորնթացիսում):

VII. ՊՈՂՈՍԻ ԿԱՊԸ ԿՈՐՆԹՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ — ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿ

- Ա. Քանի՞ նամակ է Պողոսը գրել Կորնթոսին:
1. Ընդհամենը երկու՝ 1 և 2 Կորնթացիսը
 2. երեք - որից մեկը կորել է
 3. չորս - որից երկուսը կորել է
 4. մի քանի ժամանակակից գիտնականներ հայտնաբերում են երկու կորած նամակների հատվածներ 2 Կորնթացիսում՝
 - ա. նախորդ նամակը (1 Կոր. 5:9; 2 Կոր. 6:14-17:1)
 - բ. խիստ նամակը (2 Կոր. 2:3-4,9; 7:8-12); (2 Կոր. 10-13)
 5. հինգը, և հինգերորդ նամակը 2 Կոր. 10-13-ում, Պողոսը ուղարկեց նրան այն բանից հետո, երբ որ իմացավ Տիտոսից Կորնթոսի եկեղեցու բացասական զարգացման իրավիճակի մասին:
- Բ. Թեորիա #3 կարծես լավագույնն է համապատասխանում
1. նախորդ նամակը, կորել է (1 Կոր. 5:9)
 2. 1 Կորնթացիս

3. խիստ նամակը, կորել է (հնարավոր է դրանց մի մասը արձանագրված է 2 Կոր. 2:1-11; 7:8-12)
4. 2 Կորնթացիս

Գ. Իրադարձությունների ենթադրյալ կառուցվածքը

ՏԱՐԵԹԻՎ	ԱՅՑ	ՆԱՄԱԿ
50-52թթ. Պողոսի երկրորդ մխիթներական ճամփորդությունը	ա. Պողոսի երկրորդ մխիթներական ճամփորդության ժամանակ, նա մնաց Կորնթոսում ութ ամիս (տես Գործք 18:1-11)	
52թ. Գաղիոնը փոխանորդ բղեշխ էր 51թ.-ից (տես Գործք 18:12-17)		ա. 1 Կոր. 5: 9-11-ը, կարծես, վերաբերում է նամակին, եկեղեցում անբարոյական իրավիճակի մասին: Այս նամակի մասին ոչինչ հայտնի չէ, եթե հաշվի չառնենք (1) ոմանք ենթադրում են, որ 2 Կոր. 6: 14-7: 1-ը դրա մի մասն է կամ (2) այն 2 Կոր. 2: 3,4,9 նամակային աուրիստ են և վերաբերում է 2 Կորնթացիսին:
56թ. (Գարուն)	բ. Պողոսը Եփեսոսում իմանում է եկեղեցու խնդիրների մասին (1) Քղուէի ընտանիքից, 1 Կոր.1: 11 և (2) Ստեփանոսից, Փորտունասից և Աքայիկոսից, 1 Կոր.16: 17: Հնարավոր է, որ նրանք բերեցին նամակը Կորնթոսի տնային եկեղեցուց, որը հարցեր էր պարունակում:	
56թ. (Ձմեռ) կամ 57թ. (Ձմեռ)		բ. Պողոսը պատասխանում է այս հարցերին (տես 1 Կոր 7:1,25; 8:1; 12:1; 16:1,2) գրելով 1 Կորնթացիսը: Տիմոթեոս (տես 1 Կոր. 4:17) պատասխանը տանում է Եփեսոսից (տես 1 Կոր.16:8) Կորնթոս: Տիմոթեոսը չկարողացավ լուծել եկեղեցու խնդիրները:
	գ. Պողոսը հրատապ, ցավալի այց կատարեց	

	Կորնթոս (Գործքում գրված չէ, տես 2 Կոր. 2: 1): Դա հաջողակ այց չէր, բայց խոստացավ անպայման վերադառնալ:	
		գ. Պողոսը գրեց խրատական նամակ (տես 2 Կոր. 2:3-4:9; 7:8-12) Կորնթոսի տնային եկեղեցիներին, որը հանձնվեց Տիտոսի կողմից (տես 2 Կոր 2:13; 7:13-15). Այս նամակի մասին ոչինչ հայտնի չէ, ինչպես ենթադրում են որոշները, դրա մի մասը գտնվում է 2 Կոր. 10-13.
	դ. Պողոսը պլանավորում էր հանդիպել Տիտոսին Տրովադայում, բայց Տիտոսը չէր եկել, այսպիսով Պողոսը գնաց Մակեդոնիա (տես 2 Կոր. 2:13, 7: 5, 13), հավանաբար Փիլիպեում (տես MSS B ^c , K, L, P):	
		դ. Նա գտավ Տիտոսին և լսեց , որ եկեղեցին արձագանքել է իր առաջնորդությանը և հետո նա գրեց 2 Կորնթացիսը՝ մեծ գոհությամբ (տես 7:11-16). Այն բերվել էր Տիտոսի կողմից:
57-58թթ. (Չմեռ)	ե. Պողոսի վերջին արձանագրված այցը Կորնթոս կարծես հիշատակվում է Գործք 20: 2-3-ում: Թեև այն չի նշվում Կորնթոս անունով, ենթադրվում է: Նա ձմռան ամիսներին մնաց այնտեղ:	ե. 1-9-րդ և 10-13-րդ գլուխների միջև նշանավոր փոփոխությունը բացատրվում է որոշ գիտնականների կողմից, որ արդեն 1-9-րդ գլուխները գրելուց հետո, Կորնթոսից եկան նոր խնդիրներ (հնարավոր է, վերսկսվեց նախորդ ընդդիմությունները և ավելացան նորերը) Կորնթոսի տնային եկեղեցիներից հետո գրվեց 1-9 գլուխները (F. F. Bruce):

VIII. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ա. 1 Կորնթացիսում մենք տեսնում ենք, որ Պողոս Առաքյալը որպես հովիվ զբաղվում էր անհանգիստ եկեղեցով: Այս նամակում և Գաղատացիսում մենք տեսնում ենք, թե ինչպես է նա տարբեր ձևերով կիրառում համընդհանուր ավետարանական ճշմարտությունը՝ կախված եկեղեցու կարիքներից. Արդյո՞ք սա ազատություն է Գաղատիայի եկեղեցիների համար, թե՞ սահմանափակումներ Կորնթոսի եկեղեցուն:

Բ. Այս գիրքը կա՛մ «մշակութային դինոզավրերի» շարք է, կա՛մ հիմնարար ճշմարտության կիրառման հարստություն՝ հատուկ պատմամշակութային միջավայրում:

Մենք պետք է շատ զգույշ լինենք, որպեսզի չշփոթենք իսկական ճշմարտությունը մշակութային կիրառման այս ճշմարտության հետ: Այս կարևոր հերմենևտիկական հարցի լավ քննարկման համար տես Gordon D. Fee and Douglas Stuart's *How To Read the Bible for All Its Worth*., էջ 65-76 և Gordon Fee, *Gospel and Spirit* :

Գ. Այս գիրքը ստիպելու է ձեզ գործի դնել ձեր բոլոր հոգևոր ունակությունները Աստվածաշունչը մեկնաբանելու համար: Այն կստիպի ձեզ վերանայել ձեր աստվածաբանական ասպեկտները: Այն մեր օրերում Աստծո կամքը իմանալու համար ճանապարհ կբացի այնպես, ինչպես անում են Աստվածաշնչյան մի քանի գրքեր:

IX. 1 ԿՈՐՆԹՍՅԻՄԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԼԱՆ

Ա. Ներածություն 1 Կոր. 1:1-9

1. Ողջույն, 1 Կոր. 1:1-3
2. Գոհություն, 1 Կոր. 1:4-9

Բ. Խնդիրներ Կորնթոսում, որոնք հայտնի դարձան, 1 Կոր. 1:10-6:20

1. Պառակտություններ եկեղեցում քրիստոնեա առաջնորդների (այսինքն, Պողոս, Ապողոս, Պետրոս) շարժառիթների և ուղերձի թյուրիմացության պատճառով, 1 Կոր. 1:10-4:12
2. Շոկային անբարոյականությունը, 1 Կոր. 5:1-13
3. Քրիստոնեական դատավարություններ, 1 Կոր. 6:1-11
4. Քրիստոնեական ազատությունը սահմանափակված է պատասխանատվությունից, 1 Կոր. 6:12-20

Գ. Կորնթոսի նամակը ցավալի հարցերով, 1 Կոր. 7:1-1-16:4

1. Մարդկային գրավչությունը, 1 Կոր. 7:1-40
2. Հարաբերությունը կռապաշտ մշակույթի և քրիստոնեական ազատության հետ, 1 Կոր. 8:1-11:1
3. Քրիստոնեական երկրպագությունը և հոգևորությունը , 1 Կոր. 11:2-14:40
4. Վախճանաբանության՝ հատկապես հարության մասին խոսակցությունները, 1 Կոր. 15:1-58
5. Երուսաղեմի Մայր եկեղեցու նվիրատվությունները, 1 Կոր. 16:1-4

Դ. Վերջնական դիտողություններ

1. Պողոսի (և նրա գործընկերների) ծրագրերը հետագա ճանապարհորդությունների համար, 1 Կոր. 16:5-12
2. Վերջնական հորդորներ և ողջույններ, 1 Կոր. 16:13-24

X. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. *The Mind of St. Paul*, William Barclay, published by Harper & Row

Բ. *Paul, Apostle of the Heart Set Free*, F. F. Bruce, published by Eerdmans

Գ. *The Origins of Paul's Religion*, J. Gresham Machen, published by Eerdmans

Դ. *Paul, An Outline of His Theology*, Herman Ridderbos (translated by John De Witt), published by Eerdmans

- Ե. *Epochs in the Life of Paul*, A. T. Robertson, published by Baker
- Զ. *A Man In Christ*, James S. Stewart, published by Harper & Row
- Է. *Dictionary of Paul and His Letters*, published by IVP
- Ը. *Paul in the Roman World, The Conflict at Corinth*, Robert M. Grant, published by Westminster, John Knox Press
- Թ. *Philo and Paul Among the Sophists*, Bruce W. Winter, published by Eerdmans
- Ժ. *After Paul Left Corinth*, Bruce W. Winter

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (Ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույններ և գոհություն 1:1-3	Ողջույն 1:1-3	Ողջույնի խոսք 1:1-3	Ողջույններ 1:1 1:2 1:3	Ուղերձ և ողջույններ 1:1-3
1:4-9	Հոգևոր Պարգևներ Կորնթոսում 1:4-9	Գոհություն 1:4-9	Օրհնություն 1:4-9	Գոհություն 1:4-9
Բաժանումներ եկեղեցում 1:10-17	Աղանդավորությունը մեղք է 1:10-17	Բաժանումներ Կորնթոսում 1:10-17	Բաժանումներ եկեղեցում 1:10-13 1:14-17	Տարաձայնություններ հավատարիմների մեջ 1:10-16 Ճշմարիտ և կեղծ իմաստություն (1:17-3:4)
Քրիստոսը՝ Աստծո զորություն և իմաստություն 1:18-25 (19)	Քրիստոսը՝ Աստծո զորություն և իմաստություն 1:18-25 (19)	Քրիստոսը խաչվեց (1:18-2:5) 1:18-25 (19)	Քրիստոսը՝ Աստծո զորություն և իմաստություն 1:18-20 (19) 1:21-25 1:26-31	1:17-25 1:26-31
1:26-31	1:26-31	1:26-31	1:26-31	1:26-31

* Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Յուրաքանչյուր տարբերակը նոգրկում է այդ թեման իր իսկ ձևով: Երբ դուք կարդում եք տեքստը, հարցրեք ինքներդձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձևը հասկացությանը:

Յուրաքանչյուր գլխում մենք պետք է նախ կարդանք Աստվածաշունչը և փորձենք որոշել թեմաները (պարբերությունները), ապա համեմատենք մեր հասկացողությունը ժամանակակից տարբերակների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանը և շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված-ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ փոփոխելու նրա պատգամը: Աստվածաշնչի ընթերցողները պատասխանատվություն են կրում ներշնչված ճշմարտությունը իրենց կյանքի մեջ կիրառելու համար:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հապավումները ամբողջությամբ ներկայացված են հետևյալ փաստաթղթերում. [Հունական Քերականական Կառուցվածքի Համառոտ Սահմանումները](#), [Տեքստային Քննադատություն և Բառարան](#):

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՈՒ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:1
¹Պողոս՝ Յիսուս Քրիստոսի կանչուած առաքեալ Աստուծոյ կամքովր, եւ Սուրենէս եղբայր.

1:1 «Պողոս» Պողոսի օրերում շատ հրեաներ երկու անուն ունեին՝ մեկը հրեական, մյուսը հռոմեական (տես Գործք 13:9): Պողոսի հրեական անունը Սավուղ էր: Նա, ինչպես Իսրայելի հնագույն թագավորը, Բենիամինի ցեղից էր (տես Հռ. 11:1; Փիլ. 3:5): Նրա հռոմեական անունը հունարեն ձևով, Պողոս (Պաուլոս), նշանակում է «փոքր»: Սա վերաբերում է

1. նրա ֆիզիկական չափին, որը հիշատակվել է երկրորդ դարի անկանոն գրքում, *Պողոսի Գործեր*, Թեսաղոնիկեի մասին գլխում կոչվում է «Պողոսը և Թեկլա»
2. նրա անձնական զգացողությանը՝ սուրբերից ամենափոքրը, քանի որ նա սկզբում հալածում էր Եկեղեցին (տես 1 Կոր. 15: 9; Եփ. 3: 8; 1 Տիմ. 1:15)
3. պարզապես ծնողների կողմից ծննդյան պահին տրված անունը

- «կանչված» տես Հատուկ Թեմա: Կանչված

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԿԱՆՉՎԱԾ
SPECIAL TOPIC : CALLED

Աստված միշտ նախաձեռնում է՝ կոչելով, ընտրելով և քաշելով հավատացյալներին Իրեն (տես Հովհ. 6:44,65; 15:16; 1 Կոր. 1: 1-2; Եփ. 1: 4-5, 11): «Կանչ/կոչ» տերմինը օգտագործվում է մի քանի աստվածաբանական իմաստներով:

- Ա. Հին Կտակարանում «անունը կանչել» միշտ եղել է պաշտամունքի կոնտեքստում (տես Ծննդ. 4:26; 12: 8; 21:33; 26:25; Ելից 34:5):
- Բ. Մեղավորները կանչված են փրկության Աստծո շնորհքով (տես Ելից 34: 6-7) Քրիստոսի ավարտած գործով և Հոգու համոզմամբ (*klētos*, տես Հռ. 1: 6-7; 9:24, որը աստվածաբանորեն նման է 1 Կոր. 1: 1-2 և 2 Տիմ. 1: 9; 2 Պետ. 1:10):
- Գ. Մեղավորները կանչում են Տիրոջ անունը՝ փրկվելու համար (*epikaleō*, տես Գործք 2:21; 22:16; Հռ. 10: 9-13): Այս արտահայտությունը հրեական պաշտամունքի իդիոմա է:

- Դ. Հավատացյալները կանչում են Նրա անունը ճգնաժամի և փորձության ժամանակ (Գործք 7:59):
- Ե. Հավատացյալները կանչված են ապրելու Քրիստոսանման կյանքով (*klēsis*, տես 1 Կոր. 1:26; 7:20; Եփ. 4: 1; Փիլ.3:14; 2 Թես.1:11; 2 Տիմ.1: 9):
- Զ. Հավատացյալները կանչված են ծառայության առաջադրանքներին (տես Գործք 13:2; 1 Կոր. 12:4-7; Եփ. 4: 1):

▪ **«առաքել»** Այս արմատը «ուղարկել» (*apostellō*) երկու հունարեն հասարակ ԲԱՅԵՆՈՒՅ մեկն է: Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 4:9: Այս տերմինն ունի մի քանի աստվածաբանական օգտագործում:

1. Ռաբբիներն այն օգտագործել են որպես մեկ ուրիշի փոխարեն կանչված և ուղարկված պաշտոնական ներկայացուցիչ, մեր լեզվով ասած՝ «դեսպան» (տես 2 Կոր. 5:20):
2. Ավետարանները հաճախ օգտագործում են այս տերմինը որպես՝ Հայրն ուղարկեց Հիսուսին (տես Մաթ. 10:40; 15:24; Մարկ. 9:37; Ղուկ. 9:48): Հովհաննեսի Ավետարանում տերմինն ունի Մեսիական երանգ (տես Հովհ. 4:34; 5: 24,30,36,37,38; 6: 29,38,39,40,57; 7:29; 8:42; 10: 36; 11:42; 17: 3,8,18,21,23,25; 20:21): Այն օգտագործվում է, երբ Հիսուսն ուղարկում է հավատացյալներին (տես Հովհ. 17:18; 20:21):
3. Նոր Կտակարանը օգտագործում է աշակերտների համար:
 - ա. Տասներկու աշակերտների ներքին շրջանակը (տես Ղուկ. 6:13; Գործք 1: 21-22)
 - բ. Առաքյալների օգնականների և գործընկերների հատուկ խումբը
 - (1) Բառնաբաս (տես Գործք 14: 4, 14)
 - (2) Անդրոնիկոս և Յունիա (KJV, Junia, տես Հռ. 16: 7)
 - (3) Ապոդոս (տես 1 Կոր. 4: 6-9)
 - (4) Տիրոջ եղբայր Հակոբոսը (տես Գաղ. 1:19)
 - (5) Միդուանոս և Տիմոթեոս (տես 1 Թես. 2: 6)
 - (6) հավանաբար Տիտոս (տես 2 Կոր. 8: 23)
 - (7) հնարավոր է Եպափրոդիտոս (տես Փիլ. 2:25)
 - գ. Եկեղեցում շարունակական պարզև (տես 1 Կոր. 12:28-29; Եփես 4:11)
4. Պողոսը նամակների մեծ մասում այս տիտղոսն օգտագործում էիր համար, որպես Աստծո կողմից տրված իշխանություն և որպես Քրիստոսի ներկայացուցիչ (տես Հռ. 1:1; 1 Կոր. 1:1; 2 Կոր. 1:1; Գաղ. 1:1; Եփ. 1:1; Կող. 1:1; 1 Տիմ. 1:1; 2 Տիմ. 1:1; Տիտոս 1:1):

▪ **«Յիսուս Քրիստոս»** Այս տերմինները «Տեր Հիսուս Քրիստոս» լիարժեք տիտղոսի մասն են կազմում: Այս երեք տիտղոսներն ունեն անձնական նշանակություն:

1. «Քրիստոս» եբրայերեն *Մեսիայի* (Օծյալը) հունարեն թարգմանությունն է: Այն հաստատում է Հիսուսի հին կտակարանյան կարգավիճակը, երբ Աստծո խոստացավ ուղարկել մեկին, ով կհաստատեր արդարության նոր դարաշրջանը:
2. «Հիսուս» անունը տրվեց երեխային Բեթլեհեմում հրեշտակի կողմից (տես Մատթ. 1:21): Այն բաղկացած է երկու եբրայերեն գոյականներից «ՅԱՀՎԵ», աստվածության ուխտի անունը և «փրկություն» (տես Ելից 3:14): Այն նույն եբրայերեն անունն է, ինչ Հեսուն: Երբ մենակ է օգտագործվում, հաճախ նույնացվում է մարդու հետ Մարիամի որդին՝ Հիսուս Նազովրեցին (օրինակ, Մատթ. 1:16, 25; 2: 1; 3: 13,15,16; Գործք 13: 23,33; Հռ. 8: 11; 1 Կոր. 11: 23; 12:3; Եփ. 4:21; Փիլ. 2:10; 1 Թես. 1:10; 4:14):
3. «Տեր» (օգտագործվում է 1 Տիմ. 1: 1, KJV կամ 1 Տիմ. 1:12) եբրայերեն *adon* տերմինի թարգմանությունն է, որը նշանակում էր «սեփականատեր, ամուսին, վարպետ կամ տեր»: Հրեաները վախենում էին արտասանել ՅԱՀՎԵ սուրբ անունը, որ չլինի թե գուր տեղը ասեն և զանց անեն Տասը պատվիրաններից մեկը: Երբ նրանք կարդում էին Սուրբ Գրքերը, նրանք ՅԱՀՎԵ փոխարինում էին *Adon*-ի հետ: Սա է պատճառը, որ

անգլերեն թարգմանությունները Հին Կտակարանի ՅԱՀՎԵ- ի համար օգտագործում են ՏԵԸ բառը բոլորը մեծատառերով: Այս տիտղոսը փոխելով (հունարեն *kurios*) Հիսուսի, Նոր Կտակարանի հեղինակները պնդում են Նրա աստվածությունն ու հավասարությունը Հոր հետ:

▪ **«Աստծո կամքովը»** Պողոսի իշխանության վերաբերյալ, մի քանի հստակ հայտարարություններից սա առաջինն է այս ներածականում (այսինքն, «կոչվում է Առաքյալ», 1 Կոր. 1:1, «Աստծու կամքովը», 1 Կոր. 1:1 և «մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունովը», 1 Կոր.1:10): Պողոսի Առաքելական իշխանությունը Կորնթացիսի նամակների հիմնական աստվածաբանական խնդիրն է, հատկապես 2 Կորնթացիսը:

Այս նույն ներածական արտահայտությունն օգտագործվում է Կող. 1: 1; 1 Կոր. 1:1; 2 Կոր. 1: 1; և 2 Տիմ. 1:1: Պողոսը համոզված էր, որ Աստված ընտրել էր իրեն որպես Առաքյալ: Այս կոչումի հատուկ նշանակությունը սկսվեց Դամասկոսի ճանապարհին իր դարձի գալուց հետո (տես Գործք 9: 1-22,26):

▪ **«Սուրենևս»** Հնարավոր է, որ սա Գործք 18:17-ում հիշատակված հրեա առաջնորդն էր, որը ծեծի ենթարկվեց բազմության կողմից և հնարավոր է դարձավ հավատացյալ և տեղական եկեղեցու առաջնորդ: Հնարավոր է, որ նա Պողոսի (1) օգնականն էր; (2) դպիրն էր; (3) եկեղեցու տեղեկատվության աղբյուրը կամ (4) մեկը, ում եկեղեցին լավ գիտեր

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:2

²Աստուծոյ եկեղեցուն, որ Կորնթոսումն է, Յիսուս Քրիստոսումը սրբուածներիդ՝ կանչուած սուրբերիդ՝ այն ամենի հետ, որ մեր Տեր Յիսուս Քրիստոսի անունը կանչում են ամեն տեղ, իրանցը եւ մերը:

1:2 «եկեղեցուն» տես Հատուկ Թեմա: Եկեղեցի (*ekklesia*)

ՀՍՏՈՒՎ ԹԵՄԱ: ԵՎԵՂԵՑԻ (*ekklesia*)

SPECIAL TOPIC: CHURCH (EKKLESIA)

Այս հունարեն *ekklesia* տերմինը երկու բառերից է կազմված «դուրս» և «կանչված»: Այս բառն ուներ աշխարհիկ օգտագործում (այսինքն՝ քաղաքացիներին կանչել են ժողովի, տես Գործք 19:32,39,41) և Սեպտուագինդում այս տերմինը օգտագործվում է կրոնական իմաստով Իսրայելի «համայնքի» համար (*Qahal*, BDB 874, KB 1078, տես Թվոց 16:3; 20:4; 2 Օր. 31:30): Վաղ եկեղեցին իրեն համարում էր որպես Հին Կտակարանի Աստծո ժողովրդի շարունակություն: Նրանք էին նոր Իսրայելը (տես Հռ. 2: 28-29; Գաղ. 3:29; 6:16; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6), Աստծո համաշխարհային առաքելության իրականացումը (տես Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5-6; Մաթ. 28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

Այս տերմինը մի քանի իմաստներով օգտագործվում է Ավետարաններում և Գործքում

1. աշխարհիկ քաղաքային ժողով, Գործք 19:32,39,41
2. Աստծո համամարդկային ժողովուրդը Քրիստոսում, Մաթ. 16:18 և Եփեսացիս թուղթը
3. Քրիստոնյա հավատացյալների տեղական համայնքը, Մաթ. 18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին); Գործք 13:1; Հռ. 16:5; 1 Կոր. 16:19; Կող. 4:15; Փիլիմոն 2
4. Իսրայել ժողովուրդը միասին, Գործք 7:38, Ստեփանոսի քարոզում
5. տարածաշրջանում Աստծո ժողովուրդը, Գործք 8:3; Գաղ. 1: 2 (Հուդա կամ Պաղեստին)

Եկեղեցին հավաքված ժողովուրդ է, ոչ թե շենք: Հարյուրավոր տարիներ չեն եղել եկեղեցական շինություններ: Հակոբոս թղթում (ամենահին քրիստոնեական գրքերից մեկը) եկեղեցուն ասվում է «*synagōgē*» (ժողովարան): Եկեղեցու համար այս տերմինը հանդիպում է միայն Հակոբոսում (տես

Հակ. 2: 2; 5:14):

▪ **«Աստուծոյ որ Կորնթոսումն է»** Այս արտահայտությունը արտահայտում է երկու տարբեր իմաստները «եկեղեցու» մասին:

1. Այն վերստին ծնված, մկրտված հավատացյալների տեղական մարմին է: Նոր Կտակարանում շատ տեղերում, *ekklesia* օգտագործվում է՝ արտացոլելու այս տեղական իմաստը:
2. Դա նաև Քրիստոսի մարմնի համընդհանուր արտահայտությունն է:
 - ա. Մաթ. 16:18 (այսինքն, Հիսուսի կողմից այս տերմինի առաջին հազվադեպ օգտագործումը, տես Մատթ. 18:17 [երկու անգամ]):
 - բ. Գործք 9: 31 օգտագործում է եզակի թվով «եկեղեցի» Հրեաստանի, Գալիլեայի և Մամարիայի բոլոր տեղական համայնքների համար,
 - գ. տերմինի օգտագործվելը Եփեսացի թղթում, որը Փոքր Ասիայի եկեղեցիներում շրջանառվող նամակ է (տես 2 Կոր. 1:22; 3: 10,21; 5: 23-32):

Կա մի մեծ Քրիստոսի մարմին, որը կազմված է բոլոր հավատացյալներից (ունանք հիմա մեռածեն, իսկ ունանք՝ կենդանի) և կան այդ տիեզերական մարմնի տեղական արտահայտությունները:

▪ **«սրբուածներիդ»** Սա վաղակատար կրավորական դերբայ է, որը նշանակում է, որ նրանք սուրբ են հռչակվել և շարունակում են լինել Հիսուսի կատարած գործի շնորհիվ Սուրբ Հոգու միջոցով (տես 1 Կոր. 6:11): Այս տերմինը (*hagiazō*) կապված է «սուրբ» (*hagios*) և «սրբեր» բառերի հետ (այսինքն, «սրբերը» *hagioi*): Դա խոսում է մեր առանջնացման մասին՝ Աստծուն ծառայելու համար: Այստեղ այն վերաբերում է Նրանում ունեցած մեր դիրքորոշմանը 1 Կոր. 1: 3, բայց Նոր Կտակարանում այլ տեղերում հավատացյալները պետք է ձգտեն «սրբության» (տես Մաթ.5:48): Սա այն դիրքն է, որը պետք է ունենալ: Պողոսը քաջակերում է այս վիթխարի, հպարտ եկեղեցուն, կոչելով նրանց «սրբեր», անկախ նրանց թերություններից և մեղքերից:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ ՍՐԲԱՅՈՒՄ
SPECIAL TOPIC: NEW TESTAMENT HOLINESS/SANCTIFICATION**

Նոր Կտակարանը պնդում է, որ երբ մեղավորները դիմում են Հիսուսին ապաշխարությամբ և հավատքով (տես Մարկ. 1:15;Գործք 3:16,19; 20:21), և նրանք անմիջապես արդարանում են և սրբանում: Սա նրանց նոր դիրքն է Քրիստոսում: Նրա արդարությունը դրվել է նրանց վրա (տես Ծննդ. 15: 6;Հռ. 4): Նրանք հռչակվում են արդար և սուրբ (Աստծո դատական ակտ):

Բայց Նոր Կտակարանը նաև հավատացյալներին կոչ է անում դեպի սրբություն կամ սրբացում: Դա թե աստվածաբանական դիրքն է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի միջև թե Քրիստոսանման նման լինելու կոչ՝ կեցվածքով և գործերով առօրյայում: Քանի որ փրկությունը ձրի պարզ է և արժեքը՝ ամեն ինչի կենսակերպ, այնպես էլ սրբացում:

Նախնական արձագանք	Պրոգրեսիվ Քրիստոսանմանություն
Գործք26:18	Հռոմեացիս 6:19
Հռոմեացիս 15:16	2 Կոր. 7:1
1 Կորնթացիս 1:2-3; 6:11	Եփեսացիս1:4; 2:10
2 Թեսաղոնիկեցիս 2:13	1 Թես. 3:13; 4:3-4,7; 5:2
Եբրայեցիս 2:11; 10:10,14; 13:12	1 Տիմոթեոս 2:15
2 Պետրոս 1:2	2 Տիմոթեոս 2:21
	1 Պետրոս 1:15-16
	Եբրայեցիս 12:14

▪ **«Յիսուս Քրիստոսումը»** Այս քերականական ձևը հանդես է գալիս ներգոյական հոլովով: Հավատացյալները սրբացված են Հոր կողմից (այսինքն, աղբյուրը, տես Հովհ. 17: 7; 1 Թես. 5:23) Հիսուսի միջոցով (այսինքն, հիմքերը, տես 1 Կոր. 1:2; Եփ. 5:26): Երկու ասպեկտները համախմբվում են Եբր. 2:11-ում: Սովորաբար այս գործողությունը վերագրվում է Սուրբ Հոգուն (այսինքն, գործող անձ, տես Հռ. 15:16; 2 Թես. 2:13):

Սա հավատացյալներին բնութագրելու Պողոսի սիրելի ձևն է: Սա լավ օրինակ է Եփ 1: 3,4,7,9,10,12,13: Տես William Barclay, *The Mind of St. Paul*, էջ 121-132: Սա նշանակում է կենսական, անձնական միություն Հիսուսի հետ (տես Գործք 17:28):

Հետաքրքիր է իմանալ թե դպիրներն ինչպես են հասկացել՝

1. «Քրիստոս Հիսուսում» – MSS P⁴⁶, B, D, F, G
2. «Հիսուս Քրիստոսում» – MSS x, A

Նման փոփոխությունները հաճախ տեղի են ունենում ընթերցման և արտագրության գործընթացում: Նրանք չեն ազդում իմաստի վրա, սակայն ցույց են տալիս, որ վաղ դպիրները ավելի շատ մտահոգված էին տեքստի հիմնական իմաստով և ոչ թե կոշտ գրագիտությամբ:

▪ **«կանչում»** Սա ներկա չեզոք դերբայ է: Ինչպես Պողոսն էր կոչվում Առաքյալ, այնպես էլ Կորնթացի քրիստոնյաները կոչվում էին սրբեր (տես Հռ. 1:7): Ուշադրություն դարձրեք, որ այս գլխի 1 Կոր. 1:9,24,26,27,28 համարներում հատուկ ուշադրություն է դարձվում ընտրության վարդապետության վրա:

Այս կառուցվածքը վերաբերում է Աստծո նախնական գործողությանը, որը կանչում է նրանց և նրանց հետագա կանչում Հիսուսին աղոթելու փրկության համար, ինչը հանգեցնում է շարունակական աղոթքին, երկրպագությանը և հնազանդությանը: Փրկությունը թե նախնական հավատք է / ապաշխարության արձագանք, և թե շարունակական հավատք / ապաշխարության պատասխան: Տես Հատուկ Թեմա: Կանչված, 1 Կոր. 1:1

▪ **«սուրբերիդ»** «Սուրբեր» տերմինը (*hagioi*) աստվածաբանորեն կապված է Հին Կտակարանի «սուրբ» տերմինի հետ (*kadosh*), որը նշանակում է «առանձնանալ Աստծո ծառայության համար» (տես 1 Կոր. 1:2; 2 Կոր. 1:1; Հռ. 1:1; Փիլ.1:1; Կող.1:2): Նոր Կտակարանում այն օգտագործվում է հոգնակի թվով, բացառությամբ Փիլ. (4:21) մեկ անգամ, բայց նույնիսկ այնտեղ կա ընդհանրացված իմաստ: Փրկված լինել նշանակում է լինել հավատքի ուխտի համայնքի մի մաս, հավատացյալ ընտանիքի մաս և Քրիստոսի մարմնի մասը:

Աստծո ժողովուրդը սուրբ է Հիսուսի արդար ներողամտության շնորհիվ (տես Հռ. 4, 2 Կոր. 5:21, Գաղ. 3): Սա Աստծո կամքն է, որ հավատացյալները սուրբ կյանք ապրեն (տես 1 Կոր. 1:4; 4:1; 5:27, Կող. 1:22, 3:12): Հավատացյալները, թե՛ որպես հոչակված սրբեր են (դիրքի սրբացում), և թե կանչված ապրելակերպի սրբության (առաջադեմ սրբացում): Հիմնավորումն ու սրբացումը պետք է հաստատվեն միաժամանակ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲԵՐ (*hagios*)

SPECIAL TOPIC: SAINTS

Սա եբրայերեն *kadosh* բառի հունարեն համարժեքն է (ԳՈՅԱԿԱՆ, BDB 871, ԲԱՅ, BDB 872, KB 1066-1067, տես Հատուկ Թեմա: Սուրբ), որն ունի հիմնական իմաստ՝ ինչ որ մեկին, ինչ որ բան կամ ինչ որ տեղ առանձնացնել, բացարձակապես ՅԱՀՎԵԻ օգտագործման համար: Սա ցույց է տալիս անգլերեն «սուրբ» բառի գաղափարը: Իսրայելը ՅԱՀՎԵԻ «սուրբ ազգն» էր (տես 1 Պետ. 2: 9, որը մեջբերում է Ելից 19: 6): ՅԱՀՎԵՆ Իր բնույթով առանձնացված է մարդկությունից (հավիտենական, ոչ արարված Սրբություն) և Իր բնավորությամբ (բարոյական կատարելություն): Նա չափանիշ է, որով բոլորը չափվում և դատվում են: Նա տրանսցենդենտ է, Սուրբը, Սուրբ Մեկը:

Աստված ստեղծեց մարդկանց՝ հաղորդակցվելու համար, սակայն մեղքը (Ծննդոց 3)

պատճառեց հարաբերական և բարոյական վնաս Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև: Աստված ընտրեց վերականգնել Իր գիտակից ստեղծագործությունը; հետևաբար, Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինել (տես Ղև. 11:44; 19: 2; 20: 7,26; 21: 8): Հավատքով հարաբերությունները ՅԱՀՎԵԻ հետ, Իր ժողովուրդը սուրբ է դառնում Նրանում ունեցած իրենց ուխտի դիրքով, բայց նաև կանչված են ապրելու սուրբ կյանքեր (տես Հատուկ Թեմա: Սրբացում, տես Մաթ. 5: 48; Եփ. 4:1,17; 5:2-3,15; 1 Պետ. 1:15):

Այս սուրբ կյանքը հնարավոր է, քանի որ հավատացյալները լիովին ընդունված են և ներված (1) Հիսուսի կյանքի և (2) գործի և իրենց մտքերում և սրտերում Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ: Սա հաստատում է հավատացյալների պարադոքսալ իրավիճակը.

1. սուրբ լինել Քրիստոսի դրած արդարության պատճառով (այն է, Հո. 4)
2. կանչված են սուրբ կյանքով ապրելու՝ Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ (տես Հատուկ Թեմա: Սրբացում)

Հավատացյալները «սրբեր» են (*hagioi*), քանի որ դա

1. Սուրբ Աստծո կամքն է (Հայրը, տես Հովհ. 6: 29,40; 1 Պետ. 1:15-16)
2. Սուրբ Որդու գործը (Հիսուս, տես 2 Կոր. 5:21; 1 Պետ. 1:18-21)
3. Սուրբ Հոգու բնականության ներկայությունը (տես Հո. 8: 9-11,27)

Նոր Կտակարանում սուրբերը միշտ ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ են հանդես գալիս, (բացառությամբ մեկ անգամ Ֆիլ. 4:21, բայց նույնիսկ այդ ժամանակ էլ, կոնտեքստը այն դարձնում է ՀՈԳՆԱԿԻ): Փրկվել, նշանակում է լինել ընտանիքի, մարմնի, շինության մաս: Աստվածաշնչյան հավատքը սկսվում է անձնական ընդունելությամբ, բայց խնդիրները կորպորատիվ հաղորդակցության մեջ են: Մենք յուրաքանչյուրս ունենք պարզևներ (տես 1 Կոր. 12:11), Քրիստոսի մարմնի եկեղեցու առողջության, աճի և բարեկեցության համար (տես 1 Կոր. 12: 7): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Սրբությունը ընտանեկան բնութագիր է:

Այն դարձավ հավատացյալների տիտղոսը (տես Գործք 9: 13,32,41; 26:10; Հո. 1: 7; 1 Կոր.1: 2; 2 Կոր. 1: 1;Եփ. 1: 1;Կող. 1: 2) և ուրիշներին ծառայելու ձև (տես Հո. 12:13; 16: 2;Եփ. 1:15; Կող. 1: 4; 1 Տիմ. 5:10; Եբր. 6:10): Պողոսը Երուսաղեմի Մայր Եկեղեցու աղքատների համար հեթանոսական եկեղեցիներից հավաքեց հատուկ մեկ անգամյա նվիրատվություն (տես Հո. 15:25-26; 1 Կոր. 16:1; 2 Կոր. 8:4; 9:1):

▪ **«այն ամենի հետ, որ...ամեն տեղ»** Պողոսը այս արտահայտությունն օգտագործում է Կորնթացի հավատացյալներին հիշեցնելու համար, որ նրանք մի մեծ եկեղեցու ընտանիքի մաս են կազմում: Նրանք իրավունք չունեն ոչ յուրահատուկ լինելու, ոչ էլ հատուկ վերաբերմունքի: Նրանք պարտավոր են իրենց կյանքը համակարգել Քրիստոսի ողջ մարմնի հետ, ինչպես նաև վարդապետությունը և գործնականը (տես 1 Կոր. 4:17; 7:17; 11:16; 14:33):

▪ **«մեր Տեղ Յիսուս Քրիստոսի անունը կանչում են»** Սա վերաբերում է այն պահին, երբ մարդը դառնում է քրիստոնյա (տես Գործք 2:21; 22:16; Հո. 10:9-13), այլ նաև հետագա երկրպագությունը (Հին Կտակարանյան անուն օգտագործելը, տես Ծննդ. 4:26; 12:8; 26:25): Այստեղ սա ներկա չեզոք դերբայ է, որը նկարագրում է ընդհանուր առ ընդհանուր հավատքի հարաբերությունը Քրիստոսի հետ (աստվածաբանական կերպով Պողոսի «Քրիստոսում») և շեշտը դնելով անհատի ցանկության վրա: Տես Հատուկ Թեմա: 1 Կոր. 1:10

▪ **«իրանցը եւ մերը»** Սա ևս մեկ արտահայտություն է, որը ենթադրում է բոլոր հավատացյալների և եկեղեցիների միասնությունը: Հիսուսը բոլոր քրիստոնեական համայնքների Տերն է, այդ թվում Կորնթոսի: Այս արտահայտության մեջ Պողոսն ինքն իրեն և Սոսթենեսին նույնացնում է Կորնթոսի հավատացյալների հետ: Նրանք պետք է հիշեն այն մասին, որ (1) Նրանք շատ համայնքներից մեկն էին և (2) Պողոսը նրանցից մեկն է և նրանց համար է:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:3

³ Շնորհք լինի ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր շօրիցը՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը:

1:3 «Շնորհք» Պողոսը փոխել է սովորական հունական նամակների բացման խոսքը «ողջույններն» *chairein*, բացառիկ քրիստոնեական տերմինի, որը նույն կերպ է հնչում *charis* (տես Հո. 1:7; 2 Կոր. 1:2; Գաղ. 1:3; Եփ. 1:2; Փիլ. 1:2; 2 Թես. 1:2; Փիլիմոն 1:3):

▪ **«խաղաղութիւն»** Հնարավոր է, որ շնորհք բառը արտացոլում է տիպիկ հունական ողջույնը, իսկ «խաղաղությունը» արտացոլում է տիպիկ եբրայերեն ողջույնը *shalom*: *shalom* տերմինը եբրայերեն լեզվով օգտագործվել է թե՛ ողջույնի և թե՛ հրաժեշտի ժամանակ: Դա ենթադրում է ոչ միայն խնդիրների բացակայությունը, այլ նաև բարության և բարեկեցության առկայությունը: Հնարավոր է, որ Պողոսի ստանդարտ ողջույնը գալիս է Թվոց 6:25-26-ից, որտեղ էլ շնորհքը և խաղաղությունը հայտնվում են: Աստվածաբանական շնորհքը միշտ էլ նախորդում է խաղաղությանը, բայց երկուսն էլ գտնվում են միայն Քրիստոսի հետ հավատքի հարաբերություններում (թե՛ միասնական, թե՛ անհատապես):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՍՂԱՂՈՒԹՅՈՒՆ (eirēnē) [ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ]

SPECIAL TOPIC: PEACE (SHALOM)

Այս հունարեն տերմինը վերաբերում էր հակամարտության բացակայությանը, սակայն Մեպտուազինդում, այն ցույց էր տալիս ներքին խաղաղությունը Աստծո և մերձավորի հետ (տես Ղուկ. 2:14; 10: 6): Նոր Կտակարանը, ինչպես Հին Կտակարանը, այն օգտագործում է որպես ողջույն, «խաղաղություն ձեզ» (տես Ղուկ. 10: 5; Հովհ. 20:19,21,26; Հո. 1: 7; Գաղ. 1: 3) կամ «հրաժեշտ , գնա խաղաղությամբ» (տես Մարկ. 5:34; Ղուկ. 2:29; 7:50; 8:48; Հակ. 2:16):

Այս հունարեն տերմինը օգտագործվում է «կապել հարաբերությունները, որոնք կոտրվել են» (տես Հո. 5: 10-11): Նոր Կտակարանը երեք աստվածաբանական կերպերով է խոսում խաղաղության մասին.

1. օբյեկտիվ կողմը՝ մեր խաղաղությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով (տես Հո. 5: 1; Կող. 1:20)
2. սուբյեկտիվ կողմը, մեր Աստծո հետ ուղիղ լինելը (տես Հովհ. 14: 27; 16:33; Փիլ. 4: 7)
3. որ Աստված միավորվել է մի նոր մարմնում, Քրիստոսի միջոցով, թե հավատացյալ հրեային և թե հեթանոսին (տես Եփ. 2: 14-17; Կող. 3:15): Երբ մենք խաղաղություն ենք ունենում Աստծո հետ, այն պետք է խաղաղություն հաղորդի ուրիշներին: Ուղղահայացը պետք է դառնա հորիզոնական:

Newman and Nida, *A Translator's Handbook on Paul's Letter to the Romans*, էջ 92, լավ մեկնաբանություն ունի «խաղաղության» մասին:

«Հին և Նոր Կտակարաններում խաղաղություն տերմինը լայն իմաստ ունի: Այն հիմնականում նկարագրում է մարդու կյանքի ողջ բարեկեցությունը, այն նույնիսկ ընդունվել է հրեաների մեջ որպես ողջույնի (*shalom*) բանաձև: Այս տերմինն այնպիսի խորը իմաստ ուներ, որ կարող էր նաև օգտագործվել հրեաների կողմից, որպես Մեսիական փրկության նկարագրություն: Այս փաստի պատճառով կան ժամանակներ, երբ այն օգտագործվում է գրեթե հունանիշներով «Աստծո հետ ուղիղ հարաբերության մեջ լինել» իմաստով: Այստեղ այս տերմինը, կարծես օգտագործվում է որպես մարդու և Աստծո միջև հաստատված ներդաշնակ կապի նկարագրություն՝ Աստծո կողմից մարդուն Իր հանդեպ ուղիղ դարձնելու հիման վրա» (էջ 92):

▪ **«Աստուած մեր շօրիցը՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը»** Թե՛ «շնորհքը» և թե՛ «խաղաղությունը» գալիս են Հորից և Որդուց: Հայրը և Հիսուսը քերականորեն կապված են որպես մեկ ամբողջություն

(մեկ նախդիր, բայց երկու օբյեկտներ): Մա Հիսուսի աստվածությունը հաստատելու սովորական ձևն է Նոր Կտակարանի գրողների համար (տես 1 Թես. 1:1; 3:11; 2 Թես. 1:2,12; 2:16): Նույն ճշմարտությունը հաստատելու ևս մեկ եղանակ է (Տեր), Հիսուսի առնչությամբ Հին Կտակարանի կոչումները, ինչպես նաև «մեր Տիրոջ օր» Հին Կտակարանյան իրադարձությունը, որն այժմ վերագրվում է Հիսուսին («մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրը», տես 1 Կոր. 1: 8):
 «Տեր Հիսուս Քրիստոսը» տես 1 Կոր.1:1

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ
SPECIAL TOPIC: FATHERHOOD OF GOD

- I. Հին Կտակարան
- Ա. Կա մի իմաստ, որ Աստված հայր է ստեղծագործության միջոցով:
1. Ծննդ. 1: 26-27
 2. Մաղ. 2:10
 3. Գործք 17: 28
- Բ. Հայրը որպես նմանություն մի քանի իմաստներով:
1. Իսրայելի հայրը (ընտրությամբ)
 - ա. «Որդի» - Ելից 4:22; 2 Օր. 14:1; Ես. 1: 2; 63:16; 64: 8; Եր. 3:19; 31: 9,20; Ովս. 1:10; 11: 1; Մաղ. 1: 6
 - բ. «անդրանիկ» - Եր. 31: 9
 2. Իսրայելի թագավորի հայրը (Մեսիական)
 - ա. 2 Թագ. 7: 11-16
 - բ. Մաղ. 2: 7; Գործք 13: 33; Եբր. 1: 5; 5: 5
 - գ. Ովս. 11:1; Մաթ. 2:15
 3. սիրող ծնողի նմանությունը
 - ա. հայր (փոխաբերություն)
 - (1) հոգ է տանում իր որդուն, 2 Օր. 1:31
 - (2) դաստեարակում է- 2 Օր. 8: 5; Առ. 3:12
 - (3) ապահովում է (Ելից) – 2 Օր. 32: 6
 - (4) երբեք չի թողնի - Մաղ. 27:10
 - (5) սիրում է - Մաղ. 103.13
 - (6) ընկեր / ուղեկցող - Եր. 3: 4
 - (7) բուժող / ներող - Եր. 3:22
 - (8) ողորմություն տվողը - Եր. 31:20
 - (9) մարզիչ – Ովս. 11:1-4
 - (10) հատուկ որդի – Մաղ. 3:17
 - բ. մայր (փոխաբերություն)
 - (1) երբեք չի թողնի - Մաղ. 27:10
 - (2) դայակ մոր սերը- Ես. 49:15; 66: 9-13 և Ովս. 11: 4 («լուծ»-ից «մանկիկ»-ին առաջարկած տեքստային վերաձևակերպմամբ)
- II. Նոր Կտակարան
- Ա. Երրորդությունը (տեքստեր, որտեղ նշվում են բոլոր երեքը)
1. Ավետարաններ
 - ա. Մաթ. 3: 16-17; 28:19
 - բ. Հովհ. 14: 26
 2. Պողոս
 - ա. Հռ. 1: 4-5; 5: 1,5; 8: 1-4,8-10
 - բ. 1 Կոր. 2: 8-10; 12: 4-6

	գ.	2 Կոր. 1: 21-22; 13:14	
	դ.	Գաղ. 4: 4-6	
	ե.	Եփ. 1: 3-14,17; 2:18; 3: 14-17; 4: 4	
	զ.	1 Թեա. 1: 2-5	
	է.	2 Թեա. 2:13	
	ը.	Տիտոս 3: 4-6	
	3.	Պետրոս - 1 Պետ. 1: 2	
	4.	Հուդա - հհ. 20-21	
Բ.	Հիսուս		
	1.	Հիսուսը որպես «միածին» - Հովհ. 1:18; 3: 16,18; 1 Հովհ. 4: 9	
	2.	Հիսուսը որպես «Աստծո Որդի» -Մաթ. 4: 3; 14:33; 16:16; Դուկ. 1:32,35; Հովհ.1: 34,49; 6:69; 11:27	
	3.	Հիսուսը որպես սիրելի Որդի - Մաթ. 3:17; 17: 5	
	4.	Հիսուսը օգտագործում է <i>abba</i> Աստծո համար- Մարկ. 14: 36	
	5.	Հիսուսը օգտագործում է ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ, ցույց տալով թե Նրա, թե մեր հարաբերությունը Աստծո հետ	
	ա.	«Իմ Հայրը», օրինակ, Հովհ. 5:18; 10: 30,33; 19:7; 20:17	
	բ.	«ձեր Հայրը», օրինակ, Մաթ. 5: 16,45,48; 6: 1,4,6,8,9,14,15,18,26,32; 7:11; 10: 20,29; 18:14	
	գ.	«մեր Հայրը», օրինակ, Մաթ. 6: 9,14,26	
Գ.	Ընտանեկան փոխաբերություններից շատերը նկարագրում են մտերմիկ հարաբերությունը Աստծո և մարդու միջև.		
	1.	Աստված՝ որպես Հայր	
	2.	Հավատացյալները որպես	
	ա.	Աստծո որդիներ	
	բ.	երեխաներ	
	գ.	Աստծուց ծնված	
	դ.	նորից ծնված	
	ե.	որդեգրված	
	զ.	դուրս բերված	
	է.	Աստծո ընտանիք	

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:4-9
⁴Ամեն ժամանակ գոհանում եմ իմ Աստուածանից ձեր մասին, Աստուծոյ այն շնորհքի համար՝ որ տրուած է ձեզ Քրիստոս Յիսուսումը. ⁵Որ ամեն բանի մէջ հարստացաք նորանով՝ ամեն խօսքով եւ ամեն գիտութիւնով: ⁶Ինչպէս Քրիստոսի վկայութիւնը հաստատուեցաւ ձեր մէջ: ⁷Որ դուք չ'պակասուիք ոչ մի շնորհքով մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութեանը սպասելով. ⁸Որ եւ կ'հաստատէ ձեզ մինչեւ վերջը՝ անմեղադրելի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրումը: ⁹Հաւատարիմ է Աստուած՝ որի ձեռով կանչուեցաք դէպի նորա Որդու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաղորդութիւնը:

1:4 «Ամեն ժամանակ գոհանում եմ իմ Աստվածանից ձեր մասին» Սա ներկա ներգործական սահմանական է, որն արտահայտում է շարունակական գործողություն: 4-9 համարներում Պողոսը գոհություն է հայտնում Աստծուն, այս անհանգիստ եկեղեցու համար: Ներածական գոհությունը առաջին դարի նամակների մշակութային ակնկալվող տարրն էր: 2 Կորնթացիսում նման գոհություն չկա (ոչ էլ Գաղատացիսում):

Կան երկու հին հունական ձեռագրեր (α^* և B), որոնք բաց են թողնում «իմ» դերանունը: Այնուամենայնիվ, այն ընդգրկում է P⁶¹, κ^2 , A, C, D, F, G հունարեն ձեռագրերում, ինչպես նաև Վուլգատի, Սիրիական, Ղպտի և հայերեն թարգմանություններում: UBS⁴ հունարեն տեքստը ներառում է Ա վարկանիշ (որոշակի):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԳՈՂՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: THANKSGIVING

I. Ներածություն

Ա. Սա հավատացյալների համապատասխան վերաբերմունքն է Աստծո հանդեպ.

1. Սա մեր փառաբանության աղբյուրն է Քրիստոսի միջոցով Աստծուն

ա. 2 Կոր. 2:14

բ. 2 Կոր. 9:15

գ. Կող. 3:17

2. Սա պատշաճ շարժառիթ է ծառայության համար, 1 Կոր. 1: 4

3. Սա երկնքի շարունակական թեման է.

ա. Հայտ. 4: 9

բ. Հայտ. 7:12

գ. Հայտ. 11:17

4. Սա հավատացյալների շարունակական թեման է

ա. Կող. 2:7

բ. Կող. 3:17

գ. Կող. 4: 2

II. Աստվածաշնչյան նյութը

Ա. Հին Կտակարան

1. Երկու հիմնական բառեր

ա. *yadah* (BDB 392, KB 398), որը նշանակում է փառաբանություն

բ. *todah* (BDB 392, KB 1695), որը նշանակում է շնորհակալություն, գոհություն: Այն սովորաբար օգտագործվում է մատուցվող գոհաբերությունների համար (տես 2 Մնաց. 29:31; 33:16)

2. Դավիթը հատուկ Ղևտացիներին նշանակեց, գովաբանության և Աստծուն շնորհակալություն հայտնելու համար: Սա շարունակվեց Սողոմոնի, Եզեկիայի և Նեեմիայի կողմից.

ա. 1 Մնաց. 16: 4,7,41

բ. 1 Մնաց. 23:30

գ. 1 Մնաց. 25: 3

դ. 2 Մնաց. 5:13

ե. 2 Մնաց. 7:6

զ. 2 Մնաց. 31:2

է. Նեեմիա 11:12

ը. Նեեմիա 12: 24,27,31,38,46

3. Սաղմոսաց Գիրքը Իսրայելի փառաբանության և գոհության հավաքածուն է:

ա. Գոհություն ՅԱՀՎԵԻՆ Իր Ուխտի հավատարմության համար

(1) Սաղ. 107:8

(2) Սաղ. 103: 1

(3) Սաղ. 138: 2

բ. Գոհությունը հանդիսանում էր տաճարի ընթացակարգի մի մասը

(1) Սաղ. 95:2

- (2) Սաղ. 100: 4
- գ. Գոհությունը ուղեկցում է զոհաբերություններին
 (1) Սաղ. 26:7
 (2) Սաղ.122:4
- դ. Գոհություն տրվում ՅԱՀՎԵԻ գործողությունների համար
 (1) Թշնամիներից ազատում
 (ա) Սաղ. 7:17
 (բ) Սաղ. 18:49
 (գ) Սաղ. 28:7
 (դ) Սաղ. 35:18
 (ե) Սաղ. 44:8
 (զ) Սաղ. 54:6
 (է) Սաղ. 79:13
 (զ) Սաղ. 118: 1,21,29
 (ը) Սաղ. 138:1
- (2) ազատագրում բանտից (փոխաբերություն), Սաղ. 142: 7
 (3) մահից ազատել
 (ա) Սաղ. 30: 4,12
 (բ) Սաղ. 86:12-13
 (գ) Ես. 38: 18-19
- (4) Նա ամբարիշտին խոնարհեցնում է,իսկ արդարին բարձրացնում
 (ա) Սաղ. 52:9
 (բ) Սաղ. 75:1
 (գ) Սաղ. 92:1
 (դ) Սաղ. 140:13
- (5) Նա ներում է
 (ա) Սաղ. 30:4
 (բ) Ես. 12:1
- (6) Նա հոգում է Իր ժողովրդի համար
 (ա) Սաղ.106: 1
 (բ) Սաղ. 111:1
 (գ) Սաղ. 136: 1,26
 (դ) Սաղ. 145:10
 (ե) Երեմ. 33:11

Բ. Նոր Կտակարան

1. Շնորհակալության և զոհության համար օգտագործված հիմնական բառը (որոշ հղումներ)
 - ա. *eucharisteō* (հմմտ.1: 4,14; 10:30; 11:24; 14: 17,18; Կոր. 1: 3,12; 3:17)
 - բ. *eucharistos* (հմմտ. Կոր. 3:15)
 - գ. *eucharistia*(տես 1 Կոր.14:16; 2 Կոր. 4:15; 9: 11,12, Կոր.2: 7; 4: 2)
 - դ. *charis* (տես 1 Կոր. 15: 57; 2 Կոր. 2:14; 8:16; 9:15; 1 Պետ. 2:19)
2. Հիսուսի օրինակը
 - ա. Նա զոհանում էր սննդի համար.
 - (1) Դուկ. 22:17,19 (1 Կոր. 11:24)
 - (2) Հովհ. 6: 11,23
 - բ. Նա զոհանում էր պատասխանված աղոթքի համար, Հովհ. 11:41
3. Գոհության այլ օրինակներ

- ա. Աստծո պարզևի՝ Քրիստոսի համար, 2 Կոր. 9:15
 - բ. Մենդի համար
 - (1) Գործք 27:35
 - (2) Հռ. 14:6
 - (3) 1 Կոր. 10:30; 11:24
 - (4) 1 Տիմ. 4: 3-4
 - գ. Բժշկության համար, Ղուկ. 17:16
 - դ. Խաղաղության համար, Գործք 24: 2-3
 - ե. Վտանգից ազատվելու համար
 - (1) Գործք 27:35
 - (2) Գործք 28:15
 - զ. Բոլոր հանգամանքների համար, Փիլ. 4:6
 - է. Բոլոր մարդկանց համար, հատկապես առաջնորդների, 1 Տիմ. 2: 1-2
4. Շնորհակալության այլ ասպեկտներ
- ա. Դա Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար, 1 Թեա. 5:18
 - բ. Դա վկայում է Հոգով լցված կյանքի մասին, Եփ. 5:20
 - գ. Դա անտեսելը մեղք է
 - (1) Ղուկ. 17: 16-17
 - (2) Հռ. 1:21
 - դ. Դա հակաթույն է մեղքի համար, Եփ. 5: 4
5. Պողոսի գոհունակությունը
- ա. Նրա օրհնությունները եկեղեցու վրա
 - (1) ավետարանի հռչակման համար
 - ա) Հռ. 1:8
 - բ) Կող. 1: 3-4
 - գ) Եփ. 1:15-16
 - դ) 1 Թեա. 1: 2
 - (2) շնորհքի շնորհիվ
 - (ա) 1 Կոր.1: 4
 - (բ) 2 Կոր. 1:11; 4:15
 - (3) ավետարանի ընդունման համար, 1 Թեա. 2:13
 - (4) ավետարանի տարածման հարցում հաղորդակցվելու համար, Փիլ. 1: 3-5
 - (5) շնորհքի մեջ աճելու համար, 2 Թեա. 1: 3
 - (6) ընտրության գիտության համար, 2 Թեա. 2:13
 - (7) հոգևոր օրհնությունների համար, Կող. 1:12; 3:15
 - (8) առատաձեռնությամբ տալու համար, 2 Կոր. 9:11-12
 - (9) նորադարձների հավատքի համար, 1 Թեա. 3: 9
 - բ. Նրա անձնական գոհությունը
 - (1) հավատացյալ լինելու համար, Կող. 1:12
 - (2) մեղքի ստրկությունից ազատվելու համար, Հռ. 7:25; 2 Կոր. 2:14
 - (3) այլ հավատացյալների զոհաբերվող գործի համար, Հռ. 16: 4; 2 Կոր. 8:16
 - (4) որոշ գործողություններ, որոնք տեղի չեն ունեցել, 1 Կոր. 1:14
 - (5) անձնական հոգևոր պարզևի համար, 1 Կոր. 14:18
 - (6) ընկերների հոգևոր աճի համար, Փիլիմոն 4-5
 - (7) ծառայության համար ֆիզիկական ուժի համար, 1 Տիմ.1:12

III.	Եզրակացություն
Ա.	Գոհությունը մեր հիմնական պատասխանն է Աստծուն, երբ մենք փրկվում ենք: Այն ոչ միայն բանավոր համաձայնության հարց է, այլև ապրելակերպի երախտագիտություն:
Բ.	Շնորհակալությունը բոլոր բաներում հասուն կյանքի նպատակն է Աստծո հոգածության մեջ (տես 1 Թես. 5: 13-18):
Գ.	Գոհությունը Հին և Նոր Կտակարանի կրկնվող թեման է: Արդյո՞ք դա նաև ձեր թեման է:

▪ **«Աստուծոյ այն շնորհքի համար՝ որ տրուած է ձեզ Քրիստոս Յիսուսումը»** Պողոսը շեշտում է, որ իրենց դիրքը և պարզները Աստծո շնորհքով են Հիսուս Քրիստոսի կատարած գործի միջոցով, այլ ոչ թե իրենց անձնական արժանապատվությամբ (աօրիստ կրավորական դերբայ, տես. Եփ. 2:8-9): Սա էր ուշադրության կենտրոնում, որը պիտի փոխարիներ իրենց հոգևոր հպարտությանը

1. նրանց պարզներով օժտված առաջնորդները
2. նրանց անհատական հոգևոր պարզները
3. իրենց ինտելեկտուալ ֆոնը (հունական մշակույթ)
4. նրանց սոցիալական դիրքը (հռոմեական մշակույթ)

1:5 «Որ ամեն բանի մեջ հարստացաք նորանով» Այս աօրիստ կրավորական սահմանականը համապատասխանում է 1 Կոր. 1:4 աստվածաբանական շեշտադրությանը (Աստծո շնորհքը տրվեց Քրիստոսով): Բոլոր կրավորական բայերը 1 Կոր. 1:4-9-ում, ենթադրյալ գործողը Աստված է: Սուրբ Երրորդությունը հոգում է հավատացյալների բոլոր կարիքները (բոլոր հոգևոր պարզները, տես 1 Կոր. 1:7): Տես Հատուկ Թեմա: Երրորդություն 1 Կոր. 2:10:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը այս համարում երեք անգամ օգտագործում է *pas* բառը («բոլոր» կամ «ամեն բան»): Աստված ամբողջությամբ հոգացող է: Նա կարիք չունի մարդկային հնարամտության, ինտելեկտի և սոցիալական իրավիճակի:

Արևելահայերեն «ամեն խօսքով եւ ամեն գիտութիւնով»
Արևմտահայերեն «ամեն խօսքով ու ամեն գիտութիւնով»

NASB «ամեն խոսքով և ամեն գիտությունով»
NKJV, Peshitta «բոլոր խոսքերով և բոլոր գիտելիքներով»
NRSV «խոսքի և ցանկացած տեսակի իմացության մեջ»
TEV «բոլոր բաներում, ներառյալ բոլոր խոսքը և բոլոր գիտելիքները»
NJB «ցանկացած խոսքի և գիտության մեջ»
REB «Դուք լիարժեք տիրապետում եք գիտելիքներին և կարող եք լիարժեք արտահայտություն դրսևորել»

Phillips թարգմանությունը «ձեր շրթունքների բառերից դեպի ձեր սրտի հասկացողությունը»: Այստեղ արտացոլվում են հելլենիզմին ուղղված երկու ասպեկտներ (ուշ գնոստիկ) հոգևոր հպարտությունը, որը զարգանում էր Կորնթոսի եկեղեցում (տես 1 Կոր. 13: 1-3): Քրիստոսի փոխարեն նրանք փառավորվում էին իրենց պարզներով և գործերով: Աստված էր տվել նրանց այս պարզները: Մարդկային հպարտության տեղ չկա/չկար (տես Եփ. 2:9): Տես Հատուկ Թեմա: Պարծենալ, 1 Կոր. 5:6:

Պողոսի գիտելիքը ակնարկում է ո՛չ տեսական գիտելիքները, ո՛չ էլ ակադեմիական գիտելիքները, այլ քրիստոնեական ճշմարտությունը և թե ինչպես է այն վերաբերում կյանքին (տես 1 Կոր. 1: 8-10; Հռ. 14:1-15:13): Մարդկային գիտելիքները ձևավորվում են, բայց Աստծո գիտելիքները զարգացնում և հանգեցնում են խաղաղության և ներդաշնակության քրիստոնեական հաղորդակցության մեջ: Մենք այսօր Աստծո գիտելիքի պարզի կարիք ունենք եկեղեցում:

1:6 «Ինչպէս Քրիստոսի վկայութիւնը» Ավետարանի Առաքելական պատգամը ամրապնդվեց Սուրբ Հոգու միջոցով, հարստացրեց այս հավատացյալներին հոգևոր պարգևներով: Աստծու կողմից տրված բոլոր օրհնություններն ու պարգևները, այս ամենը Քրիստոսի միջոցով թափվում է կարիքավորների, արձագանքող մարդկային սրտերին:

Արևելահայերեն «հաստատուեցաւ ձեր մէջ»
Արևմտահայերեն «ձեր մէջ հաստատուեցաւ»

NASB, NKJV, Peshitta, REB «հաստատվեց ձեր մեջ»
NRSV «ձեր մեջ ամրապնդվել է»
TEV «հաստատվել է ձեր մեջ»
NJB «արմատակալել է ձեր մեջ»

Սա հունարեն *Bebaios* տերմինն է, որն ունի երեք նշանակություն՝

1. այն, ինչը հաստատ է, որոշակի կամ վստահելի (տես Հո. 4:16; 2 Կոր. 1:7; Եբ. 2:20; 3:6,14; 6:19; 2 Պետ. 1:10,19)
2. գործընթացը, որի միջոցով ինչ-որ բան վստահելի է դառնում կամ հաստատվում (տես Հո. 15:8; Եբ. 2:2, Louw and Nida, *Greek-English Lexicon of the New Testament*, հատոր 1, էջ 340,377,670)
3. առաջին դարում Եգիպտոսում հայտնաբերված Կոյնե մագաղաթը դարձավ իրավական երաշխիքի տեխնիկական տերմին (տես Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*, էջ. 107-8)

Այստեղ խոսքը վերաբերում է Աստծո գործությանը, որը դրսևորվում է նրանց մեջ (հոգևոր պարգևներ): Դա կարող է վերաբերել Հոգու այլ դրսևորումներին, քանի որ այստեղ օգտագործվում է աօրիստ կրավորական սահմանական մեկ այլ ձև է, զուգահեռ 1 Կոր. 1:5 (և նաև աօրիստ կրավորական դերբայ), այն կարող է նաև վերաբերել Աստծո գործողություններին Սուրբ Հոգու միջոցով իրենց դարձի գալու մեջ:

1:7

Արևելահայերեն «Որ դուք չ'պակասուիք ոչ մի շնորհքով»
Արևմտահայերեն «Որպէս զի ձեզի որեւէ շնորհք չպակսի »

NASB, NJB «Որ դուք չպակասեք ոչ մի շնորհքով»
NKJV «այնպէս որ դուք ոչ մի պարգև չեք ստացել»
NRSV «այնպէս որ դուք ոչ մի հոգևոր պարգևի պակաս չեք ունենում»
TEV «որ դուք չեք ստացել մեկ օրհնություն»
Peshitta «և նրա պարգևներից որևէ մեկի պակաս չեք զգում »

«Պարզև» տերմինը *charisma* է: Այս խոսքը վերաբերում է «շնորհք» տերմինին *charis*, և շեշտը դնում է, որ հոգևոր պարգևները տրվում են Աստծո կողմից ընդհանուր օգտի համար (տես 1 Կոր 12:7,11): Նրանք նպատակ ունեն փառաբանել Քրիստոսին, այլ ոչ թե Հոգուն կամ անհատ քրիստոնյային (տես 12-14 գլուխները): Բոլոր պարգևները, որոնք անհրաժեշտ էին, ներկա էին Կորնթոսի եկեղեցում, քանի որ նրանք գտնվում են յուրաքանչյուր եկեղեցում (տես 1 Կոր. 1:5): Աստված, Սուրբ Հոգու ծառայության միջոցով, առատաձեռնությամբ շնորհեց իր ժողովրդին (ուժեղ կրկնակի բացասականը կապված է «պակասության» հետ) Քրիստոսի երկու գալուստների միջանկյալ ժամանակահատվածում:

- **«սպասելով»** Այս հունարեն տերմինը կարող է նշանակել՝

1. համբերատար սպասել սպասվող ապագա իրադարձությանը (տես Եբ. 10:13; 1 Պետ. 3:20)
2. անհամբեր սպասելով ապագա իրադարձությանը (տես Հռ. 8:19,23,25; Փիլ. 3:20; Եբ. 9:28) NKJV, NASB և NIV թարգմանությունները հետևում են #2, մինչդեռ NRSV, TEV և NJB թարգմանությունները հետևում են #1:

▪ **«մեր Տեր Յիսուս Քրիստոսի յայտնութեանը»** Սա հունարեն *apocalupsis* տերմինն է: Այն հաճախ թարգմանվում է որպես «հայտնություն»: Տերմինը հիմնականում նշանակում է վարագույրը ետ քաշել, որպեսզի հայտնաբերվի ինչ-որ բան: Սա Նոր Կտակարանի վերջին գրքի վերնագիրն է: Այստեղ վերաբերում է Քրիստոսի վերադարձին (տես 1 Կոր. 1:8): Տես Հատուկ Թեմա: ՆԿ տերմիններ Քրիստոսի վերադարձի համար, 1 Կոր. 15:23

1:8

Արևելահայերեն «Որ եւ կ'հաստատէ ձեզ մինչեւ վերջը»

Արևմտահայերեն «Որ նաեւ ձեզ պիտի հաստատէ մինչեւ վերջը»

NASB, NKJV «Որ և կհաստատի ձեզ մինչև վերջը»

NRSV, Peshitta «Նա նաև կգորացնի ձեզ մինչև վերջ»

TEV «Նա կպահի ձեզ մինչև վերջ»

NJB «նա կշարունակի ձեզ ուժ տալ մինչև վերջ»

1 Կոր.1:4-9 կրավորական բայերի գործող անձը Աստված է եղել: Այնուամենայնիվ, 1 Կոր. 1:8-ը անորոշ է: Որոշ մեկնաբաններ կարծում են, որ այս հատվածում առաջին անգամ Քրիստոսը «ով» է: Կարծես թե բովանդակային առումով ավելի լավ է ենթադրել, որ ՀայրԱստվածը դեռևս ակտիվ գործում է, որը հավատացնում է հավատացյալներին և հաստատում է իրենց ընդունելիությունը:

«Հաստատել» տերմինը օգտագործվել է 1 Կոր. 1:6-ում: Այս եկեղեցին կայուն, հաստատուն և անսասան լինելու կարիք ուներ: Սա Պողոսի նամակների հիմնական նպատակներից մեկն է: Քրիստոսի ավետարանը հաստատվել է (1 Կոր. 1:6), և դրանք կհաստատվեն Աստծո օգնությամբ (1 Կոր. 1:8): 2 Կոր.2:8 Պողոսը ցանկանում է, որ նրանց սերը հաստատվի նրա վրա:

Աստվածաշունչը հավանաբար ունի երկու պարադոքսալ ճշմարտություններ՝ հավատացյալներն Աստծո հետ եղած փոխհարաբերությունների մասին՝

1. Դա բնութագրական է, հետևաբար, այն ներառում է նախնական և շարունակական հավատք և գոջացող պատասխան: Մենք պետք է ջանասիրաբար պահպանենք մեր հարաբերությունները:
2. Ապահով է Աստծո հավատարմության մեջ (տես Հուդա 24): Ոչ ոք չի կարող գողանալ մեր հարաբերությունները մեզանից (տես Հովհ. 6.33-39; 10: 28; Հռ. 8: 38-39): Անվտանգությունը և հաստատակամությունը երկուսն էլ աստվածաշնչյան են (տես Եփ. 2: 8-9,10 և Փիլ. 2: 12-13): Նրանք «ուխտի» երկու անհրաժեշտ կողմերն են:

▪ **«անմեղադրելի»** ստորև Տես Հատուկ Թեմա

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ՀԱՆՑԱԶՈՒՐԿ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ

SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս գաղափարը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխհարաբերության

վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):

4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով
ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացոց 1-7)
գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային
ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես Հովհ. 1:1-14; Կող. 1:13-17; Եբր. 1:2-3)
բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դառնում
ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես Հռ. 4:3,6,8, 11,22,23,24; Հակ. 2:23)
բ. աստիճանաբար Սուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսանմանությունն է (տես Հռ. 8:28-30; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1:4; 4:13; 1 Թես. 3:13; 4:3; 5:23; 2 Թես. 2:13; Տիտ. 2:14; 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես Հայտ. 21:2) սրբագործված երկիր (տես 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես Եսայիա 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ եբրայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:
2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Robert B. Girdlestone, Synonyms of the Old Testament, էջ 94-99).
ա. *shalom* (BDB1022, KB 1532)
բ. *thamam* (BDB1070, KB 1743)
գ. *calah* (BDB478, KB 476)
3. Մեպտուազինդ (այսինքն՝ վաղ եկեղեցու Աստվածաշունչը) եբրայերեն այս գաղափարները թարգմանում է կոյնե հունարեն տերմինների, որոնք կիրառվում են Նոր Կտակարանում (տես ստորև Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
ա. *amōmos* (BDB 1071, տես Ելից 29:1; Ղև. 1:3,10; 3:1,6; Թվոց 6:14)
բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական գաղափարը
ա. Եբրայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես Եփ. 5:27; Փիլ. 2:15; 1 Պետ. 1:19)
բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես 1 Կոր. 1:8; Կող. 1:22)

2. Քրիստոսն է անմեղ, անբիծ և անարատը (*amōmos*, տես Եբ. 9:14; 1 Պետ. 1:19)
3. Քրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես Եփ. 1:4; 5:27; Փիլ. 2:15; Կոր. 1:22; 2 Պետ. 3:14; Հուդա 1:24; Հայտ. 14:5)
4. Այս գաղափարը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
 - ա. *aneglētos*, «առանց դատապարտության» (տես 1 Տիմ. 3:10; Տիտոս 1:6-7)
 - բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատինքի» (տես 1 Տիմ. 3:2; 5:7; 6:14; Տիտոս 2:8)
5. «Անարատ» գաղափարը (*amiantos*) կիրառվում է՝
 - ա. Քրիստոսի համար (տես Եբր. 7:26)
 - բ. Քրիստոնյայի ժառանգության համար (տես 1 Պետ. 1:4)
6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» գաղափարը (*holoklēria*) (տես Գործք 3:16; 1 Թես. 5:23; Հակ. 1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» գաղափարը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես Ղուկ. 1:6; Փիլ. 2:15; 3:6; 1 Թես. 2:10; 3:13; 5:23)
8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» գաղափարը փոխանցվում է *amōmētos* (տես 2 Պետ. 3:14)
9. «Անբիծ», «անարատ» գաղափարը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես 1 Տիմ. 6:14; Հակ. 1:27; 1 Պետ. 1:19; 2 Պետ. 3:14)

Դ. Եբրայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս գաղափարի իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Քրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու: Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հոչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Քրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես Եփ. 4:1,17; 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես Մատթ. 5:20,48; Եփ. 1:4; 1 Պետ. 1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրինապես, այլ բացառապես:

▪ **«մեր Տեր Յիսուս Քրիստոսի օրումը»** Նոր Կտակարանի հեղինակները վերցրել են Հին Կտակարանի «ՅԱՀՎԵՅԻ Օր» և կիրառել այն Հիսուսի Երկրորդ Գալստյան համար: Հիսուս Քրիստոսը ՅԱՎԵՅԻ փոխանորդն է ստեղծագործության, փրկության և դատելու մեջ:

1:9 «Հաւատարիմ է Աստուած» Հավատք տերմինը Հին Կտակարանում կայուն կամ ամուր դիրքորոշման փոխաբերական ընդլայնումն է: Դա նշանակում է փոխաբերական կերպով ցույց տալ, որ վստահ է, վստահելի, և հավատարիմ: Նրանցից ոչ մեկը նույնիսկ չի նկարագրել ընկած մարդկությունը: Դա ոչ թե մարդկության արժանապատվությունը, հավատարմությունը կամ վստահելիությունն է, այլ Աստծունը (տես 2 Օր. 7:9, Սաղ. 36:5, 40:10; 89: 1,2,5,8; 92: 2, 119: 90; Հո. 3:3; 1 Կոր. 10:13; 2 Կոր. 1:18; 1 Թես. 5:24; 2 Տիմ. 2.13): Մենք վստահում ենք Նրա վստահելի խոստումներին, այլ ոչ թե մեր հավատարմությանը: Համաձայնության հնազանդությունը հոսում է երախտագիտության շնորհիվ: Աստվածաշնչյան ուշադրությունը միշտ եղել է Նրա հավատարմության վրա, այլ ոչ թե հավատացյալների հավատքի: Հավատքը չի կարող փրկել որևէ մեկին: Միայն շնորհքն է փրկում, բայց հավատքի ձեռով (տես Եփ. 2:8-9): Խոսքը երբեք հավատքի քանակի մասին չէ (տես Մատթ. 17:20), այլ իր օբյեկտի (Հիսուսի) վրա: Մեր հույսը Աստծո անփոփոխ բնույթն է կրում, ով կոչ է անում և խոստանում (տես Մաթ. 3:6, 2 Կոր. 1:20):

Աստուծո ձրի պարզեր Հիսուս Քրիստոսի հավատքից է (տես Հո. 3:22,25; 4:5; 6:23; 9:30; Գաղ. 2:16; 1 Պետ. 1:5): Մարդիկ պետք է արձագանքեն (սկզբնապես և շարունակաբար) Աստծո շնորհքի և Քրիստոսի ներման առաջարկին (տես Հովհ. 1:12; 3: 16-17,36; 6:40; 11: 25-26; Հո. 10: 9-13):

Աստված իր հարաբերությունները կառուցում է ընկած մարդկանց հետ ուխտի միջոցով: Նախաձեռնությունը միշտ է պատկանում է Նրան (տես Հովհ. 6:44, 65) և սահմանում է կանոնները և սահմանները (տես Մարկ. 1:51; Գործք 20:21): Նա թույլ է տալիս ընկած մարդկությանը մասնակցելու իրենց փրկությանը՝ արձագանքելով Նրա ուխտի առաջարկին: Պարտավոր արձագանքը նախնական և շարունակական հավատք է, ապաշխարություն, հնազանդություն, ծառայություն, երկրպագություն և հաստատակամություն:

Michael Magill, *New Testament TransLine*, էջ 577, #24, ունի հիանալի մեկնաբանություն:

«Անցյալ ժամանակը 1 Կոր. 1:5-6-ում, ներկա ժամանակը 1 Կոր. 1:7-ում, ապառնի ժամանակը 1 Կոր 1:8-ում: Աստված բոլոր երեք ժամանակների մեջ էլ հավատարիմ է»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ (ԴՁՁ)

SPECIAL TOPIC: Believe, Trust, Faith and Faithfulness in the Old Testament (ԴՁՁ)

I. Նախաբան

Պետք է նշել, որ այս աստվածաբանական հասկացողության կիրառությունն այնքան կարևոր է Նոր Կտակարանում, բայց այնքան էլ պարզ չի սահմանվում Հին Կտակարանում: Անշուշտ, կա այնտեղ, բայց ներկայացված է միայն բանալի հատվածներում և անձերի մեջ

Հին Կտակարանի կապակցումները

Ա. անհատը և համայնքը

Բ. անձնական հանդիպումը և ուխտի հնազանդությունը

Հավատքը թե անձնական հանդիպում է և թե առօրյա ապրելակերպ: Այն ավելի հեշտ է նկարագրել հավատարիմ անձի կյանքի մեջ, քան թե բառերով (այն է, բառային սերտողություն): Այս անձնական ասպեկտը լավագույնս ներկայացված է

Ա. Աբրահամը և իր սերունդը

Բ. Դավիթը և Իսրայելը

Այս մարդիկ հանդիպեցին Աստծուն և նրանց կյանքերը ամբողջովին փոխվեցին (ոչ թե կատարյալ կյանքեր, այլ շարունակական հավատքի կյանք): Փորձությունները ցույց տվեցին իրենց հավատքի տկարություններն ու ուժերը, բայց սերտ, հուսալի հարաբերությունը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այն փորձվեց և զուվեց, բայց այն շարունակվեց, որպես ապացույց նրանց նվիրվածության և ապրելակերպի:

II. Օգտագործվել է հիմնական արմատը

Ա. ԴՁՁ (BDB 52, KB 63)

1. ԲԱՅ

ա. *Qal* հիմք – աջակցել, պաշտպանել, պահել, սնուցել, կերակրել (4 Թագ.10:1,5; Եսթեր 2:7, ոչ աստվածաբանական կիրառություն)

բ. *Niphal* հիմք – համոզվել կամ հաստատել, հիմնել, պնդել, հավատարիմ լինել կամ վստահելի, հուսալի

(1) մարկանց, Ես. 8:2; 53:1; Եր. 40:14

(2) իրերին, Ես. 22:23

(3) Աստծուն, 2 Օր. 7:9; Ես. 49:7; Եր. 42:5

գ. *Hiphil* հիմք – հաստատ կանգնել, հավատալ, վստահել

(1) Աբրահամը հավատաց Աստծուն, Ծննդ. 15:6

(2) Իսրայելացիք Եգիպտոսում հավատացին, Ել.4:31;14:31(ժխտում է, 2 Օր.1:32)

- (3) Իսրայելացիք հավատացին ՅԱՀՎԵԻՆ, ով խոսեց Մովսեսի միջոցով Ել. 19:9; Սաղ. 106:12,24
- (4) Աքազը չվստահեց Աստծուն, Ես. 7:9
- (5) ով որ հավատա Նրան, Ես. 28:16
- (6) հավատալ Աստծո մասին ճշմարտություններին, Ես. 43:10-12

- 2. ԳՈՅԱԿԱՆ (արական) - հավատարմություն (2 Օր. 32:20; Ես. 25:1; 26:2)
- 3. ՄԱԿԲԱՅ – ճշմարիտ, ես համամիտ եմ, թող այդպես լինի (տես 2 Օր. 27:15-26; 3 Թագ. 1:36; 1 Մնաց. 16:36; Ես. 65:16; Եր. 11:5; 28:6): Սա հոգևոր կիրառությունն էր «ամեն» բառի Հին և Նոր Կտակարաններում:
- Բ. յոճ (BDB 54, KB 68) ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ ամրություն, հավատարմություն, ճշմարտություն
 - 1. մարդկանց, Ես. 10:20; 42:3; 48:1
 - 2. Աստծո, Ել. 34:6; Սաղ. 117:2; Ես. 38:18,19; 61:8
 - 3. ճշմարտության, 2 Օր. 32:4; 3 Թագ. 22:16; Սաղ. 33:4; 98:3; 100:5; 119:30; Եր. 9:4; Զաք. 8:16
- Գ. յոճ (BDB 53, KB 62), հաստատակամություն, կայունություն, հավատարմություն
 - 1. ձեռքերի. Ել. 17:12
 - 2. ժամանակի, Ես. 33:6
 - 3. մարդկանց, Եր. 5:3; 7:28; 9:2
 - 4. Աստծո, Սաղ. 40:11; 88:12; 89:2,3,6,9; 119:138

III. Գաղափարի կիրառությունն ըստ Պողոսի

- Ա. Պողոսը ՅԱՀՎԵԻ և Հին Կտակարանի մասին իր նոր հասկացողությունը հիմնում է իր անձնական հանդիպումը Հիսուսի հետ Դամասկոսի ճանապարհին (տես Գործք. 9:1-19; 22:3-16; 26:9-18):
- Բ. Նա գտավ Հին Կտակարանյան հենարան իր նոր հասկացողության համար երկու բանալի հատվածներում, որոնք օգտագործում են յոճ արմատը:
 - 1. Ծննդ. 15:6 – Աբրամի անձնական հանդիպումը նախաձեռնված էր Աստծո կողմից (Ծննդ. 12), արդյունքնում հավատքի հնազանդ կյանք էր (Ծննդ. 12-22) : Պողոսն այդ մասին ակնարկում է Հռ. 4 և Գաղ. 3:
 - 2. Ես. 28:16 – նրանք, ովքեր հավատում են դրան (Աստծո ստուգած և ամուր տեղադրած անկյունաքար) երբեք չեն
 - ա. Հռ. 9:33 «ամաչի» կամ «հուսահատվի»
 - բ. Հռ. 10:11 «ամաչի»
 - 3. Ամբ. 2:4 – նրանք, ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարիմ կյանքով (տես Եր. 7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռ.1:17-ում և Գաղ. 3:11-ում (նաև տես Երբ. 10:38):

IV. Գաղափարի կիրառությունը ըստ Պետրոսի

- Ա. Պետրոսը կապակցում է
 - 1. Ես. 8:14 – 1 Պետ. 2:8 (զլորման քար)
 - 2. Ես. 28:16 – 1 Պետ. 2:6 (անկյունաքար)
 - 3. Սաղ. 111:22 – 1 Պետ. 2:7 (անարգված քար)
- Բ. Նա օգտագործում է յուրահատուկ լեզու, որը նկարագրում է Իսրայելին «ընտիր ազգ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ»
 - 1. 2 Օր. 10:15; Ես. 43:21
 - 2. Ես. 61:6; 66:21
 - 3. Ելից 19:6; 2 Օր. 7:6

Իսկ հիմա օգտագործում է այն Քրիստոսով եկեղեցու հավատքի համար(տես 1 Պետ. 2:5,9):

V. Գաղափարի կիրառությունը ըստ Հովհաննեսի

Ա. Տերմինի կիրառությունը Նոր Կտակարանում

«Հավատաց» տերմինը առաջացել է հունարեն (*pisteuō*) տերմինից, որը նաև կարող է թագմանվել «հավատալ», «հավատք», կամ «վստահություն»: Օրինակ, որպես գոյական Հովհաննու Ավետարանում չի հանդիպում, բայց որպես բայ հաճախ է օգտագործվում: Հովհ. 2:23-25 գոյություն ունի որոշակի անորոշություն ժողովրդի անկեղծության մեջ Հիսուս Նագովրեցուն, որպես Մեսիա ընդունելու առումով: Ուրիշ օրինակներ, երբ «հավատալ» տերմինը օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8:31-59 և Գործք. 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Դրան անպայման պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես Մաթ. 13:20-22,31-32):

Բ. Օգտագործվում է ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ

1. *eis* նշանակում է «մեջ»: Այս հատուկ քերականական կառուցվածքը ընդգծում է հետևյալ միտքը, երբ հավատացյալներն իրենց վստահություն/հավատքը դնում են Հիսուսի վրա
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; 1 Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 17:37,42; Մաթ. 18:6; Գործք. 10:43; Փիլ.1:29; 1 Պետ. 1:8)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
 - դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; 1 Հովհ. 5:10)
 - ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք. 19:4; Գաղ. 2:16)
 - զ. Լույսին (Հովհ. 12:36)
 - է. Աստծուն (Հովհ. 14:1)
2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ. 3:15; Մարկ. 1:15; Գործք. 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» ինչպես, Մաթ. 27:42; Գործք. 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4:5,24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ. 2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ ինչպես Գաղ. 3:6; Գործք. 18:8; 27:25; 1 Հովհ.3:23;5:10;
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» ցույց է տալիս էությունը այն բանի, թե ինչին հավատալ
 - ա. Հիսուսն Աստծո Սուրբն է (Հովհ. 6:69)
 - բ. Հիսուսը – ԵՄ ԵՄ (Հովհ. 8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Նա Հոր մեջ (Հովհ. 10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
 - ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
 - զ. Հիսուսն ուղարկված էր Հոր կողմից (Հովհ. 11:42; 17:8,21)
 - է. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 14:10-11)
 - ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
 - թ. Հիսուսն Իրեն ճանաչեցնում է Հոր ուխտի անվան հետ, «ԵՄ ԵՄ» (Հովհ. 8:24; 13:19)
 - ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
 - ի. Հիսուս մեռավ և հարություն առավ (1 Թեա. 4:14)

VI. Ամփոփում

Ա. Աստվածաշնչյան հավատքը մարդու արձագանքն է Աստծո խոսքին/խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (տես Հովհ.6:44,65), բայց Աստծո հետ հաղորդակցվելու համար մարդիկ պետք է արձագանքեն (տես Հատուկ Թեմա: Ուխտ):

1. ապաշխարություն (տես Հատուկ Թեմա: Ապաշխարություն)

2. հավատք/վստահություն (տես Հատուկ Թեմաներ)
 3. հնազանդություն
 4. համբերություն (տես Հատուկ Թեմա: Համբերություն)
- Բ. Աստվածաշնչյան հավատքը
1. անձնական հարաբերություն (ներքին հավատք)
 2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատում (հավատքը Աստծո հայտնության մեջ, Սուրբ Գիրք)
 3. համապատասխան հնազանդությամբ արձագանքել դրան (ամենօրյա հավատարմություն)

Աստվածաշնչյան հավատքը երկինք գնալու ուղեգիր չէ, ոչ էլ ապահովագրություն: Այն անձնական հարաբերություն է: Դա արարչագործության նպատակն է և մարդը, որը ստեղծվել է Աստծո պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Հարցը մտերմիկ հարաբերությունն է: Աստված փափագում է մտերմություն, և ոչ թե որոշակի աստվածաբանական չափանիշ: Բայց Սուրբ Աստծո հետ հաղորդակցվելու համար պահանջվում է, որ զավակները ցուցաբերեն «ընտանեկան» առանձնահատկություն (այն է, սրբություն, հմմտ. Ղև. 19:2; Մաթ. 5:48; 1 Պետ. 1:15-16): Անկումը (հմմտ. Ծննդ. 3) ազդեց մեր ճիշտ արձագանքելու կարողության վրա: Ուստի, Աստված գործեց մեր օգտին (հմմտ. Եզ. 36:27-38), տալով մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի», որը կտա մեզ կարողություն, հավատքի և ապաշխարհության միջոցով հաղորդակցվել Նրա հետ և հնազանդվել Նրան:

Երեքն էլ անհրաժեշտ են: Երեքն էլ պետք է լինեն անպայման: Նպատակն է ճանաչել Աստծուն (թե երբայական և թե հունական իմաստներով) և անդրադարձնել Նրա կերպարը մեր կյանքերում: Հավատքի նպատակը մեկ օր երկնքում հայտնվելը չէ, բայց ամեն օր Քրիստոսանման լինել:

- Գ. Մարդկային հավատարմությունը արդյունքն է (ՆԿ), և ոչ թե (ՀԿ) Աստծո հետ հարաբերություն ունենալու համար; մարդու հավատքը Նրա հավատարմությանը; մարդու վստահությունը Նրա հուսալիությանը: Նոր Կտակարանի փրկության տեսանկյան սիրտը այն է, որ մարդիկ պետք է արձագանքեն սկզբում և շարունակաբար Աստծո շնորհքին և ողորմությանը, որը երևում է Քրիստոսի մեջ: Նա սիրեց, Նա ուղարկեց , Նա ապահովվեց, մենք պետք է արձագանքենք հավատքով և հավատարմաբար (հմմտ. Եփ. 2:8-9 և 10):

Հավատարիմ Աստվածն ուզում է, որ հավատարիմ մարդիկ ցույց տան Իրեն անհավատ աշխարհում և նրանց առաջնորդեն անձնական հավատքի մեջ:

▪ **«որի ձեռով կանչուեցաք»** Սա շարունակական շեշտը դրեց Կորնթոսի հավատացյալների ընտրության վրա (տես 1 Կոր. 1: 2,9,24,26; Գործք 18: 9):

▪ **«նորա Որդու՝ ...հաղորդութիւնը»** Սա հունարեն *koinonia* տերմինն է, որը նշանակում է համատեղ մասնակցություն: Աստված մեզ կոչ է արել միանալ իր Որդու հետ՝ պաշտոնապես և հարաբերականորեն: Քրիստոնեության նպատակն է Քրիստոսանմանությունը (տես Հռ. 8:29; Գաղ. 4:19; Եփ. 1:4, 2:10):

Հավատացյալների ապրելակերպերը նրանց փրկության ապացույցն է Քրիստոսին հանդիպելուց հետո (տես Հակոբոսի և Հովհաննեսի Ավետարանները): Նրանք փրկված են շնորհքով՝ հավատքի ձեռովը (տես Եփ. 2:8-9,10): Նրանք փրկված են ծառայելու համար (տես Հռ. 6:11): Հավատքն առանց գործերի մեռած է, ինչպես մեր գործերը առանց հավատքի (տես Մաթ. 7:21-23 և Հակ. 2:14-26): Հոր ընտրության նպատակն է, որ հավատացյալները լինեն «սուրբ և անարատ» (տես Եփ. 1:4; Մաթ. 5:48):

Պողոսը հաճախ քննադատվում էր իր արմատական ազատ ավետարանի համար, քանի որ կարծես խրախուսում էր անաստված կյանքը: Ավետարանը այնքան անհարմար է բարոյական կատարման համար, որը կարող է հանգեցնել չարաշահումների: Պողոսի ավետարանը ազատ էր Աստծո շնորհքով և Քրիստոսի ավարտված աշխատանքով և Սուրբ Հոգու զորությունով, և պահանջում էր պատշաճ արձագանք ոչ միայն նախնական ապաշխարության մեջ, այլ նաև շարունակական ապաշխարության մեջ: Աստվածային կյանքը ոչ թե օրինազանցությունն է, այլ արդյունքն է: Լավ գործերը փրկության մեխանիզմ չեն, այլ արդյունքը: Այս պարադոքսը լիովին ձրի փրկության և ամեն մի արձագանքի արժեքով դժվար է շփվել, բայց երկուսն էլ պետք է անցկացվեն լարվածության մեջ լցված, պարադոքսալ և դիալեկտիկական հավասարակշռության մեջ: Մեկը չի համարում առանձին արդարացում և սրբացում:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: KOINŌNIA (ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ)

SPECIAL TOPIC: KOINŌNIA

«Հաղորդակցություն» (*koinōnia*) տերմինը նշանակում է

1. սերտ կապ, համագործակցություն անձի հետ
 - ա. Որդու հետ (տես 1 Կոր.1: 9; 1 Հովհ.1:6)
 - բ. Հոգու հետ (տես 2 Կոր. 13: 14; Փիլ. 2: 1)
 - գ. Հոր և Որդու հետ (տես 1 Հովհ.1: 3)
 - դ. ուխտի այլ եղբայրների / քույրերի հետ (տես Գործք 2:42; 2 Կոր. 8:23; Գաղ. 2: 9; Փիլիմոն 17; 1 Հովհ. 1: 3, 7)
 - ե. ոչ թե չարի հետ (տես 2 Կոր. 6:14)
2. մտերմիկ հարաբերություն բաների կամ խմբերի հետ
 - ա. ավետարանի հետ (տես Փիլ. 1: 5; Փիլիմոն 6)
 - բ. Քրիստոսի արյունով (տես 1 Կոր. 10:16)
 - գ. ոչ թե խավարով (տես 2 Կոր. 6:14)
 - դ. տառապանքով (տես 2 Կոր. 1: 7; Փիլ. 3:10; 4:14; 1 Պետ. 4:13)
3. պարզ կամ նվիրատվություն, որը կատարվում է առատաձեռնորեն (տես Հո.12:13; 15:26; 2 Կոր. 8: 4; 9:13; Փիլ. 4:15; Եբր. 13:16)
4. Աստծո շնորհքի պարզ կամ Քրիստոսի միջոցով, որը վերականգնում է Աստծո հաղորդակցությունը մարդկության հետ և նրա եղբայրների ու քույրերի հետ:

Սա հաստատում է հորիզոնական հարաբերությունը (մարդ -մարդ), որը գալիս է ուղղահայաց հարաբերությունից (մարդ - Արարիչ): Այն նաև ընդգծում է քրիստոնեական համայնքի կարիքը և ուրախությունը (այսինքն, Եբր.10: 25):

▪ **«նորա Որդու»**, Հիսուսը որպես Աստծո Որդի, հերթական թեման է Պողոսի գրվածքներում (տես Հո. 1: 3,4,9; 5:10; 8: 3,29,32; 1 Կոր. 1:9; 2 Կոր. 1:19; Գաղ. 1:16; 2:20; 4: 4,6; Եփ. 4:13; Կոր. 1:13; 1 Թես.1:10): Նա միայն ժամանակի մեջ չէ «որդի», այլ «Որդի» հավիտենականության մեջ (տես Եբր. 1:2; 3:6; 5:8; 7:28): Երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ Հիսուսը Որդի չի եղել: Հիսուսի բարձրացումը, հարությանը և համբարձմամբ, պարզապես վերականգնում և մեծացնում է Իր նախագոյությունը, նախամարմնավոր փառքը:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ՈՐԴԻՆ

SPECIAL TOPIC: THE SON OF GOD

Սա Հիսուսի հիմնական Նոր Կտակարանյան անուններից մեկն է: Դա անշուշտ ունի աստվածային նշանակություն: Այն ընդգրկում էր Հիսուսին, որպես «Որդի» կամ «Իմ Որդին», ինչպես նաև Աստված որպես «Հայր» (տես Հատուկ Թեմա: Հայր Աստված): Նոր Կտակարանում դա հանդիպում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ Հիսուսի ինքնորոշումը որպես «Մարդու Որդի» ունի

աստվածային նշանակություն Դան. 7: 13-14:

Հին Կտակարանում «որդին» կարող էր նշանակել չորս կոնկրետ խմբեր (տես Հատուկ Թեմա: «... Որդիներ»):

- Ա. հրեշտակները (սովորաբար հոգնակի թվով, տես Ծննդ. 6: 2; Հոբ 1: 6; 2: 1)
- Բ. Իսրայելի թագավորը (տես 2 Թագ. 7:14; Մադ. 2: 7; 89: 26-27)
- Գ. Իսրայել ազգը որպես ամբողջություն (տես Ելից 4: 22-23; 2 Օր.14:1; Ովս.11:1; Մադ.2: 10)
- Դ. Իսրայելի դատավորները (տես Մադ. 82: 6)

Երկրորդ գործածությունը կապված է Հիսուսի հետ: Այսպիսով, «Դավթի որդի» և «Աստծո որդի» երկուսն էլ վերաբերում են 2 Թագ. 7; Մադմոս 2 և 89: Հին Կտակարանում «Աստծո որդի» երբեք չի օգտագործվում Մեսիայի համար, բացի այն, որ վախճանաբանական թագավորը Իսրայելի «օծյալ պաշտոններից» մեկն է: Այնուամենայնիվ, Մեռյալ Ծովի մագաղաթներում մեսիական իմաստներով անունը տարածված է (տես, մասնավորապես, *Dictionary of Jesus and the Gospels*, էջ 770): Նաև «Աստծո Որդի» մեսիական անունը կարելի է տեսնել երկու միջկտակարանյան հրեական ապոկալիպտիկ գրվածքներում (տես II Esdras 7:28; 13: 32,37,52; 14: 9 և I Enoch 105: 2):

Դրա Նոր Կտակարանյան ֆոնը, որը վերաբերում է Հիսուսին, լավագույնս ամփոփված է մի քանի կատեգորիաներով:

1. Նրա նախագոյությունը (տես Հովհ.1: 15-30; 8: 56-59; 16:28; 17: 5; 2 Կոր. 8: 9; Փիլ. 2: 6-7; Կող. 1:17; Եբր. 1: 3; 10: 5-8)
2. Նրա եզակի (կուսական) ծնունդը (տես Ես. 7:14; Մաթ. 1:23; Ղուկ. 1: 31-35)
3. Նրա մկրտությունը (տես Մաթ. 3: 17; Մարկ. 1:11; Ղուկ. 3:22: Աստծո ձայնը երկնքից միավորում է Մադ. 2-ի թագավորին Ես. 53-ի տառապող ծառային:
4. Նրա սատանայի կողմից փորձվելը (տես Մաթ. 4: 1-11; Մարկ. 1: 12,13; Ղուկ. 4: 1-13: Նա ընկնում է փորձության մեջ կասկածելու Իր որդի լինելը, կամ գոնե իր նպատակին հասնելու տարբեր միջոցներով, բացի խաչը):
5. Նրա հաստատումը անընդունելի դավանություններով
 - ա. դևերի կողմից (տես Մարկ. 1: 23-25; Ղուկ. 4: 31-37,41; Մարկ. 3: 11-12; 5: 7; տես Հատուկ Թեմա: Դևը [անմաքուր ոգիներ])
 - բ. Անհավատների կողմից (Մաթ. 27:43; Մարկ. 14:61; Հովհ. 19:7)
6. Իր աշակերտների կողմից հաստատումը
 - ա. Մաթ. 14:33; 16:16
 - բ. Հովհ. 1: 34,49; 6:69; 11:27
7. Նրա ինքնահաստատումը
 - ա. Մաթ. 11: 25-27
 - բ. Հովհ.10:36
8. Նա օգտագործում է ընտանեկան փոխաբերություններ Աստված որպես Հայր
 - ա. Նրա օգտագործում է *abba* Աստծո համար
 - 1) Մարկ. 14: 36
 - 2) Հո. 8: 15
 - 3) Գաղ. 4:6
 - բ. Նրա հերթական օգտագործումը Հոր (*patēr*) նկարագրելու Իր փոխհարաբերությունը Աստծո հետ

Ընդհանուր առմամբ, «Աստծո Որդի» անունը մեծ աստվածաբանական նշանակություն ունեցավ այն մարդկանց համար, ովքեր գիտեին Հին Կտակարանը, նրա խոստումները և կատեգորիաները, սակայն Նոր Կտակարանի գրողները նյարդայնացած էին հեթանոսների վրա նրա հեթանոսական ֆոնի պատճառով «աստվածների», արդյունքում ժառանգությունը «տիտաններ» կամ «հսկաներ»:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:10-17

¹⁰Աղաչում եմ ձեզ, եղբարք, մեր Տեր Յիսուս Քրիստոսի անունովը, որ ամենդ միեւնոյն խօսքն ունենաք, եւ երկպառակութիւններ չ'լինին ձեր մէջ. Այլ միեւնոյն մտքի եւ միեւնոյն կարծիքի մէջ հաստատուած լինիք: ¹¹Որովհետեւ ձեր մասին ինձ լուր հասաւ, եղբարք, Քրուէի ընտանիքիցը, թէ հակառակութիւններ կան ձեզանում: ¹²Եւ այս եմ ասում՝ որ ձեզանից ամեն մէկն ասում է. Ես Պողոսեան եմ, եւ Ես Ապողոսեան, եւ Ես Կեփասեան, եւ Ես Քրիստոսեան: ¹³Բաժանուած է Քրիստոսը. Մի՞թէ Պողոսը խաչուեցաւ ձեզ համար՝ կամ Պողոսի՞ անունովը մկրտուեցաք: ¹⁴Գոհանում եմ Աստուածանից որ ես ձեզանից ոչ մէկին չ'մկրտեցի. Բայց միայն Կրիսպոսին եւ Գայիոսին. Որ մէկը չ'ասէ, ¹⁵Թէ իմ անունովը մկրտեցի: ¹⁶Եւ Ստեփանի տունն էլ մկրտեցի. Էլ չ'գիտեմ, թէ մի ուրիշն էլ մկրտեցի: ¹⁷Որովհետեւ Քրիստոս չ'ուղարկեց ինձ մկրտելու, այլ ատարանը քարոզելու. ոչ թէ խօսքի իմաստութեամբ, որպէսզի ունայն չ'լինի Քրիստոսի խաչը:

1:10 «Հիմա» Սա շաղկապ է: Պողոսը սկսում է նամակի հիմնական բովանդակությունը:

- **«Աղաչում եմ ձեզ»** Այս արտահայտությունը պարունակում է ն' քնքշություն, ն' կոպտություն: Դա կոչ է անում համապատասխան կյանքով ապրելու, ինչպես նաև հեղինակավոր մարտահրավերներ: Պողոսը հաճախ օգտագործում էր այս տերմինը (տես 1 Կոր. 1:10; 4:16; 16:15; 2 Կոր. 2:8; 5:20; 6:1; 10:1; 12:1,8; 15:30; Եփ. 4:1; Փիլ. 4:2; 1 Թես. 4:10; 1 Տիմ. 1:3; Փիլիմոն 1:9-10). Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:4-11.

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԻՄԻԹԱԼՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: COMFORT

I. Միմիթարությունը Հին Կտակարանում (նշում է Ես. 40:1)
Այս տերմինը (BDB 636, KB 688, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, ՀՈԳՆԱԿԻ) օգտագործվում է Ես. 1-39-ում ընդամենը երեք անգամ, բայց Ես. 40-66 տասնչորս անգամ (հիմնականում *Piel*): «Միմիթարությունը» կարող է լինել Եսայիայի այս հատվածի վերնագիրը: Դա նշանակում է ՅԱՀՎԵԻ կարեկցանքն ու մտահոգությունը (տես Ես. 12: 1): Բառը կարծես զարգացել է ձիերի ծանր տրոփյունից: ՅԱՀՎԵՆ տրտմած է, որ Նա ստիպված էր պատժել Իր ժողովրդին: Պատիժն ավարտվեց: Անհասկանալի է, թե արդյոք սա է պատճառը

- Ա. Նրանք ապաշխարեցին (այսինքն, Եզեկիել 18)
- Բ. ՅԱՀՎԵՆ որոշեց գործել նրանց օգտին, չնայած նրանք անկարող էին իրական ապաշխարություն ունենալ (տես Եզ. 36: 22-38)

Նոր օրը (այսինքն, նոր ուխտը, տես Եր. 31: 31-34) արթնացել է: Այն հիմնված է ՅԱՀՎԵԻ բնույթի, այլ ոչ թե նրա ժողովրդի կատարման վրա (տես Հո. 3: 21-31; Գաղ. 3; Եփ 2: 8-9); Նրա ունակության, և ոչ թե նրանց; որը Նրա հավիտենական փրկության ծրագրի անբաժանելի մասն է:

II. Միմիթարությունը Նոր Կտակարանում (տես 2 Կոր. 1: 4-11)
«Միմիթարություն» տերմինը *paraklēsis*, իր տարբեր ձևերով, օգտագործվում է տաս անգամ 2 Կոր. 1: 3-11: Դա բանալի տերմինն է ողջ հատվածում, ինչպես նաև 2 Կոր.1-9, որտեղ օգտագործվում է քսանհինգ անգամ: Այս բառը նշանակում է «կանգել կողքին»: Այն հաճախ օգտագործվում էր իրավաբանական օգնության, հարմարավետության և ղեկավարման փաստաբանի դատական իմաստով:

Այս կոնտեքստում այն օգտագործվում է խրախուսման և միմիթարության իմաստով: Տերմինը, *paraklētos*, օգտագործվում է Սուրբ Հոգու համար Հովհ. 14: 16,26; 15:26; 16:7; և Հիսուսի համար 1 Հովհ. 2: 1: Այս կոնտեքստում այն օգտագործվում է Հոր համար (տես Հատուկ Թեմա: Միմիթարիչ [*Paraklētos*])

<i>Parakaleō</i>	բայական ձևը	օգտագործվում է մի քանի իմաստներով.
Ա.	Սեպտուագինդը	
	1.	հորդորել, սիրտ տալ, 2 Օր. 3:28
	2.	մխիթարություն, Ծննդ. 24: 67; 37:35; Սաղ. 119:50 (Մեսիական իմաստով Ես. 40: 1; 49:13; 51: 3; 61: 2)
	3.	գթասիրտ եղիր, 2 Օր. 32:36; Դատ. 2:18; Սաղ. 135: 14
	4.	ուժովանալ, Ես. 35: 4
	5.	կանրել, Ելից 15:13
Բ.	Պողոսի գրվածքները	Կորնթոսին
	1.	հորդոր, 1 Կոր. 1:10; 4:16; 14: 30-31; 16: 15-16; 2 Կոր. 2: 8; 5:20; 6:1; 8: 4,6; 10: 1
	2.	մխիթարություն, ուրախություն, 2 Կոր. 1: 4,6; 2: 7; 7: 6,7,13; 13:11
	3.	կարեկցանք, մխիթարություն, 1 Կոր. 4:13
	4.	Աղերսել, թախանձել, խնդրել, 1 Կոր. 16:12; 2 Կոր. 9: 5; 12:18

▪ **«եղբարք»** Պողոսը հաճախ օգտագործում է «եղբարք» կամ «եղբայր» տերմինը: Թեև Պողոսը ստիպված էր հորդորել այս համայնքին խիստ խոսքերով, նրանք դեռ նրա եղբայրներն ու քույրերն էին Քրիստոսով:

Պողոսը հաճախ օգտագործում է այս տերմինը, ազդարարելով նոր թեմա, բայց այս գրքում Նա նաև կիրառում է սա, ընդգծելու թե՛ Պողոսի և թե՛ այլ եկեղեցիների միասնությունը այս եկեղեցու հետ:

▪ **«մեր Տեր Յիսուս Քրիստոսի անունովը»** Հրեական կյանքում այս անունը ներկայացված էր որպես անձի բնույթ և հեղինակություն: Այստեղ Phillips թարգմանությունը արտահայտում է «բոլորիս կողմից, մեր Տեր Յիսուս Քրիստոսի» էությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ (Նոր Կտակարան)
SPECIAL TOPICS: THE NAME OF THE LORD

Սա տարածված Նոր Կտակարանյան արտահայտություն է եկեղեցում Աստված Երրորդության անձնական ներկայության և ակտիվ գործության համար: Դա կախարդական բանաձև չէր, այլ կոչ Աստծո բնավորությանը:

Հաճախ այս արտահայտությունը վերաբերվում է Հիսուսին որպես Տեր (տես Փիլ. 2:11)

1. մկրտության ժամանակ, երբ անձը դավանում է Հիսուսին (տես Հռ. 10:9-13; Գործք 2:21,38; 8: 12,16; 10:48; 19: 5; 22:16; 1 Կոր. 1 : 13,15; Հակ. 2: 7)
2. դևեր հանելու ժամանակ (տես Մաթ. 7:22; Մարկ. 9:38; Ղուկ. 9:49; 10:17; Գործք 19:13)
3. բժշկության ժամանակ (տես Գործք 3: 6,16; 4:10; 9:34; Հակ. 5:14)
4. ծառայության ժամանակ (տես Մատթ. 10:42; 18: 5; Ղուկ. 9:48)
5. եկեղեցու կարգապահության ժամանակ (տես Մատթ. 18: 15-20)
6. հեթանոսներին քարոզելու ժամանակ (տես Ղուկ. 24:47; Գործք 9:15; 15:17; Հռ. 1: 5)
7. աղոթքի մեջ (տես Հովհ. 14: 13-14; 15: 7,16; 16:23; 1 Կոր. 1: 2)
8. քրիստոնեությանը վկայակոչելու ձև (տես Գործք 26: 9; 1 Կոր. 1:10; 2 Տիմ. 2:19; Հակ. 2: 7; 1 Պետ. 4:14)

Այն, ինչ մենք անում ենք որպես քարոզիչներ, ծառայողներ, օգնականներ, բժշկողներ, դևեր հանողներ և այլն, մենք անում ենք Նրա բնավորությամբ, Իր իշխանությունով, Իր անունը կանչելով (տես Փիլ. 2:9-10):

▪ **«որ ամենը միեւնոյն խօսքն ունենաք»** Պողոսի նպատակի պարագայի (*hina*) մեջ կա երկու ներկա ներգործական ստորադասականներ:

1. որպեսզի չլինեն շարունակական տարաձայնություններ (ներկա ներգործական ստորադասական)
2. բայց նրանք կարող են (ներկա ներգործական ստորադասական) համահունչ լինել (ներկա կրավորական դերբայ, ինչը դա դարձնում է այլաբանական):

Այս ստորադասականները ավելացնում են գրառումների պատահականությունը: Կային բաժիններ, և այդ երկպառակությունները միասին չէին գործում: Միասնության պահպանման համար անհրաժեշտ վերաբերմունքը և գործողությունները թվարկված են Եփ. 4:2-3:

Պողոսի ցանկությունը այս եկեղեցու համար արտացոլված է Հիսուսի աղթոքի մեջ Հովի. 17:11,21-23, «որ մեկ լինեն ինչպես մենք»: Սա նույնպես Եփ. 4:1-6-ի հարվածն է: Միասնություն (ոչ միատեսակություն) վճռորոշ է առողջ, աճող, Մեծ Պատվիրանը պահող եկեղեցու համար (տես Փիլ. 1:27): Միասնության բացակայությունը կուրացած մտքի արդյունքն է (տես 2 Կոր. 3:14; 4:4; 11:3):

▪ **«Էւ երկպառակութիւններ չ'լինին ձեր մէջ»** Այս տերմինը (*schismata*) օգտագործվել է խիստ քաղաքական կուսակցությունների Կոյնե հունարենում (տես Գործք 14:4, 23: 7): Այս հունարեն տերմինից մենք ստանում ենք անգլերեն «շեղում» բառը: Սա էր եկեղեցու հիմնական խնդիրներից մեկը (տես 1 Կոր. 11:18-19; 12:25): Այս բաժանումները հիմնված էին՝

1. հավատացյալների անձնական ընտրությունը որոշ առաջնորդական հմտությունների համար (հռետորաբանություն)
2. հավատացյալների հպարտությունն ու նախանձը հոգևոր պարզների համար
3. հավատացյալների տնտեսական կատեգորիաների ճանաչումը (հարուստ և աղքատ)
4. հավատացյալների նախապաշարմունքը սոցիալական կարգավիճակի վրա (ստրուկ և ազատ)
5. հավատացյալների ռասայական հպարտությունը (հրեա և հեթանոս)
6. հավատացյալների նախանձը կամ հպարտությունը ամուսնական կարգավիճակից (ամուսնացած և չամուսնացած)
7. հավատացյալների հպարտությունը մտավոր ճնշման վրա (առաջին դարի կրթական էլիտա, սոֆիստներ)

Շատ ձևերով այս շեշտադրումը դրված է ամբարտավանության, հպարտության, դոգմատիզմի և անձնական նախասիրության վրա, որը նկարագրում է ժամանակակից եկեղեցու հարանվանական շփոթությունը: Յուրաքանչյուր խումբ պնդում է, որ իրենք լինեն առաջին տեղը, հետևելով իրենց մարդկային ղեկավարներին (Լյութեր, Կավլին, Արմինիուս, Ուեալի և այլն): Յուրաքանչյուր խումբ կարծում է, որ նրանք ընդամենը արտացոլում են Աստծո միտքը: Օ՛, խոնարհության և ուսուցանելիության շարունակական կարիքը: Բոլոր նրանք, ովքեր շարունակաբար կանչում են Հիսուսի անունը, Նրա Եկեղեցին են:

▪ **«Այլ միեւնոյն մտքի եւ միեւնոյն կարծիքի մէջ հաստատուած լինիք»** Today's English Version (TEV) թարգմանությունն ունի «լիովին միավորվելով միայն մեկ մտքով և մեկ նպատակով»: Այդ նպատակը Աստծո Թագավորությունն է, Ավետարանը, Մեծ Պատվիրանը, անձնական սրբությունը, ոչ թե անձնական հակումները, նախասիրությունները կամ ծրագրերը:

1:11 «Քղուէի ընտանիքիցը» Մենք այս կնոջ մասին ոչինչ չգիտենք, բացի այն, որ նա, թերևս, Կորնթոսի եկեղեցու անդամ էր կամ նրա աշխատողներն էին անդամներ: Նրա անունը գյուղատնտեսության աստվածուհի Դեմետրիեոսի մականուն էր: Նրա ծառաները Կորնթոսի եկեղեցիներում առաջացած խնդիրների վերաբերյալ Պողոսի գիտելիքների աղբյուրն են: Տես Ներածություն, VI. Ա.:

▪ **«Թէ հակառակութիւններ կան ձեզանում»** Այս նույն (*eris*) տերմինը թվարկված է Գաղ. 5:20-ում, մարմնի պտուղների մեջ, որը բնորոշ է ընկած, զայրացած, եսասեր մարդկանց: Այն նաև թվարկված է

Պողոսի մի շարք այլ մեղքերի ցանկում (տես 1 Կոր. 3:3; 2 Կոր. 12:20; 1 Տիմ. 6:4): Այն երբեք չի կարող բնութագրել Հիսուս Քրիստոսի եկեղեցին:

1:12 Սա կարծես թե երկպառակտությունների ցանկն է (Պողոսի խումբը, Ապոդոսի, Պետրոսի խումբը, Հիսուսի խումբը): Շատ բան է ասում առաջնորդների առանձնահատկությունների մասին (այսինքն՝ Պողոս = ազատության կուսակցություն, որը հեթանոսներին ընդգրկեց միայն հավատքով; Ապոդոս = փիլիսոփայական կուսակցություն; Կեփաս = հրեական ավանդական կամ օրինապաշտ կուսակցություն, տես 2 Կոր. 11:18-33); Քրիստոսը՝ հատուկ կոչում ունեցողն էր, կանչված, պարզ կամ հոգևորություն (հնարավոր է, 2 Կոր. 12:1): Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում որոշակի տեղեկություններ չկան յուրաքանչյուր խմբի աստվածաբանության կամ շարժառիթների մասին: Այդ ղեկավարները իրենք պառակտողներ չեն եղել: Դա Կորնթոսի խմբերն էին (հնարավոր է, տնային եկեղեցիները), որոնք պնդում էին, որ դրանք իրենց առաջնորդներն էին, որոնք էլ փաստացի պառակտություն բերողն էին:

- **«Ապոդոսեան»** Նա շատ կրթված և խելացի քարոզիչ էր Ալեքսանդրիայից, Եգիպտոսից: Նա Կորնթոսում էր (տես Գործք 18: 24-19:1), բայց նա հրաժարվեց վերադառնալ (տես 1. Կոր. 16:12): Նա հենց այդպիսի եկեղեցու առաջնորդ էր:

- **«Կեփասեան»** Սա հունարեն Պետրոս անունի արամերեն համարժեքն է: Անորոշ է, որ Պետրոսը երբևէ եղել է Կորնթոսում: Եթե ոչ, ապա դա կարող է արտացոլել «հուդայական» կուսակցությունը (տես Գաղատացիս և հավանաբար 2 Կորնթացիս):

- **«Ես Քրիստոսեան»** Անհասկանալի է, արդյոք սա Պողոսի արձագանքն է առաջնորդի կողմնորոշված խմբակցություններին կամ այլ խոցելի խմբին, ով միայն Քրիստոսին էր համարում իրենց առաջնորդը: Հռոմեացի Կլեմենտը, որը գրել է Կորնթոսին 95թ. (I Clem. 48), չի նշում Քրիստոսի կուսակցությունը, չնայած նա նշում է այլ խոցելի խմբեր: Սա նպաստում է այն տեսակետին, թե դա կարող է լինել Պողոսի բացականչությունը: Նրանք կարող են ընտրություն կատարել և ճանաչել մարդկային առաջնորդներին, բայց նա վեր է բարձրացնում և միայն Քրիստոսին է պատկանում:

Այլ գիտնականներ ենթադրում էին, որ դա կարող է լինել Հիսուսի հատուկ գիտելիքներ ունեցող խումբ, կամ հատուկ հայտնություն Հիսուսից, կամ հատուկ հարաբերություններ Հիսուսի հետ (գաղափարախոսական խմբերի տեսակներով): Եվ, կրկին, ոչինչ հայտնի չէ, և դա բոլորը պարզապես ենթադրություններ են: Շատ բան կա, որ մենք չգիտենք առաջին և երկրորդ դարերի եկեղեցու մասին:

1:13 Այս համարում գրված է Պողոսի սարսափազդու արձագանքը: «Արդյո՞ք բաժանված է Քրիստոսը»: Սա վաղակատար կրավորական սահմանական է, որը նշանակում է, որ Քրիստոսը եղել է և մնում է բաժանված Կորնթոսում այդ պառակտությունների վերաբերմունքի և գործողությունների շնորհիվ: Եթե դա հարց է, ապա սպասվում է «այո» պատասխան:

Պապիրուսե ձեռագիրը, որը գրվել է 200-ական թվականներին՝ ունի տեքստային տարբերակ, «Քրիստոսը չի կարող բաժանված լինել» (սակայն այս մագաղաթը վնասվել է և տեքստը անհաստատ է): Հնագույն և հին հունարեն երկաթագիր ձեռագրերը, ռ, A, B, C, D, F և G, ջնջել են բացասական և, դրանով իսկ այն դարձրել (1) հարց; (2) բացականչություն; (3) դրույթ: UBS⁴ տալիս է ավելի համառոտ տեքստին Ա վարկանիշ (որոշակի):

- **«Մի՞թե Պողոսը խաչուեցաւ ձեզ համար՝ կամ Պողոսի՞ անունովը մկրտուեցաք»** Սրանք Պողոսի շեշտադրող հայտարարություններ են Քրիստոսի գերակայության մասին (ցածրացնելով

իրեն), հնարավոր է հասցեագրված է այդ խմբավորումների կամ խմբին, որը կոչվում էր իր անունով: Այս հռետորական հարցը ակնկալում է «ոչ» պատասխան:

1:14 «Գրիսպոսին» Սա Գործք 18:8-ում հիշատակված անձն է, որը Քրիստոսին ընդունած Կորնթոսի ժողովարանի առաջնորդն էր: Գործք 18:8-ում նշվում է նաև, որ նա իր ընտանիքի հետ միասին մկրտվեց (տես 1 Կոր.1:16): Ըստ երևույթին, Պողոսը արեց այս «ընտանիքի» մկրտությունը: Հին աշխարհում, երբ տան ղեկավարը դարձի էր գալիս, սովորաբար ամբողջ տունն էլ էր դարձի գալիս: Դա սովորաբար ներառում է երեխաներին և ծառաներին, եթե այդպիսիք կային: Տես Գործք 16: 15-ը` www.freebiblecommentary.org կայքում:

▪ **«Գայիոսին»** Այս անձը կարող է լինել այն մեկը, որը նշված է Հռ.16:23-ում, ում տան մեջ հավաքվել է Կորնթոսի եկեղեցին: Նրա ամբողջական հռոմեական անունն էր Գայիոս Տիտոս Հուստոս:

1:16 «Ստեփանի» Այս անձը 1 Կոր. 16: 15,17-ում նշված մարդն է: Նա եկեղեցու երեք անդամներից մեկն էր, որը եկեղեցուց նամակ բերեց Պողոսին Եփեսոսում: Տես Ներածություն, VI. Ա:

1:17«Որովհետև Քրիստոս չ'ուղարկեց ինձ մկրտելու, այլ անտարանը քարոզելու» Սա չի նշանակում թերագնահատել մկրտությունը (տես Մաթ. 28:19), այլ արձագանքել պառակտող հոգուն, որը թագավորում էր Կորնթոսի եկեղեցում և մեծարում էր որոշ առաջնորդ-ծառայողներին: Այնուամենայնիվ, այս դրույթը ցույց է տալիս, որ մկրտությունը չի դիտվում որպես «խորհուրդ, արարողակարգ» շնորհքի գործոն: Զարմանալի է, որ ոմանք Պողոսի գրվածքները թարգմանում են խորհուրդների իմաստով, երբ բոլոր գրվածքներում նա մասնավորապես նշում է Տիրոջ ընթրիքը միայն մեկ անգամ 1 Կոր. 11 գլխում, և երկու անգամ մկրտությունը Հռ. 6:1-11 և Կող. 2:12: Սակայն մկրտությունը Աստծո կամքն է յուրաքանչյուր հավատացյալի համար.

1. դա Հիսուսի օրինակն է (Մաթ. 3:13-17)
2. դա Հիսուսի պատվերն է (Մաթ.28:18-20)
3. բոլոր հավատացյալների համար սպասված, նորմալ ընթացակարգ է (Հռ. 6; Գործք 2:38)

Ես չեմ հավատում, որ դա Աստծո կամ Հոգու շնորհքը ստանալու ձևն է: Նորադարձների համար դա հնարավորություն էր, հրապարակավ և ամենավճռական ձևով վկայել իրենց հավատքի մասին: Նոր Կտակարանի հավատացյալը չէր հարցնում. «Պետք է մկրտվեմ, որ փրկվեմ և»: Հիսուսը դա արեց: Հիսուսը պատվիրեց եկեղեցուն դա անել: Արա՛ դա:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: BAPTISM

I. Մկրտությունը հրեական կյանքում

Ա. Մկրտությունը առաջին և երկրորդ դարի հրեաների համար սովորական ծես էր:

1. երկրպագության նախապատրաստում տաճարում (այսինքն, մաքրագործման ծես)

2. պրոզելիտների ինքնամկրտությունը

Եթե հեթանոսական ծագում ունեցող որևէ մեկը պետք է դառնար Իսրայելի լիարժեք զավակ, նա ստիպված էր կատարել երեք առաջադրանք.

ա. թլփատությունը, եթե տղամարդ էր

բ. ինքնամկրտում ընկղմամբ, երեք վկաների ներկայությամբ

գ. զոհաբերություն տաճարում

3. մաքրման ծեսը (տես Ղևտացոց 15)

Պաղեստինում առաջին դարի աղանդավորական խմբերի մեջ, ինչպես օրինակ Էսսենների,

մկրտությունն ակնհայտորեն սովորական, կրկնվող փորձառություն էր: Այնուամենայնիվ, հուդայականության համար, Հովհաննեսի ապաշխարության մկրտությունը նվաստացուցիչ էր Աբրահամի գավակի համար անցնել հեթանոսական ընդունման ծեսի միջով:

Բ. Որոշ Հին Կտակարանյան նախադեպեր կարող են հղում կատարել ծիսական լվացման համար:

1. որպես հոգևոր մաքրության խորհրդանիշ (տես Ես. 1:16)
2. որպես քահանաների կողմից կատարված հերթական ծես (տես Ելից 19:10; Ղև. 16)

Պետք է նշել, որ առաջին դարի հրեական մշակույթի մյուս բոլոր մկրտություններն ինքնակառավարվող էին: Միայն Հովհաննես Մկրտիչի մկրտության կոչը նրան ներգրավեց որպես գնահատող/դատավոր (տես Մատթ. 3:7-12) և ապաշխարության այս գործողության ադմինիստրատոր (Մատթ. 3: 6):

II. Մկրտությունը Եկեղեցում

Ա. Աստվածաբանական նպատակը

1. մեղքերի թողություն - Գործք 2:38; 22:16
2. Սուրբ Հոգու ընդունում - Գործք 2:38 (Գործք 10: 44-48)
3. միություն Քրիստոս հետ – Գաղ. 3: 26-27
4. եկեղեցու անդամակցություն - 1 Կոր. 12:13
5. հոգևոր շրջադարձի խորհրդանիշը - 1 Պետ. 3: 20-21
6. հոգևոր մահվան և հարության խորհրդանիշը - Հռ. 6: 1-5

Բ. Մկրտությունը վաղ եկեղեցու հնարավորությունն էր մարդու հրապարակային դավանության (կամ խոստովանության) համար: Դա փրկության մեխանիզմ չէ/չէր, այլ հավատքի բանավոր հաստատման առիթ (այսինքն, հավանաբար «Հիսուսը Տեր է»): Հիշեք, որ վաղ եկեղեցին չունեւ շենքեր և հանդիպում էին տներում կամ հաճախ գաղտնի վայրերում՝ հավաճանքների պատճառով:

Գ. Շատ մեկնաբաններ պնդել են, որ 1 Պետրոսը մկրտության քարոզ է: Չնայած հնարավոր է, բայց սա չէ միակ տարբերակը: Ճիշտ է, որ Պետրոսը հաճախ օգտագործում է մկրտությունը որպես հավատքի անհրաժեշտ տարր (տես Գործք 2: 38,41; 10:47): Այնուամենայնիվ, դա սրբազան արարողություն չէ/չէր, այլ հավատքի քայլ, որը խորհրդանշում է մահը, թաղումը և հարությունը, քանի որ հավատացյալը նույնանում է Քրիստոսի սեփական փորձառության հետ (տես Հռ. 6: 7-9; Կող. 2:12): Գործողությունը խորհրդանշական է, այլ ոչ թե սրբազան: գործողությունը խոստովանության առիթն է, ոչ թե փրկության մեխանիզմը:

III. Մկրտությունը և ապաշխարությունը Գործք 2:38-ում

Curtis Vaughan, Գործքն ունի հետաքրքիր ծանուցում 28 էջ, Գործք 2: 38-ի վերաբերյալ: «Մկրտվել» հունարեն բառը երրորդ դեմքի հրամայական է, «ապաշխարել» բառը, երկրորդ դեմքի հրամայական: Այս փոփոխությունը ավելի ուղղակիորեն երկրորդ դեմքի հրամանից ավելի քիչ ուղիղ երրորդ դեմքի «մկրտված» բառը, ենթադրում է, որ Պետրոսի գլխավոր պահանջը, որը առաջնային կարևորության էր, վերաբերվում էր ապաշխարությանը»:

Սա հետևում է Հովհաննես Մկրտիչի (տես Մատթ. 3: 2) և Հիսուսի (տես Մատթ. 4:17): քարոզչության շեշտադրմանը: Ապաշխարությունը կարծես հոգևոր բանալին է, իսկ մկրտությունը՝ հոգևոր փոփոխության արտաքին դրսևորումը: Նոր Կտակարանը ոչինչ չի հայտնում չմկրտված հավատացյալների մասին: Վաղ եկեղեցու համար մկրտությունը հավատքի հանրային խոստովանությունն էր: Դա Քրիստոսի հավատքի հրապարակային խոստովանության դեպքն է, ոչ թե փրկության մեխանիզմը: Պետք է հիշել, որ մկրտությունը չի հիշատակվում Պետրոսի երկրորդ քարոզում, բայց ապաշխարությունը՝ այո (տես Գործք 3:19; Ղուկ. 24:17): Մկրտության օրինակ թողեց Հիսուսը (տես Մատթ. 3: 13-18): Մկրտությունը

պատվիրվեց Հիսուսի կողմից (տես Մատթ. 28:19): Փրկության համար մկրտության անհրաժեշտության արդի հարցը Նոր Կտակարանում չի քննարկվում, բոլոր հավատացյալները պետք է մկրտվեն: Այնուամենայնիվ, պետք է նաև պահպանվել սրբազան մեխանիզմից: Փրկությունը հավատքի խնդիր է, ոչ թե ճիշտ տեղ, ճիշտ խոսքեր, ճիշտ ծիսական գործողություն:

Արևելահայերեն «ոչ թե խօսքի իմաստութեամբ»
Արևմտահայերեն «բայց ոչ խօսքերու ճարտարութիւնով»

NASB «ոչ թե խոսքի իմաստությամբ»

NKJV «ոչ թե խոսքի իմաստով»

NRSV «ոչ թե բարի խոսքով»

TEV «առանց մարդկանց իմաստության լեզուն օգտագործելու»

NJB «ոչ թե իմաստության իմաստով»

Peshitta «չհավատալ բառերի իմաստությանը»

REB «առանց հռետորության հմտությունների»

Sophia տերմինը (խելացիություն կամ իմաստություն) 1 Կոր. 1:17-24-ում օգտագործվում է իր մարդկային կողմնորոշման մեջ (աշխարհիկ իմաստություն, մարդկային իմաստություն, ընկած իմաստություն): Մարդկային ճարտասանությունը և / կամ իմաստությունը չի կարող Աստծո բարի լուրին փոխարինել Քրիստոսի փոխանորդ մահվան մեջ (տես Ես. 53; Մարկ.10:45; 2 Կոր 5:21): Չորությունը պատգամի մեջ է, ոչ թե պատգամաբերի (անգամ Պողոսի մեջ չէ, 2 Կոր. 10:10; 11:6): Այս եկեղեցու հատվածը հպարտանում էր հռետորության մեջ (տես Bruce W. Winter, *Philo and Paul Among the Sophists*): Հետագայում մի խումբ հրեական կողմնորոշում ունեցող կեղծ ուսուցիչներ կծամանեն Կորնթոս, որպեսզի հարձակվեն Պողոսի վրա՝ նրա հռետորական խոսքի հմտությունների պակասի պատճառով, 2 Կոր. 10-13-ում: Ոչ մի մարմին չի կարող պարծենալ Աստծո առաջ (տես 1 Կոր. 1:29; Եփ. 2:9):

- «որպեսզի ունայն չ'լինի Քրիստոսի խաչը» Եթե մարդիկ կարողանային փրկել իրենց, իրենց գործողությունների կամ ինտելեկտի միջոցով, ապա Քրիստոսի մահը չէր լինի: Բայց նրանք կարող չէին / չեն կարող: Խաչի ուժը Քրիստոսի միջոցով Աստծո ամբողջ մտադրությունն է: Այն ամենը ինչ պետք է ամբողջ աշխարհին փրկվելու համար ավարտված է, ամբողջական, և հասանելի է կյանքի, ուսմունքների, մահվան, հարության, Քրիստոսի երկրորդ գալստյան միջոցով, որին մարդիկ կարող են միայն արձագանքել / ընդունել հավատքով:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:18-25

¹⁸Որովհետև խաչի խօսքը կորածների համար յիմարութիւն է, բայց մեզ փրկուածներիս համար Աստուծոյ զօրութիւն է: ¹⁹Որովհետև գրուած է. Իմաստունների իմաստութիւնը կ'կորցնեն, եւ խելօքների խորհուրդները կ'անարգեն: ²⁰Ո՞ր է իմաստուն, ո՞ր է դպիր, ո՞ր է այս աշխարհքի քննող. չէ՞ որ Աստուած այս աշխարհքի իմաստութիւնը յիմարացրեց: ²¹Ուրեմն՝ որովհետև Աստուծոյ իմաստութեան մեջ աշխարհքը իմաստութիւնով չ'ճանաչեց Աստուծուն, Աստուած հաճեց որ քարոզութեան յիմարութիւնովը ապրեցնէ հաւատացեալներին: ²²Եւ որովհետև Հրեաները նշան են ուզում, եւ Յոյներն իմաստութիւն են խնդրում. ²³Մենք էլ քարոզում ենք խաչեալ Քրիստոսը, Հրեաներին գայթակղութիւն եւ Յոյներին յիմարութիւն: ²⁴Բայց այն կանչուած Հրեաներին եւ Յոյներին, և Քրիստոսը քարոզում ենք Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն: ²⁵Վասնզի Աստուծոյ յիմարն աւելի իմաստուն է քան թէ մարդիկ եւ Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան թէ մարդիկ:

1:18 «Որովհետև խաչի խօսքը» Այս «բառը» (*logos*) կապված է Պողոսի քարոզչության բովանդակության հետ (տես 1 Կոր. 1:17 և 23): Սովորաբար իր քարոզչության մեջ Պողոսը շեշտում է Քրիստոսի թե խաչելությունը և թե հարությունը: Սակայն այս կոնտեքստում նա կենտրոնանում է խաչելության վրա (տես Ծննդ. 3:15; Մաղ. 22; Ես. 53; Ջաք. 9-14) և դրա արդյունքների (տես 1 Կոր. 1:30):

Արևելահայերեն «յիմարութին»
Արևմտահայերեն «յիմարություն»

NASB, NKJV, NRSV, Peshitta « հիմարություն»
TEV «անհեթեթություն է»
NJB, REB «անմտություն»

Այս հունարեն բառից է առաջացել անգլերեն «ապուշ/մորոս»: Սա կարևորագույն տարր է Պողոսի նկարագրած մեղավոր մարդկային իմաստության մեջ (տես 1 Կոր. 1:18,21,23,25), նաև 1 Կոր. 2:14; 3: 18-19; 4:10: Ավետարանը հայտնություն է (ինքնաբացահայտում) Աստծուց, այլ ոչ թե մարդկային հայտնագործություն:

▪ **«կործանների համար յիմարութին է, բայց մեզ փրկուածներիս համար Աստուծոյ զօրութին է»** Սրանք երկու ներկա դերբայեր են: Առաջինը ներկա չեզոք դերբայ է և երկրորդը ներկա կրավորական դերբայ: Տես ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ) 1 Կոր. 3:15: Մարդկանց ընդամենը երկու տեսակ կա՝ կործանվողներ և փրկվողներ (տես 2 Կոր. 2:15; 4:3): «Կործանում» տերմինը չի նշանակում ֆիզիկական ոչնչացում, այլ Աստծո հետ հաղորդակցվելու մշտական կորուստ, ինչի համար նրանք ստեղծվել էին: Ժամանակակից թարգմանիչները վերցրել են երբայերեն ուֆեմիզմները (մեղմ ասած խոսք) և դրան տվել գրական իմաստ: Ահա երկու օրինակ՝

1. «ննջել» = մահ, ոչ թե անգիտակից մինչև հարությունը
2. «կորուստ» = հոգևոր կորուստ, ոչ թե ոչնչացում

Ոմանք ասում են, որ ոչնչացումը (այսինքն՝ կյանքի դադարեցումը) ավելի մարդկային է, քան մշտական դժոխքը (տես Fudge, *The Fire, That consumes*): Խնդիրն առաջանում է այն ժամանակ, երբ նույն բառը, որն օգտագործվում է դժոխքը նկարագրելու համար, օգտագործվում է նաև դրախտի համար («հավիտենական», տես Մաթ. 25:46) և կրկնակի հարության մասին հիշատակումը, ինչպես Դան. 12:2-ում; Հովհ. 5:28-20; և Գործք 24:15: Այնուամենայնիվ, Աստված չէ, որ մարդուն ուղարկում է դժոխք, այլ իրենց ունեցած լույսի սեփական մերժումը (Մաղ. 19:1-6, Հռ. 1-2) կամ (2) ավետարանը (անհավատության մեղքը՝ աններելի և մահացու): Այս կյանքում անհավատությունը ազդում է հավիտենական կյանքի վրա:

Նոր Կտակարանը նկարագրում է փրկությունը, որպես՝

1. կամավոր գործողություն անցյալում (աօրիստ, Գործք 15:11; Հռ. 8:24; 2 Տիմ. 1:9; Տիտոս 3:5)
2. գործընթաց, որը շարունակվում է կյանքի է ընթացքում (ներկա ժամանակ, 1 Կոր. 1:18; 15:2; 2 Կոր. 2:15)
3. անցյալում տեղի ունեցած իրադարձություն, որը դառնում է մշտական (վաղակատար, Եփ. 2:5,8)
4. ապագայի իրականացում (ապառնի ժամանակ, Հռ. 5: 9,10; 10:9; 13:11; 1 Կոր. 3:15; Փիլ.1: 28; 1 Թես. 5: 8-9; Եբ. 1:14; 9:28):

Աստվածաբանական վտանգը՝ մեկուսացնել սրանցից որևէ մեկը որպես փրկության էություն: Մենք պետք է միշտ զգույշ լինենք հեշտ հավատալիքի դեմ, որը շեշտում է միայն նախնական

գործողությունը կամ կատարելությունը, որն ընդգծում է միայն արտադրանքը: Փրկությունը նախնական, կամավոր արձագանքն է Աստծո ձրի առաջարկին Քրիստոսում, որը վերաբերում է ամենօրյա Քրիստոսանմանությանը: Դա ոչ միայն անձ է ընդունելու համար, այլև պատգամ այդ անձի մասին, որը պետք է ընդունել, և այդ անձի կյանքով ապրել: Դա արտադրանք չէ, այլ ապահովագրության քաղաքականություն, ուղեգիր դեպի երկինք, բայց աճող ամենօրյա հարաբերություններ Հիսուսի հետ: Նոր Կտակարանը չի շեշտում որոշում կայացնելը՝ այլ աշակերտ լինելը (տես Մաթ. 28:19-20):

Իրական խորհուրդն այն է, երբ ավետարանը առաջարկվում է մարդկանց, ոմանք պատասխանում են «այո» և փրկվում, իսկ ոմանք ասում են «ոչ» և նրանց ապստամբությունը վերահաստատվում է (տես Դուկ. 2:34; Հովհ. 9:39; 1 Պետ. 2:7): Դա չի զարմացնում ինձ, երբ մարդիկ ասում են այո, բայց ես զարմանում եմ, երբ

1. Աստծո փափագն է, որ բոլոր մարդիկ փրկվեն
2. Քրիստոսի ավարտած գործը
3. Մուրբ Հոգու գործողությունը
4. Մարդու մեղքի գիտակցումը
5. առանց Աստծո կյանքի աննպատակասլացությունը

մարդիկ ասում են «ոչ»: Սա է ընտրության խորհուրդը (տես 2 Կոր. 3:14; 4:4; 11:3):

▪ **«Աստուծոյ զօրութիւնը»** Ավետարանը Աստծո զորությունն է (տես 1 Կոր. 1:24; Հռ. 1:16): Ավետարանը բացահայտում և ուղարկում է Աստծո զորությունը: Այն առաջացնում է հավատք: Այն առաջացնում է ապաշխարհություն: Այն ստեղծում է իմաստություն, արդարություն, սրբացում և փրկություն (տես 1 Կոր. 1:30): Խաչի քարոզչությունն է անում այդ ամենը: Աստծո զորությունը գրված խոսքի ետևում է (այսինքն, Աստվածաշունչը), կենդանի խոսքը (այսինքն, Քրիստոսը), քարոզված խոսքը (այսինքն, ավետարանը) և հաստատված խոսքը (այսինքն, Քրիստոսանմանությունը / Աստծո արքայությունը):

1:19 Սա մեջբերում է Ես. 29:14-ից: Սա Հին Կտակարանի հոմանիշ գուգահեռականության օրինակ է: Շեշտը առանց Աստծո մարդկային իմաստության հիմարության վրա է (տես Ես. 29:13; Ժող. 1: 12-18; 12:12):

▪ **«կ'կորցնեն»** Սա մեջբերում է Հին Կտակարանից (տես Ես. 29:14). Տես Հատուկ Թեմա: *Apollumi*, 1 Կոր. 8:11

1:20 Սա մարդկային ռացիոնալիստների ցանկն է (այսինքն՝ հրեա և հեթանոս): Դա կարող է ակնարկ լինել Ես. 33:18-ին LXX-ում (Jerome Biblical Commentary, էջ 257): Մարդիկ չեն կարող բացահայտել ավետարանը: Դա Աստծո խորհուրդն է, թաքնված դարերից առաջ (տես Եփ. 2:11-3:13): Աստծո ծրագիրը և դրույթները մարդկանց համար հիմարություն են, որովհետև նրանք արժեզրկում են մարդկային արժանիքներն ու իմաստությունը:

▪ **«այս դարի. . . այս աշխարհի»** Այս երկու արտահայտությունները արտացոլում են նույն հասկացությունը, որ այս ժամանակահատվածը հանդիսանում է մեղավոր աշխարհի գոյությունը: Սա ոչ թե այն աշխարհն է, որն Աստված է նախատեսել, բայց ավետարանը այս մեղավոր դարը կդարձնի Աստծո ստեղծագործության նպատակակետը (Ծննդ. 1-2, Հայտ. 21-22)

Նոր Կտակարանում «աշխարհ» տերմինը օգտագործվում է երկու իմաստով՝ (1) ֆիզիկական մոլորակը (տես Հովհ. 3:16) և (2) մեղավոր մարդկային հասարակությունը, որը կազմակերպվում և գործում է անբարոյական սկզբունքներով (տես Հակ. 1:27; 4: 4; 1 Հովհ. 2: 15-17): Պողոսի գրվածքներում երբայերեն *'olam* տերմինը , հունարեն թարգմանված *aiōn*, հոմանիշ է *kosmos* բառին

(տես 1 Կոր. 1:20; 2: 6; 3:19; Եփ. 2: 2): *kosmos* բառի համար տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Kosmos*, 1 Կոր. 3:21-22

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԱՅՍ ԴԱՐՆ ԵՎ ԵԿՈՂ ԴԱՐՆ
SPECIAL TOPIC: THIS AGE AND THE AGE TO COME

Հին Կտակարանի մարգարեները ապագան պատկերացնում էին որպես ներկայի ընդլայնում: Նրանց համար ապագան կլինի աշխարհագրական Իսրայելի վերականգնումը: Այնուամենայնիվ, նույնիսկ նրանք դա տեսնում էին որպես նոր օր (տես Ես. 65:17; 66:22): Քանի որ Աբրահամի սերունդները շարունակում էին մերժել ՅԱՀՎԵԻՆ (նույնիսկ գերությունից հետո) նոր օրինակ/պարադիգմ զարգացավ հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն, I Ենոք, IV Եզրա, II Բարուք): Այս գրվածքները բաժանում են երկու ժամանակաշրջանները ներկա չար ժամանակ, որտեղ տիրում է սատանան և գալիք արդարության ժամանակաշրջանը, որը տիրում է Սուրբ Հոգին և հաղթանակը, որը կլինի Մեսիայի գալուստով (հաճախ դինամիկ մարտիկ):

Աստվածաբանության (վախճանաբանության) այս շրջանում ակնհայտ զարգացում կա: Աստվածաբանները սա անվանում են «առաջադեմ հայտնություն»: Նոր Կտակարանը հաստատում է երկու դարաշրջանների այս նոր տիեզերական իրականությունը (այսինքն ժամանակավոր դուալիզմ):

Հիսուս	Պողոս	Եբրայեցիս (Պողոս)
Մաթ. 12:32; 13:22,39	Հռ. 12:2	Եբր.1:2; 6:5; 11:3
Մարկ. 10:30	1 Կոր. 1:20; 2:6,8; 3:18	
Դուկ. 16:8; 18:30; 20:34-35	2 Կոր. 4:4 Գաղ. 1:4 Եփ. 1:21; 2:2,7; 6:12 1 Տիմ. 6:17 2 Տիմ. 4:10 Տիտոս 2:12	

Նոր Կտակարանի աստվածաբանության մեջ այս երկու հրեական ժամանակները անսպասելի և անտեսված կանխատեսումների պատճառով համընկել է Մեսիայի երկու գալստյան հետ: Հիսուսի մարմնացումը իրականացրեց Հին Կտակարանի մարգարեությունները, որը սկիզբ դրեց նոր դարի (Դան 2:44-45): Այնուամենայնիվ, Հին Կտակարանը Նրա գալուստը դիտում էր որպես Դատավոր և Հաղթող, բայց Նա առաջին հերթին եկավ որպես Տառապող Ծառա (տես Ես. 53; Ջաք. 12:10), խոնարհ ու հեզ (տես Ջաք. 9: 9): Նա կվերադառնա իշխանության այնպես, ինչպես կանխագուշակել է Հին Կտակարանը (տես Հայտ. 19): Այս մարգարեության իրականացման երկու փուլերը ցույց են տալիս Աստծո Թագավորության ներկա լինել (բացված է), բայց նաև ապագան (լիովին չի ավարտվել): Սա արդեն Նոր Կտակարանի լարվածությունն է, արդեն բայց ոչ դեռ:

▪ «Ն^օ որ Աստուած այս աշխարհքի իմաստութիւնը յիմարացրեց» Քերականությունը ցույց է տալիս, որ Պողոսը «այո» պատասխան է ակնկալում:

1:21 «որովհետև Աստուծոյ իմաստութեան մեջ» Սա կարող է լինել ակնարկ Առ. 8:22-31, ինչպես նաև Հովհ. 1:1-5,9-14: Այն նաև վերաբերում է Աստծո ծրագրին՝ փրկելու կորսված մարդկությանը: Նախքան արարչագործությունը փրկությունը նախատեսված էր Աստծո սրտում (տես Մաթ. 25:34; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Եփ. 1:4; 1 Պետ. 1: 19-20; Հայտ. 13: 8): Այս ծրագիրը ընդգրկում է՝

1. մարդկության անկման կանխատեսումը
2. մարդկության անկարողությունը կատարելու Աստծո բացահայտված կամքը (տես 2 Օր. 31:27-29; Հեսու 24:19; Գաղ. 3)
3. Աստծո նպատակը Քրիստոսում (Նոր Ուխտը, տես Եր. 31:31-34; Եզ. 36:22-32)
4. հրեաների և հեթանոսների հավատքով հրավիրելը Քրիստոսով, Աստծո ընտանիքի միջոցով (տես 1 Կոր. 1:21; Եփ. 2:11-3:13)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵՒ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
SPECIAL TOPIC: YHWH'S ETERNAL REDEMPTIVE PLAN

Ես պետք է խոստովանեմ ձեզ՝ ընթերցողներին, որ ես կողմնակալ եմ այս պահին: Իմ սխտեմատիկ աստվածաբանությունը կալվինիզմը կամ դիսպենսացիոնալիզմը չէ, այլ Մեծ Պատվիրանի ավետարանչականությունը (տես Մատ. 28:18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված հավիտենական ծրագիր է ունեցել մարդկության փրկության համար (օրինակ, Ծննդ. 19:3-5; 12:3; Ելից 19:5-6; Եր. 31: 31-34; Եզ. 18; 36: 22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հռ. 3: 9-18,19-20,21-31), բոլոր նրանց, որոնք ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Ուխտերը միավորված են Քրիստոսում (տես Գաղ. 3: 28-29; Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է, որը թաքնված էր, բայց հիմա բացահայտված (տես Եփ. 2: 11-3: 13): Սուրբ Գրքի հիմնական բանալին Նոր Կտակարանի ավետարանն է, այլ ոչ թե Իսրայելը:

Այս նախնական հասկացողությունը գունավորում է իմ Սուրբ Գրային բոլոր մեկնաբանությունները: Ես բոլոր տեքստերը կարդում եմ դրա միջոցով: Դա, անշուշտ, մի կողմնակալություն է (բոլոր թարգմանիչներն ունեն դրանք), բայց դա Սուրբ Գրային տեղեկացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2-ի ուշադրության կենտրոնում ՅԱՀՎԵՆ ստեղծում է մի վայր, որտեղ Նա և Իր ամենաբարձր ստեղծագործությունը՝ մարդկությունը, կարող են հաղորդակցվել (տես Ծննդ. 1: 26,27; 3: 8): Ֆիզիկական ստեղծագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Սուրբ Օգոստինոսը այն բնութագրում է որպես աստվածային միջամտությամբ ձևավորված փոս յուրաքանչյուր մարդու մեջ, որը կարող է լցվել միայն Աստծո կողմից:
2. Ք.Ս. Լյուիսը այս մոլորակը անվանեց «դիպած, ձեռք տված մոլորակ» (այսինքն, պատրաստված է Աստծո կողմից մարդկանց համար):

Հին Կտակարանը ունի բազմաթիվ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերվում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵՒ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդը, Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ծանուցում 12: 3:
3. Ելից 20-ում (2 Օր. 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի ուղղորդի իր հատուկ ժողովուրդը: Նշենք, որ Ելից 19: 5-6, ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա եզակի հարաբերություններ Իսրայելի հետ: Եվ նաև այն, որ նրանք ընտրված են, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է լինի մեխանիզմ ազգերի համար՝ ճանաչելու ՅԱՀՎԵՒՆ և Նրան գրավելու համար: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):
4. 3 Թագ. 8 Սողոմոն տաճարը ընծայում է, որպեսզի բոլորը կարողանան գալ ՅԱՀՎԵՒ մոտ (տես 3 Թագ. 8: 43,60):
5. Մաղմոսներում- 22:27-28; 66:4; 86: 9 (Հայտ. 15:4)
6. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել իր համընդհանուր

փրկության ծրագրերը:

ա. Եսայիա 2: 2-4; 12: 4-5; 25:6-9; 42: 6,10-12; 45:22; 49: 5-6; 51: 4-5; 56:6-8; 60: 1-3; 66: 18,23

բ. Երեմիա - 3:17; 4: 2; 16:19

գ. Միքիա 4:1-3

դ. Մադաթիա 1:11

Այս համընդհանուր շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ ողորմության վրա, այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի: Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր ոգին»: Հնազանդությունը վճռական է, բայց դա ներքին բան է, ոչ միայն արտաքին (տես Հո. 3: 21-31):

Նոր Կտակարանը հստակ ամրապնդում է համընդհանուր փրկության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանը- Մատթ. 28: 18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագիրը (այսինքն, կանխատեսված) – Ղուկ. 22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն- Հովհ. 3:16; 4:42; Գործք 10:34-35; 1 Տիմ. 2: 4-6; Տիտոս 2:11; 2 Պետ. 3: 9; 1 Հովհ. 2: 2; 4:14
4. Քրիստոսը միավորում է Հին և Նոր Կտակարանները- Գաղ. 3: 28-29; Եփ. 2: 11-3: 13; Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված է, բայց հիմա հայտնված (Եփ. 2: 11-3: 13):

Նոր կտակարանը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կենտրոնական, ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը վերջնական հայտնությունն է (տես Մատթ. 5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու Հատուկ Թեմա: Ինչու՞ Նոր Կտակարանի ուխտի խոստումները այդքան տարբերվում են Նոր Կտակարանի ուխտի խոստումներից: Դուք կարող եք գտնել այն առցանց www.freebiblecommentary.org.

▪ **«Ճանաչեց Աստուծուն»** Հույները չհավատացին, որ Աստված ճանաչելի է: Նրանք սեփական աստվածներ ունեին, մարդկային բարբարոսություններ և նրանք ամբողջությամբ չէին ներգրավված այս աշխարհի գործերով: Ամբողջ մարդկությունը անկարող է գտնել և հայտնաբերել Աստծուն, բայց Աստված ընտրեց Ինքն իրեն հայտնել Հիսուս Քրիստոսի միջոցով (Կենդանի Խոսքը) և Աստվածաշնչի միջոցով (գրավոր Խոսքը), ինչպես նաև փրկված մարդկության միջոցով (սահմանված Խոսքը):

▪ **«Աստուած հաճեց որ քարոզութեան յիմարութիւնովը»** Դա ոչ թե ներկայացում է, այլ ավետարանի բովանդակությունը, որը հիմարություն է մեղավոր մտքի համար (տես 1 Կոր. 2:14):

▪ **«ասյրեցնէ հաւատացեալներին»** Սա ասորիստ ներգործական ինֆինիտիվ է, որին հետևեց ներկա ներգործական դերբայը: Սա ավետարանի հոչակման էությունն է: «Փրկել» տերմինը Հին Կտակարանում օգտագործվել է ֆիզիկական փրկության համար, սակայն Նոր Կտակարանում այն օգտագործվել է հոգևոր ներման և ընդունման համար: Քրիստոսի միջոցով մեր ընդունվելը Աստծո կողմից կատարված փաստ է, բայց մեր կողմից դա շարունակական ուխտի հարաբերություն է: Աստծո և մարդկանց միջև բոլոր գործերը ուխտ են: Աստված միշտ հաղորդակից է ուխտին և սահմանում է իր պահանջները, բայց Նա ընտրեց, որ մենք անձամբ արձագանքենք և շարունակենք արձագանքել: Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 3:15

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԵՐԵԼ

SPECIAL TOPIC: THE NEED TO PERSEVERE

Աստվածաշնչյան վարդապետությունները, կապված քրիստոնեական կյանքի հետ, դժվար է բացատրել, որովհետև դրանք ներկայացվում են տիպիկ արևելյան դիպլեկտիկական զույգերով (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն [աստվածաշնչյան պարադոքսներ]): Այս զույգերը թվում են իրար հակասող, բայց երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմուտքի քրիստոնյաները հակված են ընտրելու մեկ ճշմարտությունը և մերժելու և արժեզրկելու դրան հակասող մյուս ճշմարտությունը: Ահա որոշ օրինակներ.

- Ա. Փրկությունը միայն Քրիստոսին վստահելու սկզբնական որոշումն է, թե՞ սրբացման գործընթաց ամբողջ կյանքի ընթացքում, որպես Քրիստոսի աշակերտ:
- Բ. Փրկությունը սուվերեն Աստծո շնորհքի ընտրությունն է, թե՞ մարդու հավատքի արդյունքն ու ապաշխարհության արձագանքն Աստծո կանչին:
- Գ. Փրկությունը դա մեկ անգամ ստացած, անհնարին կորցնել, թե՞ հավատացյալը պետք է շարունակաբար ջանք թափի դրան հասնելու և պահելու համար:

Համբերության թեման քննարկման առիթ է հանդիսացել հավատացյալներին ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է Նոր Կտակարանում հանդիպող ակնհայտ իրարամերժ տեքստերից.

- Ա. համարներ վստահություն մասին
 1. Հիսուսի պնդումները Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. 6:37; 10:28-29)
 2. Պողոսի պնդումները (Հռ. 8:35-39; Եփ. 1:13; 2:5,8-9; Փիլ. 1:6; 2:13; 2 Թես. 3:3; 2 Տիմ. 1:12; 4:18)
 3. Պետրոսի պնդումները (1 Պետ.1:4-5)
- Բ. տեքստեր համբերելու կարիքի համար
 1. Հիսուսի պնդումները (Մաթ. 10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13; Հովհ. 8:31; 15:4-10; Հայտ. 2:7,17,26; 3:5,12,21)
 2. Պողոսի պնդումները (Հռ. 11:22; 1Կոր. 15:2; 2 Կոր. 13:5; Գաղ. 1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ. 2:12; 3:18-20; Կող. 1:23; 2 Տիմ. 3:2)
 3. Եբրայեցիս թղթի հեղինակի պնդումները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 4. Հովհաննեսի պնդումները (1 Հովհ. 2:6; 2 Հովհ.9)
 5. Հոր պնդումները (Հայտ. 21:7)

Աստվածաշնչյան փրկության աղբյուրը սուվերեն Երրորդության սիրո, ողորմության և շնորհքի արտահայտությունն է: Ոչ մեկ մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (հմմտ. Հովհ. 6:44,65): Աստված անում է առաջին քայլը և հաստատում բոլոր կանոնները, բայց և պահանջում, որ մարդիկ արձագանքեն Իր կանչին՝ հավատքով և ապաշխարհությամբ, թե մեկ անգամ սկզբում և թե շարունակաբար ամբողջ կյանքի ընթացքում: Աստված հարաբերություններ է հաստատում մարդու հետ ուխտի հիման վրա: Կան արտոնություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է բոլոր մարդկանց: Հիսուսի մահը լուծեց ընկած արարչագործության մեղքի խնդիրը: Աստված հոգացել է փրկության ճանապարհը և ուզում է, որ նրանք, որ ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ, արձագանքեն Իր սիրուն և ինչ-որ առաջարկվում է Հիսուսի միջոցով: Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այս հարցի մասին, ոչ կալվինիստական տեսանկյունից, կարող եք կարդալ հետևյալ գրքերը.

1. Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ 348-365)
2. Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969
3. Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961

Աստվածաշունչը խոսում է այս բնագավառում երկու տարբեր խնդիրների մասին (1)

ապահովագրության երաշխիք ապրելու անպտուղ և եսասեր կյանքով, (2) քաջալերելով նրանց, ովքեր ծառայության մեջ են և պայքարում են անձնական մեղքի դեմ: Խնդիրն այն է, որ սխալ խմբերը վերցնում են սխալ պատգամը և սահմանափակ աստվածաշնչյան հատվածների հիման վրա աստվածաբանական համակարգեր շինում: Որոշ քրիստոնյաներ պետք ունեն միայն փրկության վստահությանը վերաբերող հատվածներ, մյուսներին նախագրուշացումներ և զգոնություն: Ո՞ր խմբին ես դու պատկանում:

1:22 «Հրեաները նշան են ուզում» Սա արտացոլում է Պողոսի գիտելիքները Քրիստոսի կյանքի մասին (տես Մաթ. 12:38; 16:1,4; Մարկ. 8:11-12; Հովհ. 4:8; 6:30):

▪ **«Յոյներն իմաստութիւն են խնդրում»** «Հույներ» (*Hellēnes*) վերաբերում է բոլոր ոչ հրեա մարդկանց: Սա ակնհայտորեն երևում է Գործք 18:16-21,32; Հռ. 1:13-ում:

1:23 Այս հատվածը պետք է սկսվի «բայց» հակադիր շաղկապով: Պողոսի պատասխանը ավետարանն էր, թե՛ «նշանների» և թե՛ «իմաստության» ցանկության համար:

▪ **«խաչեալ»** Սա վաղակատար կրավորական դերբայ է: Հիսուսի խաչելությունը, ոչ թե տրամաբանությունն ու հրաշքները, Պողոսի ավետարանի սիրտն է: Վաղակատար ժամանակը պնդում է, որ Հիսուսը շարունակում է մնալ «խաչված»: Երբ մենք Հիսուսին տեսնենք երկնքում, Նա ոինենալու է Իր խաչելության նշանները (Հովհ. 20:25), քանի որ նրանք դարձել են պատվի և փառքի Իր նշանները: Հիսուսը Երրորդության միակ անձն է, որն ունի ֆիզիկական մարմին:

Անշուշտ հնարավոր է, որ այս վաղակատար ժամանակը լինի իրականացող վաղակատար, որը կենտրոնանում է իրադարձության կամ գործողության ավարտի վրա, ենթադրելով արդյունքը (տես Daner and Mantey, *A Manual Grammar of the Greek New Testament*, էջ 202-203): Հիսուսը խաչվեց, կնքեց մեր փրկությունը: Նա Ծննդ. 3:15; Մաղ. 22; Ես. 53; և Զաք 12:10-ի կատարողն էր: Տառապող Մեսիան հրեաների համար աստվածաբանական շոկ էր:

Ծանոթացեք մարգարեական կոչումներին, որոնք օգտագործվում են վաղ քարոզիչների և դավանողների կողմից:

1. Հիսուսը Քրիստոսն է (Մեսիա) – Գործք 5:42; 9:22; 17:3; 18:5,28; 1 Կոր. 1:23
2. Հիսուսն Աստծո Որդին է – Գործք 9:20; Հռ. 1:3-4
3. Հիսուսն Աստված է (արտացոլելով ՏԵՆ, ՅԱՀՎԵ) – Գործք 2:36; 10:36; 11:20; Հռ. 10:9; 2 Կոր. 4:5; Կող. 2:6

Սրանք աստվածաբանական ամփոփագրեր են, որոնք հաստատում են Քրիստոնեական հավաստումը (տես James D. G. Dunn, *Unity and Diversity in the NT*, էջ 34-63):

Արևելահայերեն «գայթակղութեան քար»

Արևմտահայերեն «գայթակղութեան վեմ»

NASB, NKJV, NRSV, Peshitta «գայթակղութեան քար»

TEV, REB «դա վիրավորական է»

NJB «խոչընդոտ»

Այս հունարեն տերմինը (*skandalon*) օգտագործվել է կենդանական ծուղակի վրա ձգանման մեխանիզմի համար (տես Գաղ. 5:11): Հրեաները խաչելության պատճառով մերժեցին Քրիստոսին (տես 2 Օր. 21:23): Նրանք սպասում էին, որ Մեսիան լինելու է նվաճող ռազմական առաջնորդ (և Նա կլինի, երբ վերադառնա): Հրեաները չճանաչեցին չարչարվող Մեսսիային (տես Ծննդ 3:15; Մաղ. 22; Ես. 52:13-53:12; Զաք 12:10) և երկու գալուստները (մարմնավորում և փառահեղ վերադարձ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԵՍԻԱ (Դան.9:26-ից)

SPECIAL TOPIC: MESSIAH (from Dan. 9:26)

Այս տերմինը թարգմանելու դժվարությունը «Մեսիա» կամ «օծյալ» (BDB 603, KB 645) տերմինի հետ կապված տարբեր օգտագործումների պատճառն է: Տերմինը օգտագործվել է անձի վրա հատուկ յուղ լցնելու համար, որը ցույց է տալիս Աստծո կանչը և սպառազինումը՝ հանձնարարված առաջնորդության առաջադրանքի համար:

1. օգտագործվում էր հրեա թագավորների համար (օր. I Թագ. 2:10; 12: 3; 24: 6,10; 2 Թագ. 19:21; 23:1; Սաղ. 89:51; 132: 10,17; Ողբ 4:20; Ամբ. 3:13; Դան. 9:25 «Օծյալ Իշխան»)
2. օգտագործվում էր հրեա քահանաների համար (օր. «օծյալ քահանաներ», Ելից 29:7; օր. Ղև. 4: 3,5,16; 6:15; 7:36; 8:12; հնարավոր է Սաղ. 84: 9-10; և 133: 2)
3. օգտագործվում էր Նախահայրերի և մարգարեների համար (տես Ծննդ. 26: 7; 1 Մնաց. 16:22; Սաղ. 105:15, որը վերաբերվում է ուխտի մարդկանց հավաքականորեն, հավանաբար Ամբ. 3:13)
4. օգտագործվում էր մարգարեների համար (տես 3 Թագ. 19:16; հավանաբար 1 Մնաց. 29:22)
5. օգտագործվում էր Կյուրոսի համար (տես Ես. 45: 1)
6. # 1 և # 2 համակցված են Սաղմոս 110 և Զաքարիայի 4
7. օգտագործվում էր Աստծո հատուկ գալստյան համար, Դավիթական թագավորը բերելու է արդարութեան նոր դարաշրջան
 - ա. Հուդայի ցեղից (տես Ծննդ. 49:10)
 - բ. Հեսեի տնից (հմմտ. 2 Թագ. 7)
 - գ. համընդհանուր թագավորում (տես Սաղ. 2; Ես. 9: 6; 11: 1-5; Միք. 5: 1-4)
 - դ. ծառայություն կարիքավորներին (տես Ես. 61: 1-3)

Ես անձամբ հակված եմ «օծյալը» նույնականացնել Հիսուս Նազովրեցու հետ(տես Հովհ. 1:41, 4:25), քանի որ

1. հավիտենական Թագավորության ներկայացնելը Դանիել 2-րդ գլխում չորրորդ կայսրության ընթացքում
2. «մարդու որդու» ներկայացնելը Դանիել 7:13-ում, որին տրվում է հավիտենական թագավորություն
3. փրկության մասին մտքերը Դանիել 9:24-ում, որը մատնանշում է ընկած, մեղավոր աշխարհի պատմության գագաթնակետը
4. Հիսուսը մեջբերում է Դանիելի գրքից Նոր Կտակարանում (տես Մատթ. 24:15; Մարկ. 13:14)

Պետք է ընդունել, որ սա հազվագյուտ տիտղոս է Հին Կտակարանում, հնարավոր է, միայն Դան. 9:25): Պետք է նաև համաձայնել, որ Հիսուսը չի համապատասխանում Մեսիայի ընդհանուր նկարագրությանը

1. ոչ մի առաջնորդ Իսրայելում
2. ոչ պաշտոնապես օծված քահանայի կողմից
3. ոչ միայն Իսրայելի փրկիչը
4. ոչ միայն «մարդու որդին», այլև ցնցող «Աստծո Որդին»

Արևելահայերեն «Յոյներին յիմարութին»

Արևմտահայերեն «Յոյներուն յիմարութին»

NASB, NJB «Հույներին հիմարություն»

NKJV «Հրեաներին գայթակղություն »

NRSV «հեթանոսներին հիմարություն »

TEV «անհեթեթություն հեթանոսներին»

Հույները մերժեցին Հիսուսին հարության պատճառով (քանի որ նրանց համար ֆիզիկական մարմինը չար էր) և չէր համապատասխանում իրենց նախապաշարմունքային փիլիսոփայական իդեալներին: Պողոսի այս հայտարարությունը ցույց է տալիս, որ պտղաբերության կրոնների և միաստիկ կրոնների ենթադրյալ «մեռնող և կենդանացող փրկագնողը» հունական մտածողության հիմնական հակվածությունը չէ և, ոչ էլ Պողոսի տեսակետը Հիսուսի մասին:

Ուշադիր եղեք չդատել ավետարանը ձեր սեփական մշակույթով կամ ազգային կատեգորիաներով: NKJV, Textus Receptus-ից հետո, ունի «հույներ», որը հետևում է C³ և D^c-ի ուղղագրված հունարեն երկաթագիր ձեռագրերին: Բոլոր մյուս հունարեն ձեռագրերը ունեն «հեթանոսներ» (*ethnesiu*) բառը: «Հույներ» տերմինը հանդիպում 1 Կոր. 1:22 և 24-ում: Հավանաբար հնագույն դպիրները փոխեցին 1 Կոր. 1:23 դրանք բոլորը հետևողական դարձնելու համար: «Հիմարություն» բառի համար տես 1 Կոր.1:25

1:24 «Բայց այն կանչումներին» 1 Կորնթացիսը շեշտում է Աստծո կանչը (այսինքն, ընտրությունը) և Աստծո շնորհքը, որպես Կորնթոսի եկեղեցու փրկության միակ հիմքը (տես 1 Կոր. 1: 2,9,26,27; Եփ. 1-2): Մենք սովորում ենք Հովհ. 6:44,65-ից, որ ոչ ոք չի գալիս Աստծու մոտ, եթե Հոգին իրեն չքաշի: Աստծո կանչը չի վերացնում կամ փոքրացնում մարդկային արձագանքի կարիքը, ինչպես նախապես, այնպես էլ շարունակաբար:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ / ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ
SPECIAL TOPIC (ELECTION/PREDESTINATION AND THE NEED FOR A THEOLOGICAL BALANCE)**

Ընտրությունը հրաշալի վարդապետություն է: Այնուամենայնիվ, դա ոչ թե կողմնապահության կոչ է, այլ միջոց, գործիք՝ ուրիշների փրկության համար: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվել է ծառայության համար: Նոր Կտակարանում այն օգտագործվում է հիմնականում փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ հակասությունը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշնչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հռոմեացիս 9՝ Աստծո ինքնիշխան ընտրությունը և Հռոմեացիս 10՝ մարդու համար անհրաժեշտ արձագանքը (տես Հռ. 10: 11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ. 1: 4-ում: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն է և բոլորն էլ կարող են ընտրվել Նրա մեջ (Կարլ Բարթ): Հիսուսը Աստծո «այն» է, մարդու կարիքի համար (Կարլ Բարթ): Եփ. 1: 4 նույնպես օգնում է պարզաբանել հարցը, հավաստելով, որ նախասահմանության նպատակը ոչ թե երկինքն է, այլ սրբությունը (Քրիստոսանմանություն): Մեզ հաճախ գրավում է ավետարանի օգուտը, շահը և անտեսում ենք պատասխանատվությունը: Աստծո կանչը (ընտրությունը) ժամանակի և հավիտենականության համար է:

Վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անկախ և առանձին հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ աստղը: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան, ոչ թե արևմտյան, ժանրերում: Մենք չպետք է հեռացնենք վարդապետական ճշմարտությունների դիալեկտիկական (պարադոքսալ) գույգերի պատճառած լարվածությունը.

1. Նախասահմանությունը և մարդու ազատ կամքը
2. Հավատացյալների ապահովությունը և համբերելու կարիքը
3. Ադամական մեղքը և կամավոր մեղքը
4. Անմեղություն (պերֆեկցիոնիզմ) և քիչ մեղավոր

5. Նախասկզբնական ակնթարթային արդարացում և սրբացում ու աստիճանաբար սրբացում
6. Քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվություն
7. Աստծո գերազանցությունը և Աստծո ներկայությունը
8. Աստված որպես վերջնականապես, ամբողջությամբ անճանաչելի և Աստված ճանաչված Սուրբ Գրքի միջոցով
9. Աստծո Թագավորությունը ներկայում և վերջնական իրականացումը ապագայում
10. Ապաշխարությունը որպես Աստծո պարզ և որպես մարդու ուխտի անհրաժեշտ արձագանք
11. Հիսուսը որպես Աստված և Հիսուսը որպես մարդ
12. Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը

«Ուխտի» աստվածաբանական գաղափարը միավորում է Աստծո ինքնիշխանությունը (ով միշտ նախաձեռնում է և սահմանում օրակարգը) պարտադիր նախնական և շարունակական զոջացող հավատքի պատասխանի միջոցով (տես Մարկ. 1:15; Գործք 3:16, 19; 20:21): Զգուշացեք պարադոքսի մի կողմի ապացուցման և մյուսի արժեզրկման մասին: Զգուշացեք միայն ձեր սիրած վարդապետությունը կամ աստվածաբանության համակարգը հաստատելու համար:

▪ **«Հրեաներին և Յոյներին»** Սա ցույց է տալիս, որ ավետարանի նպատակը բոլոր մարդկանց համախմբել Քրիստոսով: Սա Աստծո խորհուրդն է, որը թաքնված է դարերից, բայց այժմ հստակորեն բացահայտված է (տես Եփ. 2:11-3:13):

▪ **«Քրիստոսը քարոզում ենք Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն»** Առաջին արտահայտությունը կարող է վերաբերել Քրիստոսի հարությանը «Աստծո զօրության» օգտագործման պատճառով Հռ.1:4-ում:

Երկրորդ արտահայտությունը բացառապես վերաբերում է Կորնթոսի եկեղեցու գիտելիքի շեշտադրման խնդրին: Այնուամենայնիվ, դա կարող է անպայման հղում ունենալ Առ. 8:22-31 (այսինքն, ստեղծագործության անհատականացված իմաստությունը, տես 1 Կոր. 8:6; Կող. 1: 15-17; Եբ. 1:2):

1:25 «Աստուծոյ յիմարն աւելի իմաստուն է քան թէ մարդիկ» Սա Հին Կտակարանյան թեմա է (տես Ես. 55:8-9): Այն կրկնվում է 1 Կոր. 1:18,21,23-ում: Սա *mōros* տերմինն է: Սրա և սրա այլ ձևերը հաճախ օգտագործվում են Պողոսի կողմից, իր Կորնթացիս նամակներում: Տես Հատուկ Թեմա 1 Կոր.15:36

1. *mōros* (հիմար), 1 Կոր. 1:25,27; 3:18; 4:10
2. *mōria* (հիմարություն), 1 Կոր. 1:18,21,23; 2:14; 3:19
3. *mopainō* (հիմար դարձրեց), 1 Կոր. 1:20

▪ **«Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան թէ մարդիկ»** Սա է հիմնականում հաստատում Աստծո անզուգական մեծությունը: Նա անգամ մեծանում է մարդկային տկարության մեջ (տես 1 Կոր. 12: 5,7-10): Դա «մարդկային տեսանկյունից» կարող է վերաբերել Հիսուսի մահվան «ակնհայտ» ձախողմանը (տես 2 Կոր. 13:4), սակայն իրականում դա հավիտենական հետևանքների հաղթանակն էր:

Ավետարանը, հաղթանակը, բոլորն Աստուծուց է, այլ ոչ թե մարդկանցից: Տես Հատուկ Թեմա: Տկարություն, 1 Կոր. 12:9

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 1:26-31
²⁶Հենց ձեր կոչումին մտիկ արեք, եղբայրներ, որ ոչ թե շատ իմաստուններ մարմնի կողմանէ, եւ ոչ թէ շատ զօրաւորներ, եւ ոչ թէ շատ ազնուականներ. ²⁷Այլ այս աշխարհի յիմարներին Աստուած

ընտրեց՝ որ ամաչեցնէ իմաստուններին. Եւ աշխարհքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ զօրաւորներին: ²⁸Եւ աշխարհքիս անտոհմներին եւ անարգուածներին Աստուած ընտրեց եւ ոչինչներին, որ մի բան լինողներին ոչնչացնէ: ²⁹Որպէսզի ոչ մի մարմին չ'պարծենայ նորա առաջին: ³⁰Եւ դուք նորանից էք Յիսուս Քրիստոսումը՝ որ Աստուածանից մեզ համար եղաւ իմաստութիւն, եւ արդարութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն: ³¹Որ ինչպէս գրուած է, Նա որ պարծենում է՝ թող Տէրովը պարծենայ:

1:26-31 Այս գլխի այս վերջին պարբերությունը ցույց է տալիս մեզ, որ «իմաստության» և «գիտության» լարվածությամբ լրացված հարաբերությունները են, ինչպես է վերաբերում ավետարանին: Մի առումով նրանք «վատ» են, մյուս կողմից՝ «լավը»: Թույլ տվեք մեջբերել հրաշալի հատված Herman Ridderbos' *Paul, An Outline of His Theology*-ից:

«Համոզված եղեք, որ հավատքի և գիտելիքի հարաբերություններում, *pistis* և *gnosis*, ինչպես նաև հավատքի և գործերի միջև, կա հակասություն: Մի կողմից, գիտելիքը հանդես է գալիս հավատքի փոխարեն, երբ, ինչպես որ հրեաների համար լավ գործերն են, այն ներկայացնում է մարդկային կամքը ինքնաազատագրման համար: Քանի որ այս հակասությունը զարգանում է Գաղատացիսում և Հռոմեացիսում, գործերի առնչությամբ, այս սպառնալիքը քրիստոնեական հավատքի նկատմամբ *գնոստիկների* կողմից բացահայտվում է հատկապես 1 Կորնթացիսում (այսինքն՝ 1 Կոր. 1:26-29): Այս վտանգը գոյություն ունի ոչ միայն այն ամենից, որը Պողոսը կոչում է «այս աշխարհի իմաստությունը» (1 Կոր. 1:21), այլ նաև որոշակի քրիստոնեական *գնոստիկներից*: Մենք գիտենք, որ մենք բոլորս գիտելիք ունենք (1 Կոր. 8:1), բայց նա անմիջապես ավելացնում է. գիտելիքը հպարտացնում է, սերը՝ կառուցում: Այստեղ խոսքը սխալ գործածված քրիստոնյան է, ով իրեն վեր է դասում իր հարևանից, տկարից, գիտելիքը, որը իսկապես անհատական ազատության ծառայության մեջ է, այլ ոչ թե եկեղեցու շինության համար: Այս *գնոստիցիզմը* միայն խթանում է հպարտ անհատականությունը և կանգնում է սիրո դեմ: Այդ իմաստով *գնոստիցիզմը*, ինչպես գործերը, կարող է կանգնել սիրո դեմ, քանի որ դա վնասակար է և առանց օգուտի (1 Կոր. 13:2,3)» էջ 242:

1:26

Արևելահայերեն «մտիկ արեք»

Արևմտահայերեն «կը տեսնեք»

NASB, NRSV, NJB, Peshitta «մտիկ արեք»

NKJV «տես»

TEV «հիշիր»

REB «մտածիր»

Սա կամ ներկա ներգործական հրամայական է կամ ներկա ներգործական սահմանական: Moffatt-ը այն թարգմանում է որպես «նայեք ձեր սեփական կոչումին»: Այս հատվածը չի նշանակում մեղադրել վաղ եկեղեցուն և նրա առաջնորդներին, այլ հաստատել Աստծո սերը և գորությունը: Այն նշանակում էր ոչնչացնել այս ամբարտավան եկեղեցու հպարտությունը: Վաղ եկեղեցին հիմնականում կազմված էր հասարակության «նոտաներով»: Սակայն, ըստ երևույթին, Կորնթոսի պառակտություններից մեկը կազմված էր հռոմեացի ղեկավարներից և մշակութային էլիտայից: Իր ծրագրերում օգտագործելով առանց կարգավիճակի մարդկանց՝ Աստված մեծացնում էր Իր գորությունը:

▪ «ոչ թե շատ իմաստուններ մարմնի կողմանէ» Սա վերաբերում է մարդկային իմաստությանը կամ աշխարհիկ չափանիշներին (տես 1 Կոր. 1:20, 2:6,8, 3:18):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐՄԻՆ (SARX)

SPECIAL TOPIC: FLESH (SARX)

Այս տերմինը առավել հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից Գաղատացի թղթում և դրա աստվածաբանական զարգացումը ստանում Հռոմեցի թղթում: Աստվածաբանները տարբերվում են այն բանով, թե ով ինչպես է բնութագրել տերմինի տարբեր լրացուցիչ իմաստները: Անշուշտ, որոշակի իմաստային համընկումներ կան: Ստորև բերված է ընդամենը մի տարբերակ, որը ցույց է տալիս տերմինի լայն իմաստաբանական դաշտը:

- Ա. մարդկային մարմինը, Հովհ. 1:14; Հռ. 2:28; 1 Կոր. 5:5; 7:28; 2 Կոր. 4:11; 7:5; 12:7; Գաղ. 1:16; 2: 16,20; 4:13; Փիլ. 1:22; Կող. 1: 22,24; 2: 5; 1 Տիմ. 3:16
- Բ. մարդկային ծագումը, սերունդը, Հովհ. 3:6; Հռ. 1: 3; 4: 1; 9: 3,5,8; 11:14; 1 Կոր. 10:18; Գաղ. 4: 23,29
- Գ. մարդու անձը, Հռ. 3:20; 7:5; 8: 7-8; 1 Կոր. 1:29; 2 Կոր. 10:3; Գաղ. 2:16; 5:24
- Դ. մարդկային կերպով խոսելը, Հովհ. 8:15; 1 Կոր. 1:26; 2 Կոր. 1:12; 5:16; 10: 2; Գաղ. 6:12
- Ե. մարդու տկարությունը, Հռ. 6:19; 7:18; 8: 5-6,9; 2 Կոր. 10:4; Գաղ. 3: 3; 5: 13,16,19-21; Կող. 2:18
- Զ. մարդկանց թշնամանքը Աստծու հանդեպ, կապված անկման հետևանքների հետ, Հռ. 7:14; 13:14; 1 Կոր. 3: 1,3; Եփ. 2: 3; Կող. 2:18; 1 Պետ. 2:11; 1 Հովհ. 2:16

Պետք է ընդգծել, որ «մարմինը» Նոր Կտակարանում չի դիտվում որպես չար բան, ինչպես որ հունական մտածողության մեջ է: Հույն փիլիսոփաների համար «մարմինը» մարդկային խնդիրների աղբյուրն էր, մահը ազատ է արձակվել իր ազդեցությունից: Սակայն Նոր Կտակարանում «մարմինը» հոգևոր բախման ճակատամարտն է (տես Եփ. 6:10-18), սակայն չեզոք է: Մարդը կարող է օգտագործել ֆիզիկական մարմինը բարու կամ չարի համար:

▪ **«ոչ թե շատ զօրաւորներ»** Սա վերաբերում է ֆիզիկական ուժերին կամ հասարակական դիրքին:

▪ **«ոչ թե շատ ազնուականներ»** Սա վերաբերում է ընտանիքի մեկ այլ ֆոնին, որը ներառում է հարստություն, կրթություն և սոցիալական արտոնություն: Այս երեք բնութագրերը համապատասխանում են սոֆիստներին, որոնք հպարտ էին իրենց կրթությամբ, դիրքորոշմամբ և բարդությամբ:

1:27 **«Այլ այս աշխարհքի յիմարներին Աստուած ընտրեց»** Սա ԱՕՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է: Աստված ինքն է ընտրել տկարների միջոցով արտահայտելու Իր գորությունը, որպեսզի կասկած չլինի, թե ով պետք է ստանա փառքը (տես 2 Կոր. 12): Հաղթանակը Աստծո ռեսուրսներում է, այլ ոչ թե մարդկային նվաճման մեջ (տես 1 Կոր. 1:29; Եփ. 2:9) կամ հասարակական դիրքորոշման:

«Հիմար» բառի համար տես 1 Կոր. 1:25: «Աշխարհ» բառի համար տես 1 Կոր. 3:21-22:

1:28

Արևելահայերեն «Եւ աշխարհքիս անտոհմներին եւ անարգուածներին»

Արևմտահայերեն «Եւ աշխարհիս ցածագիներն ու անարգները»

NASB «Եվ աշխարհքի անտոհմներին և անարգվածներին»

NKJV «աշխարհի հիմնական բաները և արհամարհված բաները»

NRSV «ինչը ցածր է և արհամարհված է աշխարհում»

TEV «ինչ է աշխարհը նայում և անարգում է »

NJB «նրանք, ովքեր մարդկային չափանիշներով են, սովորական և անհարգալից»

REB «աշխարհում առանց կարգավիճակ ունենալու»

Այս արտահայտությունը հակասում է «իմաստուններ...գորավորներ...ազնվականներ» 1 Կոր. 1:26. «Հիմնական բաներ» տերմինը բառացիորեն նշանակում է «ցածր ծնունդ ունեցողներ», ինչը ևս մեկ հղում է հռոմեական ազնվականությանը:

Արևելահայերեն «և ոչինչներին»
Արևմտահայերեն «և ոչինչները»

NASB, NRSV «և ոչինչներին»

NKJV «ոչինչներին»

TEV «բաները ոչինչ են»

NJB «նրանք, ովքեր ոչինչ են»

REB «ոչինչ»

Արդյո՞ք ք սա փչացած բաների / մարդկանց կամ ամփոփման մեկ այլ կատեգորիա է: Որովհետև չկա *kai* (MSS P⁴⁶, s*, A, C*, D, F, G) նախքան այս արտահայտությունը, ինչպես մյուս բոլորի հետ, դա, հավանաբար, ամփոփ եզրակացություն է: Աստված կոչ է անում և օգտագործում այն մարդկանց, որոնց աշխարհը չի նկատում: Աստվածաբանական կետերը՝

1. «Ոչ մի մարմին չի պարծենա Աստծո առաջ (տես 1 Կոր. 1:29)
2. Աստծո գործունեությունն ու սպառազինությունը մեծացնում է մարդկային անոթի թուլությունը (տես 2 Կոր. 12:1-10)
3. Քրիստոսի միջնորդությունը մեծանում է (տես 1 Կոր. 1:30)

Նրանում, այն ամենը, ինչ հրեաները և հույները փնտրել և ձգտել են, պարզ և ՅԱՀՎԵԻՑ, Մեսիայի միջոցով, որը գորացվում է Սուրբ Հոգով:

▪ **«որ մի բան լինողներին ոչնչացնե»** Սա հունարեն *katargeō* տերմին է: Տես 1 Կոր. 1:18 և հետևյալ Հատուկ Թեման:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԸ ՎԱՏՆԵԼ (*katargeō*)

SPECIAL TOPIC: NULL AND VOID (*katargeō*)

Սա (*katargeō*) Պողոսի սիրելի խոսքերից մեկն էր: Նա օգտագործեց այն առնվազն քսանչորս անգամ, բայց շատ լայն իմաստային տիրույթ ունի:

- Ա. Հիմնական արմատավորումը գալիս է *argos* բառից, որը նշանակում է
 1. Ոչ ակտիվ
 2. Անհիմն
 3. Չօգտագործված
 4. Անօգուտ
 5. Չգործող
- Բ. *kata* բարդ բառը օգտագործվում է արտահայտելու համար
 1. Անգործություն
 2. Անօգուտություն
 3. Այն, որը չեղյալ է հայտարարվել
 4. Այն, ինչն արվել է
 5. Այն, որ ամբողջովին անգործ էր
- Գ. Ղուկասը մեկ անգամ օգտագործում է այն՝ անպտուղ, այսինքն անօգուտ ծառ նկարագրելու համար (տես Ղուկ. 13:7)
- Դ. Պողոսն այն օգտագործում է փոխաբերական իմաստով երկու հիմնական ձևերով
 1. Աստված կատարում է անգործունակ բաներ, որոնք թշնամանք են մարդկությանը

- ա. Մարդկության մեղքի բնույթը, Հո. 6: 6
 - բ. Մովսեսական օրենքը «սերնդի» Աստծո խոստման հետ կապված-Հո. 4:14; Գաղ. 3:17; 5: 4,11; Եփ. 2:15
 - գ. Հոգևոր ուժեր - 1 Կոր. 15:24
 - դ. «Անօրենության մարդը» - 2 Թեա. 2: 8
 - ե. Ֆիզիկական մահը - 1 Կոր. 15:26; 2 Տիմ. 1:10 (Եբր. 2:14)
2. Աստված փոխարինեց հինը (ուխտը, դարը) նորով
- ա. Մովսեսական Օրենքի հետ կապված բաներ-Հո. 3: 3,31; 4:14; 2 Կոր. 3: 7,11,13,14
 - բ. Օրենքի օգտագործման ամուսնության նմանությունը- Հո. 7: 2,6
 - գ. Այս դարի բաները - 1 Կոր. 13: 8,10,11
 - դ. Այս մարմինը-1 Կոր. 6:13
 - ե. Այս դարի առաջնորդները -1 Կոր. 1:28; 2: 6

Այս բառը շատ տարբեր եղանակներով է թարգմանված, բայց նրա հիմնական իմաստը նշանակում, անիմաստ, անվավեր, անգործունյա, անգոր, բայց ոչ պարտադիր, ոչ գոյություն ունեցող, ոչնչացված կամ վերացած:

1:29 «Որպեսզի ոչ մի մարմին չ'պարծենայ նորա առաջին» Բայը ներկա չեզոք ստորադասական է, որը նշանակում է հաստատված անձնական ընտրություն: Ոչ մի ստեղծված մարմին չի պարծենա ստեղծողի առաջ (տես Եփ. 2:9): Սա Պողոսի ուղերձի կենտրոնական ճշմարտությունն էր հպարտ Կորնթացիներին և ընդհանուր առմամբ ընկած մարդկությանը, հրեա կամ հեթանոս (տես Հո. 3:27, Եփ. 2:9): Տես ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊԱՐԾԱՆՔ , 1 Կոր. 5:6

- **«մարդ»** Սա բառացիորեն նշանակում է «մարմին»: Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:26

1:30

Արևելահայերեն «Եւ դուք նորանից եք»

Արևմտահայերեն «Դուք անկէ եք»

NASB «Եվ դուք նրանից եք»

NKJV «Նրա»

NRSV «Նա աղբյուր է»

TEV «Աստված»

NJB «Նրա կողմից»

REB «Աստծո գործով»

Սա բառացիորեն նշանակում է «դուրս է նրանից», որը հունարեն իդիոմա է, արտահայտելով առաջին պատճառը, հիմնական շարժիչը: Հայրը ուղարկեց, Հիսուսը բերեց այն, և Հոգին վառեց այն: Այստեղ գալիս է Աստծո պարզների ցանկը հավատացյալներին Հիսուս Քրիստոսի միջոցով:

- **«Աստուածանից մեզ համար եղաւ իմաստությունը»** Հրեական մտքի իմաստությունը անձնավորված է Առ. 8:22-31 և Կող. 2:2-3: Իմաստությունն անձ է: Ճշմարտությունն անձ է: Ավետարանը անձ է, և դա Հիսուսն է (տես Հովհ. 14:6):

Սակայն, եթե Պողոսը դիմում էր եկեղեցու փիլիսոփայական տարրին, ապա *sophia* կապ կունենա իրենց հպարտության հետ իրենց մշակութային ավանդույթներում (այսինքն՝ Պլատոն, Սոկրատես, Արիստոտել և այլն): Դա ակադեմիական փոխաբերություն էր: Հնարավոր է նաև, որ Կորնթոսի էկլեկտիկ կրոնական միջավայրում սկզբնական գնոստիցիզմը ներկա էր և, հնարավոր է,

ներխուժեց եկեղեցի (տես 1 Կոր. 1:18-2:8, 3:18-23, 8:1-2): Եթե այո, ապա Պողոսի խոսքերը Կողոսացիսում համապատասխան են (Քրիստոսը, ինքն է իմաստությունը, տես Կող.1:9, 2:3):

Կարծում եմ, այս բոլոր տերմինները վերաբերում են այն բանին, թե ինչ է Աստված արել հավատացյալների համար Հիսուսի միջոցով:

1. Նա Աստծո իմաստությունն է մեզ համար
2. Նա Աստծո արդարությունն է մեզ համար
3. Նա Աստծու սրբությունն է մեզ համար
4. Նա Աստծո փրկությունն է մեզ համար

Դա Հայր Աստվածն է՝ Որդի Աստծո միջոցով:

▪ **«արդարութիւն»** Սա իրավական տեսանկյունից պատկերված դատավճիռ էր (տես Հո. 3:21-26; 2 Կոր. 5:21): Պողոսի օրոք ռաբբիներն Առակաց 8-ի կիսա-անձնական իմաստությունը փոխանցել էին Մովսեսական օրենքին: Դրան տրվել էր վերջնական լիազորություն: Պողոսը մտածում էր Կորնթոսի եկեղեցու հրեական տարրի մասին, դա հզոր և վերջնական անվանումն էր:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ **SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS**

«Արդարությունը» այնպիսի կարևոր թեմա է, որ Աստվածաշունչ սերտող ուսանողը պետք է անհատականորեն ուսումնասիրի այդ գաղափարը:

Հին Կտակարանում Աստծո բնույթը նկարագրվում է որպես «արդար» կամ «ուղիղ» (ԲԱՅ, BDB 842, KB 1003, ԱՐԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 841, KB 1004, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 842, KB 1006): Միջագետքյան տերմինը առաջացել է «գետի եղեգից», որը օգտագործվել է որպես շինարարական գործիք՝ պատերի և ցանկապատերի հորիզոնական ուղղությունը ստուգելու համար: Աստված ընտրեց փոխաբերական կերպով օգտագործել այդ տերմինը Իր բնությունը նկարագրելու համար: Նա ուղիղ գիծ է (քանոն), որով ամեն ինչ գնահատվում և չափվում է: Այս գաղափարը հաստատում է Աստծո արդարությունը և դատելու իրավունքը:

Մարդը ստեղծվել է Աստծո պատկերով (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1,3; 9: 6): Մարդը ստեղծվել է Աստծո հետ հաղորդակցվելու համար (այսինքն, Ծննդ. 3: 8): Ամբողջ ստեղծագործությունը Աստծո և մարդկության փոխհարաբերության բեմն է կամ ֆոնը: Աստված ուզում էր Իր ամենաբարձր ստեղծագործությունը՝ մարդկությունը ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և Իր նման լինի: Մարդու հավատարմությունը փորձվեց (տես Ծննդ. 3) և առաջին գույգը ձախողեց: Սա հանգեցրեց Աստծո և մարդկության միջև փոխհարաբերությունների խզմանը (տես Հո. 5: 12-21):

Աստված խոստացել է վերանորոգել և վերականգնել հաղորդակցությունը (տես Ծննդ. 3:15; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը): Նա դա անում է Իր կամքի և Իր Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել ինտերվալը (տես Հո. 1: 18-3: 20; Հայտ. 5):

Անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար ուխտի գաղափարն էր, հիմնված Նրա հրավերքի և մարդու ապաշխարող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38): Մեղքի պատճառով մարդիկ անկարող էին համապատասխան գործել (տես Հո. 3: 21-31; Գաղ. 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը Իր ձեռքը վերցնել՝ վերականգնելու ուխտը զանց արած մարդկանց: Նա դա արեց

1. Քրիստոսի կատարած գործի (այսինքն, դատական արդարության) միջոցով մարդկությանը արդարացնելու համար,
2. մարդկության ձրի արդարություն տալով Քրիստոսի կատարած գործի միջոցով (այսինքն, դրված արդարություն)
3. տալով Սուրբ Հոգին, որն արդարություն է բերում (այսինքն, Քրիստոսանմանություն, Աստծո պատկերի վերականգնում) մարդկության մեջ
4. վերականգնելու Եդեմի պարտեզի ընկերակցությունը (համեմատել Ծննդոց 1-2-ը,

Հայտնություն 21-22-ի հետ)

Սակայն Աստված պահանջում է ուխտի արձագանք: Աստված որոշում է (այսինքն, ձրի տալիս է, տես Հո. 5: 8; 6:23) և հոգում է, բայց մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդ ապրելակերպով
4. համբերությամբ

Արդարությունը, հետևաբար, ուխտի, փոխադարձ գործողությունն է Աստծո և Նրա բարձրագույն ստեղծագործության միջև, հիմնված Աստծո բնույթի, Քրիստոսի կատարած գործի և Հոգու տված կարողության վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձամբ և շարունակաբար պատշաճ արձագանքի: Գաղափարը կոչվում է «արդարացում շնորհքով հավատքի միջոցով» (տես Եփ. 2:8-9): Գաղափարը բացահայտվում է Ավետարաններում, բայց ոչ այս տերմիններում: Այն հիմնականում սահմանում է Պողոսը, որն օգտագործում է հունարեն «արդարություն» տերմինը իր տարբեր ձևերով, ավելի քան 100 անգամ:

Պողոսը, լինելով լավ կրթված ռաբբի, օգտագործում է *dikaionē* տերմինն իր եբրայերեն իմաստով *tsaddiq* տերմինն օգտագործվում է Սեպտուագինդում, ոչ թե հունական գրականության մեջ: Հունարեն գրվածքներում այս տերմինը կապված է այն անձի հետ, ով հավատարիմ է Աստծո և հասարակության ակնկալիքներին (այսինքն Նոյ, Հոբ): Եբրայերեն իմաստով այն միշտ կառուցված է ուխտի տերմիններով (տես Հատուկ Թեմա: Ուխտ): ՅԱՀՎԵՆ արդար, էթիկական, բարոյական Աստված է: Նա ցանկանում է, որ Իր ժողովուրդն արտացոլի Իր կերպարը: Փրկված մարդը դառնում է նոր արարած (տես 2 Կոր. 5:17; Գաղ. 6:15): Այս նոր լինելը հանգեցնում է աստվածապաշտության նոր ապրելակերպին (տես Մատթեոս 5-7; Գաղ. 5: 22-24; Հակոբոս, 1 Հովհ.): Քանի որ Իսրայելը թեկրատիա էր, հստակ սահմանազատում չկար աշխարհիկ (հասարակության նորմերի) և սուրբ (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունն արտահայտվում է եբրայերեն և հունարեն լեզուներով՝ թարգմանվելով անգլերեն որպես «իրավունք» (հասարակությանը վերաբերող) և «արդարություն» (կրոնին վերաբերող):

Հիսուսի ավետարանը (բարի լուրը) այն է, որ ընկած մարդկությունը վերականգնվի՝ Աստծո հետ հաղորդակցվելու համար: Դա կատարվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով; Որդու կյանքի, մահվան և հարության շնորհիվ և Հոգու հովանավորության և դեպի ավետարանը քաշելու միջոցով: Արդարացումը Աստծո ձրի գործն է, բայց դա պետք է դրսևորվի աստվածապաշտության մեջ (Օգոստինոսի դիրքորոշումը, որը արտացոլում է թե Ռեֆորմացիայի շեշտադրումը ավետարանի ձրի-ության վրա և թե հռոմեական կաթոլիկ շեշտադրումը՝ սիրո և հավատարմության փոփոխված կյանքի վրա): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն» տերմինը հանդիսանում է ՕԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ (այսինքն մեղավոր մարդկանց Աստծուն ընդունելի լինելու գործողությունը (դիրքի սրբացում), իսկ կաթոլիկների համար դա ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ է, որը Աստծուն ավելի նմանվելու գործընթացն է [փորձառու առաջադիմական սրբացում]: Իրականում, իհարկե, այն երկուսն է:

Իմ Աստվածաշնչի մասին ունեցած կարծիքով Ծննդոց 4-ից մինչև Հայտնություն 20 Աստված վերականգնում է Եդեմի ընկերակցությունը: Աստվածաշունչը սկսվում է երկրի վրա Աստծո և մարդու հաղորդակցությունից (տես Ծննդոց 1-2), և Աստվածաշունչը վերջանում է նույն տեղանքով (տես Հայտ. 21-22): Աստծո պատկերն ու նպատակը կվերականգնվի:

Վերոհիշյալ քննարկումները փաստաթղթավորելու համար ուշադրություն դարձրեք հետևյալ Նոր Կտակարանյան հատվածներին, որոնք լուսաբանում են հունարեն բառախումբը:

1. Աստված արդար է (հաճախ Աստծու որպես Դատավոր)
ա. Հռոմեացիս 3:26
բ. 2 Թեսաղոնիկեցիս 1: 5-6

- գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16: 5
- 2. Հիսուսն արդար է
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի կոչումը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2: 1,29; 3: 7
- 3. Աստծո կամքը Իր ստեղծագործության համար արդարությունն է
 - ա. Ղևտացոց 19: 2
 - բ. Մատթեոս 5:48 (տես 5: 17-20)
- 4. Աստծո արդարության ապահովման և կայացման միջոցները
 - ա. Հռոմեացիս 3: 21-31
 - բ. Հռոմեացիս 4
 - գ. Հռոմեացիս 5: 6-11
 - դ. Գաղատացիս 3: 6-14
- 5. Տրված Աստծո կողմից
 - ա. Հռոմեացիս 3: 24; 6:23
 - բ. 1 Կորնթացիս 1:30
 - գ. Եփեսացիս 2:8-9
- 6. Հավատքով ստացած
 - ա. Հռոմեացիս 1:17; 3: 22,26; 4: 3,5,13; 9:30; 10: 4,6,10
 - բ. 2 Կորնթացիս 5: 7,21
- 7. Որդու կատարած գործերի միջոցով
 - ա. Հռոմեացիս 5: 21
 - բ. 2 Կորնթացիս 5:21
 - գ. Փիլիպեցիս 2: 6-11
- 8. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն
 - ա. Մատթեոս 5: 3-48; 7: 24-27
 - բ. Հռոմեացիս 2:13; 5:1-5; 6: 1-23
 - գ. Եփեսացիս 1:4; 2:10
 - դ. 1 Տիմոթեոս 6:11
 - ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
 - զ. 1 Հովհաննես 3:7
 - է. 1 Պետրոս 2:24
- 9. Աստված արդարությամբ կդատի աշխարհին
 - ա. Գործք 17:31
 - բ. 2 Տիմոթեոս 4: 8

Արդարությունը Աստծո առանձնահատկությունն է, ձրի տրված Քրիստոսի միջոցով մեղավոր մարդկությանը: Դա է

- 1. Աստծո որոշումն է
- 2. Աստծո պարզն է
- 3. Քրիստոսի գործը
- 4. ապրելու կյանքը

Բայց դա նաև արդարացման գործընթաց է, որը պետք է ուժեղ և հաստատակամորեն պահել, որը մի օր կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ համագործակցությունը վերականգնվում է փրկության ժամանակ, սակայն առաջ է ընթանում կյանքի ընթացքում՝ մահվան կամ *Parousia* ժամանակ Նրա հետ դեմ առ դեմք հանդիպելով (տես 1 Հովհ. 3: 2):

Ահա լավ մեջբերում այս քննարկումն ավարտելու համար: Այն վերցված է *Dictionary of Paul*

and His Letters from IVP .

«Կալվինը ավելի շատ, քան Լյութերը, ընդգծում է Աստծո արդարության հարաբերական կողմը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության մասին կարծես ներառում է արդարացման ասպեկտը: Կալվինը շեշտում է հաղորդակցության հրաշալի բնույթը կամ Աստծո արդարության մեզ վրա դրվելը» (էջ 834):

Ինձ համար հավատացյալի հարաբերությունը Աստծո հետ ունի երեք ասպեկտ:

1. ավետարանը մարդ է (Արևելյան Եկեղեցու և Կալվինի շեշտադրումը)
2. ավետարանը ճշմարտություն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. ավետարանը փոխված կյանք է (կաթոլիկ շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճշմարիտ են և պետք է միասին ընկալվեն՝ առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան քրիստոնեության համար: Եթե որևէ մեկը գերակշռում է կամ արժեզրկվում է, խնդիրներ են առաջանում:

Մենք պետք է ընդունենք Հիսուսին:

Մենք պետք է հավատանք ավետարանին:

Մենք պետք է ձգտենք Քրիստոսանմանությանը:

▪ **«սրբութիւն»** Սա Իսրայելի զոհաբերության համակարգի պատկերն էր (տես Հո 6:19-23): Սա նույն «սուրբ» կամ «օծված» արմատից է: Հին Կտակարանում այն վերաբերում էր մի անձնավորությանը, վայրին կամ այն բանին, որը առանձնացվել էր Աստծո ծառայության համար: Աստվածաբանորեն այն վերաբերում է հավատացյալի դիրքին Քրիստոսում: Այն պահին, երբ մարդը հավատում է Նրան, նա արդարացված է և սրբված (տես Հո 8:30): Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:2:

▪ **«փրկութիւն»** Սա նշանակում է «ետ գնել» (տես Հո. 3:24): Սա օգտագործվել է ստրուկների շուկայում: Սա կարևոր Հին Կտակարանյան փրկության հասկացությունն էր:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿԱԳԻՆ/ ՓՐԿԱՆՔ/ԱԶՍՏԱԳՐՈՒՄ

SPECIAL TOPIC: RANSOM/REDEEM

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ

Ա. Կան հիմնականում երկու եբրայերեն օրինական տերմիններ, որոնք փոխանցում են այս գաղափարը:

1. *Ga'al* (BDB 145 I, KB 169 I), որը հիմնականում նշանակում է «ազատել՝ զինը վճարելով»: *go'el* տերմինի ձևը ավելացնում է անձնական միջնորդի գաղափարը, սովորաբար ընտանիքի անդամ (այսինքն, ազգակից փրկիչ): Առարկաները, կենդանիները, հողերը հետ գնելու իրավունքի այս մշակութային կողմը (տես Ղև.25,27) կամ հարազատներին (տես Հոսի 4:14; Ես. 29:22) աստվածաբանական կերպով փոխանցում է ՅԱՀՎԵԻ Եզիպտոսից Իսրայելի ազատագրմանը (տես Ելից 6: 6; 15:13; Սաղ. 74: 2; 77:15; Եր. 31:11): Նա դառնում է «Փրկիչը, Ազատողը» (տես Հոբ 19:25; Սաղ. 19:14; 78:35; Առ. 23:11; Ես. 41:14; 43:14; 44:6,24; 47:4; 48:17; 49: 7,26; 54: 5,8; 59:20; 60:16; 63:16; Եր.50:34):

2. *Padah* (BDB 804, KB 911), որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»:
 - ա. անդրանիկների փրկվելը (Ելից 13: 13-15 և Թվոց 18: 15-17)
 - բ. ֆիզիկական փրկագնումը հակադրվում է հոգևոր փրկագնմանը (Սաղ 49: 7,8,15)
 - գ. ՅԱՀՎԵՆ Իսրայելը կազատի իրենց մեղքից և ապստամբությունից (Սաղ. 130:7-8)

Բ. Աստվածաբանական գաղափարը ներառում է մի քանի կապակցված տարրեր:

1. Կա կարիք, ստրկություն, բռնազավթում, ազատագրկում:
 - ա. ֆիզիկական
 - բ. Հասարակական, սոցիալական
 - գ. հոգրոք (տես Մադ. 130:8)
2. Գինը պետք է վճարվի ազատության, ազատման և վերականգնման համար:
 - ա. Իսրայել ազգի (տես 2 Օր.7: 8)
 - բ. անհատի (տես Հոբ 19:25-27; 33:28; Ես. 53)
3. Որևէ մեկը պետք է հանդես գա որպես միջնորդ և բարերար: *ga'al* մեջ սա սովորաբար ընտանիքի անդամն է կամ մոտ ազգականը (այսինքն, *go'el*, BDB 145):
4. ՅԱՀՎԵՆ հաճախ բնութագրում է Իրեն ընտանեկան տերմիններով:
 - ա. Հայր
 - բ. Ամուսին
 - գ. Մոտ ազգականի աղատագրումը ապահովվեց ՅԱՀՎԵԻ անձնական միջամտության միջոցով՝ գինը վճարվեց և ազատագրումն իրականացավ:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. Կան աստվածաբանական գաղափարը փոխանցելու համար օգտագործվող մի քանի տերմիններ:
1. *Agorazō* (տես 1 Կոր. 6:20; 7:23; 2 Պետ. 2: 1; Հայտ. 5: 9; 14: 3-4): Սա առևտրային տերմին է, որը արտացոլում է ինչ-որ բանի համար վճարված գինը: Մենք արյան գնով գնված մարդիկ ենք, ովքեր չեն վերահսկում մեր սեփական կյանքերը: Մենք պատկանում ենք Քրիստոսին:
 2. *Exagorazō* (տես Գաղ. 3:13; 4: 5; Եփ. 5:16; Կոդ. 4: 5): Սա նույնպես առևտրային տերմին է: Այն արտացոլում է մեզ փոխարինող Հիսուսի մահը: Հիսուսը կատարեց «անեծքը» օրենքի վրա հիմնված (այսինքն Մովսեսական օրենքը, տես Եփ. 2:14-16; Կոդ. 2:14), որը մեղավոր մարդիկ չէին կարող իրականացնել: Նա կրեց անեծք (տես 2 Օր. 21:23) բոլորի համար (տես Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21): Հիսուսում Աստծու արդարությունն ու սերը միաձուլվում են դառնալով լիովին ներում, ընդունում և հասանելիություն:
 3. *Lutō*, «ազատ արձակել»
 - ա. *Lutron*, «գինը վճարվեց» (տես Մատթ. 20:28; Մարկ. 10:45): Սրանք Հիսուսի բերանից դուրս եկած հզոր խոսքեր են՝ Նրա գալուստի նպատակի մասին՝ աշխարհի Փրկիչը լինելու համար, մեղքի պարտքը վճարելով, Նա պարտք չմնաց (տես Հովհ. 1:29):
 - բ. *Lutroō*, «ազատել»
 - (1) ազատել, փրկել Իսրայելին (Ղուկ. 24:21)
 - (2) տալով իրեն, փրկագնելու և մաքրելու ժողովուրդին (Տիտոս 2:14)
 - (3) անմեղ փոխանորդ (1 Պետ. 1:18-19)
 - գ. *Lutrōsis*, «փրկագնում» կամ «ազատագրում»
 - (1) Զաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Ղուկ. 1:68
 - (2) Աննայի գովքը Աստծուն Հիսուսի համար, Ղուկ. 2:38
 - (3) Հիսուսը ավելի լավ, մեկ անգամ զոհաբերվեց, Եբր. 9:12
 4. *Apolytrōsis*
 - ա. փրկություն, ազատագրում Երկրորդ Գալստյան ժամանակ (տես Գործք 3: 19-21)
 - (1) Ղուկաս 21:28

- (2) Հռոմեացիս 8:23
 - (3) Եփեսացիս 1:14; 4:30
 - (4) Եբրայեցիս 9:15
- բ. փրկագնումը Քրիստոսի մահվան մեջ
- (1) Հռոմեացիս 3:24
 - (2) 1 Կորնթացիս 1:30
 - (3) Եփեսացիս 1:7
 - (4) Կողոսացիս 1:14

5. *Antilytron* (տես 1 Տիմ. 2: 6): Սա կարևոր տեքստ է (ինչպես Տիտոս 2:14), որը կապում է խաչի վրա Հիսուսի փոխարինող մահվան հետ: Նա միակ ընդունելի զոհն է, ով մահանում է «բոլորի համար» (տես Հովհ. 1:29; 3: 16-17; 4:42; 1 Տիմ.2: 4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3: 9; 1 Հովհ. 2: 2; 4:14):

- Բ. Աստվածաբանական գաղափարը Նոր Կտակարանում
1. Մարդը ծառա է մեղքին (տես Հովհ. 8:34; Հռ. 3:10-18,23; 6:23):
 2. Մարդկության մեղքին ծառա լինելը հայտնվել է Մովսեսական օրենքով (տես Գաղ. 3) և Հիսուսի Լեռան քարոզում (տես Մատ. 5-7): Մարդկային կատարումը մահվան դատավճիռ է դարձել (տես Կող. 2:14):
 3. Հիսուսը, Աստծո անմեղ գառը, եկել և մահացել է մեր տեղը (տես Մարկ. 10:45; Հովհ. 1:29; 2 Կոր. 5:21): Մենք գնվել ենք մեղքից, որպեսզի ծառայենք Աստծուն (տես Հռ. 6):
 4. Հետևաբար, ՅԱՀՎԵՆ և Հիսուսը «մերձավոր ազգականներ» են, ովքեր հանդես են գալիս մեր օգտին: Սա շարունակում է ընտանեկան փոխաբերությունները (այսինքն, հայր, ամուսին, որդի, եղբայր, մոտ ազգական):
 5. Փրկագինը սատանայի համար չէ վճարված (այսինքն, միջնադարյան աստվածաբանություն), այլ Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտեցումը Աստծո սիրո և Քրիստոսի լիարժեք կատարած գործի հետ: Խաչի վրա խաղաղությունը վերականգնվեց, մարդկային ապստամբությունը ներվեց, մարդկության մեջ Աստծո պատկերն այժմ լիովին ֆունկցիոնալ է դարձել մտերմիկ հաղորդակցությամբ:
 6. Կա փրկության կամ ազատագրման ապագա ասպեկտը (տես Հռ. 8:23; Եփ. 1:14; 4:30), որը ներառում է մեր հարուցյալ մարմինները և անձնական շփումը Երրորդության հետ (տես Հատուկ Թեմա: Երրորդություն): Մեր հարություն առած մարմինները կլինեն Նրա նման (տես 1 Հովհ. 3: 2): Նա ուներ ֆիզիկական մարմին, բայց լրացուցիչ տարածական ասպեկտ: Դժվար է սահմանել 1 Կոր. 15: 12-19 և 1 Կոր. 15: 35-58 պարադոքսը: Ակնհայտ է, որ կա ֆիզիկական, երկրային մարմին, և կլինի երկնային, հոգևոր մարմին: Հիսուսը երկուսն էլ ունեցել է:

1:31 Սա մեջբերում է Եր. 9:23-24-ից: Պողոսը կրկնում է այս խոսքերը 2 Կոր. 10:17-ում: Երեմիայի գրքում «ՏԵԸ» բառը վերաբերում է ՅԱՀՎԵՒՆ, բայց այստեղ՝ Հիսուսին: Սա Նոր Կտակարանյան ընդունված միջոց է հաստատելու Հիսուսի աստվածությունը:

Մենք չենք պարծենում մեզանով, այլ Նրանով, ում մեջ Աստծո ամբողջ լիությունն է ապրում: Երեմիայի այս երկու մեջբերումները ցույց են տալիս 1 Կոր. 1-4 և 2 Կոր. 10-13 միջև եղած կապը: Հակառակորդները հրեա սոփիստներ են, ովքեր պարծենում են հռետորական ոճով (տես Bruce W. Winter, *Philo and Paul Among the Sophists*):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ինչու՞ է Աստծու կանչը հաճախ շեշտվում Պողոսի կողմից:
2. Ինչպե՞ս կարող է Աստված մեղավոր մարդկանց անվանել «սուրբ»:
3. Ո՞րն է հոգևոր պարզների նպատակը եկեղեցում:
4. Ինչու՞ էր Կորնթոսի եկեղեցում այդքան պառակտում:
5. Ինչպե՞ս է 1 Կոր. 1:12 վերաբերում ժամանակակից հարանվանություններին:
6. Արդյո՞ք Պողոսը փոքրացնում է մկրտությունը 1 Կոր. 1:17-ում:
7. Ինչու՞ հրեաները մերժեցին ավետարանը:
8. Ինչու՞ հույները մերժեցին ավետարանը:
9. Ինչու՞ Աստված ընտրեց տկար, առանց սոցիալական կամ մտավորականության մարդկանց, ավետարանը տարածելու համար:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հոչակել խաչյալ Քրիստոսին	Քրիստոսի խաչելությունը	Քրիստոսի խաչելությունը	Քրիստոսի մասին պատգամը խաչի վրա	Ճիշտ և սխալ իմաստություն (1:17-3:4)
2:1-5	2:1-5	2:1-5	2:1-5	2:1-5
Հայտնություն Աստծո Հոգով	Հոգևոր իմաստություն	Հոգևոր իմաստություն	Աստծո իմաստություն	
2:6-16 (9)	2:6-16 (9)	2:6-13 (9)	2:6-12 (9)	2:6-9 2:10-16
		2:14-16	2:13-16 (16)	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ 1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 2:1-16

Ա. Կորնթոսի եկեղեցում կային մարդիկ, ովքեր շատ ինտելեկտուալ կողմնորոշված էին (այսինքն, առաջին դարի հռետորական ավանդույթները): Այս կոնտեքստում մարդու գերընդգծված մարդկային գիտելիքների և կատարման համար, Պողոսը սկսում է 1-ին գլխում շեշտը դնել Աստծո շնորհքի վրա (ինչպես նա անում է նաև Եփ. 2:1-10-ում): Այնուամենայնիվ, նա խոստովանեց, որ իմաստությունը և գիտելիքը նույնպես Աստծո պարգևներն են: Գլուխ 2-

ում Պողոսը շարունակում է այս թեման՝ ընդգծելով հայտնությունը մարդկային բացահայտման դեմ: Քանի որ կորնթացիները պատկերացում չունեին իրենց ունեցած գիտելիքների մասին, նրանք հավասարապես պատկերացում չունեին այդ գիտելիքների ձեռքբերման միջոցների մասին:

Բ. Հիմնականում, 1 Կոր. 2:1-16-ը 1 Կոր. 1:18-25-ի ընդլայնված տարբերակն է:

Գ. 10-16-րդ համարներում կարելի է հասկանալ հոգևոր պատկերացումների կամ հայտնության մի քանի կատեգորիաներ: Աստված գործել է այնպես, որ Ինքն իրեն հայտնի մեզ (այսինքն, հայտնություն, 1 Կոր. 2:10-12): Նա ընտրեց որոշակի մարդկանց՝ արձանագրելու և բացատրելու Իր գործողությունները (այսինքն, ներշնչանք, հ.13) և, վերջապես, Հոգին հնարավորություն է ընձեռում Աստվածաշունչ ընթերցողներին հասկանալու Նրա հայտնության հիմնական ճշմարտությունները (այսինքն, լուսավորում, 1 Կոր. 2:14-16):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ
SPECIAL TOPIC: ILLUMINATION**

Անցյալում Աստված գործել է Իրեն մարդկությանը հստակ հայտնելու համար (արարչագործությունը, ջրհեղեղը, նահապետների կանչը, ելիցը, նվաճումը և այլն): Աստվածաբանության մեջ սա կոչվում է «հայտնություն»: Նա ընտրեց որոշակի մարդկանց՝ արձանագրելու և բացատրելու այս ինքնահայտնությունը (Հովհ. 14:26; 16:12-15): Աստվածաբանության մեջ սա կոչվում է «ներշնչանք»: Նա ուղարկել է Իր Հոգին՝ օգնելու ընթերցողներին հասկանալ Իրեն և Իր խոստումներն ու նախապատրաստումները, հասկապես Մեսիա գալուստը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է «լուսավորում»: Խնդիրն առաջանում է այն ժամանակ, երբ մենք պնդում ենք, որ Հոգին ներգրավված է Աստծո խոսքը հասկանալու մեջ, ապա ինչու՞ կան այդքան շատ մեկնաբանություններ Նրա և Նրա կամքի և ճանապարհի մասին:

Խնդրի մի մասը կախված է ընթերցողի նախա-փոխըմբռնումից կամ անձնական փորձառությունից: Հաճախ անձնական օրակարգը հասցեագրվում է՝ օգտագործելով Աստվածաշունչը ապացույց-տեքստային կամ ատոմիստիկ/atomistic նորաձևությամբ: Հաճախ աստվածաբանական ցանցը պարտադրում է Աստվածաշնչին, որը թույլ է տալիս խոսել միայն որոշ ոլորտներում և ընտրված ձևերով: Լուսավորումը պարզապես չի կարելի հավասարեցնել ներշնչանքի հետ, չնայած Սուրբ Հոգին ներգրավված է յուրաքանչյուրում: Ներշնչանքը (տես Հատուկ Թեմա: Ներշնչանք) դադարել է Նոր Կտակարանով (այսինքն, Հուդա 3,20): Շատ Նոր Կտակարանյան տեքստեր, որոնք վերաբերում են լուսավորությանը, վերաբերում են ավետարանի և Քրիստոսանման կյանքի մասին գիտելիքներին (տես Հո. 8: 12-17; 1 Կոր. 2: 10-13; Եփ. 1:17-19; Փիլ. 1:9-11; Կող. 1: 9-13; 1 Հովհ. 2: 20-27): Սա, իրականում, «նոր ուխտի» խոստումներից է (տես Եր. 31: 31-34, մասնավորապես, հ. 34):

Լավագույն մոտեցումը թույլ տալ Սուրբ Հոգուն օգնել հավատացյալներին հասկանալ հայտնությունը կարող է փորձել պնդել պարբերության կենտրոնական գաղափարը և ոչ թե մեկնաբանել տեքստի յուրաքանչյուր մանրուք: Սա թեմատիկ միտք է, որը փոխանցում է բուն հեղինակի կենտրոնական ճշմարտությունը: Ուրվագծելով գիրքը կամ գրական հատվածը օգնում է հետևել բուն ներշնչված հեղինակի մտադրությանը: Ոչ մի մեկնաբան ներշնչված չէ: Մենք չենք կարող վերաբարտադրել աստվածաշնչյան գրողի մեկնաբանության եղանակը կամ մեթոդը (ներշնչանք): Մենք կարող ենք և պետք է փորձենք հասկանալ, թե ինչ էին նրանք ասում իրենց օրերում և հետո փոխանցում այդ ճշմարտությունը մեր օրերում: Կան աստվածաշնչյան հատվածներ, որոնք երկիմաստ, անորոշ կամ թաքնված են (մինչև մի որոշ ժամանակ կամ ժամանակաշրջան): Միշտ կլինեն տարաձայնություններ որոշ տեքստերի և թեմաների շուրջ, բայց մենք պետք է պարզորոշ հաստատենք կենտրոնական ճշմարտությունները և թույլ տանք ազատություն առանձին

մեկնաբանությունների համար՝ բուն հեղինակի մտադրության սահմանի շրջանակներում: Մեկնաբանները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինելով ավելի շատ լույսի համար Աստվածաշնչից և Հոգուց: Աստված դատելու է մեզ մեր հասկացողության մակարդակի հիման վրա, և թե ինչպես ենք ապրում այդ հասկացողությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԵՐՇՆՉԱՆՔ SPECIAL TOPIC: INSPIRATION

Սա հավատքի հավաստում է, որ Աստված Իր Հոգով ակտիվորեն ներգրավված էր՝ արձանագրելու Իր գործողությունները, խոստումներն ու կամքը մարդկության համար: Սա «աստվածային ինքնաբացահայտումն է»: Այս բացահայտումը կոչվում է «հայտնություն»: Դրա արձանագրությունը ապագա սերունդների համար կոչվում է «ներշնչանք»:

Աստվածաշնչում «ներշնչանք» բառի միակ օգտագործումը գտնվում է 2 Տիմ. 3:16 և բառացիորեն նշանակում է «Աստված արտաշնչեց»: Ծանուցում «Սուրբ Գիրք» Նոր Կտակարանում միշտ վերաբերում է Հին Կտակարանին (այսինքն, 2 Տիմ. 3:15 վերաբերում է Տիմոթեոսի հրեական դաստիարակությանը): Ծանուցում՝ Սուրբ Գրքի նպատակը երկուսն է:

1. իմաստություն, որը առաջնորդում է փրկության, 2 Տիմ. 3:15
2. ուսուցում արդարության մեջ, 2 Տիմ. 3:16

Ուշադրություն դարձրու, թե ինչպես Հովհ. 5:39; 1 Կոր. 15: 3-4; և 1 Պետ. 1: 10-12-ը խոսում են այն մասին, թե ինչպես է Հին Կտակարանը մատնանշում Քրիստոսին: Հիսուսն Ինքը սա պնդում է Ղուկ. 24:25-27: Հոգին առաջնորդեց Հին Կտակարանի գրողներին (տես 2 Պետ. 1:20-21): Եկեղեցին ընդունեց Հին Կտակարանի Կանոնը (տես Հատուկ Թեմա: Կանոն): Նրանք ընդունեցին, որ այն ամբողջովին ներշնչված է (տես Մաթ. 5: 17-19): Այնուամենայնիվ, նրանք նաև հասկացան, որ Նոր Կտակարանը, որը պարունակում է Հիսուսի խոսքերը և գործերը, վերջնական հայտնությունն էր (տես Մաթ. 5: 21-48; Եբր.1:1-2): Հիսուսը ՅԱՀՎԵԻ լիակատար, վերջնական և ամբողջական հայտնությունն է (տես Հովհ. 1: 1-5,14; Կող. 1: 15-16): Նա կատարում է Մեսիայի տված խոստումը (տես Մաթ. 26: 31,56; 14: 27,49; Ղուկ. 20:17; Հովհ. 12: 14-16; 13:18; 15:25; 17:12; 19: 24-36; Գործք 1:16; 3: 18,21-26; 4: 25-28):

Հոգին պետք է բացի մարդու միտքն ու սիրտը, նախքան հասկանալը (տես Գործք 8: 34-35; 13:27): Հոգին առաջնորդում էր աստվածաշնչյան գրողներին՝ արտահայտելու մարդկային բառերով, իդիոմաներով և նկարագարողումներով Աստծո ինքնաբացահայտման ճշմարտությունները Հիսուսի մեջ (տես Հովհ. 14:26; 15:26-27; 1 Կոր. 2: 10-11, 13-16):

Լավ կարճ քննարկումներ կան Millard J. Erickson, *Christian Theology*, 2-րդ հրատ., էջ 224-245:

Գրավոր փաստաթղթեր գրելու համար նաև «բանավոր» հասարակության գրական գործընթացում լավ քննարկումներ են John H. Walton and D. Brent Sandy, *The Lost World of Scripture* (2013).

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 2:1-5

¹Եւ եւ էլ, եղբարք, որ ձեզ մօտ եկայ, ոչ թէ խօսքի կամ իմաստութեան գերազանցութիւնովն եկայ Աստուծոյ վկայութիւնը ձեզ պատմելու: ²Որովհետեւ միտքս չէի դրած՝ մի ուրիշ բան գիտենալ ձեր մէջ բայց միայն Յիսուս Քրիստոսին՝ եւ այն էլ խաչուածին: ³Եւ եւ տկարութիւնով եւ վախով եւ շատ դողով եղայ ձեզ մօտ: ⁴Եւ իմ խօսքը եւ քարոզութիւնը ոչ թէ մարդկային իմաստութեան պատիւը խօսքերովն եղաւ, այլ՝ Հոգու եւ զօրութեան ապացուցութեամբը: ⁵Որ ձեր հաւատքը մարդկանց իմաստութիւնով չ'իինի՝ այլ Աստուծոյ զօրութիւնովը:

2:1 «եղբարք» Հավատացյալների համար այս անվանումը հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից, գիտակցաբար կամ ենթագիտակցորեն՝ նշելու ճշմարտության ներկայացման հաջորդ քայլը կամ նոր ճշմարտության ներկայացումը (տես 1 Կոր. 2:1; 3:1; 4:6; 10:1; 11:33; 12:1; 14:6, 20, 35; 15:1, 31, 50, 58; 16:15): Տերմինը վերաբերում է Կորնթոսի եկեղեցու կանանց և տղամարդկանց:

Արևելահայերեն «ձեզ մօտ եկայ, ոչ թե խօսքի կամ իմաստութեան գերազանցութիւնովն եկայ»
 Արևմտահայերեն «ձեզի խօսքի կամ իմաստութեան գերազանցութիւնով մը չեկայ»

NASB «ձեզ մօտ չեկա խօսքի կամ իմաստության գերազանցությունով»

NKJV «չեկա խօսքի կամ իմաստության գերազանցությունով»

NRSV «Ես չեկա հռչակելու . . . վեհ խոսքերով կամ իմաստությամբ»

TEV «Ես չօգտագործեցի երկար բառեր են մեծ ուսուցում»

NJB «Ես չեկա հռետորական կամ իմաստուն փաստարկի շքեղությամբ»

REB «Ես ձեզ մօտ եկա առանց որևէ ճարտասանության կամ իմաստության հավակնության»

Պողոսը արտահայտում է իր միջև եղած տարբերությունը (Պողոսը Կորնթոսում, տես Գործք 18:1-18) և կեղծ շեշտադրությունը՝ որոշ քրիստոնյաների գիտելիքների և հռետորության վրա, որոնք հետագայում դարձան եկեղեցու առաջնորդներ: Ապողոսը, ոչ թե Պողոսը, ճարտար հռետոր էր և նրանք ցանկանում էին, որ Պողոսը զարմանա Ապողոսի հանրային խոսքի ոճով (տես Bruce W. Winter, *Philo and Paul Among the Sophists*): «Գերազանցություն» (*hyperochē*) բառի համար ստորև տես Հատուկ Թեմա:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է HUPER ՆԱԽԴԻՐԸ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

SPECIAL TOPIC: PAUL'S USE OF HUPER COMPOUNDS

Պողոսը հատուկ սեր ուներ նոր բառեր ստեղծելու համար, օգտագործելով հունարեն *hyper* ՆԱԽԴԻՐԸ, որը հիմնականում նշանակում է «վեր, գերազանց» կամ «բարձրագույն»: Երբ օգտագործվում է ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ), դա նշանակում է «հանուն, ի սեր»: Այն կարող է նաև նշանակել «մասին» կամ «վերաբերյալ, կապված», ինչպես *peri* (տես 2 Կոր. 8:23; 2 Թես. 2:18): Երբ այն օգտագործվում է ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ, այն նշանակում է «վեր», «վրա» կամ «դրանից դուրս, այն կողմ» (տես A. T. Robertson, *A Grammar of the Greek New Testament in the Light of Historical Research*, էջ 625-633): Երբ Պողոսը ցանկանում էր ընդգծել մի գաղափար, բարդ բառի մեջ նա օգտագործում էր այս ՆԱԽԴԻՐԸ: Սրանք են այս ՆԱԽԴԻՐԸՎ սկսվող Պողոսի կողմից օգտագործած բարդ բառերի ցանկը:

- Ա. *Hapax legomenon* (օգտագործվում է միայն մեկ անգամ Նոր Կտակարանում)
 1. *Huperakmos*, մեկը, որ ծաղիկ հասակից/չափահասությունից անցել է, 1 Կոր. 7:36
 2. *Huperauxanō*, չափազանց ավելանալ/խիստ մեծանալ, 2 Թես. 1: 3
 3. *Huperbainō*, սահմանն անցնել, մեղանչել/չափն անցնել, 1 Թես. 4: 6
 4. *Huperkeina*, այն կողմը, 2 Կոր. 10:16
 5. *Huperekteina*, չափից շատ երկարացնել, տարածել, 2 Կոր. 10:14
 6. *Huperentugchanō*, բարեխոսել, Հռ. 8:26
 7. *Hupernikaō*, ալ ավելի հաղթական լինել, Հռ. 8:37
 8. *Huperpleonazō*, չափազանց, էլ ավելի շատ, 1 Տիմ. 1:14
 9. *Huperupsoō*, գերազանցապես բարձրացնել, Փիլ. 2: 9
 10. *Huperphroneō*, բարձր մտքեր ունենալ/բան չմտածել նրանից ավելի, Հռ. 12: 3
- Բ. Բառեր, որոնք օգտագործված են միայն Պողոսի գրվածքներում:
 1. *Huperaïromai*, բարձրացնել իրեն/գոռոզանալ, 2 Կոր. 12:7; 2 Թես. 2: 4
 2. *Huperballontōs*, չափից վեր, չափազանց, 2 Կոր. 11:23; (ՄԱԿԲԱՅ միայն այստեղ,

- բայց ԲԱՅ 2 Կոր. 3:10; 9:14; Եփ. 1:19; 2: 7; 3:19)
3. *Huperbolē*, առավել ևս, չափից շատ, Հո. 7:13; 1 Կոր. 12:31; 2 Կոր. 1: 8; 4: 7,17; 12:7; Գաղ. 1:13
 4. *Huperekperissou*, ամեն ինչից առավել, չափից վեր, Եփ. 3:20; 1 Թեա. 3:10; 5:13
 5. *Huperlian*, ամենաբարձր աստիճանի կամ աչքի ընկնող, 2 Կոր. 11:5; 12:11
 6. *Huperochē*, աչքի ընկնող դիրք, գերազանցություն, 1 Կոր. 2: 1; 1 Տիմ. 2: 2
 7. *Huperperisseuō*, գերազանցել, չափից շատ, Հո. 5:20 (ՉԵՁՈՔ ՍԵՌ, առատորեն լցված, վարարել, հեղեղված լինել, 2 Կոր. 7:4)
- Գ. Բառեր, որոնք օգտագործել է Պողոսը և Նոր Կտակարանի այլ գրողներ
1. *Huperanō*, շատ բարձր, Եփ. 1:21; 4:10; և Եբր. 9: 5
 2. *Huperechō*, գերազանցություն, գերակայություն, Հո. 13:1; Ֆիլ. 2: 3; 3: 8; 4: 7; 1 Պետ. 2:13
 3. *Huperēphanos*, ենթադրելով կամ հպարտ, Հո. 1:30; 2 Տիմ. 3: 2 և Ղուկ.1:51; Հակ. 4: 6; 1 Պետ. 5: 5:

Պողոսը մեծ փափագ ունեցող մարդ էր. երբ բաները կամ մարդիկ լավ էին, նրանք շատ լավ էին, և երբ նրանք վատ էին, շատ վատ էին: Այս ՆԱԽԴԻՐԸ թույլ տվեց նրան արտահայտել իր գերազանց զգացմունքները մեղքի, ես-ի,Քրիստոսի և Ավետարանի մասին:

Արևելահայերեն «Աստուծոյ վկայութիւնը»
Արևմտահայերեն «Աստուծոյ վկայութիւնը»

NASB, NKJV «Աստուծոյ վկայութիւնը»
NRSV, NJB, Peshitta «Աստծո խորհուրդը»
TEV «Աստծո գաղտնի ճշմարտությունը»
REB «Ճշմարտությունը Աստծո մասին»

Այստեղ կա հունարեն ձեռագրի տարբերակ: Հունարեն *musterion* (խորհուրդ) տերմինը երևում է MSS P⁴⁶, ճ*, A, և C-ում: *Marturion* (վկայություն) բառը երևում է հնագույն ձեռագրերում ճ², B, C, D: Եթե սա «խորհուրդ» է, այս գաղափարը նկարագրված է 1 Կոր. 2:7; Եփ. 2:11-3:13; և Կող. 1:26-27, որը Քրիստոսի միջոցով հրեաների և հույների միավորումն է մեկ ընտանիքի մեջ (այսինքն, եկեղեցին):

Եթե դա «վկայություն» է, ապա այն հակված է 1 Կոր. 1:6-ի հետ, որը հոմանիշ է «ավետարանի» հետ: UBS⁴- ը տալիս է «խորհուրդ» բառին «Բ» վարկանիշ (գրեթե որոշակի):

«Խորհուրդ» տերմինը հաճախ օգտագործվում էր առաջին դարում Եգիպտոսում հայտնաբերված Կոյնե մագաղաթի մեջ, կապված գաղտնի գիտելիքների նոր նախաձեռնության հետ, որը վերաբերում է միայն հատուկ խմբին (այսինքն, խորհրդավոր կրոններ): Պողոսն այս տեխնիկական տերմինը վերցնում և օգտագործում է այն մարդկանց համար, ովքեր ունեն Սուրբ Հոգի (հավատացյալներ) և նրանց, ովքեր չունեն: Այս կետում, Պողոսի ներկայացման մեջ, չկա տարբերություն հավատացյալների միջև (տես 1 Կոր. 3: 1): Բոլորը համարվում են «հասուն» (տես 1 Կոր. 2:6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ «ԽՈՐՀՈՒՐԴ»
SPECIAL TOPIC: MYSTERY

- Ա. Սինոպտիկ Ավետարաններում «խորհուրդը» օգտագործվում է Հիսուսի առակներից ստացված հոգևոր գաղափարներից:
1. Մարկոս 4:11
 2. Մատթեոս 13:11
 3. Ղուկաս 8:10
- Բ. Պողոսը այն օգտագործում է մի քանի տարբեր ձևերով:
1. Իսրայելի մասնակի խստացումը թույլ կտա հեթանոսներին ընդգրկվել

փրկության ծրագրում: Հեթանոսների այս հոսքը կգործի այնպես, որ կարթնացնի հրեաներին՝ ընդունելու մարգարեների կողմից մարգարեացած Հիսուսին (տես Հո. 11: 25-32):

2. Ավետարանը հայտնի դարձավ հեթանոսներին, որոնք ընդգրկվեցին փրկության մեջ Քրիստոսի միջոցով (տես Հո. 16: 25-27; Կող. 2: 2):
 3. Հավատացյալների նոր մարմինները Երկրորդ Գալստյան ժամանակ (տես 1 Կոր. 15: 5-57; 1 Թեա. 4:13-18):
 4. Ամփոփելով բոլոր բաները Քրիստոսում (տես Եփ. 1: 8-11):
 5. Հեթանոսներն ու հրեաները որպես ժառանգորդներ (տես Եփ. 2: 11-3: 13):
 6. Քրիստոսի և Եկեղեցու միջև մտերմիկ հարաբերությունը նկարագրված է ամուսնության տերմիններով (տես Եփ. 5: 22-33):
 7. Հեթանոսներն ընդգրկված են ուխտի ժողովրդի մեջ և Քրիստոսի Հոգին բնակվում է նրանց մեջ, որպեսզի Քրիստոսի նման հասունություն ունենան, այսինքն, վերականգնելու մարդու մեջ Աստծո խեղաթյուրված պատկերը (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1; 6: 5, 11-13; 8:21; 9: 6; Կող. 1: 26-28):
 8. Վերջին ժամանակի հակաքրիստոսը (տես 2 Թեա. 2: 1-11):
 9. Ավետարանի խորհուրդի մասին վաղ եկեղեցու հիմնը գտնվում է 1 Տիմ. 3:16.
- Գ. Հովհաննեսի Հայտնության մեջ օգտագործվում է Հովհաննեսի ապոկալիպտիկ խորհրդանիշների իմաստը:
1. 1:20
 2. 10: 7
 3. 17: 5,6
- Դ. Սրանք այն ճշմարտություններն են, որ մարդիկ չեն կարող բացահայտել; նրանք պետք է բացահայտվեն Աստծո կողմից: Այս հասկացությունները շատ կարևոր են Աստծո հավիտենական ծրագիրը բոլոր մարդկանց փրկագնման համար ճիշտ հասկանալու համար (տես Ծննդ. 3:15): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ.

2:2 «Ես» 1-5 համարներում Պողոսը կարծես իրեն համեմատում է՝

1. Աթենքում ավետարանի իր նախորդ ներկայացման հետ, որտեղ նա օգտագործեց հունական տրամաբանությունը, նույնիսկ մեջբերեց իրենց բանաստեղծներին (առաջինը առաջարկվածը Օրիգենի կողմից, Գործք 17:16-34)
 2. նրա ավետարանի ներկայացմանը, ինչպես նաև Կորնթոսում գտնվողների հետ, ովքեր խոսում էին մարդկային իմաստության և մարդկային հոետորության վերաբերյալ, հոգևոր հարցերի մասին
- **«Ցիսուս Քրիստոսին՝ եւ այն էլ խաչուածին»** Սա վաղակատար կրավորական դերբայ է (տես 1 Կոր. 1:23): Կան երկու աստվածաբանական ասպեկտներ այս դերբայի մեջ:
 1. վաղակատար ժամանակը հայտնում է, որ Հիսուսը շարունակում է խաչված մնալ: Երբ մենք տեսնենք Նրան, Նա դեռ սպիեր է ունենալու: Դրանք դարձել են Նրա փառքի նշանը (տես 1 Կոր. 1:23).
 2. կրավորական սեռը հայտնում է, որ Հիսուսի մահը
 - ա. Հոր գործն էր և Նրա հավիտենական ծրագիրը (տես Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29) փրկագնման համար (տես Ես. 53:10)
 - բ. մարդկային մեղքի և ապստամբության պատճառով զոհաբերություն է պահանջվում (տես Հո. 5:14-15,18-19)

Քրիստոսի մահը մարդկության համար Պողոսի աստվածաբանության կենտրոնական պատգամն է: Մեսիայի տառապանքի և մեռած հայեցակարգը օտար էր ավանդական հրեական մտքի համար: Ավետարանի այս հատվածը սկզբից պետք է անհանգստացներ Պողոսին: Ինչպես կարող էր ՅԱՀՎԵԻ օծյալը հայտնվել Աստծո կողմից (տես Մարկ. 21:23): Այնուամենայնիվ, սա Հին Կտակարանի հայտնության մի մասն էր (տես Ծննդ. 3:15, Մաղմ. 22, Ես. 53, Ջաք. 12:10): Հիսուսը, Աստծո անմեղ Որդին, մահացավ մեր փոխարեն (տես Հռ. 5:18-19; Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21): Նա մեզ համար անեծք դարձավ (տես Գաղ. 3:13): Խաչյալ Քրիստոսը բոլորի համար Աստծո թաքնված խորհուրդն է (տես Կոր. 1: 26-28; 2:2-4):

2:3 «ես տկարութիւնով եւ վախով եւ շատ դողով եղայ ձեզ մօտ» Սա կարող է ակնարկ լինել Ելից 15:16 LXX-ում: Պողոսը ցույց է տալիս մեզ իր անհամապատասխանությունները:

1. նա վախեցավ իր կոպիտ վերաբերմունքի պատճառով Ֆիլիպեոս, Թեսաղոնիկեոս և Բերիայում (տես Գործք 16-17)
2. նա հիասթափված է արդյունքներից, և հնարավոր է, նրա մեթոդաբանությունը օգտագործվում է Աթենքում (Օրիգենի տեսակետը Գործք 17:22-34-ից)
3. նրա ֆիզիկական խնդիրը, հավանաբար, աչքի տկարությունը նրան մեծ դժվարություն է առաջացրել (տես Գործք 9:8, 2 Կոր. 12:7-9, Գաղ. 4:15, 6:11)
4. Պողոսի հավատքի և հուսահատության պակասը Կորնթոսում
Քրիստոսը պետք է մի քանի անգամ հայտնվեր Պողոսին՝ քաջալերելու նրան (տես Գործք 18:9-10; 23:11; 27:23): Նրա խոսքերն ու ֆիզիկական վիճակն այն չէր, որ մարդկանց Քրիստոսի հանդեպ հավատքի բերեր, այլ ավետարանի բողոքարկումը և Հոգու զորությունը (տես 1 Կոր. 2:4, 1:17, 2 Կոր. 10:10):

1. Այն օգտակար է ինձ համար, հասկանալ որպես Հիսուս Քրիստոսի սպասավոր
2. Հիսուսն ուներ հուսահատ պահեր (Գեթսեման)
3. Առաքյալները հաճախ ամբողջությամբ չէին հասկանում Հիսուսի ուսմունքները
4. Պողոսը վախ ու տկար էր զգում
Մենք միշտ պետք է ճանաչենք մարմնի տկարությունը, բայց և ավետարանի հզոր ուժը և Հոգու ներկայությունը: Աստծո բնույթը և դրույթները մեծանում են մարդկային տկարության մեջ (տես 1 Կոր. 1: 26-29; 2 Կոր. 12):

Պողոսի տկարությունները հենց այդ բաներն են, որ կեղծ ուսուցիչները հարձակվեցին Պողոսի վրա 2 Կոր. 10-13-ում: Նրանք բարձրացրել են իրենց ուժեղ կողմերը (այսինքն, կրթություն, սոցիալական դիրք, հոգևոր ունակություն, խոսքի հմտություններ): Ըստ երևույթին, Պողոսի գրվածքները ավելի հռետորական էին կառուցված (2 Կոր. 10-13) և հզոր, քան իր բանավոր խոսքերը: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ 2 Կոր. 12:9

2:4

Արևելահայերեն «ոչ թէ մարդկային իմաստութեան պատիր խօսքերովն եղաւ»

Արևմտահայերեն «ոչ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր»

NASB «ոչ թէ մարդկային իմաստության պատիր խոսքերովն եղավ»

NKJV «ոչ թէ մարդկային իմաստության համոզիչ խոսքերով»

NRSV «ոչ թէ իմաստության համոզիչ խոսքերով»

TEV «ոչ թէ մարդկային իմաստության հմուտ խոսքերով»

NJB «ոչ թէ համոզված լինել փիլիսոփայական փաստարկով»

REB «դա խելացի փաստարկներով չի զիջում ձեզ»

Հունարեն ձեռագրերում այս արտահայտության շատ տարբերակներ կան:

1. Առաջին խնդիրը վերաբերում է հազվագյուտ ածական *peithois* (տեւ MSS P⁴⁶, ա, A, B, C, D), որը չի հայտնաբերվել որևէ այլ վայրում, Մեպտուագիդում, Կոյնե մագաղաթում կամ Նոր Կտակարնում:
2. Ոմանք կարծում են, որ տարբերակներն առաջացել են դպիրների կողմից, ովքեր անձանթ էին այս ածականին: Նրանք կարող են թեթևակիորեն փոխել իրենց ձևը *peithoi*, որը նշանակում է «համոզիչ»:
3. Որոշ հունարեն ձեռագրեր ավելացնում են «մարդկանց համոզմունք» (տեւ 1 Կոր. 2:13 և MSS ա², A, C):
4. Որոշ ձեռագրերում «բառեր» տերմինը (*logois* կամ *logos*) բացակայում է (տեւ MSS P⁴⁶, F, G և հունարեն տեքստը, որը օգտագործվել է Քրիստոսոմի կողմից):
 Ամենայն հավանականությամբ, ընդհանուր կոնտեքստից այս արտահայտությունը կապում է Պողոսի մարդկային հոեոտրության, տրամաբանության և իմաստության մերժման հետ (տեւ 1 Կոր. 1:17; 2: 1,13): Այնուամենայնիվ, *peithois* բառի ճշգրիտ իմաստը մնում է անորոշ (տեւ NIDNTT, հատոր 1, էջ 588-593):

▪ **«Հոգու եւ զօրութեան ապացուցութեամբը»** Սա վերաբերում է Կորնթոսի նորադարձների փոխված կյանքերին: Այն նաև կարող է վերաբերել հաստատող նշանների առկայությանը, որոնք հաճախ հանդիպում են Պողոսի ավետարանի քարոզչության մեջ (տեւ Գործք 13:11; 14:10; 16:8,28; 19:11-12; 20:10): Տեւ մեծատառ կամ փոքրատառ նշումները, օր. «h» հոգի փոքրատառով 1 Կոր. 2:11-ում:

2:5 Պողոսի համար, մարդկության միակ հույսը Հոր շնորհքի, Որդու ավարտած գործի և Հոգու զորության մեջ էր: Այլ կերպ ասած, Սուրբ Երրորդությունն է փրկության միակ ճշմարիտ հիմքը: Աստծո հայտնությունը, ոչ թե մարդկային բացահայտումը; Աստծո իմաստությունը, ոչ թե մարդկային ճառագայթումը կամ տրամաբանությունը, վստահության միակ աղբյուրն են:

Պողոսի համար, Աստծո ավետարանը և մեղավոր մարդկության համապատասխան ուխտի պատասխանները (այսինքն՝ ապաշխարհությունը, հավատքը, հնազանդությունը և հաստատակամությունը) հավիտենական կյանքի բանալիներն են:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացի 2:6-13

⁶Բայց իմաստութիւն ենք խօսում կատարեալների հետ, եւ ոչ թէ այս աշխարհքի իմաստութիւնը, եւ ոչ էլ այս աշխարհքի իշխաններինը՝ որ պիտի խափանուին: ⁷Այլ Աստուծոյ ծածուկ իմաստութիւնն ենք խօսում խորհրդով, որ Աստուած յաւիտենից առաջ սահմանեց նորան մեր փառքի համար: ⁸Որն այս աշխարհքի իշխաններիցն ոչ ով չճանաչեց. քանզի եթէ ճանաչած լինէին՝ փառքի Տիրոջը չէին խաչ հանիլ: ⁹Այլ ինչպէս գրուած է. Ինչ որ այք չ'տեսաւ եւ ականջ չ'լսեց եւ մարդի սիրտ չ'ընկաւ, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար: ¹⁰Բայց մեզ յայտնեց Աստուած իր Հոգովը. Որովհետեւ Հոգին ամեն բաները քննում է, եւ Աստուծոյ խորքն էլ: ¹¹Որովհետեւ մարդկանցից ո՞վ գիտէ մարդի բաները՝ եթէ ոչ մարդի հոգին, որ նորանում է. այնպէս էլ Աստուծոյ բաներն ոչ ով չ'գիտէ, եթէ ոչ Աստուծոյ Հոգին: ¹²Եւ մենք ոչ թէ այս աշխարհքի հոգին առանք, այլ այն Հոգին՝ որ Աստուածանից է. Որ ճանաչենք այն բաները որ Աստուածանից տրուեցաւ մեզ: ¹³Որն էլ խօսում ենք՝ ոչ թէ մարդկային իմաստութեան սովորած խօսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներովը՝ հոգեւորներն հոգեւորների հետ համեմատելով:

2:6 «Բայց իմաստութիւն ենք խօսում կատարեալների հետ » Պողոսը կարող է

1. այստեղ օգտագործել հեզնանք՝ կապված մարդու իմաստության և իրենց սեփական «հասունության» տեսակետի վրա Կորնթացիների ունեցած կարևորության հանդեպ (տեւ George E. Ladd, *A Theology of the New Testament*, էջ 383-385)

2. վերաբերել 1 Կոր 3:1-4-ի նորադարձներին, որը վերաբերում է եկեղեցու աշխարհայացքային հոգուն
3. Եփ. 4:13-ում այս *teleios* տերմինը, նկարագրում է հասուն և մանուկ քրիստոնյայի տարբերությունը (բառացիորեն «նորածիններ» Եփ. 4:14): Ծանուցում 1 Կոր. 14:20; Փիլ. 3:15 և Եբ. 5:14. Տես թե ինչպես է օգտագործվում բառը եբրայերենում ստորև Հատուկ Թեմայի միջոցով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՎԱՐՏ ԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (TELOS)

SPECIAL TOPIC: END OR FULL (TELOS)

Հոգևոր երևույթների այս կուլմինացիան՝ գագաթնակետը, Եբրայեցիների գրքում պարբերաբար կրկնվող թեմա է:

1. *telos*, ավարտ, իրականացում (Եբր. 3:6,14; 6:8,11)
2. *teleiōō*, «կատարյալ դարձնել»
 - ա. (Հիսուս) նրանց փրկության Ջորավարին տառապանքների միջոցով կատարյալ դարձնի (տես Եբր. 2:10)
 - բ. (Հիսուս) չարչարանքների միջոցով կատարյալ դարձավ (տես Եբր. 5:8-9)
 - գ. Օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց (տես Եբր. 7:19)
 - դ. Որդուն՝ որ հավիտյան սրբացված է /կատարյալ է դարձված/ (տես Եբր. 7:28)
 - ե. Պաշտամունք մատուցողին կատարյալ դարձնել (տես Եբր. 9:9)
 - զ. Չոհեր մատուցողներին կատարյալ դարձնել (տես Եբր. 10:1)
 - է. Հավիտյան կատարյալ դարձրեց նրանց, որ սրբվեցին (տես Եբր. 10:14)
 - ը. Նրանք կատարելության չհասնեն առանց մեզ (տես Եբր. 11:40)
 - թ. Կատարյալ դարձած արդարների հոգիներին (տես Եբր. 12:23)
3. *teleios*, հասուն (տես Եբր. 5:14)
4. *teleios*, ավելի կատարյալ խորան (տես Եբր. 9:11)
5. *teleiōtēs*, գանձ հասունության՝ կատարյալին (տես Եբր. 6:1)
6. *teleiōsis*, եթե կատարելությունը ղևտական քահանայությամբ լիներ (տես Եբր. 7:11)
7. *teleiōtēs*, հավատքի Հեղինակին ու Կատարողին (տես Եբր. 12:2)

Հիսուսն է բերում հասունություն և կատարելություն, որը Մովսիսական Ուխտը երբեք էլ չկարողացավ անել:

▪ **«Իմաստությունը, եւ ոչ էլ այս աշխարհքի»** Սա Պողոսը պնդում է երկու ժամանակաշրջանի հրեական միջկտակարանյան հասկացությունը՝ ընկած մարդկության տիրապետության տակ գտնվող ներկա չար դարաշրջանը և Մեսիայի գերակշռող արդարության ժամանակաշրջանը: Մարդկային երկրային իմաստությունը հիմնականում ենթադրվում է ենթադրական և փոխվում է մշակութային մշակույթ և ժամանակաշրջանից ժամանակաշրջան: Տես Հատուկ Թեմա երկու հրեական ժամանակաշրջանների գաղափարի մասին 1 Կոր. 1:20

▪ **«Որն այս աշխարհքի իշխաններից»** Հնարավոր է, որ այս արտահայտությունը վերաբերում է հրեշտակային դասին կամ գնոստիկ դարաշրջանին (տես Հռ. 8: 38-39; Եփ. 1:21, 3:10, 6:12; Կող. 1:16, 2:10,15, BAGD, էջ 114, # 3, F.F. Bruce, Answers to Questions, էջ 90): Այս կոնտեքստում դրանք կարծես ավելի շատ համապատասխանում են մարդկային առաջնորդներին (տես 1 Կոր. 2:8; Գործք 3:17; Հռ. 13:1-2; տես Grant Osborne, *The Hermeneutical Spiral*, էջ 82-83): Դժվար է իմանալ, թե արդյոք Պողոսը խոսում է մարդկային տրամաբանության կամ մարդկային տրամաբանությունից վեր, դիվային գործողության մասին; երկուսն էլ առկա են: Իրենց մեղքի պատճառով մարդիկ ընկնում են (տես Հռ. 12:2; Գաղ. 1:14; Եփ. 2:2), բայց դրանք նույնպես ազդում են գերբնական չարի ներկայության վրա (այսինքն, հրեշտակային և դիվային, տես 2 Կոր. 4: 4; Դանիել 10):

Արևելահայերեն «որ պիտի խափանուին»
Արևմտահայերեն «այստեղ չկա»

NASB «որ պիտի խափանվեն»
NKJV «ովքեր գալիս են դեպի ոչինչը»
NRSV «ովքեր դատապարտված են մահվան»
TEV «գորությունները, որոնք կորցնում են իրենց գորությունը»
NJB «ով երկար չի տևի»
REB «պետք է հերքվի»
Peshitta «որ պիտի խափանվեն»

Սա տերմինի ներկա կրավորական դերբայ է, որը նշանակում է «չաշխատել» (տես 1 Կոր. 1:28; Հռ. 6:6): Պողոսն այս տերմինն օգտագործում է քսանհինգ անգամ: Եթե դա վերաբերում է մարդկային իշխանություններին, ապա նրանք կմեռնեն: Եթե դա վերաբերում է հրեշտակային իշխանություններին, ապա այս ժամանակաշրջանը կդառնա արդարության նոր դարաշրջան: Տես Հատուկ Թեմա: Օրինական ուժը վատնել (*katargeō*) 1 Կոր. 1:28

2:7 «Այլ» Սա ուժեղ հակադիր է «*alla*»: Պողոսի իմաստությունը և գորությունը Աստծուց էր:

▪ «Աստուծոյ ծածուկ իմաստութիւնն ենք խօսում խորհրդով» Այս իմաստությունը Աստծուց է (այսինքն, *Theos*-ը առջևում է, կամ առաջինը տեղադրվում է հունարեն տեքստում շեշտադրման համար); սա թաքնված իմաստություն է (վաղակատար կրավորական դերբայ, տես Եփ. 3:9): Այս խորհուրդն այժմ հստակորեն դրսևորվել է Քրիստոսի մեջ (տես Հռ. 16:25; Եփ. 3:3-5; Կող. 1:26): Այս բացահայտված գաղտնիքը (ավետարանը) ընդգծում է Աստծո հայտնությունը՝ ընդդեմ մարդկային հայտնագործության (տես Հռ. 16:25-26; Եփ. 1:9-10; 3:3-5; Կող. 1:26; 2:2-3): Այս խորհուրդի առավել ամբողջական սահմանումը այն է, որ հրեաները և հեթանոսները միավորվում են Աստծո մեկ նոր ժողովրդի մեջ (այսինքն, եկեղեցին, տես Եփ. 2:11-3:13): Տես Հատուկ Թեմա: Խորհուրդ 1 Կոր. 2: 1

Արևելահայերեն «որ Աստուած յախտենից առաջ սահմանեց»
Արևմտահայերեն «որ աշխարհի ստեղծուելէն առաջ սահմանեց Աստուած»

NASB, NJB «որ Աստուած հավիտենից առաջ սահմանեց»
NKJV, Peshitta «որն Աստված կարգեց»
NRSV «որն Աստված որոշեց»
TEV «որը նա արդեն ընտրել էր»
REB «գաղտնի նպատակ»

Նույնիսկ նախքան ստեղծագործությունը, Աստված արդեն ունեցել էր փրկագնման իր ծրագիրը (տես Մարթ. 25:34; Հովհ. 17:24; Եփ. 1:4; 1 Պետ 1:20; Հայտ. 13:8 և Գործք 2:13; 3:18; 4:28; 13:29): «Նախասահմանել» թարգմանված տերմինը «նախորդ» և «սահմաններ դնել» նախդիրի բաղկացուցիչ մասն է (տես Գործք 4:28; Հռ. 8:27,30; Եփ. 1:5, 11):

Նոր Կտակարանում նախասահմանության մասին հստակ հատվածներն են Հռ. 8:28-30; Հռ. 9 և Եփ. 1:3-14: Այս տեքստերը ակնհայտորեն շեշտում են, որ Աստված ինքնիշխան է: Նա ամբողջովին վերահսկում է բոլոր բաները, ներառյալ մարդկության պատմությունը: Ժամանակին մշակվում է նախապես սահմանված աստվածային փրկագնման ծրագիր: Այնուամենայնիվ, այս ծրագիրը կամայական կամ ընտրովի չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո ինքնիշխանության և կանխատեսման վրա, այլ նաև Նրա անփոփոխ բնույթի՝ սիրո, ողորմության և անարժան շնորհքի վրա:

Մենք պետք է զգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) անհատականությունից կամ մեր ավետարանչական նախանձավորությունից, որ չգունավորենք այս հրաշալի ճշմարտությունը: Մենք պետք է նաև ուշադրություն դարձնենք, որ չբևեռացվենք պատմական, աստվածաբանական հակամարտությունների միջև՝ Օգոստինոս և Պելեգիոս կամ Կալվինիզմ և Արմինիանիզմ:

Նախասահմանությունը վարդապետություն չէ, որը սահմանափակում է Աստծո սերը, շնորհքը և ողորմությունը, ոչ էլ ոմանց հանում է ավետարանից: Այն կոչված է զորացնելու հավատացյալներին, ձևավորելով նրանց աշխարհայացքը: Աստծո սերը բոլորի համար է (տես 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9): Աստված ամեն ինչում վերահսկում է: Ո՞վ կարող է մեզ բաժանել Իրենից (տես Հռ. 8:31-39): Նախասահմանությունը կազմում է կյանքին նայելու երկու ուղիներից մեկը: Աստված ամբողջ պատմությանը նայում է որպես ներկա, իսկ մարդիկ ժամանակի մեջ են: Մեր հեռանկարները և մտավոր ունակությունները սահմանափակ են: Աստծո ինքնիշխանության և մարդկության ազատ կամքի միջև հակասություն չկա: Դա ուխտի կառույց է: Մա պարադոքսալ, դիալեկտիկական, լարվածություն ունեցող գույգերով տրված աստվածաշնչյան ճշմարտության մեկ այլ օրինակ է: Աստվածաբանական վարդապետությունները ներկայացված են տարբեր տեսանկյուններից: Նրանք հաճախ պարադոքսալ են: Ճշմարտությունը հավասարակշռություն է հակառակ գույգերի միջև: Մենք չպետք է հեռացնենք լարվածությունը՝ ընտրելով ճշմարտություններից մեկը: Մենք չպետք է աստվածաբանական ճշմարտությունը ինքնուրույն մեկուսացնենք:

Կարևոր է նաև ավելացնել, որ ընտրության նպատակը ոչ միայն երկինքն է, երբ մենք մահանանք, այլ Քրիստոսանմանությունը հիմա (տես Եփ. 1:4; 2:10): Մենք ընտրվեցինք «սուրբ և անարատ» լինելու համար: Աստված ընտրել է փոխելու մեզ, որպեսզի ուրիշները կարողանան տեսնել փոփոխությունը և արձագանքել հավատքի միջոցով Աստծուն՝ Քրիստոսով: Նախասահմանությունը ոչ թե անձնական արտոնություն է, այլ ուխտի պատասխանատվություն: Մենք փրկվել ենք ծառայելու համար:

▪ **«յավիտենից առաջ»** «հավիտենից առաջ» արտահայտությունը Հին Կտակարանի մասին է, որը վերաբերում է հավիտենական անցյալին: Դա համապատասխանում է եբրայերեն *'olam* տերմինին, որը կարող է նշանակել հավիտենականություն, անցյալ կամ ապագա: Այն նաև կարող է նշանակել սահմանափակ ժամանակահատված: Այն պետք է թարգմանվի կոնտեքստում: Դրա թարգմանությունը կապված է իր առարկայի հետ (Աստված, Հին Կտակարանի ուխտի խոստումներ, երկրային կյանք, ամբարիշտը և այլն):

Մա նաև ճշգրիտ է Նոր Կտակարանի հունարեն թարգմանությունների համար, *aiōn, aiōnios, eis ton aiōna*, որոնք հետևում են *'olam* Սեպտուագիտո թարգմանությանը: Աստված հավիտենական է, բայց ֆիզիկական բաները (այսինքն, երկինքն ու երկիրը) անցողիկ (տես 2 Պետ. 3:10): Ինչպես բոլոր բաներով, բայց հատկապես *'olam* և *aiōn*, կոնտեքստը շատ վճռական է և որոշում է թարգմանությունը:

«Հավիտենական» բառի հետաքրքիր քննարկումների համար տես Robert B. Girdlestone's *Synonyms of the Old Testament*, էջ 312-319 և F. F. Bruce's, *Answers to Questions*, էջ 202-203:

**ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)
SPECIAL TOPIC: FOREVER ('OLAM)**

Եբրայերեն *'olam* բառի ստուգաբանությունը օրօ (BDB 761, KB 798) անորոշ է (NIDOTTE, հատոր 3, էջ 345): Այն օգտագործվում է մի քանի իմաստներով (սովորաբար որոշվում է կոնտեքստով): Մրանք միայն ընտրված օրինակներ են:

1. հին բաներ
 - ա. ժողովուրդներ, մարդիկ, Ծննդ. 6: 4; 1 Թագ. 27: 8; Երեմ. 5:15; 28: 8
 - բ. վայրեր, Ես. 58:12; 61: 4
 - գ. Աստված, Սաղ. 93: 2; Առ. 8:23; Ես. 63:16

- դ. բաներ, Ծննդ. 49:26; Հոբ 22:15; Սաղ. 24: 7,9; Ես. 46: 9
 ե. ժամանակ, 2 Օր. 32: 7; Ես. 51: 9; 63: 9,11
2. ապագա ժամանակը
- ա. մեկի կյանքը, Ել. 21: 6; 2 Օր. 15:17; 1 Թագ. 1:22; 27:12
 բ. չափազանցություն թագավորի համար, 3 Թագ. 1:31; Սաղ. 61: 7; Նեեմ. 2: 3
 գ. շարունակական գոյություն
 (1) երկիրը, Սաղ. 78:69; 104: 5; Ժող. 1: 4
 (2) երկինքը, Սաղ. 148: 5
- դ. Աստծո գոյությունը
 (1) Ծննդ. 21:33
 (2) Ել. 15:18
 (3) 2 Օր. 32:40
 (4) Սաղ. 93: 2
 (5) Ես. 40:28
 (6) Երեմ. 10:10
 (7) Դան. 12: 7
- ե. ուխտը
 (1) Ծննդ 9: 12,16; 17: 7,13,19
 (2) Ելից 31:16
 (3) Ղևտ. 24: 8
 (4) Թվոց 18:19
 (5) 2 Թագ. 23: 5
 (6) Սաղ. 105: 10
 (7) Ես. 24: 5; 55: 3; 61: 8
 (8) Երեմ. 32:40, 50: 5
- գ. հատուկ ուխտ Դավիթի հետ
 (1) 2 Թագ. 7: 13,16,25,29; 22:51, 23: 5
 (2) 3 Թագ. 2: 33,45; 9: 5
 (3) 2 Մնաց. 13: 5
 (4) Սաղ. 18:50; 89: 4,28,36,37
 (5) Ես. 9: 7; 55: 3
- ե. Աստծո Մեսիան
 (1) Սաղ. 45: 2; 72:17, 89: 35-36; 110: 4
 (2) Ես. 9: 6
- ը. Աստծո օրենքները
 (1) Ելից 29:28, 30:21
 (2) Ղևտ. 6: 18,22; 7:34; 10:15, 24: 9
 (3) Թվոց 18: 8,11,19
 (4) Սաղ. 119: 89,160
- թ. Աստծո խոստումները
 (1) 2 Թագ. 7: 13,16,25; 22:51
 (2) 3 Թագ. 9: 5
 (3) Սաղ. 18:50
 (4) Ես. 40: 8
- ժ. Աբրահամի հետնորդները և Խոստացյալ երկիրը
 (1) Ծննդ. 13:15; 17:19; 48: 4
 (2) Ելից 32:13

- (3) 1 Մնաց. 16:17
- ի. ուխտի տոները
 - (1) Ելից 12:14, 17,24
 - (2) Ղևտ. 23: 14,21,41
 - (3) Թվոց 10: 8
- լ. Հավիտենական, հավերժություն
 - (1) 3 Թագ. 8:13
 - (2) Սաղ. 61: 7-8; 77: 8; 90: 2; 103: 17; 145: 13
 - (3) Ես. 26: 4; 45:17
 - (4) Դան. 9:24
- իւ. Մաղոմոսներն ասում են, թե ինչ կանեն հավատացյալները հավիտյան
 - (1) կգոհանան, Սաղ. 30:12; 79:13
 - (2) կկենան Նրա ներկայության մեջ, Սաղ. 41:12; 61: 4,7
 - (3) կվստահեն Նրա ողորմածությանը, Սաղ. 52: 8
 - (4) կփառաբանեն Տիրոջը, Սաղ. 52: 9
 - (5) փառաբանություններ կերգեն, Սաղ. 61: 8; 89: 1
 - (6) կհռչակեն Նրա արդարությունը, Սաղ. 75: 7-9
 - (7) կփառաբանեն Նրա անունը, Սաղ. 86:12; 145: 2
 - (8) կօրհնեն Նրա անունը, Սաղ. 145: 1
- ծ. օգտագործվում է Եսայիայի մեջ՝ նկարագրելու նոր ժամանակաշրջանը
 - (1) հավիտենական ուխտ, Ես. 24:5; 55:3; 61: 8
 - (2) ՅԱՀՎԵՆ հավիտենական վեմ է, Ես. 26: 4
 - (3) հավիտենական ուրախություն, Ես. 35:10; 51:11; 61: 7
 - (4) հավիտենական Աստված, Ես. 40:28
 - (5) հավիտենական փրկություն, Ես. 45:17
 - (6) հավիտենական ողորմություն (հետեղ), Ես. 54: 8
 - (7) հավիտենական նշան, Ես. 55:13
 - (8) հավիտենական անուն, Ես. 56:5; 63: 12,16
 - (9) հավիտենական լույս, Ես. 60: 19,20

Ես. 33:14-ում գտնվում չարի հավիտենական պատիժին վերաբերող բացասական կողմնորոշումը, «հավիտենական այրվել»: Եսայիան հաճախ օգտագործում է «կրակ» բառը՝ նկարագրելու Աստծո զայրույթը (կարդա Ես. 9: 18,19; 10:16; 47:14), բայց միայն Ես. 33:14 այն նկարագրվում է որպես «հավիտենական»:

3. թե հետև թե առաջ ժամանակի մեջ («հավիտենականությունից հավիտենականություն»)

ա. Սաղ. 41:13 (գովաբանություն առ Աստված)

բ. Սաղ. 90: 2 (Աստված Ինքը)

գ. Սաղ. 103: 17 (Տիրոջ սիրառաստ ողորմությունը)

Հիշեք, կոնտեքստը որոշում է տերմինի իմաստի չափը: Հավիտենական ուխտերը և խոստումները պայմանական են (այսինքն, Երեմիա 7, տես Հատուկ Թեմա: Ուխտ): Եղեք ուշադիր կարդալով ձեր ժամանակակից տեսակետը ժամանակի մասին կամ ձեր ՆԿ սիստեմատիկ աստվածաբանությունը ամեն ՀԿ օգտագործման յուրաքանչյուր խոսքի մեջ: ՆԿ ունի վերսալիզացում է ՀԿ խոստումները (տես Հատուկ Թեմա: Հին Կտակարանի ապագայի կանխատեսումներն ընդդեմ Նոր Կտակարանի կանխատեսումների):

- «մեր փառքի համար» ստորև տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (*doxa*)

SPECIAL TOPIC: GLORY (*doxa*)

«Փառք»-ի աստվածաշնչյան գաղափարը դժվար է սահմանել: LXX- ն օգտագործեց *doxa* –ն թարգմանելու ավելի քան քսան եբրայերեն բառեր: Այն բազմիցս տարբեր ձևերով օգտագործվել է Նոր Կտակարանում: Այն վերաբերում է Աստծուն, Հիսուսին, մարդկությանը և Մեսիական Թագավորությանը:

Հին Կտակարանում ամենատարածված եբրայերեն բառը «փառք»-ի համար (*kabod*, BDB 458, KB 455-458) սկզբում առևտրային տերմին էր, որը վերաբերում էր կշեռքի նժարներին («ծանր լինել», KB 455): Այն, ինչը ծանր էր, արժեքավոր էր կամ ուներ հատուկ զին: Հաճախ պայծառության գաղափարին ավելացվել է բառ՝ Աստծո մեծությունը արտահայտելու համար (տես Ելից 19: 16-18; 24:17; 33:18; Ես. 60: 1-2): Միայն Նա է արժանի և պատվավոր (տես Սաղ. 24: 7-10; 66: 2; 79: 9): Նա շատ փայլուն է, պայծառ ընկած մարդկության համար, ուստի Նա Իրեն ծածկում է ամպով, ձեռքով կամ ծիսով (տես Ելից 16: 7,10; 33: 17-23; Ես. 6: 5): ՅԱՀՎԵՆ կարող է ճշմարտապես երևալ միայն Քրիստոսի միջոցով (տես Հովհ. 1:18; 6:46; 12:45; 14: 8-11; Կող.1: 15; 1 Տիմ. 6:16; Եբր.1: 3; Հովհ. 4:12):

kabod բառի համար լիարժեք քննարկում, տես Հատուկ Թեմա: Փառք (Հին Կտակարան): Հավատացյալների փառքը այն է, որ նրանք հասկանում են ավետարանը և փառքը Աստծո մեջ, այլ ոչ թե իրենց (տես 1 Կոր. 1: 29-31; Եր. 9: 23-24): Մանրամասն քննարկման համար տես NIDOTTE, հատոր 2, էջ 577-587:

2:8 «Եթէ» A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*, էջ 85, սա կոչում է երկրորդ կարգի պայմանական նախադասություն, որը կոչվում է «փաստիո հակառակ»: Սուտ արտահայտություն է արվելու, ընգծելու սուտ եզրահանգումը, «որն այս աշխարհքի իշխաններիցն (վաղակատար ներգործական սահմանական), ոչ ով չ'ճանաչեց, քանզի եթէ ճանաչած լինէին՝ (աօրիստ ներգործական սահմանական), փառքի Տիրոջը չէին խաչ հանիլ»:

▪ **«փառքի Տիրոջը»** Այս արտահայտությունն օգտագործվում է ՅԱՀՎԵՆի համար Գործք 7:2-ում; Եփ. 1:17 և երևի թե Ելից 24:16-ի ենթադրություն է: Հիսուսի նման արտահայտությունն օգտագործվում է Հակ. 2:1-ում: Սա Նոր Կտակարանի հեղինակների մեկ այլ օրինակ է, օգտագործելով ՅԱՀՎԵՆ տիտղոսը Հիսուսի համար և դրանով իսկ հավաստելով ՅԱՀՎԵՆի հավասարությունը (տես 2 Կոր. 4:6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

SPECIAL TOPIC: NAMES FOR DEITY

Ա. *El* (BDB 42, KB 48)

1. Աստվածության համար հնագույն տերմինի սկզբնական նշանակությունն անորոշ է, թեև շատ գիտնականներ հավատում են, որ այն առաջացել է աքքադերեն արմատից, «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» (տես Ծննդ. 17: 1; Թվոց 23: 19; 2 Օր. 7:21; Սաղ. 50:1):
2. Քանանական դիցարանի բարձր աստված *El* է (Ras Shamra տեքստերը), որը կոչվում է «աստվածների հայրը» և «երկնքի տեր»
3. Աստվածաշնչում *El-ը* հաճախ բարդ բառեր է ստեղծում՝ ուրիշ տերմիններին միանալով: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու կերպը:
 - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված», BDB 42 & 751 II), Ծննդ. 14: 18-22; 2 Օր. 32:8; Ես. 14:14
 - բ. *El-Roi* («Աստված, ով տեսնում է») կամ «Աստված, ով հայտում է իրեն», BDB 42 & 909), Ծննդ. 16:13
 - գ. *El-Shaddai* («Ամենագոր Աստված» կամ «Ամենաողորմած Աստված» կամ

- «Լեռան Աստված», BDB 42 և 994), Ծննդ. 17: 1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6: 3
- դ. *El-Olam* («Հավիտենական Աստված», BDB 42 & 761), Ծննդ. 21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տված Աստծո խոստման հետ, 2 Թագ. 7: 13,16
- ե. *El-Berit* («Ուխտի Աստված», BDB 42 & 136), Դատ. 9:46
4. *El* հավասար է
- ա. ՅԱՀՎԵԻՆ Թվ. 23:8; Սաղ. 16: 1-2; 85:8; Ես. 42: 5
- բ. *Elohim* Ծննդ. 46: 3; Հոբ 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
- գ. *Shaddai* Ծննդ. 49:25; Թվոց 24: 4,16
- դ. «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր. 4:24; 5: 9; 6:15
- ե. «ողորմած» 2 Օր. 4:31; Նեեմ. 9:31
- զ. «մեծ և հրաշալի» 2 Օր. 7:21; 10:17; Նեեմ. 1: 5; 9:32; Դան. 9: 4
- է. «գլխություն» 1 Թագ. 2: 3
- ը. «Իմ զորավոր բերդը/ուժեղ ապաստարան» 2 Թագ. 22:33
- թ. «ինձ համար վրեժխնդիր եղող» 2 Թագ. 22:48
- ժ. «սուրբը» Ես. 5:16
- ի. «հզոր» Ես. 10:21
- լ. «Իմ փրկությունը» Ես. 12: 2
- խ. «մեծ ու հզոր» Եր. 32:18
- ծ. «հատուցող» Եր. 51:56
5. Բոլոր Աստծո անունների համադրությունները կարելի է գտել Հեսու 22:22-ում (*El, Elohim, ՅԱՀՎԵ, կրկնողաբար*)
- Բ. *Elyon* (BDB 751, KB 832)
1. Սրա հիմնական նշանակությունն է «բարձր», «մեծարված» կամ «վեր բարձրացված» (տես Ծննդ. 40:17; 3 Թագ. 9: 8; 4 Թագ. 18:17; Նեեմ. 3:25; Եր. 20: 2; 36:10; Սաղ. 18:13):
2. Այն օգտագործվում է զուգահեռ իմաստով Աստծո մի քանի այլ անունների / տիտղոսների համար:
- ա. *Elohim* - Սաղ. 47:1-2; 73:11; 107: 11
- բ. ՅԱՀՎԵ - Ծննդ. 14:22; 2 Թագ. 22:14
- գ. *El-Shaddai* - Սաղ. 91: 1,9
- դ. *El* - Թվոց 24:16
- ե. *Elah* հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7-ում, որը կապված է *Illair* հետ (արամերեն «Բարձր Աստված») Դան. 3:26; 4: 2; 5: 18,21
3. Այն հաճախ օգտագործվում է ոչ իսրայելացիների կողմից:
- ա. Մելքիսեդեկ, Ծննդ. 14: 18-22
- բ. Բաղդամ, Թվ. 24:15
- գ. Մովսեսը, խոսելով ազգերի մասին 2 Օր. 32: 8
- դ. Նոր Կտակարանում Դուկասի Ավետարանը գրվելով հեթանոսներին, նաև օգտագործում է հունարեն համարժեքը *Hupsistos* (տես 1: 32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)
- Գ. *Elohim* (ՀՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵԶԱԿԻ), հիմնականում օգտագործվում է բանաստեղծության մեջ (BDB 43, KB 52)
1. Այս տերմինը Հին Կտակարանից դուրս չի հանդիպում:
2. Այս բառը կարող է նշանակել Իսրայելի Աստված կամ ազգերի աստվածներ (տես Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստվածապաշտ էր (տես Հեսու 24: 2):
3. Այն կարող է վերաբերել Իսրայելի դատավորներին (տես Ելից 21: 6; Սաղ. 82: 6):
4. *elohim* տերմինը նաև օգտագործվում է այլ հոգևոր արարածների համար

(հրեշտակներ, դևեր), ինչպես 2 Օր. 32: 8 (LXX); Սաղ. 8: 5; Հոբ 1: 6; 38: 7:

5. Աստվածաշնչում դա Աստծո առաջին անունն է (տես Ծննդ. 1: 1): Այն օգտագործվում է բացառապես մինչև Ծննդ. 2: 4, որտեղ այն համակցված է ՅԱՀՎԵԻ հետ: Հիմնականում (աստվածաբանորեն) խոսքը վերաբերվում է Աստծուն որպես արարիչ, ապահովող և այս ողջ մոլորակի կյանքը պահպանող (տես Սաղ.104):

Դա հոմանիշ է *El-* ի հետ (տես 2 Օր. 32: 15-19): Այն կարող է նաև գուգորդվել ՅԱՀՎԵԻ հետ, ինչպես Սաղմոս 14-ը (*Elohim*, հհ.1,2, 5; ՅԱՀՎԵ, հհ. 2, 6; նույնիսկ *Adon*, հ.4):

6. Թեև ՀՈԳՆԱԿԻ է և օգտագործվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ նշանակում է Իսրայելի Աստվածը, բայց սովորաբար այն ունի ԵԶԱԿԻ ԲԱՅ՝ մերժելու մոնոթեիստիկ կիրառությունը (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ):

7. Զարմանալի է, որ Իսրայելի մոնոթեիստիկ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է (նաև տես «մեզ, մեր» Ծննդ. 1:26; 3:22; 11: 7): Թեև հստակ չէ, ահա տեսությունները:

ա. Եբրայերենը շատ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ ունի, հաճախ օգտագործվում է շեշտադրման համար: Սրան շատ մոտ է ավելի հին եբրայերեն քերականական կանոնը, որը կոչվում է «Մեծության, գերազանցության հոգնակի», որտեղ ՀՈԳՆԱԿԻՆ օգտագործվում է գաղափարը ավելի ամրապնդելու կամ մեծացնելու համար:

բ. Սա կարող է վերաբերել հրեշտակների ժողովին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որտեղ, որ ապրում է (տես 3 Թագ. 22:19-23; Հոբ 1:6; Սաղ. 82:1; 89:57):

գ. Հնարավոր է նույնիսկ, որ սա արտացոլում է Նոր Կտակարանի բացահայտումը՝ մեկ Աստված երեք անձերով: Ծննդոց 1: 1-ում Աստված ստեղծում է; Ծննդ. 1: 2 Հոգին շրջում է, և Նոր Կտակարանից Հիսուսը Հայր Աստծո օգնականն է ստեղծագործության մեջ (տես Հովհ. 1: 3, 10; Հռ. 11:36; 1 Կոր. 8:6; Կող.1: 16; Եբր. 1:2; 2:10):

Դ. ՅԱՀՎԵ (BDB 217, KB 394)

1. Սա է այն անունը, որը արտացոլում է աստվածությունը, որպես ուխտ-կապող Աստված: Աստված որպես փրկիչ, փրկագնող: Մարդիկ խախտում են ուխտերը, բայց Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես Սաղ. 103):

Այս անունը առաջին անգամ հիշատակվում է *Elohim-* ի հետ Ծննդ. 2: 4: Ծննդոց 1-2-ում չկա երկու ստեղծագործություն, այլ երկու շեշտադրում.

ա. Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական, Սաղ. 104)

բ. Աստված որպես մարդկության հատուկ ստեղծող (Սաղ. 103)

Ծննդոց 2: 4-3: 24 սկսում է հատուկ հայտնությունը մարդկության արտոնյալ դիրքի և նպատակների մասին, ինչպես նաև մեղքի և ապստամբության խնդիրը կապված եզակի դիրքորոշման հետ:

2. Ծննդ. 4: 26 ասվում է, որ «մարդիկ սկսեցին կանչել Տիրոջ անունը» (ՅԱՀՎԵ): Սակայն, Ելից 6: 3 ենթադրում է, որ վաղ ժամանակների ուխտի ժողովուրդը (նախահայրերը և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես *El Shaddai*: ՅԱՀՎԵ անունը բացատրվում է միայն մեկ անգամ Ելից 3: 13-16, հատկապես հ.14: Սակայն Մովսեսի գրվածքները հաճախ բառերը թարգմանում են հայտնի բառախաղերի միջոցով, այլ ոչ թե ստուգաբանորեն (տես Ծննդ. 17: 5; 27:33; 29: 13-35): Այս անվան իմաստին վերաբերող մի քանի տեսություններ են եղել (վերցված է IDB, հատոր 2, էջ 409-11):

- ա. արաբերեն արմատից, «բուռն սեր ցուցաբերել»
բ. արաբերեն արմատից «փչել» (ՅԱՀՎԵՆ որպես փոթորկի Աստուած)
գ. Ուգարթիկ (քանանական) արմատից «խոսել»

- դ. փյունիկյան ձեռագրից, պատճառական դերբայ, որը նշանակում է «Նա, ով պահում է» կամ «Նա, ով հաստատում է»
 - ե. եբրայերեն *Qal* ձևից «այն մեկը, ով» կամ «Նա, ով ներկա է» (ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ «Նա, ով լինելու է»)
 - զ. եբրայերեն *Hiphil* ձևից «Նա, ով հանդիսանում է գոյության աղբյուրը»
 - է. եբրայերեն արմատից «ապրել» (տես Ծննդ. 3:21), որը նշանակում է «հավիտյան ապրող, միակ կենդանի Տեր»
 - ը. Ելից 3: 13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱԸ ձևով, որը օգտագործվում է ՎԱՂԱԿԱՏԱԸ ԺԱՄԱՆԱԿՈՒԾ, « Ես կշարունակեմ լինել այն, ինչ կամ» կամ «Ես շարունակելու եմ լինել այն, ինչ միշտ եղել եմ» (տես J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, էջ 67): ՅԱՀՎԵԻ լրիվ անվանումը հաճախ արտահայտվում է հապավումով կամ, հնարավոր է, յուրօրինակ ձևով:
 - (1) *Yah* (օրինակ, Hallelu - yah, BDB 219, տես Ելից 15:2; 17:16; Սաղ. 89: 8; 104: 35)
 - (2) *Yahu* ("iah" անունների վերջավորությունը, օրինակ՝ Եսայիա)
 - (3) *Yo* ("Jo" անունների սկիզբ, օրինակ, Հեսու կամ Հովել)
3. Հետագայում հուդայականության մեջ այս ուխտի անունը դարձավ սուրբ (ՅԱՀՎԵ), որը հրեաները վախենում էին արտասանել, որ պատվերը զանց չանեին Ելից 20: 7; 2 Օր. 5:11; 6:13: Այսպիսով նրանք «սեփականատեր», «վարպետ», «ամուսին», «տեր» եբրայերեն տերմինը փոխարինեցին *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ նրանք կարդում էին Հին Կտակարանյան տեքստերը և հանդիպում էին ՅԱՀՎԵ անունին, նրանք արտասանում էին «տեր»: Սա է պատճառը, որ ՅԱՀՎԵՆ անգլերեն թարգմանություններում գրվում է ՏԵՐ:
4. Ինչպես *El* -ը, ՅԱՀՎԵՆ հաճախ համակցված է այլ տերմինների հետ՝ ընդգծելու Իսրայելի Ուխտի Աստծո որոշ առանձնահատկությունները: Թեև շատ հնարավոր կապակցված տերմիններ կան, ահա մի քանիսը:
- ա. ՅԱՀՎԵ - *Yireh* (ՅԱՀՎԵՆ կհոգա, BDB 217 և 906), Ծննդ. 22:14
 - բ. ՅԱՀՎԵ - *Rophekha* (ՅԱՀՎԵՆ ձեր բժիշկն է, BDB 217 & 950, *QAL* դերբայ), Ելից 15:26
 - գ. ՅԱՀՎԵ - *Nissi* (ՅԱՀՎԵՆ իմ դրոշակն է, BDB 217 & 651), Ելից 17:15
 - դ. ՅԱՀՎԵ - *Megaddishkem* (ՅԱՀՎԵՆ, ով սրբացնում է ձեզ, BDB 217 & 872, *Piel* դերբայ), Ելից 31:13
 - ե. ՅԱՀՎԵ - *Shalom* (ՅԱՀՎԵՆ խաղաղություն, BDB 217 & 1022), Դատ. 6:24
 - զ. ՅԱՀՎԵ - *Sabaoth* (ՅԱՀՎԵՆ զորաց Աստված, BDB 217 & 878), 1 Թագ. 1: 3,11; 4: 4; 15: 2; հաճախ Մարգարեններում
 - է. ՅԱՀՎԵ - *Ro'I* (ՅԱՀՎԵՆ իմ հովիվն է, BDB 217 & 944, *QAL* դերբայ), Սաղ. 23: 1
 - ը. ՅԱՀՎԵ - *Sidqenu* (ՅԱՀՎԵՆ մեր արդարությունն է, BDB 217 & 841), Եր. 23: 6
 - թ. ՅԱՀՎԵ - *Shammah* (ՅԱՀՎԵՆ այստեղ է, BDB 217 & 1027), Եզ. 48:35

2:9 «գրուած է» Սա եբրայերեն իդիոմա է (վաղակատար կրավորական սահմանական) Հին Կտակարանի մեջբերումը ներկայացնելու համար: Կլեմենտը Հռոմից (Կորնթացիս XXXIV-ի Կլեմենտի Առաջին Ուղերձը), գրված 95թ.-ին, ասում է, որ այդ մեջբերումը Սեպտուագինտից է Ես. 64:4 կամ հնարավոր է միավորվել է 65:17-ի հետ (տես Ես. 52:15 և Եր. 3:16): Օրիգենն ու Ջերոմը մտածում էին, որ Պողոսը մեջբերում էր Եղիայի Վախճանաբանություն անունով անկանոն գրքից, որը գրեթե ամբողջությամբ կորել է: Ճշմարտությունն այն է, որ այս մեջբերումը / ենթադրությունը

համապատասխանում է ոչ մի հայտնի Հին Կտակարանյան տեքստին (նույնը վերաբերում է Մաթ . 2:23, Հովհ. 7:38, Հակ. 4:5):

Աստված գործել է այնպիսի ձևերով, որ մարդկությունը չէր կարող երբևէ պատկերացնել (տես Ես. 55: 8-9), բայց այժմ Ավետարանի և Հոգու միջոցով նրանք կարող են հավատքով պատկերացնել: Ի՛նչ հիանալի խոստում:

- «սիրտ» Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 14:25

2:10 «Բայց մեզ յայտնեց Աստուած իր Հոգովը» Հայրը, Հոգու միջոցով, բացեց (*apokaluptō*, աօրիստ ներգործական սահմանական) այս թաքնված խորհուրդը Քրիստոսում: Բոլոր իմաստությունը Քրիստոսում է (տես 1 Կոր. 1:18-25,30):

Ծանոթացեք Սուրբ Երրորդության մասին 1 Կոր. 2:8-10: Փառքի խաչված Տերը (Հիսուսը), Աստված (Հայրը) և Հոգին:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

SPECIAL TOPIC: THE TRINITY

Ծանոթացեք Երրորդության բոլոր երեք անձանց գործունեությանը միասնական կոնտեքստներում: «Երրորդություն» տերմինը առաջինը առաջ քաշվեց Տերտուլիանոսի կողմից, այն աստվածաշնչյան բառ չէ, բայց գաղափարը տարածված է:

- Ա. Ավետարանները
 1. Մատթ. 3: 16-17; 28:19 (և գուգահեռներ)
 2. Հովհ. 14:26
- Բ. Գործք - Գործք 2: 32-33, 38-39
- Գ. Պողոս
 1. Հռ. 1: 4-5; 5: 1,5; 8: 1-4,8-10
 2. 1 Կոր. 2: 8-10; 12: 4-6
 3. 2 Կոր. 1: 21-22; 13:14
 4. Գաղ. 4: 4-6
 5. Եփ. 1: 3-14,17; 2:18; 3: 14-17; 4: 4-6
 6. 1 Թես. 1: 2-5
 7. 2 Թես. 2:13
 8. Տիտոս 3:4-6
- Դ. Պետրոս - 1 Պետ. 1: 2
- Ե. Հուդա - հհ. 20-21

Աստծո հոգնակիության ակնարկը Հին Կտակարանում:

- Ա. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ Աստծո համար
 1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է (տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները), բայց երբ օգտագործվում է Աստծո համար, այն միշտ ունի ԵԶԱԿԻ ԲԱՅ
 2. «Մեր» Ծննդոց 1:26-27; 3:22; 11: 7
- Բ. «Տիրոջ հրեշտակը» (տես Հատուկ Թեմա: Տիրոջ Հրեշտակը) Աստծո տեսանելի ներկայացուցիչն էր
 1. Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31: 11,13; 48: 15-16
 2. Ելից 3: 2,4; 13:21; 14:19
 3. Դատ. 2: 1; 6: 22-23; 13: 3-22
 4. Զաք. 3: 1-2
- Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծննդ. 1:1; Մաղ. 104: 30; Ես. 63: 9-11; Եզ. 37: 13-14
- Դ. Աստված (ՅԱՀՎԵ) և Մեսիան (Ադոնայ) առանձին են, Մաղ. 45: 6-7; 110: 1; Զաք. 2: 8-11;

10: 9-12

Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Զաք. 12:10

Զ. Բոլոր երեքը նշված են Ես. 48:16; 61: 1

Հիսուսի աստվածությունը և Հոգու անձնավորությունը խնդիրներ են առաջացրել խիստ մոնոթեիստիկ/միաստվածություն (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ), առաջին հավատացյալների մոտ:

1. Տերտուլիանոսը -Որդուն ենթարկեց Հորը
2. Օրիգենը - ենթարկեցնում է Որդու և Հոգու աստվածային էությանը
3. Արիոսը - հերքեց Որդու և Հոգու աստվածությունը
4. Մոնարխիզմը- հավատում էր մեկ Աստծո հաջորդական ժամանակագրական դրսևորմանը `որպես Հայր, ապա Որդի, և ապա Հոգի

Երրորդությունը պատմականորեն զարգացած ձևակերպումն է՝ տեղեկացված աստվածաշնչյան նյութով:

1. Հիսուսի լիակատար աստվածությունը հավասար է Հոր հետ և որն էլ հաստատվել է 325 թ. Նիկիայի ժողովի ժամանակ (տես Հովհ. 1: 1; Փիլ. 2: 6; Տիտոս 2:13)
2. Հոգու լիակատար անձ և Աստված լինելը հավասար է Հորն ու Որդուն, որն էլ հաստատվել է Կ. Պոլսի ժողովում 381թ.
3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* –ի աշխատության մեջ

Այստեղ իսկապես խորհուրդ կա: Մակայն Նոր Կտակարանը հաստատում է մեկ աստվածային էությունը (մոնոթեիզմ) երեք հավիտենական անձնական դրսևորումներով (Հայր, Որդի և Հոգի):

▪ **«Որովհետև Հոգին ամեն բաները քննում է, եւ Աստուծոյ խորքն էլ»** Այստեղ շեշտը դնում է Հոգու լիարժեք անձնավորության վրա (տես Ես. 63:10; Եփ. 4:30): Հոգին Աստծո ճանաչման մեր միակ միջոցն է (տես Հռ. 8:26-27; 11:33-36): Սա ամբողջ կոնտեքստի շարունակական շեշտն է, որ մարդկային միջոցները ի վիճակի չեն իմանալ Աստծուն կամ Աստծո բաները (պլաններ): «Խորը» այն փոխաբերությունն է, որը (1) խորն է, ի տարբերություն ծանծաղի, (2) թաքնված է մարդկության հասանելիությունից կամ հայտնագործությունից: Հոգու աշխատանքը խիստ կարևոր է համոզմունքի, փրկության և Քրիստոնեական ապրումների մեջ (տես Հովհ. 16:7-14):

«Աստծո խորը բաները» արտահայտությունը (NKJV) կարող էր Կորնթոսի պառակտություններից մեկի համար բեկումնային լինել: Աստծո խորը բաները հասանելի են բոլոր նրանց, ովքեր հավատք են ցուցաբերում Քրիստոսով: Այլևս չկան թաքնված խորհուրդներ: Ավետարանը բացահայտվում է բոլոր նրանց, ովքեր կնդունեն: Չկա «ավելի խորը բաներ», ոչ էլ խորհուրդ, ոչ բացառիկություն:

Աստծո տրամադրության և հոգատարության այս հրաշալի հավաստիացումը շահագործվում էր ավելի ուշ գնոստիկների կողմից, որը պնդում էր, որ դա հատուկ գիտելիքների համար ապացուցող տեքստ է (անկանոն գիրքը և *Ascension of Isaiah*-ի գնոստիկ գիրքը):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՐՊԵՍ ԱՆՁ
SPECIAL TOPIC: THE PERSONHOOD OF THE SPIRIT

Հին Կտակարանում «Աստծո Հոգին» (*ruach*) մի ուժ էր, որն իրականացրել է ՅԱՀՎԵԻ նպատակը, բայց քիչ ակնարկ կա, որ դա անձ է (Հին Կտակարանի մոնոթեիզմ/միաստվածություն, տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ): Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում բացահայտվում է Սուրբ Հոգու լիարժեք անձ և անձեղությունը,

1. Նա կարող է հայհոյվել (տես Մատթ 12:31; Մարկ. 3:29)
2. Նա սովորեցնում է (տես Ղուկ. 12:12; Հովհ.14:26)

3. Նա վկայում է (տես Հովհ.15:26)
4. Նա հանդիմանում է, առաջնորդում է (տես Հովհ.16:7-15)
5. Նա անվանվում է «ով» (*hos*, տես Եփ. 1:14)
6. Նա կարող է վշտնալ, տրտմել (տես Եփ. 4:30)
7. Նա կարող է մարել (տես 1 Թեա. 5:19)
8. Նա կարող է դիմադրվել (տես Գործք 7:51)
9. Նա պաշտպանում է հավատացյալներին (տես Հովհ.14:26; 15:26; 16:7)
10. Նա փառավորում է Որդուն (տես Հովհ. 16:14)

Երրորդության մասին տեքստերը (այստեղ երեքն են, տես Հատուկ Թեմա:Երրորդություն) նույնպես խոսում են երեք անձանց մասին:

1. Մատթ. 28:19
2. 2 Կոր. 13:14
3. 1 Պետ. 1: 2

Չնայած հունարեն «հոգի» (*pneuma*) բառը ՉԵԶՈՔ է, երբ խոսքը վերաբերվում է Հոգուն, Նոր Կտակարանը հաճախ օգտագործում է ԱՐԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ (տես Հովհ.16: 8,13-14):

Հոգին կապված է մարդու գործունեության հետ:

1. Գործք 15:28
2. Հռոմ. 8:26
3. 1 Կոր. 12:11
4. Եփ. 4:30

Գործք Առաքելոցի հենց սկզբում ընդգծվում է Հոգու դերը (ինչպես Հովհաննեսի Ավետարանում): Պենտեկոստեն Սուրբ Հոգու գործի սկիզբը չէր, այլ նոր սկիզբ: Հիսուսը միշտ ունեցել է Հոգին: Նրա մկրտությունը Հոգու գործի սկիզբը չէր, այլ նոր սկիզբ: Հոգին Հոր նպատակի արդյունավետ միջոցն է Աստծո պատկերով ստեղծված բոլոր մարդկանց վերականգնման համար (տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ Հավիտենական փրկության ծրագիրը):

2:11-12 Սա նախորդ հաստատված ճշմարտության օրինակ է: Ուշադրություն դարձրեք, որ այս «հոգու» առաջին և երրորդ օգտագործումն ունի փոքրատառ «հ», իսկ «Հոգու» երկրորդ օգտագործումը ունի «Հ» մեծատառ: Հունական տեքստում չկա մեծատառը տարբերակելու միջոց, հետևաբար սա թարգմանիչների մեկնաբանությունն է: «Հ» մեծատառ կանդրադառնա Սուրբ Հոգուն իսկ փոքրատառը «մարդու» հոգուն (տես 1 Կոր. 6:18; Հռ. 8:16; 2 Կոր. 2:13; 7:13; 12:18, Գաղ. 6:18; Փիլ. 4:23: Սա կարող է լինել Առ. 20:27-ի ենթադրություն:

2:12 «աշխարհի հոգին» Սա *kosmos* (աշխարհ) տերմինի մեկ այլ իմաստն է (աշխարհ, տես Հատուկ Թեմա 1 Կոր. 3:21-22), մարդկային հասարակությունը, որը կազմակերպված է և գործում է առանց Աստծո (Հովհաննեսի գրվածքներում): Այսօր մենք այն անվանում ենք «աթեիստական մարդասիրություն» (տես 1 Կոր. 2:6): Այն նաև կոչվում է «ստրկության հոգի» Հռ. 8:15:

▪ **«Որ ճանաչենք այն բաները որ Աստուածանից տրուեցաւ մեզ»** Հավատացյալները կարող են հասկանալ Քրիստոսի ավետարանը և օրհնությունները միայն Սուրբ Հոգու միջոցով:

Անշուշտ, ճշմարիտ է, որ իրենց ընկած և ժամանակավոր վիճակում նույնիսկ հավատացյալները չեն կարող լիովին ճանաչել Աստծուն, բայց կարող են իմանալ և հասկանալ Հոր, Նրա Որդու անձի և աշխատանքի մասին Հոր հայտնության միջոցով փրկության և աստվածապաշտության համար անհրաժեշտ բոլոր բաները և Հոգու լուսավորությունը: Քանի որ մենք չենք կարող իմանալ, ամեն ինչ արդարացված չէ, Աստվածաշնչի հստակ ճշմարտությունները ընդունենք և քայլենք դրանց մեջ:

Կարևոր է նաև, որ հավատացյալները ընդունեն, որ Աստծո իմաստությունը «ազատորեն տրվել է» (տես Ծննդ. 8:32): Դա Աստծո պարզն է, որը Նա ցանկանում է տալ բոլոր մարդկանց, որոնք ստեղծված են Իր պատկերով (տես Ծննդ. 1:26-27), բայց այժմ ապստամբության միջոցով հեռանում են Նրանից (Ծննդ. 3): Աստծո իմաստությունը ոչ թե մարդկային հետախուզության, սոցիալական դերակատարության կամ սրամտության արդյունքն է, այլ Քրիստոսի աշխատանքի և Հոգու գործի միջոցով Աստծո սիրո և ողորմության բացահայտումը: Քրիստոսին անտեղյակ լինելը կամավոր է: Սուրբ Հոգին բերում է լույս, ճշմարտություն և փրկություն: Այս աշխարհի հոգին բերում է խավար, խաբեություն և մահ:

2:13 «Որն էլ խօսում ենք» Շատ կարևոր է, որ հավատացյալները կիսեն այս աստվածաշնչյան ճշմարտությունները: Նրանք կյանքն ու լույսն են կորած և մեռած աշխարհին, սիրելի աշխարհին, որը փրկագնված է, եթե նրանք ընդունեն Աստծո Որդուն, Աստծո ճշմարտությունը: Հայտնությունը հիմնականում փրկարար է (տես 2 Տիմ. 2:15) և այնուհետև փոխակերպող (տես 2 Տիմ. 3:16-17):

Արևելահայերեն «ոչ թե մարդկային իմաստութեան սովորած խօսքերով»
Արևմտահայերեն «ոչ թե մարդկային իմաստութեան սովորած խօսքերով»

NASB «ոչ թե մարդկային իմաստության սովորած խօսքերով մտքեր հոգևոր բաներով»
NKJV «որը Սուրբ Հոգին սովորեցնում է, համեմատելով հոգևոր բաները հոգևորով»
NRSV «Հոգու կողմից ուսուցանված, մեկնաբանել հոգևոր բաները հոգևորներին»
TEV «մենք չենք խօսում խօսքերով մարդու իմաստության ուսուցմամբ, այլ Հոգու կողմից ուսուցանված խօսքերով»
NJB «Հոգու կողմից սովորած առումով, հոգևոր լեզվով հոգևոր բաներին համապատասխանելը»
Peshitta «այլ Հոգու ուսմունքի մասին. այսպիսով բացատրելով հոգևոր բաները հոգևոր մտքին»

Մի քանի պատճառներով սա շատ անհասկանալի արտահայտություն է: Նախքան փորձելը, հիշեք, որ ավելի մեծ կոնտեքստը հունարեն քերականության կամ բանասիրության հիմնական և ոչ միանշանակ մանրամասները չէ: Մեծ կոնտեքստը վերաբերում է հասուն հավատացյալներին (տես 1 Կոր 2: 6): Այն հակադրում է մարդկային իմաստությունը և գիտելիքները Աստծո իմաստության հետ, որը Քրիստոսն է և Աստծո գիտելիքը, որը արտահայտվում է ավետարանում: Սա 1-ին եւ 2-րդ գլուխների հիմնական ճշմարտությունն է:

Սուրբ Հոգին հաղորդակցության անփոխարինելի ալիքն է (տես Հովհ. 16:8-14): Նա բացահայտում է հոգևոր ճշմարտությունները նրանց, ովքեր հավատում են Քրիստոսին և ստացել են բնակվող Հոգին: Որոշ առումներով, Պողոսի խոսքը նման է Հիսուսի սերմնացանի կամ հողերի առակին (տես Մարթ. 13): Ավետարանի ուղերձը հասկանալի է և պատասխանվում է ընդունող լսողների կողմից, սակայն մերժվում է անտարբեր լսողների կողմից:

Pneumatikoi տերմինը կարող է լինել չեզոք սեռ (հոգևոր բաներ) կամ արական (հոգևոր մարդիկ): Ունկնդիրների մեկ այլ խումբ նշվում է հաջորդ հատվածում, *psuchikos* (բնական կամ կորած անձ): Հավանական է, որ 1 Կոր. 2:13 վերաբերում է հոգևոր մարդկանց: Այս նույն խումբը նախկինում հիշատակվում է 1 Կոր. 2:6 (*teleiois*, հասուն կամ սպառազինված հավատացյալներ), ինչպես նաև 1 Կոր. 2:15 (որտեղ դրանք կոչվում են *pneumaikos*): Թվում է, թե այս կոնտեքստում հիշատակված մարդկանց երեք խումբ կա:

1. կորած մարդ
2. փրկված, բայց ոչ հասուն հավատացյալ
3. հասուն հավատացյալ

#1 և #2 միջև հաճախ տարբերություն է երևում:

Եթե այո, ապա ինչպես է Հոգին հաղորդակցվում հոգևոր ճշմարտությունների հետ: ներկա ներգործական դերբայը, *sunkrinontes*-ը, օգտագործվում է Մեպտուագինտում երազների մեկնաբանման համար (տես Ծննդ. 40:8,16,22; 41:12,15; Դատ. 7:15; Դան. 5:12; 7:15,16): Սակայն այս նույն հունարեն բառը օգտագործվում է միայն այստեղ և 2 Կոր. 10:12 Նոր Կտակարանում իր «համեմատության» նորմալ իմաստով: Ճիշտ այնպես, ինչպես Հոգին հոգևոր ճշմարտությունը հաղորդեց հոգևոր մարդկանց, երկիմաստ է և դրա պատճառով մենք չպետք է դառնանք դոգմատիկ կամ աննկուն՝ այս տեքստը մեկնաբանելու հարցում: Մեծ ճշմարտությունն այն է, որ Սուրբ Աստվածը ձգտում և ստեղծում է ընկած մարդկության հետ հաղորդակցություն (տես 1 Կոր. 2:12): Աստված խոսում է, մենք լսում ենք:

«Հայտնություն և Սուրբ Գիրք» գրքի մասին հետաքրքիր հոդված կա *Expositor's Bible Commentary*, հատոր 1, էջ 461-462: Ահա մեկ պարբերություն:

«Նոր Կտակարանի գրողների համար հայտնությունը վերաբերում է ճշմարտությանը, ճշմարտությունը լեզվի գործառույթ է: Այսպիսով, հայտնությունը և Սուրբ Գիրքը անխուսափելիորեն միացվում են Նոր Կտակարանի աստվածաբանությանը: Իրադարձությունը և մեկնաբանումը միասին են: Նոր Կտակարանի հայտնությունը, վերաբերում է Հիսուս Քրիստոսին, ներառում է ոչ միայն վերացական, բարոյական ճշմարտություններ կամ աշակերտների սուբյեկտիվ փորձառությունները, բայց այն պետք է անի այնպիսի իրադարձություններ, որոնք կոնկրետ են, մասնավոր և փաստական: Առաքյալների հայտարարությունը և իրադարձությունների մեկնաբանումը տվյալ հարցի ճշմարտությունն է: Գրողները մտադիր են ընթերցողին փոխանցել թե ի՞նչ է իրականում գործը, այսինքն՝ այն մասին, հաստատելու այն բաները, որոնք տեղի են ունենում: Ի՞նչ մեղադրանք կարող է արվել Նոր Կտակարանի գրողների նկատմամբ իրենց կրոնական համոզմունքների համար, մենք շատ ենք հասկանում, որ նրանք պնդում են մեզ աստվածային հայտնություն արտահայտված մարդկային լեզուն (1 Կոր. 2:13):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 2:14-16

¹⁴Բայց շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում: ¹⁵Բայց հոգեւոր մարդը ամեն բան քննում է, եւ ինքը ոչ ոքից չէ քննվում: ¹⁶Որովհետեւ ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, որ բան սովորեցնէ նորան. բայց մենք Քրիստոսի միտքն ունինք:

2:14

Արևելահայերեն «շնչաւոր մարդ»

Արևմտահայերեն «շնչաւոր մարդ»

NASB «շնչավոր մարդ»

NKJV «շնչավոր մարդ»

NRSV «նրանք, ովքեր ոչ հոգևոր են»

TEV «այն մարդը, ով հոգևոր չի»

NJB «շնչավոր մարդը»

REB «ոչ հոգևոր անձ»

Peshitta «նյութական մարդը»

Սա «հոգևոր մարդու» հակառակն է նշված 1 Կոր. 2:6,13 և 3:1 ում: (*Psuchikos*) տերմինը մի քանի անգամ օգտագործվում է Նոր Կտակարանում, որտեղ այն վերաբերում է երկրի վրա գոյություն ունեցող կյանքին, կյանքը ապրում է միայն հինգ զգացողությունների նկատմամբ (*bios*, կյանք, ընդդեմ *zōē*, կյանքի): *Ikos* վերջավորությունը նշանակում է «բնութագրված» (տես 1 Կոր. 3:3): Այն կարող է

նշանակել երկրայինն ընդեմ երկնայինի կամ ոչ հոգևորն ընդդեմ հոգևորի (տես 1 Կոր. 15:44,46, Հակ. 3:15 և Հուդա 1:19):

Արևելահայերեն «չէ ընդունում»
Արևմտահայերեն «չընդունիր»

NASB «չի ընդունում»
NKJV, NRSV «չի ստացվում»
TEV «չի կարող ստանալ»
NJB «տեղ չունի»
Peshitta «մերժում է»
REB «հրաժարվում է»

Այս հունարեն ժխտական տերմինը նշանակում է «մերժում է», «հրաժարվում է ընդունել», «չի կարողանում հասկանալ» կամ «չի կարող իմաստալից լինել»: Այս տերմինը առանց ժխտման հաճախ օգտագործվում է հյուրին ողջունելու համար: Այս տերմինը (*dechomai* տես Ղուկ. 8:13, Գործք 8:14, 11:1; 17:11; 2 Կոր. 11:4; 1 Թեա. 1:6; Հակ. 1:21) հոմանիշ է *lambanō*-ին (տես Հովհ. 1:12, 12:48, 14:17): Այն չի վերաբերում մարդկային անտեղյակությանը, այլ հոգևոր ճշմարտության ընկալման անկարողությանը:

Սա է խորհուրդը, թե ինչպե՞ս / ինչո՞ւ որոշ մարդիկ, լսում են ավետարանը և արձագանքում, իսկ ոմանք ոչ: Արդյոք այս մերժումը վերաբերում է նախանձին կամ մարդկային ցանկությանը: Պատասխանը «այո» է, բայց հենց այդ երկու թեմաներն են հայտնության ինքնության դիալեկտիկական բնույթի մի մասը (տես Փիլ. 2:12-13; տես Հատուկ Թեմա 2 Կոր 8:16-17-ում): Ինձ դուր է գալիս այն, որ Նոր Կտակարանի աստվածաբանության մեջ Ֆրանկ Սթագը ասում է, «Նոր Կտակարանում ընտրությունների հակառակն այլընտրանք չէ, այլ Աստծո փրկության մերժումը» (էջ 87):

- **«հիմարություն»** տես 1 Կոր. 1:25
 - 3. այն բաները, որոնք Հոգին առաջացնում է մարդկանց հոգիների մեջ և միջոցով
 - ա. ոչ թե ծառայության հոգի, այլ որդեգրության հոգի - Հռ. 8:15
 - բ. հեզության հոգի - 1 Կոր. 4:21
 - գ. հավատքի հոգի - 2 Կոր. 4:13
 - դ. իմաստության և հայտնության հոգի՝ Իր գիտությունով - Եփ. 1:17
 - ե. ոչ թե երկչոտության, այլ զորության, սիրո և զգաստության հոգի- 2 Տիմ. 1: 7
 - զ. ճշմարտության հոգի և խաբեության հոգի - 1 Հովհ. 4: 6
- Գ. հոգևոր ոլորտում
 - 1. հոգևոր էակներ
 - ա. բարի (այսինքն, հրեշտակները, տես Գործք 23: 8-9; Եբր. 1:14)
 - բ. չարը (այսինքն, դիվային, տես Մատթ. 8:16; 10: 1; 12: 43,45; Գործք 5:16; 8: 7; 16:16; 19: 12-21; Եփ. 6:12)
 - գ. ուրվականներ (տես Ղուկ. 24:37)
 - 2. հոգևոր զանազանություն (տես Մատթ. 5: 3; 26:41; Հովհ. 3: 6; 4:23; Գործք 18:25; 19:21; Հռ. 2:29; 7: 6; 8: 4,10; 12:11; 1 Կոր. 14:37)
 - 3. հոգևոր բաներ (տես Հովհ. 6:63; Հռ. 2:29; 8: 2,5,9,15; 15:27; 1 Կոր. 9:11; 14:12)
 - 4. հոգևոր պարզկներ (տես 1 Կոր. 12: 1; 14: 1)
 - 5. Հոգու ներշնչանք (տես Մատթ. 22:43; Ղուկ. 2:27; Եփ. 1:17)
 - 6. հոգևոր մարմին (տես 1 Կոր. 15: 44-45)
- Դ. Բնութագրում է
 - 1. աշխարհի վերաբերմունքը (տես Հռ. 8:15; 11: 8; 1 Կոր. 2:12)
 - 2. մարդկանց մտածողության գործընթացը (տես Գործք 6:10; Հռ. 8: 6; 1 Կոր. 4: 2)
- Ե. ֆիզիկական ոլորտում

1. քամին (տես Մատթ. 7: 25,27; Հովհ. 3: 8; Գործք 2: 2)
2. շունչը (տես Գործք 17:25; 2 Թես. 2: 8)

Ակնհայտ է, որ այս տերմինը պետք է մեկնաբանվի իր անմիջական կոնտեքստի լույսի ներքո: Կան տարբեր ձևի իմաստներ, որը կարող է վերաբերել (1) ֆիզիկական աշխարհին; (2) անտեսանելի աշխարհին; (3) ինչպես նաև այս ֆիզիկական աշխարհի կամ հոգևոր ոլորտի անձանց:

Սուրբ Հոգին այդ Եռյակ Աստծո մասն է, որը գերազանց ակտիվ գործում է պատմության այս փուլում: Հոգու նոր դարը եկել է: Բոլորը, ինչ որ բարի է, սուրբ, ճիշտ և ճշմարիտ վերաբերվում է Նրան: Նրա ներկայությունը, պարզները և ծառայությունը չափազանց կարևոր է ավետարանի հետագայի և Աստծու թագավորության հաջողության համար (տես Հովհ. 14 և 16): Նա ուշադրությունը իրեն չի հրավիրում, այլ Քրիստոսին (տես Հովհ. 16:13-14): Նա դատապարտում է, հանդիմանում, համոզում, մկրտում և հասունացնում է բոլոր հավատացյալներին (տես Հովհ. 16: 8-11):

▪ **«արդեն վճռել եմ ներկայ լինողի պես՝ նորան, որ այնպիսի բան գործեց»** Սա վաղակատար ներգործական սահմանական է: Պողոսը հաստատում է իր հեղինակությունը նույնիսկ ֆիզիկական բացակայության ժամանակ և որոշում է կայացնում:

5:4 «Մեր Տեր Յիսուս Քրիստոսի անունովը» Սա երբայերեն ձևն է՝ հաստատելու հարուցյալ Քրիստոսի հեղինակությունը և գորությունը, որպես Պողոսի առաքելական իշխանության աղբյուր: Պողոսը ներկայացնում է Նրան և նմանակում է Նրան:

Այս համարի տարբեր ձևերը կան հունարեն ձեռագրերում «անունովը _____»:

1. «մեր Հիսուսը» երկաթագիր ձեռագրերում B, D*
2. «Հիսուս Քրիստոսը» երկաթագիր ձեռագրում Ե
3. «մեր Հիսուս Քրիստոսը» երկաթագիր ձեռագրերում D², F, G
4. «մեր» Lectionar, փոքր ձեռագրում 1021 (12-րդ դար)
5. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսը» փոքր ձեռագրում 81 (11-րդ դար)

Միավորված Աստվածաշնչյան Ընկերակցությունների Հունարեն Նոր Կտակարան, չորրորդ հրատարակչությունը (UBS⁴) ասում է, որ դժվար է որոշել, բայց նախընտրում է #1:

Այս նույն ձեռագրային խնդիրը կրկին տեղի է ունենում 1 Կոր. 5: 5-ում (և 1 Կոր. 5:11):

1. «Տեր» MSS P⁴⁶, B-ում
2. «Տեր Հիսուս» MS Ե-ում
3. «Տեր Հիսուս Քրիստոսը» MS D-ում
4. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսը» MSS A, F, G, P-ում

UBS⁴ #1, գրեթե որոշակի են:

5:5 «Այնպիսին մատնել է սատանային՝ մարմինը կորչելու համար» Հունարեն «մատնել» *paradidōmi* տերմինը, որն օգտագործվում է Ավետարաններում, որպեսզի որևէ մեկին իշխանություն տա համապատասխան պատժի համար (տես Մատթ. 4:12; 5:25; 10:4,17; 18:34; 20:19; 26:15; 27:2, 18,26) և Հռոմեացիսում (տես Հռ. 1:24,26,28)՝ որևէ մեկին չար հոգևոր ուժերին դարձնելու համար: Այս օգտագործումը լավագույնն է համապատասխանում է այս կոնտեքստին (այսինքն, Սատանան բացահայտված է):

Սա նման է 1 Տիմ. 1:20: Աստվածաբանների և մեկնաբանների միջև շատ քննարկումներ են եղել այն մասին, թե ինչ է սա ներառում: Ոմանք դա տեսնում են որպես վերջնական ֆիզիկական պատիժ (այսինքն, մահ), ինչպես և 5-րդ և 1-ին Կոր. 3:17; 11:30: Ոմանք դա համարում են որպես ընդհանուր հեռացում, դնելու մեկը Սատանայի գործունեությանը, որն աշխարհն է (տես Հովհ. 12:31, 16:11, 1 Կորն. 4:4, 1 Հովհ. 5:19), որտեղ նրա օտարումը Աստծո և Նրա ժողովրդի հետ հաղորդակցությունից, կարող է նրան վերադարձնել Աստծուն և խուսափել զայրույթային վճռից: Պողոսը տեսնում էր աշխարհը, որպես Սատանայի տիրույթ (տես Եփ. 2:2): Այս աշխարհում տեղի

ունեցած չարիքը (այսինքն, մահը, հիվանդությունը, կորուստը և այլն) վերագրվում են չարին՝ Սատանային (տես 2 Կոր. 12:7; 1 Թեա. 2:18): Հնարավոր է նաև, որ «մարմինը» կարող է վերաբերել մարդկության զգայական ապստամբ ապրելակերպին (այսինքն՝ Ադամական մեղավոր բնությանը): Տես Հատուկ Թեմա: Անձնական չարը 1 Կոր. 7:5

«Մարմին» բառի համար տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:26

▪ **«Որ հոգին ապրի»** Եկեղեցական կարգապահությունը միշտ պետք է լինի ազատագրող և վերականգնող, այլ ոչ թե վրեժխնդիր (տես 2 Կոր. 2:5-11; 2 Թեա. 3:14-15): Սա «փրկված» բառի Հին Կտակարանյան բառակապակցությունն է, որը նշանակում է ֆիզիկական ազատագրում: Այս անձը, չնայած անբարո գործելակերպի, եկեղեցու անդամ է: Նա կարիք ունի հոգևոր ազատագրման, այլ ոչ թե փրկության:

Որքան հաճախ Պողոսի գրվածքներում ֆիզիկական մարմինը և հոգին հակասում են (Հռ. 8:1-11): Նրանք ներկայացնում են երկու հստակ իշխանության կառույցներ, երկու աշխարհայացք, երկու հավատարմություն (տես Մաթ. 6:19-34, 1 Հովհ. 2:15-17):

Մեկ այլ աստվածաբանական միտք 1 Կոր. 5:5 մասին: Սատանան Աստծո գործիքն է, ծառայելով Նրա փրկության նպատակներին: Հին Կտակարանում սատանան մարդկության թշնամին է, բայց Աստծո ծառան (տես A. B. Davidson, *An OT Theology*, էջ 300-306): Հարաբերությունն ուժեղանում է Նոր Կտակարանում: Սատանան դառնում է Աստծո թշնամին, բայց նա դեռ առանց կամքի ծառա է: Սատանայի գործառույթը 1 Կոր. 5:5-ը վերջնական փրկության բերել եկեղեցու սխալված անդամին:

▪ **«Մեր Տեր Յիսուսի օրումը»** Սա ակնհայտորեն վերաբերում է վախճանաբանությանը, վերջին ժամանակին: Աստծո ժամանակավոր դատաստանը քրիստոնյաների նկատմամբ կարելի է տեսնել 1 Կոր. 11:30-32; Գործք 5 և 1 Տիմ. 1:20: Արդյո՞ք այս տեքստը ենթադրում է (1) ֆիզիկական մահ, բայց վախճանաբանական փրկություն, 1 Կոր. 1:8, թե՞ (2) նրա փրկությունը կախված է նրա ապաշխարությունից:

Կան կրկնվող վախճանաբանական շեշտադրումներ 1 Կորնթացիսում (տես 1 Կոր. 1:7-8; 3:13; 4: 5; 5:5; 6:14; 11:26; 13:12; 15:50-54; 16:22): Հնարավոր է, Կորնթոսի եկեղեցու աստվածաբանական խնդիրներից մեկը իրականացած վախճանաբանությունն էր, որը զուգորդվում էր առաջացող Գնոստիցիզմի հետ: Նրանք կարծում էին, որ իրենք հոգևորապես էին եկել (տես 1 Կոր. 4:7-10) և մարմինը չար էր (այսինքն, հունական միտք) և, հետևաբար, անտեղի հոգևոր հարցեր էին: Պողոսը հերքում է այդ միտումները

1. ապացուցել ապագան, ինչպես նաև ներկայացնել դատաստանը (տես 1 Կոր. 5:5)
2. ընդգծելով անբարոյականության անհամապատասխանությունը հավատացյալների կյանքում (տես 1 Կոր. 5:5-6)

Նաև նկատելի է, որ ՅԱՀՎԵ-ին վերաբերող Հին Կտակարանյան արտահայտություններն այժմ փոխանցվել են Հիսուսին (տես 1 Կոր. 1:8; 2 Կոր. 1:14; 1 Թեա. 5:2; 2 Թեա. 2:2; 2 Տիմ. 4 8): Սա գրական ձևերից մեկն է, որ Նոր Կտակարանի հեղինակները հաստատում են Նազովրեցի Հիսուսի աստվածությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 5:6-8

Ձեր պարծանքը լաւ չէ. 2՞գիտէ՞ք որ մի փոքր խմորը բոլոր զանգուածը խմորեցնում է: 7Դէն զցեցէք հին խմորը, որ նոր զանգուած լինէք, ինչպէս որ անխմոր էք. որովհետեւ մեր զատիկը մորթուեցաւ մեզ համար՝ Քրիստոսը: 8Ուստի տօն կատարենք ոչ թէ հին խմորով, եւ ոչ էլ չարութեան եւ անզգամութեան խմորովը, այլ մաքրութեան եւ ճշմարտութեան չ՛խմորուածովը:

5:6 «Ձեր պարծանքը լաւ չէ» Այս մեկնաբանությունն օգնում է բացատրել Կորնթոսի եկեղեցու վերաբերմունքը: Նրանք պահանջում էին ազատություն և իրավունք՝ հիմնված ավետարանի վրա: Նրանք ուզում էին ծածանել իրենց նոր ազատությունը՝ փոխարեն իրենց համայնքին ավետարանը վկայելու:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊԱՐԾԱՆՔ
SPECIAL TOPIC: BOASTING

Այս հունարեն տերմինները, *kauchaomai*, *kauchēma* և *kauchēsis*, օգտագործվում են երեսունհինգ անգամ Պողոսի կողմից և միայն երկու անգամ ամբողջ Նոր Կտակարանում (երկուսն էլ Հակոբոս թղթում): Դա հիմնականում օգտագործվում է 1 և 2 Կորնթացիսում:

Կան երկու հիմնական ճշմարտություններ պարծենալու մասին:

- Ա. ոչ մի մարմին չի պարծենա Աստծո առաջ (տես 1 Կոր. 1:29; Եփ. 2: 9)
- Բ. հավատացյալները պետք է պարծենան Տերով (տես 1 Կոր. 1:31; 2 Կոր. 10:17, որը ակնարկ է Եր. 9: 23-24)

Հետևաբար, կա պատշաճ և ոչ պատշաճ պարծանք / փառք (այսինքն՝ հպարտություն):

- Ա. պատշաճ
 - 1. փառքի հույսով (տես Հո. 4: 2)
 - 2. Աստծով Տեր Հիսուսի միջոցով (տես Հո. 5:11)
 - 3. Տեր Հիսուս Քրիստոսի խաչով (այսինքն, Պողոսի հիմնական թեման, տես 1 Կոր. 1:17-18; Գաղ. 6:14)
 - 4. Պողոսը պարծենում է, որ
 - ա. իր ծառայությունը առանց փոխհատուցման է (տես 1 Կոր. 9: 15,16)
 - բ. իր իշխանությունը Քրիստոսից է (տես 2 Կոր. 10: 8,12)
 - գ. ինքը չի պարծենում այլ մարդկանց աշխատանքով (ինչպես ոմանք Կորնթոսում, 2 Կոր. 10:15)
 - դ. իր ռասայական ժառանգությամբ (ինչպես ոմանք Կորնթոսում, 2 Կոր. 11:17; 12: 1,5,6)
 - ե. իր եկեղեցիներով
 - (1) Կորնթոս (2 Կոր. 7: 4,14; 8:24, 9: 2, 11:10)
 - (2) Թեսալոնիկե (տես 2 Թես. 1:4)
 - (3) նրա վստահությունը Աստծու մխիթարության և փրկության մեջ է (տես 2 Կոր. 1:12)
- Բ. ոչ պատշաճ
 - 1. հրեական ժառանգության առնչությամբ (տես Հո. 2: 17-23; 3:27; Գաղ. 6:13)
 - 2. Կորնթոսի եկեղեցում ոմանք պարծենում էին
 - ա. տղամարդկանցով (տես 1 Կոր. 3:21)
 - բ. իմաստությամբ (տես 1 Կոր. 4: 7)
 - գ. ազատությամբ (տես 1 Կոր. 5: 6)
 - 3. կեղծ ուսուցիչները փորձեցին պարծենալ Կորնթոսի եկեղեցում (տես 2 Կոր 11:12)

▪ «Չ՞գիտե՞ք որ» Սա Պողոսի կողմից հաճախ օգտագործվող բնութագրիչ արտահայտությունն է, որը վերաբերում է այն բաների, որոնք պետք է իմանային հավատացյալները, նախկինում նրանց հաղորդած բաները, բայց որոնք, ըստ երևույթին, հաճախ մոռացվել էին (այսինքն, իրենց գործողությունների և կեցվածք պատճառով) (տես Հո. 6:16; 11:2; 1 Կոր. 3:16; 5:6; 6:2,3,9,15,19;9:13,24):

▪ «Խմորը» Սա վերաբերում է հրեական առակին (տես Մաթ. 16:6,12; Գաղ. 5:9), խմորիչի մասին, սովորաբար բացասական իմաստով, խառնաշփոթի համեմատությամբ: Այնուամենայնիվ, երբեմն

փոխաբերությունն ունի դրական կողմ (տես Մաթ. 13:33, Ղուկ. 13:20-21), ինչը ցույց է տալիս, որ իմաստը կապված է կոնտեքստին:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԹԹԽՍՈՐ
SPECIAL TOPIC: LEAVEN**

«Թթխմոր» տերմինը (BDB 329, KB 329, հունարեն, *zumē*) օգտագործվում է երկու իմաստով թե չին և թե Լոր Կտակարանում.

1. Ապականության իմաստով և, հետևաբար, չարի խորհրդանիշ
ա. Ելից 12: 15,19; 13: 3,7; 23:18; 34:25; Ղև. 2:11; 6:17; 2 Օր. 16: 3
բ. Մաթ. 16: 6,11-12; Մարկ. 8:15; Ղուկ. 12:1; Գաղ. 5: 9; 1 Կոր. 5: 6-8
2. ներթափանցման իմաստով և, հետևաբար, ազդեցության պատկեր է, ոչ թե չարի խորհրդանիշ
ա. Ղև. 7:13; 23:17; Ամովս 4: 5
բ. Մաթ. 13:33; Ղուկ. 13: 20-21

Միայն կոնտեքստը կարող է որոշել այս բառի իմաստը (բոլոր բառերից որն է ճիշտը):

Ինչ վերաբերում է անթթխմոր հացին, իսրայելացիները չկարողացան սպասել մինչև առավոտ, որ հացը բարձրանար: Ելիցի գիշերը այս մանրամասնությունը հանգեցրեց նրան, որ Ջատկի տոնը գուգորդվում էր գյուղատնտեսական տոնով (տես Ելից 12: 15-20; 23: 14-17; 34:18):

Իմորիչը պարբերաբար օգտագործվում էր զոհաբերության մեջ (տես Ղև. 7:13; 23:17), բայց հետո դարձավ մեղքի և ապստամբության խորհրդանիշ: Ֆերմենտացիան/խմորումը դիտվել է այս խորհրդանշական իմաստով, որպես հնարավորություն Իսրայելի համար առանձին հիմքով ուսումնասիրելու իրենց կյանքը, թե արդյոք ՅԱՀՎԵԻ նկատմամբ որևէ ապստամբության կամ անհնազանդության նշան եղել է: Քանի որ Քավության օրը (Ղև. 16) գործում էր ազգային մակարդակով, Անթթխմոր հացի տոնը գործում էր անհատական կամ ընտանեկան մակարդակով:

Այս ամենամյա տոնակատարությունը, զուգորդվելով Ջատկի տոնի հետ, պահպանեց ՅԱՀՎԵԻ շնորհքի փրկությունը, որ երբևէ եղել է Իր ժողովրդի մտքերին ու սրտերին: Որպես շնորհք և խոստում, ազատագրեց Եգիպտոսից, այնպես որ Իսրայելը կախված էր այդ անփոփոխ աստվածային հատկանիշներից, փրկելու նրան, քանի որ տարիներն անցնում էին (տես Ելից 13: 8, 14; 2 Օր. 4: 9; 6: 2, 7, 20- 21):

5:7 «Դէն գցեցէք հին խմորը» Սա աօրիստ ներգործական հրամայական է: Ամեն տարի Ջատկից առաջ հրեական սովորություն էր տանից հանել խմորը (տես Ելից 12:15): Տարեկան ծիսակարգը ապաշխարության խորհրդանիշ էր:

Արևելահայերեն «որ նոր զանգուած լինէք, ինչպէս որ անխմոր էք»

Արևմտահայերեն «որպէս զի ըլլաք նոր զանգուած լինէք, առանց թթխմորի»

NASB «դուք կարող էք նոր միտք լինել, ճիշտ այնպես, ինչպէս դուք իսկապես անխմոր էիք»

NKJV «դուք կարող էք նոր մի կտոր լինել, քանի որ դուք իսկապես անխմոր էք»

NRSV «Դուք կարող էք նոր խմբաբանակ լինել, քանի որ դուք իսկապես անխմոր էք»

TEV «այնպես, որ դուք ամբողջովին մաքուր կլինէք, այն ժամանակ դուք կդառնաք խմորի նոր փաթեթում, առանց որևէ խմորիչի, քանի որ իսկապես զիտեմ, որ իրականում դու ես»:

NJB «այնպես, որ դուք կարողանաք լինել թարմ խմոր, անխմոր, ինչպէս դուք էք»

Սա ցույց է տալիս Պողոսի ԲԱՐՈՅԱԿԱՆ հրամանի տիպային համադրությունը, կապված ԴԻՐՔԱՅԻՆ դրույթի հետ: Եթե մենք Քրիստոսում ենք, մենք պետք է դառնանք Քրիստոսանման ապրելակերպի մեջ: Նրանք Աստծո ժողովուրդն էին (անթթխմոր), բայց դա կլինի վախճանաբանական Աստծո ժողովուրդ (նոր զանգված):

Արևելահայերեն «որովհետև մեր զատիկը մորթուեցաւ մեզ համար՝ Քրիստոսը»
Արևմտահայերեն «Վասն զի Քրիստոս մեր զատիկը մեզի համար զոհուեցաւ»

NASB «Որովհետև Քրիստոսը՝ մեր Չատիկը նույնպէս զոհվեց»
NKJV «Քանի որ Քրիստոսը, մեր Չատիկը, մեզ համար զոհաբերվեց»
NRSV «Մեր Չատիկի տունը պատրաստ է, հիմա, այն Քրիստոսը, մեր Չատիկի գառը, զոհվեցավ»
TEV «Չատիկի տունը պատրաստ է, հիմա, երբ Քրիստոսը, մեր Չատիկի գառը, զոհվեցավ»
NJB «Քանի որ մեր Չատիկը զոհաբերվեց, այսինքն, Քրիստոսը»

Պողոսը պատմում է Քրիստոսի մահվան մասին Հին Կտակարանի Չատիկի Գառան գաղափարով (տես Ելից 12:15; 13:7): Սա Նոր Կտակարանի մի քանի տեղերից մեկն է, որտեղ այս կապը հատուկ ձևով հաստատվում է.

1. Հովհաննես Մկրտիչը տեսավ այս կապը և կոչեց Հիսուսին «Ահա Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը» Հովհ. 1:29-ում:
2. Հովհ. 19:36-ում օգտագործվում է մեջբերում Ելից 12:46 Եգիպտոսի Չատիկը:

5:8 «Ուստի տօն կատարենք» Սա ներկա ներգործական ստորադասական է (հորդորող ստորադասական գործողության կոչ է անում): Այն վերաբերում է միակ Հին Կտակարանի ծովի օրվան (Ղև. 16), որը կոչվում է Քավության օրը 1 Կոր. 5:7, իսկ 1 Կոր. 5:7բ և 8-ը վերաբերում են Չատիկի տոնին (տես Ելից 12): Սա վերաբերում է մեր շարունակական ապրելակերպին, քանի որ Քրիստոսի աշխատանքը մեզ համար է և մեր մեջ է, բայց պայմանականության տարրով (այսինքն, ստորադասական եղանակ):

- **«ոչ թե հին խմորով»** Սա վերաբերում է Քրիստոսի Նոր Ուխտին (տես Եր. 31:31-34; Եզ. 36:22-36): Այս նոր ուխտը բացառում է մարդկային պարծանքը և ամբարտավանությունը: Քրիստոսի մահը աստվածաշնչյան հայտնության ջրբաժանն է:
- **«եւ ոչ էլ չարութեան եւ անզգամութեան խմորովը»** Կոնտեքստում և հակառակը, Պողոսը պնդում է անհամապատասխանությունը, Կորնթոսի տնային եկեղեցիների որոշ խմբակցությունների ոչ պատշաճ, նույնիսկ չար, շարժառիթներն ու գործողությունները:
- **«այլ մաքրութեան»** Այս հազվագյուտ խոսքը հնարավոր է կազմված է «արևի լույսի» և «դատավորի» բարդ տերմինից: Այն փոխանցում է անխուսափելի, մաքուր մտադրությունների գաղափարը (տես 1 Կոր. 5:8; 2 Կոր. 1:12; 2:17; Փիլ. 1:10; 2 Պետ. 3:1):
- **«ճշմարտութեան»** *alētheia* ստուգաբանությունը «բացահայտել, անթույլատրելիություն, հստակ արտահայտվելն» է, որը զուգահեռ է «անկեղծության» խոր իմաստի հետ: Պողոսը մտահոգված է շարժառիթներով: Տես Հատուկ Թեմա 2 Կոր. 13:8:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 5:9-13
ՊԳրեցի ձեզ թղթումը չ'խառնուիլ պոռնիկների հետ: ¹⁰Եւ ոչ թե ամենեւին այս աշխարհքի պոռնիկների հետ, կամ ազահների հետ, կամ յափշտակողների հետ, կամ կռապաշտների հետ, ապա թե ոչ՝ պէտք էր ձեզ որ հենց աշխարհքիցը դուրս գնայիք: ¹¹Բայց հիմա գրեցի ձեզ՝ չ'խառնուիլ, որ եթե մէկը, որ եղբայր է անուանուած, լինի պոռնիկ, կամ ազահ, կամ կռապաշտ, կամ նախատող, կամ արբեցող, կամ յափշտակող, այնպիսիին հետ հաց էլ չ'ուտել: ¹²Որովհետև ինձ ի՞նչ պէտք է՝ որ դրսիններին էլ դատեմ. չէ՛ որ դուք ներսիններին պիտի դատեք: ¹³Իսկ դրսիններին Աստուած կ'դատէ.

բայց դուք չարք ձեր միջոցը վեր առեք:

5:9 «Գրեցի ձեզ թղթումը» Սա, հավանաբար, վերաբերում է կորած նամակին (տես A, T, Robertson, *Word Pictures in the New Testament*, էջ 115, և M. R. Vincent, *Word Studies in the New Testament*, էջ 769): Հնարավոր է, որ Պողոսի նամակների մի մասը կորել է (տես Կոր. 4:16) կամ դա կարող է լինել նամակային ոճի աօրիստ (տես 1 Կոր. 9:15), որը վերաբերում է 1 Կորնթացիսին, (տես 1 Կոր. 5:11): Տես 1 Կորնթացիսի Ներածությունը, VII. Գ.:

▪ **«պոռնիկներ»** Սա հունարեն *pornos* տերմինն է (տես 1 Կոր. 5:9,10,11; 6:9): Այն վերաբերում է «անբարոյականությանը» (*porneia*, տես 1 Կոր. 5:1 [երկու անգամ]; 6:13,18; 7:2; 2 Կոր. 12:21) և «անբարոյականություն գործելուն» (*porneuō*, տես 1 Կոր. 6:18; 10:8):

Կորնթոսի այս նոր հավատացյալները հիմնականում հեթանոսներ էին (հավանաբար հռոմեացիներ): Հեթանոսները երկրպագում էին հարբեցողության և սեռական գործողությունների իրենց աստվածների տաճարներում և հատուկ հանրային և մասնավոր ընթրիքներում: Նրանց նոր հավատքը Քրիստոսի հանդեպ դեռևս վարակված էր իրենց հեթանոս անցյալով և մշակույթով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՉԱՐ ԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ
SPECIAL TOPIC: VICES AND VIRTUES IN THE NT

Նոր Կտակարանում չար արարքների և առաքինությունների ցանկերը միասին են թվարկված: Հաճախ նրանք արտացոլում են թե ռաբբիական և թե մշակութային (հելլենիստական) ցանկերը: Նոր Կտակարանի հակապատկեր հատկանիշները կարելի է տեսնել հետևյալում.

	Չար արարքներ	Առաքինություններ
1. Պողոս	Հռ. 1:28-32 Հռ. 13:13 1 Կոր. 5:9-11 1 Կոր. 6:10 2 Կոր. 12:20 Գաղ. 5:19-21 Եփ. 4:25-32 Եփ. 5:3-5 ---	---
	Կոր. 3:5,8 1 Տիմ. 1:9-10 1 Տիմ. 6:4-5 2 Տիմ. 2:22a, 23 Տիտոս 1:7, 3:3	Հռ. 12:9-21 ---
	---	1 Կոր. 6:6-9 2 Կոր. 6:4-10 Գաղ. 5:22-23 ---
	---	Փիլ. 4:8-9 Կոր. 3:12-14 ---
	---	---
	---	2 Տիմ. 2:22b,24 Տիտոս 1:8-9; 3:1-2
2. Հակոբոս	Հակոբոս 3:15-16	Հակոբոս 3:17-18
3. Պետրոս	1 Պետ. 4:3 2 Պետ. 1:9	1 Պետ. 4:7-11 2 Պետ. 1:5-8
4. Հովհաննես	Հայտ. 21:8; 22:15	---

5:10 Պողոսի նամակը սխալ էր հասկացվել: Պողոսը հորդորեց նոր հավատացյալներին փախչել անբարոյականությունից: Այնուամենայնիվ, ոմանք դա մեկնաբանեցին որպես «երբեք չհամագործակցել»: Պողոսը պետք է պարզաբաներ իր միտքը: Հավատացյալները ապրում են ընկած աշխարհում; անհնար է չլուսել անբարո մարդկանց հետ (հատկապես եթե լրջորեն ընդունենք Մար. 28:19): Պողոսը նկատի ուներ, որ թույլ չտան, որ ակտիվ հեթանոսները լինեն ձեր ուխտի եղբայրը,

Եկեղեցու անդամները կամ նույնիսկ լավագույն ընկերը: Մա «*sunanamignumi*» տերմինի ներկա չեզոք ինֆինիտիվ է, որը նշանակում է «խառնելվել» (տես 1 Կոր. 5:9,11; 2 Թես. 3:6,14): 10-11-րդ համարները հստակ պատկերացում են տալիս Կորնթոսի եկեղեցու մշակութային իրավիճակի մասին:

5:11

Արևելահայերեն «որ եթէ մեկը, որ եղբայր է անուանուած»

Արևմտահայերեն «այսինքն եթէ եղբայր մը ըլլայ»

NASB «ցանկացած անվանված եղբայր»

NKJV «որևէ մեկը եղբոր անունով»

NRSV «ով որ կրում է եղբոր կամ քրոջ անունը»

TEV «մարդ, ով իրեն անվանում է հավատացյալ»

NJB «որևէ մեկը եղբոր անունով է գնում»

Այս արտահայտությունը ներկա կրավորական դերբայ է, որը կապում է երրորդ կարգի պայմանական նախադասությունը: Այն վերաբերում է այն մեկին, ով կրում է Քրիստոսի անունը (տես Եփ. 5: 3) կամ կանչում է Քրիստոսի անունը (տես Հռ. 10:9-13; Փիլ. 2:11): Քրիստոսի անունը վերցնել, նշանակում էր վերցնել Նրա բնավորությունը: Հասկանալի է, որ Պողոսը (ինչպես Հիսուսը) հավատում էր, որ մարդու կենսակերպը բացահայտում է իր իսկական ինքնությունը (տես Մաթ. 7:15-23): Մասնագիտությունը պետք է համապատասխանի ավետարանի գիտելիքին, բնակվող Հոգուն, անձնական հնազանդությանը և հաստատակամությանը:

- **«նախաստող»** Տես Ծանոթագրություն 1 Կոր. 4:12:
- **«եթէ»** Մա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը նշանակում է հնարավոր գործողություն: Պողոսի գրվածքներում մարմնի մեղքերի մասին տարբեր ցանկեր կան (տես Հռ. 1:29-37; 1 Կոր. 5:10-11; 6:9-10, 2 Կոր. 12:20; Գաղ. 5:19-21; Եփ. 4:31; 5:3-4; Կող. 3:5-9):
- **«այնպիսին հետ հաց էլ չ'ուտել»** Մա կարող է վերաբերել Տիրոջ Ընթրիքին, բայց կարող է վերաբերել սոցիալական կապին (տես 1 Կոր. 10:27): Հռոմեական մշակույթի ճաշկերույթները հաճախ հնարավորություններ էին անբարոյականության համար:

5:12 Պողոսն ու եկեղեցին պետք է զբաղվեին անդամներով (1 Կոր. 5:12 ակնկալում է «այո» պատասխան), բայց հավատացյալները պետք է թույլ չտան, որ Աստված զբաղվի անդամների հետ: Հավատացյալները չպետք է դատեն միմյանց (տես Մաթ. 7:1, 14:1-15: 3), բայց

1. Մենք պետք է քննենք միմյանց պտուղները առաջնորդության պաշտոնի համար (տես 1 Կոր. 6:1-3; Մաթ 7)
2. Մենք պետք է ցուցաբերենք եկեղեցական կարգապահության, երբ եկեղեցու հեղինակությունը վտանգի տակ է

Մա հաճախ լավ գիծ է: Պողոսը պնդում է, որ 1 Կոր. 5:1-ի մեղավոր մարդը պետք է տեղադրվի Աստծո դատաստանի տիրություն (այսինքն՝ եկեղեցուց դուրս):

Զարմանալի է, թե ինչպես է այս կոնտեքստը վերաբերում ժամանակակից հասարակություններին, որտեղ հավատացյալներն ու անհավատները հնարավորություն ունեն քվեարկությամբ կարգավորել սոցիալական նորմերը: Արդյո՞ք հավատացյալները պետք է ակտիվորեն մասնակցեն քաղաքական գործընթացին: Այս կոնտեքստը սահմանափակվում է եկեղեցու կարգապահության վերաբերյալ դատավճիռով, այլ ոչ թե արևմտյան, ժամանակակից ժողովրդավարությամբ: Հավատացյալներն երկու տիրույթի քաղաքացիներն են՝

պարտավորություններով և արտոնություններով: Աստծո Հոգին, Աստծո կամքը և Աստծո Գիրքը օգնում են մեզ, որպես հավատացյալներ, գտնելու մեր ճանապարհը այս ընկած աշխարհում, բայց անհավատները շահագործվում և մանիպուլյացվում են մեղքով, ես-ով և Մատանայի կողմից: Նրանք կարիք ունեն մեր վկայությանը և կարեկցանքին, ոչ թե մեր ինքնաարդարացնող դատապարտությանը: Նրանք չեն կարողանում հասկանալ մեր շարժառիթները, նպատակները և գործողությունները:

Երբ և ինչպես պետք է քրիստոնյաները «դատեն» միմյանց խնդիր է մի քանի հունարեն ձեռագրերի համար՝ այս տեքստը փոխելու համար:

1. Շատ վաղ պապիրուսի ձեռագիր P⁴⁶ (մոտ 200թ.), ինչպես նաև Bahairic Coptic թարգմանությունը (3-րդ դար) և Peshitta Syriac թարգմանությունը (5-րդ դար) պարզապես բաց են թողել բացասական և թարգմանել նախադասությունը որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, «դատեք նրանց ովքեր ներսում են [եկեղեցի]» (տես Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*, էջ 551):
2. Sahidic Coptic թարգմանությունը (3-րդ դար) նախորդ նախադասությունը բացասական է դնում, «Որովհետև ինձ ի՞նչ պետք է՝ որ դրսիններին էլ դատեմ. չէ՞ որ դուք ներսիններին պիտի դատեք»: Դատեք նրանց, ովքեր ներսում են, (Metzger, էջ 51):
3. UBS⁴ տեքստը նույնիսկ չի ընդունում այդ տարբերակների հնարավորությունը որպես բնօրինակ:

5:13 Պողոսը հավանություն տվեց իր փաստարկին հրեական տեսանկյունից, ակնարկելով Մովսեսի գրվածքները (տես 2 Օր. 13:5; 17:7,12; 19:19; 21:21; 22:21,24; 24:7): Եթե եկեղեցին հանդուրժում է (նույնիսկ փառքով) անբարոյական անդամներին, նրանք կազդեն ամբողջ եկեղեցու վրա (տես 1 Կոր. 5:11):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ինչո՞ւ եկեղեցիներն այսօր չեն կատարում եկեղեցական կարգապահություն:
2. Ինչպե՞ս ենք վերաբերվում Պողոսի առաքելական իշխանությանը տեղական եկեղեցու իշխանության հետ:
3. Ի՞նչ է նշանակում մատնել որևէ մեկին սատանային նրա մարմնի ոչնչացման համար:
4. Պողոսը քանի՞ նամակ գրեց Կորնթոսին:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 6

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Անհավատներից առաջ օրենքին դառնալ	Մի հետապնդեք եղբայրներին	դատական հայցեր հեթանոսների աստյաններում	Դատավճիռներ քրիստոնյա եղբայրների դեմ	Դիմել հեթանոս աստյաններին
6:1-11	6:1-11	6:1-6 6:7-8	6:1-6 6:7-11	6:1-8 6:9-11
փառավորեք Աստծուն ձեր մարմնում	փառավորեք Աստծուն մարմնով և հոգով	Զգուշացում թուլության դեմ 6:9-11	Օգտագործեք ձեր մարմինները Աստծո փառքի համար	Սեռական անբարոյականություն
6:12-20	6:12-20	6:12-20	6:12-14 6:15-17 6:18-20	6:12-17 6:18-20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՅՄԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ես ունեցել եմ մի քանի փաստաբաններ, որոնք տարիներ շարունակ հարցնում էին ինձ, թե ինչպես է այս կոնտեքստն առնչվում մեր ժամանակակից հասարակությանը:

Նախ, որևէ մեկին դատարան քարշ տալու արգելքը (նույնիսկ մեկ այլ քրիստոնյայի): Կարելի է պնդել, որ ժամանակակից դատարանները տարբերվում են հեթանոսական դատարաններից, բայց ինչպե՞ս: Մեր օրենքի մեծ մասը հիմնված է նաև հռոմեական օրենքի վրա: Այսօր որոշ դատավորներ հավատացյալներ են, բայց դա չպետք է ազդի նրանց դատական որոշումների վրա:

Թվում է, թե մի քանի հարցեր են ներառված:

1. Դատավարության շարժառիթը և նպատակը կարևոր է, բայց ոչ միայն գործի իրավական հիմքը: Մենք ապրում ենք կրոնական հասարակության մեջ, ինչպես հին Աթենքում: Հաճախ հպարտությունը, փողը կամ վրեժը իրական հարցերն են:
2. Ազահ, դատարկ կամ զայրացած քրիստոնյաների սոցիալական բախման արդյունքը բաց դատարանում պետք է չեղյալ համարվի: Յուրաքանչյուր հավատացյալ ունի համագործակցող պարտականություն Աստծո Թագավորության համար: Մեր վկայությունը շատ կարևոր է:
3. Մակայն եկեղեցին հավատացյալների միջև փաստաբանի արդյունավետ միջոց չի տրամադրել: Չկա եկեղեցական ֆորում հավատացյալների համար հրապարակավ արտահայտելու և զբաղվելու այն հարցերով, որոնք կարևոր են նրանց համար, կամ, իրոք, անարդարացի են:
4. Հնարավոր է, մեկ լուծումը քրիստոնյա իրավաբանների ասոցիացիան է՝ հոգևոր ռեսուրսներով (այսինքն, Սուրբ Գիրքը, աստվածային իմաստությունը և այլն), ոչ միայն իրավական նախադեպը, որը վերաբերում է հավատացյալներին առնչվող իրավական հարցերին: Հավատացյալները (այսինքն, հավատացյալ իրավաբանները), ովքեր զգում են, որ ներգրավված են դատական գործերում, պետք է խնդրեն Աստծո առաջնորդությունը և ուղեցույցեր ստեղծեն, որով նրանք ընտրում են օրենքի կիրառումը: Սա կարող է զարգանալ հավատացյալների միջև փաստաբանների համար ֆորումի մեջ:

Թեև Նոր Կտակարանը պատմականորեն և մշակութային առումով պայմանավորված է, բայց մարդկության հիմնական խնդիրներն ու միտումները ոչ: Աստված խոսում է այս տեքստերի միջոցով և հավատացյալները պետք է լսեն Նրա խոսքը և կամքը, չնայած ոչ առաջին դարում հունահռոմեական կատեգորիաներին: Այս տեքստերը կոչ են անում հավատացյալներին լինել ավելի քիչ կրոնական և ավելի շատ Քրիստոսանման: Նրանք կոչ են անում եկեղեցուն ապահովել ֆորում (ինչպես տաճարի դատարաններ): Նրանք մեզ գոռում են, որ անձնական կորուստն ավելի լավն է, քան Թագավորության (այսինքն, ավետարանը) կորուստը:

Փոքր եկեղեցու կարգապահության օրը, հռետորների միջև ամուսնալուծությունը, ազահ, կեղծավոր հասարակության հետ միասին, 5-րդ և 6-րդ գլուխները կարևորագույն տեքստ են, որ մենք ուսումնասիրենք և կիրառենք, թե համագործակցող (եկեղեցի և եկեղեցիներ) և թե առանձին: Ամերիկյան ազատությունները հիմնված են օրենքի շրջանակներում հավասարության վրա: Սա նշանակում է որպես հավատացյալներ մենք ապրում ենք երկու ոլորտներում կամ բնության մեջ, մեկ քաղաքացիական և մեկ հոգևոր: Մենք համարում ենք չոչնչացնել մեր իրավական համակարգը, այլ պետք է հիշենք մեր երկնային քաղաքացիությունը: Երկու ոլորտներն էլ ունեն իրավունքներ և պարտականություններ: Բայց մեկ ոլորտն ունի առաջնահերթություն (տես 1 Կոր. 6: 19-20):

Որոշ հավատացյալներ կարող են դատավարության և տարբեր պատճառներով դատական վիճակի պատճառ դառնալ: Մենք բոլորս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Այս կոնտեքստը կարող է մեծացնել այդ լույսը:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 6:1-6

1Ձեզանից մեկն՝ եթե բան ունենայ իր ընկերի հետ, համարձակվո՞ւմ է անիրաւների առաջին դատուիլ եւ ոչ թէ սուրբերի առաջին: 2Կամ թէ չ՛գիտէ՞ք որ սուրբերն աշխարհքս կ'դատեն. Եւ եթէ ձեզանով աշխարհքը դատվում է, ապա չէ՞ք արժան անարգ բաների դատաստան անելու: 3Չ՛գիտէ՞ք որ մենք հրեշտակներին կ'դատենք. Էլ ո՞րքան աւելի երկրաւոր բաները: 4Եթէ երկրաւոր բաների համար դատաստան ունիք, եկեղեցու ցած մարդկանցը ձեզ համար դատաւոր նստեցրէք: 5Ձեզ ամաչեցնելու համար եմ ասում. Այնքան մի իմաստուն մարդ էլ չկա՞յ ձեր միջումը, որ կարող լինի իրավունք որոշել իր եղբայրների մէջ: 6Այլ եղբայր եղբօր հետ դատաստան է գնում, եւ այն էլ անհաւատների առաջին:

6:1

Արևելահայերեն «բան»

Արևմտահայերեն «բան մը»

NASB «գործ»

NKJV «հարց»

NRSV «դժբախտություն»

TEV, REB «վեճ»

NJB «բողոք»

Peshitta «դատական գործ»

Սա օգտագործվում է Եգիպտոսում հայտնաբերված կոյնե հունարեն մագաղաթում (1) «գործողություն» կամ «գործ»; (2) «դատական գործ»; (3) «անհանգստություն» կամ «դժվարություն»; (4) «բիզնես» կամ «առևտուր» (տես Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*, էջ 532): Այս կոնտեքստի երկրորդ համարը լավագույնն է: Մենք գիտենք Աթենքյան փաստաթղթերից, որ հույները մշակութային հակումներ էին հակված: Նույնը, որոշ չափով, վերաբերում է նաև հռոմեացիներին: Պողոսի օրոք Կորնթոսը հունական չէր, այլ հռոմեական (տես Bruce W. Winter, *After Paul Left Corinth*, Eerdmans, 2001):

Արևելահայերեն «իր ընկեր»

Արևմտահայերեն «իր ընկերին»

NASB «իր հարևանը»

NKJV, NRSV, NJB, REB «ուրիշ»

TEV «մեկ այլ քրիստոնյա»

Peshitta «նրա եղբայրը»

Սա բառացիորեն *heteros* է (տես 1 Կոր. 10:24; 14:17; Գաղ. 6:4): Դասական հունարենում տարբերություն կար *alla* (այսինքն, նույն տեսակի մեկ ուրիշը) և *heteros* միջև (այսինքն, այլ տեսակի մեկ ուրիշ): Այս տարբերությունը կոյնե հունարենում (ինչպես և դասական հունարեն քերականության և օգտագործման տարբերակներից շատերը) դադարում էին: Այս կոնտեքստը լավ օրինակ է: *Heteros-ի* օգտագործումը այստեղ, որը վերաբերում է հավատացյալին, զուգահեռ է Հռ. 13:8: Հռ. 2:1 տերմինն ունի լայն իմաստ, հավանաբար հարևան, քաղաքացի կամ հրեա: Այս հատվածի բովանդակության համար կոնտեքստային առարկություն չունեցող փաստարկ էր «սուրբերի առաջ» արտահայտությունը: Մեղավոր հարևանը, հավանաբար, չի համաձայնվի եկեղեցու դատարանի առաջ (տես Մարթ. 18:17; Հակ. 2:1-4) հավատացյալի հետ վիճաբանության մեջ մտնել:

Անշուշտ, հնարավոր է, որ Պողոսը երկու մակարդակի տարբերություն ստացավ: Հավատացյալի համար խնդիր է անհավատի դեմ դուրս գալ հեթանոսական ատյանում: Ավելի վատ է, որ հավատացյալը մեկ այլ հավատացյալի տանի հեթանոսական ատյանի առաջ: Ես նախընտրում եմ մեկնաբանել, որ 1 Կոր. 6:1 «ընկեր» նշանակում է նաև «ուխտի գործընկեր» կամ «հավատացյալ»:

- **«համարձակվել»** Այս հունարեն տերմինը (այսինքն՝ *tolmaō*) մի քանի անգամ օգտագործվում է Կորնթացիսի նամակների մեջ «ենթադրելու» կամ «հավաստիացնել համարձակություն» (տես 1 Կոր. 6:1; 2 Կոր. 6:2,10; 11:21 և Հռ. 5:7; 15:15,18; Հուդա 9):

Արևելահայերեն **«անիրանների առաջին դատուիլ»**
 Արևմտահայերեն **«անիրաներո՞ւն առջեւ դատուիլ»**

NASB, NKJV **«դատվել անիրավների առաջ»**
 NRSV **«այն բերելու ամբարիշտների դատաստանին»**
 TEV **«գնալ հեթանոս դատավորների առաջ»**
 NJB **« դատվել մեղավորների կողմից »**

Պողոսը մտահոգված չէր հավատացյալների հանդեպ անարդարացի վերաբերվելու հարցում, և քրիստոնեական խնդիրները անհավատների առաջ ներկայացնելուց: Հոգին միջանձնային հարաբերությունների բանալին է եկեղեցում, այլ ոչ թե հեթանոսական օրենքը: Ավետարանչությունն ավելի կարևոր է, քան անձնական արդարությունը:

6:2 «Կամ թե չ՛գիտե՞ք» Ծանոթագրություն 1 Կոր. 5:6:

- **«սուրբեր»** «Սուրբերը» (*hogioi*) Հին Կտակարանի «սուրբ» (*kadosh*) տերմինից է, որը նշանակում է «առանձնացնել Աստծո ծառայության համար» (տես Ելից 19:6; Գործք 7:6; 1 Կոր. 1:2; 2 Կոր. 1:1; Հռ. 1:1; Եփ. 1:1; Փիլ. 1:1; Կող. 1:2): Այն միշտ ՀՈԳՆԱԿԻ է Նոր Կտակարանում բացառությամբ մի դեպքում՝ Փիլ. 4:21, բայց նույնիսկ այնտեղ, այն օգտագործվում է խմբակային ձևով: Փրկվելու համար պետք է լինել հավատքի ուխտի համայնքի մի մասը, հավատացյալների ընտանիքը: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒԲԲԵԼ 1 Կոր. 1:2:

Աստծո ժողովուրդը սուրբ է, Հիսուսի տված արդարության պատճառով (այսինքն, սահմանական հայտարարությունը, տես Հռ. 4; 2 Կոր. 5:21): Աստծո կամքն է, որ նրանք ապրեն սուրբ կյանքեր (այսինքն, հրամայական, տես Եփ. 1:4; 4:1; 5:27; Կող. 1:22; 3:12): Հավատացյալները սուրբ են (դիրքավոր սրբացում) և կոչվում են ապրելակերպի սրբություն (պրոգրեսիվ սրբացում): Արդարացումն ու սրբացումը պետք է միասին հանդես գան: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ՍՐԲԱՑՈՒՄ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ 1 Կոր. 1:2

- **«աշխարհքս կ՛դատեն»** Թեև Հիսուսը մասնավորապես նշեց, որ Առաքյալները կդառնան դատավորներ, այդ ճշմարտության տրամաբանական ընդլայնումը այն է, որ սուրբերը նույնպես պիտի դատեն (տես Դան. 7:22,27; Մաթ. 19:28; Ղուկ. 22:28-30; Հայտ. 2:26; 3:21; 20:4): Ե՞րբ և ինչպե՞ս, սրանք բարդ հարցեր են:
- **«եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ սրբերը մասնակցելու են վերջին ժամանակվա իրադարձություններին որպես դատավորներ:

Արևելահայերեն **«ապա չէք արժան անարգ բաների դատաստան անելու»**
 Արևմտահայերեն **«ուրեմն արժանի չե՞ք այդ չնչին դատաստան անելու »**

NASB **«Դուք իրավասու չեք *սահմանելու* ամենափոքր դատերը որոշելու»**
 NKJV **«Դուք արժան չեք դատելու ամենափոքր հարցերը»**
 NRSV **«Դուք ոչ կոմպիտենտ եք փորձելու չնչին դեպքերը»**
 TEV **«չեք կարողանում դատել փոքր հարցերը»**

NJB «Դուք իրավասու չեք փոքր գործերի համար»

Սա ցնցող հեզնանք է ուղղված նրանց, ովքեր պնդում էին, որ գերազանց իմաստություն ունեն։ Այս նույն տերմինը (այսինքն, *anaxios*) օգտագործվում է Տերունական ընթրիքի ժամանակ Կորնթոսի եկեղեցիների ոչ պատշաճ վարքագծի համար (տես 1 Կոր. 11:27,29)։ Այս անհաս հավատացյալները, որոնք պնդում էին, որ այնքան շատ հոգևոր պատկերացումներ ունեն, իրականում չգիտեին, թե ինչպես է ճիշտ գնահատել կամ ճիշտ գործել։

«Ամենափոքր» տերմինը *mikros*-ի գերադրական ձևն է։ Պողոսը ավելի վաղ օգտագործել էր այն 1 Կոր. 4:3։ Դրա օգտագործումը բարձրացնում է հեզնանքը։

6:3 «Զ՛գիտե՞ք որ մենք հրեշտակներին կ՛դատենք» Քերականությունն ակնկալում է «այո» պատասխան։ Հավատացյալները հոգևոր ավելի բարձր կարգ ունեն, քան հրեշտակները։ Դժվար է հավատացյալների համար, որոնք ընկել են այս մեղավոր աշխարհում, գիտակցել իրենց իրական հոգևոր վիճակը (տես 1 Կոր. 13:12)։ Հրեշտակները ստեղծվել են որպես Աստծո և փրկված մարդկության ծառաներ (տես Եբր. 1:14)։ Մարդկությունն է, որը ստեղծվել է Աստծո պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1: 26-27), այլ ոչ թե հրեշտակները։ Մարդկանց համար Հիսուսը տվեց Իր կյանքը, այլ ոչ թե հրեշտակների համար (տես Եբր. 2:14-16)։ Հավատացյալները մի օր դատելու են հրեշտակներին (այսինքն՝ ապստամբ հրեշտակներին, Ծննդ. 6; Մաթ. 25:41; 2 Պետ. 2:4-9; Հուդա 6 կամ բոլոր հրեշտակներին, որպես պատկեր համընդհանուր գերակայության համար, Դան 7:22, 27)։

Ռաբբունական աստվածաբանության համաձայն, հրեշտակները միշտ նախանձել են Աստծո սիրո, հոգածության և մեղավոր մարդկության համար զոհի տրամադրման համար։ Հրեական ապոկալիպտիկ գրականությունը նույնիսկ հաստատում է, որ Սատանայի ապստամբությունը կապված էր Աստծո Ադամի ցեղին ծառայելու հրամանի հետ։

▪ **«Էլ ո՞րքան ասելի»** Սա արտացոլում է ուժեղ կցյալ մասնիկ (*ge*), որն օգտագործվում է շեշտադրումը ցույց տալու համար (տես Moulton's *Analytical Lexicon*, Revised, էջ 75)։ Հեզնանքային հակադրությունն ակնհայտ է։

6:4 «Եթե» Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը նշանակում է հնարավոր գործողություն։

▪ **«նստեցրեք»** Այս արտահայտությունը թարգմանելու մի քանի տարբեր եղանակներ կան։ Վարկածներն են

1. սահմանական (հայտարարություն), «դուք ստեղծում եք»
2. հարցական (հարց), «դուք ստեղծու՞մ եք»
3. բացականչություն (տես NJB, NIV), «դուք ստեղծել եք»
4. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հրաման), «ստեղծել»

Բանն այն է, որ ամենափոքր քրիստոնյան պետք է կարողանա դատել պարզ և սովորական երկրային հարցերը։ Այս տարբերակը դիտելու երկու եղանակ կա, 1) այն վերաբերում է հեթանոս դատավորներին կամ (2) այն վերաբերում է եկեղեցու քիչ կարևոր անդամներին։ Եթե այո, ապա դա շարունակական հեզնանք է։

Արևելահայերեն «ցած մարդկանցը»

Արևմտահայերեն «անարգները»

NASB, NJB «ովքեր հաշիվ չունեն»

NKJV «նրանք, ովքեր ամենաքիչը գնահատում են»

NRSV, TEV «նրանք, ովքեր կանգնած չեն»

Այս տերմինը (այսինքն, *exoutheō*, վաղակատար կրավորական դերբայ) օգտագործվել է Պողոսի կողմից 1 Կոր. 1:28 ցույց տալով, որ Աստված օգտագործում է «բազային բաները», «արհամարհվածները», «այն բաները, որոնք չեն» ցույց տալու համար խառնաշփոթ աշխարհի իմաստությունը, որպեսզի Աստված փառավորվի: Այստեղ կարծես թե ենթադրում են եկեղեցում գտնվողները, ովքեր չունեն որևէ պաշտոն կամ ղեկավարության հմտություններ: Աստծո ժողովրդի ամենափոքրը ավելի աղեկվատ է Աստծու իմաստության և Հոգու խնդիրները լուծելու համար, քան լավագույն կրթված և փորձառու անհավատ աշխարհիկ դատավորները:

- **«Եկեղեցի»** Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:2

6:5 «Ձեզ ամաչեցնելու համար եմ ասում» Պողոսը հաճախ է օգտագործում «ամոթ» բառը (տես 1 Կոր. 4:14; 6:5; 15:34; 2 Թես. 3:14; Տիտ. 2:8): Ամաչելը Հոգու գործիքներից մեկն է, համոզվելու և թույլ տալու զարգանալ ճշմարտություն, վստահելի գործողություններ և կեցվածք: Այս հաստատվածը շարունակում է խայթող հեզնանքը:

- **«Այնքան մի իմաստուն մարդ էլ չկա՞ ձեր միջումը»** Սա խայթող հեզնանք էր այս ինտելեկտուալ հնարամիտ եկեղեցուն: Սա ակնհայտորեն կրկնակի բացասական հարց է, որը ակնկալում է «այո» պատասխան: Ծանոթագրություն 1 Կոր. 4:7:

6:6 « եւ այն էլ անհաւատների առաջին» Չկա հոդ, հետևաբար, շեշտը դրվում է «հեթանոս» դատավորների աշխարհիկ որակի վրա:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 6:7-8
 7Եւ հէնց արդէն բոլորովին պակասութիւն է ձեր միջումը որ դատաստաններ ունիք իրար հետ. ի՞նչու չէք աւելի դուք զրկվում. Եւ ի՞նչու չէք աւելի դուք անիրաւութիւն քաշում: 8Բայց դուք էք զրկում եւ անիրաւութիւն անում, եւ այն էլ ձեր եղբայրներին:

6:7 «բոլորովին» Ծանոթություն 1 Կոր. 5:1-ում:

- **«Եւ հէնց արդէն»** Այս արտահայտությունը (*ēdē men oun*) ենթադրում է, որ այս եկեղեցին արդեն անում էր այդ ամենը: Նրանք արդեն պարտություն էին կրել:

Արևելահայերեն «պակասութիւն»
 Արևմտահայերեն «յանցանք»

NASB, NRSV «Պարտություն»
 NKJV «անթերի ձախողում»
 TEV «ձախողվեց»
 NJB «մեղք»

Սա բառացիորեն «պակաս» է նշանակում, բայց օգտագործվում է պարտված կամ ձախողված իմաստով (տես 2 Կոր. 12:13; Հռ. 11:12; 2 Պետ. 2:19-20):

Արևելահայերեն «ի՞նչու չէք աւելի դուք զրկվում. Եւ ի՞նչու չէք աւելի դուք անիրաւութիւն քաշում»
 Արևմտահայերեն « ի՞նչու դուք անիրաւութիւն չէք կրեր, ի՞նչու դուք զրկանք չէք քաշեր»

NASB, NRSV «Ինչո՞ւ ոչ, ավելի ճիշտ, անարդարություն լինի, ինչո՞ւ ոչ ավելի շատ խաբված լինել»
 NKJV «Ինչու չէք ընդունում սխալը, ինչու չէք նախընտրում ձեզ խաբել»

TEV «Ավելի լավ չէ ձեզ համար անարդար լինել, չէ որ ավելի լավ չէ ձերբակալվել»

NJB «Ինչու չես նախընտրում տառապել անարդարության հետ, ինչու չես նախընտրում խաբված լինել»

Սրանք երկու ներկա կրավորական սահմանական են: Հավատացյալների անհատական իրավունքները ոչ այնքան կարևոր են, որքան եկեղեցու հեղինակությունն ու առաքելությունը: Արդյո՞ք քրիստոնյան կհաղթի, եթե Թագավորությունը կորցնի:

6:8 Արևմտյան եկեղեցին, որը շեշտը դնում է անհատի վրա, ավերել է ավետարանը: Մենք բաց ենք թողել նրա շարունակական շեշտը՝ ամբողջի, խմբակայինի, մարմնի վրա: Մենք քրիստոնեությունը տեսնում ենք որպես ինչ-որ բան մեզ համար անհատապես, փոխարենը ինչ-որ բան ավետարանի համար: Մենք փրկվում ենք (անհատապես), ծառայելու մարմինը (տես 1 Կոր. 12:7): Հավատացյալները պետք է զարգացնեն Նոր Կտակարանյան աշխարհայացք, տեսնեն աշխարհը Աստծո աչքերով և համագործակցեն, գլոբալ նպատակներով (այսինքն, Մաթ. 28:18-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 6:9-11

9Կամ թե չ՛գիտե՞ք որ անիրաններն Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ: Մի խաբուիք. Ոչ պտոնիկները, ոչ կռապաշտները, ոչ շնացողները, ¹⁰Ոչ իգացողները, որ արուագէտները, ոչ գողերը ոչ ազահները, ոչ արբեցողները, ոչ նախատողները, եւ ոչ յափշտակողները Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ: ¹¹Եւ մի քանիներդ այսպէսներ էիք, բայց լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝ բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը եւ մեր Աստուծոյ Հոգովը:

6:9-10 Պողոսը ակնհայտորեն անհանգստացած է անհատ քրիստոնյաների ապրելակերպի համար (տես 1 Կոր. 5:10,11; 6:9-10), որը անդրադառնում է եկեղեցու վրա: Փրկությունը ոչ միայն դատական ակտ է (այսինքն, արդարացում հավատքով), այն փոխված կյանք է (այսինքն, սրբացում կամ Քրիստոսանմանություն, տես Գաղ. 6:7): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ՍՐԲԱՅՈՒՄ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ 1 Կոր. 1:2:

Եկեղեցին եղել է, կա, և կլինի «խաբված»: Սա ներկա կրավորական հրամայական է ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործելակերպը:

6:9 «Կամ թե չ՛գիտե՞ք» Ծանոթագրություն 1 Կոր. 5:6: Սա ենթադրում է, որ հավատացյալները, իրենց փրկության և Հոգու բնակության պատճառով, պետք է իմանան այս բաները: Սակայն, մանուկ (անհաս), մարմնավոր հավատացյալները ոչ: Դրանք հոգեպես տիրում են այս ընկած աշխարհի համակարգի և դիվայինի կողմից (այսինքն, ինքնախաբված, մշակույթորեն խաբված և սատանայական խաբված, տես 1 Կոր. 12:2):

▪ **«որ անիրաններն Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ»** Պողոսը այս շեշտը դնում է երկու անգամ (1 Կոր. 6:9,10): Սա բերում է ավետարանի պարադոքսի կտրուկ հակադրության: Փրկությունը ձրի է Քրիստոսի կատարած գործի շնորհիվ, սակայն ուխտի փրկությունը պահանջում է համապատասխան և շարունակական պատասխան: Հավատացյալները, ովքեր Քրիստոսում «ուղիղ» են հռչակված, պետք է հասնեն Քրիստոսանմանության: Աստծո նպատակը միշտ եղել է ունենալ արդար մարդիկ, որոնք կարտացուեն Նրա բնավորությունը: Այս առումով Նոր Կտակարանը նման է Հին Կտակարանին: Նոր Ուխտի արմատական բնույթն (տես Եր. 31:31-34; Եզ. 36:22-36) այն է, որ փրկության մարդկային կատարումը փոխարինվել է Քրիստոսի կատարմամբ: Բայց սա չի ազդում Աստծո արդար մարդիկ ունենալու ցանկության վրա: Այն պարզապես փոխում է մեխանիզմը: Այս ավետարանական ժամանակաշրջանում հավատացյալներն առաջնորդվում են երախտագիտությամբ, այլ ոչ թե կատարման:

Այնուամենայնիվ, «սերմանելու և հնձելու» հոգևոր սկզբունքը (տես Գաղ. 6:7-10) դեռ ուժի մեջ է հավատացյալների և անհավատների համար (տես 3-րդ գլուխ): Ո՛հ, անպտուղ քրիստոնեության ողբերգությունը (տես Հովհ. 15; Հակ. 2:14-26; 1 Պետ.; 1 Հովհ.): Այն ազդում է Թագավորության, տեղական եկեղեցու, անհատի և կորածների վրա:

Կարո՞ղ է 1 Կոր. 6:9-10-ում թվարկված մեղքերը գործած քրիստոնյան փրկվել: Անշուշտ (տես 1 Կոր. 6:11): Կարո՞ղ է քրիստոնյան շարունակելով այդ մեղքերը գործել և փրկվել (տես 1 Հովհ. 3:6,9): Ոչ առանց աստվածային հետևանքների՝ Աստծո հետ հաղորդակցվելու կորուստ, Հոգու առաջնորդության կորուստ, վստահության կորուստ, խաղաղության կորուստ, արդյունավետ աղոթքի կորուստ, ճշմարիտ երկրպագության կորուստ, ուրախության կորուստ, վկայության կորուստ: Ինչպիսի՞ գին է վճարում:

Գործքում և Պողոսի գրվածքներում կան մի քանի տեքստեր, (տես Գործք 20:32; 26:18; 1 Կոր. 6:9-10; 15:50; Գաղ. 5:21; Եփ. 5:5) որոնք արտացոլում են Հիսուսի խոսքը Թագավորությունը ժառանգելու մասին (Մաթ. 25:34):

**ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՈՒՐԱՅՈՒԹՅՈՒՆ/ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (APHISTĒMI)
SPECIAL TOPIC: APOSTASY (APHISTĒMI)**

Այս հունարեն տերմինը *aphistēmi* ունի լայն իմաստային դաշտ: Այնուամենայնիվ, անգլերեն «հավատուրացություն» տերմինը առաջացել է այս տերմինից և դրա օգտագործումը կասկածի տակ է դնում ժամանակակից ընթերցողներին: Կոնտեքստը, ինչպես միշտ, բանալին է և ոչ թե առկա սահմանումը:

Սա բարդ տերմին է բաղկացած *apo* ՆԱԽԴԻՐԻՑ, որը նշանակում է «-ից» կամ «հեռու -ից» և *histēmi* «նստել», «կանգնել» կամ «շտկել»: Ուշադրություն դարձրեք հետևյալ (ոչ աստվածաբանական) կիրառություններին.

1. տեղափոխել կամ տեղաշարժել, հեռանալ ֆիզիկապես
 - ա. Տաճարից, Ղուկ. 2:37
 - բ. տնից, Մարկ. 13:34
 - գ. մարդուց, Մարկ. 12:12; 14:50; Գործք 5:38
 - դ. բոլոր բաներից, Մատթ. 19: 27,29
2. հեռացնել քաղաքականորեն, Գործք 5:37
3. հեռացնել հարաբերորեն, Գործք 5:38; 15:38, 19: 9; 22:29
4. հեռանալ իրավաբանորեն (ամուսնալուծություն), 2 Օր. 24: 1,3 (LXX) և Նոր Կտակարանում, Մատթ. 5:31; 19: 7; Մարկ. 10: 4; 1 Կոր. 7:11
5. հեռացնել պարտքը, Մատթ. 18:7
6. լքելով ցույց տալ անտարբերություն, Մատթ. 4:20; 22:27, 4:28; 16:32
7. չլքելով ցույց տալ մտահոգություն, Հովհ. 8:29; 14:18
8. թույլ տալ կամ թույլտվություն, Մատթ. 13:30, 19:14, Մարկ. 14: 6; Ղուկ. 13: 8

Աստվածաբանական իմաստով ԲԱՅՆ ունի նաև լայն կիրառություն.

1. չեղյալ հայտարարել, ներում, ներել մեղքի հանցանքը, Ելից 32: 32 (LXX); Թվոց 14:19; Հոբ 42:10 և Նոր Կտակարանում, Մատթ. 6: 12,14-15; Մարկ. 11: 25-26
2. զերծ մնալ մեղքից, 2 Տիմ. 2:19
3. անտեսել զատվելով
 - ա. Օրենքից, Մատթ. 23:23; Գործք 21:21
 - բ. հավատքից, Եզ. 20: 8 (LXX); Ղուկ. 8:13; 2 Թես. 2: 3; 1 Տիմ. 4: 1; Եբր. 3:12

Ժամանակակից հավատացյալները բազմաթիվ աստվածաբանական հարցեր են տալիս, որ Նոր Կտակարանի գրողները երբեք չեն մտածել այդ մասին: Դրանցից մեկը վերաբերվում է ժամանակակից հակվածությանը՝ հավատքն (արդարացում) առանձնացնել հավատարմությունից (սրբացում):

Աստվածաշնչում կան անձինք, ովքեր Աստծո ժողովրդի մեջ են և ինչ-որ բան է տեղի ունենում, որը պատճառ է դառնում նրանց համար հեռանալու:

I. Հին Կտակարան

- Ա. Նրանք, ովքեր լսեցին տասներկու (տասը) լրտեսների բերած լուրը, Թվոց 14 (տես Եբր. 3: 16-19)
- Բ. Կորնթյան, Թվոց 16
- Գ. Հեղիի որդիները, 1 Թագ. 2, 4
- Դ. Սավուրը, 1 Թագ. 11-31
- Ե. Սուտ մարգարեներ (օրինակներ)
 - 1. 2 Օր. 13: 1-5; 18: 19-22 (սուտ մարգարեին ճանաչելու կերպերը)
 - 2. Երեմիա 28
 - 3. Եզեկիել 13: 1-7
- Զ. Կեղծ մարգարեուհիներ
 - 1. Եզեկիել 13:17
 - 2. Նեեմիա 6:14
- Է. Իսրայելի չար առաջնորդները (օրինակներ)
 - 1. Երեմիա 5: 30-31; 8: 1-2; 23: 1-4
 - 2. Եզեկիել 22: 23-31
 - 3. Միքիա 3: 5-12

II. Նոր Կտակարան

Ա. Այս հունարեն տերմինը բառացիորեն *apostasize* է: Հին և Նոր Կտակարանները երկուսն էլ հաստատում են չար և կեղծ ուսմունքի ինտենսիվացումը նախքան Երկրորդ Գալուստը (տես Մատթ. 24:24; Մարկ. 13:22; Գործք 20: 29,30; 2 Թես. 2: 9-12; 2 Տիմ. 4: 4): Այս հունարեն տերմինը կարող է արտացոլել Հիսուսի խոսքերը սերմնացանի առակում Մատ. 13; Մարկ. 4 և Ղուկ. 8: Այս կեղծ ուսուցիչները ակնհայտորեն քրիստոնյաներ չեն, բայց նրանք ներսից էին (տես Գործք 20: 29-30; 1 Հովհ. 2:19), սակայն, նրանք կարողանում են հրապուրել և գրավել մարմնավոր հավատացյալներին (տես Եբր. 3:12):

Աստվածաբանական հարցը հետևյալն է, կեղծ ուսուցիչները երբևէ եղել են հավատացյալ: Դժվար է պատասխանել, քանի որ կային կեղծ ուսուցիչներ տեղական եկեղեցիներում (տես 1 Հովհ. 2:18-19): Հաճախ մեր աստվածաբանական կամ հարանվանական ավանդույթները պատասխանում են այս հարցին առանց հղում անելու հատուկ սուրբգրային համարներ (բացառությամբ ապացույց-տեքստի մեթոդով՝ մեջբերելով մի համար կոնտեքստից դուրս, ենթադրաբար ապացուցելու համար մեկի կողմնակալությունը):

Բ. Տեսանելի հավատք

- 1. Հուդա, Հովհ. 17:12
- 2. Միմոն Մոզը, Գործք 8
- 3. Որոնց մասին խոսվում է Մատթ. 7: 13-23
- 4. Որոնց մասին խոսվում է Մատթ. 13; Մարկ. 4; Ղուկ. 8
- 5. Հրեաները Հովհաննեսի Ավետարանում 8: 31-59
- 6. Աղեքսանդրոսը և Հիմենոսը, 1 Տիմ. 1: 19-20
- 7. Որոնց մասին խոսվում է 1 Տիմ. 6:21
- 8. Հիմենոսը և Փիլետոսը, 2 Տիմ. 2: 16-18
- 9. Դեմասը, 2 Տիմ. 4:10
- 10. Կեղծ ուսուցիչները, 2 Պետ. 2: 19-22; Հուդա հհ. 12-19
- 11. հակաքրիստոսներ, 1 Հովհ. 2: 18-19

- Գ. Անպտուղ հավատք
1. 1 Կոր. 3: 10-15
 2. 2 Պետ. 1: 8-11

Մենք հազվադեպ ենք մտածում այս տեքստերի մասին, որովհետև մեր սիստեմատիկ աստվածաբանությունը (Կալվինիզմ, Արմինիանիզմ և այլն) թելադրում է լիազորված պատասխանը: Խնդրում եմ նախապես չդատել ինձ, քանի որ առաջ եմ բերել այս թեման: Իմ մտահոգությունը պատշաճ հերմենևտիկ վերլուծություն կատարելն է: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի մեզ հետ և ոչ թե փորձենք ձուլել այն նախադրված աստվածաբանության հետ: Սա հաճախ ցավոտ և ցնցող է, քանի որ մեր աստվածաբանության մեծ մասը հարանվանական է, մշակութային կամ հարաբերական (ծնող, բարեկամ, հոգևոր հովիվ) ոչ թե աստվածաշնչյան (տես Հատուկ Թեմա: Ի՞նչ է նշանակում ընդունել, հավատալ, խոստովանել, դավանել և կանչել): Ումանք, ովքեր Աստծո ժողովրդի մեջ էին, պարզվում է այլևս Աստծո ժողովրդի մեջ չեն (օրինակ, Հո. 9: 6):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ (1 Պետրոս 1-ից)
SPECIAL TOPIC: BELIEVER'S INHERITANCE

Հին Կտակարանում բացի Ղևիի ցեղից բոլոր ցեղերը որպես ժառանգություն ստացան հողատարածք (տես Հեսու 14-22): Ղևտացիները, որպես քահանաների ցեղ, տաճարի սպասավորներ և տեղական վարդապետներ, ՅԱՀՎԵԻՆ համարում էին որպես իրենց ժառանգություն (տես Սաղ. 16:5; 73:23-26; 119:57; 142:5; Ողբ 3:24): Նոր Կտակարանի գրողները հաճախ վերցնում էին Ղևտացիների իրավունքները և առանձնաշնորհումները և դրանք կիրառում բոլոր հավատացյալների համար: Սա նրանց կողմից կիրառվող կերպ էր պնդելու, որ Հիսուսի հետևորդներն են Աստծո իրական ժողովուրդը և հիմա բոլոր հավատացյալները կանչված են ծառայելու որպես Աստծո քահանաներ (տես 1 Պետ. 2:5,9; Հայտն. 1:6), ինչպես որ Հին Կտակարանը պնդում է Իսրայելի համար (տես Ելից 19:4-6): Նոր Կտակարանը չի շեշտադրում որևէ քահանայի՝ իր յուրահատուկ պարտավորություններով, այլ շեշտում է այն ճշմարտությունը, որ բոլոր հավատացյալներն են քահանաներ, որը պահանջում է միասնական ծառայողական վերաբերմունք (տես 1 Կոր. 12:7):

Նոր Կտակարանյան Աստծո ժողովրդին տրվել էր Հի Կտակարանի համաշխարհային ավետարանչության առաջադրանքը (տես Ծննդ. 12:3; Ելից 19:5բ; Մաթ. 28:18- 20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը): Սա Հիսուսի կողմից տրված գաղափար է, որպես ստեղծագործության սեփականատեր, քանի որ ստեղծագործության ժամանակ Նա էր Հոր գործակալը՝ կատարողը (տես Հովհ. 1:3,10; 1 Կոր. 8:6; Կող. 1:16; Եբր. 1:2-3): Մենք ժառանգակիցներ ենք, քանի որ Նա է ժառանգորդը (տես Հո. 8:17; Գաղ. 4:7; Կող. 3:24): Սուրբ Գիրքն ասում է, որ հավատացյալները ժառանգելու են (տես Գործք 20:32; 26:18; Եփ. 1:4; Կող. 1:12; 3:24) շատ բաներ՝ Հիսուսի հետ իրենց ընտանեկան կապի շնորհիվ, Ով ամեն ինչի ժառանգորդն է (տես Եբր. 1:2):

Ուստի, նրանք հետևյալ բաների ժառանգակիցներն են (տես Հո. 8:17; Գաղ. 4:7)՝

1. Թագավորության (տես Մաթ. 25:34; 1 Կոր. 6:9-10; 15:50; Եփ. 5:5)
2. Հավիտենական կյանքի (տես Մաթ. 19:29; Եբր. 9:15)
3. Աստծո խոստումների (տես Եբր. 6:12)
4. Աստծո խոստումների Նրա պահպանության (տես 1 Պետ. 1:4-5)

▪ **«Մի խաբուիք»** Սա ներկա կրավորական հրամայական է (*The Expositor's Bible Commentary*, հատոր 10, էջ 223, ասում է սա ներկա չեզոք է, այսինքն, «Դադարեցրեք ձեզ խաբելը») ժխտական մասնիկի հետ, որը սովորաբար նշանակում է «դադարեցնել գործընթացը»: Սա *asyndeton* 1 Կոր. 6:18 նման, որը Կոյնե հունարենի քերականական շեշտադրման ձև էր, որը բերեց այն ընթերցողի կամ լսողի ուշադրությանը:

Արևելահայերեն «պոռնիկներ»
Արևմտահայերեն «պոռնիկներ»

NASB, NKJV, NRSV «պոռնիկներ»
TEV «անբարո մարդիկ»
NJB «սեռական անբարոյական»

Սա սեռական անբարոյականության ընդհանուր տերմին է (տես 1 Կոր. 5:1 (երկու անգամ), 9,10; 6: 9,11,13,18; 7:2; 10: 8; 2 Կոր. 12:21): 9-10-րդ համարներում թվարկված են առաջին դարի հեթանոսական պաշտամունքի գործելակերպի հետ կապված մեղքերը (տես 1 Կոր. 5:9-11), որոնք կանոնավոր կերպով ներգրավված էին Աստծո անունով անբարոյական սեռական գործունեությամբ:

- **«կռապաշտները»** Հավատացյալի համար Հին Կտակարանյան տեսանկյունից ավելի վատ բան չկա, քան դա (1 Կոր. 10:14): Այս տերմինի օգտագործումը մեղքերի ցանկում հաստատում է, որ սա հեթանոսական պաշտամունքի գործելակերպ է: Կորնթոսի բոլոր հեթանոս հավատացյալները դուրս էին եկել այս պատմական իրավիճակից (տես 1 Կոր. 6:11): Պողոսը հաճախ օգտագործում է այս գաղափարը (այսինքն, պաշտամունքը և ծառայությունը կեղծ աստվածներին), հաճախ Կորնթացիսի նամակների մեջ (տես 1 Կոր. 5:10,11,6:9; 8:4,7,10; 10:7,14,19,28; 12:2; 2 Կոր. 6:16):
- **«շնացողները»** Սա հունարեն *moichos* տերմինն է, որը վերաբերում է արտասամուսնական սեռական անհավատարմությանը: Սա միակ տեղն է, որ այն օգտագործվում է Կորնթացիսի նամակներում:

Արևելահայերեն «արուագէտները»
Արևմտահայերեն «շնացողները»

NASB «թուլամորթ»
NKJV, NJB «սողոմացիներ»
NRSV «արական մարմնավաճառները»
TEV «համասեռական պոռնկություններ»
NJB «ինքնամաքրվող»
Peshitta «ապականված»

Այս (*malakos*) տերմինը բառացի նշանակում է փափուկ: Այն կարող է օգտագործվել հագուստի համար (տես Մարթ. 11:8): Փոխաբերականորեն մարդկանց համար կիրառելիս այն վերաբերում է արական մարմնավաճառներին, սովորաբար երիտասարդ տղամարդկանց: Համասեռականության մասին լավ հոդվածի է, տես *Dictionary of Paul and His Letters*, էջ 413-414:

NASB «համասեռամուլներ»
NKJV, NRSV, NJB «սողոմացիներ»
TEV «(երկուսն էլ թարգմանված են որպես միասեռական պոռնկումներ)»
Peshitta «տղամարդիկ, ովքեր սեռական հարաբերություն ունեն տղամարդկանց հետ»

Այս (*arsenokoitēs*, *arsēn*-ից, արական և *keitē* մեկը, ով հետ պառկում է) տերմինը վերաբերում է արական միասեռականությանը (տես 1 Տիմ. 1:10; Հռ. 1:27): Սա հռոմեական հասարակության հիմնական խնդիրն էր (տես Հռ. 1:26-27; Տիմ. 1:10), ինչպես որ եղել է հին Մերձավոր Արևելքում (տես Ղն. 18:22; 20:13; 2 Օր. 23: 18): Այս երկու տերմինները վերաբերում են 1 Կոր. 6:9 միասեռական գործունեությանը, որը կարող է վերաբերել ակտիվ (*arsenokoitai*) և պասիվ (*malakoi*) այս սեռական մեղքի ասպեկտներին:

Կա ժամանակակից մշակութային ճնշում, որը համասեռամոլությունը ընդունում է որպես համապատասխան այլընտրանքային կենսակերպ: Աստվածաշունչը դատապարտում է այն որպես ապակառուցողական ապրելակերպ, Աստծո կամքից դուրս Իր ստեղծագործության համար:

1. այն խախտում է Ծննդոց 1-ի պատվերը, պտղաբեր լինելու և բազմանալու
2. այն բնութագրում է հեթանոսական պաշտամունքը և մշակույթը (տես Ղև. 18:22; 20:13; Հո. 1:26-27 և Հուդա 7)
3. այն բացահայտում է ինքնակենտրոն անկախություն Աստծուց (տես 1 Կոր. 6:9-10)

Սակայն, նախքան այս թեման թողնելը, թույլ տվեք հաստատել Աստծո սերը և ներումը բոլոր ապստամբ մարդկանց հանդեպ: Քրիստոնյաները իրավունք չունեն ատելությամբ և ամբարտավանությամբ վարվելու այդ մեղքի նկատմամբ, հատկապես, երբ ակնհայտ է, որ բոլորս մեղք ենք գործում: Աղոթքը, մտահոգությունը, վկայությունը և կարեկցանքը այս հարցում ավելի շատ բան կարող են անել, քան վճռական դատապարտումը: Աստծո Խոսքը և Նրա Հոգին կդատապարտեն, եթե դա թույլ տանք նրանց: Բոլոր սեռական մեղքերը, ոչ միայն այս մեկը, Աստծո համար պիղծություն են և հանգեցնում են դատաստանի: Մեքսը Աստծո կողմից նվեր է մարդկության բարօրության, ուրախության և կայուն հասարակության համար: Սակայն այս հզոր, Աստծո կողմից տրված փափագը հաճախ վերածվում է ապստամբության, ինքնակենտրոնացման, հաճույք փնտրելուն, «ամեն ինչ ինձ համար, ամեն գնով», ապրելով (տես Հո. 8:1-8; Գաղ. 6:7-8):

- **«բամբաստողներ»** Ծանոթագրություն 1 Կոր. 4:12

6:11 «Եւ մի քանիներդ այսպէսներ էիք» Սա անկատար սահմանական է, որն արտահայտում է անցյալում շարունակական գործողություն: Սա ցույց է տալիս Պողոսի օրոք հեթանոսական մշակույթի բարոյական սև մղումը (տես 1 Կոր. 12:2), նաև ցույց է տալիս Աստծո ավետարանի զորեղ շնորհքը և փոփոխվող ուժը Քրիստոսում:

Այս դարձի եկած հեթանոսների փոխված կյանքը ավետարանի հզոր վկայություն էր: Բայց փոփոխությունը պետք է լինի մշտական և ամբողջական, այլ ոչ թե ժամանակավոր և ընտրովի: Հիմա դրանք տարբեր էին, բնակվում էին, տեղեկացնում էին: Նրանք չպետք է վերադառնան ինչպես շունը իր փսխածին կամ խոզը ցեխի մեջ (տես 2 Պետ. 2:22): Կորսված աշխարհը դիտում է:

- **«Բայց»** Ծանոթացեք հունարեն տեքստում *alla*-ին տրված երեք արտահայտությանը, նշելու այս երեք հոգևոր իրադարձությունները:
 1. լվացում
 2. սրբացում
 3. արդարացնելով Որդու և Հոգու կողմից մեր հավատքի միջոցով, ապաշխարող արձագանք

- **«լուացուեցաք»** Սա աօրիստ չեզոք սահմանական է: Սա կարող է վերաբերել մկրտությանը որպես ներքին մաքրման նախնական, կամային, տեսանելի, ակնհայտ, խորհրդանշական գործողություն (տես Գործք 2:38; 22:16; Տիտ. 3:5): Շատ թարգմանություններ այս արտահայտությունը թարգմանում են որպես կրավորական սեռ, բացի Williams թարգմանության, որը ունի «դուք մաքուր եք լվացել» արտահայտությունը: Հուդայականության դարձած նորահավատներն իրենք իրենց մկրտում էին, երբ միանում էին ժողովարանին: Եթե այս բառը չեզոք սեռ է, Գործք 22:16-ի նման, դա կարող է լինել աստվածաբանական պատճառաբանություն, Եզ. 18:31 ուխտի պատասխանատվության քննարկմանը, Աստծո նախաձեռնող ինքնիշխանության հետ միասին (տես Եզ. 36:25-27): Սա կարող է լինել փոխաբերություն մաքրման համար (տես Տիտ. 3:15):

▪ **«սրբուեցաք»** Սա աօրիստ կրավորական սահմանական է, որը նշանակում է Քրիստոսի մահը և Հոգու միջնորդությունը (տես 1 Կոր. 1:2,30): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ՍՐԲԱՑՈՒՄ ԼՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ 1 Կոր. 1:2

▪ **«արդարացաք»** Սա աօրիստ կրավորական սահմանական է: Հավատացյալները թե արդարացված են և՛ թե սրբացված, երբ հավատում են (տես Հո. 8:29): Այս դիրքային աստվածաբանական կարգավիճակը մղում է Քրիստոսանման կյանքի: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ 1 Կոր. 1:30

▪ **«Տէր Յիսուսի անունովը եւ մեր Աստուծոյ Հոգովը»** Այս արտահայտությունը, հավանաբար, հաստատում է «վացված» կամ «վացեք ինքներդ» խոսքերը 1 Կոր. 6: 11-ում վերաբերում է մկրտությանը (տես Հո. 10:9-13): Վաղ եկեղեցու հավատքի հրապարակային դավանությունը՝ մկրտությունն էր: Թեկնածուները հաստատում են իրենց հավատքը, բառացիորեն ասելով, «ես հավատում եմ, որ Հիսուսը Տէր է» կամ նմանատիպ կրոնական խոստովանություն:

Երկրորդ արտահայտությունը, որը նշում է «Հոգին», կարող է լինել Մաթ. 28:19-ի վրա հիմնված միտք կամ կրոնական բանաձև, «նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»: Հետաքրքիր է, թե որքան հաճախ է Պողոսը ակնարկում «անունը» 1 Կորնթացիսի բացման գլուխներում (տես Հատուկ Թեմա 1 Կոր.1:10):

1. հավատացյալներին վերաբերող միջոց («ով կանչի ...անունը», տես 1 Կոր. 1:2)
2. հավատացյալներին հորդորելու ձև (տես 1 Կոր.1:10)
3. Պողոսի իշխանությունը հաստատելու միջոց (տես 1 Կոր. 5:4)
4. որը վերաբերում է հավատացյալների անունից կոչելու նախնական գործողությանը (տես 1 Կոր. 6:11)

Անունը ներկայացնում է Հիսուսի անձը, իշխանությունը, բնութագիրը և կարգավիճակը:

Սա ակնհայտ հղում է Սուրբ Երրորդության փրկարար աշխատանքի համար (տես 1 Կոր. 6:10-11): «Երրորդություն» տերմինը աստվածաշնչյան բառ չէ, այլ՝ գաղափար: Եթե Հիսուսըն Աստված է իսկ Հոգին մարդ, ապա մեկ աստվածային էությունն ունի երեք հավիտենական, անձնական դրսևորումներ: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ, տես 1 Կոր.2:10

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 6:12-20

¹²Ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ամենն օգուտ չէ. Ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ես չ'պիտի մի բանի իշխանութեան տակ լինիմ: ¹³Կերակուրները փոքի համար, եւ փորը կերակուրների համար. Բայց Աստուած սորան էլ նորանց էլ կ'խափանէ. Միայն թէ մարմինը պոռնկութեան համար չէ, այլ Տիրոջ համար. եւ Տէրը մարմնին համար: ¹⁴Բայց Աստուած, որ մեր Տիրոջն էլ յարութիւն տուաւ, ձեզ էլ կ'յարուցանէ իր զօրութեամբը: ¹⁵Չ'գիտէ՞ք՝ որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են. Ապա Քրիստոսի անդամներն առնեմ պոռնիկի անդամ շինեմ. Քաւ լիցի: ¹⁶Կամ թէ չ'գիտէ՞ք, որ նա՝ որ պոռնիկին յարում է, մէկ մարմին է նորա հետ. Որովհետեւ Երկուսն, ասում է, մէկ մարմին կ'լինին: ¹⁷Եւ նա՝ որ Տիրոջն է յարում՝ մէկ հոգի է նորա հետ: ¹⁸Փախէք պոռնկութիւնիցը. Ամեն մեղք որ մարդ գործէ, իր մարմնիցը դուրս է. Բայց պոռնկութիւն անողն, իր մարմնի մէջ է մեղանշում: ¹⁹Կամ թէ չ'գիտէ՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են՝ որ ձեզանում է, որ նորան Աստուածանից ունիք. եւ ձերինը չէք: ²⁰Որովհետեւ մեծ գնով գնուեցաք. Ուստի փառաւորեցէք Աստուծուն ձեր մարմնումը եւ ձեր հոգումն որ Աստուծունն են:

6:12

Արևելահայերեն «Ամեն բան օրինաւոր է ինձ»
Արևմտահայերեն «Ամեն բան ինձի օրինաւոր է»

NASB, NKJV, NRSV, Peshitta «Ամեն ինչ օրինական է ինձ համար»

TEV «Որևէ մեկը կասի, ինձ թույլատրվում է որևէ բան անել »

NJB «Ինձ համար ամեն ինչ թույլատրելի է»

REB «Ես ազատ եմ անելու որևէ բան»

Սա կարող է վերաբերել մի առիթով ասված Պողոսի խոսքերին (տես 1 Կոր. 10:23; Հռ. 14:2, 14, 20), սակայն այն հեռացվել է կոնտեքստից (1) հրեա հավատացյալների օրինականությունը կամ (2) ազատամիտ կեղծ ուսուցիչները, որոնք քրիստոնեական ազատությունը օգտագործում էին որպես մեղք գործելու լիցենզիա (տես Գաղ. 5:13; 1 Պետ. 2:16): Պողոսը փորձում է քայլել երկու ծայրահեղությունների միջով և դեռ երկուսի մասին էլ խոսում է:

Սա կարող է լինել Պողոսի նշանաբանների մեջբերումներից առաջինը, կեղծ ուսուցիչների կամ կեղծ ուսուցիչների կարգախոսները, որոնք բովանդակում էին կոնտեքստից դուրս մի բան, որ նա քարոզել և տարածել էր իր խոսքերը այլ ոլորտներում (տես 1 Կոր. 6:12,13; 7:1; 8:1,4; 10:23; տես (1) *The Cambridge History of the Bible*, հատոր 1, էջ 244, և (2) Klein, Blomberg, and Hubbard, *Introduction to Biblical Interpretation*, էջ 362-363): Չէ որ այն, ինչ ասում էին, չէին համապատասխանում իրականությանը, բայց նրանք ընդունեցին ճշմարտությունը օրինական սահմաններից դուրս: Դժվար է իմանալ, երբ Պողոսը օգտագործում է այս տեխնիկան: Հնարավոր է, հետևյալ չափանիշները կարող են օգտակար լինել:

1. Սա մի բան է, որ Պողոսն է ասել է ուրիշ գրվածքներում (տես 1 Կոր. 10:23; Հռ. 14:2,14,20):
2. Սա ճշմարտության մասին համառոտ ընդհանուր դրույթ է (ինչպես առակը):
3. Բոլոր աստվածաշնչյան փոխաբերությունները ճշմարիտ են, բայց դրանց կիրառման համար համապատասխան սահմանափակումներ կան: Յուրաքանչյուր մակարդակում ոչ մի օրինակ կամ փոխաբերություն չի կարելի պարտադրել: Նրանք սովորաբար ունեն մեկ հիմնական կիրառություն:

Պողոսը փորձում է վերահաստատել նախատեսված ճշմարտությունը և սահմանափակել անհամապատասխան ընդլայնումները: Սա ամեն դարաշրջանի հերմենևտիկայի խնդիրն է:

▪ **«բայց ամենն օգուտ չէ»** Այս համարը խոսում է քրիստոնեական ազատության պատշաճ օգտագործման մասին, որը պետք է իրականացվի ինքնասահմանափակման սիրո մեջ (տես 1 Կոր. 10:23; 14:26; Հռ. 14:19; 15:2): Քրիստոսի մարմնի կառուցումը ավելի կարևոր է, քան անձնական իրավունքները և ազատությունները:

▪ **«օգուտ»** Սա բարդ հունարեն տերմին է, որը նշանակում է «միասին հավաքել մեկի օգուտի համար» (տես 1 Կոր. 6:12; 7:35; 10:23; 12:7; 2 Կոր. 8:10; բացասականը 1 Կոր. 12:1): Սա զուգահեռ է Պողոսի խոսքերին Հռ. 14:19; 15:2; 1 Կոր. 10:23; 14:26; 2 Կոր. 12:19; Եփ. 4:12,29-ում: Միայն այն պատճառով, որ հավատացյալն ազատ է Քրիստոսում չի նշանակում, որ ամեն բան շինություն է տալիս ուրիշ հավատացյալներին: Մենք սիրով սահմանափակում ենք մեր ազատությունը Տիրոջ և Նրա եկեղեցու համար (տես Հռ. 14:1-15:13): Մենք միշտ ձգտում և խթանում ենք Քրիստոսի ողջ մարմնի առողջությունն ու կենսունակությունը (տես 1 Կոր. 12:7):

Արևելահայերեն «բայց ես չ'պիտի մի բանի իշխանութեան տակ լինիմ»

Արևմտահայերեն «բայց ես բանի մը իշխանութեան տակ պիտի չըլլամ»

NASB «բայց ես ոչնչի կողմից չեմ տիրապետվում»

NKJV, Peshitta «բայց ես չեմ կարող լինել որևէ իշխանության տակ»

NRSV «բայց ես ոչ մի բանի կողմից չեմ տիրապետվում»

TEV «Ես չեմ պատրաստվում թույլ տալ, որ ինչ որ բան ինձ ստրուկ դառցնի»

NJB «բայց ես վճռական եմ, որ ոչնչի կողմից տիրապետված չլինեմ»

Սա հունարեն *exousia* տերմինի ապառնի կրավորական սահմանական է: Այս տերմինը լայն կիրառություն ունեցավ:

1. իշխանություն
2. իրավասություն
3. վերահսկողություն
4. զորություն
5. գերբնական ուժ

Պողոսը, հավանաբար, այս միտումներից մի քանիսն էր հիշել: Ակնհայտ խոսք կա «օրինական» (*exestin*) և «տիրապետող» (*exousiasthesomai*) միջև: Նա դա չի զգում

1. ցանկացած մարդ իրավունք ունի դատելու իրեն (տես 1 Կոր. 2: 14-15; 3: 4-5)
2. ոչ մի գերբնական էակ իշխանություն չուներ իր վրա (տես 1 Կոր. 12:2, անհավատները մոլորվում են դեի կողմից)
3. ոչ մի անձնական ազատություն կամ անձնական նախասիրություն կամ անձնական գայթակղություն (*tinis*, անկախ դերանվանական եզակի ածական է, ի տարբերություն այս համարում *panta* կրկնակի օգտագործմամբ)

Պողոսի իշխանությունը Քրիստոսից էր: Քրիստոսն ու Հոգին էր, որը վերահսկում և գորացնում էր նրան: Ինքնակառավարումը կամ ժուժկալությունը, անշուշտ, Հոգու պտուղներից է (Գաղ. 5:23; Գործք 24:25; 2 Պետ. 1:6): Պողոսը վերահսկում է իր ազատությունը, որպեսզի ավետարանը կարողանա բարգավաճել և այդպես էլ պետք է մենք անենք:

Պողոսը պնդում է, որ քրիստոնեական ազատությունը չպետք է հնարավորություն լինի անձնական արտոնագրի համար: Շատ բաներ, որոնք լավն են, կարող են դրդել անհիմն շարժառիթների, վերաբերմունքի կամ իրավիճակների (տես Հռ. 14:23): Քրիստոնեական ազատության և քրիստոնեական պատասխանատվության այս հարցը Կորնթացիսի նամակների քննադատական խնդիրն է: Այս հարցը վերաբերում է նաև Հռ. 14:1-15:13: Ես կցանկանայի մեջբերել իմ բացման խոսքերը այս թեմայի վերաբերյալ Հռոմեացիսի մեկնաբանությունից:

ԿՈՆՏԵՔՍՏՍՅՈՒՆ ՄՏՔԵՐ ՀՌ. 14:1-15:13

Ա. Այս գլուխը փորձում է հավասարակշռել քրիստոնեական ազատության և պատասխանատվության պարադոքսը: Գրական բաժինը հասնում է մինչև 15:13-ը:

Բ. Այս գլուխում խնդիրն այն էր, որ հավանաբար Հռոմի եկեղեցում հեթանոս և հրեա հավատացյալների միջև լարվածություն կար էր: Նախքան դարձի գալը, հրեաները հակված էին օրինապաշտությանը, իսկ հեթանոսները՝ անբարոյականությանը: Հիշեք, այս գլուխն ուղղված է Հիսուսի անկեղծ հետնորդներին: Այս գլուխը չի վերաբերում մարմնավոր հավատացյալներին (տես 1 Կոր. 3:1): Ամենաբարձր շարժառիթը վերագրվում է երկու խմբերի: Երկու կողմերի ծայրահեղության մեջ վտանգ կա: Այս քննարկումն իրավացիության կամ ազնվականության խթանման լիցենզիա չէ:

Գ. Հավատացյալները պետք է զգույշ լինեն, որպեսզի իրենց աստվածաբանությունը կամ էթիկան չդառնա չափանիշ բոլոր մյուս հավատացյալների համար (տես 2 Կոր. 10:12): Հավատացյալները պետք է քայլեն իրենց լույսի ներքո, բայց հասկանալով, որ իրենց աստվածաբանությունը ինքնատիկության Աստծո աստվածաբանությունը չէ: Հավատացյալները դեռևս գտնվում են մեղք ազդեցության տակ: Մենք պետք է խրախուսենք, հորդորենք և ուսուցանենք միմյանց Սուրբ Գրքից, պատճառաբանությունից և փորձից, բայց միշտ սիրով: Որքան շատ գիտի, որ նա գիտի, այն գիտի, որ նա չգիտի (տես 1 Կոր. 13:12):

- Դ. Աստծո առաջ նրա վերաբերմունքը և դրդապատճառները նրա գործողությունների գնահատման իրական բանալին են: Քրիստոնյաները կանգնելու են Քրիստոսի առջև դատվելու համար, թե ինչպես են վերաբերվել միմյանց (տես 1 Կոր. 6:10,12 և 2 Կոր. 5:10):
- Ե. Մարտին Լյութերն ասել է. «Քրիստոնյան ամենաազատ մարդն է Տիրոջով, չպետք է ենթարկվի ոչ մեկին, քրիստոնյան բոլորի համար ամենալավ ծառայողն է»: Աստվածաշնչի ճշմարտությունը հաճախ ներկայացվում է լարվածության պարադոքսով:
- Զ. Այս դժվար, բայց կարևորագույն խնդիրը վերաբերում է Հռ. 14:1-15:13-ի ամբողջ գրական բաժնին, ինչպես նաև 1 Կոր. 8-10-ում և Կող. 2:8-23-ում:
- Է. Սակայն պետք է նշել, որ անկեղծ հավատացյալների միջև բազմակարծությունը վատ բան չէ: Յուրաքանչյուր հավատացյալ ունի ուժեղ և թույլ կողմեր: Յուրաքանչյուրը պետք է քայլի լույսի ներքո, միշտ բաց է Հոգու և Աստվածաշնչի համար, ավելի լույսի համար: Այս ժամանակաշրջանում մուգ ակնոցով տեսնելու համար (1 Կոր. 13:8-13) պետք է սիրով քայլել (1 Կոր. 6:15) և խաղաղություն (1 Կոր. 6:17,19) փոխադարձ ուսման համար:
- Ը. Վերնագրերը, «ուժեղ» և «թույլ», որոնք Պողոսը տալիս է այդ խմբերին, նախապաշարմունք է նրանց մեզ: Սա, իհարկե, Պողոսի մտադրությունը չէ: Երկու խմբերը անկեղծ հավատացյալներ էին: Մենք չպետք է փորձենք այլ քրիստոնյաներ ձևավորել: Մենք ընդունում ենք միմյանց Քրիստոսում:

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀՈ. 15:1-13

- Ա. Քրիստոնեական ազատության և պատասխանատվության մասին քննարկումները շարունակվում են 14-րդ գլխից:
- Բ. Ամբողջ փաստարկը կարելի է ուրվագծել որպես
1. ընդունեք միմյանց, քանի որ Աստված ընդունում է մեզ Քրիստոսում (տես 1 Կոր. 14:1,3; 15:7);
 2. մի դատեք միմյանց, որովհետև Քրիստոսն է մեր միակ Տերն ու Դատավորը (տես 1 Կոր. 14:3-12);
 3. սերն ավելի կարևոր է, քան անձնական ազատությունը (տես 1 Կոր. 14:13-23);
 4. հետևեք Քրիստոսի օրինակին և դրեք ձեր իրավունքները ուրիշների շինության և բարիքի համար (տես 1 Կոր. 15:1-13):
- Գ. Հռ. 15:5-6-ը արտացոլում է 1 Կոր. 14: 1-15: 13 ամբողջ կոնտեքստի երեք նպատակները:
1. ապրեք միմյանց հետ ներդաշնակության մեջ;
 2. ապրեք Քրիստոսի օրինակով;
 3. միաբան սրտերով և շրթունքներով միասնական գովաբանեք Աստծուն:
- Դ. Անձնական ազատության և խմբակային պատասխանատվության միջև նույն լարվածությունը վերաբերում է 1 Կոր 8-10 և Կող. 2:8-23-ին:

6:13

Արևելահայերեն «Կերակուրները փորի համար, եւ փորը կերակուրների համար»
Արևմտահայերեն «Կերակուրները փորին համար են, փորն ալ կերակուրներուն»

NASB «Մնունդը ստամոքսի համար է»
NKJV, Peshitta «Մնունդը ստամոքսի համար է և ստամոքսը՝ սննդի »
NRSV «Մնունդը նախատեսված է ստամոքսի և ստամոքսի սննդի համար »
TEV «Ինչ-որ մեկը կասի. «Մնունդը ստամոքսի համար է, իսկ ստամոքսը սննդի համար »:
NJB «Մնունդը ստամոքսի համար է, իսկ ստամոքսը սննդի համար»:

Սա կարող է լինել մեկ այլ կարգախոս: Թվում է, թե վերաբերում է ազատամիտ կեղծ ուսուցիչների ոչ պատշաճ, հերմենևտիկ ընդլայնմանը: Պողոսը պնդում է, որ կա ճշմարտության տարր իրենց ասածի մեջ (տես Մարկ. 7:19): Պողոսն էլ է

1. օգտագործում գրական տեխնիկա, որը կոչվում է սուր քննադատություն, որտեղ նա օգտագործում է ենթադրյալ ձեռնպահներ՝ իր աստվածաբանական մտքերը արտահայտելու համար
2. մեջբերելով կեղծ ուսուցիչների կարգախոսները, որոնց մի մասը վերցված էր Հիսուսի ուսմունքներից կամ Պողոսի ուսմունքներից

▪ **«Բայց Աստուած սորան էլ նորանց էլ կ'խափանէ»** Սա մի ակնարկ է ավարտված Թագավորության համար: Մնունդն ընդամենը ժամանակի մի մասն է, այլ ոչ թե հավիտենականություն: Հիսուսը ձուկ կերավ Իր հարությունից հետո (Հովհ. 21), բայց դա հնարավորություն էր հանդիպելու Իր վախկոտ աշակերտներին, ոչ թե ֆիզիկական անհրաժեշտություն էր Իր համար: Հիսուսը խոսեց նաև Մեսիական ճաշկերույթի մասին (Ղուկ. 22:30), բայց դա նույնպես հաղորդակցության պատկեր է, այլ ոչ թե ֆիզիկական անհրաժեշտություն, որ կրկնվի:

«Խափանել» (NASB) կամ «ոչնչացնել» արտահայտությունը (տես NKJV) *katargeō* է: Պողոսը քսանհինգ անգամ օգտագործել է այս բառը, սակայն տարբեր իմաստներով: Տես Հատուկ Թեմա: *Katargeō* 1 Կոր. 1:28

▪ **«Միայն թե մարմինը պոռնկութեան համար չէ»** Սա հստակ ցույց է տալիս կեղծ ընդլայնումը: Մարդիկ հիանալի կերպով ստեղծվել են կյանքի և դրա առատության համար այս մոլորակի վրա: Այնուամենայնիվ, կան Աստծո կողմից տրված որոշ սահմաններ ապահովելու երկար, երջանիկ, պտղաբեր գոյություն: Մեղքի մեջ ընկնելուց հետո (տես Ծննդոց 3), մարդկությունը ձգտում է գրավել անմիջական, ինքնաբավարարող, անձնական գոհունակություն ցանկացած գնով:

▪ **«մարմինը...Տիրոջ համար. եւ Տէրը մարմինն համար»** Այս արտահայտությունները զուգահեռ հարաբերություններում են: Ճշմարտությունն այն է, որ հավատացյալները պատկանում են Տիրոջը (տես 1 Կոր. 6:20; 7:23; Գործք 20:28): Նա ցանկանում է օգտագործել նրանց մարմինները Իր ծառայության, Իր նպատակների համար: Սա կարող է բառախաղ լինել մարդու մարմնի և Քրիստոսի եկեղեցու մասին՝ որպես մարմին:

6:14 Նոր Կտակարանում հաստատ գլուխը Քրիստոսի հարության և հավատացյալների հարության մասին դա 1 Կոր. 15-ն է:

Հունական մտածողության լույսի ներքո (ֆիզիկական մարմինը չար է) պետք է ընդգծել, որ աստվածաշնչյան մտածելակերպը չի արժեզրկում մարմինը: Այս կոնտեքստում մարմինը

1. «Տիրոջ համար» (տես 1 Կոր. 6:13)
2. «Քրիստոսի անդամները» (տես 1 Կոր. 6:15)
3. Սուրբ Հոգու տաճարը (տես 1 Կոր. 6:19)
4. Քրիստոսին փառաբանելու համար է (տես 1 Կոր. 6:20)

Մարմինը չար է: Այն հարություն կառնի և կլինի հավիտենական թագավորության մի մասը: Այնուամենայնիվ, դա նաև գայթակղության և մեղքի բարոյական ճակատամարտի գոտին է: Հիսուսը իրեն ֆիզիկապես տվեց եկեղեցու համար: Հավատացյալները պետք է հետևեն օրինակին (տես 1 Հովհ. 3:16):

▪ **«Բայց Աստուած, որ մեր Տիրոջն էլ յարութիւն տուաւ»** *Textual Commentary of the Greek New Testament* Bruce M. Metzger-ը բնութագրում է հունարեն ձեռագրային տարբերակները, որոնք կապված են բայի ժամանակների հետ

1. ԱՕՐԻՍՍ MSS P⁴⁶, C², B
2. ՆԵՐԿՍ MSS P¹¹, P⁴⁶, A, D*
3. ԱՊԱՌՆԻ MSS P⁴⁶, C¹, 8, C, D³

ԱՊԱՌՆԻ ժամանակը համապատասխանում է 2 Կոր. 4:14 -ի կոնտեքստին և գուգահեռությանը (էջ 552, UBS⁴-ը այն «Բ» (գրեթե որոշակի):

Այս արտահայտությունը հրաշալի հնարավորություն է ցույց տալու համար, որ Նոր Կտակարանը փրկության գործը հաճախ վերագրում է Երրորդության բոլոր երեք անձանց:

1. Հայր Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30, 33, 34, 37; 17:31; Հռ. 6:4, 9; 10:9; 1 Կոր. 6:14; 2 Կոր. 4:14; Գաղ. 1:1; Եփ. 1:20; Կող. 2:12; 1 Թես. 1:10)
2. Որդի Աստվածը հարություն տվեց Իրեն (տես Հովհ. 2:19-22; 10:17-18)
3. Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Հռ. 8:11)

▪ **«ձեզ էլ կ'յարուցանե»** Պողոսն ուրախանում էր Քրիստոսի հետ ունեցած անձնական փոխհարաբերության համար (տես 1 Կոր. 6:17): Սա Պողոսի իրականացրած վախճանաբանությունն է (տես, C. H. Dodd): Իրական իմաստով երկինքը Պողոսին հասավ այս կյանքում և միայն կլիներ լրացում ապագայում:

Պողոսը նաև հավատում էր, որ Հիսուսը շուտով վերադառնալու է: Որոշ տեքստերում Պողոսը պնդում էր, որ կենդանի է լինելու Քրիստոսի գալստյան ժամանակ (տես 1 Թես. 4:17; 1 Կոր. 15:51-52; Փիլ. 3:20): Այնուամենայնիվ, այլ տեքստերում նա իրեն կապում է նրանց հետ, ովքեր հարություն են առել մեռելներից (տես 1 Կոր. 6:14; 2 Կոր. 4:14): 2 Թեսաղոնիկեցիս ամբողջ գիրքը ակնկալում է հետաձգված Պարուսիա, ինչպես Մաթ. 24-ը, Մարկ. 13-ը և Ղուկ. 21-ը:

Երկրորդ գալուստը յուրաքանչյուր քրիստոնյա սերնդի հույսն է, բայց միայն մեկ սերնդի իրականությունը: Այնուամենայնիվ, հարությունը նոր մարմնով և մտերմիկ հաղորդակցությամբ իրականություն է բոլոր հավատացյալների համար:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԻՆ ՀԵՍՈՒՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ, ԲԱՅՑ ՈՉ ԴԵՌ (ՆԿ պարադոքսը)
SPECIAL TOPIC: THE ANY-MOMENT RETURN OF JESUS VERSUS THE NOT YET

Ա. Նոր Կտակարանի վախճանաբանական հատվածները արտացոլում են Հին Կտակարանի մարգարեական հասկացողությունը, որը վերջին ժամանակները դիտում է ժամանակակից երևույթների միջոցով:

Բ. Մաթ. 24, Մարկ. 13 և Ղուկ. 21-ը այնքան բարդ են մեկնաբանելու համար, քանի որ միաժամանակ մի քանի հարց են լուծում, թե:

1. Ե՞րբ է Տաճարը կործանվելու:
2. ո՞րն է Մեսիային վերադառնալու նշանը:
3. Ե՞րբ է այս ժամանակը ավարտվելու (տես Մաթ. 24:3):

Գ. Վախճանաբանական հատվածների Նոր Կտակարանյան ժանրը սովորաբար ապոկալիպտիկ և մարգարեական լեզվի համադրությունն է, որը միտումնավոր երկիմաստ և խիստ խորհրդանշական է (տես D. Brent Sandy, *Ploswhares and Pruning Hooks: Rethinking the*

Language of Biblical Prophecy and Apocalyptic):

- Դ. Նոր Կտակարանում մի քանի հատվածներ (տես Մաթ. 24, Մարկ. 13, Ղուկ. 17 և 21, 1 և 2 Թեսաղոնիկեցիս և Հայտնություն) վերաբերում են Երկրորդ Գալուստին: Այս հատվածները շեշտում են.
1. դեպքի ճշգրիտ ժամանակը անհայտ է, բայց դեպքը որոշակի է
 2. մենք կարող ենք իմանալ իրադարձությունների ընդհանուր ժամանակը, բայց ոչ կոնկրետ ժամանակը
 3. դա տեղի կունենա հանկարծակի և անսպասելիորեն
 4. մենք պետք է աղոթքով, պատրաստ և հավատարիմ լինենք հանձնարարված առաջադրանքներին:
- Ե. Գոյություն ունի աստվածաբանական պարադոքսալ լարվածություն
1. ցանկացած պահի վերադարձը (տես Ղուկ. 12: 40,46; 21:36; Մատ.24: 27,44) և
 2. այն փաստը, որ պատմության մեջ որոշ իրադարձություններ պետք է լինեն (Ջ. ստորև)
- Զ. Նոր Կտակարանը նշում է, որ որոշ իրադարձություններ կլինեն Երկրորդ գալուստից առաջ.
1. Ավետարանը քարոզվելու է ամբողջ աշխարհին (տես Մաթ. 24:14; Մարկ. 13:10)
 2. մեծ հավատորացությունը/ավերածի պղծությունը (Մաթ. 24:10-13,21; 1 Տիմ. 4:1; 2 Տիմ. 3:1; 2 Թես. 2:3)
 3. «մեղքի մարդու» հայտնություն (տես Դան. 7: 23-26; 9: 24-27; 2 Թես. 2: 3)
 4. խափանողի վերցվելը (տես 2 Թես. 2: 6-7)
 5. հուսով եմ, որ հրեաների արթնությունը (տես Ջաք. 12:10; Հռ.11)
- Է. Ղուկաս 17: 26-37-ը զուգահեռ չէ Մարկոսին: Այն ունի մասնակի Սինոպտիկ զուգահեռություն Մաթ. 24: 37-44-ի հետ:
- Ը. Քրիստոսի շուտ վերադարձի քննարկման համար, տես Հատուկ Թեմա: Շուտ Վերադարձը
- Թ. Հետաձգված վերադարձի քննարկման համար, տես Հատուկ Թեմա: Հետաձգված Երկրորդ Գալուստը

6:15 «Չ՛գիտե՞ք» Ծանոթագրություն 1 Կոր. 5:6:

▪ **«ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են»** Պողոսը օգտագործում է նմանեցում Ծննդ. 2:24-ից, որպես նախազգուշացման հիմք հավատացյալների մեկ լինելու մասին, ցանկացած տեսակի սեռական անբարոյականության մեջ: Հավատացյալները Քրիստոսի հետ մեկ են (տես 1 Կոր. 12:20,27; Հռ. 12:5; Եփ. 4:12,16,25):

▪ **«պոռնիկ»** Սա հունարեն *pornē* տերմինն է, որը գալիս է «վաճառել» բայից (այսինքն, *pernēmi*, տես Kittel, *Theological Dictionary of the New Testament*, հատոր 6, էջ 580): Կորնթոսում (և Հին Մերձավոր Արևելքում) եղել են երկու տեսակի մարմնավաճառներ, մեկ մշակութային (այսինքն, հեթանոսական երկրպագությունը) և ստրուկների (այսինքն, շահույթ ստանալու համար): Պողոսը բազմիցս քննարկել է *porneia* (տես 1 Կոր. 5:1 (երկու անգամ), 9,10,11; 6:9,13,15,16,18; 7:2; 10:8; 2 Կոր. 11:21): Հեթանոսական պտղաբերության երկրպագությունը արտահայտվել է սեռական գործողություններում: Պողոսի ունկնդիրները մեծացել և մասնակցել էին այդ ծիսակարգերի և արարողակարգերի ներքո, բայց այժմ նրանք քրիստոնյա են:

Արևելահայերեն «Քաւ լիցի»
Արևմտահայերեն «Քա՛ւ լիցի»

NASB «Թող որ դա չլինի»
NKJV «Իհարկե, ոչ»

NRSV, REB «Երբեք»

TEV «Անհնար է»

NJB «Հարցից դուրս»

Peshitta «Հեռու լինի»

Այս բացատրական արտահայտությունը (հազվագյուտ ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը արտահայտում է ուժեղ ցանկություն, իդձ կամ աղոթք) հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից իր սարսափը արտահայտելու համար, թե ինչպես են ոմանք արձագանքում (սուր քննադատություն) իր հայտարարություններին կամ հռետորական հարցերին (տես Հո. 3:4; 6:31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11; 1 Կոր. 6:15; Գաղ. 2:17; 3:21; 6:14):

6:16 «Երկուսն, մեկ մարմին կ'լինին» Սա մեջբերում է Ծննդ. 2:24-ից: Ամուսնության մեջ երկու անձ կամավոր մեկ մարմին են դառնում: Ֆիզիկական մտերմությունը ամուր կապող փորձառություն է: Այն ունի համապատասխան, Աստվածակենտրոն տեղ կյանքում: Աստծո բոլոր պարզկների նման, դա կարող է չարաշահվել և հանվել Աստծո կողմից տրված սահմաններից դուրս:

6:17 Սա հոգևոր նմանություն է՝ վերցված Ծննդ. 2:24-ից: Ինչպես տղամարդն ու կինը ֆիզիկապես մի մարմին են դառնում, հավատացյալն ու նրա Տերը դառնում են մեկ հոգևոր մարմին (տես Հովհ. 17:11,23; Գաղ. 2:20; Եփ. 5:21-33): Հո. 6:1-11 այս աստվածաբանական գաղափարի լավ օրինակն է: Հավատացյալները մահանում են Քրիստոսի հետ, թաղվում են Քրիստոսի հետ (մկրտությամբ) և հարություն են առնում Քրիստոսի հետ:

Արևելահայերեն «մեկ հոգի է նորա հետ»

Արևմտահայերեն «մեկ հոգի կլլայ»

NASB «ով ինքն իրեն միանում է»

NKJV «նա, ով միացել է»

NRSV «որևէ մեկը միավորված»

TEV «նա, ով միանում է իրեն»

NJB «ամեն ոք, ով ինքն իրեն է տալիս»

Սա 1 Կոր. 6:16-ի զուգահեռությունն է: Քերականական կառուցվածքն է.

1. ներկա կրավորական դերբայ 1 Կոր. 6:16 (տես Zerwick and Grosvenor, A Grammatical Analysis of the Greek New Testament, էջ 508)

2. ներկա չեզոք դերբայ (տես Harold K. Moulton, The analytical Greek Lexicon Revised, էջ 236)

Դինամիկ համարժեք թարգմանությունները (այսինքն, TEV, NJB), ինչպես նաև NASB, թարգմանում են որպես չեզոք սեռ: Ակնհայտ է, որ կոնտեքստը կենտրոնանում է ներգրավված կողմերի ցանկության վրա:

6:18 «Փախեք պոռնությունիցը» Սա ներկա ներգործական հրամայական է, առանց քերականական կապի, թե ինչ է կատարվում սկզբում կամ հետո (*asyndeton*), որը հունարեն կոյնե մագաղաթի ընթերցողի համար շեշտադրման ձև էր, ինչը նշանակում է հաստատ մնալ:

Մարդու սեռական հակումները ողորմած Աստծո պարզն է, բայց կան համապատասխան և անտեղի ասպեկտներ, թե ինչպես է Աստծո պարզը գործածվում: Պողոսը հաստատում է ամուսնությունը Ծննդ. 2:24-ի իր մեջբերմամբ, սակայն հաստատապես սահմանափակում է նախաամուսնական կամ ամուսնությունից դուրս խառնաշփոթությունը:

Հավատացյալները պետք է մշտապես ջանասեր լինեն այս ոլորտում, հատկապես, երբ մշակույթը խառնաշփոթ է: Սեռական մեղքերը հիմնական խնդիրներն են՝ հավատքի կյանքի

համար: Հավատացյալները պետք է ապրեն պատշաճ սեռական հարաբերություններով փոխակերպված կյանքով (տես 2 Կոր. 12:21; Եփ. 5:3; Կող. 3:5):

▪ **«Ամեն մեղք որ մարդ գործէ, իր մարմնիցը դուրս է»** Սա տարօրինակ մեկնաբանություն է: Կուզենայի ավելի լավ հասկանալ: Այն կարող է արտացոլել՝

1. Կորնթոսի հեթանոսական մշակույթը
2. կեղծ ուսուցիչների դասավանդման շեշտադրումը
3. Պողոս առաքյալի քարոզչական շեշտադրումը (տես 1 Կոր. 6:12, 13)

Մարդիկ հոգի/շունչ չունեն, նրանք հոգին են (տես Ծննդ. 2:7): Դրա հետ կապված Պողոսի հասկացությունն է, որ հավատացյալները չունեն մարմին, նրանք մարմինը են: Սա թերևս աստվածաբանական զարգացում է Ծննդոցից և հակահունական մտածելակերպ, որ արժեզրկում է ֆիզիկական մարմնը որպես չարիք: Հին Կտակարանը և Նոր Կտակարանը հաստատում են ֆիզիկական հարության մասին, որը հաստատում է մարդկային մարմնի գոյության բարությունը և հավիտենականությունը: Հետագայում Գնոստիկ ազատամիտ կամ անտինոմյան ուսուցիչները ֆիզիկական ասպեկտները բաժանեցին հոգեբանական ասպեկտներից, դրանով հաստատելով փրկությունը որպես գիտություն աստվածապաշտության կամ արդարության փոխարեն: Պողոսը հաստատում է, որ ավետարանը՝

1. անձ է, որին պետք է ողջունել
2. այդ մարդուն հավատալու ճշմարտությունն է
3. այդ անձի նախանձեղի կյանքն է

Դրանք չեն կարող առանձնացած լինել: Մարդիկ միություն են: Փրկությունը համապարփակ է: Թագավորությունը եկել է: Հավատքի և հնազանդության միջև գոյություն ունի անքակտելի կապ: Սկզբնական սրբացումը պետք է հանգեցնի պրոգրեսիվ սրբացման: Արդարությունը թե՛ պարզ և (սահմանական) և թե՛ պատվեր (հրամայական):

Իմ գործընկերը, Արևելյան Տեխասի Մկրտական համալսարանի բժիշկ Բրյուս Թանկերպեյը, հիշեցրեց, որ հեթանոսական մարմնավաճառության մեջ մարմնավաճառը հանդիսանում է աստծուն փոխարինող: Հետևաբար, սեռական հարաբերությունները ոչ միայն անբարո էին, այլև կռապաշտ:

6:19 «Կամ թե չ՛գիտեք» Ծանոթագրություն 1 Կոր. 5:6:

▪ **«որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են»** Քրիստոնեությունը փոխարինում է հրեաների ֆիզիկական տաճարը Քրիստոսի ֆիզիկական մարմնի՝ հոգևոր տաճարի հետ (տես Հովհ. 2:21), որպես Նրա հավաքական մարմինը՝ եկեղեցին (տես 1 Կոր. 10:16,17; 11:29; 12:12-27): Տաճարի այս գաղափարը կիրառվում է 1 Կորնթացիսում երկու իմաստով:

1. 1 Կոր. 3:16-17-ում օգտագործվում է ամբողջ տեղական եկեղեցու համար
2. Այստեղ օգտագործվում է անհատ հավատացյալի համար

Սա արտահայտում է կորպորատիվ և անհատական ասպեկտների միջև հոսող հարաբերությունները:

Այս կոնտեքստում Պողոսի հիմնական կետը սրբության կոչն է: Հավատացյալները պետք է արմատապես տարբերվեն շրջապատող մշակույթից: Սա ունի երկու նպատակ:

1. դա իրականացնում է Քրիստոսանմանության նպատակը
2. այն մարդկանց մեջ գրավում է Քրիստոսի հանդեպ հավատքը, որոնք Մեծ Պատվիրանի երկու կենտրոններն են (տես Մաթ. 28:19-20)

▪ **«Սուրբ Հոգու, որ ձեզանում է»** Սա շեշտը դրեց Սուրբ Հոգու վրա: Քրիստոնեական կյանքի գործունի Մատնո պարզն է, ինչպես փրկությունը: Մենք պետք է հանձնվենք Հոգու գործին: Երրորդության բոլոր երեք անձերը ապրում են հավատացյալի մեջ:

1. Հոգին (տես Հովհ. 14:16-17; Հն. 8:11, 11; 1 Կոր. 3:16; 6:19; 2 Տիմ. 1:14)
2. Որդին (տես Մաթ. 28:20; Հովհ. 14:20,23; 15:4-5; Հն. 8:10; 2 Կոր. 13:5; Գաղ. 2:20; Եփ. 3:17; Կող. 1:27)
3. Հայրը (տես Հովհ. 14:23; 2 Կոր. 6:16)

Հավատացյալները Աստծով բռնված մարդիկ են: Սա կամավոր կերպով տարբերվում է դիվային տիրապետումից, որ հավատացյալի հետագա համագործակցությունը կարևոր է յուրաքանչյուր փուլում և մակարդակում: Դիվայինը ոչնչացնում է անհատի կամքը, բայց ինքնիշխան Աստվածը ընտրել է հարգել իր մարդկային ստեղծագործության ազատությունը: Միայն քրիստոնեական հասունության մեջ (Քրիստոսանմանություն) Աստծո կամքը կդառնա գերիշխող առաջնորդող ուժ:

6:20 «Որովհետև մեծ գնով գնուեցաք» Սա աօրիստ կրավորական սահմանական է: Այս փոխաբերությունը գալիս է ստրկական շուկայից (տես 1 Կոր. 7:22-23; Հն. 3:24; Գաղ. 3:13; 4:5): Հին Կտակարանում սա հայտնի էր որպես *go'el*, որը մոտ հարազատը ետ դարձրեց ստրկությունից (տես Ղև. 25:25): Սա հղում է Քրիստոսի փոխանորդ լինելուն, պատշաճ քավությանը (տես Ես. 53; Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21): Երբ մեկը ընդունում է Քրիստոսին, նա վերացնում է իր անձնական իրավունքները իր մարմնի համար, նա ստանձնում է ամբողջ տաճարի խմբակային առողջության և կենսունակության պատասխանատվությունը (տես 1 Կոր. 12:7):

▪ **«փառաւորեցէք Աստուծուն ձեր մարմնում»:** Սա աօրիստ կրավորական հրամայական է, հրատապ հրաման, ոչ թե ընտրություն: Թե ինչպես են հավատացյալներն ապրում կարևոր է փրկության վստահության, խաղաղության, վկայության համար: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (*DOXA*) 1 Կոր.2:7:

Քրիստոնեական կյանքում խուսափելու երկու ծայրահեղություն կա. 1) ամեն ինչ ոչ պատշաճ է; 2) ամեն ինչ պատշաճ է: Մեր մարմինները Աստծո համար են, ոչ թե ինքնության համար; նրանք ծառայելու համար են, ոչ թե մեղքի համար (տես Հն. 6): Մարմնի այս տեսակետը շատ տարբերվում է մարմնի հունական տեսակետից, որպես հոգու բանտախցիկ: Մարմինը չար է, բայց դա հոգևոր կյանքի մարտադրյուն է (տես Եփ. 6:10-20):

Կա նաև լրացուցիչ արտահայտություն NKJV-ում, «և ձեր հոգումն՝ որ Աստծունն է», որը մի քանի ուշ երկաթագրերում կա և շատ ավելի ուշ կրկնվող հունարեն ձեռագրերում: Այնուամենայնիվ, հին տեքստերը չունեն դա: Այն P⁴⁶, α, A, B, C*, D*, F կամ G-ի մեջ չէ: UBS⁴-ը ավելի կարճ տեքստ է տալիս «Ա» վարկանիշը (որոշակի):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Արդյո՞ք այս գլուխը սովորեցնում է, որ մեր օրերում քրիստոնյաները չպետք է դատարան դիմեն կամ գնան:
2. Ինչպե՞ս և ե՞րբ են սրբերը դատելու հրեշտակներին:
3. Արդյո՞ք 9-րդ և 10-րդ համարների մեղքերի ցուցակը վերաբերում է անհատական գործողություններին կամ սովորական ապրելակերպին:

4. Երբ Պողոսը պնդում է, որ ամեն ինչ թույլատրելի է ինձ համար, ի՞նչ է նշանակում հենց այդ արտահայտությունը, կապված Աստվածաշնչի անձնական սովորությունների և որոշակի հրահանգների հետ:
5. Ինչո՞ւ են սեռական օրինախախտումները հոգևորապես նման հոգևոր խնդիրներին:
6. Բացատրեք մարմնի հունական տեսակետի և մարմնի քրիստոնեական տեսակետի տարբերությունը:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 7

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ամուսնության հետ կապված խնդիրներ	Ամուսնության սկզբունքները	Ուղղություններ ամուսնության մասին	Հարցեր ամուսնության մասին	Ամուսնություն և կուսություն
7:1-7	7:1-9	7:1-7	7:1ա 7:1բ-5 7:6-7	7:1-7
7:8-16	Պահեք ձեր ամուսնության երդումը 7:10-16	7:8-9 7:10-11 7:12-16	7:8-9 7:10-11 7:12-16	7:8-9 7:10-11 7:12-16
Կյանքը, որը Տերն է որոշել	Ապրիր, ինչպես կանչված ես	Վախճանաբանություն և փոփոխություններ սոցիալական և ընտանեկան կարգավիճակում	Ապրիր, ինչպես Աստված քեզ կանչեց	
7:17-24	7:17-24	7:17-20 7:21-24	7:17-24	7:17-24
Չամուսնացած և այրիներ	Չամուսնացածին և այրիներին		Հարցեր չամուսնացածների և այրիների մասին	
7:25-35	7:25-40	7:25-31 7:32-35	7:25 7:26-28 7:29-31 7:32-34	7:25-28 7:29-31 7:32-35

		7:35	
7:36-38	7:36-38	7:36-38	7:36-38
7:39-40	7:39-40	7:39-40	7:39-40

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ 1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 7:1-40

Ա. Սա Պողոսի ամենաձավալուն քննարկումն է ընտանեկան հարաբերությունների մասին: Նա խոսում է

1. սեռական անբարոյականություն, 6:9-20; 7:2
2. ամուսնություն, 1 Կոր. 7:2-5, 10-16, 28
3. ամուրիներ, 1 Կոր. 7:6-9, 25-26, 29-35
4. կույսեր, 1 Կոր. 7:36-38
5. ամուրիների և այրիների երկրորդ ամուսնությունը, 1 Կոր. 7:39-40
6. կրկնվող թեմա է, «մնա ինչպես կաս», 1 Կոր. 7:1, 6-7, 8, 10, 17-24, 26-35, 37, 40; ներկայիս ճգնաժամի և սպասված *parousia* պատճառով, չնայած նա թույլ է տալիս բացատրություններ

Բ. Գլուխ 7-ը շատ լավ օրինակ է, թե ինչպես պետք է տեղական և ժամանակավոր իրավիճակը հաշվի առնել, մինչև մեկը կկարողանա Աստվածաշունչը ճշգրիտ կերպով մեկնաբանել կամ քաղել համընդհանուր սկզբունքներ կիրառության համար: Շատ դժվար է 1 Կորնթացիսի գրքում իմանալ պատմական միջավայրը, քանի որ

1. մենք հստակ չգիտենք, թե ինչ ընթացիկ ճգնաժամ էր Կորնթոսում (հնարավոր է սով)
2. մենք չգիտենք, թե որ պառակտության խմբին է Պողոսը դիմում և որ համարներում (այսինքն, ասկետիկներ կամ ազատամիտներ)
3. մենք չունենք այն նամակը, որը եկեղեցին գրել էր Պողոսին՝ տալով այս հարցերը (տես 1 Կոր. 7:1,25; 8: 1; 12:1; 16:1,12):

- Գ. Կորնթոսում կարծես թե եղել են երկու անպատշաճ վերաբերմունք/պատակաստություններ, որոնք մեծ տարածանություններ են առաջացրել: Առաջինը այն մարդիկ էին, ովքեր հակված էին դեպի ասկետիզմը (տես 1 Կոր. 7:1): Մյուս խումբը նրանք էին, ովքեր հակված էին բարոյական թուլությանը կամ անտիսոմիանիզմին (տես 1 Կոր. 6:12; 10:23): Բոլոր ճշմարտությունների վրա հարձակվում են ծայրահեղականները: 1 Կոր. 7-ում Պողոսը փորձում է քայլել գործնական և աստվածաբանական խճճվածությամբ, այդ ավելորդությունների միջև, մինչդեռ խոսում է երկու խմբերի մասին:
- Դ. 7-րդ գլուխի սահուն հերթական թեման: Այն բնութագրվում է 17, 20, 24, 26, 40 համարներով և 8-րդ համարում ենթադրություն է արել: Այս թեման «մնացեք այնպես, ինչպես կաք», քանի որ ժամանակը կարճ է: Սա չի կարող լինել համընդհանուր որովհետև
1. դա կապված է հալածանքի ժամանակաշրջանի հետ
 2. ամուսնությունը Աստծո կամքն է մարդկության համար (տես Ծննդ. 1:28)
 3. այս եկեղեցին ուներ ներքին խնդիրներ կեղծ ուսուցիչների հետ
- Զարմանալի է, թե որ կատեգորիայում է (այսինքն, երբեք ամուսնացած չի եղել, երբ ամուսնացած է կամ ամուսնացած անհավատի հետ) Պողոսը իրեն փորձառու: Գուցե նա բացառությամբ գիտեր բոլորին: Հրեաների մեծ մասը ամուսնացած էր Ծննդ. 1:28-ի ռաբիական մեկնաբանությունից, ինչպես նաև ավանդույթից դուրս: Պողոսի կինը կամ մահացած էր (այսինքն, նա այրի էր) կամ նա թողեց նրան Պողոսի նոր հավատքի պատճառով (այսինքն, նա բաժանվեց): Իր փրկության և ծառայության կոչման պահին (այսինքն, Դամասկոս ճանապարհը) նա անձամբ ընտրեց ամուսնությունը, ինչպես Բառնաբասը, բայց երբեք չի դատապարտել Պետրոսի ամուսնությունը (տես 1 Կոր. 9:5):
- Ե. Ամուսնությունը Աստվածաշնչում ակնկալվող նորմ է (տես Ծննդ. 1:28, 2:18): Պողոսը, հավանաբար, մի ժամանակ ամուսնացավ (այսինքն, Գործք 26:10-ի իմաստը, եթե Պողոսը Մինեդրիոնի անդամ էր, ապա նա պետք է ամուսնացած լիներ): Նա պնդում է, որ ամուսնությունը հավատացյալի համար պատվաբեր վիճակ էր (1 Կոր. 6:16; 7:14; 2 Կոր. 11:2 և Եփ. 5:22-31): Պետք է հիշենք, որ Պողոսը դիմում է տեղական առաջին դարի, հեթանոսական, պատակաստող, կոսմոպոլիտան իրավիճակին:
- Զ. Պողոսի 19-րդ համարի թլփատման մասին պնդումը հաստատում է, որ Պողոսի համար Հին Կտակարանյան ծեսերն ու կանոնները անցել են Հիսուս Քրիստոսի ավետարանում, հավատացյալ հեթանոսների համար (տես Գործք 15) և հետևաբար պարտադիր չէ: Աստվածաբանորեն ասած, այն սովորաբար հայտարարվում է, որ Պողոսը հաստատում է Հին Կտակարանի էթիկական կողմերը, սակայն անտեսում է ծիսական կողմերը: Որոշակի չափով դա ճիշտ է:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 7:1-7
¹Բայց այն բաների համար՝ որ ինձ գրեցիք, ասում եմ թե՛ Լաւ է մարդիս որ կնկայ չ'մօտենայ: ² Սակայն պոռնկութեան պատճառով՝ թող ամեն մարդ իր կինն ունենայ. Եւ ամեն մէկ կին թող իր մարդն ունենայ: ³Մարդը թող իր կնկայ պարտքը վճարէ. Եւ այնպէս էլ կինն իր մարդին: ⁴ Կինն իր մարմնի վերայ իշխանութիւն չ'ունի, այլ մարդը. Այնպէս էլ մարդն իր մարմնի վերայ իշխանութիւն չ'ունի, այլ կինը: ⁵ Իրար մի գրկէք. Բայց միայն իրար հետ միաբանուելով մի քիչ ժամանակի համար, որ ծովապահուսեան եւ՝ աղօթքի պարապուիք. Եւ դարձեալ մէկտեղ դարձէք, որ սատանան չ'փորձէ:

ձեզ՝ ձեր անժուժկալութեան պատճառովը. ⁶ Բայց այս թոյլ տալով եմ ասում, եւ ոչ թէ հրամանով: ⁷ Որովհետեւ կամենում եմ՝ որ ամեն մարդ ինձ պէս լինէր. բայց ամեն մարդ իր յատուկ շնորհքն ունի Աստուածանից. Մէկն այսպէս եւ միւսն այնպէս:

7:1 «Բայց այն բաների համար՝ որ ինձ գրեցիք» Հնարավոր է, 1-6 գլուխներում նշված հարցերը հասցեագրված էր Պողոսին Քղոեի ընտանիքի կողմից: «Բայց այն բաների համար» արտահայտությունը վերաբերում է կոնկրետ հարցերին, որ Կորնթոսի եկեղեցին ուղարկել է Պողոսին հավանաբար Ստեփանոսի, Փորտունատի և Աքայիկոսի կողմից (տես 1 Կոր. 7:25; 8:1; 12:1; 16:1,12): Այս գլուխը շատ դժվար է մեկնաբանել, առանց Կորնթացիների խնդրած հարցերի մասին իմանալու և ով հարցրեց նրանց (հավատարիմ հավատացյալները, ազատամիտ խումբ, ասկետիկների խումբ կամ երկպառակտող եկեղեցիներից մեկը):

Արևելահայերեն «Լաւ է մարդիս որ կնկայ չ'մօտենայ»
Արևմտահայերեն «աղէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ»

NASB. NKJV «տղամարդկանց համար լավ է, որ կնոջը չդիպչեն»
NRSV «տղամարդկանց համար լավ է, ոչ մի կնոջ չդիպչել»
TEV «Մարդու համար լավ է, որ չամուսնանա»
NJB «Այո, լավ բան է մարդու համար, որ կնոջը չդիպչի»
Peshitta «Ամուսինը երբեմն իր կնոջ հետ մտերմություն պետք է չունենա»
REB «Դու ասում ես, որ լավ է մարդու համար, որ կնոջ հետ շփում չունենա»

«Լավ» տերմինը ունի լայն իմաստ, բայց այս կոնտեքստում դա նշանակում է «շահավետ» կամ «մեկի օգտին» (տես 1 Կոր. 7:1,8,26): Այն նույն իմաստով օգտագործվում է Սեպտուագինտում, Ծննդ. 2:18: Պողոսի ամբողջ նպատակն է, թե որն է լավագույնը անհատի համար տառապանքի ժամանակ և որն է լավագույնը Աստծո Թագավորության համար:

Սա կարող է վերաբերել

1. մեջբերում նամակից, որը Կորնթացիները գրել են Պողոսին
2. երկպառակտող խմբերից մեկի կարգախոսը (այսինքն, Գորդոն Ֆիլի)
3. Պողոսի քարոզչությունից դուրս բերված արտահայտությունը, բայց սխալ է մեկնաբանվել և կիրառվել ասկետիկ, օրինական կամ լիբերալ ձևով

Այս «դիպչել» տերմինը ունի բազմաթիվ տարբեր իմաստներ, «ձեռքերը դնել», «կարգավորել», «ղեկավարել»: Այն օգտագործվել է փոխաբերականորեն սեռական կապի մեջ (տես LXX Ծննդ. 20:6; Առ. 6:29; Josephus 'Antiquities 1.163, նաև Plato, Legs 8.840a և Plutarch, Alex.M 21.4 Տես Bauer, Arndt, Gingrich և Danker's *Lexicon* , էջ 102, բայց ոչ սեռական իմաստով օգտագործված է կոյնե մագաղաթում Եզիպտոսից):

Պողոսը չի արժեգրկում ամուսնությունը կամ մարդկային սեռական հարաբերությունը, այլ սեքսի չարաշահումը: Մարդիկ միշտ Աստծո պարզները վերցնում են Աստծո սահմաններից դուրս: Կորնթոսի սոցիալական կլիման ծայրաստիճան անբարոյական էր (տես 1 Կոր. 7:2ա):

7:2

Արևելահայերեն «Մակայն պոռնկութեան պատճառով»
Արևմտահայերեն «Բայց պոռնկութիւնը արգիլելու համար»

NASB «Բայց անբարոյականության պատճառով»
NKJV «Այնուամենայնիվ, սեռական անբարոյականության պատճառով»
NRSV «Բայց սեռական անբարոյականության դեպքերի պատճառով»

TEV «Բայց քանի որ շատ անբարոյականություն կա»

NJB «ղեռ անբարոյությունից խուսափելու համար»

Ամուսնությունը Պողոսի համար խնդիր չէր: Սա ներկա ներգործական հրամայական, երրորդ դեմք, եզակի թիվ է: Շատերը հավատում են, որ նա ռաբբի էր, քանի որ նա սովորել էր ռաբբի Գամաղիելի ձեռքի տակ և նախանձախնդիր էր օրենքի համար: Նա գիտեր, որ ամուսնությունը անհրաժեշտություն է համարվում Աստուծ «Ծննդոց» գիրքը կատարելու համար, «աճեցեք և շատացեք և լցրեք երկիրը» (տես Ծննդ. 1:28; 9:1,7): Սեքսը Աստծո պարզն է: Հեթանոսական հասարակությունը սեքսուալությամբ թույլատրելի և անբարո էր, քանի որ այն օգտագործում էր հեթանոսական պտղաբերության երկրպագությունը: Պողոսը անհրաժեշտ էր համարում այդ հարցը լուծելու համար:

Պողոսն անդրադառնում է երկու հարցի, 1) ամուրի մնալու աստվածաբանական թեման, և 2) հասարակական լարվածության և հավածանքի ներկայիս դրությունը: Կա ամուրիության հոգևոր պարզ: Դա ավելի հոգևոր չէ, քան ամուսնությունը: Միայնակ անձնավորությունը կարող է նվիրել ավելի շատ ժամանակ, էներգիա և անձնական ռեսուրսներ ծառայությանը: Սա լավ է, բայց ոչ բոլորի համար, ոչ մեծամասնության համար:

Այս կոնտեքստում Պողոսի իրական խնդիրը ամուրիությունը չէ, այլ «մնացեք այնպես, ինչպես կաք»: Ժամանակները դժվար էին (26 հ.) և Երկրորդ Գալստյանը նախորդող ժամանակը (29 հ.) կարճ է: Պատմությունը պատմում է մեզ այս ժամանակահատվածում կայսրության երեք սովի մասին: Պողոսը հաստատում է ամուսնությունը (տես 1 Կոր. 6:16), սակայն ներկա սոցիալական սահմաններում պաշտպանում է ամուրիությունը: Սա պարտադիր համընդհանուր սկզբունք չէ, այլ ժամանակավոր, մշակութային հուշում:

Պողոսի անհանգստությունը 1 Կոր. 7:2-ում առաջին դարի հունա-հռոմեական մշակույթի տարածված անբարոյականությունն է: Այլասեռ հասարակությունում հավատարիմ, մոնոգամ ամուսնությունը հոգևոր, էմոցիոնալ և ֆիզիկապես ավելի շատ է, քան հեթանոսական երկրպագությունը: Ոչ միայն ամուսնությունը հաստատված է, այլ հաստատվում է յուրաքանչյուր գործընկերոջ պատշաճ պատասխանատվությունը:

▪ **«Թող ամեն մարդ իր կինն ունենայ. Եւ ամեն մէկ կին թող իր մարդն ունենայ»** Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ են, բայց չեն գործում որպես հրաման, եթե դա չի նախատեսվում 1 Կոր. 7:5: Սա քերականորեն զուգահեռ կառույց է, ինչպես 1 Կոր. 7:3 և 4: Ամուսնությունը բացառություն չէ. դա նորմ է, այլ ոչ թե զիջում (տես 1 Տիմ. 4:3; Եբ. 13:4):

7:3 Այս համարն ունի նաև երկու ներկա ներգործական հրամայական: Պողոսը տալիս է չորս ուղեցույց երկու համարում: Հնարավոր է, որ Պողոսը զբաղվի երկու խնդրով, որոնք վերաբերում են մարդկային սեռական հակումներին այս բնագավառում (տես Gordon D. Fee, *To What End Exegesis*, էջ 88-98):

1. այլասեռ քրիստոնյաները, որոնք շարունակում էին իրենց նախկին հեթանոսական սեռական վարվելակերպը, հատկապես հեթանոսական տաճարներում և տոների ժամանակ (այսինքն, ազատամիտները)
2. Քրիստոնյաները, որոնք նույնիսկ ամուսնական սեքսը դարձրել էին հոգևոր արգելք (այսինքն, ասկետիկներ, տես 1 Կոր. 7:5-ը և դրանով 1 Կոր 7:1-ը դառնում է կարգախոս կամ երկպառակություններից մեկը)

7:4 Այս համարը ցույց է տալիս, որ Պողոսը կարող է խոսել իր մշակույթի սեռական անհավասարության մասին (տես Եփ. 5:21,22-33): Պողոսի օրոք կանայք քիչ իրավունքներ ունեին: Պողոսը նույնպես դիմում է ամուսնացած գործընկերներին՝ փոխադարձ պատասխանատվությամբ: Սեռական կարիքները չար չեն: Նրանք Աստծո կողմից տրված ցանկություն են:

7:5 «Իրար մի գրկեք» Մա ներկա ներգործական հրամայական է ժխտական մասնիկով, որը սովորաբար ենթադրում է «դադարեցնել գործընթացի մեջ եղած գործը»: Մա վերաբերում է Կորնթոսի եկեղեցում ասկետիզմի/սանձահարման խնդրին: Այն նաև պնդում է, որ սեքսը կամ սեքսից հրաժարվելը չպետք է գործիք լինի իր կողակցին վերահսկելու համար:

▪ **«բայց միաբանուելով»** Այս արտահայտությունը սկսվում է *ei mēti*, որը նշանակում է «եթե գուցե» կամ «եթե դա լինի» (տես Ղուկ. 9:13): Դա հնարավոր բացատրություն է տալիս նշված նորմերին: Այս տիպի կառուցվածքը (այսինքն, կանոնը հետո բացատրությունը) օգտագործվում է այս գլխում: Պողոսը քայլում է աստվածաբանական ճոպանի վրայով՝ օրինականության / ասկետիցիզմի և ազատականության/անտինոմիանիզմի միջև: Յուրաքանչյուր երկպառակտություն իր օրակարգն ու կարգախոսներն ուներ:

Նկատեք, որ Պողոսն արտահայտում է հավասարազոր մոդել: Ամուսինն իրավունք չունի միայնակ ընտրություն կատարել: Աստվածաշնչյան տղամարդու գլխավորությունը ողբերգականորեն սխալ է հասկացվում: Ամուսինը պետք է ինքնուրույն կերպով գործի ընտանիքի հասունության համար (տես Եփ. 5:25-29), այլ ոչ թե անձնական շահի կամ անձնական նախապիրության համար, այլ հոգևոր տնտեսության մեջ:

**ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԱՅՔ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ
SPECIAL TOPIC: WOMEN IN THE BIBLE**

- I. Հին Կտակարան
 - Ա. Մշակույթորեն կանայք համարվում էին սեփականություն, գույք
 - 1. ընդգրկվել են սեփականության, գույքի ցանկում (Ելից 20:17)
 - 2. ստրուկ կանանց կամ աղախինների պես էին վարվում (Ելից 21: 7-11)
 - 3. կանանց ուխտերը/երդումները չեղյալ էին համարվում սոցիալապես պատասխանատու տղամարդկանց կողմից (Թվոց 30)
 - 4. կանայք, որպես պատերազմական ավար (2 Օրինաց 20:10-14; 21:10-14)
 - Բ. Գործնականում կար հավասարություն
 - 1. Աստծո Իր պատկերով արու և էգ ստեղծեց (Ծննդոց 1: 26-27)
 - 2. պատվել հորն ու մորը (Ելից 20:12 [2 Օր.5:16])
 - 3. հարգել հորն ու մորը (Ղև. 19: 3, 20: 9)
 - 4. տղամարդիկ ու կանայք կարող էին ուխտավորներ լինել (Թվ. 6: 1-2)
 - 5. դուստրերը ժառանգության իրավունք ունեն (Թվ. 27: 1-11)
 - 6. ուխտի ժողովրդի մասն են (2 Օրինաց 29: 10-12)
 - 7. հետևել հոր և մոր ուսումունքին (Առակաց 1:8; 6:20)
 - 8. Եմանի որդիներն ու դուստրերը (Ղևիի ընտանիքից) գլխավորում էին երաժշտությունը Տաճարում (1Մնաց. 25: 5-6)
 - 9. որդիներն ու աղջիկները պիտի մարգարեանան նոր դարաշրջանում (Հովել 2: 28-29)
 - Գ. Կանայք առաջնորդության դերերում
 - 1. Մովսեսի քույր Մարիամը կոչվում էր մարգարեուհի (Ելից 15: 20-21 նաև Միքիա 6: 4):
 - 2. Աստծո կողմից օժտված կանայք ձեռքերով մանեցին Խորանի համար (Ելից 35: 25-26):
 - 3. ամուսնացած կին Դեբորա անունով նույնպես մարգարեուհի (տես Դատ. 4:4), որը գլխավորում էր բոլոր ցեղերին (Դատ. 4: 4-5, 5: 7)
 - 4. Ողորան մարգարեուհի էր, որին Յովսիա թագավորը պատվիրեց կարդալ և մեկնաբանել նոր հայտնաբերված «Օրենքի Գիրքը» (4 Թագ. 22:14; 2 Մնաց. 34:

22-27)

- 5. Եսթեր թագուհին, մի աստվածավախ կին, որը փրկեց հրեաներին Պարսկաստանում

II. Նոր Կտակարան

Ա. Մշակույթորեն կանայք թե հուդայականության մեջ և թե հունա-հռոմեական աշխարհում երկրորդ կարգի քաղաքացիներ էին, շատ քիչ իրավունքներով կամ արտոնություններով (բացառությամբ Մակեդոնիայի):

Բ. Կանայք առաջնորդության դերերում

- 1. Եղիսաբեթ և Մարիամ, աստվածավախ կանայք Աստծո համար (Ղուկ.1-2)
- 2. Աննա, մարգարեուհի ծառայում է տաճարում (Ղուկ. 2:36)
- 3. Լիդիա, հավատացյալ և տնային եկեղեցու առաջնորդ (Գործք 16: 14,40)
- 4. Փիլիպոսի չորս կույս աղջիկները մարգարեուհիներ էին (Գործք 21: 8-9)
- 5. Փիբե, սպասավոր Կենքրայի եկեղեցում (Հռ. 16:1)
- 6. Պրիսկիլան (Պրիսկա) Պողոսի գործընկեր և Ապոլոսի ուսուցիչը (Գործք 18:26; Հռ. 16: 3)
- 7. Մարիամը, Տրիփանոսը, Տրիփոսը, Պերսիդեն, Յուլիան, Ներեոսի քույրը, Պողոսի մի խումբ կին գործընկերներ (Հռ. 16: 6-16)
- 8. Յունիա (KJV), հնարավոր է կին առաքյալ (Հռ. 16: 7)
- 9. Եվոդիան և Սյունտիքը, Պողոսի գործընկերներ (Փիլ. 4: 2-3)

III. Ինչպե՞ս է ժամանակակից հավատացյալը հավասարակշռում իրարամերժ աստվածաշնչյան օրինակները:

Ա. Ինչպե՞ս կարելի է որոշել պատմական կամ մշակույթային ճշմարտությունները, որոնք կիրառելի են միայն բնագիր կոնտեքստում, հավիտենական ճշմարտությունները վավեր են բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիների, բոլոր հավատացյալների համար:

- 1. Մենք պետք է բուն ներշնչված հեղինակի մտադրությունը շատ լուրջ ընդունենք: Աստվածաշունչը Աստծո Խոսքն է և գործնական հավատքի միակ աղբյուրը:
- 2. Մենք պետք է գործ ունենանք ակնհայտ պատմականորեն պայմանավորված ներշնչված տեքստերի հետ:
 - ա. Իսրայելի աղանդները (այսինքն, ծես և պատարագ) և (հմմտ. Գործք 15; Գաղ. 3)
 - բ. առաջին դարի Հուդայականությունը
 - գ. Պողոսի ակնհայ պատմականորեն պայմանավորված մտքերը 1 Կորն.-ում
 - (1) հեթանոսական Հռոմի իրավական համակարգը (1 Կոր. 6)
 - (2) մնալ ստրուկ (1 Կոր. 7: 20-24)
 - (3) ամուրիություն (1 Կոր. 7: 1-35)
 - (4) կույսերը (1 Կոր. 7: 36-38)
 - (5) կուռքին զոհաբերած կերակուր (1 Կոր. 8; 10: 23-33)
 - (6) Տիրոջ ընթրիքին անարժանաբար մոտենալը (1 Կոր. 11)
- 3. Աստված լիարժեք և հստակ բացահայտեց Իրեն մի կոնկրետ մշակույթի, կոնկրետ օրվա մեջ: Մենք պետք է լրջորեն մոտենանք հայտնությանը, բայց ոչ պատմական հարմարեցման իր ամեն առումով: Աստծո Խոսքը գրվել է մարդկային բառերով, ուղղված որոշակի մշակույթի որոշակի ժամանակ մեջ:

Բ. Աստվածաշնչյան մեկնաբանությունը պետք է փնտրի բնօրինակի հեղինակի մտադրությունը: Ի՞նչ էր նա ասում իր օրերում: Սա ֆունդամենտալ և կարևոր է

պատշաճ մեկնաբանության համար: Բայց հետո մենք պետք է կիրառենք այն մեր օրերում: Այժմ, ահա խնդիրը կանանց լիդերության (իրական մեկնաբանական խնդիրը կարող է սահմանել տերմինը: Արդյո՞ք ք միայն հովիվների ծառայությունն է համարվում առաջնորդություն: Արդյո՞ք սպասավորները/սարկավագուհիները կամ մարգարեուհիները համարվում էին առաջնորդներ): Միանգամայն պարզ է, որ Պողոսը 1 Կոր. 14: 34-35 և 1 Տիմ. 2: 9-15 հաստատում է, որ կանայք չպետք է առաջնորդի դեր կատարեն հրապարակավ պաշտամունքի ժամանակ: Բայց ինչպե՞ս կարող եմ կիրառել դա այսօր: Ես չեմ ուզում, որ Պողոսի մշակույթը կամ իմ մշակույթը լռեցնի Աստծու Խոսքն ու կամքը: Հնարավոր է, որ Պողոսի օրոք չափազանց սահմանափակ էր, բայց նաև իմ օրոք կարող է լինել շատ բաց: Ես անհարմար եմ զգում ասելով, որ Պողոսի խոսքերը և ուսմունքները պայմանական են, առաջին դարի, տեղական իրավիճակային ճշմարտություններ: Ո՞վ եմ ես, որ թույլ տամ, իմ միտքը կամ իմ մշակույթը ժխտի ներշնչված հեղինակին: Սակայն ի՞նչ անեմ, երբ կան կին առաջնորդների աստվածաշնչյան օրինակներ (անգամ Պողոսի գրվածքներում, տես Հռ.16): Լավ օրինակ է Պողոսի քննարկումը հրապարակավ պաշտամունքի մասին 1 Կոր. 11-14:1 Կոր. 11: 5-ում նա կարծես թույլ է տալիս կանանց քարոզել և աղոթել հրապարակավ պաշտամունքի ժամանակ իրենց գլուխները ծածկած, սակայն 14: 34-35 նա պահանջում է, որ նրանք լուռ մնան: Կային սպասավորուհիներ/սարկավագուհիներ (տես Հռ.16:1) և մարգարեուհիներ (տես Գործք 21: 9):

Հենց այս բազմազանությունն է, որ տալիս է ինձ ազատություն բացահայտելու Պողոսի մեկնաբանությունները (ինչը վերաբերվում է կանանց սահմանափակումներին), թե ինչպես է սահմանափակում առաջին դարի Կորնթոսը և Եփեսոսը: Այս երկու եկեղեցիներում էլ կային խնդիրներ կապված կանանց նոր-հիմնադրված ազատությունը իրականացնելու հետ (cf. Bruce Winter, *After Paul Left Corinth*), որը կարող էր դժվարություններ առաջացնել եկեղեցու համար՝ հասնելու իրենց հասարակությանը Քրիստոսի համար: Նրանց ազատությունը պետք է սահմանափակվեր, որպեսզի ավետարանը կարողանար ավելի արդյունավետ լինել: Իմ օրը Պողոսի ճիշտ հակառակ օրն է: Իմ օրերում ավետարանը կարող է սահմանափակվել, եթե պարզ է, որ վերապատրաստված կանանց չի թույլատրվել ավետարանը բաժնեկցել, չի թույլատրվել առաջնորդել: Ո՞րն է հրապարակավ պաշտամունքի վերջնական նպատակը: Արդյո՞ք դա ավետարանչությունն է և աշակերտությունն չէ: Կարո՞ղ է Աստված փառավորվել և գոհություն ստանալ կին առաջնորդների միջոցով: Աստվածաշունչը որպես ամբողջություն կարծես թե ասում է «այո»:

Ես ուզում եմ զիջել Պողոսին; իմ աստվածաբանությունը հիմնականում Պողոս-յան է: Ես չեմ ուզում չափազանց ազդվել կամ աղավաղվել ժամանակակից ֆեմինիզմի միջոցով: Սակայն, ես զգում եմ, որ եկեղեցին դանդաղում է արձագանքել ակնհայտ աստվածաշնչյան ճշմարտություններին, ինչպես ստրկության, ռասիզմի, մոլեռանդության և սեքսի աննպատակահարմարությանը: Այն նաև դանդաղում է համապատասխան արձագանքել կանանց իրավունքների ոտնահարմանը ժամանակակից աշխարհում: Աստված Քրիստոսով ազատում է ծառային ու կնոջը: Ես համարձակվում եմ թույլ չտալ, որ մշակույթը ազդի տեքստի վրա:

- **«ինձ քննողների դեմ»** Պողոսը քննադատվում է Կորնթոսի մի խումբ կամ աստվածաբանական խմբավորումների կողմից (տես 1 Կոր. 2:15; 4: 3): Նրանք պնդում էին
 1. որ նա ճշմարիտ առաքյալ չէր
 2. որ նա փոխեց Երուսաղեմի առաքյալների ուղերձը
 3. որ միայն նա քարոզեց փողի համար

Այս մեղադրանքները կոնկրետ չեն նշվում, բայց ենթադրվում են պատմական իրավիճակից և Պողոսի այն թեմաներից, որոնց անդրադառնում է այս նամակում:

9: 4 Սա սկսում է մի շարք հարցեր (տես 1 Կոր. 9: 4-7), որտեղ Պողոսը պնդում է իր իրավունքը որպես Առաքյալ և որ աջակցություն է ունեցել տեղական եկեղեցիների կողմից: Սակայն նա անձամբ ընտրեց չգործածել իր իրավունքները (տես 1 Կոր. 9: 15,18; 1 Թես. 2: 6), սակայն հաստատում է այլ քրիստոնյա գործընկերների իրավունքները:

9: 5 «ման ածելու մեզ հետ, ինչպէս ուրիշ առաքեալները» Կոնտեքստը ուղղակիորեն չի սահմանում Առաքյալների կին ունենալու իրավունքը, չնայած սա անշուշտ ենթադրվում է, բայց Առաքյալների իրավունքն է ունենալ եկեղեցու աջակցություն, իրենց և իրենց կանանց համար:

«Առաքյալներ» տերմինը կարող է վերաբերել Տասներկուսին կամ տերմինի ավելի լայն գործածության (տես Գործք 14:4, 14; Հռ. 16: 6-7; 1 Կոր. 4: 9; Գաղ. 1:9; Եփ. 4:11; Փիլ. 2:25; 1 Թես. 2: 6): Քանի որ Պետրոսը առանձին է անվանվում, վերջին խումբը ենթադրվում է: Հնարավոր է նաև, որ այս եկեղեցում մի խումբ (այսինքն, խմբակցություններից մեկը) բարձրացնում էր Պետրոսի Առաքելությունը (տես 1 Կոր. 1: 12; 3:22):

Արևելահայերեն «քոյր կին»

Արևմտահայերեն «Քրիստոսով քոյր եղող կին»

NASB, NKJV, NRSV, NIV «հավատացյալ կին»

TEV, NJB, NEB, Peshitta «քրիստոնյա կին»

Հունարենում կա կրկնակի գույգ գոյականներ, «քույր, կին», որը իդիոմա էր «հավատացյալ կնոջ» համար: Պատմական խնդիրն այն է, թե ինչպես է դա կապված

1. կանայք, որոնք ուղեկցում էին Հիսուսին և Առաքյալների խմբին և օգնում նրանց (տես Մատթ. 27: 55; Մարկ. 15: 40-41):
2. Կին, ում մասին քննարկել է 1 Կոր. 7: 36-38 (այսինքն, դուստր կամ կույս գործընկեր կամ հարսնացու)
3. եկեղեցու առաջնորդների կանանց ծառայությունը, որը նման է սարկավագուհիների ծառայությանը Հո. 16: 1 կամ «այրիների դերին» ինչպես հովվական թղթերում (տես 1 Տիմ. 3:11; 5: 9-10):

Ամենայն հավանականությամբ, բոլոր տասներկու Առաքյալներն էլ ամուսնացած էին, քանի որ հրեաների մեջ ամուսնությունը շատ հազվադեպ էր: Հրեաներն ամուսնանում էին Ծննդ. 1:28; 9: 1,7-ի պատվիրանի պատճառով:

▪ **«ինչպես ուրիշ առաքեալները»** «Առաքյալ» տերմինն ունի մի քանի իմաստ Նոր Կտակարանում:

1. նրանք, ովքեր կանչվել էին Հիսուսի կողմից և հետևեցին Նրան Իր երկրային կյանքի ընթացքում
2. Պողոսը կանչվեց Դամասկոսի ճանապարհին հատուկ տեսիլքի միջոցով
3. եկեղեցում շարունակական պարզեր (տես Եփ. 4:11), որը մի քանի հոգու է ներառում

Այստեղ տեքստային խնդիրն այն է, թե ինչ ենք անում Պողոսի ցանկի հետ:

1. մնացած առաքյալները
2. Տիրոջ եղբայրները
3. Կեփասը
4. Բառնաբասը և Պողոսը

▪ **«Տիրոջ եղբայրը»** Ջերոմը (346-420թթ.) հավատում էր, որ նրանք Հիսուսի զարմիկներն էին: Եպիփանեսը (310-403թթ.) ասում էր, որ նրանք Հովսեփի նախորդ ամուսնությունից էին: Այս երկու մեկնաբանություններն էլ ակնհայտորեն վերաբերում են Մարիամի մասին զարգացող հռոմեական կաթոլիկ ենթադրություններին և ոչ թե Նոր Կտակարանին: Հիսուսից հետո Մարիամը ավելի շատ երեխաներ ունեցավ (տես Մատթ. 12: 26; 13: 55; Մարկ. 6: 3; Հովհ. 2:12; 7: 3,5,10; Գործք 1:14; Գաղ. 1:19):

Դա ենթադրում է, որ Հիսուսի մարմնավոր եղբայրները, ովքեր ակտիվ էին եկեղեցում, համարվում էին առաջնորդներ: Իրականում, Հիսուսի հարազատներից մեկը Երուսաղեմի եկեղեցու առաջնորդն էր մի քանի սերունդներ առաջին դարում, սկսած Հակոբոսից:

▪ **«Կեփասը»** Սա հունարեն *Petros*- ի արամեերեն ձևն է: Դա նշանակում էր խոշոր քարի կամ ժայռ (տես Մատթ. 8:14; Հովհ. 1:42): Կեփասը ամուսնացած էր (տես Մարկ. 1: 30):

Պողոսը Պետրոսին «Կեփաս» կոչեց 1 Կոր. 1:12; 3:22; 9: 5; 15: 5 և Գաղ. 1:18; 2: 9: Բայց Գաղ. 2: 7,8,11,14 նա նրան կոչում է Պետրոս: Թվում է, թե աստվածաբանական տարբերություն չկա, այլ, հավանաբար, գրական բազմազանություն: Նա ամենուր Ավետարաններում կոչվում է Պետրոս, բացի Հովհ. 1:42:

Հետաքրքիր է, որ եկեղեցին շատ բան է արել կապելով Պետրոսը (այսինքն՝ *Petros*) և «այս ժայռը» (այսինքն՝ *petra*) Մատթ. 16:18: Հիսուսը խոսում էր արամեերեն և այդ լեզվով երկու տերմինների միջև ընդհանրապես տարբերություն չկա:

9: 6 «Բառնաբասը» Բառնաբասը նույնպես կոչվում է առաքյալ, որը ցույց է տալիս տերմինի ավելի լայն կիրառումը (տես Եփ. 4:11), քան պարզապես առաջին Տասներկուսը (տես Գործք 14:14; 18.5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲԱՌՆԱԲԱՍ
SPECIAL TOPIC: BARNABAS

I. Մարդը

- Ա. Սկզբում կոչվում էր Հովսես (տես Գործք 4:36)
- Բ. ծնվել էր Կիպրոսում (տես Գործք 4:36)
- Գ. Ղևիի ցեղից էր (տես Գործք 4:36)
- Դ. մականվանվել էր «Միսիթարության որդի» (տես Գործք 4:36; 11:23)
- Ե. կոչվում «բարի մարդ» (տես Գործք 11:24)
- Զ. Երուսաղեմի եկեղեցու անդամ էր (տես Գործք 11:22) և ուղարկվեց որպես ներկայացուցիչ՝ ստուգելու Անտիոքի, Սիրիայի նոր աճող եկեղեցին (տես Գործք 11:19-28)
- Է. լցված էր Սուրբ Հոգով (տես Գործք 11:24)
- Ը. լի էր հավատքով (տես Գործք 11:24)
- Թ. նա ուներ մարգարեի և ուսուցչի հոգևոր պարզները (տես Գործք 13:1)
- Ժ. առաքյալ էր կոչվում (տես Գործք 14:14)

II. Նրա ծառայությունը

- Ա. Երուսաղեմում էր
 1. վաճառեց իր ունեցվածքը և ամբողջ գումարը տվեց Առաքյալներին՝ աղքատներին օգնելու համար (տես Գործք 4: 37)
 2. Երուսաղեմի եկեղեցու առաջնորդներից էր (Գործք 11:22)
- Բ. Պողոսի հետ էր
 1. Նա առաջիններից էր, որ հավատաց Պողոսի դարձին (տես Գործք 9:27)
 2. Նա գնաց Տարսոն, որպեսզի գտնի Պողոսին և բերի Անտիոք՝ նոր եկեղեցուն օգնելու համար (տես Գործք 11:24-26)
 3. Անտիոքի եկեղեցին ուղարկեց Բառնաբասին և Սողոսին Երուսաղեմի եկեղեցու աղքատների համար օգնություն տանելու (տես Գործք 11:29-30)
 4. Բառնաբասն ու Պողոսը գնում են իրենց առաջին միսիոներական ճամփորդությանը (տես Գործք 13:1-3)
 5. Բառնաբասը Կիպրոսում (իր հայրենիքում) թիմի առաջնորդն էր, սակայն շուտով Պողոսի առաջնորդությունը ճանաչվեց (տես Գործք 13:13)
 6. Նրանք զեկուցեցին Երուսաղեմում գտնվող եկեղեցուն՝ բացատրելու և փաստագրելու հեթանոսների մեջ իրենց միսիոներական գործը (տես Գործք 15:1-21, կոչվում է Երուսաղեմի Խորհուրդ)
 7. Գաղ. 2:11-14-ում արձանագրված հրեական կերակուրի և հեթանոսների հետ հաղորդակցվելու օրենքների շուրջ Բառնաբասն ու Պողոսը ունեցան տարաձայնություն
 8. Բառնաբասն ու Պողոսը ծրագրեցին իրենց երկրորդ միսիոներական ճամփորդությունը, սակայն վիճաբանություն սկսվեց Բառնաբասի քրոջ որդի՝ Հովհաննես Մարկոսի հարցով (տես Գող. 4:10), որը առաջին ճամփորդության ժամանակ թողել էր գործը (տես Գործք 13:13): Պողոսը մերժեց նրան վերցնել երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ, ուստի թիմը բաժանվեց երկու մասի (տես Գործք 15: 36- 41): Արդյունքում եղավ երկու թիմ (այսինքն Բառնաբասն ու Հովհաննես Մարկոսը, Պողոսն ու Շիղան):

III. Եկեղեցական Ավանդությունը (Եվսեբիոս)

- Ա. Բառնաբասը Հիսուսի կողմից ուղարկված այն յոթանասուն աշակերտներից մեկն էր (տես Ղուկ.10:1-20):

- Բ. Նա մահացավ իր հայրենիքում՝ Կիպրոսում, որպես քրիստոնյա նահատակ (*Acts of Barnabas*):
- Գ. Տերտուղիանոսն ասում է, որ Եբրայեցիներին ուղղված նամակը Բառնաբասն է գրել:
- Դ. Ալեքսանդրիացի Կլեմենտը ասում է, որ նա է գրել անկանոն Աստվածաշնչի Բառնաբասի Թուղթը:

Արևելահայերեն «Իշխանութիւն չ'ունինք չ'գործելու»

Արևմտահայերեն «Իրաւունք չունինք չգործելու»

NASB «Իրավունք չունի ձեռնպահ մնալ աշխատանքից»

NKJV «ովքեր իրավունք չունեն աշխատանքից հրաժարվել»

NRSV «ովքեր իրավունք չունեն ապրելու համար աշխատել»

TEV «միայն նրանք, ովքեր պետք է աշխատեն մեր ապրուստի համար»

Ռաբբիները հաստատում էին ձեռքով աշխատելու, վաստակելու արժանապատվությունը: Բոլոր ռաբբիները ստիպված էին ունենալ աշխարհիկ աշխատանք, քանի որ մեղք էր համարվում գումար ստանալ ՅԱՀՎԵԻ ճշմարտությունները ուսուցանելու համար (տես Pirke Abot 1:13, 4: 7): Պողոսը ընտրեց չօգտագործել իր իրավունքները, որպես ավետարանի քարոզիչ (1 Կոր. 9:18), հավանաբար պատճառն էր (1) իր հրեական ժառանգությունը կամ (2) այն մարդկանց հարձակումները, ովքեր պնդում էին, որ նա շահարկել է մարդկանց փողի համար (տես Գործք 20: 33; 2 Կոր. 11: 7-12; 12: 14-18)

9: 7-14 Այս համարներում կան մի քանի օրինակներ առօրյա կյանքից, որոնք օգտագործվում են որպես օրինաչափություններ, ցույց տալու համար, որ ավետարանի ծառայողները իրավունք ունեն վարձատրվելու իրենց ծառայած եկեղեցիներից (տես Հռ. 15:27): (1) զինվոր, հ.7; (2) խաղողի այգու այգեպան, 1 Կոր. 9: 7; (3) հովիվ, 1 Կոր. 9: 7; (4) եզր, 1 Կոր. 9: 9; (5) հերկողը և կալսողը, 1 Կոր. 9:10; (6) սերմնացան, 1 Կոր. 9:11 և (7) քահանա, 1 Կոր. 9:13:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 9:8-14

⁸Մի թե՛ ես այս բաները մարդի կերպով եմ ասում, կամ չե՞ որ օրենքն էլ է ասում այս բաները: ⁹ Որովհետև Մովսեսի օրենքումը գրուած է՝ Կալի մեջ աշխատող եզան դունչը մի կապիր. Մի թե՛ Աստուած եզների համար էր հոգս անում: ¹⁰Կամ չե՞ որ մանաւանդ մեզ համար է ասում. Որովհետև մեզ համար գրուեցաւ, որ հերկողը պետք է յոյսով հերկէ. Եւ կատողն իր յոյսը վայելելու յոյսովը կասէ: ¹¹Եթէ մենք ձեզանում հոգեւորները սերմեցինք, մեծ բա՛ն է որ ձեզանից մարմնատրները հնձենք: ¹² Եթէ ուրիշները ձեզ վերայ այդ իշխանութիւնը վայելում են, ո՞չ առաւել եւս մենք. բայց մենք այս իշխանութիւնը չ'բանեցրինք. Այլ ամեն բանի համբերում ենք, որ արգելք չ'դնենք Քրիստոսի աւետարանին: ¹³ Չ'զիտէք թէ նորանք՝ որ տաճարումը գործում են, տաճարիցն են ուտում. Եւ նորանք՝ որ սեղանի պաշտօնեաներ են, սեղանիցն են բաժին առնում: ¹⁴Այնպէս էլ Տէրը հրաման տուաւ աւետարանը քարոզողներին աւետարանիցն ապրել:

9:8

Արևելահայերեն «Իշխանութիւն չ'ունինք չ'գործելու»

Արևմտահայերեն «Իրաւունք չունինք չգործելու»

NASB «ըստ մարդկային դատողության»

NKJV «որպես մի մարդ»

NRSV «մարդու իշխանության մասին»

TEV «սահմանափակել եմ ինձ այս ամենօրյա օրինակների համար»

NJB «միայն աշխարհիկ իմաստություն»

Հունարեն տեքստն ունի «ոչ թե մարդու պես» (այսինքն, *anthrōpos*, որը վերաբերում է մարդկանց): Պողոսը մի քանի անգամ օգտագործում է այս հակասական արտահայտությունները (տես 1 Կոր. 3: 3; 9: 8; 15:32; Հռ. 3: 5; Գաղ. 1:11; 3:15): Դա իր իդիոմատիկ ձևն էր, երկրային մարդկային կերպերը հակադրելով (այսինքն, Հիսուսի ուսմունքը կամ Հոգու հասկացողությունը), նոր Հոգով առաջնորդվող մտածելակերպի և գործողության հետ:

9: 9 «Մովսեսի օրենքումը գրուած է» Հարցի լուծման հրեական կերպը հեղինակավոր մեջբերում էր, եթե հնարավոր է Մովսեսի գրքերից (այսինքն, Ծննդոց -2 Օրինաց): հետևաբար, Պողոսը մեջբերում է 2 Օր. 25: 4 (տես 1 Տիմ. 5:18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ ՄՈՎՍԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ
SPECIAL TOPIC: PAUL'S VIEWS OF THE MOSAIC LAW

Այն բարի է և Աստծուց է (տես Հռ. 7:12-16)

Ա. Դա Աստծո կողմից արդարանալու և ընդունվելու ճանապարհ չէ (դա կարող է նույնիսկ անեծք լինել, Գաղ. 3): Տես Հատուկ Թեմա: Մովսեսական Օրենքը և քրիստոնյան:

Բ. Այն նաև Աստծո կամքն է հավատացյալների համար, քանի որ դա Աստծո ինքնահայտնությունն է (Պողոսը հաճախ մեջբերում է Հին Կտակարանից՝ հանդիմանելու և / կամ խրախուսելու հավատացյալներին):

Գ. Հավատացյալները տեղեկացվում են Հին Կտակարանից (տես Հռ. 4: 23-24; 15: 4; 1 Կոր 10:6, 11), բայց չեն փրկվում Հին Կտակարանով (տես Գործք 15; Հռ. 4; Գաղ.3; Եբրայեցիս): Այն սրբացնում է, բայց ոչ արդարացնում:

Դ. Այն գործում է նոր ուխտի մեջ

1. ցույց տալ մարդու մեղավոր վիճակը (տես Գաղ. 3: 15-29)
2. ուղեցույց է փրկվածների համար հասարակության մեջ ապրելու համար
3. տեղեկացնել քրիստոնեական բարոյական որոշումների մասին

Օրենքի հետ կապված աստվածաբանական սպեկտորն է, անեծքից (տես Գաղ. 3: 10-13) անցնելով օրհնություն և հարատևության, որն առաջացնում է խնդիր՝ փորձելով հասկանալ Պողոսի Մովսեսական տեսակետը Օրենքի վերաբերյալ: A Man in Christ, James Stewart ցույց է տալիս Պողոսի պարադոքսալ մտածողությունը և գրելը.

«Դուք սովորաբար ակնկալում եք որ մարդը, ով ինքն է կառուցում մտածելակերպի և վարդապետության համակարգ, հնարավորինս խստորեն ամրագրել իր օգտագործած տերմինների իմաստը: Դուք ակնկալում եք, որ նա ճշգրտորեն արտահայտի իր մտքերը գաղափարախոսությունների մեջ: Դուք պահանջում եք, որ ձեր հեղինակի կողմից առանձին իմաստով օգտագործած բառը լինի ողջ իմաստով: Բայց եթե նայենք Պողոսի գործին՝ կհիասթափվենք: Նրա արտահայտություններից շատերը հոսուն են, ոչ թե կոշտ, գրում է. «Ես հավանում եմ Աստծո օրենքը, ներքին մարդով» (տես Հռ.7:12,22), բայց հստակ է *nomos*-ի մեկ այլ ասպեկտ, որը ստիպում է նրան ասել, «Քրիստոսը փրկեց մեզ օրենքի անեծքից (տես Գաղ. 3:13)» (Էջ 26):

▪ **«եզան դունչը մի կապիր»** Սա մեջբերում է Սեպտուագինդի 2 Օր. 25: 4-ից: «Դունչ» տերմինը *phimōsies* է, որը հանդիպում է հունարեն P⁴⁶, α, A, B³, C, D^{b, c}, K, L, P ձեռագրերում և շատ ավելի ուշ փոքրատառ ձեռագրերում: Սա նաև տերմին է, որն օգտագործվում է նույն տեքստի Պողոսի մեջբերման մեջ 1 Տիմ. 5:18-ում:

Այնուամենայնիվ, UBS⁴- ի խմբագիրները գերադասում են *kēmōseis* տարբերակը, որը նաև նշանակում է «դունչ» MSS B*, D*, F և G: Նրանց կարծիքն այնպիսին էր, որ թերևս քիչ օգտագործված

բառը (հավանաբար, ժարգոն էր), հավանաբար, բնօրինակն էր, քանի որ մյուսը պետք է որ վերցված լիներ Սեպտուագինդից իսկ մեջբերումը 1 Տիմոթեոսում էր, ուրեմն ինչու՞ դպիրը փոխեց այն: Որպես բնօրինակ ընտրված տերմինը ոչ մի մեկնաբանական տարբերություն չի ներկայացնում, սակայն այն ցույց է տալիս տեքստային սկզբունքները, որոնց ժամանակակից տեքստային քննադատները Կոյնե հունարենն ձեռագրերը գնահատում են ինքնագրության բնօրինակ ձևակերպումները վերականգնելու փորձի մեջ: Տես Հավելված 2:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԵՔՍՏՍՑԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: TEXTUAL CRITICISM

Այս թեման կքննարկվի այնպես, թե ինչպես բացատրել տեքստային նշումները, որոնք հայտնաբերված են այս մեկնաբանության մեջ:

Հետևյալ ուրվագիծը կօգտագործվի

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. «Ցածր քննադատության» հիմնախնդիրների և տեսությունների կարճ բացատրությունը նաև կոչվում է «տեքստային քննադատություն»:
- III. Հետագա ընթերցանության համար առաջարկվող աղբյուրները

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - 1. Մագորեթիկ տեքստ (MT) - Եբրայերեն բաղաձայներից կազմված տեքստը հաստատվել է Աքիբա ռաբբիի կողմից 100թ.-ին: Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները ավելացվել են 6-րդ դարում և ավարտվել են 9-րդ դարում: Դա արվել է մի հրեա Աստվածաշնչի գիտնական ընտանիքի կողմից, որը հայտնի է որպես մագորեթներ: Օգտագործված տեքստային ձևը նույնն էր, ինչ Միշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիթան և Վուլգատը:
 - 2. Սեպտուագինդ (LXX) - Ավանդույթն ասում է, որ Սեպտուագինդը (Հին Կտակարանի հունարեն թարգմանություն) թարգմանվել է 70 հրեա Աստվածաշնչի գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում Ալեքսանդրիան գրադարանի համար, Պտղոմեոս II- ի հովանավորությամբ (մ.թ.ա. 285-246): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը գալիս է «Արիստոսի նամակը»: LXX- ը հաճախ հիմնված էր ռաբբի Աքիբայի (MT) տեքստից ուրիշ եբրայերեն տեքստային ավանդույթների վրա:
 - 3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) - Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են հռոմեական Ք.Ա.ժամանակահատվածում (200 Ք.Ա. մինչև 70թ. Ք.Ն.), հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ»: Մեռյալ Ծովի մոտ գտնվող մի քանի վայրերում հայտնաբերված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն ուրիշ տեքստային ընտանիքին, ինչպես MT և LXX:
 - 4. Որոշ կոնկրետ օրինակներ, թե ինչպես են այդ տեքստերի համեմատությունը օգնել թարգմանիչներին հասկանալ Հին Կտակարանը:
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT- ն
 - (1) LXX- ը, Ես. 52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին քեզ վերայ»:
 - (2) MT-ը, Ես. 52:14, «Ինչպես շատերն են զարմանում ձեզ վրա»:
 - (3) Ես. 52:15 հաստատում է LXX- ի դերանվան տարբերությունը

(ա) LXX, «այնքան շատ ազգեր զարմանում են նրա վրա»

(բ) MT, «նա շատ ազգեր է ցանում»

բ. DSS- ն օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT- ն (1) DSS, Ես. 21: 8, «ապա տեսանողը աղաղակեց. Ես կանգնած եմ մի աշտարակի վրա ...»:

(2) MT, Ես. 21: 8, «և ես աղաղակեցի, առյուծ, Իմ Տերը, ես միշտ կանգնած եմ աշտարակի վրա»:

Թե LXX և թե DSS- ն օգնել են պարզել Ես. 53:11

1) LXX եւ DSS- ը, «իր անձի աշխատության պտուղը պիտի տեսնե և կշտանա»

(2) MT, «նա պիտի տեսնի իր հոգու տառապանքները, նա պիտի գոհ լինի»

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունիցիալներ): Ավելի ուշ, մոտավորապես 9-րդ դարում Ք.Չ., հայտնվեցին գրչագիր՝ ձեռագիրները (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Հաշվվում է մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Մուրբ Գրքի մոտ 2100 օրինակներ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:

2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով Նոր Կտակարանի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են Ք.Չ. 2-րդ դարին, բայց մեծամասնությունը 3-րդ և 4-րդ դարերին Ք.Չ.: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում Նոր Կտակարանի ամբողջությամբ: Եվ չնայած որ նրանք հանդիսանում են Նոր Կտակարանի ամենահին օրինակները, դա ավտոմատ կերպով չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան:

3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է եբրայերեն *α* (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիսշենդորֆի կոմից Մինա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է Ք.Չ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե Հին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:

4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու է, որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս:

5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է Ք.Չ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե Հին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:

6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:

7. Բեզայի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա այսպես կոչված «արևմտյան» տեքստի գլխավոր ներկայացուցիչն է: Այն պարունակում է շատ լրացումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը՝ անգլերեն Հակոբոս թագավորի թարգմանության ժամանակ:

8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.

- ա. Ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P⁷⁵, P⁶⁶ (մոտ Ք.Հ. 200թ.), պարունակում են Ավետարանները
 - (2) P⁴⁶ (մոտ Ք.Հ. 225թ.), պարունակում են Պողոսի նամակները
 - (3) P⁷² (մոտ Ք.Հ. 225-250թթ.), պարունակում են Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որ կոչվում է Վատիկանյան (մոտ Ք.Հ. 325թ.), ամփոփում է Հին և Նոր Կտակարանները ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ ձեռագրեր, որոնցում ներկայացված է այս տեսակի տեքստը x, C, L, W, 33
- բ. արևմտյան տեքստ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի մեջբերումները. Տերտուլիանոս, Կիպրիանոս և հին լատիներեն թարգմանություն
 - (2) Իրինիոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանություն
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բեզայի – այս տեսակի տեքստ
- գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) այս տեսակի ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները. Կապադովկիացիներ, ոսկեբերան և Թեոդոսեթ
 - (3) հին ձեռագրերի ժողովածու A, միայն Ավետարաններում
 - (4) հին ձեռագրերի ժողովածու E (8-րդ դար) ամբողջ Նոր Կտակարանը
- դ. Չորրորդ հնարավոր տեսակետը կեսարիան Պաղեստինից
 - (1) այն հիմնականում հանդիպում է միայն Մարկոսի Ավետարանում
 - (2) մասամբ հանդիպում են P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (մեծամասամբ, շատ դեպքերում)

ա. Վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառեր) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը, (հոմեոտելետոն/homoioteleuton)

- (1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա/haplography)
- (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնողություն (դիտոգրաֆիա/dittography)

բ. Լսողական վրիպու, տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի սխալ գրելաձև (իտացիզմ/itacism): Հաճախ գրվել է նույն ձևի հնչող հունարեն բառի ուրիշ բառ:

գ. Շատ հին հունարեն տեքստերում գլուխների և համարների

բաժանումները չկան, համարյա բացակայում է կետադրությունը և բառերի միջև բաժանումներ չկան: Հնարավոր է բաժանել տեքստը տարբեր տեղերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:

2. դիտավորյալ
 - ա. փոփոխություններ են արվել արտագրված տեքստի քերականական ձևի բարելավման համար
 - բ. փոփոխություններ են արվել այն բանի համար, որ համաձայնեցվի տեքստը ուրիշ աստվածաշնչյան տեքստերի հետ (գուգահեռ տեքստերի համաձայնեցում)
 - գ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի կապակցվեն ընթերցանության երկու կամ ավելի տարբերակների մեկ երկար կապակցված տեքստում (միաձուլում)
 - դ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի ուղղեն անհասկանալի թվացող տեքստը (հմմտ. 1 Կոր. 11:27 և 1 Հովհ. 5:7-8)
 - ե. Մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել լուսանցքներում պատմական կոնտեքստի վերաբերյալ կամ տեքստի ճիշտ մեկնաբանության մասին, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (հմմտ. Հովհ. 5:4)
- Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)
 1. ամենատարօրինակ կամ որ սովորական քերականական տեքստը, ավելի շուտ բնագիրն է
 2. ամենակարճ տեքստը, ավելի շուտ բնագիրն է
 3. ավելի հին տեքստին ավելի շատ կշիռ է տրված, նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, մնացած ամեն ինչում հավասար են
 4. ձեռագրեր, որ աշխարհագրականորեն բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին
 5. վարդապետականորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես նրանք, որոնք վերաբերվում են մեծ աստվածաբանական քննարկումներին ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում, օրինակ Երրորդության թեման 1 Հովհ. 5:7-8,
 6. գերադասելի է այն տեքստը, որն օգնում է բացատրել ուրիշ տարբերակների գոյությունը
 7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալ հավասարակշռությունը այսպիսի մտահոգող տարբերակներում
 - ա. Ի. Հարոլդ Գրինլի «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*) (էջ 68). «Ոչ մի քրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճաբանական տեքստի վրա և Նոր Կտակարանը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի օրթոդոքսային կամ վարդապետական չդարձնի, քան ներշնչված բնագիրն է»:
 - բ. Ու. Է. Կրիստելը ասաց Գրեգ Գարինսոնին «*Բիբլիսնգհեմ Նյուզ*»-ից, որ նա (Կրիստելը) չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման թարգմանիչների բազմադարյան գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց,- «ես հավատում եմ տեքստի

քննադատությանը: Եվ, որպես դրան հավատացող, ես կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկն այն ավելացրել է...»:

SBC ["Southern Baptist Convention"]-ի անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ (այն է հեղինակին չպատկանող և տեքստը աղավաղող բառեր մտցնել ձեռագրի մեջ)» ակնհայտ է նաև Հովհ. 5-ում, Բեթեզդայի ավազանի մոտ Հիսուսի պատմությունը: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (հմմտ. Մաթ. 27 և Գործք 1), Կրիստելն ասաց, - «Մա պարզապես ինքնասպանությանը նայելու մի ուրիշ հայացք է: Եթե դա կա Աստվածաշնչում, ապա այն ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու ապտմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելն ավելացրեց,- «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն ազդողիկ չէ, և այն անհերթեթ չէ: Այն դինամիկ է և շատ կարևոր...»:

III. Ձեռգրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Գրքերի հետագա ընթերցանության համար

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R.H. Harrison [Ռ. Հ. Հարիսոն, «Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային»]:
2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger [Բրյուս Մ. Մեցգեր, «Նոր Կտակարանի տեքստաբանությունը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրում և բնագրի վերականգնում»].
3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H. Greenlee [Ջ. Հ. Գրինլի, «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը»].

Արևելահայերեն «Մի թե՛ Աստուած եզների համար էր հոգս անում»

Արևմտահայերեն «Միթե՛ Աստուած միայն եզե՛րը կը հոգայ»

NASB «Աստված հոգս չի անում եզների համար, այնպես չէ՞»

NKJV «Արդյո՞ք Աստված մտահոգված չէ եզների համար»

NRSV «Արդյո՞ք Աստծո եզների համար հոգ տանելու մասին է խոսքը»

TEV «Այժմ Աստված մտահոգվա՞ծ է եզների մասին»

NJB «Արդյոք եզների մասին է, որ Աստված մտահոգված է այստեղ»

9 և 10 համարները ցույց են տալիս, թե ինչպես է Հին Կտակարանյան տեքստն ընդլայնվել (այսինքն, կարևորությունը կամ կիրառումը նկարագրելու համար), նոր օրվա կարիքները բավարարելու համար (տես Հռ. 4: 23-24; 15: 4; 1 Կոր. 9: 10; 10: 6,11): Հին Կտակարանը առանձնահատուկ խնամք է ցուցաբերում կենդանիների համար (տես Ելից 21: 33,35; 27: 10-13; 23: 5,12; 2 Օր. 5:14; 22: 4): Հիսուսը խոսում է կենդանիների այս խնամքի մասին (տես Ղուկ. 13:15; 14: 5, որտեղ նա կիրառում է « թեթև և ծանր» ռաբինական սկզբունքը): Մա չի նշանակում, որ Աստված հոգ չի տանում կենդանիների մասին, այլև հոգում է մարդկանց մասին, և այս կոնտեքստում ավետարանի պաշտոնյաների (տես 1 Տիմ. 5:18): Մա նման է Մատթ. 6: 26-34: Հիսուսն օգտագործում է Աստծո դրսևորումները բնության մեջ, որպես պնդում, որ Աստված հոգ է տանում Իր պատկերով

ստեղծված մարդկության: Մա տիպիկ ռաբբիական տեխնիկա էր, որը հայտնի էր որպես «ավելի փոքրից դեպի ավելի մեծը» կամ «թեթև ու ծանր», որը Հիլելի սկզբունքներից մեկն էր (տես Aboth. de Rab. Nathan XXXVII և Tosefta Sanhedrin 7): Հիշեք, որ Գամաղիելը Պողոսի ռաբբի ուսուցիչն էր (Գործք 5:34; 22:3): Տես Հավելված 3 (Ռաբբիական հերմենևտիկա) Եբրայեցիս Գրքում www.freebiblecommentary.org.

9:10

Արևելահայերեն «Կամ չէ՞ որ մանաւանդ մեզ համար է ասում. Որովհետեւ մեզ համար գրուեցաւ»
Արևմտահայերեն «Չէ՞ որ մասնատրաբար մեզի համար կըսէ. Վասն զի մեզի համար գրուեցաւ»

NASB «Կամ էլ Նա խոսում է մեզ համա՞ր, այո, մեզ համար է գրված»

NKJV «Կամ արդյո՞ք Նա ասում է այդ ամենը մեզ համար, մեզ համար է, անկասկած, սա գրված»

NRSV «Կամ էլ նա ամբողջովին խոսու՞մ է մեզ համար, դա իսկապես գրված էր մեզ համար»

TEV «Չէ՞ որ նա իսկապես մեզ ինկատի ուներ, երբ դա ասաց: Իհարկե դա մեզ համար է գրվել»

NJB «Արդյո՞ք դա մեզ համար ամբողջովին չի ասվում: Պարզ է, որ դա գրվել է մեզ համար»

Մի քանի անգամ Պողոսը պնդում է, որ Հին Կտակարանը գրվել է որպես օրինակ Նոր Կտակարանի հավատացյալների համար (տես Հռ. 4: 23-24; 15: 4; 1 Կոր. 9: 10; 10: 6, 11): Պողոսի ռաբբիական վերապատրաստումը սովորեցրեց նրան, կիրառել Օրենքը առկա իրավիճակներում: Այստեղ նա օգտագործում է «թեթև և ծանր» կամ «փոքրից ավելի մեծ» ռաբբիական փաստարկը:

2 Օրինաց 25: 4 կոնտեքստում այս գործադրումը կլիներ անհայտ և անհարկի: Հերմենևտիկ հարցն այս է, «Արդյո՞ք Պողոսը օգտագործում էր ներշնչված գրողի նախնական մտադրությունը»: Պատասխանն ակնհայտ է, ոչ: Բայց նա օգտագործում է սկզբունքի վավեր կիրառումը: Պողոսը ներշնչված է: Նա ճշմարտությունը տեսնում է այն մակարդակում, որը մենք չենք կարող: Սակայն մենք ներշնչված չենք, բայց լուսավորված ենք Հոգու կողմից: Ժամանակակից թարգմանիչները չեն կարող վերարտադրել Նոր Կտակարանի հեղինակների հերմենևտիկ մեթոդը: Հետևաբար, լավագույնը թույլ տալ նրանց խոսել, բայց սահմանափակենք մեզ պատմական-քերականական մոտեցմանը, որը փնտրում է բուն հեղինակի մտադրությունը որպես որոշիչ իմաստ, բայց թույլ է տալիս բազմաթիվ կիրառություններ, որոնք կապված են նախնական մտադրության հետ: Տես Հատուկ Թեմաներ, Լուսավորում և Ներշնչանք, 1 Կոր. 2 սկզբում:

9:11 «Եթե ...» Սրանք երկուսն էլ առաջին կարգի պայմանական նախադասություններ են, որոնք ենթադրվում են հեղինակային տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար:

Իրական հարցն այն է, թե ովքեր էին պնդում այն մասին, որ Կորնթոսի եկեղեցին ուներ իրավունք նրանց աջակցելու: Արդյո՞ք դրանք ճանապարհորդող կեղծ ուսուցիչներն էին, թե՞ նրանք, ովքեր տեղական առաջնորդներից էին: Դա, հավանաբար, վերաբերում է մյուս տեղական առաջնորդներին, որոնք թույլ չէին տալիս, որ եկեղեցին իրենց աջակցի (տես J. B. Phillips թարգմանություն):

- **«սերմեցինք... հնձենք»** Հին Կտակարանյան բերքահավաքի գյուղատնտեսական միջավայրը դառնում է հոգևոր սկզբունք (տես Հոբ 4: 8; Առ. 22:8; Ովս. 8:7; Անգլ 1:6; Հովհ. 4:37; 1 Կոր. 9:11; 2 Կոր. 9: 6,10; Գաղ. 6: 7-9):

- **«մարմնատրոները»** Մա բառացիորեն նշանակում է *ta sarkika* «մարմնավոր բաներ», բայց ոչ մեղավոր իմաստով, այլ ֆիզիկական իմաստով, որով մարդիկ պետք է այս աշխարհում գոյատևեն (այսինքն՝ ջուր, սնունդ, ապաստան, հագուստ, տես Հռ. 15:27):

9:12 «Եթե» Մա մեկ այլ առաջին կարգի պայմանական նախադասություն է: Այլ առաջնորդները իրականացնում էին իրավունք (այսինքն, *exousia*)՝ նյութապես փոխհատուցվելու համար:

▪ **«ո՞չ առաւել եւս մենք»** Այս միտքը այն է, որ Պողոսը հիմնեց այս եկեղեցին: Նա նրանց հոգևոր հայրն էր (տես 1 Կոր. 4:15): Այժմ նրանք մերժում էին նրա հոգևոր իրավունքները (1 Կոր. 9: 11, 14; Հռ. 15:27), այլ թույլ էին տալիս, որ ուրիշները պահանջեն նյութական փոխհատուցում:

▪ **«Այլ ամեն բանի համբերում ենք»** Սա հունարեն «տանիք» բառի փոխաբերական գործածումն է, որը նշանակում է «ծածկել», «թաքցնել» կամ «համբերել» (տես 1 Կոր. 13:7):

▪ **«արգելք»** Սա ուժեղ ռազմական տերմին էր: Խոսքը օգտագործվում էր ճանապարհը քանդելուն, որպեսզի թույլ չտան, որ թշնամին այն օգտագործի:

▪ **«Քրիստոսի ակտարանին»** «Ավետարան» տերմին բառացիորեն նշանակում է «բարի լուր»: Այն ներառում է մի քանի ասպեկտներ:

1. մարդկության մեղքի և ապստամբության սկզբնական վատ լուրը
2. Աստծո ողորմած դրույթները, որոնք վերաբերում են մարդու մեղքին (այսինքն, Քրիստոսի մահը)
3. բաց հրավեր բոլորի համար՝ ընդունելու Աստծո խոստումը ապաշխարությամբ և հավատքի միջոցով

Հիսուսի մասին այս բարի լուրը ներառում է երեք ասպեկտ:

1. մարդ, ում պետք է ողջունել (այսինքն, Հիսուսին):
2. ճշմարտություններ այդ մարդու մասին, ում հավատում ես (այսինքն, Նոր Կտակարանը):
3. Դեռ կյանք է, որը արտացոլում է այդ անձին (այսինքն, Քրիստոսանման կյանք):

Եթե այս երեք ասպեկտներից որևէ մեկը արժեզրկվում է, ավետարանը վնասվում է:

9:13 «նորանք՝ որ տաճարումը գործում են, տաճարիցն են ուտում» Սա վերաբերում է Հին Կտակարանի քահանաներին և դևոտացիներին (տես Ղև. 7: 6,8-10,14,28-36; 2 Օր. 18: 1): Պողոսը օգտագործեց մի տերմին, որը օգտագործվում էր Մեկտուազինդում քահանայական ծառայության համար (տես Թվոց 3: 7; 8:15), ինչպես նաև ընդհանուր առմամբ որպես գործ (տես Ծննդ. 2: 5,15; 3:23; 4:2, 12; 29:27): Պողոսը իր ավետարանի ծառայությունը համարում էր որպես քահանայության ծառայություն (տես Հռ. 15:16):

9:14 «Այնպես էլ Տէրը հրաման տուաւ» Սա պետք է վերաբերի Մատթ. 10:10 և Ղուկ. 10:7 Հիսուսի խոսքերին: Պողոսը միշտ փորձել է հնարավորության դեպքում քննարկել Հիսուսի ուսմունքները:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 9:15-18
¹⁵Բայց ես սորանցից ոչ մէկն էլ չ'բանեցրի. Եւ այս բաները չ'գրեցի որ՝ ինձ այդպէս լինի. որովհետեւ ակելի լաւ է ինձ մեռնել, քան թէ մէկն իմ պարծանքը ունայնացնէ: ¹⁶Որովհետեւ եթէ ակտարանը քարոզեմ, դա ինձ պարծանք չէ. որովհետեւ դա հարկ է դրուած ինձ վերայ. Եւ վայ է ինձ, եթէ ակտարանը չ'քարոզեմ: ¹⁷Վասնզի եթէ յօժար կամքով անեմ այս, վարձք ունիմ. Իսկ եթէ ակամայ տնտեսութիւնը յանձնուած է ինձ: ¹⁸Ապա ի՞նչ է իմ վարձքը. Այն որ՝ ակտարանելիս ձրի տամ Քրիստոսի ակտարանը, որ ակտարանի մէջ իմ իշխանութիւնը գէշ կերպով չ'բանեցնեմ:

9:15 «Բայց ես սորանցից ոչ մէկն էլ չ'բանեցրի» Սա վաղակատար չեզոք սահմանական է: Պողոսը երբեք Կորնթոսից փոխհատուցում չի ստացել, հավանաբար այդ եկեղեցում կային մարդիկ, ովքեր ցանկացած բան օգտագործել էին նրա վրա հարձակվելու համար: Նա գումար ընդունեց Փիլիպեից (տես 1 Կոր. 4:15) և Թեսաղոնիկեից (տես 2 Կոր. 11:9), այլ միայն այն ժամանակ, երբ նա այնտեղ չէր:

▪ **«որովհետև ասելի լաւ է ինձ մեռնել»** Ինչպիսի ուժեղ հայտարարություն կապված փոխհատուցում ընդունելու կամ մերժելու մասին: Այս կետում կա նաև մի քերականական խնդիր, որը առաջացրել է մի քանի հունարեն ձեռագիր տարբերակներ: Պողոսը շատ զգացմունքային է այս հարցում: Նա գումար և օգնություն է վերցնում Փիլիպեից (տես Փիլ. 4:15) և Թեսաղոնիկեից (տես 2 Կոր. 11:9), ինչու ոչ Կորնթոսից: Ակնհայտ է, որ սրա համար նա անձամբ հարձակման է ենթարկվում որոշ խմբերի, խմբակցությունների կամ կեղծ ուսուցչի կողմից:

«Քան» բառից հետո կա Պողոսի մտածելակերպի կասեցում: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է NRSV և NET Աստվածաշունչը գծիկ դնում, մինչդեռ NJB- ն դնում է կետեր, փորձելով ցույց տալ քերականական դադարը: Ինչպես է այս դադարը ազդում հաջորդ արտահայտության վրա՝ անորոշ է: Թվում է, թե նա ուզում էր պնդել, որ ինքը չէր վերցնի որևէ գումար Կորնթոսի եկեղեցուց, բայց չի ասում: Սա շատ հուզական հատված է: Պողոսը ցավում է, արձագանքում է, աղերսում է, ոչ միայն միտք է սովորեցնում: Նրա կյանքը նկարագրում է սկզբունքը (այսինքն, ամեն ինչ, ամեն բան, ամեն անգամ, բոլորի հետ ավետարանի համար, տես 2 Կոր. 4: 5-12; 6: 3-13; 11: 16-33):

Դժվար է մեկնաբանել Պողոսի նամակը, երբ մենք չունենք (1) եկեղեցու գրած նամակը կամ (2) տեղական իրավիճակի մասին հատուկ գիտելիքներ

9:16 «եթե» Սրանք երկուսն էլ երրորդ կարգի պայմանական նախադասություններ են, որը նշանակում է հնարավոր գործողություն:

▪ **«որովհետև դա հարկ է դրուած ինձ վերայ. Եւ վայ է ինձ, եթե աստարանը չ'քարոզեմ»** Պողոսը հաստատ գիտեր, որ պետք է քարոզեր՝ Դամասկոսի ճանապարհին Քրիստոսի հատուկ կանչի պատճառով (տես Գործք 9:15; Հռ.1:14): Նա նման էր Երեմիային (տես Եր. 20: 9): Նա պետք է ավետարանը բաժնեկցեր (տես Գործք 4: 20):

9:17 «եթե» Սրանք երկուսն էլ առաջին կարգի պայմանական նախադասություններ են, որոնք ենթադրվում են ճշմարտություն հեղինակային տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար:

▪ **«վարձք ունիմ. Իսկ եթե ակամայ՝ տնտեսութիւնը յանձնուած է ինձ»** Սա վաղակատար կրավորական սահմանակն է: Ավետարանի գործակիցներն ունեն ինչպես ուխտի արտոնություն, այնպես էլ մեծ պատասխանատվություն (տես 1 Կոր. 4: 1; Գաղ. 2: 7; Եփ. 3: 2; Կող. 1:25): Տես, տնտես լինելու մասին ամբողջական ծանուցումը 1 Կոր. 4: 1:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 9:19-23
¹⁹Որովհետև ամենից ազատ լինելով, իմ անձը ամենքին ծառայ արի, որ շատերին շահեմ:
²⁰Հրեաներին Հրեայի պես եղայ, որ Հրեաներին շահեմ: ²¹Օրենքի տակ լինողներին օրենքի տակ լինողի պես եղայ, որ օրենքի տակ լինողներին շահեմ. օրենք չ'ունեցողներին օրենք չ'ունեցողի պես եղայ. (իբր չէ թե ես Աստուծոյ առաջին օրենք չ'ունեի, այլ Քրիստոսի օրենքի տակ էի) որ օրենք չ'ունեցողներին շահեմ: ²²Տկարներին տկարի պես եղայ, որ տկարներին շահեմ. ամենին ամեն բան եղայ, որ ինչ եւ իցէ մի քանիսին ապրեցնեմ: ²³Այս անում եմ աստարանի համար, որ նորան կցորդ լինիմ:

9:19 «Որովհետև ամենից ազատ լինելով» Սա շեշտը դնում է պատշաճ քրիստոնեական ազատության վրա (տես 1 Կոր. 9: 1; 10:29; Գաղ. 5:13): Մարտին Լյութերն ասել է. «Քրիստոնյան բոլորի հանդեպ ազատ տեր է և ոչ ոք չի ենթարկվում: Քրիստոնյան ամեն բաներում ծառայ է, ենթակա բոլորին»: Ծանոթագրություններ Հռ. 14 և 15:

▪ **«իմ անձը ամենքին ծառայ արի»** Շեշտը պատշաճ քրիստոնեական պատասխանատվության վրա է (տես Հո. 14: 1-15: 13; 2 Կոր. 4: 5): Քանի որ Պողոսը Քրիստոսի ծառան էր, նա բոլորի ծառան էր, ում համար Քրիստոսը եկավ ծառայելու և փրկելու, թե հավատացյալ, թե անհավատ: Տես Հատուկ Թեմա: Ծառա առաջնորդ 1 Կոր. 4:1:

▪ **«որ շատերին շահեմ»** Սա «շահ» տերմինն է (այսինքն, *kerdainō*): Նոր Կտակարանում այն օգտագործվում է տարբեր իմաստներով: Այս կոնտեքստում Պողոսն օգտագործում է տերմինը ավետարանչական իմաստով (տես 1 Կոր. 9:19, 20, 21, 22 և 1 Պետ. 3: 1): Սա մեր բոլոր գործողությունների պատշաճ ավետարանական նպատակն է (տես 1 Կոր. 9: 22-23): Ավետարանական նպատակահարմարությունը մեր կյանքի բոլոր ոլորտներում, ոչ թե կոնկրետ մեթոդաբանություն, քրիստոնեական ազատության և քրիստոնեական պատասխանատվության միջև հավասարակշռության բանալին է:

9:20 Այս համարը արտահայտում է Պողոսի մտադրությունը: Պողոսի հիմնական մտահոգությունը ավետարանչությունն էր (տես 1 Կոր. 9:20-23; 10: 31-33): Հետևաբար, նա թլփատեց Տիմոթեոսին, որպեսզի աշխատի հրեաների հետ (տես Գործք 16:3), բայց չէր թլփատի Տիտոսին (տես Գաղ. 2: 3-5), որպեսզի փոխզիջում չանի ավետարանի ազատությունը հեթանոսների մեջ:

▪ **«օրենքի տակ լինողի պէս եղայ»** Հետաքրքիր է, որ Textus Receptus- ը (այսինքն `արևմտյան տեքստ), որը հայտնի է իր ընդլայնողական տեղեկություններով, չի ներառում այս ակնհայտ բնօրինակ արտահայտությունը: Այն հանդիպում է հունարեն P⁴⁶, Ռ, A, B, C, D *, F, G, P և Վուլգատ, Սիրիական, Ղպտի և հայերեն թարգմանությունների ձեռագրերում: Պողոսի խոսքերն այստեղ պետք է հղում կատարի Հիսուսի խոսքերին Մատթ. 5: 17-20: Պողոսը վերջակետ չդրեց Սովսեսական օրենքին, բայց դրա իրական կատարումը տեսնում է Քրիստոսում: Օրենքը փրկության միջոց չէ, բայց դա դեռևս 1) ճշմարիտ հայտնություն է և (2) հասարակության մեջ մարդկության համար Աստծո կամքի արտացոլումը: Այն գործում է առաջադեմ սրբացման մեջ, բայց ոչ արդարացման: Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 9:9:

9:21 «այլ Քրիստոսի օրենքի տակ էի» Սա Նոր Ուխտին վերաբերող Նոր Կտակարանյան ձևն է Եր. 31: 31-34: Կան մի քանի տարբեր եղանակներ, որոնք ձեռակերպվում են Պողոսի և Հակոբոսի կողմից («կյանքի Հոգու օրենքը», Հո. 8: 2; «Քրիստոսի օրենքը», Գաղ. 6: 2; «կատարյալ օրենքը, ազատության օրենքը», Հակ. 1:25 և 2:12; «թագավորական օրենքը», Հակ. 2:8):

9:22 «Տկարներին տկարի պէս եղայ, որ տկարներին շահեմ» «Տկար» բառի իմաստն այստեղ անորոշ է, քանի որ այն օգտագործվել է այս կոնտեքստում չափազանց մանրակրկիտ կամ սնահավատ քրիստոնյաների համար (տես 1 Կոր. 8: 7,10): Դա, հավանաբար, վերաբերում է սնոտիապաշտ հեթանոսներին (տես 1 Կոր. 9:21): Williams- ի թարգմանությունը նույնիսկ այն թարգմանում է որպես «չափազանց մանրակրկիտ», ինչը լավ մատուցում է:

▪ **«ամենին ամեն բան եղայ, որ ինչ եւ իցէ մի քանիսին ապրեցնեմ»** Այս արտահայտության մեջ ուշադրություն դարձրեք «բոլորին, ամենին» թվին (այսինքն, *pas* ձևերը): Պողոսի ներքին եսը վերափոխվել է եսակենտրոնից դեպի ավետարանակենտրոն: Նա ազատ է ծառայելու Քրիստոսին, ծառայելու ավետարանին, ծառայելու Թագավորությանը (տես Հո. 6: 11; 7: 4): Ճկունությունը, նպատակալացությունը և սերը Պողոսի կյանքի և ծառայության կարևորագույն դրույթներն են:

Պողոսի միտքը մշտապես ավետարանչության վրա է եղել (տես Հո. 11:14; 1 Կոր. 1:21; 7:16; 10: 31-33; 1 Տիմ.1:15): Այնուամենայնիվ, տխուր է ասել, որ վերջին արտահայտությունը մատնանշում է,

որ նրան լսողներից շատերը հավատքով չարձագանքեցին իր պատգամին: Ինչու են ոմանք լսում (հոգևոր ականջներով) իսկ ոմանք ոչ, արդյոք պատճառը ընտրության և ազատ կամքի խորհուրդն է:

9:23 Սա ամփոփված համար է, անցումային համար: Այն կարող է գուգորդվել 1 Կոր. 9: 19-22 կամ 24-27-ի հետ կամ մնալ մենակ: Այս համարը չի պաշտպանում գործերով փրկությունը (այսինքն, Եփ. 2:8-9): Պողոսը չի փրկվել, քանի որ նա ավետարանում է: Նա անում է դա, քանի որ նա ընդունել է ավետարանը և գիտի դրա խաղաղությունն ու հրատապությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 9:24-27

24Չգիտե՞ք, թե ասպարեզի մեջ վագոդներն՝ ամենքն են վագում. Բայց մեկն է յաղթանակն առնում. դուք այնպես վագեցեք որ հասնեք: **25**Եւ ամեն ով որ մրցում է ամեն բանից ժուժկալ է լինում. Հիմա նորանք մրցում են որ մի ապականելի պսակ առնեն, իսկ մենք՝ անապականելի: **26**Ուրեմն ես այնպես եմ վագում, և ոչ թե ինչպես անստոյգ. Այնպես եմ մրցում ոչ թե ինչպես օղին զարկելով: **27**Այլ իմ մարմինը ճնշում եմ եւ նուաճում, որ մի գուցե ուրիշներին քարոզելով, ինքս անպիտան գտնուիմ:

9:25 «Եւ ամեն ով որ մրցում է ամեն բանից ժուժկալ է լինում» Պողոսն օգտագործում է մարմնամարզական փոխաբերություններ յուրաքանչյուր երկու տարին մեկ Կորնթոսում անցկացված ձմեռային խաղերից: Շեշտը դրվում է գերագույն ջանքերի վրա, որոնք օգտագործվում են մրցակցող մարզիկների կողմից, ոչ թե կեսով չափ, թերի փորձերի (տես Եբբ. 12: 1-3): Քրիստոնյան չի մրցում փրկություն հաղթելու համար, այլ քանի որ փրկության փորձառություն է ունեցել:

Մենք հաղթել ենք Քրիստոսի մրցավազքում, այժմ վագում ենք ասպարեզը Քրիստոսի համար:

▪ **«ապականելի պսակ»** Կորնթոսի մարմնամարզության մրցանակակիրները ստացել են սոճու ծաղկեպսակներ (Աթենքում ձիթապտղի ծաղկեպսակ, Դելփիում դափնեպսակ), որը շուտով չորանում է: Հավատացյալները ստանում են (1) ուրախության (տես 1 Թես. 2:19); (2) արդարության (տես 2 Տիմ. 4:8); (3) կյանքի (տես Հակ. 1:12; Հայտ. 2:10) և (4) փառքի (տես 1 Պետ. 5: 4) պսակ: Սրանք պսակներ են, որոնք երբեք չեն թառամում: Արդյոք հավատացյալների նվիրումը և խանդավառությունը ավելի պակաս է լինելու, քան մարզիկներինը: Նրանք ձգտում են մի բանի, որը չի կարող շարունակվել: Մենք ձգտում ենք մի բանի, որը չի կարող թառամել:

9: 26-27 «եմ վագում... օղին զարկելով» Սրանք մարմնամարզական փոխաբերություններ են, որոնք ցույց են տալիս ժուժկալության և կարգապահության անհրաժեշտությունը: Քրիստոնեական կյանքն ունի որոշ կանոններ և պահանջներ: Սրանք վերաբերում են պարզներին, այլ ոչ թե փրկությանը: Պողոսը պետք որ վայելած լիներ իր օրերի սպորտային իրադարձությունները, նա հաճախ օգտագործում է քրիստոնեական կյանքի համար փոխաբերություններ:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՎԱՐՉՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԻՃՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: DEGREES OF REWARDS AND PUNISHMENT

- Ա. Աստծուն պատշաճ կամ ոչ պատշաճ արձագանքը հիմնված է մարդու գիտելիքի մակարդակի վրա: Որքան պակաս գիտելիք ունի մարդը, այնքան քիչ պատասխանատու է: Հակառակը նույնպես ճշմարիտ է (տես Ղուկ. 12:45):
- Բ. Աստվածճանաչությունը գալիս է երկու հիմնական եղանակով
 - 1. ստեղծագործություն (տես Մաղ. 19; Հո. 1-2)
 - 2. Մուրբ Գիրք (տես Մաղ. 19; 119, Հիսուսը, ինչպես հայտնված է Նոր Կտակարանում)
- Գ. Հին Կտակարանի ապացույց
 - 1. վարձքեր
 - ա. Ծննդ. 15: 1 (սովորաբար կապված է երկրային վարձատրության, հողի և

որդիների հետ)
բ. Ղև. 26: 1-13; 2 Օր. 28: 1-14,58-68 (ուխտի հնազանդությունը բերում է օրհնություն)

գ. Դան. 12: 3

2. պատիժներ – Ղև. 26: 14-39; 2 Օր. 27: 15-26; 28: 15-37 (ուխտի անհնազանդությունը բերում է անեծք)

3. Անձնական, ուխտի արդարության համար վարձքի Հին Կտակարանյան ձևը փոփոխվում է մարդկային մեղքի պատճառով: Այս փոփոխությունը երևում է Հոբի գրքում և Սաղ. 73-ում (այսինքն, «երկու ճանապարհ», տես 2 Օր. 30:15,19; Սաղ. 1): Նոր Կտակարանը ակտիվացնում է կենտրոնացումը գործից դեպի միտք (տես Լեռան քարոզը, Մաթ. 5-7):

Դ. Նոր Կտակարանի ապացույց

1. վարձք (փրկությունից դուրս)

ա. Մարկ. 9:41

բ. Մաթ. 5: 12,46; 6: 1-4,5-6,6-18; 10: 41-42; 16:27; 25: 14-23

գ. Ղուկ. 6:23, 35; 19: 11-19, 25-26

2. պատիժներ

ա. Մարկ. 12:38-40

բ. Ղուկ. 10:12; 12: 47-48; 19: 20-24; 20:47

գ. Մաթ. 5:22,29,30; 7:19; 10: 15,28; 11: 22-24; 13: 49-50; 18:6; 25: 14-30

դ. Հակ. 3: 1

Ե. Ինձ համար միակ նմանությունը, որն իմաստ ունի, օպերայից է: Ես օպերա չեմ գնում, այնպես որ ես չեմ հասկանում նրանց: Որքան ավելի շատ գիտեի սյուժեի, երաժշտության և պարի դժվարության և խճճվածության մասին, այնքան ավելի շատ կգնահատեի կատարումը: Ես հավատում եմ, որ երկինքը կլցնի մեր բաժակները, բայց կարծում եմ, որ մեր երկրային ծառայությունը որոշում է բաժակի չափը:

Հետևաբար, գիտելիքը և այդ գիտելիքի արձագանքը հանգեցնում է վարձքերի եւ պատիժների (տես Մաթ. 16:7, Ղուկ. 12:48; 1 Կոր. 3: 8,14; 9: 17,18; Գաղ. 6: 7; 2 Տիմ. 4:14): Կա հոգևոր սկզբունք՝ մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք: Ոմանք ավելի շատ են սերմանում և ավելի շատ են հնձում (տես Մաթ. 13: 8, 23):

Զ. «Արդարության պսակը» մերն է Հիսուս Քրիստոսի կատարած գործի շնորհիվ (տես 2 Տիմ. 4:8), սակայն նկատեք, որ «կյանքի պսակը» կապված է նեղությունների ժամանակ համբերելու հետ (տես Հակ. 1:12; Հայտ. 2: 10; 3: 10-11): Քրիստոնյա առաջնորդների համար «փառքի պսակը» կապված է նրանց կենսակերպի հետ (տես 1 Պետ. 5:1-4): Պողոսը գիտեր, որ նա ունի անապականացու թագ, բայց նա գործածում է ծայրահեղ ժուժկալություն (տես 1 Կոր. 9:24-27):

Քրիստոնեական կյանքի առեղծվածն այն է, որ ավետարանը բացարձակապես ձրի է Քրիստոսի կատարած գործի շնորհիվ, սակայն, երբ մենք պետք է արձագանքենք Քրիստոսի Աստծո առաջարկին, մենք պետք է նաեւ արձագանքենք Աստծո գորացմանը քրիստոնեական կյանքի համար: Քրիստոնեական կյանքը գերբնական է, ինչպես փրկությունը, բայց մենք պետք է ընդունենք և պահենք այն: Ձրի բայց ամեն բան արժեցող պարադոքսը, վարձքերի և սերմանել / հնձելու խորհուրդն է:

Մենք չենք փրկվում բարի գործերով, այլ լավ գործերի համար (տես Եփ. 2: 8-10): Լավ գործերը այն ապացույցն են, որ մենք հանդիպել ենք Նրան (տես Մաթ. 7): Փրկության ոլորտում մարդկային արժանիքները հանգեցնում են ոչնչացման, բայց աստվածահաճո կյանքը վարձատրվում է:

9:27 «Իմ մարմինը ճնշում եմ» Կարգապահություն տերմինը բառացիորեն վերաբերում է աչքերից ներքև հարվածելուն: Այն պատկերավոր օգտագործվում է Ղուկ. 18:5-ում:

Պողոսը լուրջ էր քրիստոնեական կյանքում ժուժկալության մասին: Մարմինը չար չէ, բայց գայթակղության ճակատամարտի դաշտ: Եթե հավատացյալները չեն վերահսկում իրենց մարմինը, այն կկառավարի իրենց (տես Հռ. 8: 1-11): Դա հեշտ մեկ անգամյա հաղթանակ չէ, այլ Քրիստոսի գործի համար ինքնակարգավորելու երկարատև մարաթոն Քրիստոսի համար: Ժուժկալությունը Սուրբ Հոգու պտուղի վերջին առաքինությունն է Գաղ. 5:23:

«Մարմին» տերմինը (*sōma*) վերաբերում է Պողոսի ամբողջ անձնավորությանը: Դա մարդկության երեք ասպեկտներից մեկը չէ: Այն հաճախ հանդես է գալիս ամբողջ անձի համար (տես 1 Կոր. 7: 4; 13: 3; Հռ.12:2; Փիլ. 1:20): Աստվածաշունչը մարդկությանը ներկայացնում է որպես միասնություն (տես Ծննդ. 2: 7), ոչ թե դիխոտոմիա կամ տրիխոտոմիա (տես George E. Ladd, *A Theology of the New Testament*, էջ 464-466): Տես ամբողջական ծանուցումը 1 Կոր. 7:34.

Արևելահայերեն «որ ... ինքս անախտան գտնուիմ»
Արևմտահայերեն «որպէս զի...ես ինքս խոտելի գտնուիմ»

NASB, NKJV «այնպես, որ ... Ես ինքս չորակագրկվեմ»
NRSV «Ես ինքս չպետք է որակագրկվեմ»
TEV «ինձ պահել որակագրկվելուց»
NJB «Ես կարող եմ որակագրկվել»

«Որակագրկված» տերմինը փոխաբերություն է, որը վերաբերում է մարգական խաղերի կանոնների խախտելուն և այդպիսով չկարողանալով հաղթել մրցույթը (տես 1 Տիմ. 6:12; 2 Տիմ. 4: 7): Այն «ստուգել» արմատից է՝ հավանության հաստատման տեսքով (այսինքն, *dokimazōi*), սակայն ալֆա մասնիկով, որը բացառում է այն (տես 2 Կոր. 13: 5):

Սա չի վերաբերում Պողոսի փրկությանը (չնայած այն օգտագործվում է այս իմաստով 2 Տիմ. 3: 8); չնայած նախորդ պարբերությունը կարծես թե այդպես է թվում (տես 1 Կոր. 9:19-23): Սա կխախտի Պողոսի կողմից շատ ուրիշ վարդապետական հատվածներ, հատկապես Հռոմեացիս և Գաղատացիս թղթերում: Այս պարբերությունում նա քննարկում է իր վախը անկարգ լինելու ու մերժվելու մեջ՝ որպես ավետարանի քարոզիչ: Նոր Կտակարանն արձանագրում է մի քանիսի մասին, ովքեր որակագրկվել են (տես 1 Կոր. 15:12; 1 Տիմ. 1:20; 2 Տիմ. 4:10): Պողոսը ուզում էր ավետարանչական պտուղ նորադարձներից և եկեղեցիներից:

Երիտասարդ տղամարդկանց պարապունքները հունական խաղերի համար նշվում է (1) *Ars Poetica*, 412 և (2) *Ad Martyres*, 3: Այն պահանջում էր տասը ամիս ֆիզիկական, դիետիկ և սոցիալական սահմանափակումներ և ռեժիմներ: Այնուամենայնիվ, այս տեքստը դիտելու ևս մեկ ձև կա (*Hard Sayings of the Bible*, by Kaiser, Davids, Bruce and Branch):

«Այս գրվածքում հեղինակը հարվածում է Նոր Կտակարանում գտնված հավասարակշռությանը: Նոր Կտակարանի հեղինակները գրում են Քրիստոսի շնորհքի փորձառությունից և համոզված են, որ նրանք երկնքում ավելի մեծ ժառանգության ճանապարհին են: Միննույն ժամանակ, , նրանք գրում են մտահոգությամբ, որ իրենք կամ իրենց ընթերցողները կարող են ուրանալ և այսպիսով կորցնել իրենց ունեցածը: Քանի դեռ մարդիկ հետևում են Քրիստոսին, ապա Նոր Կտակարանի հեղինակները երբեք որևէ հույս չունեն, որ առանց ապաշխարության այդպիսի մարդիկ երկինք կմտնեն: Սա սթափեցնող է, բայց ոչ վախ արտադրող, լարվածության տեսակ, որը երևում է Պողոսի մեջ (1 Կոր 9:27; Գաղ 5:2, 7-10; Փիլ. 3:12; 2 Տիմ 4:7, երբեմն խոսում է լարվածության մասին իր կյանքում և երբեմն խոսում է իր մտերիմների մասին), Հակոբոսի մեջ (Հակ. 5:20), նամակի նպատակը, «փրկել [մեղավորին, նշանակում է հավատացյալին, որը դարձավ աշխարհին] մահից», Հուդայի մեջ (Հուդա 23) և Հովհաննեսի մեջ (Հովհ. 5: 16-17 KJV, շեշտը դնում է մարդկանց համար

աղոթելու վրա, նախքան նրանց մահացու մեղք գործելը): Ժամանակակից ընթերցողին ուղղված կոչը ուշադրություն դարձնել նախազգուշացմանը և «ընդօրինակել նրանց, ովքեր հավատքով և համբերությամբ ժառանգում են այն, ինչ խոստացվել է» (Եբր. 6:12), որպեսզի հեղինակը մեզ կարողանա ասել, «Մենք վստահ ենք ձեր դեպքերում ավելի լավ բաների մասին, որոնք ուղեկցում են փրկությանը» (էջ 683):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ինչպե՞ս է գլուխը 9-ը կապվում 8-րդ գլխին:
2. Ճի՞շտ է, որ քարոզիչը աջակցություն ստանա եկեղեցուց:
Եթե այո, ապա ինչու՞ Պողոսը թույլ չտվեց, որ այս եկեղեցին իրեն աջակցեր:
3. Ինչպե՞ս կարող է Պողոսը տարբեր կերպ վարվել տարբեր խմբերի նկատմամբ և չլինել կեղծավոր:
4. 24-27-րդ համարներում ընդգծվում է մարզական փոխաբերությունը: Ինչպե՞ս է այս փոխաբերությունը վերաբերվում մեր քրիստոնեական կյանքին:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 10

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
				Կերակուրը զոհաբերվեց կեղծ աստվածներին (8:1-11:1)
Զգուշացում կռապաշտության դեմ	Հին Կտակարանի օրինակներ	Վստահության դեմ նախարդ- զուշացում	Զգուշացում կուռքերի դեմ	Զգուշացումը և Իսրայելի պատմության դասերը
10:1-13	10:1-13	10:1-5 10:6-13	10:1-5 10:6-10 10:11	10:1-13
	Փախեք կռապաշտությունից	Կիրառում. Կրկին զոհաբերում կուռքերին	10:12-13	Զոհաբերության տոներ. Ոչ մի փոխվիջում կռապաշտությամբ
10:14-22	10:14-22	10:14-22	10:14-17 10:18-22	10:14-22
Բոլորը կատարեք Աստծո փառքի համար	Բոլորը Աստծո փառքի համար	Սկզբունքներ. Մեր ազա- տությունը և պատասխա- նատվությունը ուրիշների համար		Կերակուրը զոհաբերվեց կուռքերին; գործնական լուծումներ
10:23-11:1	10:23-11:1	10:23-30	10:23-24 10:25-26 10:27-29ա 10:29բ-30 10:31-11:1	10:23-11:1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ(«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»)
Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտորոշության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ 1 ԿՈՐՆԹԱՅԻՍ 10:1-11:1

- Ա. 8-ից 10-րդ գլուխները միանգամայն կապված են այն բանով, երբ փորձում են քրիստոնեական ազատության և քրիստոնեական սիրո պատասխանատվության փոխհարաբերությունների քննարկումը բերել հավասարակշռության: Պողոսը չի կենտրոնանում դժվար և արագ կանոնների վրա, այլ այն փոխհարաբերությունների առաջնահերթությունների վրա, որոնք գորացնում են հավատացյալներին, իսկ անհավատներ մոտեցնում Հիսուսին:
- Բ. Պողոսի խոսքը Տիրոջ Ընթրիքի մասին, սկսած 1 Կոր. 10:14 և շարունակելով 1 Կոր. 10:22, 1 Կոր. 11:17-34-ում լիարժեք քննարկման նախատիպն է:
- Գ. Պողոսը հավանաբար դիմում է «տկար» հավատացյալներին 1 Կոր. 10:14-22 և «ուժեղ» հավատացյալներին 1 Կոր. 10:23-33: Եթե դա կառուցվածքը չէ, զարմանալի է, թե ինչպես այս երկու կետերը չեն հակասում միմյանց: 1 Կոր. 10:14-22, մի կերեք կուռքի կերակուր: 1 Կոր. 10:23-33, կերեք, եթե դա չի քննարկվում: Հնարավոր է, առաջինը վերաբերում է հեթանոսական տաճարում հանրային ընթրիքին, իսկ երկրորդը՝ տան ընթրիքին:
- Դ. The United Bible Societies' *Handbook on Paul's First Letter to the Corinthians*, Ellingworth and Hatton ունի 1 Կոր. 10:1-13-ի հետաքրքիր ուրվագիծ;
 - «Ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.
 - I. Ներածություն - համար 1ա:
 - II. Դրական կողմեր:
 - Ա. Չորս դրական օրինակներ Հին Կտակարանից- համարներ 1բ-4ա-վերջին օրինակը ընդարձակվում է 4բ համարում:
 - Բ. Դրական օրինակներից բերված եզրահանգումներ- 5-րդ համար:
 - Գ. Կիրառություն ընթերցողներին- համար 6ա
 - III. Բացասական կողմեր:
 - Ա. Հինգ բացասական Հին Կտակարանյան օրինակներ, 6բ-10 համարներ:
 - Բ. Կիրառություն ընթերցողներին, 11-13-րդ համարներ:

Այս **ամենը** բառը կրկնվում է հինգ անգամ 1-4-րդ համարներում, մեծ ուշադրություն դարձնելով այն փաստին, որ Իսրայելի բոլոր ժողովուրդը կիսում էին Աստծո

պաշտպանությունը և օրհնությունները, ելիցի ժամանակ, իսկ հետո անապատում թափառելու տարիներին: **Ամենը** 5-րդ համարում հակասում է **շատերին** և **նրանցից ոմանց-ին**, որոնք կրկնվում են չորս անգամ 7-10-րդ համարներում» (Էջ 214):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 10:1-5
 1 Չեմ կամենում, եղբարք, որ չ'գիտենաք՝ թե մեր հայրերն ամենն էլ ամալի տակն էին. եւ ամենը ծովի միջովն անցան: 2 Եւ ամենը Մովսէսով մկրտուեցան ամպումը եւ ծովումը: 3 Եւ ամենն էլ նոյն հոգեւոր կերակուրը կերան: 4 Եւ ամենն էլ նոյն հոգեւոր խմելիքը խմեցին. Որովհետեւ այն հոգեւոր վէմիցն էին խմում՝ որ գնում էր նորանց հետ. Եւ այն վէմն էր Քրիստոսը: 5 Բայց Աստուած նորանցից շատերին չ'հաւանեց. որովհետեւ անապատումը փռուած ընկան:

10:1 «Չեմ կամենում, եղբարք, որ չ'գիտենաք» Այս արտահայտությունը գրական մեխանիզմ է, որը հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից, եզրակացություն ներկայացնելու համար (տես Հո. 1:13; 11:25; 1 Կոր. 10:1; 12:1; 2 Կոր. 1:8; 1 Թես. 4:13):

- **«մեր հայրերն»** Սա արտացոլում է (1) եկեղեցում հավատացյալ հրեական տարրը կամ (2) Նոր Կտակարանում հեթանոսները պատվաստված են բնական ձիթենու ծառին՝ Իսրայելին (տես Հո. 10; Գաղ. 6:16) և այժմ մեկ են Քրիստոսում (տես Եփ. 2:11-3:13):
- **«ամենն էլ ... ամենը»** Այս ինքնուզուզ/ներգրավող տերմինը (այսինքն, *pantes*) օգտագործվում է երկու անգամ 1 Կոր. 10:1-ում և մեկ անգամ 1 Կոր. 10:2, 3, և 4: Դա ընդգծում է բոլոր իսրայելացիների միասնությունը՝ Աստծո շնորհքի և դատաստանի փորձառության մեջ, որը կոչվում է «Անապատում թափառելու ժամանակաշրջանը» (այսինքն, Թվոց):
- **«ամալի»** Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ ներկայության եզակի խորհրդանիշին: Այն ռաբբիների կողմից կոչվում էր *shekinah* փառքի ամպը (տես Ելից 13:21-22, 14:19): Եբրայերեն *shekinah* բառը նշանակում է «բնակվել»: ՅԱՀՎԵՆ այս պատժի ժամանակաշրջանում Իր ժողովրդի հետ էր այնպիսի մտերմիկ և հոգատար ձևերով, որ ռաբբիները սկսեցին կոչել այս «մեղրամիս» ՅԱՀՎԵԻ և Իսրայելի միջև:
- **«ամենը ծովի միջովն անցան»** Սա ՅԱՀՎԵԻ «Կարմիր» (բառացիորեն «եղեգ» կամ «մոլախոտ») ծովի բաժանման մասին ակնարկն է: Այսօր Աստվածաշնչի գիտնականները անորոշության մեջ են, թե որն է այդ կոնկրետ ջրային մարմինը: Նույն տերմինը, *yam suph* օգտագործվում է Հին Կտակարանում՝ ուղղված (1) Աքաբիայի ծոցին (տես Ելից 21:4; 2 Օր. 2:1; 3 Թագ. 9:26; Եր. 49:21) կամ (2) Հնդկական օվկիանոսին: Ակնհայտորեն այն վերաբերում էր հարավային խորհրդավոր ջրերին: Հետաքրքիր է, Ծննդոց 1-ում չի ասվում որ «ջուրը» ստեղծվել է Աստծու կողմից: Հաճախ Միջագետքի արարչագործությանը վերաբերող առասպելները խոսում են ջրերի մասին (այսինքն, աղի և թարմ) որպես աստվածների, ովքեր ցանկացել են մարդկային ոչնչացումը: ՅԱՀՎԵՆ իր ժողովրդին ազատագրում է ջրի քառսից և պարտությունից:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԿԱՐՄԻՐ ԾՈՎԸ
SPECIAL TOPIC: THE RED SEA (BDB 410 CONSTRUCT BDB 693 I)
 I. Անունը
 Ա. Բառացի անունն է *Yam Suph*:
 1. «Մոլախոտերի ծով» կամ «եղեգների ծով» (եգիպտական արմատ)

- 2. «Վերիջի ծովը» (աշխարհի վերջի) (սեմիթական արմատ)
- Բ. Սա կարող է վերաբերել
 - 1. աղի ջրին, 3 Թագ. 9:26 (Աքաբայի ծոցը); Հովնան 2: 5 (Միջերկրական օվկիանոսը)
 - 2. թարմ ջրին, Ելից 2: 3; Ես. 19:6
- Գ. Մեպտուագինդը առաջին թարգմանությունը է, որ այն կոչում է «Կարմիր ծով»: Հնարավոր է, այդ թարգմանիչները կապել են Եդովմի ծովին հետ (կարմիր): Այս նշանակությունը պահպանվել է լատիներեն Վուլգատի և հետագայում King James անգլերեն թարգմանության շնորհիվ:

II. Տեղանքը

- Ա. Այս անունով նշված են մի քանի ջրային մարմիններ:
 - 1. Եգիպտոսի և Սինայի թերակղզու միջև մոտավորապես 190 մղոն երկարությամբ ջրային նեղ մարմին (Սուեզի ծոց)
 - 2. Սինայի թերակղզու և Արաբիայի միջև ջրային մարմին մոտավորապես 112 մղոն հեռավորության վրա (Աքաբայի ծով)
- Բ. Այն կարող է վերաբերել Նեղոսի դելտայի հյուսիսարևելյան մասում գտնվող մակերեսային առափնյա տարածքին՝ Տանիս, Մոան, Ավարիիս, Ռամեսսի մոտ, որը գտնվում է Մանգալե լճի (Ճահճոտ տարածք) հարավային ափին:
- Գ. Այն կարող է օգտագործվել փոխաբերականորեն հարավի առեղծվածային ջրերի համար, հաճախ օգտագործվում վերջին ծովի համար (երկրի): Սա նշանակում է, որ այն կարող է վերաբերել.
 - 1. Ժամանակակից Կարմիր ծով (Սուեզի ծովի կամ Աքաբայի ծոցը, տես 3 Թագ. 9:26)
 - 2. Հնդկական օվկիանոս (տես Հերոդոտոս 1.180)
 - 3. Պարսից ծոց (այսինքն, Յուսուփոս)

III. *Suph* Թվոց 33

- Ա. Թվոց 33: 8 ջուրը, որը հրաշքով բաժանվել էր, կոչվում է *suph* (BDB 693 I, «եղեգ» կամ «մոլախոտ»):
- Բ. Թվոց 33: 10,11 Իսրայելացիներին ասվում է ճամբար դնել *yam suph* (եղեգների/մոլախոտերի ծով) մոտ:
- Գ. Գոյություն ունեն ջրային երկու տարբեր մարմիններ:
 - 1. առաջինը Կարմիր ծովը չէ (Սուեզի ջրանցք)
 - 2. երկրորդը թերևս, Կարմիր ծովն է (Սուեզի ջրանցք)
- Դ. *suph* տերմինը Հին Կտակարանում օգտագործվում է երեք ձևով:
 - 1. ՅԱՀՎԵԻ կողմից բաժանված ջրային մարմինը թույլ տվեց իսրայելացիներին անցնել, բայց եգիպտական զինվորները խեղդվեցին
 - 2. Կարմիր ծովի հյուսիսարևմտյան երկարությամբ ձգվելը (Սուեզի ծով)
 - 3. Կարմիր ծովի հյուսիսարևելյան երկարությամբ ձգվելը (Աքաբայի ծոց)
- Ե. *Yam suph*, թերևս, չի նշանակում «եղեգի ծով», քանի որ
 - 1. Կարմիր ծովում (աղի ջուր) չեն եղել/ չկան եղեգներ (պապիրոս)
 - 2. ենթադրյալ եգիպտական էթիմոլոգիան վերաբերում է ոչ թե լճին, այլ ցամաքին
- Զ. *Suph-* ը հնարավոր է գալիս է սեմիթական արմատից «վերջ» (BDB 692) և վերաբերվել հարավային առեղծվածային անհայտ ջրերին (տես Bernard F. Batts, "Red Sea or Reed Sea? What Yam Suph Really Means" in *Approaches to the Bible*, մաս 1, էջ 291-304):

10:2 «Մովսէսով մկրտուեցան» Հունական ձեռագրերը տարբերվում են կրավորական սեռի (այսինքն, MSS D ,C ,A ,Տ) և չեզոք սեռի (այսինքն, MS B) միջև: Թվում է, թե չեզոք սեռը կոնտեքստային առումով

համապատասխանում է Մովսեսին հետևելու իսրայելացիների կամավոր որոշմանը և պատմական փաստը, հրեա նորադարձի մկրտությունը, որն ինքնակառավարվող էր: Սա անսովոր արտահայտություն է, որը գտնվում է միայն այստեղ՝ Նոր Կտակարանում: Դա զուգահեռներ է տանում Մովսեսական ուխտի պատասխանատվության և արտոնության և Քրիստոսում մեր նոր ուխտի միջև; երկուսն էլ Աստծուց են, և որոշ առումներով նման են: Այստեղ մկրտությունը օգտագործվում է որպես խորհրդանիշ մեկի համար ով հետևում է:

Կա ռաբբիական ավանդույթ, որը հասնում է մինչև Hillel (տես b Ker. 9a, b Yeb. 46a), որը վերաբերում է նորադարձի մկրտությանը Կարմիր ծովի իրադարձությանը: Տես Richard N. Longenecker, *Biblical Exegesis in the Apostolic Period*, էջ 102-103:

10:3 «հոգևոր կերակուրը» Սա վերաբերում է և՛ մանանային (տես Ելից 16), և՛ լորին (տես Ելից 16:13; Թվոց 11:31-32), որոնք անապատում թափառելու ժամանակաշրջանում Աստծո գերբնական հոգատարություններն էին:

10:4 «նյոխ հոգևոր խմելիքը» Սա վերաբերում է ջրի հրաշալի հայթայթմանը (Ելից 17:6; Թվոց 20:8):

- **«այն հոգևոր վեմիցն էին խմում»** Վեմը ՅԱՀՎԵԻ կոչումն է Հին Կտակարանում, որն ընդգծում է Նրա ուժը և հարատևությունը (տես 2 Օր. 32:4,15; Մաղ. 18:2; 19:14): Այն նաև օգտագործվում է Մեսիական Թագավորության մեջ՝ որպես ոչնչացնող ուժ (տես Դան. 2:45):

- **«որ գնում էր նորանց հետ»** Սրանք կարծես վերաբերում են ռաբբիական լեգենդին՝ հիմնված Ելից 17:6 և Թվոց 20:11, որ վեմը հետևեց իսրայելացիներին և որ այն Մեսիան էր: Այս ավանդույթը մասնավորապես նշված է Ղուրանում:

- **«Եւ այն վեմն էր Քրիստոսը»** Սա ռաբբիական տիպաբանություն է (վեմի անձնավորացումը գալիս է Թվոց 21:17 կամ 2 Օր. 32:4,15,18,30, տես Targum Onkelos Թվոց 21): Աստված կենդանի ջուր տվեց անապատում թափառելու ժամանակահատվածում: Պողոսը նմանություն է տեսնում անցյալի Աստծո հոգատարության և ներկայիս Աստծո կենդանի հոգատարության միջև: Պողոսի աստվածաբանությունը համարում էր Քրիստոսին որպես նախկինում գոյություն ունեցող և Հոր կյանքի և օրհնության գործոն: Հիսուսը միշտ եղել է Աստծո Հոր լիարժեք հոգատարությունն ու մեծագույն օրհնությունը:

10:5 «Բայց» Սա հունարեն *alla* է, որը ցույց է տալիս ուժեղ հակադրություն: Տես Կոնտեքստային Մտքեր, Դ. կետը:

- **«նորանցից շատերին չ'հաւանեց»** Սա ուշադրություն է գրավում, քանի որ այդ սերնդից երկուսը մահացել են: Միայն 20 տարեկանից ցածրերը (այնքան մեծ չէ որ ուշ լինի զինվորական ծառայության համար) և Հեսուն և Քաղեբը (այսինքն, դրական հավատքի վկայություն ներկայացնող երկու լրտեսները) մտան Ավետյաց երկիրը (տես Հուդա 1:5):

- **«անապատումը փռուած ընկան»** Այս բառը ենթադրում է, որ իրենց ոսկորները ցրված էին անապատով (տես Թվոց 14:16): Նրանք Աստծո ընտրյալ ժողովուրդն էին, բայց Նա դատեց նրանց անհավատությունը: Այս Հին Կտակարանյան հավատացյալները տեսան Աստծո հրաշալի հոգատարությունը: Նրանք գիտեին Իր կամքը Աստծո կողմից տրված առաջնորդների միջոցով (այսինքն, Մովսեսը, Ահարոնն ու Մարիամը), սակայն նրանք գործեցին անհավատությամբ և ապստամբությամբ (տես Եբր. 3-4):

Պողոսն ուղղակիորեն մեկնաբանել է ինքնատիրապետման իր ուժեղ ջանքերը (տես 1 Կոր. 9:24-27): 11-րդ գլխում նա ակնարկում է նրանց, ովքեր փորձում են բաժանել աստվածաբանական

գիտելիքները աստվածահաճո ապրելակերպից (այսինքն, գնոստիկներ և այլ մտավորականներ): Նույնիսկ ընդհանուր ճաշկերույթը (այսինքն, *ագապե* ճաշկերույթը) չէին կարող ուտել ոչ բարեպաշտ հավատացյալները (տես 1 Կոր. 11:27-32): Ֆիզիկական մահը կարող է լինել ժամանակավոր, աստվածային դատաստան, որով տառապում են անհնազանդ հավատացյալները:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթոսացիս 10:6-13

ՃԵ սորանք մեզ օրինակի համար եղան. Որ մենք չար բաների ցանկացող չ'լինենք, ինչպես նորանք ցանկացան: **ՃԵ կռապաշտ մի լինիք ինչպես նորանցից ոմանք. Ինչպես գրուած է, թէ Ժողովուրդը նստեց ուտելու եւ խմելու, եւ վերկացան որ խաղան:** **ՃԵ պոռնկութիւն էլ չ'անենք, ինչպես նորանցից ոմանք պոռնկութիւն արին, եւ մէկ օրում քսանեւերեք հազար մարդ վայր ընկան:** **ՃԵ Քրիստոսին էլ չ'փորձենք, ինչպես նորանցից էլ ոմանք փորձեցին, եւ օձերիցը սաստկեցին:** **ՃԵ չ'տրտնջանք էլ ինչպես նորանցից էլ ոմանք տրտնջացին, եւ սաստկչի ձեռովը կորան:** **ՃԵ այն ամենն օրինակի համար էր նորանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրուեցաւ, որոնց դարերի վերջը հասաւ:** **ՃԵ Ուրեմն ով որ համարում է թէ հաստատ կանգնած է, թող զգոյշ լինի, որ վայր չ'ընկնի:** **ՃԵ Ձեզ ուրիշ փորձութիւն չէ պատահել բացի մարդկային փորձութիւնից. բայց Աստուած հաւատարիմ է, որ չի թողիլ ձեզ ձեր կարողութիւնիցը վեր փորձուելու, այլ փորձութեան հետ ելքն էլ կ'պատրաստէ, որ կարողանաք համբերել:**

10:6 «Այժմ» NRSV, TEV և JB այս կետում նաև նշում են պարբերական բաժին՝ ցույց տալով պատմական նմանություններից անցումը ներկայիս կիրառմանը:

▪ **«սորանք մեզ օրինակի համար եղան»** *tupoi* հունարեն տերմինը, «օրինակներ» (եզակի *tupos*) ունի լայն իմաստային դաշտ: Դա հարվածի հետևանքով թողած նշան էր: Մա կարող է վերաբերել ֆիզիկական հարվածին (տես Մաթ. 24:49; 27:30) կամ դրա փոխաբերությանը (տես 1 Կոր. 8:12):

Այն օգտագործվեց մուրձի հարվածով շտամպի համար (տես Հովհ. 20:25): Այս տպագրումը կարող էր վերաբերել ֆիզիկական պատկերին՝ կուռքին (Գործք 7:43) կամ տպագիր պատկերին (տես Գործք 23:25; Հռ. 6:17): Դրանից բխում է մի օրինակ (տես Գործք 7:44; Փիլ. 3:17; 1 Թես. 1:7; 2 Թես. 3:5; 1 Տիմ. 4:12; Եբ. 8:5; 1 Պետ. 5:3):

Այս տերմինի օգտագործման լավագույն գուցահեռները այս տեքստում (այսինքն, «տիպ» 1 Կոր. 10:6) հետևյալն են՝ 1 Կոր. 10:11 և Հռ. 5:14, որտեղ այն վերաբերում է (1) նախապատմության տեսակին; 2) պատկերավոր կրկնորդին; կամ (3) խորհրդանշական օրինակին:

6-րդ և 11-րդ համարները հիշեցնում են Նոր Կտակարանյան հավատացյալներին, որ Հին Կտակարանը հոգևոր արդիականություն ունի իրենց համար (Հռ. 4:23-24; 15:4; 1 Կոր. 9:10; 10:6,11): Աստծո հայտնությունները հավիտենական են, իսկ սկզբունքները՝ արդիական:

▪ **«Որ մենք չար բաների ցանկացող չ'լինենք, ինչպես նորանք ցանկացան»** Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը համեմատում է Հին Կտակարանյան ուխտի ժողովրդի ու Նոր Կտակարանյան ուխտի ժողովրդի հետ: Չարիքը արդիական խնդիր է: Այն կարող է մարդուց գողանալ հավիտենական կյանքը՝ Աստծո հետ մտերիմ հաղորդակցությունը: Չարը ապականում է մարդկության գոյության յուրաքանչյուր մակարդակը: Փրկությունը չի ազատում մեզ պայքարից (տես Հռ. 7, Եփ. 6:10-19): Կորնթոսի եկեղեցին վտանգի մեջ էր և՛ ուղղափառության և օրթոպրաքսիայի շրջանակներում: Նպատակը աստվածպաշտությունն է, ոչ թե տեղեկատվությունը:

«Ցանկանալ, ձգտել» տերմինը (օգտագործված է երկու անգամ) արտացոլում է հզոր բաղադրիչ հունարեն *epithumeō* տերմինը, որը բաղկացած է «առաջ» և «շտապել» նախդիրներից: Այն վերաբերում է ուժեղ զգացմունքին կամ հուզմունքին, որը վերահսկում է մարդու միտքը և սիրտը: Այն կարող է օգտագործվել դրական իմաստով, ինչպես Փիլ. 1:23-ում, բայց սովորաբար օգտագործվում է բացասական իմաստով (տես 2 Տիմ. 2:22): Պողոսը խոսում է Թվոց 11:31-35-ում գրված

իսրայելացիների մեծ ցանկության և անհնազանդության մասին, քանի որ նա ակնարկում է Թվոց 25:9-ին 1 Կոր. 10:8-ում և Թվոց 16:4-5; 17:5,10 1 Կոր. 10:10-ում:

10:7 «կռապաշտ մի լինիք» Սա ներկա չեզոք հրամայական (դեպոնենտ) է ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողությունը: Այս Հին Կտակարանյան մեջբերումը վերաբերում է Ելից 32-ի կռապաշտությանը:

Կորնթոսում Պողոսի մասին ճշգրիտ կռապաշտության պրակտիկան անորոշ է: Ինչ-որ կերպ հավատացյալները վտանգի մեջ էին Աստծուն վիրավորելու համար: Գլուխ 7-ից և Կորնթոսի պատմական իրավիճակից հասկանում ենք, որ մի գուցե, եղել է հեթանոսական սեռական պաշտամունքի գործածություն կամ 8 գլխից հեթանոսական կռապաշտական զոհաբերություններ:

▪ **«Ժողովուրդը նստեց ուտելու եւ խմելու, եւ վերկացան որ խաղան»** Սա ակնարկ է Ելից 32-ում Ահարոնի պատրաստած ոսկե հորթը և Իսրայելի որդիների խնջույքը դրա առջև և սեռական գործողություններ կատարելու մասին (տես Ելից 32:6,19): «Պարել» տերմինի սեռական կողմը երևում է այն նույն եբրայերեն բառի մեջ, որն օգտագործվում է Ծննդ. 26:8-ում, Իսահակը խաղում էր Ռեբեկայի հետ:

10:8 «պոռնկութիւն էլ չ'անենք» Սա ցույց է տալիս Կորնթոսի հեթանոսական միջավայրը, ինչպես նաև հեթանոսների միտումը, նույնիսկ փրկված հեթանոսների, որոնք հակված են անբարոյականության կրոնի անվան մեջ:

▪ **«մէկ օրում քսանեւերեք հազար մարդ վայր ընկան»** Սա վկայակոչում է Թվոց 25:1-9: Թվոց 25:9 և եբրայերեն տեքստի միջև ակնհայտ անհամապատասխանություն կա, որտեղ ասվում է քսանչորս հազար: Սա կարծես պատճենելու սխալ չէ: Այս անհամապատասխանությունը բոլոր հունարեն ձեռագրերում է: Դա կարող է հիշողության շրջան լինել Պողոսի համար: Սա չի նշանակում ներշնչման կամ վստահելիության պակասություն զգալ, սակայն հնագույն աշխարհը այնքան էլ ճշգրիտ չէր ժամանակակից արևմտյան ժողովրդի թվերը օգտագործելու մեջ:

Archer's Encyclopedia of Bible Difficulties, էջ 141, 401-ում, նա պնդում է, որ Պողոսի Հին Կտակարանյան հատվածը վերաբերում է ոչ թե Թվոց 25:1-9, այլ Ելից 32: Նա լավ միտք է դնում այդ 1 Կոր. 10:7 մեջբերումների մեջ Ելից 32:4-ից և այդ Ելից 32:35-ը հիշատակվում է Տիրոջ կողմից մարդկանց կոտորելու մասին, ըստ երևութին 3000-ից ավելի 1 Կոր. 10:28: Սա անշուշտ կարևոր կոնտեքստային տարբերակ է:

10:9 «Քրիստոսին էլ չ'փորձենք» Սա *peirazō* տերմինն է *ek* նախդիրով, որը ուժեղացնում է այն (տես Մաթ. 4:7; Դուկ. 4:12; 10:25): Տես Հատուկ Թեմա: Փորձել բառի հունարեն տերմինները, 1 Կոր. 3:13): Կորնթոսի եկեղեցին նույն կերպ վարվեց իսրայելացիների հետ անապատում (տես Թվոց 21:5-6): Աստված օգտագործում է ժամանակավոր դատաստան իր ժողովրդին ուղղելու համար:

«Տեր» տերմինը (տես NASB, TEV, NJB և NIV) հին հունարեն ձեռագրերում, ,P ,C ,B ,x և հայերեն թարգմանությունում: Այն համապատասխանում է Հին Կտակարանյան ակնարկին լավագույնս, դիմելով ՅԱՀՎԵԻՆ Թվոց 21:

«Քրիստոս» տերմինը (տես NKJV, NRSV) հանդիպում է P⁴⁶, D, F, G ձեռագրերում և Վուլգատ և Peshitta թարգմանություններում: Այն համապատասխանում է Պողոսի անմիջական լսարանին:

Չնայած UBS⁴-ը տալիս է «Քրիստոսին» «Բ» վարկանիշ (այսինքն, գրեթե որոշակի), «Տեր» համար ուժեղ փաստարկը պատրաստվել է Bart D. Ehrman *The Orthodox Corruption of Scripture*, էջ 89-90:

Տես Հատուկ Թեմա: «Փորձել» բառի հունարեն տերմինները և դրանց լրացուցիչ իմաստները, 1 Կոր. 3:13:

- **«օձերիցը սաստակեցին»** Մա վկայակոչում է Թվոց 21: Տես Հատուկ Թեմա: *Apollumi* 1 Կոր. 8:11:

10:10 «չ'տրտնջանք էլ ինչպես նորանցից էլ ոմանք տրտնջացին» Առաջին արտահայտությունը ներկա ներգործական հրամայական է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործընթացի մեջ եղած գործողությունը: Մա վերաբերում է Թվոց 16:41-50, որը հիշատակվում է Թվոց 17:5,10: Կորնթոսի եկեղեցին տրտնջում էր, ինչպես Իսրայելը հնում:

- **«սաստակիչը»** Մա ակնարկում է Թվոց 16:49 պատուհասը: Դա աստվածաբանական ձև էր՝ ցույց տալով, որ մահը ՅԱՀՎԵԻ ձեռքում էր (տես Ելից 12:23,29; 2 Թագ. 24:16; 1 Մնաց. 21:15; Եբ. 11:28): Չկա «չար հնձվոր»: Չկա հնարավորություն, ճակատագիր կամ հաջողություն: Կա Աստված, Իսրայելի Աստվածը, Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը: Նա և միայն Նա է վերահսկում կյանքը և մահը:

10:11 «նորանց» Մա վերաբերում է Հին Կտակարանի այն մարդկանց, ովքեր զոհվել են սաստակիչի ձեռքով:

- **«օրինակ»** Ծանոթագրություն 1 Կոր. 10:6: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՍՈՎՍԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1 Կոր. 9:9:

- **«դարերի վերջը հասա»** Մա վաղակատար ներգործական սահմանական է: Դա փոխաբերություն է նոր դարի մարգարեության համար (նման արտահայտություն է Եբ. 9:26): Հավատացյալները ապրում են Աստծո Թագավորության մեջ, հանդիսավոր կերպով բացված Հիսուսի Առաջին Գալուստի ժամանակ, որը ամբողջանալու է Իր Երկրորդ Գալուստով: Մենք ապրում ենք «արդեն իսկ և դեռևս» լարվածության մեջ:

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՍ ԴԱՐԸ ԵՎ ԵԿՈՂ ԴԱՐԸ, 1 Կոր. 1:20-ում:

10:12 «Ուրեմն ով որ համարում է թե հաստատ կանգնած է, թող զգոյշ լինի» Կորնթոսի երկպառակտությունների ինքնավստահությունն ու ամբարտավան հպարտությունը հիմնական խնդիր էր, և նույն վերաբերմունքն է այսօր (տես Հռ. 11:20; 2 Պետ. 3:17): Աստված դատում է և դատելու է Իր ժողովրդին (տես Եբ. 25:29; 1 Պետ. 4:17): Ինքնախաբերությունը կրոնական մարդկանց անեծքն է: Նրանք, ովքեր Քրիստոսում են պետք է շարունակեն ջանասիրաբար գործել (տես 1 Կոր. 9:24-27):

10:13 «փորձություն» Այս բառը երեք անգամ օգտագործվում է այս համարում և նշանակում է փորձել ոչնչացման տեսակետից (տես Հատուկ Թեմա 1 Կոր. 3:13-ում): Նոր Կտակարանում փորձության երեք աղբյուրներ կան՝

1. ընկած մարդու մեղավոր բնությունը
2. անձնական չարը (այսինքն, Մատանան և դիվայինը)
3. ընկած աշխարհի համակարգը (տես Եփ. 2:1-3; Հակ. 4:1,4,7):

Արևելահայերեն **«բացի մարդկային փորձությունից»**

Արևմտահայերեն **«մարդկային փորձությունէն զատ»**

NASB **«բայց հասարակ է մարդու համար»**

NKJV **«բացառությամբ այն, ինչ սովորական է մարդու համար»**

NRSV **«դա բոլորի համար հասարակ չէ»**

TEV **«բարին, որը սովորաբար գալիս է մարդկանցից»**

NJB **«ոչ որ...ավելին է քան մարդը ով կարող է կանգնել»**

Ուրիշ մարդիկ նույն փորձության առաջ են կանգնել, ինչպես Կորնթոսի հավատացյալները: Հիսուսը նույնպես փորձվել է և հաղթահարել բոլոր գայթակղությունները, որոնք բնորոշ են մարդկանց (այսինքն, Եբ. 4:15):

▪ **«Աստուած հաւատարիմ է»** Սա շատ կարևոր նկարագրական հայտարարություն է: Աստվածաշնչյան հավատքը հիմնված է Աստծո բնույթի վրա: Մեր հույսը Նրա ողորմած բնույթի, հաստատ խոստումների ու փրկարարական գործողությունների վրա է:

Աստծո բնավորության այդ հատվածը նախնաառաջ հաստատվում է 2 Օր. 7:9, որը 2 Օր. 5:9-10 ուժեղացումն է: Աստծո արդարությունը ժամանակի ընթացքում անցնում է երեք - չորս սերունդների, բայց Նրա սիրառատ բարությունը՝ (այսինքն, Նոր Ուխտի հավատարիմ սեր, *hesed*) հազար սերունդների: Այս նույն հաստատումը շարունակվում է Ես. 49:7:

Սա հիմնական թեման է Կորնթացիսի նամակների մեջ (տես 1 Կոր. 1:9; 10:13; 2 Կոր. 1:18, ինչպես նաև 1 Թե. 5:24 և 2 Թե. 3:3): Հավատացյալները հավատում են Աստծո հավատարմությանը; վստահում Աստծո հավատարմությանը: Սա Աստվածաշնչյան հավատքի էությունն է:

Արևելահայերեն «այլ փորձութեան հետ ելքն էլ կ'պատրաստե, որ կարողանաք համբերել»
Արևմտահայերեն «հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէս զի կարող ըլլաք համբերել»

NASB «բայց փորձությամբ էլ փախուստի միջոց կստեղծի, որպեսզի դուք կարողանաք հանդուրժել այն»

NKJV «բայց գայթակղությունից էլ փախուստի ճանապարհ կընձեռի, որ դուք կարողանաք կրել այն»

NRSV «բայց փորձաքննությամբ նա նաև էլք կստեղծի, որպեսզի կարողանաք հանդուրժել այն»

TEV «այն ժամանակ, երբ դուք փորձարկվում եք, նա ձեզ ուժ կտա, դիմանալու համար, և այդպիսով ապահովեք ձեզ ելքով»

NJB «ցանկացած փորձության միջոցով նաև էլք կգտնվի՝ թույլ տալով, որ դուք համակերպվեք դրա հետ »

Այս հունարեն բառը օգտագործվել է ծուղակն ընկած զինվորական ստորաբաժանման ազատագրման համար: Հավատացյալները գայթակղությունների առաջ մենակ չեն կանգնում:

Այս տեքստում խնդիրն այն է, թե ինչպես է առնչվում «ապահովել էլք»-ը «կարողանալ հանդուրժել այն»-ի հետ: Ոմանք էլք ունեն, իսկ ուրիշներն էլ կրում են այն, թե՛ Աստված է գոյության ճանապարհը: Արդյո՞ք փորձությունը դադարում է կամ արդյո՞ք հավատացյալները փորձվում են հավատքի միջոցով: Թեև այս անհասկանալիությունը չի կարող լուծվել, բայց լավ նորությունն այն է, որ Աստված մեզ հետ է մեր խնդիրների մեջ (Մաղ. 23:4): Աստված մեզ չի թողնի կամ չի լքի: Հաղթանակի ճիշտ մեխանիզմը հստակ հայտնված չէ, բայց հաղթանակը այո:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 10:14-22
¹⁴Նորա համար, իմ սիրելիք, փախեք կռապաշտութիւնիցը: ¹⁵Ինչպէս իմաստունների հետ եմ խօսում, դուք ինքներդ դատեցեք այն որ ասում եմ: ¹⁶Այն օրհնութեան բաժակը, որ օրհնում ենք, չէ՞ որ հաղորդութիւն է Քրիստոսի արիւնի. այն հացը, որ կտրում ենք, չէ՞ որ հաղորդութիւն է Քրիստոսի մարմնին: ¹⁷Որովհետեւ մէկ հաց, մէկ մարմին ենք մենք շատերս. Վասնզի ամենքս այն մէկ հացիցն ենք վայելում: ¹⁸Տեսեք Իսրայէլին մարմնի կողմանէ. չէ՞ որ գոհուածներն ուտողները մասնակից են սեղանին: ¹⁹Արդ ի՞նչ ասեմ. մի՞ թէ կուտքը մի բան է, եւ կամ թէ կուտքերի գոհուածները մի բա՞ն են: ²⁰Բայց այն որ հեթանոսները գոհում են, դէւերին են գոհում, եւ ոչ թէ Աստուծուն. Իսկ ես չեմ կամենում, որ դուք դէւերին մասնակից լինեք. չեք

կարող Տիրոջ բաժակը խմել եւ դեւերի բաժակը. ²¹ Չէք կարող Տիրոջ սեղանիցը վայելել՝ եւ դեւերի սեղանիցը: ²² Կամ թէ Տիրոջը նախանձի գրգռե՞նք. մի թէ նորանից անելի գորատը ենք:

10:14 «Նորա համար» Պողոսը եզրափակում է նախորդ քննարկումը և եզրակացություն է անում:

Արևելահայերեն «իմ սիրելիք»

Արևմտահայերեն «իմ սիրելիներս»

NASB, NKJV, Peshitta «իմ սիրելի»

NRSV, TEV, NJB, REB «իմ սիրելի ընկերներ»

Պողոսի Կորնթացիսի նամակները (և Գաղատացիսը) իր ամենախիստ խոսքերն են եկեղեցիներին: Հետևաբար, նա ուզում է հիշեցնել նրանց, թե որքան թանկ են նրանք իր համար, նույնիսկ այն ժամանակ, երբ նա այդքան խիստ է խոսում նրանց հետ (տես 1 Կոր. 4:14; 10:14; 15:58; 2 Կոր. 7:1; 12:19):

Այս տերմինը օգտագործվել է Հիսուս Հայր Աստծո կողմից (տես Մաթ. 3:17; 12:18; 17:5): Պողոսը, Պետրոսը, Հուդան և Հովհաննեսը իրենց նամակների մեջ օգտագործում են այս ածականը՝ Հիսուսի հետևորդներին ցույց տալու համար: Նրանք սիրված են Քրիստոսի հետ ունեցած փոխհարաբերությունների պատճառով: սիրված Աստծո, Քրիստոսի և Նոր Կտակարանի նամակների գրողների կողմից:

▪ **«փախեք կռապաշտութիւնիցը»** Սա ներկա ներգործական հրամայական է: «Կռապաշտությունն» ունի որոշիչ հոդ: Աստված տալիս է մի ձև, բայց հավատացյալները պետք է դրանից առավել լինեն (տես 1 Կոր. 6:18): Գայթակղության դեմ պայքարելու միջոցներից մեկը դրա ներկայությունից փախչելն է: Հավատացյալները չպետք է իրենց գայթակղության արենայում դնեն:

Հին Կտակարանում «կռապաշտությունը» հեթանոս աստվածների կերպարն ու երկրպագությունն էր: Մեր օրերում այն ամենը ինչ փոխարինում է Աստծուն և առաջնայինն է մեր կյանքում դա է կռապաշտությունը (տես 1 Կոր. 10:7,14): Ինչպես Հիսուսն ասաց, որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը (Մաթ. 6:21): Ժամանակակից մարդիկ բացահայտում են իրենց առաջնահերթությունները ժամանակով, փողով և մտածված կյանքով: Կրոնը հաճախ էական հավելում է, բայց ոչ հիմնական առաջնահերթություն: Ճշմարիտ հավատքը չի զբաղվում ավելցուկով, այլ կյանքի ելությամբ: 1 Հովհաննու գիրքը ավարտվում է «հեռու պահեք ձեզ կուռքերից»-ով (տես 1 Հովհ. 5:21):

10:15 Սա ցույց է տալիս Պողոսի մոտեցումը առաջնորդությանը: Նա եղել է Քրիստոսի Առաքյալը, սակայն նա հորդորում է այս հպարտ հավատացյալներին ,որ դատեն իր խոսքը իրենց համար (տես 1 Կոր. 14:39-40): Անշուշտ, հնարավոր է, որ Պողոսը հեզնանքով լինի: Նա նույն խոսքը (այսինքն, իմաստուն մարդ) օգտագործեց 1 Կոր. 4:10 և 2 Կոր. 11:19 հեզնական իմաստով:

10:16 Այս համարը կառուցված է որպես երկու հռետորական հարց (թեև TEV-ը թարգմանում է դրանք որպես սահմանական դրույթներ):

▪ **«օրհնութեան բաժակը»** Սա հավանաբար վերաբերում է հրեական Զատիկի պաշտամունքի երրորդ բաժակին: Դա այն էր, ինչ Հիսուսն արեց Տիրոջ Ընթրիքի հանդիսավոր բացման արարողության ժամանակ:

«Օրհնություն» տերմինը *eulogia* է *eulogeō* բայից, որը նշանակում է «գովաբանել», «փառաբանել», «օրհնել» կամ «օգուտ տալ»: Տես ծանուցում 2 Կոր. 9:5: Այս հունարեն արմատից մենք

ստանում ենք անգլերեն *eulogy* տերմինը: Երբ Հիսուսը ընդունեց այս արարողակարգը, նա վերցրեց բաժակը և հացը և շնորհակալություն հայտնեց Աստծուն: Գոհության կամ շնորհակալության հունարեն տերմինը *eucharistia* է, որից մենք ստանում ենք Eucharist տերմինը: Այս երկու հունարեն տերմիններն օգտագործվում են հոմանիշ եղանակով 1 Կոր. 14:16:

Հետաքրքիր է, բայց ոչ աստվածաբանորեն կարևոր, որը գավաթի և հացի նորմալ կարգը փոխված է (տես 1 Կոր. 11:24-27): Հարցը հերթականությունը չէ, այլ Քրիստոսի հետ հաղորդակցությունը Իր հաղորդության սեղանի արարողության միջոցով, ի տարբերություն չաստվածների հաղորդության սեղանի:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԶՍՏԻԿ (ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ)
SPECIAL TOPIC: PASSOVER (ORDER OF SERVICE)

- Ա. Աղոթք
 - Բ. Մի գավաթ գինի
 - Գ. Ձեռնվա տանտիրոջ կողմից և թասը փոխանցել բոլորին
 - Դ. Դառը խոտաբույսերի լուծույթ և սոուս
 - Ե. Գառ և հիմնական կերակուր
 - Զ. Աղոթքը և երկրորդ դառը խոտաբույսերի լուծույթ և սոուս
 - Է. Գինու երկրորդ գավաթը, երեխաների համար հարց ու պատասխանի ժամանակ (տես Ելից 12: 26-27)
 - Ը. Ալելուիա Սաղմոս 113-114-ը երգել և աղոթք
 - Թ. Արարողակարգի տերը յուրաքանչյուրի համար հացի պատառ է պատրաստում՝ իր ձեռքերը լվանալուց հետո
 - Ժ. Բոլորը ուտում են մինչև կշտանալը; ավարտին մի կտոր գառան միս
 - Ի. Գինու երրորդ գավաթը՝ ձեռքերը լվացելուց հետո
 - Լ. Ալելուիա Սաղմոս 115-118 երգել
 - Խ. Գինու չորրորդ գավաթը, որը մատնանշեց Թագավորության գալուստը
- Շատերը հավատում են, որ Տիրոջ ընթրիքի հաստատությունը հանդիպեց «Ի»-ում:

- **«հաղորդութիւն»** Սա հունարեն *koinonia* բառն է, որը նշանակում է «համատեղ մասնակցություն»: Սա անգլերեն համայնք բառի ծագումն է, որն օգտագործվում է *Eucharistic* խորհրդանշական կերակուրի համար, որն այժմ շեշտադրում է հաղորդակցությունը, սակայն ապագայում ավելի մտերմիկ հաղորդակցությունը: Տես Հատուկ Թեմա: *Koinonia* ,1 Կոր. 1:9:
- **«Քրիստոսի արինի»** Սա շեշտը դնում է Քրիստոսի մահվան վրա իր Հին Կտակարանյան գոհաբերության կոնտեքստով (տես Ղև. 1-7): Արյունը խորհրդանշեց կյանքը (տես Ղև. 17:11,14):
- **«հացը, որ կտրում ենք»** Սա անգլերեն արտահայտության աղբյուրն է, որը մենք օգտագործում ենք Տիրոջ ընթրիքի համար, «հացը կտրել» (տես Գործք 2:42): Սա խորհրդանիշն էր, որ Հիսուսն ընտրեց ներկայացնելու խաչի վրա Նոր Ուխտի Իր կտրված մարմինը: Նա միտումնավոր չընտրեց Զատկի Գառնուկին, որը Հին Ուխտի փորձառության խորհրդանիշն էր (տես Ելից 12):
- **«Քրիստոսի մարմնին»** «Քրիստոսի մարմնի» խորհրդանիշը երկակի է. 1) Նրա ֆիզիկական մարմինը գոհաբերված է մարդկային մեղքի համար, և (2) Իր հետևորդները դարձան Իր հոգևոր մարմինը՝ եկեղեցին (որը 1 Կորնթացիսում նույնպես ունի երկու ասպեկտ, ա) տեղական եկեղեցին և, բ) տիեզերական եկեղեցին:

10:17 Սա շեշտը դնում է Քրիստոսի և Նրա եկեղեցու միության վրա, որը արտահայտված է Տիրոջ Ընթրիքի սիմվոլիզմի մեջ (այսինքն՝ մեկ հաց): Քրիստոսի մարմնի այս նույն միությունը 1 Կոր. 12:12-13-ում է հոգևոր պարզանքների առնչությամբ:

10:18 «Իսրայելին» Սա բառացիորեն նշանակում է «Իսրայելը, մարմնի կողմանե»: Սա մեկ այլ խորհրդանշական ձև է (այսինքն, պատմական ենթադրություն), ցույց տալու նրանց միությունը, ովքեր մասնակից են Տիրոջ Ընթրիքին:

10:19 «Արդ ի՞նչ ասեմ» Պողոսի գրվածքները աստվածաշնչային ամենադյուրին տեքստերից մեկն են թարգմանելու համար, որովհետև նա տրամաբանորեն զարգացնում է իր մտքերը: Տրամաբանական նշանները, ինչպիսին այս արտահայտությունն է, հնարավորություն են տալիս ժամանակակից թարգմանիչներին ուրվագծելու Պողոսի մտքերը պարբերության մակարդակով, որը բանալին է իր գրքերը թարգմանելու մեջ :

Պողոսը զարգացնում է իր մտքերը այս կոնտեքստում մի շարք հռետորական հարցերի միջոցով (տես NASB, 1 Կոր. 10:16 (երկու); 1 Կոր. 10:18 (մեկ); 1 Կոր. 10:19 (երկու կամ երեք); 1 Կոր. 10:22 (երկու), 1 Կոր. 10:29 (մեկ), 1 Կոր. 10:30 (մեկ):

▪ **«մի թե կուռքը մի բան է»** Օրինակ, թե ինչպես հնագույն դպիրները ոչ միտումնավոր կերպով փոխում էին այն տեքստերը, որոնք նրանք արտագրում էին, բայց այս արտահայտությունը պատահաբար դուրս է մնացել հին հունարեն ձեռագրերից (այսինքն, P⁴⁶, ռ*, A, և C): Տեքստային քննադատության հետագա քննարկման համար, տես Հավելված Երկու:

10:20 «դևերին են զոհում» Պողոսը, վերադառնալով Հին Կտակարան, հասկանում էր կռապաշտությունը որպես առնչվող և ոչ թե պատկերի իրականություն, այլ հոգևոր ուժերի իրականությունը՝ ֆիզիկական ստեղծագործության մեջ (տես Ղև. 16:8; 12:7; 2 Օր. 32:17; Սաղմ. 96:5; 106:37; Ես. 65:11; Հայտ. 9:20; 16:14): Բոլոր մարդկային գործունեության հետևում հոգևոր դաշտն է (տես 2 Օր. 32:8 [LXX]); Դան. 10; Եփ. 6:10-18): Չնայած այն, որ երբեք չի նշվում կոնկրետ, որ Հին Կտակարանի ընկած հրեշտակները Նոր Կտակարանի դևերն են, Պողոսը խոսում է այս ընկած հոգևոր ուժերի մասին՝ այլ տերմիններով Հռ. 8:38-39; 1 Կոր. 15:24; Եփ. 1:21; 3:10; Կող. 1:16; 2:10,15: Պողոսն օգտագործում է «դև» տերմինը միայն այստեղ և 1 Տիմ. 4:1-ում: Տես Հատուկ Թեմա: Անձնական չարը 1 Կոր. 7:5:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԴԻՎԱԿԱՆ (ԱՆՄԱՔՈՒՐ ԿԱՍ ՊԻՂՇ ՈՂԻ)

SPECIAL TOPIC: ANGELS AND DEMONS

Ա. Հնագույն ժողովուրդները հեթանոսներ էին: Նրանք մարդու հատկությունները վերագրում էին բնության, կենդանիների և բնական օբյեկտների ուժերին: Կյանքը բացատրվում էր այդ հոգևոր անձանց և մարդկության միջև եղած փոխգործակցության միջոցով:

Բ. Այս մարմնացումը դարձավ բազմաստվածություն/polytheism (շատ աստվածներ): Սովորաբար դիվայինը (*genii*) փոքր կամ ցածր աստվածներ էին կամ կիսաստվածներ/demigods (բարի կամ չար), որոնք ազդում էին մարդկային կյանքերի վրա:

1. Միջագետք, քառս և հակամարտություն
2. Եգիպտոս, դասակարգ և գործողություն
3. Քանան, տես W. F. Albright's *Archaeology and the Religion of Israel*, հինգերորդ հրատ. էջ 67-92

Գ. Հին Կտակարանը չի հաստատում կամ զարգացնում փոքր աստվածների, հրեշտակների կամ

դևերի թեման, հավանաբար, այն պատճառով, որ այնտեղ միաստվածության գաղափարը խիստ ընդունված էր (տես Հատուկ Թեմա Մոնոթեիզմ, տես Ելից 8:10; 9:14; 15:11; 2 Օր. 4:35, 39; 6: 4; 33:26; Սաղ. 35:10; 71:19; 86: 6; Ես. 46: 9; Եր. 10: 6-7; Միք. 7:18): Սա նշում է հեթանոս ազգերի կեղծ աստվածների (Shedim, BDB 993, տես 2 Օր. 32:17; Սաղ. 106: 37) և նշում դրանցից մի քանիսի անունները:

1. *Se'im* (այծամարդ, սատիր կամ մագոտ դևեր/այծեր, տես BDB 972 III, KB 1341 III, Ղև. 17: 7; 2 Մնաց. 11:15; Ես. 13:21; 34:14)
2. *Lilith* /Լիլիթ (իգական, գայթակղող, հրապուրող դև, տես BDB 539, KB 528, Ես. 34:14)
3. *Mavet* (եբրայերեն տերմին մահվան համար օգտագործվում էր քանանական անդրշիրմյան աստծո համար, *Mot*, BDB 560, KB560, տես Ես. 28: 15,18; Եր. 9:21; ու հնարավոր է 2 Օր. 28:22):
4. *Resheph* (ժանտախտ, պատուհաս, կարկուտ, BDB 958, KB 958, տես 2 Օր. 32:24; Սաղ. 78:48, Ամբ. 3: 5)
5. *Dever* (ժանտախտ, համաճարակ, BDB 184, տես Սաղ. 91: 5-6; Ամբ. 3: 5)
6. *Az'azel* (անունը անորոշ է, բայց հնարավոր է, անապատի դև կամ լինի տեղի անուն, տես, BDB 736, KB 736, Ղևտ.16:8,10,26)

(Այս օրինակները վերցված են *Encyclopaedia Judaica*, հատոր 5, էջ 1523):

Սակայն, ՅԱՀՎԵԻՅ քացի չկա դուալիզմ կամ հրեշտակային անկախությունը Հին Կտակարանում: Սատանան ՅԱՀՎԵԻ ծառան է (տես Հոր 1-2; Զաքարիա 3), ոչ թե անկախ, ինքնուրույն թշնամի (տես A. B. Davidson, *A Theology of the Old Testament*, էջ 300- 306):

Դ. Հուդայականությունը զարգացավ բաբելոնյան գերության ընթացքում (586-538մ.թ.ա): Սրա վրա աստվածաբանորեն ազդել է պարսից գրադաշտության անձնավորած դուալիզմը, բարի, բարձր աստուածը կոչվում էր *Mazda* կամ *Ormazd* իսկ չար հակառակորդը՝ *Ahriman*: Դա թույլ տվեց հետգերության հուդայականության մեջ անձնավորված դուալիզմ ՅԱՀՎԵԻ և Իր հրեշտակների և սատանայի և նրա հրեշտակների կամ դևերի միջև:

Անձնավորված չարը հուդայական աստվածաբանության մեջ բացատրվում է և լավ փաստագրված է Alfred Edersheim's *The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2 հավելված XIII (էջ 749-863) և XVI (էջ 770-776): Հուդաիզմը անձնավորում է չարը երեք ձևերով,

1. Սատանա կամ *Sammael*
2. չար մտադրություն (*yetzer hara*) մարդկության մեջ
3. Մահվան հրեշտակը

Էդերշեյմ/Edersheim բնութագրում է դրանք որպես (1) Մեղադրող, (2) Փորձիչ և (3) Պատժող (հատոր 2, էջ 756): Կա մի նշանավորված աստվածաբանական տարբերություն հետ-ելիցի հուդայականության և չարի Նոր Կտակարանյան ներկայացման և բացատրության միջև:

Ե. Նոր Կտակարանը, հատկապես Ավետարանները, պնդում են չար հոգևոր էակների գոյությունը և ընդդիմությունը մարդկության և ՅԱՀՎԵԻ դեմ (հուդայականության մեջ սատանան մարդու թշնամին էր, բայց ոչ Աստծո): Նրանք հակառակ են Աստծո կամքին, կանոնին և թագավորությանը:

Հիսուսը հանդիմանեց և արտաքսեց այդ դիվային էակներին, նաև կոչելով (1) անմաքուր հոգիներ (տես Ղուկ. 4:36; 6:18) կամ (2) չար հոգիներ (տես Ղուկ. 7:21; 8: 2) մարդ արարածներից: Հիսուսը հստակ տարբերակեց հիվանդության (ֆիզիկական և մտավոր) և դիվականի միջև: Նա ցույց տվեց Իր ուժը և հոգևոր խորաթափանցությունը՝ ճանաչելով և քչելով այդ չար հոգիներին: Նրանք հաճախ ճանաչում էին Նրան և փորձում էին դիմել Նրան, բայց Հիսուսը մերժեց իրենց վկայությունը, պահանջելով նրանցից լռել և վռնդում էր նրանց: Պիղծ հոգիներին սանձելը նշան է սատանայի արքայության պարտությանը:

Չարմանալիորեն տեղեկատվության պակաս կա Նոր Կտակարանի Առաքյալների նամակներում այս թեմայի մասին: Դներ հանելը երբեք չի նշվում որպես հոգևոր պարզև, ոչ էլ մեթոդաբանություն կամ ընթացակարգը է տված ապագա ծառայող կամ հավատացյալ սերունդների համար:

- Ձ. Չարը իրական է. չարը անձնական է; չարը ներկա է: Ոչ նրա ծագումը և ոչ էլ նրա նպատակը չի բացահայտվել: Աստվածաշունչը պնդում է նրա իրականությունը և ազդեցիվորեն հակառակվում է նրա ազդեցությանը: Իրականում չկա ոչ մի վերջնական դուալիզմ: Աստված է գերագույն հսկողություն իրականացնողը; չարը պարտված է և դատապարտված; և հեռացվելու է արարչագործությունից:
- Է. Աստուծո ժողովուրդը պետք է դիմադրի չարին (տես Հակ. 4:7): Նրանք չեն կարող կառավարվել դրանով (տես 1 Հովհ. 5:18), բայց նրանք կարող են գայթակղվել և նրանց վկայությունն ու ազդեցություն կարող է վնասվել (տես Եփ. 6: 10-18): Չարը քրիստոնյայի աշխարհընկալման բացահայտված մասն է: Ժամանակակից քրիստոնյաները իրավունք չունեն վերանայել չարը (Rudolf Baltmann ապ-առասպելագույնը) ապ-անձնավորել չարը (սոցիալական կառույցները Paul Tillich), ոչ էլ փորձել բացատրել այն ամբողջությամբ հոգեբանական առումով (Sigmund Freud): Նրա ազդեցությունը համատարած է, բայց պարտված: Հավատացյալները պետք է քայլել Քրիստոսի հաղթանակով:

▪ **«դեներին մասնակից լինեք»** Հետևեք Պողոսի նմանությանը: Քրիստոնյաները մեկ են Քրիստոսի մարմնում (այսինքն՝ եկեղեցին), քանի որ նրանք մեկ են Իր գոհաբերությամբ (այսինքն, Նրա մարմինը, Գողգոթայի վրա խաչված), քանի որ նրանք կիսում են Տիրոջ Ընթրիքի հացը, որը խորհրդանշում էր Նրա կոտրված մարմինը: Հետևաբար, հեթանոսները ովքեր մասնակցում են գոյություն չունեցող կուռքին գոհաբերված միս ուտելուն, մասնակցում են աշխարհի կրոնների ետևում գտնվող դեներին վերաբերող հոգևոր կռապաշտությանը: Ինչպես հավատացյալներն են մասնակցում Հիսուսի կյանքի պատմական իրադարձություններին ծեսի միջոցով (այսինքն, Հռ. 6), այնպես էլ անհավատները մասնակցում են դիվայինին:

10:21 Այս արտահայտությունը վերաբերում է Կորնթոսի հեթանոսական տաճարներում հեթանոսների գոհաբերություններին ու ծեսերին: Հավատացյալը չի կարող հաստատել քրիստոնեության բացառիկությունը (այսինքն, մեկ և միայն մեկ ճշմարիտ Աստված և Հիսուսը Իր Մեսիան) և դեռ հոգևորապես մասնակցում է հեթանոսական պաշտամունքին: Եթե նրանք անում են, ապա դա հոգևոր կռապաշտություն է:

10:22 «Տիրոջը նախանձի գրգռե՛նք» Սա կարծես թե ակնարկ է 2 Օր. 4:25; 32:16,21; Սաղ. 78:58; կամ Ես. 65:3: Տեր տերմինը 1 Կոր. 10:21 ակնհայտորեն վերաբերում է Հիսուսին, բայց 1 Կոր. 10:22-ում՝ ՅԱՀՎԵԻՆ: Սա տեսակի փոխանցման ձևերից մեկն է, որ Նոր Կտակարանի հեղինակները հաստատում են Հիսուս Նազովրեցու աստվածությունը:

«Նախանձ» տերմինը հզոր սիրո խոսք է: Միայն նախանձում են նրանց, ում սիրում են: ՅԱՀՎԵՆ զգացմունքայնորեն ներգրավված է Իր ժողովրդի մեջ, ովքեր արտացոլում են Իր բնավորությունը և Իր անունը տանում աշխարհին: Կռապաշտությունն ոչնչացնում է այս հաղորդակցությունը և ավետարանչական նպատակները:

▪ **«մի՞ թե նորանից աւելի գորաւոր ենք»** Քերականությունը ակնկալում է «ոչ» պատասխան: Այս տերմինաբանությունը վերաբերում է երկու տարբեր քրիստոնյա խմբերին՝ 1 Կոր. 10:14-21 տկար եղբորը և 1 Կոր. 10:23-33 ուժեղ եղբորը: 22-րդ համարը ցույց է տալիս հավատացյալների այս երկու խմբերի մտածելակերպի հետ կապված դժվարությունները (տես Հռ. 14:1-15:13 համարները): Պողոսը

փորձում է քայլել աստվածաբանական խճճված երկու քրիստոնեական փիլիսոփայությունների / աշխարհայացքների միջև (այսինքն՝ ազատություն և անցյալի փորձառություն):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 10:23-30

²³ Ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ամեն բան օգուտ չէ. ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ամեն բան շինութիւն չէ տալիս: ²⁴ Ոչ ով միայն իր անձի օգուտը չ'որոնէ, այլ ամեն մէկն ընկերինն էլ: ²⁵ Ամեն ինչ որ սպանդանոցումը ծախվում է, կերէք առանց մի բան քննելու խղճտանքի պատճառով: ²⁶ Որովհետեւ Տիրոջն է երկիրը եւ նորա բոլոր լիութիւնը: ²⁷ Եթէ անհաւատներից մէկը կանչէ ձեզ, եւ դուք կամենաք գնալ, ամեն բան որ ձեր առաջին դրուի, կերէք, առանց մի բան քննելու խղճտանքի պատճառով: ²⁸ Բայց եթէ մէկն ասէ ձեզ, թէ Դա կուտքի գոհուած բան է, մի ուտէք՝ նորա պատճառով որ իմացրեց, եւ խղճտանքի պատճառովը. Որովհետեւ Տիրոջն է երկիրը եւ նորա բոլոր լիութիւնը: ²⁹ Բայց խղճտանք եմ ասում՝ ոչ թէ ձերը, այլ ընկերինը. որովհետեւ ի նչու իմ ազատութիւնը պիտի դատուի ուրիշի խղճտանքից: ³⁰ Թէ որ ես շնորհակալութիւնով վայելում եմ, ի նչու հայեցումիմ այն բանի համար՝ որի համար ես գոհանում եմ:

10:23 Սա վերադարձ է 6:12-ում սկսված թեմային, թե ինչպես պետք է պահպանել քրիստոնեական ազատությունը և պատասխանատվությունը (տես Հռ. 14:19): 23-33-րդ համարները դիմում են ուժեղ եղբորը:

▪ «**ամեն բան օրինաւոր է**» Այս արտահայտությունը կրկնվում է 2 անգամ: Որոշ թարգմանություններ այս արտահայտությունն օգտագործում են մեջբերումներում (տես NRSV, TEV, NJB), քանի որ նրանք մտածում են, որ դա Կորնթոսի երկպառակություններից մեկի կարգախոսն է կամ մշակութային առակը: Սա «ուժեղ» քրիստոնյաների ազատագրված աշխարհայացքն է (1 Կոր. 6:12; 10:26, Հռ. 14:14,20):

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: CHRISTIAN FREEDOM VS. CHRISTIAN RESPONSIBILITY (from Rom. 14:1-15:13)

Ա. Հռոմեացիս 14:1-15:13 փորձում է բալանսի բերել քրիստոնեական ազատության և պատասխանատվության պարադոքսը: Գրական բաժինը սկսվում է Հռ. 14:1- 15:13-ը:

Բ. Այս գլուխը ընդգրկող խնդիրը հավանաբար Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև եղած լարվածությունն էր: Դարձի գալուց առաջ հրեաները հակված էին լինել օրինապահ, իսկ հեթանոսները՝ անբարո: Հիշեք, որ այս գլուխը ուղղված է Հիսուսի անկեղծ հետևորդներին: Այս գլուխը ուղղված չէ մարմնավոր աշխարհիկ հավատացյալներին (տես 1 Կոր.3:1): Երկու խմբերին էլ վերագրված է ամենաբարձր շարժառիթը՝ դրդապատճառը: Երկու կողմերում էլ ծայրահեղությունների դեպքում վտանգն առկա է: Այս քննարկումը արտոնություն չէր տալիս պերճախոս օրինապահությանը կամ ցուցամոլ ազատականությանը:

Գ. Հավատացյալները պետք է զգույշ լինեն, որպեսզի իրենց աստվածաբանությունը կամ էթիկան՝ բարոյագիտությունը, չդարձնեն չափանիշ բոլոր մյուս հավատացյալների համար (տես 2 Կոր.10:12): Հավատացյալները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, սակայն հասկանան, որ իրենց աստվածաբանությունը ինքնաբերաբար չի դառնում Աստծունը: Հավատացյալները դեռևս մեղքի ներգործության տակ են ընկնում: Մենք պետք է իրար քաջալերենք, հորդորենք և Սուրբ Գրքից իրար սովորեցնենք, խորհրդածենք և ապրենք

դրանք, սակայն միշտ սիրով: Որքան շատ ենք իմանում, այնքան հասկանում ենք, որ ոչինչ էլ չգիտենք (տես 1 Կոր. 13:12):

Դ. Մարդու գործողությունները գնահատելու իրական միջոցները Աստծո առջև նրա վերաբերմունքն ու շարժառիթներն են: Քրիստոնյաները կանգնելու են Քրիստոսի առջև դատվելու, թե ինչպես են միմյանց վերաբերվել (տես Գործք 15: 10, 12 և 2 Կոր. 5:10):

Ե. Մարթին Լյութերն ասել է «Քրիստոնյան բոլորից ամենաազատ տերն է, որ չի ենթարկվում ոչ ոքի. Քրիստոնյան բոլորից ամենապատասխանատու ծառան է՝ ենթակա բոլորին»: Աստվածաշնչյան ճշմարտությունը հաճախ ներկայացվում է ծայրաստիճան պարադոքսալ վիճակում (տես Հատուկ Թեմա: Պարադոքսը Սուրբ Գրքում):

Զ. Այս դժվար, սակայն շատ կարևոր նյութը արծարծվում է մի ամբողջ Հո. 14:1-15:13 գրական բաժնում, ինչպես նաև 1 Կոր. 8-10 և Կող. 2:8-23-ում:

Է. Այնուամենայնիվ պետք է ասել, որ անկեղծ նվիրումով հավատացյալների մեջ բազմազանությունը վատ բան չէ: Յուրաքանչյուր հավատացյալ ունի թե՛ առավելություններ և թե՛ տկարություններ: Յուրաքանչյուրս պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինելով Հոգու և Աստծո Խոսքի ավելի շատ լույսի համար: Կյանքի դժվարին կացությունների ընթացքում էլ (1 Կոր. 13:8-13) մարդը պետք է քայլի սիրո (հ. 15) և խաղաղության մեջ (հհ. 17, 19) փոխադարձ շինության համար:

Մեր տարբերությունները որպես հավատացյալ Աստծո բաց դռները են տարբեր անհավատների համար, գտնելու Քրիստոսով ներում և վերականգնում: Քրիստոնեական բազմակարծությունը, աստվածաշնչյան սահմաններում, լավ բան է ավետարանչության համար:

Ը. «Ավելի ուժեղ» և «ավելի թույլ» անվանումները, որ Պողոսը տալիս է այս խմբերին, նախապես տրամադրում է նրանց մեր հանդեպ: Անշուշտ սա Պողոսի մտադրությունը չէր: Երկու խմբերն էլ անկեղծ հավատացյալներ էին: Մենք չպետք է փորձենք ուրիշ քրիստոնյաների ձուլենք մեր հետ: Մենք միմյանց ընդունում ենք Քրիստոսով:

Թ. Ամբողջ բանավեճը կարել է ուրվագծել այսպես

1. իրար ընդունեք, քանի որ Աստված էլ մեզ է ընդունում Քրիստոսով (տես Հո. 14:1,3; 15:7)
2. իրար մի՛ դատեք, քանի որ Քրիստոսն է մեր միակ Տերն ու Դատավորը (տես Հո. 14:3-12)
3. սերն ավելի կարևոր է, քան անձնական ազատությունը (տես Հո. 14:13-23)
4. հետևեք Քրիստոսի օրինակին և վայր դրեք ձեր իրավունքները հանուն ուրիշների շինության և բարօրության (տես Հո. 15:1-13):

▪ **«բայց ամեն բան շինութիւն չէ տալիս»** Գործնական, հոգևոր փորձարկումն է, «Արդյո՞ք այն շինում է մարմինը (այսինքն, հավատացող համայնք)» (տես 1 Կոր. 6:12; 14:3-4,26; 2 Կոր. 12:19; Հո. 14:19; 15:2): Սա պետք է ստուգարք լինի բոլոր հավատացյալների ասածի և արածի մեջ: Մեկի ազատությունը Քրիստոսով չպետք է ցավեցնի մեկ ուրիշին, ում համար Քրիստոսը մահացավ (տես Հո. 14:15):

Պարզապես անձնական խոսքը, չի նշանակում, որ հոգևորությունը պետք է բախվի ամենաաղքատ հավատացյալի ամենացածր մակարդակին, բայց հասուն հավատացյալները չպետք է իրենց ազատությունը դրսևորեն հավատակից ընկերների հաշվին: Որոշ հավատացյալներ

դոգմատիկ են՝ փարիսեցի օրինապաշտներ: Ես ստիպված չեմ ենթարկվել նրանց կանոններին, բայց ես պետք է սիրեմ նրանց, աղոթեմ նրանց համար, լիովին ընդունեմ նրանց և ոչ թե հրապարակայնորեն ամաչեցնեմ կամ խեղաթյուրեմ իմ ազատությունը: Ես հոգևորապես պատասխանատու եմ իմ հավատակիցների համար: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇԻՆՈՒԹՅՈՒՆ 1 Կոր. 8:1:

10:24 «Ոչ ով միայն իր անձի օգուտը չ'որոնե, այլ ամեն մեկն ընկերինն էլ»: Սա ներկա ներգործական հրամայական է: Հասուն քրիստոնյան ուրիշի բարեկեցությունն է դնում առաջնային (տես 1 Կոր. 10:33; 12:7; 13:5; Հռ. 14:7; 15:2; Փիլ. 2:1-5,21):

10:25,27 Սա ազատագրված հավատքի ձայնն է: Սակայն «ուժեղ» հավատքը հրապարակայնորեն զիջում է «տկար» հավատքին (տես 1 Կոր. 10:28-29):

10:25 «խղճմտանք» Հին Կտակարանում հունարեն «խիղճ» տերմինի նմանակը չկա, բայց եբրայերեն «կուրծք» տերմինը ենթադրում է ինքնագիտակցություն և դրա դրդապատճառները: Սկզբում խղճին առնչվող հունարեն տերմինը վերաբերում էր հինգ զգայարաններին: Այն օգտագործվել է ներքին զգայարանների համար (տես Հռ. 2: 15): Պողոսը Գործքում երկու անգամ օգտագործում է այս տերմինը իր դատավարությունների ժամանակ (այսինքն, 23: 1 և 24:16): Այն վերաբերում է իր զգացումին, որ ինքը չգիտակցելով է խախտել որևէ կրոնական պարտականություններ Աստծո առաջ (տես 1 Կոր. 4: 4):

Խղճմտանքը հավատացյալների դրդապատճառների և գործողությունների հասկացողությունն է՝ հիմնված (1) աստվածաշնչյան աշխարհայացքի; 2) բնակվող Հոգու; 3) ապրելաճի գիտելիքների և Աստծո խոսքի վրա: Քրիստոնեական խղճմտանքը կարելի է հնարավոր դարձնել ավետարանի անձնական ընդունելության միջոցով: Տես ամբողջական գրառումը 1 Կոր. 8:7:

10:26 «Որովհետև Տիրոջն է երկիրը եւ նորա բոլոր լիութիւնը» Սա բոլորը ստեղծված բաների բարության հաստատումն է (տես 1 Կոր. 6:12; 10:26; Հռ. 14:14,20), վերցված՝ Սաղ. 24:1 և 50:12 համակցության մեջ, որն օգտագործվում էր Հին Կտակարանի հրեաների կողմից որպես օրհնություն կերակուրներով:

Textus Receptus-ը կրկնում է 1 Կոր. 10:26-ը 1 Կոր. 10:28 վերջում: Սա բնօրինակը չէ: Այն բացակայում է հունարեն ձեռագրերում, H ,G ,F ,D ,C ,B ,A և P, ինչպես նաև այն ընդգրկված չէ Վուլգատ, Սիրիական կամ Ղպտի թարգմանություններում:

10:27 Այս համարը խիստ կարևոր է հանրային կռապաշտական տոներին մասնակցության և անհավատների հետ միասին ամենօրյա շփման միջև տարբերությունը ցույց տալու համար: Պողոսը չունի դժվար և արագ կանոններ: Նա գերադասում է անձնական հարաբերությունները (այսինքն, ավետարանչություն և աշակերտություն): Մարդիկ առաջնային են: Մարդիկ հավիտենական են: Մարդիկ Քրիստոսի մահվան նպատակը չեն, ոչ էլ կերակուրը: 29-33 համարները ցույց են տալիս մեզ Պողոսի ամփոփումը այս հարցում:

10:27,30 «Եթե» Սրանք երկուսն էլ առաջին կարգի պայմանական նախադասություններ են, որոնք ենթադրվում են հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար:

10:28 «Եթե» Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, ինչը նշանակում է հնարավոր գործողություն:

▪ **«մի ուտեք»** Սա ներկա ներգործական հրամայական է՝ ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել ուտելը: Եթե քրիստոնյան տեղեկացված է, նա չպետք է ուտի,

քանի որ հենց այդ փաստը ցույց է տալիս տկար հավատքի կամ փնտրող հավատքի առկայությունը (տես 1 Կոր. 10:29):

10:29

Արևելահայերեն «ի՛նչու իմ ազատությունը պիտի դատուի ուրիշի խղճմտանքից»

Արևմտահայերեն «Բայց ինչո՞ւ իմ ազատությունսպիտի կաշկանդուի ուրիշին խղճմտանքի համար»

NASB «ինչո՞ւ է իմ ազատությունը դատվում ուրիշի խղճով»

NKJV «ինչո՞ւ է իմ ազատությունը դատվում ուրիշի խղճով»

NRSV «ինչո՞ւ պետք է իմ ազատությունը ենթարկվի մեկ ուրիշի խղճի դատաստանին»

TEV «ինչո՞ւ պետք է իմ ազատությունը սահմանափակված գործի մեկ այլ մարդու խղճով»

NJB «ինչո՞ւ պետք է իմ ազատությունը կառավարվի մեկ ուրիշի խղճով»

NRSV-ն կետադրում է սա այնպես, կարծես դրանք Պողոսի խոսքերն էին: TEV-ը թարգմանում է այն, կարծես այնտեղ ևս մեկ հարց է եղել, որը հարցվել է ենթադրյալ անձի կողմից: Սա գրական տեխնիկա է, որը կոչվում է սուր քննադատություն (տես 1 Կոր. 6:12,13):

Սա կարևոր հարց է, որը պետք է պատասխանեք ձեզ համար: Յուրաքանչյուրս, Սուրբ Հոգու առաջնորդությամբ, պետք է ինքնասահմանափակենք մեզ ուրիշների համար, սիրով և ի հարգանս Քրիստոսի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴՅՈ՞Ք ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԴԱՏԵՆ ՄԻՄՅԱՆՑ

SPECIAL TOPIC: SHOULD CHRISTIANS JUDGE ONE ANOTHER?

Ա. 1 Կորնթացիս 5: 12-ում Պողոսն ու եկեղեցին պետք է զբաղվեն անդամների հետ (համար 12-ը ակնկալում է «այո» պատասխան), բայց հավատացյալները պետք է թույլ տան, որ Աստված զբաղվի ոչ անդամների հետ: Հավատացյալները չպետք է դատեն միմյանց (տես Մատթ. 7: 1-5,15-20; Հռ.14:1-15:13), բայց

1. Մենք պետք է ուսումնասիրենք միմյանց պտուղները առաջնորդության պաշտոնների համար (տես 1 Կոր. 6: 1-3; Մատթ. 7)
2. Մենք պետք է գործածենք եկեղեցական կարգապահության, երբ եկեղեցու հեղինակությունը վտանգի տակ է

Սա հաճախ լավ գիծ է: Ըստ այդմ Պողոսը պնդում է, որ 1 Կոր. 5-ի մեղավոր մարդը պետք է դրվի Աստծո դատաստանի տիրույթում (այսինքն՝ եկեղեցուց դուրս):

Զարմանալի է, թե ինչպես է այս կոնտեքստը վերաբերում ժամանակակից հասարակություններին, որտեղ հավատացյալներն ու անհավատները հնարավորություն ունեն քվեարկությամբ կարգավորել սոցիալական նորմերը: Արդյո՞ք հավատացյալները պետք է ակտիվորեն մասնակցեն քաղաքական գործընթացին: Այս կոնտեքստը սահմանափակվում է եկեղեցու կարգապահության վերաբերյալ դատավճիռով, այլ ոչ թե արևմտյան, ժամանակակից ժողովրդավարությամբ: Հավատացյալները երկու ոլորտի քաղաքացիներ են, երկուսի պարտավորություններով ու արտոնություններով: Աստծո Հոգին, Աստծո կամքը և Աստծո Գիրքը օգնում են մեզ, որպես հավատացյալներ, գտնել մեր ճանապարհը այս ընկած, մեղավոր աշխարհում, բայց անհավատները շահագործվում և մանիպուլյացիայի են ենթարկվում մեղքի, ես-ի և սատանայի կողմից: Նրանք մեր վկայության և կարեկցանքի կարիքն ունեն, ոչ թե մեր դատապարտող ինքնաարդարացման: Նրանք չեն կարողանում հասկանալ մեր շարժառիթները, նպատակները և գործողությունները:

Երբ և ինչպես են քրիստոնյաները «դատելու» միմյանց խնդիրը մի քանի հունարեն ձեռագրերը պատճառ դարձան փոխելու այս տեքստը:

1. Շատ վաղ պապիրուսե ձեռագիր P⁴⁶ (մոտ 200թ.), ինչպես նաև Բահիրյան Ղպտի

թարգմանությունը (3-րդ դար) և Peshitta սիրիական թարգմանությունը (5-րդ դար) պարզապես անտեսել են բացասականը և նախադասությունը թարգմանել որպես ՀՐԱՄՍՅԱԿԱՆ, «Դատեք նրանց, ովքեր ներսում են [եկեղեցի]» (տես Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*, էջ 551):

2. Սահիդական Ղպտի թարգմանությունը (3-րդ դար) բացասական է դնում նախորդ նախադասության հետ, «Ինչի՞ համար ես դատեմ այն մարդկանց, ովքեր գտնվում են դրսում, և ոչ թե ներսում: Դատեք նրանց, ովքեր ներսում են» (Metzger, էջ 51):
3. UBS⁴ տեքստը չի էլ ճանաչում այդ տարբերակների հնարավորությունը որպես բնօրինակ:

Բ. Այս հարցը պետք է լուծվի երկու ձևով:

1. հորդորել հավատացյալներին չդատել միմյանց (տես Մատթ. 7: 1-5; Ղուկ. 6: 37,42; Հռ. 2: 1-11; Հակ. 4:11-12)
2. հորդորել հավատացյալներին արժեվորել առաջնորդներին (տես Մատթ. 7: 6, 15-16; 1 Կոր. 14:29; 1 Թեա. 5:21; 1 Տիմ. 3: 1-13; և 1 Հովհ. 4: 1 -6)

Ճիշտ գնահատման համար որոշ չափանիշներ կարող են օգտակար լինել:

1. Գնահատելու նպատակը պետք է լինի հաստատելը (տես 1 Հովհ. 4: 1 - «փորձել» համոզվելու համար)
2. Գնահատել պետք է խոնարհությամբ և հեզությամբ (տես Գաղ. 6: 1)
3. Գնահատումը չպետք է կենտրոնանա անձնական նախասիրության հարցերի վրա (տես Հռ. 14: 1-23; 1 Կոր. 8: 1-13; 10: 23-33)
4. Գնահատումը պետք է բացահայտի այն առաջնորդներին, ովքեր «քննադատելու առիթ չեն տալիս» եկեղեցու կամ համայնքի ներսում (տես 1 Տիմ. 3):

10:30 Սա վերաբերում է այն կերակուրին, որի համար հավատացյալը շնորհակալություն է հայտնել և կերել: Հարցը սահմանում է համընդհանուր սկզբունքի փուլը, թե ինչպես պետք է կիրառենք մեր քրիստոնեական իրավունքները, որը հետևում է 1 Կոր. 10:31-ին:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 10:31-11:1

³¹Ուրեմն՝ թե ուտեք թե խմեք, թե ինչ գործ էլ որ անեք, ամեն բան Աստուծոյ փառքի համար արեք: ³²Առանց գայթակղութիւն տալու եղէք Հրեաներին եւ Յոյներին եւ Աստուծոյ եկեղեցուն: ³³Ինչպէս ես էլ ամեն բանով ամենին հաճոյ եմ լինում. իմ անձի *օգուտը* չ'որոնելով, բայց շատերին որ փրկուին: ^{11:1} Ինձ նմանող եղէք, ինչպէս ես էլ Քրիստոսի:

10:31 «ամեն բան Աստուծոյ փառքի համար արեք» Սա համընդհանուր սկզբունքն է՝ հավատացյալի կյանքի բոլոր բնագավառներում (տես Եփ. 6:7; Կոր. 3:17,23; 1 Պետ. 4:11): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (DOXA) 1 Կոր. 2:7:

10:32 «Առանց գայթակղութիւն տալու եղէք Հրեաներին եւ Յոյներին եւ Աստուծոյ եկեղեցուն» Սա կարծես վերաբերում է երեք խմբերի: Առաջին երկուսը վերաբերում են ավետարանելուն; վերջին խումբը՝ հաղորդակցությունը եկեղեցում:

«Եկեղեցի» տերմինը ակնհայտորեն օգտագործվել է համընդհանուր իմաստով, ինչպես Մաթ.

16:18: Տերմինը օգտագործվում է Նոր Կտակարանում

1. տեղական իմաստ (ամենատարածված դեպքերը)
2. տարածաշրջանային իմաստ (տես Գործք 9:31; Գաղ. 1:2)
3. համընդհանուր իմաստ (տես Փիլ. 3:6; Եբ. 12:23)
4. բոլոր դարերի ողջ և մեռած սրբերի տիեզերական իմաստը (տես Եփ. 1:22; 5:23,24,25,27,29,32; Կոր. 1:18,24)

- **«Եկեղեցուն»** Տես Հատուկ Թեմա: Եկեղեցի 1 Կոր. 1:2

10:33 «Ինչպես ես էլ ամեն բանով ամենին հաճոյ եմ լինում...բայց շատերինը որ փրկուին»
 «Ավետարանչությունն է, և ոչ թե սեփական իրավունքները, հասուն հավատացյալների առաջնահերթությունը (տես 1 Կոր. 9:19-22):

- **«Չատերինը»** Անգլերենով կարելի է հասկանալ որպես ամբողջ խմբի մեծ մասը: Այնուամենայնիվ, երբայերեն մտածելակերպում այն պարզապես «բոլոր»-ի գրական տարբերակն է: Այս գուգահեռությունը կարելի է տեսնել

1. Ես. 53:11, «Չատերին»,
 Ես. 53:12, «Չատերի»
 Ես. 53:6, «ամենքս»
2. Հո. 5:18, « ամեն մարդկանց վրա.... ամեն մարդկանց վրա»
 Հո. 5:19, «Չատերը ... Չատերը»
3. Կոր. 10:17-ում «մենք Չատերս» (այստեղ Պողոսը օգտագործում է «Չատեր» տերմինը բոլոր հավատացյալների համար)

- **«բայց շատերինը որ փրկուին»** Սա ավետարանի քարոզչության և քրիստոնեական կյանքի նպատակն է (տես 1 Կոր. 9:19-22): Աստծո խոստումը Ծննդ. 3:15; 12:3 արդեն կատարվել է: Փշրված հարաբերությունը (այսինքն, Աստծո պատկերը մարդկության մեջ) վերականգնվել է Քրիստոսի միջոցով: «Ով որ կամենա», կարող է գալ (տես Եզ. 18:23,32; Հովհ. 1:12, 3:16; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9):

11:1 Այս համարը, կարծես, կապված է 10-րդ գլխի հետ, ոչ թե 11-ի: Պողոսի ավետարանչական շարժառիթներն ու գործողությունները գուգահեռներ են անցկացնում Հիսուսի կյանքի ու ուսմունքների միջև: Ինչպես Պողոսը նմանվեց Նրան, այնպես էլ Կորնթոսի հավատացյալները պետք է կենտրոնանային (1) մարմնի բարօրության (եկեղեցու) և (2) անհավատ աշխարհի փրկության վրա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Արդյո՞ք անապատում մահացած իսրայելացիները հոգևորապես կորած էին:
2. Ո՞րն է Տիրոջ Ընթրիքի հիմնական նպատակը:
3. Ինչպե՞ս է մարդը հավասարակշռում քրիստոնեական ազատությունը և քրիստոնեական պատասխանատվությունը:
4. Ո՞րը պետք է լինի մեր ազատության հիմնական նպատակը:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 11

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
		Համայնքի կյանքի խնդիրները (11:2-14:40)		Վարվելակարգ հանրային երկրպագության մեջ (11:2-14:40)
Ծածկել գլուխը երկրպագության ժամանակ	Գլխի ծածկոց	Վայելուչ հագուստը հանրային երկրպագության մեջ	Ծածկել գլուխը երկրպագության ժամանակ	Կանանց վարքագիծը ծառայություններում
11:2-16	11:2-16	11:2-16	11:2-12 11:13-16	11:2-6 11:7-12 11:13-15 11:16
Չարաշահումներ Տիրոջ ընթրիքի ժամանակ	Վարմունքը Տիրոջ ընթրիքի ժամանակ	Ուղղումներ Տիրոջ ընթրիքի աղավաղումների դեմ	Տիրոջ ընթրիքը	Տիրոջ ընթրիքը
11:17-22	11:17-22	11:17-22	11:17-22	11:17-22
Տիրոջ ընթրիքի համակարգը	Տիրոջ ընթրիքի համակարգը			
11:23-26	11:23-26	11:23-26	11:23-26	11:23-27
Անարժանաբար մոտենալ Ընթրիքին	Քննեք ինքներդ ձեզ			
11:27-34	11:27-34	11:27-34	11:27-32 11:33-34	11:28-32 11:33-34

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան [ընթերցանության լավ ուղեցույց](#)»)
Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության [ուղեցույց](#) է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս

պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ 11:2-34

- Ա. 11-ից 14-րդ գլուխները վերաբերում են պաշտամունքին մասնակցելու հարցերին: Նրանք կազմում են միասնական գրական բաժին:
1. տղամարդկանց և կանանց հագուստը և գործողությունները (1 Կոր. 11:2-16)
 2. Տիրոջ ընթրիքի պահպանումը (1 Կոր. 11: 17-34)
 3. հոգևոր պարզանքների գործածումը (1 Կոր. 12-14)
- Բ. «Հավաքված երկրպագություն» ասելով, կա երկու հնարավոր իրավիճակներ:
1. փոքր խմբեր, որոնք պարբերաբար հանդիպում են տներում, որոշ հարուստ թաղամասերում, ոմանք, էթնիկ շրջաններում, ոմանք՝ ստրկական թաղամասերում
 2. պարբերաբար (ճշգրիտ ժամանակը անորոշ է) այս փոքրիկ տնային եկեղեցիները միասին հավաքվում էին քաղաքային լայնածավալ երկրպագության համար (այսինքն, *agapē* ճաշկերույթ *Eucharist*- ի տոնակատարությամբ)
 3. արդյոք գոյություն ունի տնային եկեղեցիների մասին արձանագրությունների այլ շարք, ընդդեմ խոշոր հավաքված իրադարձության, անորոշ է:
- Գ. 1 Կոր. 11: 2-16- ը հասկանալու մի քանի եղանակներ կան:
1. Այս կոնտեքստը, առաջին հերթին, վերաբերում է պատշաճ վարվելակերպին (տես 1 Կոր. 11:13) հավաքական երկրպագության մեջ, ոչ թե տղամարդկանց և կանանց միջև հարաբերություններում (տես 1 Կոր. 11:11-12):
 2. Այս կոնտեքստը վերաբերում է Քրիստոսում ունեցած նոր ազատությանը, որը Կորնթոսի եկեղեցու հռոմեացի տղամարդիկ և կանայք օգտագործում էին իրենց սոցիալական կարգավիճակը (տղամարդիկ) և ավանդույթի և մշակույթի (կանայք) անկախությունը՝ հպարտանալու համար:
 3. Այս կոնտեքստը վերաբերում է ամուսինների և կանանց միջև ստեղծագործության հարաբերություններին (տես Եփ. 5: 22-31; 1 Տիմ. 2:9-15): Համապատասխան հարաբերությունները հիմնված են Օսնորոց 2-3-ում, որը ցույց է տալիս տղամարդկանց գերակայությունը նախ Ադամը ստեղծվելու և նախ Եվայի ապստամբության պատճառով:
 4. Պողոսի քննարկումները գլխաշոր կրելու մասին չի սահմանափակվում կանանցով, այլև ուղղված են նաև տղամարդկանց: Ինչպես սովորաբար Կորնթոսում, խնդիրը երկու ուղղություններից է: Որպես իրենց էլիտար սոցիալական կարգավիճակի նշան, որոշ տղամարդիկ ծածկում էին իրենց գլուխները, երբ առաջնորդում էին հավաքված

երկրագութեան մեջ, ինչպէս որ արել էին հեթանոսութեան մեջ: Որպէս սոցիալական ազատութեան նշան, կանայք վերացնում էին իրենց ամուսնական ծածկոցները, երբ նրանք հավաքվում էին երկրագութեան համար (տես Bruce W. Winter, *Paul After Left Corinth*, էջ 121-141): Այս տեքստը բացատրապէս համապատասխանում է հռոմեական Կորնթոսիին: Հրեական կյանքում և հունական կյանքում կանայք սովորաբար չէին կրում գլխաշոր:

Թվում է, թէ այս երկիմաստ կոնտէքստը բաց է բազմաթիվ մեկնաբանությունների համար: Այս մեկնաբանությունները ավելի շատ են խոսում թարգմանչի կողմնակալութեան մասին, քան Պողոսի մտադրությունը: Տեքստը, որը շատ ձևերով հասկացվել և կարող է ընդունվել անկեղծ հավատացյալների կողմից, անշուշտ չպետք է օգտագործվի վերջնական, դոգմատիկ ձևով, եկեղեցում կանանց տեղը և գործառույթը սահմանափակելու կամ պաշտպանելու համար, կամ բոլոր տարիքի տղամարդկանց և կանանց միջև հարաբերությունները և մշակույթները: Չարմացնում է ինձ, որ որոշ հավատացյալներ գլխի 11-ի տղամարդկանց և կանանց համար գլխաշորերի քննարկումը դարձնում են մշակութային հարց (չնայած որ Պողոսը դիմում է Ծննդոց 1-3), միևնույն ժամանակ պահանջելով Պողոսի սահմանափակումները եկեղեցում որպէս սկզբունք բոլոր տարիքի կանանց համար: Դա հետևողականութեան պակասն է, որը շատ դժվարություններ է առաջացնում մեկնաբանութեան մեջ: Այս բարդ և հուզական հարցի լավագույն կարճ քննարկումը կարելի է գտնել *How to Read the Bible for All Its Worth* by Fee and Stuart, էջ 61-77 կամ *Gospel and Spirit*, by Gordon Fee:

Դ. Այս գլուխը օգնում է մեզ տեսնել, որ որոշ աստվածաբանական խորհրդանշաններ և արտոնություններ պետք է սահմանափակվեն կամ ընդլայնվեն մշակութային հարաբերություններում, որտեղ որ հասուն քրիստոնյան գտնվում է: Գիրք, որը ինձ օգնեց այս ոլորտում՝ Gordon Fee and Douglas Stuart, *How To Read the Bible For All Its Worth*, էջ 71-89:

Ե. Սա Տիրոջ Ընթրիքի / Eucharist / Հաղորդութեան ամենավաղ գրավոր պատմությունն է:

Զ. Տիրոջ ընթրիքի նպատակները

1. եկեղեցու միաբանությունը և հաղորդակցությունը
2. Հիսուսի ներկայութեան արտահայտումը
3. Հիսուսի պատմական զոհաբերութեան արտահայտումը
4. Քրիստոսի միջոցով Աստծո հետ ունեցած մեր նոր փոխհարաբերությունների արտահայտումը
5. անցյալի իրադարձութեան և Քրիստոսի երկրորդ գալստյան հռչակումը
6. երկրագութեան լուրջ գործողությունը

1 Կոր. 10: 16-17-ից պարզ է, որ Պողոսը այս փորձառությունը համարում է ավելին քան խորհրդանիշ կամ հուշագրություն (տես 1 Կոր. 11:24-25): Այնուամենայնիվ, այս գաղափարը չի զարգացվել: Հնարավոր է, Հովհ. 6: 41-71 (չնայած անմիջական կոնտէքստում ոչինչ չի վերաբերում Տիրոջ Ընթրիքին) սա հոգևոր միաբանութեան մի ասպեկտն է: Քրիստոնէությունը հիմնականում անձնական հավատքի հարաբերությունն է Սուրբ Երրորդութեան հետ:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 11:2-16

²Արդ գովում եմ ձեզ, եղբարք, որ իմ ամեն բաները յիշում էք, եւ ինչպէս պատուիրեցի ձեզ, այն պատուերները պահում էք: ³Բայց կամենում եմ որ դուք զիտենաք, թէ ամեն մարդի գլուխը Քրիստոսն է, եւ կնկայ գլուխը՝ մարդը, եւ Քրիստոսի գլուխն՝ Աստուած: ⁴Ամեն մարդ՝ երբոր աղօթք է անում կամ է մարգարեանում՝ եւ գլուխը ծածկած ունենայ, անպատիւ է անում իր գլուխը: ⁵Եւ ամեն կին՝ երբոր աղօթք է անում կամ մարգարեանում բաց գլխով, անպատիւ է անում իր գլուխը: Վասնզի մի եւ նոյնն է թէ ածիլուած է: ⁶Որովհետեւ եթէ կինը չ'ծածկուի, թող ուրեմն իր մազերն էլ կտրէ. բայց եթէ կնկան ամօթ է մազերը կտրելը կամ ածիլելը, թող ծածկուի: ⁷Սակայն մարդին պետք չէ որ իր գլուխը ծածկէ, որովհետեւ Աստուծոյ պատկերը եւ փառքն է. Բայց կինը մարդի փառքն է: ⁸Քանզի ոչ թէ մարդն է կնկանիցը, այլ կինն է մարդիցը: ⁹Եւ որովհետեւ ոչ թէ մարդը կնկան համար ստեղծուեցաւ, այլ կինը մարդի համար: ¹⁰Նորա համար պետք է, որ կինը շուք դնէ գլխի վերայ հրեշտակների համար: ¹¹Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը: ¹²Որովհետեւ ինչպէս որ կինը մարդիցը եղաւ, այնպէս էլ մադը կնկայ միջոցովն է. բայց ամենն Աստուածանից: ¹³Ռուք ինքներդ դատեցէք. Մի կնկայ վայելո՞ւմ է որ չ'ծածկուած աղօթք անէ Աստուծուն: ¹⁴Կամ հէնց բնութիւնն ինքը չէ՞ սովորեցնում ձեզ, որ եթէ մարդը երկար մազեր ունենայ, այն անարգանք է նորան: ¹⁵Բայց եթէ կինն երկար մազեր ունի, այն փառք է նորան. Որովհետեւ երկար մազերը հագուստի տեղ է տրուած նորան: ¹⁶Բայց եթէ մէկը կամենում է հակառակել, մենք այնպիսի սովորութիւն չ'ունինք, եւ ոչ էլ Աստուծոյ եկեղեցիները:

11: 2 Նախորդ գլուխների լույսի ներքո մարդը կարող է զարմանալ, արդյոք այս համարը հեգնանք է թէ սարկազմ: Այս եկեղեցին չէր հիշում Պողոսի խոսքերը և չէր հետևում նրա ուսմունքին (տես 1 Կոր. 11: 17,22): Հնարավոր է, սա ևս մեկ հարց է, որ եկեղեցին գրեց Պողոսին:

Արևելահայերեն «այն պատուերները պահում էք»
 Արևմտահայերեն «ու պատուերներս կը պահէք»

- NASB «ամուր պահեք ավանդությունները»
- NKJV «պահեք ավանդությունները»
- NRSV «պահպանեք ավանդությունները»
- TEV «հետևեք ուսմունքներին»
- NJB «պահպանելով ավանդությունները»

Սա ներկա ներգործական սահմանական է: Հավատացյալները պետք է շարունակեն ձգտել ճշմարտություններին, որոնք Պողոսը քարոզում էր (տես 2 Թես. 2:15): Սա ընտրության ուխտի հավասարակշռությունն է:

«Ավանդություններ» (*pardosis*) տերմինը օգտագործվում է մի քանի իմաստներով.

1. 1 Կոր. 11: 2,23; 15: 3 ավետարանի ճշմարտությունների համար
2. Մաթ. 15:6; 23: 1; Մարկ. 7: 8; Գաղ. 1:14 հրեական ավանդություններ
3. Կող. 2: 6-8 գնոստիկ ենթադրություններ
4. Հռոմեական կաթոլիկները (արևելյան և ռուսական ուղղափառները) այս համարը օգտագործում են որպես աստվածաշնչյան ապացույց-տեքստի, իսկ եկեղեցական ավանդությունները հավասար իշխանությունն են ունեցել
5. այս կոնտեքստում այն վերաբերում է առաքելական ճշմարտությանը, բանավոր կամ գրավոր (տես 2 Թես. 3: 6)

▪ «պատուերները» Հիսուսի մասին տեղեկությունների մեծ մասը բանավոր կերպով անցնում էր անհատից անհատին՝ Նրա մահից մոտ 30-60 տարի անց մինչև գրվելը:

▪ **«ինչպես պատուիրեցի ձեզ»** Կա հունարեն բառախաղ «ավանդույթներ» (*paradoseis*) և «պատվիրել» (*paredōka*) միջև, որոնք երկուսն էլ *paradidōmi* ձևերի են: Պողոսը չէ ստեղծողը, այլ պարզապես հայտնություն շղթայի մեջ մի օղակ: «Ավանդույթներ» տերմինը օգտագործվել է քրիստոնեական ճշմարտությունների համար, որոնք փոխանցվել են մեկ անձից մյուսին (տես 1 Կոր. 11:23; 15:3):

Պողոսը ավետարանի մասին տեղեկությունները ստացել է մի քանի աղբյուրներից:

1. Ստեփանոսի քարոզը (տես Գործք 7)
2. Իր կողմից հալածված քրիստոնյաները (տես Գործք 8: 1-3; 9: 1-2; 22: 4, 19)
3. Անանիա (տես Գործք 9:10-18)
4. Քրիստոսի հետ իր անցկացրած ժամանակը Արաբիայում (տես Գաղ. 1:11-17)
5. Պետրոսի և Հակոբոսի հետ իր անցկացրած ժամանակը Երուսաղեմում (տես Գաղ. 1:18-19)
6. Բարնաբաս (տես Գործք 9:20-27; 11:25-26)

11: 3 «գլուխը Քրիստոսն է» 1 և 2 Կորնթացիսի մեկնաբանության մեջ, էջ 103, Ֆ.Ֆ. Բրյուսը պնդում է, որ այս կոնտեքստում *kephalē* հետևում է եբրայերեն *rosh*՝ ծագման կամ աղբյուրի իմաստով: *Kephalē*-ի այս իմաստը հունարեն բառապաշարում չի ամրագրված:

1. Բառեր, Արնդտ, Գինգրիխ, Դանկեր
2. Մյուլթոն, Միլիգան
3. Լուվ, Նիդա
4. Մյուլթոն

Սա ցույց է տալիս, թե ինչպես է կոնտեքստը (այսինքն, 1 Կոր.11) որոշում սահմանումը, ոչ թե բառարանը: Այս կոնտեքստում «աղբյուր» կամ «ծագում» համապատասխանում է 1 Կոր. 11: 3-ին կապված Ծննդ. 1: 26-27; 2:18 (տես Kaiser, Davids, Bruce, and Brauch, *Hard Sayings of the Bible*, էջ 599-602):

Հիսուսը Հոր գործակալն էր արարչագործության մեջ (տես Հովհ. 1: 3,10; 1 Կոր. 8: 6; Կող. 1:16; Եբր. 1: 2): Մարդիկ, տղամարդ և կին, ստեղծվել են Նրա կողմից, Նրա պատկերով: Սակայն Որդին հնազանդ է Հորը (տես 1 Կոր. 3:23; 11: 2; 15:28): Այս համապատասխան հնազանդությունը տարածվում է տղամարդկանց և կանանց վրա: Նրանք երկուսն էլ ստեղծվել են Աստծո պատկերով (տես Ծննդ. 1: 26-27), բայց կա կարգ, նախ տղամարդը, հետո՝ կինը (տես Ծննդ. 2:18) ֆունկցիային առնչվող (գոնե հայրապետական համակարգում), բայց ոչ անհավասարության:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԳԼՈՒԽ (kephalē)

SPECIAL TOPIC: HEAD (kephalē)

«Գլուխ» (*kephalē*) իմաստի վերաբերյալ ծավալուն աստվածաբանական քննարկում է եղել: Տերմինը կարելի է հասկանալ որպես

1. իր եբրայերեն համարժեքը *rosh* (BDB 910, KB 1164), որը կարող է նշանակել
 - ա. գլուխ
 - բ. շեֆ, տնօրեն
 - գ. սկիզբ կամ ծագում (տես Առ. 8:23; Ժող. 3:11; Ես. 41:4)
 - դ. ընդհանուր գումարը

(տես *Dictionary of Old Testament Theology and Exegesis*, հատոր 3, էջ 1015-1020)

2. LXX *rosh* թարգմանվում է հունարենից
 - ա. *archē* (սկիզբ, տես Մաղ. 137: 6)
 - բ. *prōtotokos* (առաջին, տես 1 Մնաց. 5:12)
 - գ. *kephalē* (գլուխ)
 (1) մարդու գլուխ

- (2) կենդանու գլուխ
- (3) լեռան գագաթ
- (4) աշտարակի գագաթ (տես Մատթ. 21:42)

3. Նոր Կտակարանում *kephalē*
- ա. մարդու գլուխ (տես 1 Կոր. 11: 4,5,7)
 - բ. կենդանու գլուխ
 - գ. իդիոմա ամբողջ մարդու իմաստով
 - դ. սկիզբ կամ աղբյուր (տես 1 Կոր. 11:3)
 - ե. գումար (տես Հո. 9: 9)
 - զ. առաջնորդ
 - 1) Հիսուսը բոլոր իշխանությունների և հեղինակությունների գլուխն է, տես Կող. 2:10
 - 2) Հիսուսը եկեղեցու գլուխն է (տես Եփ. 4:15; 5:23; Կող. 1:18; 2:19)
 - է. ամուսին (տես Եփ. 5: 23)

(տես *Dictionary of New Testament Theology*, հատոր 2, էջ 156-163)

▪ **«կնկայ գլուխը՝ մարդը»** «Տղամարդ» և «կին» տերմինները կարող են նշանակել ամուսին և կին (տես NRSV, TEV): Այս կոնտեքստում դա մտադրված շեշտադրույթ չէ, բայց ստեղծագործության կարգը արտացոլված է Ծննդոց 2-ում:

▪ **«Քրիստոսի գլուխն՝ Աստուած»** Մա 1 Կորնթացիսի կրկնվող ճշմարտությունն է (տես 1 Կոր. 3:23; 11: 3; 15:28): Երրորդության մեջ հերթականությունը ոչ մի կապ չունի անհավասարության հետ, այլ ֆունկցիայի բաժանում է: Այս ճշմարտությունը կարելի է ենթադրել նաև տղամարդու և կնոջ քննարկումից: Փոխադարձությունը, անշուշտ, մոդելն էր մինչև Անկումը Ծննդոց 3: Այս փոխհարաբերությունը վերականգնվել է հավատացյալների վերականգնված հարաբերություններում Հոր հետ Որդու միջոցով (այսինքն, Հիսուսը վերականգնել է պատկերը հավատացյալ տղամարդկանց և կանանց մեջ): Տես *Discovering Biblical Equality*, IVP, Academic, 2005:

11:4

Արևելահայերեն «Ամեն մարդ՝ երբոր աղօթք է անում... անպատիւ է անում իր գլուխը»
 Արևմտահայերեն «Ամեն այր մարդ, որ գլուխը գոց աղօթքի կը կայնի... անպատիւ կընէ իր գլուխը»

NASB «Յուրաքանչյուր մարդ, ով ինչ-որ բան ունի իր գլխին աղօթք անելիս ...անպատվում է իր գլուխը»

NKJV «Յուրաքանչյուր մարդ, ով աղոթում կամ մարգարեանում է գլուխը ծածկած, անարգում է իր գլուխը»

NRSV «Ցանկացած մարդ, ով աղոթում կամ մարգարեանում է իր գլուխը ինչ-որ բանով ծածկած, ստորացնում է իր գլուխը»

TEV «Այսպիսով, մի մարդ, ով աղոթում կամ հռչակում է Աստծո պատգամը հրապարակային երկրպագության մեջ գլուխը ծածկած՝ անարգում է Քրիստոսին»

NJB «Ցանկացած մարդ, ով աղոթում կամ մարգարեանում է իր գլուխը ծածկած, ցույց է տալիս անհարգանք իր գլխին»

Սա բառախաղ է «գլուխ» բառի շուրջ: «Գլուխ» բառի երկրորդ օգտագործումը վերաբերում է Քրիստոսին (տես TEV): Պողոսը խոսում է հռոմեական մշակույթից, որի ձևերն ու խորհրդանիշները հրեական մշակույթի հակառակն են (այսինքն, տղամարդիկ ծածկում են իրենց գլուխները): Իրական

խնդիրը ոչ թե ով է ծածկում ում գլուխը, այլ (1) ծագման կամ (2) հնագանդության խորհրդանիշը, որոնք երկուսն էլ աստվածաբանական նշանակություն ունեն:

Առաջարկվել է, որ Կորնթոսի պատմական իրավիճակը.

1. սոցիալական, քաղաքական և ֆինանսական առաջնորդները պաշտամունքն առաջնորդում էին գլուխը ծածկած՝ տարբերելու իրենց սովորական մարդուց
2. որ Կորնթոսի ժողովարաններում հրեա կանայք կրում էին քող և հավատացյալ հրեաները նույնն էին անում եկեղեցում

Այս համարի միջև գոյություն ունի աստվածաբանական լարվածություն, որն, ըստ երևույթին, հաստատում է կին առաջնորդների դերը հրապարակային պաշտամունքի մեջ հասարակական ընդունելի ծածկույթով 14: 34-35 համեմատ, որտեղ կանանց (կամ առնվազն «ամուսնացած կանանց», 1 Կոր. 11:35) արգելվում է խոսել եկեղեցում:

Որոշ խմբեր որպես հաստատող տեքստ վերցնում են գլուխ 11-ը, իսկ մյուսները՝ գլուխ 14-ը: Պետք է ընդունենք, որ այս հատվածի բանալին Կորնթոսի առաջին դարի մշակութային միջավայրն է, բայց կոնկրետ առումով այն այսօր մեզ համար հստակ չէ: Առաջին դարի եկեղեցին ընդունում էր կանանց առաջնորդությունը Հին Կտակարանում և տեղյակ էր, որ Պողոսը իր ծառայության մեջ օգտագործում է նաև կանանց (տես Հռ.16): Նրանք հասկանում էին հարցը Կորնթոսի և հռոմեական մշակույթի մեջ, ոչ այնպես ինչպես մենք: Դոգմատիզմը տեղին չէ:

Վերջերս մի գիրք, *After Paul Left Corinth: The Influence of Secular Ethics and Social Change*, by Bruce W. Winter, էջ 121-141, առաջարկում է մի շատ օգտակար հասկացություններ հռոմեական գրականությունից և արվեստից: Այս և այլ հոդվածներ (այսինքն E. Fantham, "The 'New Woman': Representation and Reality," in *Women in the Classical World*, գլուխ 10, և P. W. J. Gill, "The Importance of Roman Portraiture for Head Coverings in 1 Կոր. 11:2-16," *TynB* 41.2 (1990) էջ 245-260 և "In Search of the Social Elite in the Corinthian Church," *TynB* 44.2 (1993), էջ 323-337), ցույց է տալիս ժամանակակից թարգմանիչներին, որ Կորնթոսը մշակութաբարեն հռոմեական էր, այլ ոչ թե հունական:

Այս նոր փաստարկների հիման վրա առաջին դարի հռոմեական Կորնթոսից կարելի է տեսնել, որ Պողոսի առջև ծառայած մշակութային հարցերը սկսվում են այս գրքում:

1. Պողոսը այս կոնտեքստում ընդհանրապես չի առնչվում հրեական մշակույթին կամ հունական մշակույթին:
2. Պողոսը ընտրում է երկու խմբի՝ էլիտար սոցիալական կարգավիճակով:
 - ա. հարուստ, սոցիալապես էլիտար, տղամարդ հավատացյալները իրենց դիրքերն էին ցուցադրում, ծածկելով իրենց գլուխները, մինչ հանրային պաշտամունք էին առաջնորդում, ինչպես որ սովորություն էր այս սոցիալական դասի համար, մինչ առաջնորդում էին քաղաքացիական հունա-հռոմեական կրոնական պաշտամունքը: Նրանք ցուցամոլություն էին անում:
 - բ. հարուստ, էլիտար կանայք հեռացնում էին իրենց մշակութային ակնկալված քողը՝ իրենց հավասարությունը խթանելու համար, ոչ միայն Քրիստոսում, այլև որպես սոցիալական վիճակ, ինչպես ժամանակաշրջանի մյուս հռոմեացի կանայք:
3. Հռոմեական Կորնթոսի քաղաքացիները, որոնք հետաքրքրված էին քրիստոնեական հավատքի և երկրպագության կյանքով, ուղարկում էին «պատգամաբեր» (այսինքն, 1 Կոր.11:10 հրեշտակները կարող են վերաբերվել տերերի անունից ուղարկված ծառաներին կամ ներկայացուցիչներին) ստուգելու համար հանդիպումը:

Այս պատմական / մշակութային / սոցիալական տեղեկությունները շատ բարդ ու վիճահարույց տեքստ են ներկայացնում: Այն նաև համապատասխանում է 1 Կորնթացիսի մյուս տեքստերին, որոնք ակնհայտորեն արտացոլում են առաջին դարի յուրահատկությունը, Կորնթոսյան միջավայր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԱՅՔ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

SPECIAL TOPIC: WOMEN IN THE BIBLE

I. Հին Կտակարան

Ա. Մշակույթորեն կանայք համարվում էին սեփականություն, գույք

1. ընդգրկվել են սեփականության, գույքի ցանկում (Ելից 20:17)
2. ստրուկ կանանց կամ աղախինների պես էին վարվում (Ելից 21: 7-11)
3. կանանց ուխտերը/երդումները չեղյալ էին համարվում սոցիալապես պատասխանատու տղամարդկանց կողմից (Թվոց 30)
4. կանայք, որպես պատերազմական ավար (2 Օրինաց 20:10-14; 21:10-14)

Բ. Գործնականում կար հավասարություն

1. Աստծո Իր պատկերով արու և էգ ստեղծեց (Մենդոց 1: 26-27)
2. պատվել հորն ու մորը (Ելից 20:12 [2 Օր.5:16])
3. հարգել հորն ու մորը (Ղև. 19: 3, 20: 9)
4. տղամարդիկ ու կանայք կարող էին ուխտավորներ լինել (Թվ. 6: 1-2)
5. դուստրերը ժառանգության իրավունք ունեն (Թվ. 27: 1-11)
6. ուխտի ժողովրդի մասն են (2 Օրինաց 29: 10-12)
7. հետևել հոր և մոր ուսումունքին (Առակաց 1:8; 6:20)
8. Եմանի որդիներն ու դուստրերը (Ղևիի ընտանիքից) գլխավորում էին երաժշտությունը Տաճարում (1Մնաց. 25: 5-6)
9. որդիներն ու աղջիկները պիտի մարգարեանան նոր դարաշրջանում (Հովել 2: 28-29)

Գ. Կանայք առաջնորդության դերերում

1. Մովսեսի քույր Մարիամը կոչվում էր մարգարեուհի (Ելից 15: 20-21 նաև Միքիա 6: 4):
2. Աստծո կողմից օժտված կանայք ձեռքերով մանեցին Խորանի համար (Ելից 35: 25-26):
3. ամուսնացած կին Դեբորա անունով նույնպես մարգարեուհի (տես Դատ. 4:4), որը գլխավորում էր բոլոր ցեղերին (Դատ. 4: 4-5, 5: 7)
4. Ողորման մարգարեուհի էր, որին Յովսիա թագավորը պատվիրեց կարդալ և մեկնաբանել նոր հայտնաբերված «Օրենքի Գիրքը» (4 Թագ. 22:14; 2 Մնաց. 34: 22-27)
5. Եսթեր թագուհին, մի աստվածավախ կին, որը փրկեց հրեաներին Պարսկաստանում

II. Նոր Կտակարան

Ա. Մշակույթորեն կանայք թե հուդայականության մեջ և թե հունա-հռոմեական աշխարհում երկրորդ կարգի քաղաքացիներ էին, շատ քիչ իրավունքներով կամ արտոնություններով (բացառությամբ Մակեդոնիայի):

Բ. Կանայք առաջնորդության դերերում

1. Եղիսաբեթ և Մարիամ, աստվածավախ կանայք Աստծո համար (Ղուկ.1-2)
2. Աննա, մարգարեուհի ծառայում է տաճարում (Ղուկ. 2:36)
3. Լիդիա, հավատացյալ և տնային եկեղեցու առաջնորդ (Գործք 16: 14,40)
4. Փիլիպոսի չորս կույս աղջիկները մարգարեուհիներ էին (Գործք 21: 8-9)
5. Փիբե, սպասավոր Կենքրայի եկեղեցում (Հռ. 16:1)
6. Պրիսկիլան (Պրիսկա) Պողոսի գործընկեր և Ապողոսի ուսուցիչը (Գործք 18:26; Հռ. 16: 3)
7. Մարիամը, Տրիփանոսը, Տրիփոսը, Պերսիդեն, Յուլիան, Ներեոսի քույրը, Պողոսի մի խումբ կին գործընկերներ (Հռ. 16: 6-16)

8. Յունիա (KJV), հնարավոր է կին առաքյալ (Հռ. 16: 7)
9. Եվոդիան և Սյունտիքը, Պողոսի գործընկերներ (Փիլ. 4: 2-3)
- III. Ինչպե՞ս է ժամանակակից հավատացյալը հավասարակշռում իրարամերժ աստվածաշնչյան օրինակները:
- Ա. Ինչպե՞ս կարելի է որոշել պատմական կամ մշակույթային ճշմարտությունները, որոնք կիրառելի են միայն բնագիր կոնտեքստում, հավիտենական ճշմարտությունները վավեր են բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիների, բոլոր հավատացյալների համար:
1. Մենք պետք է բուն ներշնչված հեղինակի մտադրությունը շատ լուրջ ընդունենք: Աստվածաշունչը Աստծո Խոսքն է և գործնական հավատքի միակ աղբյուրը:
 2. Մենք պետք է գործ ունենանք ակնհայտ պատմականորեն պայմանավորված ներշնչված տեքստերի հետ:
 - ա. Իսրայելի աղանդները (այսինքն, ծես և պատարագ) և (հմտ. Գործք 15; Գաղ. 3)
 - բ. առաջին դարի Հուդայականությունը
 - գ. Պողոսի ակնհայտ պատմականորեն պայմանավորված մտքերը 1 Կորն.-ում
 - (1) հեթանոսական Հռոմի իրավական համակարգը (1 Կոր. 6)
 - (2) մնալ ստրուկ (1 Կոր. 7: 20-24)
 - (3) ամուրիություն (1 Կոր. 7: 1-35)
 - (4) կույսերը (1 Կոր. 7: 36-38)
 - (5) կուռքին զոհաբերած կերակուր (1 Կոր. 8; 10: 23-33)
 - (6) Տիրոջ ընթրիքին անարժանաբար մոտենալը (1 Կոր. 11)
 3. Աստված լիարժեք և հստակ բացահայտեց Իրեն մի կոնկրետ մշակույթի, կոնկրետ օրվա մեջ: Մենք պետք է լրջորեն մոտենանք հայտնությանը, բայց ոչ պատմական հարմարեցման իր ամեն առումով: Աստծո Խոսքը գրվել է մարդկային բառերով, ուղղված որոշակի մշակույթի որոշակի ժամանակ մեջ:
- Բ. Աստվածաշնչյան մեկնաբանությունը պետք է փնտրի բնօրինակի հեղինակի մտադրությունը: Ի՞նչ էր նա ասում իր օրերում: Սա ֆունդամենտալ և կարևոր է պատշաճ մեկնաբանության համար: Բայց հետո մենք պետք է կիրառենք այն մեր օրերում: Այժմ, ահա խնդիրը կանանց լիդերության (իրական մեկնաբանական խնդիրը կարող է սահմանել տերմինը: Արդյո՞ք միայն հովիվների ծառայությունն է համարվում առաջնորդություն: Արդյո՞ք սպասավորները/սարկավազուհիները կամ մարգարեուհիները համարվում էին առաջնորդներ): Միանգամայն պարզ է, որ Պողոսը 1 Կոր. 14: 34-35 և 1 Տիմ. 2: 9-15 հաստատում է, որ կանայք չպետք է առաջնորդի դեր կատարեն հրապարակավ պաշտամունքի ժամանակ: Բայց ինչպե՞ս կարող եմ կիրառել դա այսօր: Ես չեմ ուզում, որ Պողոսի մշակույթը կամ իմ մշակույթը լռեցնի Աստծու Խոսքն ու կամքը: Հնարավոր է, որ Պողոսի օրոք չափազանց սահմանափակ էր, բայց նաև իմ օրոք կարող է լինել շատ բաց: Ես անհարմար եմ զգում ասելով, որ Պողոսի խոսքերը և ուսմունքները պայմանական են, առաջին դարի, տեղական իրավիճակային ճշմարտություններ: Ո՞վ եմ ես, որ թույլ տամ, իմ միտքը կամ իմ մշակույթը ժխտի ներշնչված հեղինակին: Սակայն ի՞նչ անեմ, երբ կան կին առաջնորդների աստվածաշնչյան օրինակներ (անգամ Պողոսի գրվածքներում, տես Հռ.16): Լավ օրինակ է Պողոսի քննարկումը հրապարակավ պաշտամունքի մասին 1 Կոր. 11-14: 1 Կոր. 11: 5-ում նա կարծես թույլ է տալիս կանանց քարոզել և աղոթել հրապարակավ պաշտամունքի ժամանակ

իրենց գլուխները ծածկած, սակայն 14: 34-35 նա պահանջում է, որ նրանք լուռ մնան:

Կային սպասավորուհիներ/սարկավագուհիներ (տես Հո.16:1) և մարգարեուհիներ (տես Գործք 21: 9):

Հենց այս բազմազանությունն է, որ տալիս է ինձ ազատություն բացահայտելու Պողոսի մեկնաբանությունները (ինչը վերաբերվում է կանանց սահմանափակումներին), թե ինչպես է սահմանափակում առաջին դարի Կորնթոսը և Եփեսոսը: Այս երկու եկեղեցիներում էլ կային խնդիրներ կապված կանանց նոր-հիմնադրված ազատությունը իրականացնելու հետ (cf. Bruce Winter, *After Paul Left Corinth*), որը կարող էր դժվարություններ առաջացնել եկեղեցու համար՝ հասնելու իրենց հասարակությանը Քրիստոսի համար: Նրանց ազատությունը պետք է սահմանափակվեր, որպեսզի ավետարանը կարողանար ավելի արդյունավետ լինել: Իմ օրը Պողոսի ճիշտ հակառակ օրն է: Իմ օրերում ավետարանը կարող է սահմանափակվել, եթե պարզ է, որ վերապատրաստված կանանց չի թույլատրվել ավետարանը բաժնեկցել, չի թույլատրվել առաջնորդել: Ո՞րն է հրապարակավ պաշտամունքի վերջնական նպատակը: Արդյո՞ք դա ավետարանչություն և աշակերտություն չէ: Կարո՞ղ է Աստված փառավորվել և գոհություն ստանալ կին առաջնորդների միջոցով: Աստվածաշունչը որպես ամբողջություն կարծես թե ասում է «այո»:

Ես ուզում եմ զիջել Պողոսին; իմ աստվածաբանությունը հիմնականում Պողոս-յան է: Ես չեմ ուզում չափազանց ազդվել կամ աղավաղվել ժամանակակից ֆեմինիզմի միջոցով: Սակայն, ես զգում եմ, որ եկեղեցին դանդաղում է արձագանքել ակնհայտ աստվածաշնչյան ճշմարտություններին, ինչպես ստրկության, ռասիզմի, մոլեռանդության և սեքսի աննպատակահարմարությանը: Այն նաև դանդաղում է համապատասխան արձագանքել կանանց իրավունքների ոտնահարմանը ժամանակակից աշխարհում: Աստված Քրիստոսով ազատում է ծառային ու կնոջը: Ես համարձակվում եմ թույլ չտալ, որ մշակույթը ազդի տեքստի վրա:

Եվս մեկ միտք; որպես մեկնաբան ես գիտեմ, որ Կորնթոսը շատ քայքայված եկեղեցի էր: Խարիզմատիկ պարզները արժեքավորվում էին այնտեղ և ցուցամոլություն էին անում: Հնարավոր է կանայք նույնպես բռնված էին սրանում: Ես նաև կարծում եմ, որ Եփեսոսը կեղծ ուսուցիչների ազդեցության տակ էր, որոնք օգտվելով առիթից կանանց օգտագործում էին որպես փոխանորդ խոսնակներ Եփեսոսի տնային եկեղեցիներում:

Գ. Առաջարկություններ հետագա ընթերցանության համար

How to Read the Bible For All Its Worth by Gordon Fee and Doug Stuart (էջ 61-77)

Gospel and Spirit: Issues in New Testament Hermeneutics by Gordon Fee

Hard Sayings of the Bible by Walter C. Kaiser, Peter H. Davids, F. F. Bruce, and Manfred T.

Branch (էջ 613-616;665-667)

11: 5 «Եւ ամեն կին՝ երբոր աղօթք է անում կամ մարգարեանում բաց գլխով» Սա նշանակում է, որ կինը գլուխը ծածկած կարող է աղոթել և մարգարեանալ հրապարակային ժողովներում: Այս գիրքում «մարգարեանալ» տերմինը նշանակում է «ավետարանը բաժնեկցել» կամ «հրապարակավ քարոզել» (տես 1 Կոր. 14:39): 4 և 5 համարները զուգահեռ են, թե տղամարդիկ և կանայք ինչ կարող են անել խմբակային երկրպագությանը մասնակցելու ժամանակ: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ, 1 Կոր. 14:1:

▪ **«անպատիւ է անում իր գլուխը»** Կորնթոսը հռոմեական գաղութ էր և արտացոլում էր հռոմեական մշակույթը: Հռոմեացի կանայք ամուսնանում էին դեռահասության շրջանում: Քողը

ամուսնության արարողության մշակութային կողմն էր: Ակնկալվում էր, որ հռոմեացի կանայք այն կրեին տանից դուրս եղած ժամանակ էլ: Դրա բացակայությունը դիտվում էր որպես

1. խաբված կին
2. մարմնավաճառ
3. գերակշռող լեզբուհի գործընկեր
4. «նոր» կին (այսինքն, առաջին դարում Հռոմի հասարակության մեջ հավասարության և ազատության հասարակական շարժումը ակտիվ էր)

Մի կին, ով այս ձև է իրեն պահում, հրապարակայնորեն ամոթանք է բերում իր ամուսնուն և եկեղեցու մասին սխալ տպավորություն է թողնում այցելուների և համայնքի վրա: Քրիստոսը տղամարդկանց և կանանց ազատ է դարձնում, բայց յուրաքանչյուրն ունի պարտավորություն՝ սահմանափակելու ազատությունը Քրիստոսի գործի համար: Կանայք և տղամարդիկ, կանայք և ամուսինները, ովքեր հավատացյալ են, կանչված են ապրելու Թագավորության աճի և առողջության համար: Սա 1 Կորնթացի 8-10 գլուխների թեման է և շարունակվում է 11-րդ գլխում:

▪ **«Վասնզի մի եւ նոյնն է թէ ածիլուած է»** Սա Վաղակատար կրավորական դերբայ է: Այս արտահայտությունը հասկանալու համար կան մի քանի հնարավորություններ:

1. այն վերաբերում է տեղական մարմնավաճառների ընդհանուր զարդարանքին
2. դա շնացող կնոջ հրապարակային ամոթանքի մշակութային գործողությունն է
3. այն ցույց տվեց, որ ամոթանքի կանայք բնորոշում էին «Առեղծվածային կրոններ» -ի հետևորդների համար Միջագետքի աշխարհում
4. այն վերաբերում է քրիստոնյա կանանց մշակութային անսպասելի գործողությանը, որոնք իրենց մազերը չափազանց կարճ էին կտրում՝ ցույց տալու համար իրենց նոր ազատությունը (այսինքն, առաջին դարում մշակութային միտում Հռոմում և նրա գաղութներում)

Շատ մեկնաբանություններում # 1 տարբերակն ընդգծվում է: Կա պնդում, որ սա պետք է վերաբերվի Դիանայի տաճարի մարմնավաճառներին: Սակայն Ակրոպոլիսի վրա գտնվող այս տաճարը ավերվեց երկրաշարժից 150 տարի առաջ, և գոյություն չունի պատմական ապացույց, որը դեռ գործում է: Ոչ մի ապացույց չկա, որ Հունաստանի մարմնավաճառները սափրեցին իրենց գլուխները:

Բանալի հարց է «Ի՞նչ թեմա է արծարծում Պողոսը»:

1. համապատասխան կամ մշակութորեն ակնկալվող պաշտամունքային հագուկապ և գործողություններ
2. անձնական ազատությունների չարաշահում
3. համապատասխան հարաբերություններ
 - ա. տղամարդկանց և կանանց միջև
 - բ. ամուսինների և կանանց միջև
 - գ. հրեշտակների և կանանց միջև (1 Կոր. 11:10)
 - դ. մշակույթի և կանանց միջև (1 Կոր. 11:13)

Ես հանգել եմ մի հասկացողության, որ # 1-ը լավագույն տարբերակն է, որը վերաբերում է ինչպես ամուսիններին, այնպես էլ կանանց, որոնք չեն առաջնորդվում Քրիստոսում ունեցած իրենց նոր ազատությամբ, այլ իրենց համառությամբ՝ հրաժարվելով իրենց մշակութային արտոնություններից և աշխատել եկեղեցու միաբանության և աճի համար:

11: 6 «Եթէ ... եթէ» Այս համարում կան երկու առաջին կարգի պայմանական արտահայտություններ, որոնք ենթադրվում են հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Եկեղեցում կային քրիստոնյա կանայք, ովքեր հրաժարվեցին ծածկել իրենց գլուխները, սակայն

շարունակում էին ակտիվ լինել համայնքային պաշտամունքի մեջ: Դա սոցիալապես անընդունելի էր: Հավատացյալները պետք է սահմանափակեն իրենց նոր ազատությունները Քրիստոսում

1. եկեղեցու տկարների համար (տես Հո. 14: 1-15: 13)
2. հասարակության մշակութային ակնկալիքը, եկեղեցին ձգտում է ավետարանել և համագործակցել

Արևելահայերեն «չճածկուի»
Արևմտահայերեն «չճածկուիր»

- NASB, TEV, Peshitta, REB «չի ծածկում իր գլուխը»**
NKJV «չի ծածկվում»
NRSV «չի քողարկում իրեն»
NJB «զնում է առանց քողի»

Պատմական տվյալները, որոնք օգտագործվում են դեմքի ծածկոցների (այսինքն, քող) կամ ուսին հասնող երկարությամբ գլխի ծածկոցների օգտագործումը հին Միջերկրական ժողովուրդների կողմից շատ օգտակար է: Ես 1 Կոր. 11: 4 նշումներում գրել եմ վերջին ապացույցները: Հռոմեացի կանայք, որոնք ամուսնացած էին, ոչ թե այր կամ մարմնավաճառ, մշակույթն ակնկալում էր, որ հասարակության մեջ քող կրեն որպես նշան, որ ամուսնացած են: Հին Միջերկրական աշխարհում կային շատ քիչ միայնակ կանայք:

Հրեական մշակույթում դեմքի քողը օգտագործվել է որպես նշան

1. բորոտության, Ղև. 13:45
2. սգալ մահացածների համար, Եզ. 24: 17,22
3. անհանգստություն, շփոթություն, ամոթանք, Միքիա 3:7
4. ամուսնություն, Ծննդ. 24:65
5. մարմնավաճառություն, Ծննդ. 38:14-15

Սակայն հիշեք, Պողոսը չի անդրադառնում հրեական մշակույթին, քանի որ այդ մշակույթում տղամարդիկ պաշտամունքի ժամանակ ծածկում են իրենց գլուխները:

▪ **«թող ուրեմն իր մազերն էլ կտրել»** Սա աօրիստ չեզոք հրամայական է: Սա չի նշանակում, որ բառացիորեն պետք է ընդունվի: Պողոսը չի պաշտպանում քրիստոնյա կանանց հասարակական ամոթը, սակայն պնդում է մշակութային հետևանքները անպատշաճ գործունեության համար:

▪ **«թող ծածկուի»** Սա ներկա չեզոք հրամայական է: Քրիստոնյա կանայք, Քրիստոսի անվան համար, կերպարանվում են տվյալ մշակույթին, որպեսզի հասնեն մարդկանց փրկության և եկեղեցուն անդամակցելու համար: Ձևերը կփոխվեն մի մշակույթից մի ուրիշ մշակույթը և տարիքից տարիք: Նպատակը մնում է նույնը (տես Մատթ. 28:18-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8):

11: 7 «որովհետև Աստուծոյ պատկերը եւ փառքն է» Սա վերաբերում է Ծննդ. 1: 26-27, սակայն այս համարի կոնտեքստում Ծննդ.1:26 «մարդ» բառը ընդհանուր է: Աստվածաբանության մեջ անորոշ է այն, թե ինչ է Ծննդ. 1: 26-27-ի «պատկերն ու նմանությունը» ստույգ նշանակում: Գիտնականների մեծամասնությունը այն կկապի անձի, ինքնագիտակցության, բարոյական հեռանկարի, ընտրելու ունակության, «ուրիշների» հետ կապվելու կարողության մասին: Կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունի ակնհայտ փոխհամաձայնություն, Ծննդ. 1: 26-27 և 2:18: Խնդիրը ծագում է Ծննդ. 3:16-ում: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (DOXA), 1 Կոր. 2:7:

Արևելահայերեն «Քանզի ոչ թե մարդն է կնկանիցը, այլ կինն է մարդիցը»
Արևմտահայերեն «Քանզի ոչ թե այր մարդը կնոջմէն է, հապա կինը՝ այր մարդէն»

NASB «Մարդը սկիզբ չի առել կնոջից, այլ կինը մարդուց»

NKJV «Մարդը կնոջից չէ, այլ կինը մարդուց»

NRSV «Իրականում, տղամարդը կնոջից չէր պատրաստված, այլ կինը՝ տղամարդուց»

TEV «Քանզի տղամարդը չի ստեղծվել կնոջից, այլ կինը՝ տղամարդուց»

NJB «Քանզի տղամարդը չի ստեղծվել կնոջից, ոչ, կինն է ստեղծվել տղամարդուց»

«Օագել» տերմինը հունարեն տեքստում չկա: Դա միայն *ek* նախդիրն է (այսինքն, -ից), ինչպես 1 Կոր. 11:12: Պողոսը հաստատում է ստեղծագործության կարգը 1 Կոր. 11: 7 և 9-ը Օննդ. 2-ից (այսինքն՝ նախ Ադամը, ապա Եվան): Այնուամենայնիվ, 1 Կոր. 11: 8-9, 11-ում Պողոսը հաստատում է նրանց փոխադարձ կախվածությունը (որը ակնարկում է Օննդ. 1:27 և 2:18):

11: 9 «որովհետև ոչ թե մարդը կնկան համար ստեղծուեցաւ» Մենք պետք է հիշենք, որ Պողոսի խոսքերը Գաղ. 3:28 կանանց հավասարության մասին, չի նվազեցնում սեռերի միջև ստեղծված տարբերությունները, գոնե այս ժամանակաշրջանում: Քրիստոսում տղամարդկանց և կանանց լիարժեք հավասարությունը ինքնաբերաբար չի վերացնում բոլոր մշակութային / ավանդական դերերի սպասելիքները: Հավատացյալները (տղամարդ և կին) չեն խթանում անձնական ազատությունները, ինչը կարող է վնասել եկեղեցու հեղինակությանը անհավատ մշակույթի մեջ: Հասուն հավատացյալները սահմանափակում են իրենց ազատությունը Քրիստոսի համար հանուն Նրա Թագավորության: Հավատացյալներն ունեն համայնքային պատասխանատվություն (1) Քրիստոսի մարմնի և (2) անհավատ համայնքի հանդեպ:

11:10 «Նորա համար պետք է, որ կինը շուք դնէ գլխի վերայ» Այս տեքստը, ինչպես այս կոնտեքստում մնացած բոլորը, կարելի է հասկանալ մի քանի ձևով: Հիմնական խնդիրն այն է, թե ինչ է «իշխանությունը» (այսինքն, *exousia*) ներկայացնում:

Նախ, պետք է նշել, որ *exousia* հաճախ կապվում է *dunamis*- ի հետ: Օտտո Բեթզը հետաքրքիր հոդված ունի *exousia*-ի վերաբերյալ *New International Dictionary of New Testament Theology*, հատոր 2, էջ 606-611: Ահա հինգ օրինակ.

«Հատկանշական է Նոր Կտակարանի համար, որ *exousia* և *dunamis* երկուսն էլ կապված են Քրիստոսի գործի հետ, տիեզերական ուժերի կառույցների և հավատացյալների հզորացման նոր կարգի հետևանքը» (էջ 609):

«Հավատացյալների *exousia* –ն: Քրիստոնյա հավատացյալի իշխանությունը հիմնված է Քրիստոսի իշխանության վրա և բոլոր ուժերի զինաթափման վրա: Դա նշանակում է թե ազատություն և թե ծառայություն» (էջ 611):

«Նա ազատ է անելու ցանկացած բան (1 Կոր. 6:12; 10:23 *exestin*), այս պնդումը, որը սկզբում արվեց Կորնթոսի աղանդավոր ոգևորիչների կողմից, ընդունվեց Պողոսի կողմից, և ընդունեց, որ դա ճիշտ է» (էջ 611):

«Գործնականում, սակայն, այս տեսականորեն անսահմանափակ ազատությունը կառավարվում է այն հանգամանքով, թե ինչն է օգտակար մյուս անհատ քրիստոնյաների և ամբողջ համայնքի համար, հաշվի առնելով, որ լիակատար փրկագնումը դեռ գալու է (1 Կոր. 6:12; 10: 23)» (էջ 611):

«Բոլոր բաները օրինական են [*exestin*] ինձ համար, բայց ոչ բոլորը օգտակար: Բոլոր բաները օրինական են [*exestin*], բայց ոչ բոլորը շինություն են: Թող ոչ ոք չփնտրի իր շահը, այլ իր ընկերինն էլ» (1 Կոր. 10: 23): Այս մեջբերումների մեջբերումը հավանաբար Կորնթոսի ազատամիտների կարգախոսն է: Պողոսը հակադրում է նրանց, ընդունելով իրենց ճշմարտությունը, բայց ցույց տալով, որ այն ամբողջ ճշմարտությունը չէ» (էջ 611):

Պողոսը հաճախ օգտագործում է այս երկու տերմինները Կորնթոսի եկեղեցու իր նամակներում:

1. *exousia*, 1 Կոր. 7:37; 9: 4,5,6,12 (երկու անգամ), 18; 11:10; 2 Կոր. 13:10
2. *dunamis*, 1 Կոր. 1:18; 2: 4,5; 4: 19,20; 5: 4; 15: 24,43; 2 Կոր. 4: 7; 6: 7; 8: 3 (երկու անգամ); 12:9; 13: 4 (երկու անգամ)

Իրավունքներն ու իշխանությունը հիմնական խնդիրներն էին ինչպես օրինապաշտների, այնպես էլ ազատամիտների համար: Պողոսը փորձում է գիծ գծել երկու ծայրահեղությունների միջև: Այս կոնտեքստում քրիստոնյա կանայք խրախուսվում են ընդունելու Աստծո տված ստեղծագործության կարգը (այսինքն, Քրիստոս-տղամարդ-կին), Թագավորության առաջխաղացման նպատակով: Պողոսը հաստատում է նախնական փոխադարձությունը (տես Ծննդ. 1: 26-27; 2:18), 11-12-րդ համարներում: Աստվածաբանորեն շատ վտանգավոր է

1. մեկ համար մեկուսացնել այս կոնտեքստում
2. կիրառել կոշտ համակարգված հարանվանական ցանց, առաջին դարի տղամարդ և կին / ամուսիններ և կանայք հարաբերությունների կապակցությամբ յուրաքանչյուր դարում յուրաքանչյուր մշակույթի մեջ
3. կորցնել Պողոսի հավասարակշռությունը քրիստոնեական ազատության և քրիստոնեական համայնքային ուխտի պարտավորությունների միջև

Որտեղից էին քրիստոնյա կանայք ստանում ազատություն՝ մասնակցելու պաշտամունքին որպես առաջնորդ (այսինքն՝ տուն-եկեղեցի): Անկասկած, ոչ ժողովարանից: Արդյոք դա առաջին դարի հռոմեական հասարակության մշակույթային միտումն էր: Դա, անշուշտ, հնարավոր է, և իմ կարծիքով օգնում է բացատրել այս գլխի բազմաթիվ ասպեկտները: Այնուամենայնիվ, հնարավոր է նաև, որ ավետարանի գորությունը, մեղքի պատճառով կորած «Աստծո պատկերի» վերականգնելն է աղբյուրը: Մարդկային կյանքի և հասարակության բոլոր ոլորտներում ցնցող նոր հավասարություն կա: Բայց այս հավասարությունը կարող է վերածվել անձնական չարաշահման լիցենզիայի: Սա անհամապատասխան ընդլայնումը այն է, ինչին Պողոսը անդրադառնում է:

F. F. Bruce, *Answers to Questions*, իսկապես օգնեց ինձ մտածել ժամանակակից արևմտյան քրիստոնեության եկեղեցական ավանդույթների հետ կապված բազմաթիվ վիճահարույց հարցերի շուրջ: Որպես էկզեգետ ես միշտ մտածել եմ, որ կանանց ծածկը նախատեսված էր ցույց տալու Աստծո պարզը (կամ Ծննդ. 1: 26,27 հավասարությունը), ոչ թե ամուսնու հեղինակությունը: Այնուամենայնիվ, ես չկարողացա գտնել այս մեկնաբանությունը աստվածաշնչյան ռեսուրսների մեջ, որը ես եմ օգտագործում, հետևաբար, ես չէի ցանկանում մեկնաբանել այն, կամ քարոզել / ուսուցանել: Ես դեռ հիշում եմ այն հուզմունքը և ազատությունը, երբ ես զգացի, որ Ֆ.Ֆ.Բրյուսը նույն բանն էր մտածում (տես *Answers to Questions*, էջ 95): Կարծում եմ, բոլոր հավատացյալները կոչվում են, լիաժամ, պարզներով օժտված Քրիստոսի շնորհալի ծառայողներ (այսինքն, Եփ. 4:11-12):

▪ **«հրեշտակների համար»** Այս հատվածի մեկնաբանությունների երեք մտքեր կան, որոնք վերաբերում են հրեշտակներին:

1. այն, որ հրեշտակները Աստծո ներկայացուցիչներն են, որոնք ներկա են մեր պաշտամունքային ծառայություններում որպես դիտորդներ, 1 Կոր. 4: 9; 1 Տիմ. 5:21; Սաղ. 138: 1; ինչպես նաև Մեռյալ ծովի մագաղաթները
2. այն, որ դրանք չար հրեշտակներն են սեռական ցանկություններով, որոնք նման են հրեշտակներին, Ծննդ. 6: 2; 2 Պետ. 2: 4; և Հուդա 6; հրեշտակները հաճախ հիշատակվում են 1 Կորնթացիսում (տես 1 Կոր. 4: 9; 6: 3; 11: 10; 13: 1)
3. *angels* թարգմանել որպես «պատգամաբերներ», «հրեշտակների» փոխարեն

Երբայերենում (այսինքն *malak*) և հունարենում (այսինքն, *angelos*) պատգամաբեր և հրեշտակ տերմինները նույնն են: Այս տեսությունը հիմնված է առաջին դարի սոցիալական սովորույթների վրա (տես Bruce W. Winter, *After Paul Left Corinth*, էջ 133-138): Կարգավիճակ ունեցող մարդը չէր

այցելում տնային եկեղեցի, առանց որևէ մեկին ուղարկելու, նախ պաշտամունքը ստուգելու համար: Սա ավելի իմաստ ունի, քան փորձում է կապել 1 Կոր. 11:10 կրքոտ հրեշտակներին կամ հրեշտակներին, որոնք պատշաճ կարգով մտահոգված են պաշտամունքով (տես Սաղ. 138:1):

11: 11-12 «ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը» Այս համարները ընդգծում են տղամարդկանց և կանանց փոխհարաբերությունը (տես Ծննդ. 1: 26-27; 2:18; Գաղ. 3: 26-29):

Այս ազատությունը (այսինքն, վերադարձ Ծննդոց 1: 26-27 բուն ստեղծագործության օրինակին) պետք է արտահայտվի պատշաճ ձևով՝ մարդու մեղավոր մշակույթի մեջ: Կասկած չկա, որ Պողոսը հաստատում է Հիսուսի փրկագնումը լիովին փոխում է յուրաքանչյուր հավատացյալի կարգավիճակը: Մենք բոլորս մեկ ենք Քրիստոսում: Այժմ մեր նպատակն է օգնել մեր մեղավոր ընտանիքին, հարևաններին և քաղաքացիներին գտնել այդ նույն փրկությունը: Ամեն մշակույթի մեջ դեռևս առկա են հասարակական խնդիրներ: Քանի որ հավատացյալները կարող են, չի նշանակում, որ հավատացյալները պետք է:

Այս կոնտեքստում «-ից» (այսինքն՝ *ek*) օգտագործումը (երկու անգամ) կարծես թե ամրապնդում է « գլուխ» բառի գործածումը որպես «սկիզբ, ծագում»: Կինը տղամարդուց է, տղամարդը՝ Աստուծուց: Ծննդոց գրքի պատմությունը նաև հիմք է ստեղծում «գլխի» համար որպես ստեղծագործության պատշաճ կարգ/հերթականություն: Թե՛ ազատությունը Քրիստոսով և թե՛ հնագանդությունը (տես Եփ. 5:21) երկուսն էլ տեղին են, երբ վերջնական նպատակն է եկեղեցու քարոզությունը:

11: 13-15 Պողոսն այս նույն մոտեցումն օգտագործում է 1 Կոր. 10: 15-ում, որտեղ այն կարող է հեզնանք լինել՝ հիմնվելով թե ինչ իմաստով է օգտագործվում «իմաստուններ» բառը (տես 1 Կոր. 4: 10; 2 Կոր. 11:10), բայց այստեղ դա հեզնանք չի թվում, այլ ավելի «մտածել մշակութային» իմաստով: Պողոսը օգտագործում է կորնթոսյան / հունա-հռոմեական / առաջին դարի էթիկա:

1. Ամուսնացած կանայք պետք է ծածկված լինեն հասարակության մեջ կամ երկրպագության ժամանակ (1 Կոր. 11:13):
2. Կորնթոսում փոքր տղաները կտրում են իրենց երկար մազերը հասունության անցնումային տարիքում (այսինքն՝ տաս տարեկան): Երկար մազեր պահելը կանացիության կամ միասեռականության մշակութային նշան էր (1 Կոր. 11:14):
3. Կարճ մազեր ունեցող կանայք համարվում էին որպես
 - ա. մեկը, ով հրապարակավ խաբվել է, ամոթանք ունի
 - բ. մարմնավաճառ (1 Կոր. 11:15)

Սրանք հոգևոր հասկացություններ չեն, ոչ էլ աստվածաշնչյան հասկացություններ (այսինքն, սրանք չեն համապատասխանում հրեական սովորություններին), այլ մշակութային պատկերացումներ են:

11:13 «ինքներդ» Սա շեշտադրություն է:

11: 14-15 «եթէ ...եթէ» Սրանք երկուսն էլ երրորդ կարգի պայմանական նախադասություններ են, որոնք խոսում են հնարավոր գործողությունների մասին:

Տարբեր անգլերեն թարգմանություններ կետադրում են այս համարները որպես հարց (եր) (այսինքն, NRSV, NJB); դրույթներ (այսինքն, NASB, TEV); կամ մեկ հարց և մեկ դրույթ (այսինքն, NKJV): 1 Կոր. 11: 14 հարցական մասնիկը ցույց է տալիս մի հարց, որը ակնկալում է «այո» պատասխան:

11:16 «եթէ» Սա առաջին կարգի պայմանական է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Կորնթոսի եկեղեցում կային կովարար քրիստոնյաներ:

Արևելահայերեն «մէկը կամենում է հակառակել»
Արևմտահայերեն «մէկը հակառակիլ ուզէ»

NASB «հակված է վիճաբանելու»

NKJV «որևէ մէկը կարծես կովարար է»

NRSV «որևէ մէկը վիճում է կովով»

TEV «որևէ մէկը ցանկանում է վիճել դրա մասին»

NJB «որևէ մէկը ցանկանում է վիճարկել»

Բայը ներկա ներգործական սահմանական է, ինչը ենթադրում է շարունակական գործողություն: Այս վիճաբանությունը նրանց համար շարունակական վերաբերմունք է: Նրանք սիրում են հակասություն և վիճաբանություն:

«Վիճելի, կովարար» տերմինը *philos* (այսինքն, սեր) և *veikos* (այսինքն, խռովություն) բառերի դարդ կառուցվածքն է: Այն օգտագործվում է առաքյալների կողմից Վերջին Ընթրիքի ժամանակ Ղուկ. 22:24-ում:

- **«մենք այնպիսի սովորություն չ'ունինք, եւ ոչ էլ Աստուծոյ եկեղեցիները»** (տես 1 Կոր. 11:4, 17): Պողոսը նրանց հասուկ բան չի տալիս (տես 1 Կոր. 4:17; 7:17; 11:16; 14:33): Այս եկեղեցին փառավորվում էր իր իմաստությամբ և ազատությամբ: Նրանք կարծում էին, որ իրավունք ունեին այլ կերպ ապրել այլ քրիստոնեական եկեղեցիներից: Պողոսը պնդում է, որ նրանք չունեն:
- **«եկեղեցի»** Տես Հատուկ Թեմա: Եկեղեցի (*ekklesia*), 1 Կոր. 1:2

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 11:17-22

¹⁷Բայց այս էլ պատուիրելովս չեմ գովում, որ դուք ոչ թե դէպի լաւագոյնն այլ դէպի վատթարն էք ժողովվում: ¹⁸Որովհետեւ նախ եւ առաջ երբոր մէկտեղ էք ժողովվում եկեղեցու մէջ, լսում եմ որ բաժանումներ կան ձեր մէջ, եւ մասամբ էլ հաւատում եմ: ¹⁹Որովհետեւ հերձուածներ էլ պէտք է լինին ձեր մէջ, որ ընտիր լինողները յայտնի լինեն ձեզանում: ²⁰Արդ երբոր մէկտեղ էք ժողովվում, սա Տէրունական ընթրիքն ուտել չէ, ²¹Որ ամեն մէկն առաջ իր ընթրիքն է անում ուտելու ժամանակ, եւ մէկը սոված է, եւ միւսը արբած: ²²Մի թէ տուն չ'ունիք ուտելու եւ խմելու. կամ թէ Աստուծոյ եկեղեցին արհամարհում էք, եւ չքաւորներին ամաչեցնում. Ձեզ ի նչ ասեմ. Գովե՛մ ձեզ. Այդ բանումը չեմ գովում:

11:17 Պողոսը նոր թեմա է սկսում, բայց Կորնթոսի որոշ հավատացյալների հպարտ կեցվածքը դեռևս ուշադրության կենտրոնում է: Թեման փոխվում է, բայց հիմնական խնդիրը չի փոխվում,

1. նրանց էլիտիզմը
2. նրանց շեշտադրումը անձնական ազատության վրա
3. նրանց իմաստությամբ պարծենալը

Պողոսի բոլոր թեմաներին անդրադառնում է (տես 1 Կոր. 7: 1,25; 8: 1; 16: 1), որոնք ուղարկվել էին իրեն նամակների միջոցով, շրջանառվում են այդ նույն հարցերի շուրջ:

Նույնիսկ նրանց սիրո խնջույքը (տես Հուդա 1:12) դարձավ «ավելի ինձ համար» տոն: Իրավունքը, ունակությունը և կարգավիճակը գերազանցեց Մարմնի սիրուն, ծառայությանը և առողջությանը:

- **«չեմ գովում»** Պողոսը հաստատել է դրանք 1 Կոր. 11: 2, բայց այս ոլորտում նա կարող է միայն կշտամբել նրանց:

▪ **«Էք ժողովում»** Սա հունարեն *sunerchomai* բարդ տերմինն է: Պողոսը շատ է սիրում *sun* միացությունները: Նախդիրը հիմնականում նշանակում է «իրար հետ»: Այս տերմինը արտահայտում է նույն գաղափարը, ինչ ժողովարանը, որը վերաբերում է հավատացյալների հավաքական ժողովին (տես Եբր. 10: 25): 11-14 գլուխները խոսում են հավաքված երկրպագության մասին (տես 1 Կոր. 11: 17,18,20,33,34; 14: 23,26):

Զարմանում եմ, թե ինչպես է «միասին հավաքվել» -ը գործում: Ակնհայտ էր, որ Կորնթոսում մի քանի տարբեր տնային եկեղեցիներ կային, հնարավոր է, որոշ պառակտող խմբավորումների աղբյուրը: Արդյո՞ք Պողոսն այստեղ ասում է, որ բոլոր տնային եկեղեցիները միասին հավաքվում են Տիրոջ ընթրիքի համար:

11:18 «նախ եւ առաջ» Այս արտահայտությունը կարելի է հասկանալ երկու ձևով:

1. առաջին կարևորության (NKJV)
2. երկու կամ ավելի հարցերից առաջինը, սակայն, կոնտեքստում չկա «երկրորդ» և այլն
3. նույն քերականական առանձնահատկությունը գտնվում է Հռ. 1: 8

▪ **«բաժանումներ կան ձեր մեջ»** Այս բաժանումները առաջին անգամ նշվում են 1 Կոր. 1: 10-17 և 3: 3-4, բայց նրանց ներկայությունը ենթադրվում է ամբողջ գրքում: Այս կոնտեքստում բաժանումը չի գերազանցում առաջնորդներին, բայց բնութագրվում է սոցիալ-տնտեսական գործոններով: Սա կարող է սահմանել ֆրակցիաները որպես սոցիալական դասեր ներկայացնող, ինչպես նաև աստվածաբանական շեշտադրումներ:

11:19

Արևելահայերեն «Որովհետեւ հերձուածներ էլ պէտք է լինին ձեր մեջ»

Արևմտահայերեն «Վասն զի հարկաւ ձեր մեջ հերձուածներ ալ պիտի ըլլան»

NASB, NKJV «ձեր մեջ պէտք է լինեն նաև խմբակցություններ»

NRSV «Իրոք, ձեր մեջ պէտք է լինեն խմբակցություններ»

TEV «(կասկած չկա, որ ձեր մեջ բաժանումներ պէտք է լինեն) »

NJB «ձեր մեջ տարբեր խմբավորումներ պէտք է լինեն»

Տերմինը «ֆրակցիա, երկպառակտություն» է (1 Կոր. 11:19, այսինքն, *hairesis*), որից մենք ստանում ենք անգլերեն հերետիկոսություն բառը: Դրա հիմնական ստուգաբանությունը «ընտրել», բայց հատուկ լրացուցիչ իմաստով, ցույց տալ հատուկ բարեհաճություն՝ ընտրելով մեկին և մերժելով մյուս ընտրությունները (տես Գործք 24:14; 1 Կոր. 11:19; Գաղ. 5:20): Այն կարող է օգտագործվել նկարագրելու համար (1) մի մարդու, ով հավատում է կեղծ ուսմունքին (տես Տիտ. 3:10) կամ (2) հենց կեղծ ուսմունքը (տես 2 Պետ. 2: 1):

1 Կոր. 11:18 օգտագործված մեկ այլ տերմին կա «բաժանումներ» (*schisma*), որից մենք ստանում ենք անգլերեն հերձված, հերետիկոս բառը: Նրա հիմնական ստուգաբանությունը նշանակում է «պառակտել» (տես Մաթ. 27:51): Այն օգտագործվել է մի հարցի շուրջ բաժանվող խմբերի համար (տես Հովհ. 7:43, 9:16; 10:19; Գործք 14:4; 23:7; 1 Կոր. 1:10; 11:18):

Պողոսը նշում է աստվածաբանական նպատակը (այսինքն, *hina*) և անհրաժեշտությունը (այսինքն, *dei*) այս տարբեր խմբերի ներկայության համար: Նրանք անհրաժեշտ էին, որ հստակ հայտնաբերվեին ճշմարիտ հոգևոր առաջնորդները: Ճգնաժամի ժամանակ հասուն առաջնորդները դառնում են ակնհայտ:

Մյուս տարբերակն այն է, որ որոշ խմբավորումներ և իրենց ղեկավարներ ցույց կտան իրենց գործողությունների միջոցով, որ նրանք բոլորովին քրիստոնյա չեն (տես 1 Հովհ. 2:19; Մարկ. 4:16-19):

- **«որ ընտիր լինողները յայտնի լինեն ձեզանում»** Տես Հատուկ Թեմա: Հունարեն «փորձություն, փորձ» տերմինները և դրանց նշանակության երանգները, 1 Կոր. 3:13

11:20 «սա Տերունական ընթրիքն ուտել չէ» Այս պառակտող արտոնյալ սոցիալական վերնախավը (ները) գործում էր լիովին օտար էին իր աշակերտների հետ Հիսուսի վերջին ճաշի հաղորդակցության, ինքնատրվող նախադեպի ձևով: Հաջորդող համարները իր տեսակետը պարզաբանելու համար են (տես 1 Կոր. 11:22):

- **«Տերունական ընթրիքն»** Սա Նոր Կտակարանում հանդիպող այս արտահայտության միակ դեպքն է: Սա հեզնանքի այլ հնարավոր օրինակ է: Նրանց վերաբերմունքներից և գործողություններից ոչինչ չի համապատասխանում Հիսուսի վերաբերմունքի և գործերի հետ Իրեն տալով մեղավոր մարդկության համար:

Պաշտամունքը հանդես է գալիս մի քանի անուններով:

1. Տիրոջ ընթրիքը
2. «Տիրոջ սեղանը» (1 Կոր. 10:21)
3. «հաց կիսել» (Գործք 2:42; 20: 7; 1 Կոր. 10:16; 11:24 [տես Ղուկ. 24:30])
4. գոհություն (այսինքն, *eucharist*) կամ օրհնություն (այսինքն, *eulogia*, Սատթ 26:26-27; 1 Կոր. 10:16; 11:24)

11:21 «ամեն մեկն առաջ իր ընթրիքն է անում» Վաղ եկեղեցին միավորեց Տիրոջ Ընթրիքը և «Ազապե» կոչվող հաղորդակցության ճաշկերույթը (տես 2 Պետ. 2:13; Հուդա 12 և հնարավոր է Գործք 20:7):

Այս արտահայտությունը կարելի է հասկանալ մի քանի ձևով:

1. Հարուստ / կրթված / ազդեցիկ / բարձրաստիճան մարդիկ շուտ էին գալիս ու արագ ուտում էին ճաշը, որպեսզի երբ աղքատները գային այնտեղ ոչինչ չլինեք ուտելու:
2. Յուրաքանչյուր մարդ պետք է իր կերակուրը բերեր: Էլիտար հավատացյալները արագ ուտում էին իրենց կերակուրը, աղքատների կամ եկեղեցու ծառաների ներկայությամբ, որոնք քիչ բան էին բերել կամ ոչինչ չէին բերել:

Ինդիքը եսասիրությունը և շատակերությունն էր, որը հիմնված էր սոցիալական տարբերությունների վրա, ինքնագոհաբերող սիրո փոխարեն, ինչպես որ Հիսուսի գործողություններն ու նախադեպը հստակ ուսուցանում էին: Կորնթոսի եկեղեցին չէր հավատում, որ իրենք Քրիստոսի մեջ մեկ էին: Դրանց միջև արմատական դիխոտոմիա կար

1. սոցիալապես ունեցողներ և չունեցողներ
2. հարուստ և աղքատ
3. տղամարդիկ և կանայք
4. ազատներ և ստրուկներ
5. հռոմեացիները և մյուսները
6. հոգևոր վերնախավը և հասարակ հավատացյալը

Այս տարբերությունները հստակորեն գրված են 1 Կոր. 11:21 և 22:

- **«մեկը սոված է, եւ միւսը արբած»** Անկախ նրանից, թե դա պայմանավորված էր հռոմեական հասարակության առանձնահատկություններից կամ եսասիրությունից, հստակ երևում է անընդունելի իրավիճակը: Հիշտակի ընթրիքի և համայնքային հաղորդակցության նպատակը մոռացվել էր: Սա լուրջ հարց էր (տես 1 Կոր. 11:23): Այս համարը չի կարող օգտագործվել ամբողջովին ձեռնպահ մնալու համար: Ակնհայտ է, որ զինին այս փորձառության մի մասն էր: Չարաշահումը դատապարտելի է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԱԼԿՈՀՈԼԻ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ
SPECIAL TOPIC: BIBLICAL ATTITUDES TOWARD ALCOHOL AND ALCOHOLISM**

I. Աստվածաշնչյան տերմիններ

Ա. Հին Կտակարան

1. *Yayin* - Սա ընդհանուր տերմին է գինու համար (BDB 406, KB 409), որն օգտագործվում է 141 անգամ: Ստուգաբանությունն անորոշ է, քանի որ դա չունի հրեական արմատ: Դա միշտ նշանակում է թթվեցրած մրգահյութ, սովորաբար խաղողի: Որոշ բնորոշ հատվածներ Ծննդ. 9:21; Ելից 29:40; Թվոց 15: 5,10:

2. *Tirosh* - Սա «նոր գինին» է (BDB 440, KB 1727): Մերձավոր Արևելքի կլիմայական պայմաններից ելնելով թթվեցումը շուտ է սկսվել, հյութ քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերվում է գինու թթվեցման գործընթացին: Որոշ բնորոշ հատվածներ, տես 2 Օր. 12:17; 18: 4; Ես. 62: 8-9; Ովս. 4:11:

3. *Asis* - Սա ակնհայտորեն ակոհոլային խմիչքներ է («քաղցր գինի», BDB 779, KB 860, օրինակ Հովել 1: 5; Ես. 49:26):

4. *Sekar* - Սա «թունդ խմիչք» տերմինն է (BDB 1016, KB 1500): Եբրայերեն արմատն օգտագործվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինի մեջ: Դրա վրա ինչ - որ բան է ավելացված , որպեսզի այն ավելի հարբեցնող լինի: Այն զուգահեռ է *yayin* (տես Առ. 20: 1; 31: 6; Ես. 28: 7):

Բ. Նոր Կտակարան

1. *Oinos* - *yayin*-ի հունարեն համարժեքն է

2. *Neos oinos* (նոր գինի)- *tirosh*-ի հունարեն համարժեքը (հմմտ. Մարկ. 2:22)

3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) - գինի թթվեցման վաղ փուլում (հմմտ. Գործք 2:13)

II. Աստվածաշնչյան օգտագործում

Ա. Հին Կտակարան

1. Գինին Աստծո պարգևն է (Ծննդ. 27:28, Սաղ. 104: 14-15; Ժող. 9: 7; Ովս. 2: 8-9; Հովել 2: 19,24; Ամովս 9:13; Զաք. 10: 7):

2. Գինի զոհաբերության արարողության մի մասն է (Ելից 29:40; Ղև. 23:13; Թվոց 15: 7,10; 28:14, 2 Օր. 14:26; Դատ. 9:13):

3. Գինին օգտագործվում է որպես դեղորայք (2 Թագ. 16: 2; Առ. 31: 6-7):

4. Գինի կարող է իսկական խնդիր լինել (Նոյ - Ծննդ. 9:21; Ղովտ - Ծննդ 19: 33,35; Սամսոն - Դատ. 16; Նաբաղը - 1 Թագ. 25:36; Ուրիան - 2 Թագ. 11 : 13; Ամնոնը - 2 Թագ. 13:28; Էլան - 3 Թագ. 16: 9; Բենասաղ - 3 Թագ. 20:12; իշխանները - Ամովս 6: 6 և տիկնայք - Ամովս 4):

5. Գինին կարելի է չարաշահել (Առ. 20:1; 23: 29-35; 31: 4-5; Ես. 5: 11,22; 19:14; 28: 7-8; Ովսէէ 4:11):

6. Գինին արգելվում էր որոշակի խմբերի (քահանաներին ծառայության ժամանակ, Ղև. 10: 9; Եզեկ. 44:21; Ուղտավորները, Թվ. 6 և իշխանները, Առ. 31: 4-5, Եսայի 56: 11-12; Ովսէէ 7: 5):

7. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Ամովս 9:13; Հովել 3:18; Զաք. 9:17):

Բ. Ոչ աստվածաշնչյան գրքեր

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող. 31:27-33):

2. Ռաբբիներն ասում են «Գինին բոլոր դեղերից մեծագույնն է, որտեղ գինին բացակայում է, դեղերն են անհրաժեշտ դառնում» (BB 58B):

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը փոխեց գինու (Հովհ. 2: 1-11):

2. Հիսուսը գինի խմեց (Մատթ. 11: 18-19; Ղուկ. 7: 33-34; 22: 17):
3. Պետրոսը մեղադրվում է հարբեցողության մեջ «նոր գինի» Պենտեկոստեի Օրը (Գործք 2:13):
4. Գինի կարող է օգտագործվել որպես դեղամիջոց (Մարկ. 15:23; Ղուկ. 10:34; 1 Տիմ. 5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահող լինեն: Սա չի նշանակում լրիվ ձեռնպահ մնալ(1 Տիմ. 3: 3,8; Տիտոս 1: 7; 2: 3; 1 Պետ. 4: 3):
6. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Մատ. 22:1; Հայտ. 19: 9):
7. Հարբեցողությունն արտահայտում էր ավստասանք ինչ որ առիթի դեպքում (Մատթ. 24:49; Ղուկ.12:45; 21:34; 1 Կոր. 5: 11-13; 6:10; Գաղ. 5:21; 1 Պետ. 4: 3; Հռ. 13 : 13-14):

III. Աստվածաբանական ներմբռնում

Ա. Դիալեկտիկական լարվածություն

1. Գինին Աստծո պարզևն է:
2. Հարբեցողությունը մեծ խնդիր է:
3. Հավատացյալները, որոշ մշակույթներում, պետք է սահմանափակեն իրենց ազատությունները հանուն Ավետարանի (Մատթ. 15: 1-20; Մարկ. 7: 1- 23; 1 Կոր. 8-10; Հռ. 14):

Բ. Տրված սահմաններից դուրս գալու միտում

1. Աստված է բոլոր լավ բաների աղբյուրը
 ա. Ուտելիք –Մարկ. 7:19; Ղուկ. 11:44; 1 Կոր. 10: 25-26
 բ. ամեն ինչ մաքուր է - Հռ. 14: 14, 20; 1 Տիմ. 4: 4
 գ. ամեն բան օրինավոր է - 1 Կոր. 6:12; 10:23
 դ. բոլոր բաները մաքուր են- Տիտոս 1:15
2. Մեղավոր մարդկությունը չարաշահել է Աստծո բոլոր պարզևները՝ հանելով դրանք Աստծո կողմից տրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական ստեղծագործության մեջ ոչ մի չար բար չկա (տես վերը Բ. 1):

IV. Առաջին դարի հրեական մշակույթն ու խմորումը/թթվեցումը

Ա. Խմորումը շատ շուտ է սկսվում, խաղողը ճզմելուց մոտավորապես 6 ժամ անց

Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ երբ մի փոքր փրփուր է հայտնվում մակերեսին (դա խմորումի նշան է), այն ենթակա է գինու-տասանորդի (*Ma aseroth* 1: 7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:

Գ. Հիմնական խմորումը/թթվեցումը ավարտվում է մեկ շաբաթ հետո:

Դ. Երկրորդական խմորումը տևում էր մոտ 40 օր: Այս վիճակում դա համարվում է «հնացած գինի» և կարող էր առաջարկվել զոհասեղանի ծառայության ժամանակ (*Edhuyyoth* 6:1):

Ե. Գինին, որը հանգստացել էր իր նստվածքի մեջ (հին գինի) համարվում էր լավը, բայց նախքան օգտագործելը պետք էր լավ քամել:

Զ. Գինին համարվում էր պատրաստ կամ տարիքով թթվեցումից սովորաբար մեկ տարի հետո: Երեք տարի էր ամենաերկար ժամանակահատվածը, որ գինին կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է բացվեր ջրով:

Է. Միայն վերջին 100 տարիների ընթացքում ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների պատճառով խմորումը կամ թթվեցումը երկարել է: Հին աշխարհը չի կարող կանգնեցնել թթվեցման բնական գործընթացը:

V. Եզրափակիչ մտքեր

- Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և աստվածաշնչյան մեկնաբանությունը չեն արժեզրկում Հիսուսին և առաջին դարի հրեական / քրիստոնեական մշակույթը: Նրանք ակնհայտորեն ոչ ամբողջապես չիմող էին:
- Բ. Ես չեմ քարոզում ավոհուլի սոցիալական օգտագործումը: Սակայն, շատերը չափազանցել են Աստվածաշնչի դիրքորոշումը այս թեմայի շուրջ և այժմ պնդում են, որ բարձրակարգ արդարությունը հիմնված է մշակութային / հարանվանական կողմնակալության վրա:
- Գ. Ինձ համար Հռ. 14 և 1 Կոր. 8-10 գլուխները տալիս են պատկերացում և ուղեցույց՝ հիմնված սիրո և հարգանքի վրա, դեպի մեր հավատակիցները և ավետարանի տարածումը մեր մշակույթներում, ոչ անձնական ազատությունը, ոչ էլ դատապարտող քննադատությունը: Եթե Աստվածաշունչը միակ աղբյուրն է հավատքի և գործունեության, ապա մենք պետք է վերանայենք այդ հարցը:
- Դ. Եթե մենք հակված ենք ամբողջական չափավորությանը որպես Աստծո կամք, ինչ ենք ենթադրում Հիսուսի մասին, ինչպես նաև այն ժամանակակից մշակույթները, որոնք պարբերաբար օգտագործում են գինի(օրինակ Եվրոպա, Իսրայել, Արգենտինա):

▪ **«Մի՞թե տուն չունիք ուտելու եւ խմելու»** Որոշ օրինականներ և գրականագետներ փորձել են դա օգտագործել որպես ապացույց-տեքստ՝ եկեղեցում չուտելու համար: Պատմությունը և կոնտեքստը միշտ էլ կարևոր են եղել հնագույն գրականության մեկնաբանության մեջ: Մեջբերելով Աստվածաշնչի փոքր մասերը, մարդը կարող է այնպես անել, որ Աստվածաշունչը /Աստված սաի գրեթե ցանկացած բան: Ինչպես Գորդոն Ֆիլին է ասում «Գիրք, որը կարող է նշանակել ինչ որ բան, նշանակում է ոչինչ»:

Կա մի շարք հռետորական հարցեր, որոնք բացահայտում են այն զգացմունքները, որոնցով գրում է Պողոսը: Նա ցնցված է եկեղեցու մարդկանց որոշ գործողությունների վրա (տես Հակ. 2: 6):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 11:23-26

²³Որովհետեւ եւ Տէրիցն ընդունեցի այն որ ձեզ էլ աւանդեցի. որ Տէր Յիսուսն այն գիշերը որ մատնվում էր, հաց առաւ, ²⁴Եւ գոհանալուց յետոյ կտրեց եւ ասեց. Առեք, կերեք. Այս է իմ մարմինը՝ որ ձեզ համար կտորվում է. Այս արեք իմ յիշատակի համար: ²⁵Այնպէս էլ ընթրիքն ուտելուց յետոյ բաժակն առաւ եւ ասեց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովը. Այս արեք քանի անգամ որ խմեք, իմ յիշատակի համար: ²⁶Որովհետեւ քանի անգամ որ այս հացն ուտեք, եւ այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեցեք մինչեւ որ նա կ'գայ:

11:23 «Որովհետեւ եւ Տէրիցն ընդունեցի այն որ ձեզ էլ աւանդեցի» Պողոսը ներկա չէր Տիրոջ ընթրիքի ժամանակ: Նա ակնարկում է Գաղ. 1: 11-17-ը, ասելով որ հայտնությունը ստացել է անմիջապես Հիսուսից և Գաղ. 1: 18-19, այլ ոչ թե այլ Առաքյալներից կամ Երուսաղեմի առաջնորդներից: Այնուամենայնիվ, նրա խոսքերն արտացոլում են Սինոպտիկ Ավետարանների ավանդույթների մասին գիտելիքները:

▪ **«հաց առաւ»** Կարևոր է, որ Հիսուսը չի օգտագործում Զատիկի գառնուկը որպես խորհրդանիշ: Դա շատ ուժեղ կապված էր Հին Ուխտի հետ (տես Ելից 12): Հացը դարձավ միասնության նոր խորհրդանիշը (10: 16-17):

11:24 «Եւ գոհանալուց յետոյ կտրեց եւ ասեց» Սա մատնանշում է հատուկ պատմական գործողություն (այսինքն, Զատիկի ընթրիքը վերնատանը Հիսուսի մատնության գիշերը): Շատ

քրիստոնյաներ արարողությունը կոչում են *Eucharist*, որը հունարեն «շնորհակալություն» տերմինն է (այսինքն, *eucharisteō*, Մատթ. 26:27; Մարկ. 14: 22; Ղուկ. 22:19):

**Արևելահայերեն «Այս է իմ մարմինը՝ որ ձեզ համար կտրվում է»
Արևմտահայերեն «այս է իմ մարմինս որ ձեզի համար պիտի կտրուի»**

**NASB «Մա իմ մարմինն է, որը ձեզ համար է»
NKJV «Վերցրեք, կերեք, սա իմ մարմինն է, որը կտրվում է ձեզ համար»
NRSV «Մա իմ մարմինն է, որը ձեզ համար է»
TEV, NJB «Մա իմ մարմինն է, որը ձեզ համար է»**

Սա ակնհայտ փոխաբերություն է: Մարդակերությունը սարսափ էր ցանկացած հրեայի համար: Հիսուսը կտրած հացն օգտագործում է որպես Գողգոթայի վրա Իր կտրված մարմնի խորհրդանիշ: Ինչպես հացը ուտողին տալիս է ֆիզիկական հագեցում և կյանք, այնպես էլ Հիսուսի գործերը հոգևոր կյանք են տալիս նրանց, ովքեր ընդունում են այն:

Հիսուսի խոսքերի իմաստի մասին շատ աստվածաբանական բանավեճեր են եղել: Քննարկման մեծ մասը հիմնված է (1) իրադարձության բնույթի վրա և (2) Աստծո շնորհքի: Նրանք, ովքեր դա տեսնում են որպես հաղորդություն, մեծապես հենվում են Հովհ. 6-ին, որը, կոնտեքստում, կապ չունի Տիրոջ ընթրիքի հետ:

Այս արտահայտության մեջ կան մի քանի հունարեն ձեռագիր տարբերակներ:

1. Textus Receptus - ը ավելացնում է «վերցրեք, կերեք»: Սա երևում է հունարեն MSS C³, K, L, և P- ում: Դա բնօրինակը չէ:
2. Պողոսի «ձեզ համար» կարճ արտահայտությունը (տես MSS P⁴⁶, ճ*, A, B, C*) ընդլայնվել է վաղ դպիրների կողմից մի քանի ձևերով.
 - ա. «կտրվում է ձեզ համար» (տես MSS ճ², C³, D², F, G)
 - բ. «թափվում է ձեզ համար» (տես MS D*)
 - գ. «ձեզ համար տրվում է» (տես Ղուկ. 22:19)

UBS⁴- ը համեմատաբար կարճ տեքստը համարում է (*hyper humōn*) «Ա» (որոշակի):

11: 24-25 «Այս արեք իմ յիշատակի համար» Սա կամ ներկա ներգործական սահմանական է կամ ներկա ներգործական հրամայական: Հրամայականը լավագույնն է համապատասխանում կոնտեքստին: Այս խորհրդանշական կերակուրը պետք է պարբերաբար կրկնվեր, մինչև Հիսուսի վերադարձը:

Հետաքրքիր է, որ Մատթեոսի և Մարկոսի ավետարանում Տիրոջ Ընթրիքի արձանագրության մեջ «դա արեք իմ յիշատակի համար» արտահայտությունն ընդգրկված չէ: Սակայն դա երևում է Ղուկ. 22:19-ում և 1 Կոր. 11: 24-25: Շատ զարմանալի է, որ Հիսուսի կյանքում ակնհայտորեն նշանակալի իրադարձությունը, որը պետք է կրկնվեր, տարբեր ձևերով է գրված Ավետարաններում և Պողոսի գրվածքներում:

Նոր Կտակարանը չի նշում, թե որքան հաճախ դա պետք է կրկնվի: Հավատացյալների որոշ խմբեր երբեք դա չեն անում (այսինքն՝ *Quakers*), մյուսները դա ամեն շաբաթ են անում: Այդ քրիստոնեական խմբերը, որոնք Տիրոջ Ընթրիքի վերաբերյալ սրբազան տեսակետ ունեն, ակնհայտորեն այն դարձնում են հերթական (շաբաթական) և կենտրոնական իրադարձություն: Պաղեստինյան վաղ շրջանի հավատացյալներն այն տարին մեկ անգամ են պահել կապված Չատկի հետ (այսինքն, Էբիոնիտես, Օրիգեն և Եպիփանես): Այն քրիստոնյաները, ովքեր նեարդայնանում էին կրկնվող կրոնական ծեսերից, կորցնում էին իրենց ազդեցությունն ու նշանակությունը և չէին տեսնում այն որպես շնորհքի աղբյուր, սովորաբար հաճախ ավելի քիչ էին պահում Տերունական Ընթրիքը (այսինքն՝ հարավային մկրտականների մեկ քառորդը):

11:25 «Այս բաժակը նոր ուխտն է» Այս նոր ուխտը, մասնավորապես, հիշատակվում է Եր. 31: 31-34 (նկարագրված Եզ. 36:22-38): Հունարեն ուխտ տերմինը սկզբում նշանակում էր «կտակ, կամք» կամ «վերջին վկայություն», բայց այստեղ իմաստը արտացոլում է Սեպտուագինդի բառի օգտագործումը որպես «ուխտ»:

«Նոր ուխտի» գաղափարը պետք է որ ցնցեր հրեա ժողովրդին: Նրանք հավատում էին Մովսիսական ուխտի հարատևությանը: Երեմիան ստիպված էր հիշեցնել նրանց, որ ՅԱՀՎԵԻ ուխտերը պայմանավորված էին հավատքից բխող ապաշխարության արձագանքով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒՒՏ

SPECIAL TOPIC: COVENANT

Հին Կտակարանյան *berith* տերմինը (BDB 136, KB 157), «ուխտ», հեշտ չէ սահմանել: Եբրայերենով համապատասխանող ԲԱՅ չկա: Ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու բոլոր փորձերն անհիմն են եղել: Հնարավոր է, ամենալավ կանխատեսումը «կտրել» է (BDB 144) նշելով կենդանիների զոհաբերությունը, որ ուղեկցում է ուխտերին (տես Ծննդ. 15: 10,17): Այնուամենայնիվ, գաղափարի ակնառու կենտրոնը ստիպեց գիտնականներին ուսումնասիրել բառի օգտագործումը՝ որոշելու համար նրա ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը այն միջոցն է, որով մեկ ճշմարիտ Աստվածը (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ) գործ է ունենում Իր մարդ ստեղծագործության հետ: Ուխտի, պայմանագրի կամ համաձայնության գաղափարը կարևոր է՝ հասկանալու աստվածաշնչյան հայտնությունը: Աստծո սուվերենության և մարդու ազատ կամքի միջև լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Որոշ ուխտեր հիմնված են բացառապես Աստծո բնույթի և գործողությունների վրա:

1. ստեղծագործությունը (տես Ծննդոց 1-2)
2. պահպանությունը և խոստումը Նոյին (տես Ծննդոց 6-9)
3. Աբրահամի կանչը (տես Ծննդոց 12)
4. ուխտը Աբրահամի հետ (տես Ծննդոց 15)

Մակայն ուխտի բնույթը պահանջում է արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվեր Աստծուն և չուտեր Եդեմի պարտեզի ծառից
2. հավատքով Նոյը ջրից հեռու հսկայական նավ պետք է կառուցեր և հավաքեր կենդանիներին
3. հավատքով Աբրահամը պետք է թողներ իր ընտանիքը, հետևեր Աստծուն և հավատար ասպագա սերունդներին
4. հավատքով Մովսեսը իսրայելացիներին Եգիպտոսից դուրս բերեց դեպի Սինա լեռը և ստացան կոնկրետ ուղեցույցներ կրոնական և հասարակական կյանքի համար, օրհնությունների և անեծքների խոստումներով (տես Ղև. 26; 2 Օր. 27-28)

Այս նույն լարվածությունը՝ Աստծո հարաբերությունը մարդու հետ երևում է «նոր ուխտի» մեջ (տես Եր. 31: 31-34; Եր. 7:22; 8: 6,8,13; 9:15; 12:24): Լարվածությունը հստակ երևում է համեմատելով Եզ. 18:31-ը Եզ. 36: 27-38-ի հետ (ՅԱՀՎԵԻ գործողությունը): Արդյո՞ք ուխտը հիմնված է Աստծո ողորմած գործողությունների վրա, թե մարդու արձագանքի: Մա տաք խնդիր է Հին Ուխտի և Նոր Ուխտի միջև: Երկուսի նպատակն էլ նույնն է.

1. ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերությունների վերականգնումը, որը կորել էր Ծննդոց 3-ում
2. արդար մարդկանց հաստատումը, որոնք արտացոլում են Աստծո կերպարը:

Երեմիա 31: 31-34- ի նոր ուխտը լուծում է լարվածությունը՝ հանելով մարդու բաժինը որպես ընդունման միջոց: Աստծո օրենքը դառնում է ներքին ցանկություն արտաքին իրավական կողմի փոխարեն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, բայց մեթոդաբանությունն է փոխվում: Մեղավոր մարդկությունն ասպացուցեց, որ չի կարող արտացոլել Աստծո պատկերը: Խնդիրը ոչ թե Աստծո ուխտն էր, այլ մարդու մեղավորությունն ու թուլությունը (Ծննդոց 3; Հռոմեացիս 7; Գաղատացիս 3):

Նույն լարվածությունը Հին Կտակարանի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև մնում է նաև Նոր Կտակարանում: Փրկությունը բացարձակապես ձրի է Հիսուս Քրիստոսի կատարած գործի շնորհիվ, բայց այն պահանջում է ապաշխարություն և հավատք (ինչպես նախապես, այնպես էլ շարունակաբար, տես Հատուկ Թեմա: Հավատքը Նոր Կտակարանում): Հիսուսն Իր նոր հարաբերությունները հավատացյալների հետ անվանեց «նոր ուխտ» (տես Մատթ. 26:28; Մարկ. 14:24; Ղուկ. 22: 20; 1 Կոր. 11:25): Գոյություն ունի օրինական հոչակում (դատական) և Քրիստոսանմանության կոչ (տես Մատթ. 5:48; Հռ. 8: 29-30; 2 Կոր. 3:18, 7: 1; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 4:13; 1 Թեա. 3:13; 4: 3,7; 5:23; 1 Պետ. 1:15), ընդունման մասին սահմանվող հայտարարություն (Հռ. 4) և հրամայական կոչ սրբության (Մատթ. 5:48): Հավատացյալները չեն փրկվում իրենց գործերով, այլ հնազանդվելով (տես Եփ. 2: 8-10; 2 Կոր. 3: 5-6): Բարեպաշտ կյանքը դառնում է փրկության ապացույց, այլ ոչ թե փրկության միջոց (տես Հակոբոս և 1 Հովհաննես): Սակայն հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ: Այս լարվածությունը հստակ երևում է Նոր Կտակարանի նախազգուշացումներից (տես Հատուկ Թեմա: Ուխտադրություն):

- **«իմ արինովը»** Այս խոսքը վերաբերում է Հիսուսի զոհաբերական մահվան հրեական գաղափարին (տես 2 Կոր. 5:21): Արյունը Հին Կտակարանյան եբրայերեն իդիոմա է, որը վերաբերում է Աստծուն տրված զոհին (տես Ղև 17:11,14; 2 Օր. 12:23): Առաջին ուխտը վավերացվեց թափված արյունով (տես Ելից 24:8):

11:26

Արևելահայերեն «քանի անգամ որ ուտեք... խմեք»
 Արևմտահայերեն «քանի անգամ որ ուտեք... խմեք»

NASB, NKJV, NRSV «Որքան հաճախ ուտեք ...խմեք»
 TEV «Որ ամեն անգամ, երբ դուք ուտեք ...խմեք»
 NJB «Երբ ուտում եք...խմում»

Ուշադրություն դարձրեք, որ Նոր Կտակարանում այստեղ կամ մեկ ուրիշ տեղ կոնկրետ ժամանակ նշված չէ: Գործք Առաքելոցում Տիրոջ ընթրիքը բնութագրող արտահայտությունը՝ «հաց կտրել», որն օգտագործվում է որպես (1)ամենօրյա փորձառություն (2: 42,46) կամ (2) Կիրակնօրյա պաշտամունք (20: 7,11)

Այնուամենայնիվ, արտահայտությունը նաև օգտագործվում է սովորական կերակուրի համար էլ (27: 34-35):

- **«Տիրոջ մահը պատմեցեք»** Սա հստակ ցույց է տալիս Քրիստոսի մահվան զոհաբերության կողմը: Տիրոջ ընթրիքը հետադարձ հայացք է Քրիստոսի մահվանը:
- **«մինչև որ նա կ'գայ»** Տիրոջ Ընթրիքը նշանակում է նայել առաջ դեպի Երկրորդ Գալուստը (տես 1 Կոր. 1: 7; 4: 5; 11:26; Մարկ. 14:25):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 11:27-32
²⁷Ուրեմն ով որ այս հացն ուտե՛ կամ Տիրոջ բաժակը խմե՛ անարժանութեամբ, նա պարտական կ'լինի Տիրոջ մարմնին եւ արիւնին: ²⁸Ուրեմն թող մարդ փորձէ իր անձը, եւ ապա այն հացիցն ուտե՛ եւ այն բաժակիցը խմե՛: ²⁹Որովհետեւ անարժանութեամբ ուտողը եւ խմողը իր անձի համար դատաստան է ուտում եւ խմում, որ չէ որոշում Տիրոջ մարմինը: ³⁰Նորա համար էլ ձեր միջումը շատ հիւանդներ եւ ցաւագարներ կան. Եւ շատեր էլ ննջած են: ³¹Որովհետեւ եթէ մեր անձերը դատեինք, չէինք դատապարտուի: ³²Բայց դատուելով Տերիցը խրատվում ենք.Որ աշխարհքի հետ չ'դատապարտուինք:

11:27

Արևելահայերեն «Ուրեմն ով որ այս հացն ուտե՛ կամ Տիրոջ բաժակը խմե՛»
Արևմտահայերեն «Ուստի ով որ այս հացը ուտե կամ Տերոջը գաւաթը խմե՛»

NASB, NKJV, NRSV «ով որ հաց է ուտում կամ խմում Տիրոջ բաժակից»

KJV «Ով այս հացն ուտում է և խմում Տիրոջ այս բաժակից»

TEV «որ եթե ձեզանից մեկը ուտում է Տիրոջ հացը կամ խմում նրա բաժակից»

NJB «Ուրեմն ով որ ուտում է հացը, խմում է Տիրոջ բաժակից»

1 Կոր. 11:27 «և» -ը բնագրում չկա, բայց կա 1 Կոր. 11:28 և 29: «Կամ»-ը կա հունարեն տեքստում: King James Version- ի թարգմանիչները վախենում էին հռոմեական կաթոլիկ հասկացությունից, որտեղ քահանան գինի էր խմում, իսկ հասարակ մարդը՝ հաց, միտումնավոր սխալ թարգմանեց այս համարը: NKJV- ը ուղղել է այս միտումնավոր սխալ թարգմանությունը (տես Bart Ehrman, *The Orthodox Corruption of Scripture*, էջ 154):

Արևելահայերեն «անարժանութեամբ»

Արևմտահայերեն «անարժանաբար»

NASB, NKJV, NRSV «անարժանորեն»

TEV «այն ձեով, որ անարգում է նրան»

NJB, Peshitta, REB «անարժանաբար»

Կոնտեքստում սա նշանակում է, որ դա վերաբերում է եկեղեցու խափանված միասնությանը, որը ստեղծվել է պառակտող խմբերի ամբարտավանության և հպարտության պատճառով, սակայն ոմանք հասկացել են, որ դա վերաբերում է ճիշտ հոգևոր վերաբերմունքին, երբ մոտենում են Տիրոջ ընթրիքին (տես Եբր. 10:29):

11:28 «Ուրեմն թող մարդ փորձե՛ իր անձը» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: «Քննել, փորձել» տերմինն ունի «փորձել՝ հավանություն ստանալու համար» իմաստը: Տես Հատուկ Թեմա: «Փորձել» հունարեն տերմինները 1 Կոր. 3:13: Մի առումով բոլոր քրիստոնյաներն անարժան են, որովհետև բոլորը ունեն և շարունակում են մեղք գործել: Այս կոնտեքստում այն մասնավորապես վերաբերում է Կորնթոսի եկեղեցու որոշ մարդկանց ոչ միաբան և բառակտող հոգիներին (տես 2 Կոր. 13:5):

11:29

Արևելահայերեն «իր անձի համար դատաստան է»

Արևմտահայերեն «իր անձին դատապարտութիւնը»

NASB «եթե նա ճիշտ չի դատում»

NKJV «չի հասկանում Տիրոջ մարմինը»

NRSV «առանց մարմնի մասին մտահոգվելու»

TEV «եթե չես ճանաչում Տիրոջ մարմնի իմաստը»

NJB «առանց մարմնի ճանաչման»

«Նրա մարմինը», կարծես թե, չի վերաբերում (1) Հիսուսի ֆիզիկական մարմնին կամ 2) մասնակիցներին, այլ Եկեղեցուն՝ որպես խումբ (տես 1 Կոր. 10:17; 12: 12-13,27): Խնդիրը ոչ միաբան լինելն է: Գերադասության կամ դասակարգի տարբերությունների ոգին ոչնչացնում է հաղորդակցությունը:

- **«դատաստան»** տես ծանոթագրություն 1 Կոր. 4: 7 և Հատուկ Թեմա 1 Կոր. 10:29

11:30 Պողոսը հաստատում է պարզ լեզվով, որ եկեղեցու միասնությունը խախտող հավատացյալները կարող են տառապել ժամանակավոր ֆիզիկական հետևանքներից, նույնիսկ կարող են մահանալ (տես 1 Կոր. 3:17): Սա ուղղակիորեն կապված է Քրիստոսի մարմնի, եկեղեցու, Աստծո ժողովրդի հանդեպ հարգանքի բացակայության հետ (տես Գործք 5; 1 Կոր. 5: 5; 1 Տիմ. 1:20):

11:31 «Եթե» Սա երկրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը կոչվում է «հակառակ փաստի»: Այն պետք է թարգմանվի, «եթե մեզ ճիշտ էին դատել, որը մենք չենք արել, ապա մենք չպետք է դատվենք, որ մենք ենք»: Տես ծանոթագրություն 1 Կոր. 4: 7:

11:32 «Բայց դատուելով Տերիցը խրատվում ենք» Դժվար է իմանալ, թե երբ են քրիստոնյաները տառապում, քանի որ

1. նրանք ապրում են ընկած աշխարհում
2. նրանք քաղում են իրենց մեղավոր գործողությունների հետևանքները
3. նրանք փորձվում են Տիրոջ կողմից՝ հոգևոր հասունության համար (տես Եբր. 5: 8)

Աստված փորձում է և դաստիարակում (տես Եբր. 12: 5-11): Դա վկայում է Նրա սիրո և մեր ընտանեկան կարգավիճակի մասին:

- **«Որ աշխարհի հետ չդատապարտուինք»** Աստծո եկեղեցուն վնասող հավատացյալների ժամանակավոր դատաստանը կարող է լինել սիրո գործողություն, փրկելով նրանց ավելի խիստ պատժից, կապված եկեղեցու կործանման հետ (տես 1 Կոր. 3: 10-17):

Ես սիրում եմ George Ladd in *A Theology of the New Testament* մեջբերումը,

«Աշխարհը նաև ունի իր կրոնը, որը մարդկանց պահում է ասկետիզմի և օրինականության ստրկության մեջ, որը կարող է ունենալ իմաստության տեսք և նպաստում է նվիրվածությանը և ինքնակարգապահությանը, սակայն, ի վերջո, չի կարող ապահովել լուծում բարոյական երկրնտրանքի համար, որին հանդիպում է մարդը (Կող. 2: 20): Այս տեսանկյունից նայելով, աշխարհն Աստծո դատաստանի տակ է (1 Կոր. 11:32) և հաշտության կարիք ունի (2 Կոր. 5:19; Հռ.11: 15)» (էջ 399):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 11:33-34

³³Ուրեմն, եղբարքս, երբոր ժողովուիք ուտելու համար, իրար սպասեցէք: ³⁴Ապա եթէ մէկը սոված է՝ թող իր տանն ուտէ. Որ դատապարտութեան համար չժողովուիք. Բայց ուրիշ բաներն՝ երբոր կ'գամ՝ այն ժամանակ կ'պատուիրեն:

11:33 «երբոր ժողովուիք ուտելու համար, իրար սպասեցէք» Սա վերաբերում է 1 Կոր.11:21: Նրանք վարվում էին որպես եսասեր անհատներ, այլ ոչ թե ընտանիք, մարմին: Նրանք տարբերվում էին Հիսուսի սիրո գործողությունից:

11:34 «եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

- **«թող իր տանն ուտէ»** Սա ներկա ներգործական հրամայական է: Եթե հավատացյալներն այնքան քաղցած են, որ իրենց պահում են ագրեսիվ, եսասիրական կերպով Տիրոջ Ընթրիքի ժամանակ, ապա նրանք պետք է բավարարեն իրենց քաղցը, նախքան սիրո ընթրիքին միանալը:

Արևելահայերեն «Բայց ուրիշ բաներն՝ երբոր կ'գամ՝ այն ժամանակ կ'պատուիրեն»

Արևմտահայերեն «Ուրիշ պատուերներ ձեզի եկած ատենս պիտի հաղորդեմ»

NASB «Մնացած հարցերը ես կկազմակերպեմ, երբ գամ»

NKJV «Իսկ մնացածը կկարգավորեմ, երբ ես գամ»

NRSV «Այլ բաների մասին, երբ ես գամ հանձնարարություն կտամ»

TEV «Ինչ վերաբերում է մյուս հարցերին, ես կկարգավորեմ նրանց, երբ ես գամ»:

NJB «այլ հարցերը ես պետք է կազմակերպեմ, երբ ես գամ»

Ուշադրություն դարձրեք, որ Աստված հարմար չի գտել փոխանցել մանրամասն նկարագրությունը, որը Պողոսը տվեց այս եկեղեցուն: Անորոշ է, թե դա վերաբերում է միայն Տիրոջ Ընթրիքին կամ այլ հարցերին: 1 Կորնթացիսի կառուցվածքը (պատասխանելով շատ անկապ հարցերի) ենթադրում է, որ դա արվում է: Տիրոջ Ընթրիքի էությունը ոչ թե պատարագի գրքում է գտնվում, այլ Հիսուս Քրիստոսի հետ հարաբերություններում: Կրոնական ծեսերի մանրամասները ոչ այնքան կարևոր են, որքան բարի սիրտը Աստծո հանդեպ, որը հիմնված է եկեղեցու հանդեպ սեր ունենալու վրա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Արդյո՞ք ժամանակակից քրիստոնյաները կրկնօրինակում են Նոր Կտակարանի եկեղեցու բոլոր ծեսերն ու ձևերը:
2. Ի՞նչ է 1 Կոր. 11: 2-16 ասում հրապարակային պաշտամունքի մեջ կանանց մասնակցությունը ղեկավարության դերում:
3. Ի՞նչն է քողը համապատասխանում այսօր:
4. Բացահայտեք առաջին դարի հռոմեական մշակույթի մեջ առանց քողի կանանց և քողով ծածկված տղամարդկանց խնդիրը:
5. Ո՞րն է Պողոսի հիմնական նպատակը՝ քննարկելով Տիրոջ Ընթրիքը 1 Կոր. 11-ում:
6. Ինչպե՞ս կբացատրեք 1 Կոր. 11:30-ը:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 12

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
				Վարվելակարգ Հանրային երկրպագության մեջ (11:2-14:40)
Հոգևոր պարզկներ	Հոգևոր պարզկներ. Բազմազանության միասնություն	Հոգևոր պարզկների բազմազանություն	Պարզկներ Սուրբ Հոգուց	Հոգևոր պարզկներ
12:1-3	12:1-11	12:1-3	12:1 12:2-3	12:1-3 զանազանությունը և պարզկների միասնությունը
12:4-11		12:4-11	12:4-11	12:4-11
Մեկ մարմին, շատ անդամներով	Միասնություն բազմազանություն մեկ մարմնում	Մարմինը պահանջում է անդամների զանազանություն	Մեկ մարմին շատ մասեր	Մարմնի նմանությունը
12:12-31ա	12:12-31	12:12-13 12:14-26 12:27-31	12:12-13 12:14-20 12:21-26 12:27-31ա 12:31բ	12:12-17 12:18-21 12:22-26 12:27-30

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՑԻՆ ՄՏՔԵՐ 1 ԿՈՐՆԹԱՅԻՍ 12:1-31

Ա. 11-14 գլուխները կազմում են մեկ գրական միավոր, որը խոսում է հավաքական պաշտամունքի մասին: Կորնթոսի տնային եկեղեցիներում շատ խնդիրներ կային: Պողոսը դիմում է այս բազմաթիվ հարցերին, որի մասին, ըստ երևույթին, եկեղեցին է իրեն գրել (տես 1 Կոր. 7:1,25; 8:1; 12:1; 16:1,12): Հավաքական պաշտամունքի հետ կապված հարցերը հետևյալն էին՝

1. ինչպես աղոթել և մարգարեանալ
 - ա. տղամարդը չճածկված
 - բ. կինը ծածկված
2. հպարտությունն ու չարաշահումը կապված հոգևոր պարզների հետ
3. ինչպես ունենալ պարզներ պաշտամունքի մեջ
 - ա. լեզուներով խոսողներ և թարգմանիչներ
 - բ. երգիչներ
 - գ. մարգարեներ

Բ. Հոգևոր պարզների հետ կապված երեք փորձություններ կան՝

1. գլուխ 12 - արդյո՞ք դրանք Քրիստոսակենտրոն միասնություն են բերում:
2. գլուխ 13 - արդյո՞ք դրանք սիրո դրոշմապատճառ են հանդիսանում:
3. գլուխ 14 - արդյո՞ք դրանք շինում են մարմինը:

Գ. Նոր Կտակարանում հոգևոր պարզների մի քանի ցանկ կա (տես Հռ. 12; 1 Կոր. 12-14; Եփ. 4:11; և 1 Պետ. 4:10-11): Ցանկերը նույնը չեն, և ոչ էլ պարզներն են նույնը: Նրանք ներկայացուցչական նմուշներ են, ոչ թե վերջնական ցուցակներ: Որոշ պարզներ գործում են հավաքական պաշտամունքի ժամանակ, բայց մյուսները կենտրոնանում են պաշտամունքի հանդիպումներից դուրս:

Շեշտը, որ Պողոսը դնում է հոգևոր պարզների վրա, զարմացնող է, բայց նա քիչ է խոսում այն մասին, թե ինչպես է մեկը գտնում կամ նույնացնում իր պարզը: Ես չեմ ցանկանում հաստատել մեր օրերում մշակված շատ «հոգևոր փորձություններ»: Նրանք փորձարկում են միայն Նոր Կտակարանում թվարկված պարզների համար: Ներկայացված պարզներից շատերը հստակ սահմանված չեն (այսինքն, Եփ. 4:11-ում առաջնորդության պարզներ): Առավել օգտակար ուղեցույցը, որը ես գտել եմ այս ոլորտում *Affirming the Will of God* Paul Little-ի կողմից հաստատված IVP գրքույկն է: Նույն քրիստոնեական իմաստությունը, որն օգնում է մեզ գտնել Աստծո կամքը, օգնում է նաև բացահայտել մեր արդյունավետ պարզը ծառայության համար:

1. մասնավորապես աղոթեք

2. հարցրեք հասուն քրիստոնյաներին, ովքեր գիտեն ձեզ, և թե ինչ ուժեր են նրանք տեսնում ձեր մեջ
3. փնտրեք հնարավորության բաց դռներ՝ տարբեր բնագավառներ փորձելու համար
4. հետևեք ձեր սրտի ցանկություններին

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 12:1-3

¹Բայց հոգևոր պարզելների համար, եղբարք, չեմ կամենում որ չ'գիտենաք: ²Դուք գիտեք թե երբ որ հեթանոս էիք, անձայն կուռքերի մօտ էիք տարվում ինչպես որ առաջնորդվում էիք: ³Նորա համար յայտնում եմ ձեզ, որ ոչ ով չ'կայ Աստուծոյ Հոգովը խօսող որ Յիսուսին նգովեալ ասէ. եւ ոչ ով չէ կարող Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ Հոգով Սրբով:

12:1 «Բայց» Սա 1 Կորնթացիսում կրկնվող մի արտահայտություն է, որը ցույց է տալիս, որ Պողոսը պատասխանում է եկեղեցու կոնկրետ հարցերին (տես 1 Կոր. 7:1,25; 8:1; 12:1; 16:1,12):

Արևելահայերեն «*հոգևոր պարզելների*»
 Արևմտահայերեն «*հոգևոր պարզելներուն*»

NASB, NKJV, Peshitta «*հոգևոր պարզելներ*»
 NRSV (footnote) «*հոգևոր անձ*»
 TEV «*Սուրբ Հոգու պարզները*»
 NJB, REB «*Հոգու պարզներ*»

Հունարեն տերմինը *pneuma*-ի սեռական հոլով, հոգնակի թիվն է: Սա կարող է վերաբերել մարդկանց, պարզներին կամ հոգևորությանը (այսինքն, հոգևոր նշանակություններ, տես 1 Կոր. 14:1):

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ
SPECIAL TOPIC: SPIRIT IN THE BIBLE

- I. Հին Կտակարան (ruah, BDB 924, KB 1197; տես Հատուկ Թեմա: Շունչ, Քամի, Հոգի [ՀԿ])
 - Ա. Մոնոթեիստիկ Աստծո գործողությունները (այսինքն, Հոգին, որն օգտագործվում էր Հին Կտակարանում մոտ 90 անգամ)
 1. դրական, Ծննդոց 1: 2
 2. բացասական, 1 Թագ. 16: 14-16,23; 3 Թագ. 22: 21-22; Ես. 29:10
 - Բ. Աստծո կողմից տրված կյանքի ուժը մարդկության մեջ (այսինքն, Աստծո շունչը, տես Ծննդ. 2: 7)
 - Գ. Մեպտուազինդը *ruah* թարգմանում է *pneuma* (օգտագործվում է մոտ 100 անգամ LXX-ում)
 - Դ. Ավելի ուշ ռաբիական գրքերում, ապոկալիպտիկ գրվածքում և Մեռյալ ծովի գրառումներում, որոնց վրա ազդել է զրադաշտականությունը, *pneuma* օգտագործվում է հրեշտակների և դևերի համար
- II. Հունարեն տերմինները
 - Ա. *pneō*, փչել
 - Բ. *pnoē*, քամի, շունչ
 - Գ. *pneuma*, հոգի, քամի

- Դ. *pneumatikos*, վերաբերում է հոգուն
- Ե. *pneumatikōs*, հոգևորապես, հոգեպես
- III. Հունական փիլիսոփայական ֆոնը (*pneuma*)
- Ա. Արիստոտելը օգտագործեց այս տերմինը որպես կյանքի ուժ, որը զարգանում է ծննդից մինչև ինքնադաստիարակումը:
- Բ. Ստոյիկյանները օգտագործեցին տերմինը որպես հունանիշ *psuchē*-ին (շունչ), նույնիսկ *nous* (միտք)՝ հինգ ֆիզիկական զգայարանների և մարդկային ինտելեկտի իմաստով:
- Գ. Հունական մտածելակերպում տերմինը դարձավ համարժեք աստվածային գործողության (այսինքն, գուշակություն, մոգություն, օկուլտիզմ, մարգարեություն և այլն):
- IV. Նոր Կտակարան (*pneuma*, տես Հատուկ Թեմա: Հոգին Նոր Կտակարանում)
- Ա. Աստծո հատուկ ներկայությունը, գորությունը և սպառազինումը
- Բ. Հոգին կապված է Աստծո գործունեության հետ եկեղեցում (հիմնականում Հովհաննեսի գրվածքներում)
1. մարգարեություն
 2. հրաշքներ
 3. համարձակություն քարոզելու ավետարանը
 4. իմաստություն (այսինքն, ավետարանը)
 5. ուրախություն
 6. բերում է նոր ժամանակաշրջանը
 7. դարձի գալ (այսինքն, քաշել և բնակվել)
 8. Քրիստոսանմանություն
 9. հատուկ պարզներ ծառայության համար
 10. աղոթում է հավատացյալների համար
- Հոգին արթնացնում է մարդկության ցանկությունը Աստծո հետ հաղորդակցվելու համար, որի համար նրանք ստեղծվել են: Այս հաղորդակցությունը հնարավոր է Հիսուսի, Աստծո Մեսիայի անձնավորության և աշխատանքի շնորհիվ (տես Հատուկ Թեմա: Մեսիա): Նոր հոգևոր զարթոնքը հանգեցնում է ապրելու, ծառայելու և վստահելու Քրիստոսին:
- Գ. Դա կարելի է լավագույնս հասկանալ մի կողմից որպես հոգևոր շարունակություն Սուրբ Հոգու հետ, իսկ մարդկությունը որպես ֆիզիկական արարած այս մոլորակի, մյուս կողմից էլ Աստծո պատկերով ստեղծված հոգևոր արարած:
- Դ. Պողոսը Նոր Կտակարանյան հեղինակ է, որը զարգացնում է Հոգու / հոգու աստվածաբանությունը:
1. Պողոսն օգտագործում է Հոգին՝ հակադրելով մարմնին (այսինքն, մեղավոր բնությանը)
 2. Պողոսն օգտագործում է հոգին՝ հակադրելով ֆիզիկականին
 3. Պողոսն օգտագործում է Հոգին / հոգին՝ հակադրելով մարդկային մտածողությանը, գիտակցումին և էությանը
- Ե. Որոշ օրինակներ 1 Կորնթացիսից
1. Սուրբ Հոգին, 1 Կոր. 12: 3
 2. Աստծո գորությունն ու իմաստությունը փոխանցվեց Սուրբ Հոգու միջոցով, 1 Կոր. 2: 4-5
 3. Աստծո գործողությունները հավատացյալի մեջ
 - ա. նոր մտածելակերպ, 1 Կոր. 2:12; 14: 14,32
 - բ. նոր տաճար, 1 Կոր. 3:16; 6: 19-20
 - գ. նոր կյանք (այսինքն, բարոյականություն), 1 Կոր. 6: 9-11

- դ. մկրտությամբ խորհրդանշված նոր կյանքը, 1 Կոր. 12:13
 - ե. մեկ Աստծո հետ (այսինքն, դարձի գալ), 1 Կոր. 6:17
 - զ. Աստծու իմաստությունը, ոչ թե աշխարհի իմաստությունը, 1 Կոր. 2: 12-15; 14: 14,32,37
 - է. յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր պարզև ծառայության համար, 1 Կոր. 12 և 14
4. հոգևորը ի տարբերություն ֆիզիկականի, 1 Կոր. 9:11; 10:3; 15:44
 5. հոգևոր ոլորտը ի տարբերություն ֆիզիկական ոլորտի, 1 Կոր. 2:11; 5:5; 7:34; 15:45; 16:18
 6. մարդու հոգևոր և ներքին կյանքին վերաբերող մի ձև, որը տարբերվում է ֆիզիկական մարմնից, 1 Կոր. 7:34

2. Մարդիկ ստեղծագործությունից ապրում են երկու ոլորտներում (այսինքն՝ ֆիզիկական և հոգևոր): Մարդը Աստծո հետ մտերմիկ հարաբերությունից հեռացավ (Օննոց 3): Քրիստոսի կյանքի, ուսմունքների, մահվան, հարության և խոստացված վերադարձի միջոցով, Հոգին գործում է մեղավոր մարդկանց՝ հավատալու ավետարանին (տես Հովհ. 6:44-65), որտեղ նրանք վերականգնվում են Աստծո հետ հաղորդակցվելու համար: Հոգին Երրորդության այն անձն է, որը բնութագրում է արդարության նոր դարաշրջանը: Հոգին Հայր Աստծո գործակալն է և Որդու փաստաբանը այս «Ժամանակաշրջանում» (տես Հատուկ Թեմա: Հիսուսը և Հոգին): Խնդիր կա, որովհետև նոր ժամանակաշրջանը ժամանակի ընթացքում է եղել, մինչդեռ մեղավոր ապստամբ հին ժամանակաշրջանը դեռ գոյություն ունի: Հոգին հինը փոխակերպում է նորի, նույնիսկ այն ժամանակ, երբ երկունս էլ գոյություն ունեն:

▪ **«եղբարք»** Պողոսը հաճախ օգտագործում է «եղբայրք» բառը՝ ազդարարելու առարկաների փոփոխությունը: Այս առաջին համարն ունի առարկայի փոփոխության Պողոսի կոտեքստային երեք մտքեր՝ 1) «բայց»; 2) «եղբայրք»; և 3) «չեմ կամենում, որ չզիտենաք»: 11-14 գլուխները վերաբերում են հավաքական երկրպագության տարբեր ասպեկտներին:

Նամակները, որը Պողոսն ուղարկեց Կորնթոսին այնքան դժվար էին, որ նա հաճախ «եղբարք» էր օգտագործում, հիշեցնելով Աստծո ընտանիքում իրենց միասնության մասին (տես 1 Կոր. 1:10,11,26; 2:1; 3:1; 4:6; 6:5,8; 7:24,29; 5:12; 9:5; 10:1; 11:2,33; 12:1; 14:6,20,26,39; 15:1, 6,50,58; 16:11,12,15,20; 2 Կոր. 1:8; 8:1,23; 9:3,5; 11:9; 13:11):

▪ **«չեմ կամենում որ չզիտենաք»** Սա Պողոսի գրվածքներում հերթական արտահայտությունն է (տես Հռ. 1:13; 11:25; 1 Կոր. 10:1; 11:3; 12:1; 2 Կոր. 1:8; 1 Թես. 4:13): Դա կարևոր նոր թեմա ներկայացնելու նրա ձևերից մեկն էր:

12:2 «հեթանոս էիք» Սա անկատար սահմանական է: Այս հավատացյալները մի ժամանակ հեթանոսներ էին, բայց այժմ նրանք պետք է թողնեն այս մտածելակերպը և դրա հետ կապված գործունեությունը: Կորնթոսի եկեղեցին խորապես ազդվել է (1) հեթանոսական պաշտամունքի պրակտիկաների և 2) հռոմեական մշակույթի կողմից: Նրանք երկունս էլ ավետարանը գունազարդում էին ոչ պատշաճ ձևերով:

Արևելահայերեն **«տարվում էիք»**
 Արևմտահայերեն **«կը տարուէիք»**

NASB **«Դուք սխալվում եք»**
 NKJV **«վարվելով ... ինչքանով որ առաջնորդվում եք »**

NRSV «դուք գայթակղվեցիք և մոլորվեցաք»

TEV «դուք սխալվում եք շատ առումներով»

NJB «դուք անդիմադրելի կերպով այլայլված եք»

Այս արտահայտությունն ունի երկու առնչվող բայեր «առաջնորդել» արմատից: Առաջինը՝ վերարտադրված անկատար կրավորական սահմանականն է, իսկ երկրորդը՝ ներկա կրավորական դերբայն է, « տարվում էիք, ինչպես որ առաջնորդվում էիք»:

Երկրորդ տերմինը նույնպես ուժեղացվում է *apo* նախդիրից, որը ենթադրում է «առաջնորդել որպես բանտարկյալ» (տես Մարկ. 14:44; 15:16): Այս նախկին հեթանոսները շարունակաբար վերահսկվում էին դիվական ուժերի կողմից՝ իրենց պաշտամունքի գործողություններում (տես 1 Կոր. 10.20), նախքան նրանց դարձի գալը:

▪ **«անձայն կուռքերի մոտ»** Այս խոսքը վերաբերում է այն աստվածներին, որոնք չէին կարող խոսել կամ օգնել (տես Ես. 46:5-7; Եր. 10:5; Ամբ. 2:18-19), ի տարբերություն Սուրբ Հոգու:

12:3 «ոչ ով չ'կայ Աստուծոյ Հոգովը խօսող» Սա եբրայերեն իդիոմա է՝ ներշնչման համար (տես 1 Թագ. 10:10; 19:23-24): Դա հիշեցնում է հավատացյալներին, ոչ բոլորն են, ովքեր պնդում են, որ խոսում են Աստծո անունից: Յուրաքանչյուր հավատացյալ պետք է գնահատի նրանց, ովքեր պնդում են, որ խոսում են պատգամը Աստծո անունից (տես 1 Կոր. 12:10; Մարկ. 18:20-22; Մաթ. 7; 1 Հովհ. 4:1-3):

Արևելահայերեն «Յիսուսին նզովեալ ասէ»

Արևմտահայերեն «Յիսուսին նզովեալ ըսէ»

NASB «Հիսուսը անիծվում է»

NKJV «կոչում էին Հիսուսին նզովված»

NRSV «Թող Հիսուսը անիծվի»

TEV, NJB «անեծքը Հիսուսի վրա»

Սա շոկային հայտարարություն է: Ինչ² ու է ինչ-որ մեկը (բացառությամբ ավանդական հրեաների), ով ասում է, որ խոսում է Աստծո անունից, ասում է սա: *Anathema* տերմինը ինքնին ունի Հին Կտակարանյան ֆոն (այսինքն, եբրայերեն, *herem*): Դա վերաբերում է Սուրբ Պատերազմի գաղափարին, որտեղ քաղաքը նվիրված էր Աստծուն և, այդ իսկ պատճառով այն սուրբ է: Սա նշանակում էր, որ այն ամենը, ինչը շնչավոր էր, մարդը կամ կենդանին, պետք է մահանար (տես Հեսու 6:17; 7:12):

Վարկածներ կան թե ինչպես է այս տերմինն օգտագործվել Կորնթոսում՝

1. այն ունի հրեական միջավայր, որը վերաբերում է ժողովարանի երդմանը (տես Գործք 26:11-ը, այսինքն, ավելի ուշ, ռաբբիական անեծքների ձևակերպումները, որոնք օգտագործվել են քրիստոնյաներին ժողովարանից հեռացնելու համար): Անդամ մնալու համար մարդը պետք է մերժեր կամ անիծեր Նազովրեցի Հիսուսին:
2. այն ունի հռոմեական միջավայր, որը վերաբերում է կայսրի երկրպագությանը, որտեղ միայն Կեսարը կարող էր «Տեր» կոչվել:
3. այն ունի հեթանոսական երկրպագության միջավայր, որտեղ օգտագործելով աստծո անունը՝ անեծքներ էր ասվում մարդկանց վրա: Այն կարող է թարգմանվել, «Թող Հիսուսը անիծի _____» (տես 1 Կոր. 16:22):
4. որ ինչ որ մեկը այն արտահայտությունը կապում էր Հիսուսի աստվածաբանական գաղափարի հետ, ով կրեց Հին Կտակարանյան անեծքը մեզ համար (տես 2 Օր. 21:23; Գաղ. 3:13):
5. Կորնթոսի մասին վերջին ուսումնասիրությունները (տես ծանոթագրություն #1 էջ 164 Bruce Winter's *After Paul Left Corinth*) ամրագրում են Կորնթոսի հնագույն ակրապոլիսում

հայտնաբերած անեծքի տախտակները: Աստվածաշնչի գիտնականները ենթադրել են, որ «է» կապակցող բայը պետք է լինի «Հիսուսն անիծվեց» արտահայտության մեջ, բայց այս հնագիտական փաստերը հստակ ցույց են տալիս, որ Կորնթոսից այս առաջին դարի հռոմեական ժամանակաշրջանի անեծքներում բայը բացակայում է (ինչպես անում են որոշ անեծքներ LXX-ում 2 Օր. 22: 15-20), ինչպես 1 Կոր. 12: 3: Հետագա հնագիտական ապացույցներում փաստ կա, որ հռոմեական Կորնթոսի առաջին դարի քրիստոնյաները օգտագործել են անեծքի բանաձևեր թաղման անեծքների մեջ (այսինքն՝ բյուզանդական ժամանակաշրջան) հայտնաբերված քրիստոնեական գերեզմանների վրա: (JH Kent, *The Inscriptions*, 1926-50: Princeton: Classical Studies of American School, 1966, հատոր 8:3, էջ 644):

Եկեղեցու որոշ հատվածներ վերադարձան հեթանոսական անեծքներին և Հիսուսի անունով անիծում էին եկեղեցու ուրիշ անդամներին: Ոչ միայն միջոցն է խնդիրը, այլ նաև նողկալի շարժառիթը: Սա այս եկեղեցու ներսում տեղի ունեցող լարվածության ևս մեկ օրինակ է: Պողոսը ցանկանում է, որ նրանք կառուցեն եկեղեցին, ամրացնեն եկեղեցին: Նրանք ուզում են անիծել եկեղեցու մի մասը:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԵԾՔ (anathema)

SPECIAL TOPIC: CURSE (anathema)

I. Հին Կտակարան
 Եբրայերեն մի քանի բառ կա «անեծք» բառի համար: *Herem* (BDB 356, KB 353) օգտագործվել է Աստծուն մի բան տալու համար (տես LXX- ը թարգմանում է որպես *anathema*, BAGD 54, Ղև. 27:28): Այն սովորաբար ընդգրկում էր նյութի ոչնչացումը, քանի որ այն չափազանց սուրբ էր մարդկության համար (տես 2 Օր. 7:26; Հեսու 6:17-18; 17:12): Դա «սուրբ պատերազմ» հասկացության մեջ օգտագործված տերմին էր: Աստված Հեսուին ասաց, որ ոչնչացնի քանանացիներին: Երիբովը առաջին հնարավորությունն էր, այս սուրբ կործանման / մաքրման «առաջին պտուղները»:

II. Նոր Կտակարան
 Նոր Կտակարանում *anathema* և դրա հետ կապված ձևերը օգտագործվել են մի քանի իմաստներով.

- Ա. որպես նվեր կամ ընծա Աստծուն (տես Ղուկ. 21: 5)
- Բ. որպես մահվան երդում (տես Գործք 23:14)
- Գ. անիծել և երդվել (տես Մարկ. 14:71)
- Դ. Հիսուսին վերաբերող անեծքի բանաձևը (տես 1 Կոր. 12: 3)
- Ե. որևէ մեկին կամ որևէ բան տալը Աստծո կողմից դատաստանի կամ ոչնչացման համար (տես Հռ. 9: 3; 1 Կոր. 16: 22; Գաղ. 1: 8-9)

Վերոնշյալ Դ. կետը շատ հակասական է: Ես ընդգրկել եմ իմ գրառումները 1 Կոր. 12: 3: «Հիսուսն անիծվեց» սա շոկային հայտարարություն է: Ինչո՞ւ է ինչ-որ մեկը (բացառությամբ ավանդական հրեաների), ով ասում է, որ խոսում է Աստծո անունից, ասում է սա: *Anathema* տերմինը ինքնին ունի Հին Կտակարանյան ֆոն (այսինքն, եբրայերեն, *herem*): Դա վերաբերում է Սուրբ Պատերազմի գաղափարին, որտեղ քաղաքը նվիրված էր Աստծուն և, այդ իսկ պատճառով այն սուրբ էր: Սա նշանակում էր, որ այն ամենը, ինչը շնչավոր էր, մարդը կամ կենդանին, պետք է մահանար (տես Հեսու 6:17; 7:12):

Վարկածներ կան թե ինչպես է այս տերմինն օգտագործվել Կորնթոսում՝

1. այն ունի հրեական միջավայր, որը վերաբերում է ժողովարանի երդմանը (տես Գործք 26:11-ը, այսինքն, ավելի ուշ, ռաբբիական անեծքների ձևակերպումները, որոնք օգտագործվել են քրիստոնյաներին ժողովարանից հեռացնելու համար): Անդամ մնալու համար մարդը պետք է մերժեր կամ անիծեր Նազովրեցի Հիսուսին:
2. այն ունի հռոմեական միջավայր, որը վերաբերում է կայսրի երկրպագությանը, որտեղ միայն Կեսարը կարող էր «Տեր» կոչվել:

3. այն ունի հեթանոսական երկրպագության միջավայր, որտեղ օգտագործելով աստծո անունը՝ անեծքներ էր ասվում մարդկանց վրա: Այն կարող է թարգմանվել, «Թող Հիսուսը անիծի _____» (տես 1 Կոր. 16:22):
4. որ ինչ որ մեկը այն արտահայտությունը կապում էր Հիսուսի աստվածաբանական գաղափարի հետ, ով կրեց Հին Կտակարանյան անեծքը մեզ համար (տես 2 Օր. 21:23; Գաղ. 3:13):
5. Կորնթոսի մասին վերջին ուսումնասիրությունները (տես ծանոթագրություն #1 էջ 164 Bruce Winter's *After Paul Left Corinth*) ամրագրում են Կորնթոսի հնագույն ակրապոլիսում հայտնաբերած անեծքի տախտակները: Աստվածաշնչի գիտնականները ենթադրել են, որ «է» կապակցող բայը պետք է լինի «Հիսուսն անիծվեց» արտահայտության մեջ, բայց այս հնագիտական փաստերը հստակ ցույց են տալիս, որ Կորնթոսից այս առաջին դարի հռոմեական ժամանակաշրջանի անեծքներում բայը բացակայում է (ինչպես անում են որոշ անեծքներ LXX-ում 2 Օր. 22: 15-20), ինչպես 1 Կոր. 12: 3: Հետագա հնեագիտական ապացույցներում փաստ կա, որ հռոմեական Կորնթոսի առաջին դարի քրիստոնյաները օգտագործել են անեծքի բանաձևեր թաղման անեծքների մեջ (այսինքն՝ բյուզանդական ժամանակաշրջան) հայտնաբերված քրիստոնեական գերեզմանների վրա: (JH Kent, *The Inscriptions*, 1926-50: Princeton: Classical Studies of American School, 1966, հատոր 8:3, էջ 644):

Եկեղեցու որոշ հատվածներ վերադարձան հեթանոսական անեծքներին և Հիսուսի անունով անիծում էին եկեղեցու ուրիշ անդամներին: Ոչ միայն միջոցն է խնդիրը, այլ նաև նողկալի շարժառիթը: Սա այս եկեղեցու ներսում տեղի ունեցող լարվածության ևս մեկ օրինակ է: Պողոսը ցանկանում է, որ նրանք կառուցեն եկեղեցին, ամրացնեն եկեղեցին: Նրանք ուզում են անիծել եկեղեցու մի մասը:

- **«Յիսուսին Տէր»** Սա վաղ եկեղեցու հավատքի խոստովանությունն էր (տես Հո. 10:9-13 և Գործք 2:21-ը մեջբերեց Հովել 2:33; նաև ծանուցում Փիլ. 2:11): Դա հաստատեց Հիսուսի աստվածությունը և Մեսիա լինելը:
- **«Եթէ ոչ Հոգով Սրբով»** Սուրբ Հոգու խնդիրն է հանդիմանել մեղավոր աշխարհը և մարդկանց բերել դեպի Քրիստոսը (տես Հովհ. 16:8-14): Ոչ մի մեղավոր մարդ չի կարող դառնալ Աստծուն կամ Քրիստոսին ինքնուրույն (տես Հովհ. 6:44-65): Սա ինքնիշխան Աստծո խորհուրդն է, ով սիրում է Իր պատկերով ստեղծված բոլոր մարդկությանը, սակայն Նրա ուխտի մանդատն այն է, որ նրանք պետք է արձագանքեն (և շարունակեն արձագանքել) ապաշխարության, հավատքի, հնազանդության, ծառայության և հաստատակամության մեջ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 12:4-11

⁴ Պարզելները զանազան են, բայց Հոգին նոյնն է: ⁵ Եւ պաշտօնները զանազան են, բայց Տէրը նոյնն է: ⁶ Եւ ներգործութիւնները զանազան են, բայց Աստուած նոյնն է, որ ամենը ամենքի մէջ ներգործում է: ⁷ Բայց ամեն մէկին տրուած է Հոգու յայտնութիւնը օգտի համար: ⁸Որովհետեւ մէկին Հոգուը տրուած է իմաստութեան խօսք. Եւ ուրիշին գիտութեան խօսք՝ նոյն Հոգու չափովը: ⁹Միւսին հաւատք նոյն Հոգովը. ուրիշին բժշկութեան պարզելներ նոյն Հոգովը: ¹⁰Ուրիշին զօրութիւնների ներգործութիւններ. եւ ուրիշին մարգարէութիւն. ուրիշին հոգիների ընտրութիւն. ուրիշին այլ եւ այլ լեզուներ. Ուրիշին լեզուների թարգմանութիւններ: ¹¹Բայց այս ամենը հէնց մի եւ նոյն Հոգին է ներգործում, ամեն մէկին բաժանելով ինչպէս կամենում է:

Արևելահայերեն «զանազան»
Արևմտահայերեն «զանազան»

NASB, NRSV, REB «բազմազանություն»
NKJV, Peshitta «բազմազանություններ»
TEV «տարբեր տեսակներ»
NJB «տարբեր»

Այս տերմինը նշանակում է (1) տարածել կամ (2) բազմազանություն (տես 1 Կոր. 12:4,5,6): 1 Կոր. 12: 4,5 և 6-ի միջև ակնհայտ գրական զուգահեռ կա, որոնք միավորում են Երրորդության բոլոր երեք անձանց գործը:

12:4-6 «Հոգին ... Տէրը ... Աստուած» Նշենք Երրորդության գործողությունը, որն ընդգծում է միասնությունը բազմազանության մեջ, ոչ թե միանմանության: Եկեղեցին պարզներով օժտված անհատների մի խումբ է: Մենք միմյանց կարիքն ունենք: Յուրաքանչյուր ոք կարևոր է: Յուրաքանչյուրն ունի պարզ ծառայության համար: «Երրորդություն» տերմինը աստվածաշնչային տերմին չէ, բայց գաղափարը կա: Տես Հատուկ Թեմա՝ Երրորդություն 1 Կոր. 2:10:

12:4 «Պարզեաները» Սա ուրիշ բառ է, քան 1 Կոր. 12:1-ում օգտագործվածը: Սա հունարեն *charisma* տերմինն է: Սա «*chairō*» տերմինի արմատից է, որը նշանակում է ուրախանալ կամ լի ուրախությամբ (տես 1 Կոր. 7:30; 13:6; 2 Կոր. 2:3; 6:10; 7:7,9,16-ը և *sun* բաղադրիչը 1 Կոր. 12:26 և 13:6): Դրանից բխում է մի քանի հասկացություն.

1. *chara* - ուրախություն, ցնծալով
2. *charis* - առատ ընծան (տես 1 Կոր. 16:3; 2 Կոր. 8:4,6)
 - ա. շնորհք (տես 1 Կոր. 1:4; 15:10)
 - բ. Շնորհակալություն, գոհություն (տես 1 Կոր. 15:57)
3. *charizomai*
 - ա. առատաձեռնորեն տվեք
 - բ. ներում (տես 2 Կոր. 2:7-10; 12:13)
 - գ. պարտքը չեղյալ համարել
4. *charisma* - ձրի պարզ (տես Հռ. 5:15,16; 6:23; 2 Կոր. 1:11) կամ Աստծո կողմից շնորհված զարդարանք (տես 1 Կոր. 12:4,9,28,30,31)

Աստված ձրի պարզներ տվեց Իր եկեղեցուն: Պարզները Քրիստոսի մարմինը կառուցելու և աճեցնելու համար են: Իրականում նրանք Քրիստոսի գործն են՝ բաժանված Իր հետևորդների միջև: Հավատացյալները պետք է միաբանեն իրենց պարզները սիրով և համագործակցեն միմյանց հետ այնպես, որ եկեղեցին կարողանա հաղթել և աշակերտել կորած աշխարհին (տես Մաթ. 28:19-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8):

12:5 «պաշտօնները» Սա հունարեն *diakonos* տերմինն է: Այն ունի մի քանի օգտագործում Նոր Կտակարանում:

1. *diakonos*
 - ա. ծառա (Մաթ. 20:28; 22:13; 23:11; Հովհ. 2:5)
 - բ. ծառայող/քարոզիչ (տես 1 Կոր. 3:5; 2 Կոր. 3:6; 6:4, 11:15(երկու անգամ),23)
2. *diakoneō*
 - ա. ծառայել (տես 1 Պետ. 4:11)
 - բ. սարկավազ (տես Հռ. 16:1; 1 Տիմ. 3:8,10,13; տես նաև Փիլ. 1:1)
 - գ. պաշտոնյա (տես Գործք 6:2, 2 Կոր. 3:3; 8:19,20)
3. *diakonia*

- ա. օգնություն ցուցաբերել (տես Գործք 6:1; 2 Կոր. 8:4; 9:1,12,13)
- բ. ծառայել ավետարանի համար (տես 1 Կոր. 12:5; 16:15; 2 Կոր. 4:1; 5:8; 6:3; 11:8)
- գ. Աստծո կողմից հայտնություն (տես 2 Կոր. 3:7,8,9)

Բանալի միտքն է ծառայել և օգնել կարիքավորներին (այսինքն, հոգևոր կամ ֆիզիկական): Աստված սպասագիտում է իր եկեղեցին՝ կորսված և կարիքավոր աշխարհին ծառայելու համար:

12:6

Արևելահայերեն «ներգործութիւնները .. ներգործում է»
Արևմտահայերեն «ներգործութիւնները .. կը ներգործէ»

- NASB «հետեւանքները .. ներգործում է»
- NKJV «գործունեությունը .. գործում է»
- NRSV «գործողությունները ... ակտիվացնում են»
- TEV «ունակությունները .. կարողությունը»
- NJB «գործունեությունը .. գործում է»

Սա խաղ է *energēs* տերմինից, որից մենք ստանում ենք անգլերեն էներգիա տերմինը: Նրա հիմնական իմաստն է արդյունավետորեն իրականացնել խնդիրը: Այս նախադասությունն ունի գոյական և համընկնող դերբայ (ներկա ներգործական): Պողոսը հաճախ օգտագործեց այս տերմինը իր Կորնթացիսի նամակների մեջ:

1. *energēs, energeia, energeō, energēma*, 1 Կոր. 4:12; 9:6; 12:6,10,11; 16:9,10; 2 Կոր. 1:6; 4:12
2. *ergon* և *sunergeō*, 1 Կոր. 3:13,14,15; 9:1; 15:58; 16:10; 2 Կոր. 6:1; 9:8; 11:15

Աստծո գործը արդյունավետ աշխատանք է: Այն իրականացնում է իր նպատակը: Հավատացյալները կանչված են ակտիվ ծառայության համար, բայց էներգիան և արդյունավետությունը Աստծուց է:

12:7

Արևելահայերեն «բայց ամեն մեկին տրուած է Հոգու յայտնութիւնը օգտի համար»
Արևմտահայերեն «բայց ամեն մեկուն Հոգիին յայտնութիւնը տրուած է բոլորին շահուն համար»

- NASB «Բայց յուրաքանչյուրին տրվում է Հոգու դրսևորումը ընդհանուր բարիքի համար»
- NKJV «Բայց Հոգու դրսևորումը տրվում է յուրաքանչյուրին, բոլորի շահույթի համար»
- NRSV «Յուրաքանչյուրին տրվում է Հոգու դրսևորումը ընդհանուր բարության համար»
- TEV «Հոգու ներկայությունը ինչ-որ կերպ ցույց է տրված յուրաքանչյուր մարդու՝ բոլորի բարօրության համար»:
- NJB «Յուրաքանչյուրին տրված Հոգու հատուկ դրսևորումը պետք է օգտագործվի ընդհանուր բարիքի համար»

Այս ճշմարտությունը շատ կարևոր է եկեղեցու կյանքի և ծառայության համար.

1. Յուրաքանչյուր հավատացյալ ունի ձրի տրված շնորհքի պարզ, տրված Հոգու կողմից, ծառայության համար ապաշխարության ժամանակ
 - ա. Յուրաքանչյուր հավատացյալ կարևոր է:
 - բ. Յուրաքանչյուր հավատացյալ ունի պարզ:
 - գ. Յուրաքանչյուր հավատացյալ ծառայող է:
2. Աստծո պարզի նպատակը ոչ թե անհատի բարձրացումն է, այլ ամբողջ մարմնի առողջությունն ու աճը: Մենք միմյանց կարիքն ունենք:

Այս ճշմարտությունը ծայրաստիճան անհրաժեշտ էր Կորնթոսի երկպառակտող, ամբարտավան, հավակնոտ հավատացյալների համար (և յուրաքանչյուր դարաշրջանում):

«Ընդհանուր օգուտ» կամ «շահույթ» (*sumpheron*, տես 1 Կոր. 6:12; 7:35; 10:33; 2 Կոր. 8:10): Հավատացյալները պետք է անձնական պատասխանատվություն ունենան պահպանելու Հոգու միասնությունը խաղաղության կապերով (տես Եփ. 4:2-3): Սա արմատապես տարբերվում է արևմտյան անհատականությունից:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ Է
SPECIAL TOPIC: CHRISTIANITY IS CORPORATE**

- Ա. Պողոսը և Պետրոսը օգտագործում են հոգնակի փոխաբերություններ՝ Աստծո ժողովրդի համար
 1. մարմին (տես 1 Կոր. 12: 12-20)
 2. դաշտ (տես 1 Կոր. 3: 9)
 3. շենք (տես 1 Պետ. 2:4-5)
- Բ. «Մուրբ» տերմինը միշտ հոգնակի է (բացի Փիլ. 4:21, բայց նույնիսկ այնտեղ նաև հավաքական է)
- Գ. Մարտին Լյութերի Ռեֆորմացիայի շեշտադրումը «հավատացյալի քահանայության» վրա (այսինքն՝ հոգու իրավասությունը) աստվածաշնչային ենթադրությունն է: Իրականում Աստվածաշունչը խոսում է «հավատացյալներին քահանայության» մասին (տես Ելից 19: 6; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6):
- Դ. Յուրաքանչյուր հավատացյալ օժտված է պարզվելով ընդհանուր բարիքի համար (տես 1 Կոր. 12: 7)
- Ե. Միայն համագործակցությամբ կարող է Աստծո ժողովուրդը արդյունավետ լինել: Ծառայությունը համագործակցող է (տես Եփ. 4: 11-12):

12:8

Արևելահայերեն «իմաստության խօսք... գիտության խօսք»
 Արևմտահայերեն «իմաստության խօսք... գիտության խօսք»

NASB, NKJV «իմաստության խոսքը... գիտության խոսքը»

NRSV «իմաստության խոսքը... գիտելիքի արտահայտումը»

TEV «իմաստությունով լի պատգամ... գիտելիքով լի պատգամ»

NJB «իմաստություն արտահայտող խոսքի պարզեր... գիտելիք արտահայտող խոսքի պարզեր»

Սրանք երկու տարբեր հունարեն տերմիններ են, «իմաստություն» (այսինքն, *sophia*) և «գիտելիք» (այսինքն, *gnōsis*): Նրանք արտացոլում են երբայերեն տարբերությունը «իմաստության» և «գիտելիքի» միջև: Առաջինը գործնական է, իսկ երկրորդը՝ ավելի ակադեմիական: Առաջինը վերաբերում է քրիստոնեական կյանքին, իսկ երկրորդը՝ քրիստոնեական վարդապետության պատշաճ բացատրությանը:

12:9 «հաւատք» Այս խոսքը չի վերաբերում փրկարար հավատքին, ինչպես Մարկ. 1:15; Հովհ. 1:12, քանի որ պարզները տրվում են միայն հավատացյալներին՝ հավատք բերող հրաշքի համար, որը հստակ է 1 Կոր. 13:2 (տես Մաթ. 17:20; 21:21):

▪ **«Բժշկության»** Այս տերմինը (*iaomai*) հոգնակի է (տես՝ 2 Կոր. 12: 7-9,28,30), որը բառացիորեն «բժշկության պարզներ» է: Բժշկությունը Հոգու պարզն է այս կոնտեքստում և «երեցների» ծառայությունը Հակ. 5:14-ում: Ֆիզիկական բուժումը Աստծո սիրո և խնամքի վկայությունն է և հոգևոր բուժման նշանը (այսինքն, մեղքերի ներում, փրկություն): Հրեաների համար մեղքի և հիվանդության, արդարության և առողջության միջև գոյություն ունի կապ (տես 2 Օր. 27-28): Սակայն Հոբբը և Սաղմոս 73-ը հստակեցնում են հարցը, ինչպես Հովհ. 9 է: Խորհուրդն այն է, որ ոմանք

բուժվում են, ոմանք էլ ոչ: Մեկի հավատքը չի կարող բանալի բաղադրիչը լինել, բայց Աստծունը կարող է: Հարցն այն չէ թե ինչքան հավատք ես գործածում, այլ թե ով է մեր հավատքի օբյեկտը (մանանեխի սերմի չափ հավատքը լեռներ է շարժում, տես Մաթ. 17:20):

Փառք Աստծուն՝ բժշկության, բուժողների և հոգատար եկեղեցիների համար:

12:10 «գորութիւնների ներգործութիւններ» Մա, կարծես, զուգահեռ է 1 Կոր. 12:9ա-ի (այսինքն, հրաշագործ հավատք): Քանի որ սա ցանկ է, նրանք չեն կարող ամբողջովին հոմանիշ լինել: Հստակ տարբերությունը անորոշ է:

▪ **«մարգարեություն»** Այս տերմինը հասկանալու առնվազն երկու եղանակ կա. 1) Կորնթացիսի նամակներում դա վերաբերում է ավետարանի տարածմանը կամ հռչակմանը (տես 1 Կոր. 14:1), (2) Գործք Առաքելոցը ակնարկում է մարգարեներին (տես 1 Կոր. 11:27-28; 13:1; 15:32; 21:10, նույնիսկ մարգարեուհիներ, 21:9):

Այս տերմինի հետ կապված խնդիրն այն է, թե ինչպես է Նոր Կտակարանի մարգարեության պարզը վերաբերում Հին Կտակարանյան մարգարեներին: Հին Կտակարանում մարգարեները Սուրբ Գրքի գրողներն են: Նոր Կտակարանում այս առաջադրանքը տրվում է տասներկու Առաքյալներին և նրանց օգնողներին: Քանի որ «առաքյալ» տերմինը հիշվում է որպես շարունակական պարզ (տես Եփ. 4:11), Տասներկուսի մահից հետո փոխված առաջադրանքի հետ նաև մարգարեի պաշտոնը: Ներշնչանքը դադարել է, այլևս չկա ներշնչված Սուրբ Գիրք (տես Հուդա 1:20): Նոր Կտակարանի մարգարեների հիմնական առաջադրանքը ոչ միայն ավետարանի հռչակումն է, այլ նաև ուրիշ առաջադրանք, հնարավոր է այն, թե ինչպես պետք է կիրառել Նոր Կտակարանյան ճշմարտությունները ներկայիս իրավիճակներում և կարիքի մեջ: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ 1 Կոր. 14:1:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: OT PROPHECY

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Սկզբնական պնդումներ

1. Հավատացյալ համայնքը չի համաձայնում, թե ինչպես պետք է մեկնաբանել մարգարեությունը: Այլ ճշմարտություններ են ստեղծվել որպես ուղղափառ դիրքորոշում դարերի ընթացքում, բայց ոչ այս մեկը:

2. Կան ՀԿ մարգարեության մի քանի լավ սահմանված փուլեր

ա. նախամիապետական

(1) ֆիզիկական անձիք, ովքեր կանչվել են մարգարեներ

(ա) Աբրահամ - Ծննդ. 20: 7

(բ) Մովսես - Թվ. 12: 6-8; 2 Օր. 18:15; 34:10

(գ) Ահարոն - Ելից 7: 1 (Մովսեսի խոսնակը)

(դ) Մարիամ - Ելից 15:20

(ե) Մովդադ և Ելդադ - Թվ.11: 24-30

(զ) Դեբորա - Դատ. 4: 4

(է) անանուն - Դատ. 6: 7-10

(ը) Սամուել - Ա Թագ. 3:20

(2) հիշատակումներ մարգարեների մասին որպես խումբ- 2 Օր. 13: 1-5; 18: 20-22

(3) մարգարեական խումբ կամ գիլդիա/գունդ - 1 Թագ. 10: 5-13; 19:20; 3 Թագ. 20: 35,41; 22: 6,10-13; 4 Թագ. 2: 3,7; 4: 1,38; 5:22; 6: 1 և այլն:

- (4) Մեսիան կոչվում էր մարգարե - 2 Օր. 18: 15-18
- բ. չգրված միապետական (դիմում են թագավորին):
- (1) Գաղ - 1 Թագ. 22: 5; 2 Թագ. 24:11; 1 Մնաց. 29:29
- (2) Նաթան - 1 Թագ. 7: 2; 12:25; 3 Թագ. 1:22
- (3) Աքիա - 3 Թագ. 11:29
- (4) Յեու - 3 Թագ. 16: 1,7,12
- (5) անանուն - 3 Թագ. 18: 4,13; 20: 13,22
- (6) Եղիա - 3 Թագ. 18 - 4 Թագ. 2
- (7) Միքիա - 3 Թագ. 22
- (8) Եղիսե - 3 Թագ. 2: 9, 12-13
- գ. դասական գրված մարգարեներ (դիմում են ժողովրդին, ինչպես նաև թագավորին)՝ Եսայիայից- Մաղաքիա (բացառությամբ Դանիելի)

Բ. Աստվածաշնչյան Տերմիններ

- **«մարգարէութիւններ...կ'իսափանուին...լեզուներ...կ'լռեն...գիտութիւն...կ'իսափանուի»** Տեսեք զուգահեռ կառուցվածքը: Սրանք էին հոգևոր պարզները, որոնք Կորնթոսի եկեղեցին մեծարում էր (տես 1 Կոր. 13:1-3): Այս համարը հաճախ օգտագործվում է լեզուների արժեզրկման համար, քանի որ օգտագործվում են տարբեր բայեր և սեռեր: Այնուամենայնիվ, կոնտեքստը հաստատում է, որ բոլոր հոգևոր պարզները կղադարեն, բայց սերը երբեք չի դադարի: Այս կոնտեքստում ոչ մի շեշտադրում չկա մեկ պարզի ժամանակի տարրը ի տարբերություն մյուսի: Հոգևոր պարզները ժամանակի մաս են կազմում, այլ ոչ թե հավիտենության: Սերը հավիտենական է:

«Խափանված» տերմինը 1 Կոր. 13:8,10 և 11-ում է: Հատուկ Թեմա՝ *Katargeō* 1 Կոր. 1:28:

13:9 Սա սկսում է համարների շարք, որոնք շեշտադրում են հոգևոր պարզների կողմնակալությունը և անհամապատասխանությունը: Այս կողմնակալությունը պայմանավորված է մարդու տկարությունից, ընկճվածությունից և վերջնագրից, ոչ թե Աստծո շնորհքի հետ կապված պակասից:

13:10 «երբոր կատարեալը գայ» Այս տերմինը (այսինքն, *teleios*) նշանակում է «հասունություն, ամբողջականություն» կամ «լիարժեք հագեցված հանձնարարված աշխատանքի համար» (տես 1 Կոր. 2:6; 13:10; 14:20): Հարցը միշտ եղել է, «Ինչի՞ն է այն վերաբերում».

1. Ոմանք պնդում են, որ դա վերաբերում է Նոր Կտակարանին: Այս կոնտեքստում ոչինչ այդ մասին չէ ասվում: Սա միայն տեսություն է, որ հոգևոր պարզները դադարել են հետառաքելական ժամանակներում:
2. Ոմանք պնդում էին, որ դա վերաբերում է հոգևոր հասունությանը, 1 Կոր. 13:11 պատճառով (այսինքն՝ երեխա, ապա չափահաս) կամ հոգևոր պարզների ճիշտ օգտագործումը:
3. Ոմանք պնդում էին, որ այն վերաբերում է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը և արդարության նոր դարաշրջանի ավարտին, 1 Կոր. 13:12 պատճառով (այսինքն, «տեսնել դեմ առ դեմ»):
4. Ինձ համար դա կարծես թե 2-րդի և թիվ 3-րդի համադրությունն է:
Teleios-ի տարբեր օգտագործումն ու նշանակությունը կարելի է տեսնել Եբրայեցիս գրքում:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՎԱՐՏ ԿԱՍ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (TELOS)
SPECIAL TOPIC: END OR FULL (TELOS) IN THE BOOK OF HEBREWS

Հոգևոր երևույթների այս կուլմինացիան՝ գագաթնակետը, Եբրայեցիների գրքում պարբերաբար կրկնվող թեմա է:

1. *telos*, ավարտ, իրականացում (Եբր. 3:6,14; 6:8,11)
2. *teleiōo*, «կատարյալ դարձնել»
 - ա. (Հիսուս) նրանց փրկության Ձորավարին տառապանքների միջոցով կատարյալ դարձնի (տես Եբր. 2:10)
 - բ. (Հիսուս) չարչարանքների միջոցով կատարյալ դարձավ (տես Եբր. 5:8-9)
 - գ. Օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց (տես Եբր. 7:19)
 - դ. Որդուն՝ որ հավիտյան սրբացված է /կատարյալ է դարձված/ (տես Եբր. 7:28)
 - ե. Պաշտամունք մատուցողին կատարյալ դարձնել (տես Եբր. 9:9)
 - զ. Ձոռեր մատուցողներին կատարյալ դարձնել (տես Եբր. 10:1)
 - է. Հավիտյան կատարյալ դարձրեց նրանց, որ սրբվեցին (տես Եբր. 10:14)
 - ը. Նրանք կատարելության չհասնեն առանց մեզ (տես Եբր. 11:40)
 - թ. Կատարյալ դարձած արդարների հոգիներին (տես Եբր. 12:23)
3. *teleios*, հասուն (տես Եբր. 5:14)
4. *teleios*, ավելի կատարյալ խորան (տես Եբր. 9:11)
5. *teleiotēs*, գանք հասունության՝ կատարյալին (տես Եբր. 6:1)
6. *teleiōsis*, եթե կատարելությունը դևտական քահանայությամբ լիներ (տես Եբր. 7:11)
7. *teleiōtēs*, հավատքի Հեղինակին ու Կատարողին (տես Եբր. 12:2)

Հիսուսն է բերում հասունություն և կատարելություն, որը Մովսիսական Ուխտը երբեք էլ չկարողացավ անել:

13:11 «խափանեցի» Սա հունարեն *katargeō* տերմինն է, որը շատ հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից: Այս կոնտեքստում Պողոսը պնդում է

1. մարգարեությունը կխափանվի, 1 Կոր. 13:8 (ապառնի կրավորական սահմանական)
2. գիտությունը կխափանվի, 1 Կոր. 13:8 (ապառնի կրավորական սահմանական)

3. յուրաքանչյուր պարզև կիսափանվի, 1 Կոր. 13:10 (ապառնի կրավորական սահմանական)
4. հոգևոր երեխայություն կիսափանվի, 1 Կոր. 13:11 (ապառնի վաղակատար սահմանական)

13:12 «Հայելու» Կորնթոսը հայտնի էր իր փայլեցված մետաղական հայելիներով: Դրանք այդ օրը լավագույնն էին, բայց նրանք արտացոլում էին աղավաղված պատկերներ: Մարդիկ, նույնիսկ փրկված մարդիկ, խանգարված են (1) մեղքի բնույթով; (2) վերջնագրով; (3) սահմանափակ հեռանկարով; 4) վնասված մշակույթի խղճմտանքով և աշխարհայացքով; (5) ժամանակի կողմից որպես ժամանակագրական հերթականությամբ; և (6) մարդկային լեզվով՝ բացատրելու և նկարագրելու հոգևոր ոլորտը:

Դիտարկենք գուգահեռականությունը

1. 1 Կոր. 13:9, փոքր ի շատե գիտենք, փոքր ի շատե մարգարեանում ենք, երբոր կատարյալը գա
2. 1 Կոր. 13:11, երեխան և դեռահասը
3. 1 Կոր. 13:12, Կորնթոսի հայելիները ընդդեմ դեմառդեմի, և փոքր ի շատե գիտենք ընդդեմ ամբողջականի

Դրանք, կարծես, արտացոլում են ներկայիս իրականությունը ապագա իրականության հետ, հետևաբար, ուշադրության կենտրոնում է Երկրորդ Գալուստը, որը կատարում է Նոր դարաշրջանը:

- **«օրինակով»** Սա բառացիորեն «երագ» է (տես NJB): Ռաբբիները հավատում էին, որ Աստված խոսեց Մովսեսի հետ երազներով (տես Թվոց 12:6,8):

- **«դեմադեմ»** Սա մտերմիկ ընկերակցության փոխաբերական իմաստն է (այսինքն, համեմատելի է Թվոց 12:8): Հին Կտակարանում ՅԱՀՎԵԻՆ տեսնելը նշանակում էր մահ (տես Ծննդ. 32:30; Ելից 33:20; Հովհ. 1:18): Նոր դարաշրջանում դա նորմալ կլինի (տես Մաթ. 5:8; 2 Կոր. 5:7; 1 Հովհ. 3:2; Հայտ. 224):

- **«փոքր ի շատե եմ տեղեակ...այնպես կ'գիտենամ...գիտեցուած եմ»** Սա ակնհայտորեն բառախաղ է, երբայերեն և հունարեն «գիտեմ» տերմինների իմաստով: Հին Կտակարանում այն անդրադարձել է ոչ թե ճանաչողական փաստերին (այսինքն՝ հունական հասկացությանը), այլ անձնական հարաբերություններին (տես Ծննդ. 4:1 և Եր. 1:5):

Այս համարում կա նաև հունարեն «գիտեմ» բառախաղը (այսինքն, *ginōskō*): Առաջին օգտագործումը հիմնական տերմինն է: Երկրորդը և երրորդը բարդ տերմիններ են (այսինքն, *epiginōskō*), որը ենթադրում է փորձառու, լիարժեք գիտելիքներ: Հավատացյալներն Աստծուն կճանաչեն նոր դարաշրջանում, ինչպես Նա է ճանաչում մեզ (տես 1 Կոր. 8:3; Գաղ. 4:9): «Նոր Ուխտը» բնութագրվում է Աստծո ժողովրդի կողմից, ովքեր ճանաչում են իրեն (տես Եր. 31:31-34): Չկա քարոզիչների / վարդապետների կարիքը:

«Իմանալով» աստվածաբանական գաղափարը վերաբերում է ընտրության գաղափարին: Խորհուրդը, թե ինչպես է ընտրությունը (այսինքն, Աստծո ընտրությունը) վերաբերում ուխտի արձագանքին (այսինքն, մարդու ընտրությունը) անորոշ է: Հետևելով Հին Կտակարանյան համարների տրամաբանությանը՝ Մաղ. 1:6; Եր. 1:5; Ամովս 3:2 և այս Նոր Կտակարանյան համարները՝ Հռ. 8:29; 11:2; 1 Կոր. 8:3; 13:13; Գաղ. 4:9, Աստված գիտեր հավատացյալներին դեռ ժամանակից առաջ, ժամանակին և ժամանակի ընթացքում: Սակայն, հավատացյալներն Աստծուն ճանաչում են փուլերով, արդարացման, սրբացման, փառաբանության նման: Մենք գիտենք նրան դեռ Հին Կտակարանի միջոցով, Հիսուսի և ավետարանի միջոցով. ժամանակի ընթացքում մենք կաճենք դեպի Քրիստոսանմանությունը՝ Հոգու միջոցով, և ժամանակից շուտ մենք կճանաչենք նրան դեմառեմ, մտերմիկ մոտեցմամբ, արդարության նոր դարաշրջանի կատարյալ գիտելիքներով:

13:13 «յոյս» Այս հունարեն տերմինը չունի անգլերենի տերմինի անորոշությունն ու անվստահությունը: Սա համոզված վստահություն է, որ Աստծո խոստումներն իրականություն կդառնան Իր ժամանակին:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՅՍ (*elpis*, Պողոսի գրվածքներում)
SPECIAL TOPIC: HOPE (*elpis*, in Paul)

Պողոսը հաճախ օգտագործեց այս տերմինը մի քանի տարբեր, բայց կապակցված իմաստներով: Հաճախ դա կապված էր հավատացյալի հավատքի հետ (օրինակ, 1 Տիմ. 1: 1): Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ և այլն: Ավարտը հստակ է, բայց ժամանակի տարրը ապագան է և անհայտ: Հույսը հաճախ կապված էր «հավատքի» և «սիրո» հետ (տես 1 Կոր. 13:13; 1 Թես. 1: 3; 2 Թես. 2:16): Պողոսի որոշ գործածումների մասնակի ցանկը

1. Երկրորդ Գալուստը, Գաղ. 5:5; Եփ. 1:18; 4: 4; Տիտոս 2:13
2. Հիսուսը մեր հույսն է, 1 Տիմ. 1: 1 (Աստված մեր հույսն է, 1 Տիմ. 5: 5; 1 Պետ. 3: 5)
3. Հավատացյալը պետք է ներկայանա Աստծո առաջ, Կող. 1: 22-23; 1 Թես. 2:19
4. Հույսը պահվում է երկնքում, Կող. 1: 5
5. Վստահություն ավետարանին, Կող. 1:23; 1 Թես. 2:19
6. Գերազույն փրկությունը, Կող. 1: 5; 1 Թես. 4:13; 5: 8
7. Աստծո փառքը, Հռ. 5: 2; 2 Կոր. 3:12; Կող. 1:27
8. Քրիստոսի կողմից հեթանոսների փրկությունը, Կող. 1:27
9. Փրկության վստահություն, 1 Թես. 5: 8
10. Հավիտենական կյանք, Տիտոս 1: 2; 3: 7
11. Քրիստոնեական հասունության արդյունքներ, Հռ. 5: 2-5
12. Ամբողջ ստեղծագործության փրկությունը, Հռ. 8: 20-22
13. Որդեգրության վախճանը, Հռ. 8: 23-25
14. Տիտոս Աստծո համար, Հռ. 15:13
15. Պողոսի ցանկությունը հավատացյալների համար, 2 Կոր. 1: 7
16. Հին Կտակարանը որպես ուղեցույց Նոր Կտակարանի հավատացյալների համար, Հռ. 15: 4

▪ **«Ապա ուրեմն մնում է հաւատք, յոյս, սէր»** Այս բայը եզակի է (տես Գաղ. 5:22): Պողոսը հաճախ օգտագործում է այս եռյակը (տես Հռ. 5:2-5; Գաղ. 5:5-6; Եփ. 1:15-18; Կող. 1:4-5; 1 Թես. 1:3; 5:8; Եբրայեցիս) և այլ Նոր Կտակարանյան գրողներ (տես Եբ. 6:10-12; 1 Պետ. 1:21-22):

▪ **«ստրանցից մեծը սերն է»** Սա մեծն է, քանի որ այդ մյուսները կղաղարեն նոր դարաշրջանի ավարտին: Հավատքը կղառնա տեսանելի և հույսը կկատարի իր խոստումը, բայց սերը մնում է այն պատճառով, որ դա Աստծո հիմնական հատկանիշն է (տես Հովհ. 3:16; 1 Հովհ. 4:8,16):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոշյալ մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Տվեք այս գլխի հիմնական գաղափարը ձեր բառերով, մեկ նախադասությամբ:

2. Ինչո՞ւ Պողոսը սիրո գլուխ մտցրեց հոգևոր պարզանների իր քննարկման մեջ:
3. Սահմանե՞ք *agapē* սերը ձեր բառերով:
4. Ինչո՞ւ 1 Կոր. 13:8-13-ը մեր օրերում դարձավ հոգևոր պարզանների դեմ պայքարի դաշտ:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 14

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
				Վարվելակերպը հանրային պաշտամունքի ժամանակ (11:2-14:40)
Լեզուներ և մարգարեություն	Մարգարեություն և լեզուներ	Պարզաների մեջ մարգարեությունը գերազանցում է լեզուներին	Ավելին Հոգու պարզաների մասին	Հոգևոր պարզաներ: Նրանց հեռանկարային նշանակությունը համայնքում
14:1-5	14:1-5	14:1-5	14:1-4	14:1-5
	Լեզուները պետք է թարգմանվի		14:5-6	
14:6-19	14:6-19	14:6-12	14:7-12	14:6-12
		14:13-19	14:13-17	14:13-19
	Լեզուները նշան են անհավատների		14:18-19	
14:20-25	14:20-25 (21)	14:20-25 (21)	14:20-22 (21)	14:20-25
			14:23-25	
Ամեն բան պետք է արվի կարգ ու կանոնով	Կարգ ու կանոնը եկեղեցու պաշտամունքներին		Կարգ ու կանոնը եկեղեցում	Կարգավորել հոգևոր պարզաները
14:26-33ա	14:26-40	14:26-33ա	14:26-33ա	14:26-33ա
14:33բ-36		14:33բ-36	14:33բ-35	14:33բ-35
			14:36-38	14:36-38
14:37-40		14:37-40		14:39-40
			14:39-40	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏՍՅՈՒՆ ՄՏՔԵՐ 14:1-40

Ա. Սա շարունակում է Պողոսի ուղեցույցները հավաքական երկրպագության համար, որը սկսել էր 11-րդ գլխում: Կորնթոսի եկեղեցին մի քանի վայրերում երկրպագում էր ոչ պատշաճ, ոչ ստանդարտ ձևերով:

Բ. Այս գլխում պաշտամունքի գործունեության գնահատման հիմնական չափորոշիչը հետևյալն է «Արդյո՞ք սա շինություն է ամբողջ եկեղեցու համար»: Միասնական պաշտամունքն ունի երկու հանգամանք.

1. ներկա գտնվող անապաշխարների կարիքները
2. ներկա գտնվող հավատացյալների կարիքները

Սա հետևում է Հիսուսի Մեծ Պատվիրանին (տես Մատթ. 28:19-20): *Hard Sayings of the Bible*, ասում է

«Պողոսի եկեղեցական համայնքի կյանքի և պաշտամունքի գործող սկզբունքը հաստատուն է: Անկախ այն բանից, թե ինչն է խոչընդոտում Ավետարանի շարժմանը, առաջացնում է շփոթություն, ոչ թե աճ, վիրավորում է, այլ ոչ թե խրախուսում կամ ամրապնդում, իր եսն է կառուցում ուրիշների հաշվին, այս ամենը հակասում է Աստծո մտադրությանը: Եվ քանի որ կանայք Կորնթոսում և այլ նորաստեղծ եկեղեցիներում օգտագործում են իրենց պարզները, հակառակ Աստծո նպատակների, լուռ մնալու պատվերը պատշաճ, հեղինակային խոսք է: Այն սկզբունքը, որը հիմնված է հրահանգի վրա, հեղինակավոր է բոլոր եկեղեցիներում տղամարդկանց և կանանց համար, (էջ 616):

Գ. Այժմ կանանց մասնակցությամբ պաշտամունքին մասնակցելու վիճելի հարցի վերաբերյալ: Եթե կարդաք հինգ մեկնաբանների գործեր, կստանաք հինգ տարբեր տեսակետներ: Խնդիրն այն է, որ մենք բոլորս գալիս ենք այս գլխին անձնական, հարանվանական, փորձառության և հերմենևտիկ ցանկով: Մեզանից ոչ ոք չեզոք չէ: Մենք լրջորեն ենք ընդունում Աստվածաշունչը, բայց Աստվածաշնչում, նույնիսկ Պողոսն է խոսում երկու ձայնով (տես 1 Կոր. 11:5 և 14:34):

Որոշ մեկնաբաններ նույնիսկ փորձում են հեռացնել 1 Կոր. 14: 34-35-ը, որպես գրագրի լրացումներ (MSS D, F, G այս համարները դնում են 1 Կոր. 14:40-ից հետո) կամ դրանք

վերագրում Պողոսին, մեջբերելով կեղծ ուսուցիչների կարգախոսը: Ամեն դեպքում, այս մոտեցումներն այնպես են անում, որ գլուխն ասում է լրիվ հակառակը ինչ որ ուզում է ասել:

- Դ. Պողոսի խոսքերը 1 Կոր. 14: 34-35-ում համապատասխանում է հրեական սովորույթին և հունա-հռոմեական մշակույթին: Սակայն, շատ կարևոր նշանակությամբ, Պողոսի ծառայությունը հակասում է հրեական սովորույթներին և հունա-հռոմեական մշակույթին:
- Ե. Առաջին դարի Միջերկրածովյան աշխարհը ստրկության և տղամարդու տիրապետության վրա հիմնված հասարակություն էր: Հիսուսը կամ Պողոսը արմատապես փոխել են, ապա թե ոչ այդ սոցիալական հաստատություններից որևէ մեկը բացասաբար կանդրադառնար եկեղեցու աճի վրա, անգամ նրա գոյատևմանը: Թե Հիսուսը և թե Պողոսը հաստատում են բոլոր մարդկանց արժանապատվությունն ու արժանիքը: Ավետարանը ժամանակի ընթացքում կործանելու է չարաշահման երկու ասպեկտները: Ապահով է ասել, որ նրանք խոսեցին իրեն օրերում ներշնչված իշխանությամբ և որ իրենց խոսքերը ցույց են տալիս արժանապատվության և հավասարության գալիք օրը: Տես Gordon Fee, *Gospel and Spirit*, , որոշ Նոր Կտակարանյան տեքստերի առանձնահատկությունը:
- Զ. Վաղ եկեղեցում կանայք կամ ծառա առաջնորդները կարող էին բացասաբար ազդել ավետարանչության վրա: Նույնն էլ այսօր է, բայց հակառակ կողմից: Մեր հասարակության մեջ պարզևներով օժտված տաղանդավոր կանանց ծառայությունը մեր հասարակության մի ասպեկտի կհասնի ավելի արդյունավետ, քան ուրիշները: Սա ոչ մի ձևով չի ցանկանում կանանց հոգևորականության մեծամասնությունը, բայց այն հասկացությունը, որ բոլոր հավատացյալները կանչված են, ունեն պարզևներ, ավետարանի ծառայողներ են; բոլոր հավատացյալները: Ես չեմ պաշտպանում կանանց հատուկ ծառայության առաջադրանքը, բայց ուժեղորեն հավաստիացնում եմ բոլոր հավատացյալների ծառայությունը (տես Եփ. 4:12):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:1-5

¹Մերին հետևեցեք, եւ հոգեւոր պարգեւներին նախանձաւոր եղեք. եւ մանաւանդ որ մարգարեանաք: ²Որովհետեւ լեզուներով խօսողը, մարդկանց հետ չէ խօսում, այլ Աստուծոյ հետ. Որովհետեւ ոչ ով չէ լսում, բայց հոգով խորհուրդներ է խօսում: ³Իսկ մարգարեացողը, մարդկանց հետ շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն է խօսում: ⁴Լեզուով խօսողը իր անձն է շինում, իսկ մարգարեացողը եկեղեցին է շինում: ⁵Ես կամենում եմ որ դուք ամենդ լեզուներով խօսիք, բայց մանաւանդ որ մարգարեանաք. Որովհետեւ ասելի մեծ է մարգարեացողը, քան թէ լեզուներով խօսողը, միայն եթէ թարգմանէ, որ եկեղեցին շինութիւն առնէ:

14: 1 «Մերին հետևեցեք» Սա ներկա ներգործական հրամայական է (տես Հո. 14:19; 1 Թե. 5:15; 1 Տիմ. 6:11; 2 Տիմ. 2:22): Սա ցույց է տալիս բովանդակային կապը 13-րդ գլխի հետ: Մերը Աստծո և Իր ժողովրդի բնութագիրն է (տես Գաղ. 5:22; 1 Հովհ. 4: 7-21): Հիշեք, 11-14 գլուխները գրական բաժին են Կորնթոսում պաշտամունքի հետ կապված խնդիրների վերաբերյալ: Ուշադիր եղեք ավելի մեծ գրական բաժնից որոշակի հատվածներ ընտրելիս:

Արևելահայերեն «հոգեւոր պարգեւներին նախանձաւոր եղեք»
Արևմտահայերեն «հոգեւոր պարգեւներուն նախանձախնդիր եղէք»

- NASB «սրտանց ցանկանալ հոգևոր պարզներ»
- NKJV «ցանկանալ հոգևոր պարզներ»
- NRSV «ձգտել հոգևոր պարզների համար»
- TEV «ձեր սրտերը դրեք հոգևոր պարզների վրա»
- NJB «փափագեք հոգևոր պարզներ ստանալու համար»

Սա ևս մեկ ներկա ներգործական հրամայական է, որը «եռայ, եփել» արմատից է (տես 1 Կոր. 12:31): Սա ցույց է տալիս բովանդակային կապը 12-րդ գլխի հետ: Ինչ որ իմաստով 13-րդ գլուխը բաժանվում է կոնտեքստում: Հիշեք, որ 12-14 գլուխները մեկ միասնական պատմություն է հոգևոր պարզների ճիշտ օգտագործման վերաբերյալ:

«Հոգևոր» տերմինը նույնն է, որն օգտագործվում է 1 Կոր. 12: 1 (տես 1 Կոր. 2: 13,15; 3: 1; 9:11; 10: 3,4; 14:37; 15: 44,46): Այն կարող է վերաբերել պարզներին, մարդկանց, իրերին և այլն: Կոնտեքստը սահմանում է լրացուցիչ իմաստը:

▪ **«Էլ մանաւանդ որ մարգարէանաք»** «Մարգարեություն» տերմինը օգտագործվում է 1 Կորնթացիսում մասնագիտացված իմաստով: Այն չի վերաբերում Հին Կտակարանի մարգարեների մարգարեական գործունեությանը (այսինքն, գրված Սուրբ Գրքում), այլ ավետարանի հստակ հաղորդակցության համար՝ հրապարակային քարոզչության միջոցով կամ անձնական վկայությամբ: Ցանկալի է, որ բոլոր հավատացյալներն ունենան (տես 1 Կոր. 14:39), բայց այն նաև հոգևոր պարզ է (տես 1 Կոր. 12:10, 28-29): Բոլոր հավատացյալները որոշակի մակարդակով մասնակցում են Հոգու բոլոր պարզներին, սակայն մեկը կամ մի քանիսը ուժեղացվում և զորացվում են Հոգու կողմից անհատ հավատացյալների ներսում, հատուկ արդյունավետության համար: Այս բազմազանությունը պահանջում է հավատացյալների միջև համագործակցության և սիրող հոգի: Մենք կանչված ենք միասնականության, ոչ թե միանմանության, ավետարանի համար: Մենք միայն արդյունավետ ենք համագործակցելով: Մենք միմյանց կարքն ունենք: Եկեղեցին համայնք է կանչված, պարզներով օժտված, լիաժամ ծառայողների: Մեր պարզները ավետարանի տարածման և եկեղեցու առողջության և ամբողջականության համար են:

Այս պարզը համեմատվում է լեզուների հետ «արդյո՞ք շինություն է ամբողջ եկեղեցու համար» չափանիշով: Այս կոնտեքստում սա նշանակում է «քարոզելով ավետարանը», որն այնուհետև օրհնություն է ամբողջ եկեղեցու, ինչպես նաև այցելուների համար: Լեզուներով խոսելը միայն օրհնություն է անհատ հավատացյալի համար, եթե այն մեկնաբանվում է ամբողջ եկեղեցու համար: «Մարգարեություն» տերմինը չպետք է ընկալվի Հին Կտակարանյան ներշնչված հայտնության իմաստով (տես ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ 1 Կոր.12:10):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: NEW TESTAMENT PROPHECY

- I. Սա նույնը չէ, ինչ Հին Կտակարանի մարգարեությունը (BDB 611, KB 661; տես Հատուկ Թեմա: Մարգարեություն [Հին Կտակարան]), որն ունի ռաբբիական նշանակություն՝ ստանալու և արձանագրելու ՅԱՀՎԵԻ ներշնչված հայտնությունները (տես Գործք 3: 18,21; Հո. 16:26): Միայն մարգարեները կարող էին Սուրբ Գիրք գրել:
 - Ա. Մովսեսը կոչվում էր մարգարե (տես 2 Օր. 18: 15-21):
 - Բ. Պատմական գրքեր (Հեսու - Թագավորներ (բացի Հռութից)) կոչվեցին «վաղ մարգարեներ» (տես Գործք 3:24):
 - Գ. Մարգարեները փոխարինեցի քահանայապետին, որպես Աստծուց տեղեկության աղբյուր (տես Եսայիա - Մաղաքիա)
 - Դ. Եբրայերեն Կանոնի երկրորդ բաժինը «Մարգարեները» (տես Մատթ. 5:17; 22:40; Դուկ.

16:16; 24:25, 27, Հո. 3:21):

- II. Նոր Կտակարանում մարգարեության գաղափարը կիրառվում է մի քանի տարբեր ձևերով:
- Ա. Հին Կտակարանի մարգարեները և նրանց ներշնչված պատգամը (տես Մատթ. 2:23; 5:12; 11:13; 13:14; Հո. 1:2)
 - Բ. վերաբերում է անհատին, այլ ոչ թե մարդկանց խմբին (այսինքն, Հին Կտակարանի մարգարեները հիմնականում Իսրայելին են խոսել)
 - Գ. Հովհաննես Մկրտիչը (տես Մատթ. 11:9; 14:5; 21:26; Ղուկ. 1:76) և Հիսուսը, որպես Աստծո Թագավորության քարոզիչներ (տես Մատթ. 13:57; 21: 11, 46; Ղուկ. 4:24; 7:16; 13:33; 24:19): Հիսուսը նաև պնդեց Իր մասին, որ ավելի մեծ է, քան մարգարեները (տես Մատթ. 11:9; 12:41; Ղուկ. 7:26):
 - Դ. Նոր Կտակարանի մյուս մարգարեները
 - 1. Հիսուսի երկրավոր կյանքը, ինչպես արձանագրված է Ղուկասի Ավետարանում (այսինքն՝ Մարիամի հիշողությունները)
 - ա. Եղիսաբեթը (տես Ղուկ. 1: 41-42)
 - բ. Ջաքարիա (տես Ղուկ. 1: 67-79)
 - գ. Սիմեոն (տես Ղուկ. 2: 25-35)
 - դ. Աննա (տես Ղուկ. 2:36)
 - 2. հեզնական կանխատեսումներ (տես Կայիափա, Հովհ. 11:51)
 - Ե. Ավետարանը հռչակող (ներառված է պարզների ցանկում, 1 Կոր. 12:28-29; Եփ. 4:11)
 - Զ. Դեռևս շարունակվող պարզ եկեղեցում (տես Մատթ. 23:34; Գործք 13:1; 15:32, Հո. 12:6; 1 Կոր. 12: 10, 28-29; 13:2; Եփ. 4:11): Երբեմն դա կարող է վերաբերել կանանց (տես Ղուկ. 2:36; Գործք 2:17; 21: 9; 1 Կոր. 11: 4-5):
 - Է. վերաբերվում է «Հայտնություն» վախճանաբանական գրքի մասերին (տես Հայտ. 1: 3; 22: 7,10,18,19)

- III. Նոր Կտակարանի մարգարեները
- Ա. Նրանք չեն տալիս ներշնչված հայտնություն միևնույն իմաստով, ինչպես դա անում էին Հին Կտակարանի մարգարեները (այսինքն, Աստվածաշունչը): Այս պնդումը հնարավոր է «հավատք» տերմինի շնորհիվ (այսինքն, ավարտված ավետարան) և օգտագործվում է Գործք 6:7; 13: 8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Ֆիլ. 1:27; Հուդա 3,20.
Այս գաղափարը պարզ է դառնում Հուդա 3 ամբողջ արտահայտությունից «որ մրցեք սրբերին միանգամ ավանդված հավատքով»: «Միանգամ ավանդված» հավատքը վերաբերվում է քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, հասկացություններին, աշխարհայացքների ուսմունքներին:
Ընդգծված «միանգամ ավանդված» արտահայտությունը հանդիսանում է աստվածաշնչյան հիմք՝ աստվածաբանորեն սահմանափակելով Նոր Կտակարանի գրվածքների ներշնչվածությունը և թույլ չտալով, որ հետագայում այլ գրվածքները հայտնություն համարվեն (տես Հատուկ Թեմա: Ներշնչանք):
Նոր Կտակարանում կան շատ «մոխրագույն գոնա»-ներ, որոնք անորոշ են, անհաստատ (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն (աստվածաշնչյան պարաֆրազ)), սակայն հավատացյալները հավատքով պնդում են, որ այն ամենը ինչ «անհրաժեշտ է» հավատքի և կյանքի ապրելակերպի համար կա Նոր Կտակարանում բավարար հստակությամբ: Այս գաղափարը բնութագրվել է այսպես կոչված «հայտնության եռանկյունի» անունով.
 - 1. Աստված Իրեն հայտնել է ժամանակ-տարածություն պատմության մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ):
 - 2. Նա ընտրել է որոշ մարդկանց, որպեսզի նկարագրեն և բացատրեն Իր գործողությունները (ՆԵՐՇՆՉՄԱՆՔ):

3. Նա Իր Հոգին տվեց՝ մարդկանց մտքերն ու սրտերը բացելու համար, որպեսզի հասկանան այդ գրվածքները, ոչ թե բացարձակ և վերջնական տեսքով, այլ արժանահավատ փրկության և արդյունավետ քրիստոնեական կյանքի համար (ԼՈՒՄԱՎՈՐՈՒՄ, տես Հատուկ Թեմա: Լուսավորում): Բանն այն է, որ ներշնչումը սահմանափակվում է Սուրբ Գրքի գրողներով: Չկան հեղինակային գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք բոլոր ճշմարտությունները՝ Աստծուն ճիշտ արձագանքելու համար: Այս ճշմարտությունը լավագույնս երևում է, երբ համեմատում ենք աստվածաշնչյան գրողներին և տեսնում, թե որքան համահունչ են, սակայն անկեղծ և աստվածավախ հավատացյալները անհամաձայնության մեջ են լինում երբեմն: Ոչ մի ժամանակակից գրող կամ քարոզիչ չունի այն աստվածային առաջնորդության մակարդակը, որն ունեին Սուրբ Գրքի հեղինակները:

Բ. Նոր Կտակարանի մարգարեները ինչ-որ ձևով նման են Հին Կտակարանի մարգարեներին:

1. գալիք իրադարձությունների կանխատեսում (տես Պողոս, Գործք 27:22; Ագաբոս, Գործք 11:27-28; 21:10-11; այլ անանուն մարգարեներ, Գործք 20:23)

2. դատավճիռ կայացնել (տես, Պողոս, Գործք 13:11; 28:25-28)

3. խորհրդանշական գործողություններ, որոնք վառ կերպով ներկայացնում են իրադարձությունը (տես Ագաբոս, Գործք 21:11)

Գ. Նրանք քարոզում են Ավետարանի ճշմարտությունները, երբեմն կանխատեսելի եղանակներով (տես Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), բայց սա առաջնային ֆոկուսը չէ: 1 Կորնթացիսում մարգարեանալը հիմնականում կապված է ավետարանի հռչակումով (տես 1 Կոր. 14: 24,39):

Դ. Դրանք Սուրբ Հոգու ժամանակակից միջոցներն են, բացահայտելու Աստծո ճշմարտության ժամանակակից և գործնական կիրառությունները յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի համար (տես 1 Կոր. 14:3):

Ե. Նրանք բավականին ակտիվ գործում էին «Պողոս»-յան եկեղեցիների վաղ ժամանակաշրջանում (տես 1 Կոր. 11:4-5; 12:28,29, 13:2,8,9; 14:1,3,4,5,6,22, 24,29,31,32,37,39; Եփ. 2:20; 3: 5; 4:11; 1 Թես. 5:20) և հիշատակված են *Didache* (գրված առաջին կամ երկրորդ դարի վերջին, տարեթիվը անորոշ է) և Հյուսիսային Աֆրիկայի երկրորդ և երրորդ դարերի Մոնտանիզմում:

IV. Արդյո՞ք Նոր Կտակարանի պարզները դադարել են:

Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Ճիշտ եզրահանգման գալու համար, նախ և առաջ պետք է հասկանալ հոգևոր պարզների նպատակը: Արդյո՞ք դրանք մտադրված են եղել Ավետարանի ճշմարտության վաղ քարոզչությունն իրականացնելու համար, հաստատել ավետարանի նախնական քարոզչությունը, թե՞ այսօր էլ շարունակում են միջոց հանդիսանալ ծառայության մեջ, թե եկեղեցում և թե կորսված աշխարհին հասնելու համար: արդյոք նրանք շարունակելու են եկեղեցի ծառայել իրեն և կորցրած աշխարհին:

Բ. Որտե՞ղ պետք է փնտրել այս հարցի պատասխանը: Եկեղեցու պատմության մեջ թե՞ միանշանակ Նոր Կտակարանում: Նոր Կտակարանում որևէ նշում չկա, որ հոգևոր պարզները ժամանակավոր էին: Նրանք, ովքեր փորձում են օգտագործել 1 Կոր. 13: 8-13-ը այս հարցը հիմնավորելու համար, չարաշահում են հեղինակի մտադրությունը տվյալ հատվածի վերաբերյալ, որը հաստատում է, որ բացի սիրուց ամեն բան պետք է անցնի և վերջանա:

Գ. Ես հավանում եմ ասելու, որ քանի որ Նոր Կտակարանը, ոչ թե եկեղեցու պատմությունն է գերագույն իշխանությունը, ապա հավատացյալները պետք է հաստատեն, որ

պարզևները շարունակվում են: Սակայն, կարծում եմ, մշակույթը ազդում է մեկնաբանության վրա: Որոշ հստակ տեքստեր այլևս կիրառելի չեն (այսինքն՝ սուրբ համբույրը, կանայք գլուխները ծածկելը, տնային եկեղեցիները և այլն): Եթե մշակույթը ազդում է տեքստերի վրա, ապա ինչու ոչ եկեղեցու պատմությունը:

- Դ. Պարզապես սա այն հարցն է, որին չի կարելի որոշակիորեն, հստակ պատասխանել: Որոշ հավատացյալներ կողմնակից են այն բանի, որ պարզևները «դադարել են» իսկ ոմանք՝ ոչ: Այս ոլորտում, ինչպես շատ թարգմանչական հարցերում, հավատացյալի սիրտն է բանալին: Նոր կտակարանը երկիմաստ է և մշակույթային: Դժվարն այն է, թե ինչպես որոշել, որ տեքստերն են ազդում մշակույթի / պատմության վրա, իսկ որոնք են բոլոր ժամանակների և բոլոր մշակույթների համար (տես *Fee and Stuart's How to Read the Bible for All Its Worth*, էջ 14-19 և 69-77): Ահա ազատության և պատասխանատվության քննարկումները, որոնք գտնվում են Հռ. 14: 1-15: 13 և 1 Կոր. 8-10 շատ կարևոր են: Թե ինչպես ենք մենք պատասխանում այս հարցին ունի կարևոր նշանակություն երկու պատճառներով,
1. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է հավատքով քայլի իր ունեցած լույսի ներքո: Աստված նայում է մեր սրտին և դրդապատճառներին:
 2. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա այլ հավատացյալներին քայլել իրենց հավատքի հասկացողության մեջ: Աստվածաշնչյան սահմաններում պետք է հանդուրժողականություն լինի: Աստված ուզում է, որ մենք սիրենք միմյանց, ինչպես որ Նա է սիրում:
- Ե. Ամփոփելով ասենք, որ քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է, ոչ թե կատարյալ աստվածաբանություն: Աստծո հետ հարաբերությունը, որը ազդում է մեր փոխհարաբերությունների վրա ուրիշների հետ, ավելի կարևոր են, քան հստակ տեղեկատվությունը կամ հավատքի կատարելությունը:

14:2

Արևելահայերեն «լեզուներով»

Արևմտահայերեն «օտար լեզուով»

NASB, NKJV, NRSV, NJB «լեզվով»

KJV, Peshitta «անհայտ լեզվով»

TEV «տարօրինակ լեզուներով»

Սա հունարեն *glōssa* բառն է, որը փոխաբերական իմաստով օգտագործվում էր որոշակի մարդկային լեզվի կամ բարբառի համար: Պենտեկոստեի օրը «լեզուների» փորձառությունը ակնհայտորեն վերաբերում էր մարդուն հայտնի լեզվին (Գործք 2: 6-10): Հրաշքը կարծես ականջի հետ է կապված (այսինքն, «նրանք ամեն մեկը լսում էր, որ խոսում էին իր սեփական լեզվով»): Այս նույն երևույթը մի քանի անգամ կատարվել է Գործք Առաքելոցում, հրեա հավատացյալներին հավաստիացնելու համար, որ Աստված ընդունել է մեկ այլ մարդկանց խմբի (այսինքն, սամարացիներ, հռոմեացի զինվորականներ, հեթանոսներ):

Այնուամենայնիվ, 1 Կորնթացիսի «լեզուները» ավելի շատ համապատասխանում է հունական գուշակումների էքստատիկ արտահայտումներին, ինչպես Դելֆին, որտեղ կինը մտնում է տրանսի մեջ, իսկ մեկ այլ մարդ մեկնաբանում է նրա ասածը: Կորնթոսը կոսմոպոլիտ քաղաք էր: Մարդիկ հայտնի ամբողջ աշխարհից Կորնթոսում էին, սակայն տեքստը նշում է «լեզուների մեկնությունը» որպես հոգևոր պարզ (տես 1 Կոր. 12: 10,30; 14:26), ոչ թե մարդ, ով պատահական սկսում է խոսել օտար լեզվով:

▪ **«մարդկանց հետ չէ խօսում, այլ Աստուծոյ հետ»** Կորնթացիսի լեզուները անձնական երկխոսություն են Աստծո և հավատացյալի միջև (տես 1 Կոր. 14:24): Լեզուներն ինքնին հաղորդակցության միջոց չեն, այլ Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություններ: Միայն եթե դրանք մեկնաբանվեն, խոսողը և լսողները կհասկանան:

▪ **«Որովհետև ոչ ով չէ լսում»** Կորնթոսի լեզուները կարծես թե անհայտ, կապակցված հնչյուններ են: Դելփիում մեկ հատուկ մարդ (սովորաբար կին) կլսում էր անհայտ, անկապ հնչյուններ, իսկ մյուսը դրանք մեկնաբանում էր ներկաներին: Այս գործընթացը կարծես զուգահեռ է Կորնթոսի «լեզուների» փորձառության հետ: Գործք Առաքելոցում «թարգմանիչ» չկա:

14: 3 «շինություն» Սա հոգևոր պարզանքների գնահատման համար օգտագործվող երրորդ փորձությունն է (տես գլուխ 12, Գ. կետ կոնտեքստային մտքեր բաժնում): Արդյոք նրանք շինում են կամ կառուցում են եկեղեցին: Այս թեման կրկին անգամ կրկնվում է այս գլխում, 1 Կոր. 14: 3,4,5,12,17,26: Այս է պատճառը, որ «մարգարեություն», որը հասկանալի է որպես ավետարանը բաժնեկցել, ավելի շատ ցանկալի է, քան «լեզուները»: Մարգարեությունը հոչակում է ավետարանը բոլոր ներկաներին, իսկ լեզուները միայն օրհնում են խոսողին, եթե դրանք չեն մեկնաբանվում: Եթե մեկնաբանվում է, լեզուները և դրանց մեկնաբանումը ծառայում են ավետարանի հոչակման նույն նպատակին (այսինքն, մարգարեանալ): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇԻՆՈՒԹՅՈՒՆ 1 Կոր. 8:1

▪ **«եւ մխիթարություն եւ սփոփություն»** Ավետարանի հոչակման նպատակը ոչ միայն բացառապես ավետարանչությունն է, այլև եկեղեցու խրախուսման համար (այսինքն, շինություն, հորդոր և մխիթարություն): Մեծ Պատվիրանը ներառում է թե ավետարանչություն և թե աշակերտություն:

14: 4 «Լեզուով խօսողը իր անձն է շինում» Կորնթոսի լեզուները առանց մեկնաբանման՝ անհատական ուղղվածություն ունեցող պարզանք են:

▪ **«եկեղեցին»** Սա *ekklesia* տերմինն է առանց ՀՈՂԻ, որը վերաբերում է հավատացյալների ամբողջ մարմնին: Պողոսի ցանկությունն այն է, որ բոլոր հավատացյալները, ոչ միայն մի քանի ընտրվածները, օրհնվեն միասնական պաշտամունքի ժամանակ:

14: 5 «Ես կամենում եմ որ դուք ամենդ լեզուներով խօսիք» Համեմատեք 12: 30-ը և հիշեք, որ այս արտահայտությունը ստորադասական է, իր գործողությամբ: Պողոսը չի թերագնահատում լեզուները, այլ (1) հաստատում է նրանց պատշաճ փոխհարաբերությունը այլ հոգևոր պարզանքի հետ և (2) սահմանում որոշ գործնական ուղեցույցներ: Կորնթացիները, ըստ երևույթին, այդ պարզանքն ձգտում էին եսասիրական, անձնական փառքի և հեղինակության համար:

▪ **«աւելի մեծ է մարգարեացողը»** Սա Պողոսի չափանիշների վրա հիմնված գնահատական է, որ լեզուները ավելի քիչ արժեքավոր են եկեղեցուն շինություն բերելու գործում: Բայց հիշեք, որ լեզուներով խոսելը Հոգու վավերական պարզան է (տես 1 Կոր. 14: 18,39):

▪ **«միայն եթե թարգմանե»** Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը ներկայացվում է *ean* -ի փոխարեն *ei*: Հնարավոր է արդյոք մարդն ունենա թե լեզուների և թե թարգմանության պարզ: Այլ տեքստերից ակնհայտ է, որ քրիստոնյա առաջնորդները ունեցել են մեկից ավել հոգևոր պարզ (տես Գործք 13:1; 2 Տիմ. 1:11): Այնուամենայնիվ, եթե հնարավոր էր մեկ հոգու համար լեզուներով խոսելը, և հետո թարգմանելը, ապա ինչու՞ է պետք թարգմանիչը: Ինչպե՞ս է այս համադրությունը տարբերվում մարգարեությունից: Գուցե հնարավոր է, որ մեկ հավատացյալ

ունենա երկու պարզև, որոնք օգտագործվում են տարբեր ժամանակներում, բայց դա տարածված չէ (տես 1 Կոր. 14:13): Ավելի հավանական է, որ Պողոսն օգտագործում է գրական տեխնիկա, ընդգծելով, որ համայնքային պաշտամունքի մեջ հասկանալի հաղորդակցության անհրաժեշտություն կա:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:6-12

Քայց հիմա, եղբարք, եթէ ձեզ մօտ գամ եւ լեզուներով խօսիմ, ի՞նչ օգուտ կ'տամ ձեզ՝ եթէ չ'խօսիմ ձեզ հետ կամ յայտնութիւնով, կամ գիտութիւնով, կամ մարգարեութիւնով, կամ վարդապետութիւնով: ⁷ Այնպէս էլ անշունչ բաները որ ձայն են տալիս, թէ փող թէ քնար, եթէ ձայներով զանազանութիւն չ'անեն, ի՞նչպէս կ'ճանաչուի փողի փչելը, կամ քնարի հնչելը: ⁸ Որովհետեւ եթէ փողն էլ անորոշ ձայն տայ, ո՞վ կ'պատրաստուի պատերազմի համար: ⁹ Այսպէս էլ դուք, եթէ լեզուներով բանը յայտնի չ'անէք, այն խօսածն ի՞նչպէս կ'իմացուի. Որովհետեւ իբր թէ օդի մէջ խօսողներ կ'լինիք: ¹⁰ Որովհետեւ այնքան այլ եւ այլ ձայներ կան աշխարհքումը, եւ նորանց ոչ մէկն էլ առանց նշանակութեան չէ: ¹¹ Արդ եթէ ես ձայնի զօրութիւնը չ'գիտենամ, ես խօսողին խուժ կ'լինիմ, եւ խօսողն ինձ համար դուժ: ¹² Այսպէս էլ դուք, որովհետեւ հոգեւոր պարգեւներին նախանձաւոր էք, եկեղեցու շինութեան համար ջանք արէք, որ էլ առաւելանաք:

14: 6 «եթէ» 1 Կոր. 14: 6-12 պարբերության մեջ կան չորս երրորդ կարգի պայմանական նախադասություններ, ինչը ենթադրում է պոստեցիալ գործողություն (տես 1 Կոր. 14:6, 7, 8, 11): 2 Կոր. 14: 6 և 7-ը հարցեր են, որոնք ակնկալում են «ոչ» պատասխան (ինչպես 1 Կոր. 14:9):

▪ «կամ յայտնութիւնով, կամ գիտութիւնով, կամ մարգարեութիւնով» Այս տերմինները կարծես արտացոլում են տարբեր պարզևներ, բայց տարբերություններն անորոշ են: Հնարավոր է, որ Եփ. 4:11 հիշատակվում են առաջնորդներ մի քանի պարզևներով, յուրաքանչյուրը քարոզում է ավետարանը, բայց տարբեր շեշտադրումներով, այնպես էլ այստեղ է: Աստված բացահայտում է իր ճշմարտությունները տարբեր ձևերով, բայց նույն բովանդակությամբ: Շատ պարզևներ, մեկ ավետարան; պարզևներ ունեցող շատ հավատացյալներ, մեկ նպատակ (այսինքն, եկեղեցու շինությունը և եկեղեցու աճը, տես Մատթ. 28:19-20; Ղուկ. 24:47; Գործք 1: 8):

14: 7-8 Պողոսն օգտագործում է երաժշտական գործիքներ՝ իր միտքն ընդգծելու համար, փող և քնար 1 Կոր. 14: 7 և զինվորական շեփոր 1 Կոր. 14: 8: Երաժշտական գործիքներն օգտագործվում են տարբեր նպատակների համար (այսինքն՝ երաժշտություն կամ ազդանշան տալու համար): Եթե գործիքը սխալ ձայն է հանում, ապա դա խառնաշփոթ է ստեղծում: Մարդկային ձայնը նախատեսված է տեղեկատվություն հաղորդելու այլ մարդկանց: Եթե դա փոխանցում է այլ մարդկանց համար նշանակություն չունեցող հնչյուններ, ապա դրա նպատակը ձախողում է (տես 1 Կոր. 14:9):

14:10 Սա հազվագյուտ չորրորդ կարգի պայմանական նախադասություն է: Այս համարը չի կարող օգտագործվել ապացուցելու, որ լեզուները հայտնի լեզու են: Պողոսն օգտագործում է մեկ այլ տերմին (այսինքն, *phōnē* ոչ թե *glōssa*) 1 Կոր. 14:10 և 11-ում: Դա պատկերացում է այն բարդության մասին, որն անհասկանալի խոսակցական լեզուն կամ օտար լեզուն հասկանալու համար է: Մարդու լեզուն պետք է հասկանալի լինի:

Արևելահայերեն «խուժ»
Արևմտահայերեն «օտարական»

NASB, NJB, Peshitta «բարբարոս»
NKJV, NRSV, TEV «օտար երկրացի»
REB «անկապ խոսք»

Սա հնչյունաձայնային բառ է (այսինքն *barbaros*) այլ լեզուների տարօրինակ հնչյունների համար հույների և հռոմեացիների, հատկապես Հռոմեական կայսրության հյուսիսի ցեղային խմբերի մոտ: Հույները և հռոմեացիները նշում էին, որ այդ ցեղային լեզուները հնչում էին ինչպես «բար, բար»: Այսպիսով, «բարբարոս» տերմինը:

14:12 «որովհետև հոգևոր պարզելներին նախանձաւոր էք» Պողոսը չի քննադատում նրանց նախանձավորությունը (տես 1 Կոր. 14:1), այլ փորձում է այն ուղղել ամբողջ եկեղեցու շինության համար (տես 1 Կոր. 12: 7):

Արևելահայերեն «հոգևոր պարզելներին»
Արևմտահայերեն «հոգևոր պարզելներու»

NASB, NKJV, NRSV, NIV «հոգևոր պարզելներ»
RSV «Հոգու դրսևորումները»
TEV «Հոգու պարզելները»
NJB «հոգևոր ուժեր»

Սա նույն հունարեն բառը չէ, ինչպես 1 Կոր. 12: 1 (այսինքն, *pneumatikōn*), սակայն *pneuma-* ի սեռական հոլովի հոգնակի (տես Հատուկ Թեմա: Հոգին Աստվածաշնչում 1 Կոր. 12:1), որը նշանակում է «շունչ», «քամի», «հոգի»: Այս ձևը նույնպես կարելի է տեսնել 1 Կոր. 12:10, որտեղ խոսվում է որոշակի պարզելի մասին (այսինքն, փորձել հոգիները, տես 1 Հովհ. 4: 1): Կոնտեքստում կարծես թե այն վերաբերում է Հոգու կողմից տրված տարբեր հոգևոր պարզելներին (տես 1 Կոր. 12:11) մարմնի ընդհանուր օգտի համար (տես 1 Կոր. 12: 7):

- **«եկեղեցու շինութեան համար ջանք արէք, որ էլ առաւելանաք»** Սա ներկա ներգործական հրամայական հոգնակի է: Հոգևոր պարզելների նպատակը անհատի բարձրությունն ու փառքը չէ, այլ Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու առողջությունն ու աճը:
«Առաւ» տես Հատուկ Թեմա 2 Կոր. 2:7

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:13-19
¹³Վասնորոյ լեզուով խօսողը, թող աղօթք անէ, որ թարգմանէ էլ: ¹⁴Վասնզի եթէ ես աղօթք անեմ օտար լեզուով, իմ հոգին է աղօթք անում. Բայց միտքս անպտուղ է: ¹⁵Ուրեմն ի՞նչ է, աղօթք անեմ հոգով, աղօթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ: ¹⁶Ապա եթէ դու օրհնես հոգով, նա որ տգէտի տեղն է բռնում է ի՞նչպէս Ամեն ասէ քո օրհնութեանը, քանի որ չ՛գիտէ թէ ի՞նչ էս ասում: ¹⁷Դու իրաւ որ լաւ ես գոհանում. Բայց միւսը չէ շինվում: ¹⁸Գոհանում եմ իմ Աստուածանից, որ ձեր ամենիցն աւելի լեզուներով խօսում եմ: ¹⁹Բայց եկեղեցու մէջ աւելի կամենում եմ որ հինգ խօսք իմ մտքովը խօսիմ, որ ուրիշներին էլ բան սովորեցնեմ քան թէ բիրաւոր խօսքեր լեզուներով:

14:13 Կոնտեքստում սա նշանակում է, որ բոլորին ավետարանը հաղորդելը նախընտրելի է անձնական էքստազից (տես 1 Կոր. 14:15): Արդյո՞ք այս համարը ենթադրում է, որ հավատացյալները ապաշխարության պահին ստանում են մեկ հոգևոր պարզել (տես 1 Կոր. 12:11), բայց հետո կարող են խնդրել մեկ ուրիշը: Այս հարցը պետք է անպատասխան մնա: Անշուշտ ոմանք մի քանի պարզելներ ունեին (տես Գործք 13:1; 1 Տիմ. 2:7; 2 Տիմ. 1:11):

14:14 «եթէ» Սա ևս մեկ երրորդ կարգի պայմանական է, ինչպես 1 Կոր. 14: 6,7,8,11,23,24,28 և 29:

▪ **«իմ հոգին է աղոթք անում»** Սա վերաբերում է մարդկային հոգուն: Սա գրական փոխաբերություն էր մարդու համար:

▪ **«Բայց միտքս անպտուղ է»** Պողոսը խաղում էր իմաստության հանդեպ ունեցած կորնթոսցիների սիրո հետ: Նա նաև վերահաստատում էր, որ միայն լեզուները չեն հաղորդակցում, փոխանցում, նույնիսկ խոսողին:

14:15

Արևելահայերեն «Ուրեմն ի՞նչ է»

Արևմտահայերեն «Ուրեմն ի՞նչ ընելու եմ»

NASB «Ուրեմն ի՞նչ է դուրս գալիս»

NKJV «Ո՞րն է արդյունքը»

NRSV, TEV «Ի՞նչ պետք է անեմ»

NJB «Հետո՞ ինչ»

Սա իդիոմա է (տես 1 Կոր. 14:26; Գործք 21:22): Պողոսը ցանկանում է իր քննարկման եզրակացությունն անել:

▪ **«սաղմոս ասեմ հոգով»** Արդյո՞ք սա նշանակում է մեկ այլ հոգևոր պարզ (տես 1 Կոր. 14:26; Կող. 3:16; Եփ. 5:19):

14:16 «եթէ» Սա ևս մեկ երրորդ կարգի պայմանական նախադասություն է, ինչպես 1 Կոր. 14: 6,7,8,11 և 14:

Արևելահայերեն «նա որ տգետի տեղն է բռնում է»

Արևմտահայերեն «անիկա որ տգետի պես կայներ է»

NASB «նա ով պարզն չունեցողի տեղն է լրացնում»

NKJV «նա, ով զբաղեցնում է չիմացողի տեղը»

NRSV «ինչպես կարող է որևէ մեկը դրսից լինել»

TEV «ինչպես կարող են հասարակ մարդիկ մասնակցել ժողովին»

NJB «աննշան մարդը»

Այս տերմինը օգտագործվել է այն անձի համար, ով տեղեկացված չի եղել կամ էլ անպատրաստի որոշակի բնագավառում, հետևաբար, ոչ պրոֆեսիոնալ կամ աշխարհիկ անձ (տես Գործք 4:13; 2 Կոր. 11:6): Օգտագործումը այստեղ և 1 Կոր. 14: 23-24-ում կարող է ունենալ երկու հնարավոր իմաստներից մեկը:

1. քրիստոնեական ժողովի հերթական այցելու, մինչդեռ 1 Կոր. 14:23 հնարավոր է առաջին անգամ այցելու
2. հնարավոր է նոր քրիստոնյա, բայց առանց լեզուների կամ թարգմանության պարզների

«Տեղի» արտահայտությունը վերաբերում է կամ (1) այցելուներ կամ, հնարավոր է, նոր քրիստոնյաներ, որոնք կոնկրետ տեղեր ունենին, որտեղ նրանք կարող էին հստակ լսել կամ (2) իդիոմ, մարդ, ով տեղեկացված չէ

▪ **«Ամեն ասէ»** Անշուշտ, այդ տերմինը կարող է վերաբերել պարզն չունեցող հավատացյալին (տես F. F. Bruce, *Answers to Questions*, էջ 98): Եթե դա ճիշտ է, ապա Պողոսը ցանկանում էր, որ

հավատացյալները «ստուգեն» կամ «դատավճիռ կայացնեն» պաշտամունքին ասված մարգարեական խոսքերին (տես 1 Կոր. 2: 12,15; 14: 29,37; 1 Թես. 5:20-21; ինչպես նաև 1 Հովհ. 4: 1): Ոչ ոք չէր կարող ասել «ամեն», եթե

1. չեն հասկանում, թե ինչ է ասվել
2. նրանք ունեն կերպ (այսինքն, Հոգին) գնահատելու այն, ինչ ասվել է

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄԵՆ

SPECIAL TOPIC: AMEN

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» տերմինը առաջացել է եբրայերեն բառից
 1. «ճշմարտություն» (*emeth*, BDB 49)
 2. «ճշմարտություն» (*emun, emunah*, BDB 53)
 3. «հավատք» կամ «հավատարմություն»
 4. «վստահություն» (*dmn*, BDB 52)
- Բ. Այս բառի ստուգաբանության համաձայն նշանակում է մարդ, ով ունի ֆիզիկական կայուն դիրքորոշում և ոտքերի վրա հաստատ կանգնած է: Հակառակը կլինի մեկը, ով անկայուն է, սայթաքում է (տես Սաղ. 35:6; 40:2; 73:18; Եր. 23:12) կամ գայթակղվում (տես Սաղ. 73:2): Այս բառացի օգտագործման արդյունքում մշակվեց փոխաբերական իմաստ հետևյալ հասկացողություններն արտահայտելու համար՝ հավատարիմ, հուսալի, անձնվեր և վստահելի (տես Ամբ. 2: 4):
- Գ. Հատուկ օգտագործում (տես Հատուկ Թեմա: Հավատք, վստահություն, հուսալիություն և հավատարմություն Հին Կտակարանում)
 1. սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
 2. հավաստիացում, վստահություն, Ելից 17:12
 3. կայունություն, Ելից 17:12
 4. կայունություն, Ես. 33: 6
 5. ճշմարիտ, 1 Թագ. 10:6; 17:24; 22:16; Առ. 12:22
 6. ամուր, հաստատ, 2 Մնաց. 20:20; Ես. 7: 9
 7. հուսալի (Թորա), Սաղ. 119: 43,142,151,160
- Դ. Հին Կտակարանում օգտագործվում են երկու այլ եբրայերեն տերմիններ ակտիվ հավատքի համար:
 1. *bathach* (BDB 105), վստահություն
 2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես Ծննդ. 22:12)
- Ե. Հավատք կամ վստահելիություն բառի իմաստից զարգացավ կրոնական օգտագործման ձև, որ ուրիշի ճշմարիտ կամ հավաստի միտքը հաստատելու համար էր օգտագործվում (տես Թվ. 5: 22; 2 Օր. 27: 15-26; 3 Թագ. 1:36; 1 Մնաց. 16: 36; Նեեմ. 5:13; 8: 6; Սաղ. 41:13; 72:19; 89:52; 106: 48; Եր. 11: 5; 28: 6):
- Զ. Այս տերմինի աստվածաբանական բանալին ոչ թե մարդկության հավատարմությունն է, այլ ՅԱՀՎԵԻ (տես Ելից 34: 6; 2 Օր. 32:4; Սաղ. 108:4; 115: 1; 117: 2; 138: 2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵԻ ողորմած, հավատարիմ, ուխտի նվիրվածությունն է և Նրա խոստումները: Նրանք, ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵԻՆ, պետք է լինեն Նրա նման (տես Ամբ. 2: 4): Աստվածաշունչը մարդկության մեջ Աստծո պատկերի վերականգնելու պատմությունն է (տես Ծննդ. 1: 26-27): Փրկությունը վերականգնում է Աստծո հետ մտերմիկ փոխհարաբերություն ունենալ մարդկության ունակությունը: Հենց սրա համար ենք մենք ստեղծվել:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» բառի օգտագործումը, որպես կրոնական հավաստիության վերջնական հաստատում, տարածված է Նոր Կտակարանում (տես 1 Կոր. 14:16; Հայտ. 1: 7; 5:14; 7:12):
- Բ. Աղոթքին մոտ գտնվող տերմին, որը օգտագործվում է Նոր Կտակարանում (տես Հռ. 1:25; 9: 5; 11:36; 16:27; Գաղ. 1: 5; 6:18; Եփ. 3:21; Ֆիլ. 4:20; 2 Թես. 3:18; 1 Տիմ. 1:17; 6:16; 2 Տիմ. 4:18):
- Գ. Հիսուսը միակն է, ով օգտագործեց տերմինը (կրկնապատկված Հովհ. 25 անգամ, այսինքն, Հովհ. 1:51; 3: 3,5,11 և այլն), ներկայացնելու նշանակալի մտքեր (տես Ղուկ. 4:24; 12: 37; 18: 17,29; 21:32; 23:43):
- Դ. Այն օգտագործվում է որպես կոչում Հիսուսի համար Հայտ. 3: 14 (տես նաև 2 Կոր. 1:20, հնարավոր է տիտղոս ՅԱՀՎԵԻ համար Ես. 65:16):
- Ե. Հավատարմության կամ հավատքի, հուսալիության կամ վստահության գաղափարը արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմիններով, որը թարգմանվում է անզլերեն, որպես «վստահություն», «հավատք» (տես Հատուկ Թեմա: Հավատք կամ Վստահություն):

14: 16,17 «քո օրհնութեանը» Այս արտահայտությունը կարող է վերաբերել Տիրոջ Ընթրիքին, որը կոչվում էր *Eucharist*, հունարեն «շնորհակալություն, գոհություն» տերմինից: 17-րդ համարը, սակայն, ենթադրում է, որ դա վերաբերում է աղոթքին:

- «միսը» տես ծանուցում 1 Կոր. 6: 1.

14:18 «Գոհանում եմ իմ Աստուածանից, որ ձեր ամենիցն աւելի լեզուներով խօսում եմ» Պողոսը գիտեր, թե ինչ է խոսում: Այս համարը, որը համակցված է 1 Կոր. 14:39-ի հետ, պետք է ստիպի ժամանակակից քրիստոնյաներին երկու անգամ մտածել, մինչև կքննադատի լեզուների գաղափարը մեր օրերում: Պետք է նաև ստիպել նրանց, ովքեր ընդգծում են, որ կրկնակի մտածեն: Պողոսը խոստովանում է, որ այն արժեզրկվի:

Հետաքրքիր է, թե ինչպես է այս գլուխը անցնում ԵԶԱԿԻԻՅ, 1 Կոր. 14: 2, 4, 9, 13, 14, 19, 26, 17, ՀՈԳՆԱԿԻԻ, 1 Կոր. 14: 5,6,18, 22,23,39:

Այս եկեղեցում լարվածությունը եղել է (1) սոցիալական դասերի միջև և (2) անհատական պարզների և համայնքի շինության միջև: Եկեղեցում անհատը միշտ ծառայում է համայնքին (տես 1 Կոր. 12:7):

Սա Պողոսի մեկ այլ օրինակ է, երբ փորձում է որոշել, գոնե որոշ չափով, Կորնթոսում գտնվող նախանձախնդիր հավատացյալներին: Երբ նա կարևորեց գիտելիքը, բայց ընդգծեց սերը, նա այժմ կարևորում է լեզուները, բայց շեշտում է շինությունը:

14:19 «Բայց եկեղեցու մեջ աւելի կամենում եմ որ հինգ խօսք իմ մտքովը խօսիմ...քան թէ բիրաւոր խօսքեր լեզուներով» 11-14 գլուխների գրական բաժինը խոսում է հրապարակային, հավաքական երկրպագության մասին (տես 1 Կոր. 14: 23,28,34): Այս պարագայում լեզուներով անձնական երկրպագությունը ավելի քիչ ցանկալի է, քանի որ ոչ ոք չի ուսուցանվում և դրանով դարձի գալիս (տես 1 Կոր. 14: 24-25) կամ շինվում («որպեսզի ես ուրիշներին հրահանգեմ», տես 1 Կոր. 14 : 3,4,5,12,1,19,26):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:20-25

²⁰Եղբարք, մտքով տղայ մի լինիք. բայց չարութեան կողմանէ տղայ եղէք, իսկ մտքով կատարեալ եղէք:
²¹Օրէնքումը գրուած է, թէ Օտար լեզուներով եւ օտար շրթունքներով կ'խօսիմ այս ժողովրդի հետ. Բայց եւ այնպէս ինձ ականջ չեն դնիլ, ասում է Տէրը: ²²Ուրեմն լեզուներն նշանի համար են՝ ոչ թէ

հաւատացեալներին, այլ անհաւատներին. Բայց մարգարէութիւնը ոչ թէ անհաւատների համար է, այլ հաւատացեալների: ²³Արդ եթէ բոլոր եկեղեցին մէկ տեղ գայ, եւ ամենքը լեզուներով խօսին. Եւ տգէտներ կամ անհաւատներ մտնեն այնտեղ, մի թէ չեն ասիլ թէ դուք գծուած էք: ²⁴Բայց եթէ ամենը մարգարէանան, եւ մի անհաւատ կամ տգէտ գայ մտնէ, նա ամենիցը կ'յանդիմանուի, ամենիցը կ'քննուի: ²⁵Եւ այսպէս նորա սրտի գաղտնիքը յայտնի կ'լինի. Եւ ապա երեսի վերայ ընկած Աստուծուն երկրպագութիւն կ'անէ, խոստովանելով թէ արդարեւ Աստուած ձեր միջումն է:

14:20 «տղայ մի լինիք» Սա ներկա հրամայական է բացասական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողությունը: Նրանք այս բնագավառում երեխաներ էին (տես Եփ. 4:14), թէն կարծում էին, թէ իրենք այնքան հոգևոր և իմաստուն էին:

- **«մտքով»** Սա հունարեն թաղանթ կամ ստոծանի բառից է: Սա ուղեղը չէր, այլ նախնիների համար որպէս ինտելեկտի ֆիզիոլոգիական կողմը:

- **«բայց չարութեան կողմանէ տղայ եղէք»** Որոշ բնագավառներում հավատացյալները պետք է անտեղյակ լինեն (տես Մատթ. 10:16; Հռ. 16:19): Չարիքի դեմ մեծագույն պաշտպանություններից մեկը անտեղյակությունն է կամ աննկատ թողնելը:

- **«կատարեալ եղէք»** Պողոսն օգտագործում է այս տերմինը (այսինքն, *teleios*) նկարագրելու հավատացյալի, ով լիովին հասկանում է ավետարանը և ապրում է այն (տես 1 Կոր. 2: 6; 13:10; 14:20; Եփ. 4:13; Փիլ. 3:15; Կոր. 1:28): Բոլոր հավատացյալները սկսում են որպէս մանուկ քրիստոնյաներ և պետք է աճեն: Գոյություն ունեն հասկացողության և աստվածահաճո ապրելակերպի մակարդակներ: Այնուամենայնիվ, այս տերմինը չի նշանակում անմեղություն, այլ հոգևոր լիություն և ծառայության սպառազինում:

14: 21-22 Սա մասնակի մեջբերում է Ես. 28: 11-12-ից: Այն վերաբերում է Ասորեստանի ներխուժմանը Իսրայել: 22-րդ համարը վերաբերում է այս մեջբերմանը և ոչ թէ ամբողջ կոնտեքստին: Այս նախադասությունը հակասում է այս կոնտեքստում Պողոսի ասած մնացած բոլոր բաներին: Այն պետք է միայն վերաբերվի Հին Կտակարանի մեջբերմանը: Պողոսը օգտագործում է «նշան» բառը երկու ձևով՝ դասաստան և շնորհք:

14:21 «Օրէնքումը» Սովորաբար հրեական կոնտեքստում դա վերաբերում էր Մովսեսի գրվածքներին (այսինքն, Ծննդոցից - 2 Օրինաց), բայց ոչ միշտ: Հովհ.10:34; 12:34; և 15:25-ում այս արտահայտությունը վերաբերում է Մաղմոսներից մեջբերմանը, ինչպէս դա անում է Հռ. 3: 9: Այս նույն արտահայտությունն օգտագործվում է 1 Կոր. 14:34, բայց անորոշ է, թէ որ տեքստերին է վերաբերում, հնարավոր է, Ծննդոց 3:

Walter Kaiser, in *Toward An Exegetical Theology*, էջ 110, հետաքրքիր մեկնաբանություն է տալիս, որ 34 և 35 համարները մեջբերումներ են Կորնթոսի եկեղեցու կողմից Պողոս առաքյալի ատացած նամակից: Սովորաբար Պողոսի պատասխանները նրանց գրավոր հարցերին ասվում է «բայց այն բաների համար» արտահայտությամբ (տես 1 Կոր. 7: 1,25, 8: 1, 12: 1, 16: 1), բայց ոչ միշտ (այսինքն, ակնհայտ մեջբերումը նամակից գտնվում է 1 Կոր. 6:12 և 10:23): Եթէ դա ճիշտ է, ապա «Օրէնքը նաև ասում է» կարող է վերաբերել Սաղ. 68:11, որը ենթադրում է առանց մեջբերման 1 Կոր. 14:36: Սաղմոս 68:11-ը հաստատում է կանանց կողմից պաշտամունքի ժամանակ բարի լուրի հռչակումը:

Գորդոն Ֆին, իր 1 Կորնթացիսի մեկնաբանության մեջ (*New International Commentary*) նաև պնդում է, որ Պողոսը չի գրել 1 Կոր. 14: 34-35 (էջ 699-708): Տես Bruce M. Metzger, *A Textual Commentary On the Greek New Testament*, էջ 565-566:

14:23 «եթէ» Սա ևս մեկ երրորդ կարգի պայմանական նախադասություն է (տես 1 Կոր. 14: 6, 7, 8, 11 և 14):

▪ **«բոլոր եկեղեցին մեկ տեղ գայ»** 11-14 գլուխների գրական կոնտեքստը վերաբերում է համայնքի պաշտամունքի ուղեցույցներին:

Սովորաբար այս վաղ եկեղեցիները հանդիպել են մասնավոր տներում (այսինքն, տնային եկեղեցիները): Հաճախ Կորնթոսի չափ քաղաքի մեջ լինում էին մի քանի տնային եկեղեցիներ: Սա կարող է լինել եկեղեցու ներսում պառակտումների զարգացման պատճառներից մեկը: Պողոսի խոսքերը ենթադրում են ավելի մեծ խմբի հանդիպումը՝ հնարավոր է սիրո խնջույքը (տես 1 Կոր. 11: 17-34) և Տիրոջ Ընթրիքը: Որքան հաճախ կամ որտեղ են նրանք հանդիպել, անորոշ է: Այս համարից ակնհայտ է, որ հյուրեր թույլատրվում էր, ինչը ցույց է տալիս, որ դա գաղտնի կամ փակ հանդիպում չէր:

Արևելահայերեն «դուք գծուած էք»

Արևմտահայերեն «դուք խենդեցեր էք»

NASB, REB «դուք խելագար էք»

NKJV, NRSV «դու ցնորված էք»

TEV «դուք բոլորդ խենթ էք»

NJB «դուք բոլորդ գառանցում էք»

Այս տերմինը (այսինքն, *mainomai*) օգտագործվում է Գործք 12:15 և 26: 24-25-ում: Հովհ. 10:20-ում օգտագործվում է այն՝ նկարագրելու դիվահարությունը: Այս տերմինը չի նշանակում խելագարություն, այլ հոգով բռնված: Հունական մշակույթում դա համարվում էր արտոնյալ հոգևոր վիճակ, բայց ոչ քրիստոնեության մեջ:

14:24 «եթէ» Սա ևս մեկ երրորդ կարգի պայմանական նախադասություն է (տես 1 Կոր. 14:6,7,8,11,14,23,24,28,29):

Արևելահայերեն «կ'յանդիմանուի... կ'քննուի»

Արևմտահայերեն «կը յանդիմանուի...կը դատուի»

NASB «կհանդիմանվի ...կդատապարտվի»

NKJV «կհանդիմանվի ...կքննվի»

NRSV «կգրպարտվի...կդատվի»

TEV «կհանդիմանվեն իրենց մեղքի համար... կդատվի»

NJB «կփորձվի ... կդատվի»

Մարգարեությունը բերում է հասկացողություն և հանդիմանություն, համոզմունք: լեզուները խառնաշփոթ են բերում անհավատներին կամ նոր հավատացյալ այցելուների համար:

▪ **«ամենը... ամենիցը... ամենիցը»** Սա չի նշանակում, որ յուրաքանչյուր հավատացյալ խոսել է ամեն պաշտամունքի ժամանակ, բայց այն ամենը, ինչ արվել է պաշտամունքի մեջ, ավելացրել է հոգևոր համոզմունքները, որոնք այցելուներն ու հավանական նորադարձ հավատացյալները փորձառել են: «Բոլորը» անշուշտ, ներառում է կին հավատացյալներին:

14:25 «նորա սրտի գաղտնիքը յայտնի կ'լինի» Մա կարող է վերաբերել ճշմարտությանը

1. Աստված գիտի մարդկանց մտքերը և բերում է հանդիմանություն Իր Հոգով (տես 1 Կոր. 14:24)
2. մեղքի հանրային խոստովանությունը առաջին դարի պաշտամունքի մաս էր կազմում (տես Մատթ. 3: 6; Մարկ. 1:5; Գործք 19:18 և Հակ. 5:16)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԻՐՏԸ (ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ)

SPECIAL TOPIC: THE HEART (NT)

Հունարեն *kardia* տերմինն օգտագործվում է Մեպտուագինդում և Նոր Կտակարանում, որը անդրադարձնում է եբրայերեն *leb* տերմինը (BDB 523, KB 513): Այն օգտագործվում է մի քանի ձևերով (տես Bauer, Arndt, Gingrich and Danker, *A Greek-English Lexicon*, 2-րդ հրատ., էջ 403-404)

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը, փոխաբերություն մարդու համար (տես Գործք 14:17; 2 Կոր. 3:2-3; Հակ. 5:5)
2. Հոգևոր (բարոյական) կյանքի կենտրոնը
 - ա. Աստված գիտի սիրտը (տես Ղուկ. 16:15; Հռ. 8:27; 1 Կոր. 14:25; 1 Թեա. 2:4; Հայտ. 2:23)
 - բ. Օգտագործվում է մարդու հոգևոր կյանքի համար (տես Մաթ. 15:18-19; 18:35; Հռ. 6:17; 1 Տիմ. 1:5; 2 Տիմ. 2:22; 1 Պետ. 1:22)
3. Մտային կյանքի կենտրոնը (ինտելեկտ, բանականություն, տես Մաթ. 13:15; 24:48; Գործք 7:23; 16:14; 28:27; Հռ. 1:21; 10:6; 16:18; 2 Կոր. 4:6; Եփ. 1:18; 4:18; Հակ. 1:26; 2 Պետ. 1:19; Հայտ. 18:7; սիրտը մտքի հոմանիշն է 2 Կոր. 3:14-15 և Փիլ. 4:7)
4. կամքի, ցանկության կենտրոնը (տես Գործք 5:4; 11:23; 1 Կոր. 4:5; 7:37; 2 Կոր. 9:7)
5. զգացմունքների, էմոցիաների կենտրոնը (տես Մաթ. 5:28; Գործք 2:26, 37; 7:54; 21:13; Հռ. 1:24; 2 Կոր. 2:4; 7:3; Եփ. 6:22; Փիլ. 1:7)
6. Հոգու գործունեության միակ վայրը (տես Հռ. 5:5; 2 Կոր. 1:22; Գաղ. 4:6, (Քրիստոսը մեր սրտերում, Եփ. 3:17))
7. Սիրտը փոխաբերական ձև է, որը վերաբերվում է ամբողջ անձին (տես Մաթ. 22:37, մեջբերված 2 Օր. 6:5): Մտքերը, շարժառիթներն ու գործողությունները վերագրվում են սրտին, որոնք ամբողջությամբ հայտնում են, թե ինչ տեսակի անհատ է նա: Հին Կտակարանը ունի տերմինների զարմանալի օգտագործում
 - ա. Ծննդ. 6:6; 8:21 «Աստված տրամեց Իր սրտում», նաև տես Ովա. 11: 8-9
 - բ. 2 Օր. 4:29; 6:5, 10:12, «քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով»
 - գ. 2 Օր. 10:16; Եր. 9:26 «անթլպատ սիրտ» և Հռ. 2:29
 - դ. Եզ. 18:31-32, «նոր սիրտ»
 - ե. Եզ. 36:26, «նոր սիրտ» հակառակը «քարե սիրտ» (տես Եզ. 11:19; Զաք. 7:12)

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:26-33

²⁶Ուրեմն ի՞նչ է, եղբարք. Երբ որ մեկտեղ ժողովուրիք, ձեզանից ամեն մեկը սաղմոս ունի, վարդապետություն ունի, յայտնություն ունի, լեզու ունի, թարգմանություն ունի. ամենը շինութեան համար լինի: ²⁷Եթէ մեկը լեզուով խօսի, թող երկու, եւ եթէ էլ աւելի շատ՝ երեք լինեն. Մէկը միւսից յետոյ. Եւ մեկը թող թարգմանէ: ²⁸Բայց եթէ թարգմանող չ'կայ, թող լռէ եկեղեցումը. Թող իրան համար եւ Աստուծոյ հետ խօսի: ²⁹Բայց մարգարէներից թող երկուսը կամ երեքը խօսին, եւ ուրիշները քննեն: ³⁰Բայց եթէ մի ուրիշին, որ այնտեղ նստած է յայտնություն լինի, առաջինը թող լռէ: ³¹Որովհետեւ կարող էք մէկ մէկից յետոյ ամենը մարգարէանալ. Որ ամենը սովորին եւ ամենը մխիթարուին: ³²Եւ մարգարէից հոգիներն էլ մարգարէներին հնազանդում են: ³³Որովհետեւ Աստուած խոռվութեան

14: 26-33 Սա մեզ հնարավորություն է տալիս իրական պատկերացում կազմել վաղ եկեղեցու դինամիկ, առանց կառուցվածքի պաշտամունքի ծառայությունը: Ակնհայտ էր, որ դեռևս չկար պրոֆեսիոնալ հոգևորականություն: Յուրաքանչյուրը կարող էր և խոսում էր ազատորեն: Խնդիրները ծագեցին երկու ոլորտներում:

1. խառնաշփոթություն կար, որովհետև շատերն էին ուզում խոսել
2. նրանք ընդհատում էին միմյանց

Պողոսը փորձում է կազմավորել համայնքային պաշտամունքի ծառայությունն այնպես, որ չսահմանափակվի Հոգու ազատությունը, այլ ընդգծի հավաքվելու նպատակը, որը անապաշխարի փրկությունն է և փրկվածի հասունությունը (տես Մատթ. 28: 19-20): Սա կառույցի կառուցվածք չէ (տես 1 Կոր. 14:32): Պողոսը չի ցանկանում վերահսկել պաշտամունքի իրավիճակը:

14:26 «Ուրեմն ի՞նչ է» տես ծանուցում 15-րդ համարում:

▪ **«ամենը շինութեան համար լինի»** Սա հերթական մանդատն է (այսինքն, ներկա կրավորական հրամայական): Հոգևոր պարզների նպատակը ոչ թե անհատի բարձրանալն է, այլ եկեղեցու աճը (քանակապես և հասունությամբ): Այլ կերպ ասած «Արդյոք այս գործողությունը կամ կառուցվածքը կատարում է Հիսուսի Մեծ Պատվիրանի նպատակը» (տես Մատթ. 28:19-20):

14:27 «Եթէ» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Պողոսը չի հաստատում նրանց գործողությունները, բայց նշում նրանց գործողությունները:

14:28 «Եթէ» Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է: Պողոսը ցանկանում է, որ պաշտամունքը հոգևոր տեղեկություններ հաղորդի բոլոր ներկաներին: Լեզուն ընդունելի է, եթե թարգմանվում է: Համայնքային պաշտամունքը ոչ թե անձնական փորձառության և նվիրվածության ժամանակն է և տեղը, այլ մեկտեղ հավաքվելու նպատակը իրականացնելու համար է:

▪ **«Եթէ թարգմանող չ'կայ, թող լռե՛ եկեղեցումը»** Սա ներկա ներգործական հրամայական է: Լեզուներն ու մարգարեությունները վերահսկվում են այն անձի կողմից, ով պարզներ ունի (տես 1 Կոր. 14:30): Քրիստոսի մարմնի և ավետարանչության շինությունը, և ոչ թե անձնական ազատությունը, եկեղեցու պաշտամունքի բանալին է:

14:29 Մարգարեները չունեն անվերահսկելի ազատություն (այսինքն, թեմա, ժամանակ կամ բովանդակություն) խոսելու համար: Դրանք պետք է գնահատվեն պարզներ ունեցող այլ հավատացյալների կողմից (տես 1 Կոր. 14:30 և 12:10; 1 Հովհ. 4: 1-3): Հիշեք, որ դները ներկա էին, երբ Հիսուսը խոսում էր ինչպես ժողովարանում, այնպես էլ բացօթյա քարոզում:

▪ **«քննեն»** Տես ծանուցում 1 Կոր. 4: 7 և Հատուկ Թեմա 1 Կոր. 10:29:

14:30 «Եթէ» Սա ևս մեկ երրորդ կարգի պայմանական նախադասություն է (տես 1 Կոր. 14: 6, 7, 8, 11, 23, 24, 28, 29):

▪ **«առաջինը թող լռե՛»** Սա զուգահեռ է 1 Կոր. 14:28 (այսինքն, ներկա ներգործական հրամայական): Սա նշանակում է, որ խոսողը կարող է ընդհատվել մեկ այլ հավատացյալի կողմից, և ներկա խոսողը պետք է լսի նոր խոսողին, նախքան արձագանքները կամ հայտնությունը ավելացնելը:

Այս վաղ ծառայությունները շատ դինամիկ էին և չալանավորած: Սա կոչ է անում որոշ անհատների այնքան խիստ, որքան ուղիղ պատվեր է այլ անձանց դիմելու համար:

Այժմ հարց է, «արդյո՞ք սա ստանդարտ կառուցվածք էր Պողոսի բոլոր եկեղեցիներում, թե՞ Կորնթոսի եկեղեցու յուրահատուկ կողմն էր: Արդյո՞ք մենք այս քննարկումն ընդունում ենք որպես Նոր Կտակարանի ապացույց, թե ինչպես պետք է բոլոր ծառայությունները կազմակերպվեն կամ պարզապես օրինակ է, թե ինչպես կարելի է կարգավորել խնդիրներն այս բնագավառում:

14:31 «Որովհետև կարող էք մեկ մեկից յետոյ ամենոյ մարգարեանալ» Ինչպե՞ս պետք է բառացիորեն ընկալվի այս արտահայտությունը: Արդյո՞ք Պողոսը հաստատում է կառուցվածք կամ անսահման հնարավորություն ցանկացածի և բոլոր հավատացյալների համար, որ խոսեն նույն պաշտամունքի ծառայության ընթացքում: Արդյո՞ք վաղ եկեղեցու պաշտամունքների համար ժամկետներ եղել են: Սա գրական դրույթի օրինակ է, ոչ թե բառացի արտահայտության: Կոնտեքստում Պողոսը սահմանափակում է նրանց ազատությունը, այլ ոչ թե ընդարձակում է նրանց ազատությունը:

Այնուամենայնիվ, «բոլոր» տերմինը, անշուշտ, ենթադրում է, որ թե կանայք և թե տղամարդիկ կարող են մարգարեանալ (տես 1 Կոր. 11:5): Բոլոր հավատացյալները, տղամարդիկ և կանայք, ունեն պարզևներ օգուտի համար (տես 1 Կոր. 12: 7; 14:26): Սա ավելացնում է ևս մեկ անհրաժեշտություն, պարզելու համար 1 Կոր. 14:34:

▪ **«Որ ամենը սովորին եւ ամենը մխիթարուին»** Այս նպատակի պարագան (այսինքն, *hina*) նշում է Պողոսի հիմնական մտահոգությունը, ոչ թե բոլորը կարողանում են խոսել, բայց որ բոլորը կառուցվեն, շինվեն և հասունանան: Սա սույն գլխի հերթական թեման է:

14:32

Արևելահայերեն «մարգարեից հոգիներն էլ մարգարեներին հնազանդում են»

Արևմտահայերեն «մարգարեներուն հոգիները մարգարեներուն հսկողութեան տակ ըլլան»

NASB, NKJV, NRSV «մարգարեների հոգիները ենթակա են մարգարեներին»

TEV «Աստծո պատգամը հոչակելու պարզև պետք է լինի բանախոսի հսկողության տակ»

NJB «մարգարեական հոգին պետք է լինի մարգարեի հսկողության ներքո»

Այս թարգմանության տարբերակները ցույց են տալիս, որ այս արտահայտությունը կարելի է հասկանալ երկու տարբեր ձևերով:

1. Նրանք, ովքեր հոչակում են Աստծո պատգամը (այսինքն, ներկա կրավորական սահմանական) ուրիշներին, ովքեր Աստծո խոսքն են հոչակում (այսինքն, մարգարեները ստուգում են մարգարեներին, 1 Կոր. 14:29):
2. Աստծո պատգամը հոչակողը ունի անձնական վերահսկողություն (այսինքն, ներկա չեզոք սահմանական) երբ և ինչ ասել (տես 1 Կոր. 14:30):

«Հոգի» տերմինը օգտագործվում է այնպես, ինչպես 1 Կոր. 14: 2,14,15 (երկու անգամ), 16: Սա անհատի անձնավորությանը վերաբերող իդիոմատիկ ձև է (տես 1 Կոր. 2:11; 5: 3-4; 7:34; 16:18): Տեսեք «ենթակայության» մասին գրառումները 1 Կոր. 16:16:

14:33

Արևելահայերեն «մարգարեից հոգիներն էլ մարգարեներին հնազանդում են»

Արևմտահայերեն «մարգարեներուն հոգիները մարգարեներուն հսկողութեան տակ ըլլան»

NASB «քանի որ Աստված շփոթության Աստված չէ, այլ խաղաղության»

NKJV «քանի որ Աստված շփոթության հեղինակ չէ, այլ խաղաղության»

NRSV, NJB «Աստված անկարգության Աստված չէ, այլ խաղաղության»

TEV «քանի որ Աստված չի ուզում, որ մենք անկարգությունների մեջ լինենք, այլ ներդաշնակության և խաղաղության մեջ»

Սա չի վերաբերում ստեղծագործությանը: Սա քառսին հակառակ կարգուկանոնը չէ, այլ ֆրակցիոն հալածանքի կամ եսասիրության հակառակ խաղաղությունը: Սա չի փոքրացնում առաջին դարի երկրպագության դինամիկ բնույթը (տես 1 Կոր. 14: 39-40), այլ պարզներով օժտված որոշ բանախոսների նախանձի, էգոիստական վերաբերմունքը (տես 2 Կոր. 6: 5; 12: 20; Հակ. 3:16): Եվ մեր պաշտամունքի ոճը և վերաբերմունքը արտացոլում են այն Աստծուն, ում մենք երկրպագում ենք (տես 1 Կոր. 11: 17-34):

▪ **«ինչպես սուրբերի բոլոր եկեղեցիներումը»** Անորոշ է, այս արտահայտությունը վերաբերում է 1 Կոր. 14: 33 ա (NASB, NKJV) թե 1 Կոր. 14:34 (NRSV, TEV, NJB): Քանի որ «եկեղեցիներում» արտահայտությունը կրկնում է 1 Կոր. 14: 33բ, հավանական է, որ 33բ կազմում է եզրափակիչ դիտողություն, ինչպես անում է 1 Կոր. 4:17 և 7:17: Այս արտահայտությունը հստակ նշում է բոլոր Կորնթոսյան տնային եկեղեցիներին, որ նրանք առանձնահատուկ, գերազանց կամ բացառիկ պարզներ չունեն (տես 1 Կոր. 4:17; 7:17; 11:16; 14: 33,36; 16: 1): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲԵՐ 1 Կոր. 1:2:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:34-36

³⁴Ձեր կանայքը եկեղեցիներումը լուռ կենան. Որովհետև նորանց հրաման չ'կայ խօսելու, այլ որ հնազանդ լինեն, ինչպես օրէնքն էլ ասում է: ³⁵Բայց եթէ մի բան կամենան սովորիլ, թող տան մեջ իրանց մարդկանցից հարցնեն. Որովհետև կնկանն անվայել է եկեղեցում խօսել: ³⁶Կամ թէ Աստուծոյ խօսքը ձեզանի գ դուրս եկաւ, կամ միայն ձե գ հասաւ:

14:34 «կանայքը եկեղեցիներումը լուռ կենան» Այս համարը ժամանակակից եկեղեցու որոշ հատվածներում դարձել է աստվածաբանական հիմնախնդիր: Ժամանակակից արևմտյան սոցիալական և մշակութային միտումը անհատական իրավունքների և հավասարության նկատմամբ Նոր Կտակարանին, և հատկապես Պողոսին, այս հարցի վերաբերյալ դարձրել է դատող և բացասական: Պողոսի օրերում կանանց վերաբերող աստվածաբանությունը արմատապես դրական էր (տես Եփ. 5:22-23): Պողոսն ակնհայտորեն աշխատել է բազմաթիվ կանանց հետ, ինչպես ցույց է տալիս Հռ. 16-ում իր գործընկերների ցանկը: Նաև տես Հատուկ Թեմա: Կանայք Աստվածաշնչում, 1 Կոր. 7:5:

Նույնիսկ այս կոնտեքստում Պողոսը նշում է հավասարակշռությունը, 1 Կոր. 11: 5-ի և 14:34-ի միջև: Ինչն է 1 Կոր. 14: 34-35 յուրահատուկ կերպով վերաբերում է Կորնթոսին և առաջին դարին: Տեսությունները բազում են (տես ստորև Հատուկ Թեմա): Թե ինչպես դա վերաբերում մեր օրվան դա պրոբլեմատիկ է: Դոգմատիզմը և ապացուցող-տեքստային ձևաչափը տեղին չեն: Աստվածաշնչյան վկայությունը այս հարցի վերաբերյալ միատեսակ կամ մոնոլիտիկ չէ:

Պողոսը սահմանափակում է մի քանի խմբերի Կորնթոսի եկեղեցու պաշտամունքի ժամանակ «լուռ մնալ», 1 Կոր. 14: 28,30,34: Կորնթոսում եկեղեցական պաշտամունքի մեջ խնդիր կար: Քրիստոնյա կանայք այդ խնդրի մի մասն էին կազմում: Նրանց նոր ազատությունը Քրիստոսում (կամ նրանք, լինելով հռոմեական հասարակության կանանց ազատության շարժման մի մասը), հանգեցնում էին մշակութային, աստվածաբանական և ավետարանչական խնդիրների: Մեր օրերում հակառակը կարող է ճշմարիտ լինել: Պարզներ ունեցող կին առաջնորդները կօգնեն քսանմեկերորդ դարի եկեղեցուն հասնել աշխարհին ավետարանով: Դա չի ազդում Աստծո կողմից տրված արարչագործության կարգին, բայց այն ցույց է տալիս ավետարանչության առաջնահերթությունը (տես 1 Կոր. 9:22): Այս հարցը ավետարանի կամ վարդապետական խնդիր չէ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԸ ԿԱՆԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

SPECIAL TOPIC: PAUL'S USE OF WOMEN IN MINISTRY

Ուշադրություն դարձրեք Հռոմեացիս 16-ում գտնվող բոլոր կանանց, ովքեր համագործակցում էին Պողոսի հետ ավետարանի գործում (տես Փիլ. 4: 3):

Փիբե (սարկավագուհի/սպասավոր) Հռ. 16: 1

Պրիսկիլա Հռ. 16: 3

Մարիամ Հռ. 16: 6; Յունիա (կամ Յունիաս, եթե այդպես էր, ուրեմն տղամարդ էր) Հռ. 16: 7

Տրիփանոս և Տրիփոս Հռ. 16:12

Պերսիդե Հռ. 16:12

«նրա մորը» Հռ. 16:13

Յուլիա (հնարավոր է առաքյալ) Հռ. 16:15

և «նրա քրոջը» Հռ. 16:15

Զգուշացեք դոգմատիզմից կանանց ծառայության ոլորտում: Բոլոր հավատացյալներն ունեն պարզևներ (տես 1 Կոր. 12: 7,11); բոլոր հավատացյալները լիաժամ ծառայողներ են (տես Եփ. 4:12): Այս ցանկում մենք ունենք կին սարկավագ, Փիբե և հնարավոր է կին առաքյալ՝ Յունիա (տես Հովել 2:28; Գործք 2: 16-21): Դժվար է իմանալ, թե ինչպես աստվածաշնչորեն վարվել այս հարցի հետ՝ Պողոսի պարադոքսալ թվացող դրույթների պատճառով, օրինակ, 1 Կոր. 11: 4-5 համեմատելով 14:34-ի հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԹԵՈՐԻԱՆԵՐ «ԿԱՆԱՅՔ ԼՈՒՌ ՄՆԱՆ»

SPECIAL TOPIC: THEORIES RELATED TO "WOMEN KEEP SILENT"

I. Սա Պողոսի դրույթը չէ, այլ հետազայում լրացում է կատարված (տես Gordon Fee, *New International Commentary*, "I Corinthians," էջ 699-708), սովորաբար հիմնված որոշ հունարեն ձեռագրերի վրա (այսինքն, MSS D, F, G; Վուլգատի ձեռագրերից մեկը; Լատինական եկեղեցի Հայր Ամբրոսիասի, 384թ. հետո), որոնք 1 Կոր. 14: 33-34-ը դնում են 40-ից հետո:

II. Պողոսը մեջբերում է Եկեղեցու նամակը, որը նշում է պառակտող խմբի կեղծ տեսակետները: Պողոսը մեջբերում է այն, որ մերժեն դա: Այնուամենայնիվ, այս ձգձգված քննարկումները (այսինքն, 1 Կոր. 14: 33-35 կամ 36) չեն համապատասխանում Պողոսի նախկին «կարգախոսներին»: Դա ոչ թե պարզ դրույթ է, որը ձևափոխվել է Պողոսի կողմից, այլ հաստատուն փաստարկ:

III. Պողոսը անդրադառնում է խնդրահարույց կանանց խմբին, որոնք խանգարում են պաշտամունքը կամ լեզուներով, մարգարեությանը կամ հարցերով: Քրիստոսում ունեցած նրանց նոր ազատությունը մշակութային դժվարություններ է առաջացնում ավետարանչության և երկրպագության մեջ:

IV. Պողոսը սահմանափակում է կանանց, ոչ թե հրապարակային մարգարեություն անելու մեջ, այլ ուրիշ մարգարեների (այսինքն՝ տղամարդ մարգարեների) պատգամները գնահատելու համար, այդպիսով նրանց վրա իշխանություն է նշանակում (James Hurley, *Men and Women in Biblical Perspective*, էջ 185-194 և Wayne Grudem, *The Gift of Prophecy in I Corinthians*, էջ 239-255):

V. Պողոսը շփվում է 1 Կոր. 11: 5 և 14:34 տարբեր իրավիճակների հետ:

Ա. Մեկը տնային եկեղեցի է (այսինքն, 11: 5) իսկ մյուսը համայնքային եկեղեցի (այսինքն, 14:34)

Բ. 11: 5-ը վերաբերում է միայնակ կանանց, իսկ 14:34 ամուսնացած կանանց

Գ. Որոշ կանայք անխոհեմ էին կամ շատ շատախոս էին

Թարգմանությունների բազմազանությունը և քանակը ցույց է տալիս, որ ժամանակակից թարգմանիչների անորոշությունը կապված է Կորնթոսի պաշտամունքի պրակտիկաների հետ (տես Bruce W. Winter, *After Paul Left Corinth*) և այս հարցում, առաջին դարի քրիստոնեական համայնքների: Ո՞րն էր խնդիրը

1. տեղական (այսինքն, բացառապես Կորնթոսի),
2. առաջին դարի հռոմեական մշակույթը,
3. պարզների չարաշահումը,
4. իշխելու փորձ կանանց կողմից,
5. հրեական կառուցվածքը պարտադրելու փորձ,
6. Կորնթոսի պառակտված խմբի կեղծ կարծիքը:

Արևելահայերեն «հնազանդ լինեն»

Արևմտահայերեն «հնազանդ ըլլալու»

NASB «ենթարկվում են»

NKJV «ներանք պետք է ենթարկվեն»

NRSV «պետք է ենթարկվի»

TEV «ներանք չպետք է պատասխանատու լինեն»

NJB «իրենցն է ստորադաս մասն»

Սա ներկա կրավորական հրամայական է: «Ենթակա» բառը ռազմական տերմին էր, որը նկարագրում էր հրամանատարության շղթան: Այն օգտագործվում է Հիսուսի համար (տես Ղուկ. 2:51, իր երկրային ծնողներին և 1 Կոր. 15:28 իր Երկնային Հորը) և տիեզերական ճշմարտություն է կեղեցու համար (տես Եփ. 5:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ (*hupotassō*)

SPECIAL TOPIC: SUBMISSION (*hupotassō*)

Սեպտուագիանը այս տերմինն օգտագործում է տասը տարբեր եբրայերեն բառեր թարգմանելու համար: Նրա հիմնական եբրայերեն իմաստը «պատվիրել» կամ «հրամանի իրավունք»: Սա վերցված է Սեպտուագիանից (LXX):

1. Աստված պատվիրում է (տես Ղև. 10: 1; Հովնան 2: 1; 4: 6-8)
2. Մովսեսը պատվիրում է (տես Ելից 36: 6; 2 Օր. 27:1)
3. թագավորները պատվիրում են (տես 2 Մնաց. 31:13)

Նոր Կտակարանում այս իմաստը շարունակվում է Գործք 10:48, որտեղ Առաքյալը պատվիրում է «հնազանդություն»: Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում մշակվում են լրացուցիչ իմաստներ:

1. զարգանում է կամավորական ասպեկտ (հաճախ ՉԵԶՈՔ ՄԵՌ)
2. այս ինքնասահմանափակող գործողությունը կարելի է տեսնել Հիսուսի հնազանդության մեջ
 - ա. Հորը (տես 1 Կոր. 15:25)
 - բ. իր երկրային ծնողներին (տես Ղուկ. 2:51)
3. հավատացյալները հնազանդվում են մշակույթի ասպեկտներին, որպեսզի ավետարանը բացասական ազդեցություն չունենա
 - ա. մյուս հավատացյալները (տես Եփ. 5:21)

բ. հավատացյալ կանայք (տես Կող. 3:18; Եփ. 5:22-24; Տիտոս 2: 5; 1 Պետ. 3: 1)

գ. հավատացյալները հեթանոս իշխանություններին (տես Հռ. 13:1-7; 1 Պետ. 2:13)

Հավատացյալները գործում են սիրո շարժառիթներից ելնելով, Աստծու համար, Քրիստոսի համար, Թագավորության համար, ուրիշների բարօրության համար:

Ինչպես *agapao* (սերը), եկեղեցին այս տերմինը լրացնում է նոր իմաստով, հիմնված Թագավորության կարիքների և ուրիշների կարիքների վրա: Այս տերմինը ստանձնում է անձնագոհության նոր ազնվություն, ոչ թե հրամանատարության վրա, այլ ինքնորոշման Աստծո եւ Նրա Մեսիայի նոր հարաբերությունների վրա: Հավատացյալները հնազանդվում և ենթարկվում բոլորի օգտի և Աստծո ընտանիքի օրհնության համար:

▪ **«ինչպես օրենքն էլ ասում է»** Արդյո՞ք Պողոսը խոսում է կոնկրետ տեքստի, թե ընդհանուր սկզբունքի մասին: Չկա Հին Կտակարանյան տեքստ, որը ասում է սա: Հնարավոր է, որ 1 Կոր. 11: 8-9-ի լույսի ներքո, որ Ծննդ. 2: 20-24-ը խոսում է (տես 1 Տիմ. 2:13): Ոմանք կարծում են, թե անկումը և Ծննդ. 3:16 նույն են: Այն նաև կոնտեքստայնորեն հնարավոր է, որ «ենթակայությունը» կապված է 1 Կոր. 14:32-ի բառի օգտագործման հետ, որտեղ դա վերաբերում էր այլ մարգարեներին հնազանդվելուն (տես *Hard Sayings of the Bible*, էջ 616):

Պողոսի գրվածքներում առկա է սահունություն, օգտագործելով այս «օրենք» տերմինը: Շատ հաճախ դա վերաբերում է Մովսեսական օրենքին, հին ուխտին, բայց երբեմն այն վերաբերում է ընդհանուր առմամբ օրենքի գաղափարին: Եթե դա ճիշտ է, ապա այն վերաբերում է այս նահապետական «նախ տղամարդիկ» մշակույթի ընդհանուր սկզբունքներին:

Եթե կանանց թույլատրված լինեք, նույնիսկ արտաքնապես, դա առաջին հերթին կվնասեր Քրիստոսի գործին առաջին դարում հունա-հռոմեական աշխարհում: Այս կերպ նման է այն բանին, թե ինչպես է Նոր Կտակարանը վերաբերվում ստրկության խնդրին: Տես ծանուցում 1 Կոր. 14:21 այս արտահայտության տարբեր հասկացողությունները:

14:35 Այս համարը ցույց է տալիս, որ «կին» տերմինը 1 Կոր. 14:34 խոսում է «ամուսնացած կանանց» մասին: Արդյո՞ք սա նշանակում է, որ չամուսնացած կինը կարող է խոսել: Այս նույն անորոշությունը 11: 5-ում է:

Այս համարը կապված է 1 Տիմ. 2: 11-12 և Տիտոս 2: 5: Արդյո՞ք 1 Տիմ. 2: 13-14-ում դա աստվածաբանական է թե մշակութային: Արդյո՞ք այն կախված է յուրահատուկ պատմական իրավիճակից, թե դա համընդհանուր ճշմարտություն է բոլոր մշակույթների, բոլոր ժամանակների համար: Աստվածաշնչյան վկայությունը խոսում է երկու ձայնով (տես *How to Read the Bible For All Its Worth* by Gordon Fee and Douglas Stuart, էջ 15, 63, 72, 74):

▪ **«եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Քրիստոնյա կանայք հարցեր էին տալիս Կորնթոսում պաշտամունքի ժամանակ: Եկեղեցական հավաքույթներն արդեն իսկ ընդհատվում էին երգիչների, լեզուներով խոսողների, լեզուները թարգմանողների և մարգարեների կողմից: Այժմ հետաքրքիր կանայք կամ կանայք, ովքեր դրոշակ էին դարձրել իրենց ազատությունը, նույնպես ակտիվորեն ներգրավված էին քառսի մեջ:

▪ **«թող... հարցնեն»** Սա ներկա ներգործական հրամայական է: Այս կանանց ասված էր, թե ում հարցնել և երբ հարցնել և ինչու: Նրանց գործողություններն ազդում էին համայնքի պաշտամունքի արդյունավետության վրա:

Խնդրում ենք կարդալ Վալտեր Կ. Կայզերի հասկացողությունը 1 Կոր. 14: 34-36 –ի վերաբերյալ, 1 Կոր. 14:21-ում, պարբերություն 2:

14:36 Սա սարկաստիկ հարց էր՝ հպարտ Կորնթոսի եկեղեցուն ցնցելու հոգևոր իրականության և նրանց տեղը ուրիշ համայնքների մեջ: 1 Կոր. 14:36 երկու հարցերի քերականական ձևը ակնկալում է «ոչ» պատասխան:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:37-38

³⁷ Բայց եթե մեկը կարծէ՝ թէ նա մարգարէ է կամ հոգևոր, թող գիտենայ ինչ որ գրեցի ձեզ, որ Տիրոջ պատուիրաններն են: ³⁸ Բայց եթե մեկը տգէտ է, թող տգէտ լինի:

14: 37-38 Պողոսը պնդում է, որ ճշմարիտ հոգևոր պարզներ ունեցողները պետք է ճանաչեն այն մարդկանց, ովքեր խոսում են և ունեն պարզներ Աստծուց (տես 1 Կոր. 14: 32; Մատթ. 11:15; 13: 9,15,16,43): Պողոսի նկարագրությունը իր առաջնորդության զգացողության մասին արտահայտված է 1 Կոր. 7:40 և 14:38: Պողոսը ճանաչեց իր Առաքյալ լինելու պարզեր և խոսելու իշխանությունը Քրիստոսի համար: Նրա Առաքյալ լինելը հարցականի տակ էր դրված և վիճարկվում էր Կորնթոսի որոշ մարդկանց կողմից:

38 համարը նշանակում է աստվածային անեծք (ներկա կրավորական սահմանական) նրանց վրա, ովքեր մերժում են Առաքելական իշխանությունը (տես Wayne Grudem, *The Gift of Prophecy in 1 Corinthians*, էջ 104 ծանոթագրություն # 104):

▪ **«Եթէ ... եթէ»** Սրանք երկուսն էլ առաջին կարգի պայմանական նախադասություններ են, որոնք ենթադրվում են ճշմարիտ հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Կորնթոսցիներից ոմանք «կարծում են», որ իրենք «հոգևոր» են (այսինքն, *pneumatikos*, տես 1 Կոր. 12:1), սակայն նրանց գործողություններն ու նրանց փոխհարաբերությունները Առաքելական իշխանության հետ (այսինքն՝ Պողոսի իշխանության) ցույց են տալիս, որ նրանք չեն: Եթե նրանք չեն ճանաչում և ենթարկվում Պողոսի իշխանությանը, ապա նրանք չպետք է ճանաչվեն որպես հոգևոր առաջնորդներ:

14:38

Արևելահայերեն «թող տգէտ լինի»

Արևմտահայերեն «թող տգէտ ըլլայ»

NASB «չի ճանաչվել»

NKJV «թող տգէտ լինի»

NRSV «ճանաչված չէ»

TEV «ուշադրություն չի դարձնում նրան»

NJB «այդ անձը իրեն չի ճանաչում»

Հունարեն ձեռագրերում բայի ժամանակաձևի մեջ տարբերություն է նկատվում, ներկա կրավորական սահմանականի (MSS α^* , A^{*}) և ներկա ներգործական հրամայականի միջև (MSS P⁴⁶, α^2 , A^c, B, D²): Կրավորական սահմանականը նշանակում է «անտեսված կամ չճանաչված Աստծո կողմից»: Հրամայականը պատվիրում է Կորնթոսի հավատացյալներին հրաժարվել այն անձից, ով մերժում է Պողոսի իշխանությունը կամ, հնարավոր է, Պողոսի իշխանությունը ներկայացնող իր պաշտպան և ներկայացուցչի՝ Տիմոթեոսի կողմից: UBS⁴-ը տալիս է «Բ» վարկանիշ (գրեթե որոշակի):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 14:39

³⁹Ուրեմն, եղբարք, ջանք արեք որ մարգարեանաք, եւ լեզուներով խօսելը մի արգելէք: ⁴⁰Ամեն բան թող պարկեշտութեամբ եւ կարգով լինի:

14:39 «ջանք արեք» Սա Պողոսի հզոր ցանկությունն է (տես 1 Կոր. 12:31; 14:1): TEV- ը «պատրաստեք ձեր սիրտը»: Այս մշակութային իրավիճակում Պողոսի համար ցանկությունն ուղղված է ավետարանը քարոզելու / բաժնեկցելու ավետարանը հավատացյալի և անհավատի օգուտի համար: Սա համեմատեք Թվոց 29:11-ի հետ:

Թվում է, թե Պողոսի բացումը 1 Կոր. 14: 1-ը նաև իր եզրափակիչ դրոյթն է 1 Կոր. 14:39: Հունարեն *ōste* տերմինը, որին հետևում է հրամայականը, կարող է լինել առաքելական ամփոփագրերը ներկայացնելու ձև (տես 1 Կոր. 10:12; 11:33; 14:39; 15:58; Փիլ. 2:12; 1 Թես. 4:18):

▪ **«լեզուներով խօսելը մի արգելեք»** Սա Կորնթոսի և այսօրվա խնդիրների համար անհրաժեշտ հավասարակշռություն է: Մենք հակված ենք գերազնահատել հոգևոր հարցերի վերաբերյալ մեր վերաբերմունքը: Ճշմարտության ճանապարհը յուրաքանչյուր կողմում սխալ է տալիս (այսինքն, բոլորը խոսում են լեզուներով, և ոչ ոք չի խոսում լեզուներով):

Արևելահայերեն «պարկեշտութեամբ եւ կարգով լինի»
Արևմտահայերեն «վայելչութեամբ եւ կարգաւ թող ըլլայ»

NASB «պատշաճ և կարգավորված ձևով
NKJV, NRSV «պատշաճ կերպով և կարգով»
TEV «պատշաճ և կարգավորված ձևով
NJB «պատշաճ և կարգով»

Առաջին տերմինը «բարի, լավ» (*eu*) դերբայի և «կերպ» կամ «ձև» գոյականի կապակցված ձևն է (տես Հռ. 13:13; 1 Թես. 4:12):

Երկրորդ տերմինը նշանակում է «պատշաճ կերպով կազմակերպել, կարգ սահմանել» (տես Կող. 2: 5): Այս արտահայտությունը զուգահեռ է 1 Կոր. 14:33: Այն չի խոսում ներկա կարգուկանոնի մասին (օրակարգի վերահսկողությամբ), այլ եկեղեցու պաշտամունքի ծառայության նպատակի, որը ավետարանչությունն է և աշակերտությունը (տես Մատթ. 28:19-20):

Սա Պողոսի եզրափակիչ արտահայտությունն է պաժտամունքի թեմայի մասին, որը սկսվեց 11-րդ գլխում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ո՞րոնք են հոգևոր պարզները դատելու երեք չափանիշները:
ա.
բ.
գ.
2. Ինչու՞ են լեզուները թերազնահատվում մարգարեանալուց այս գլխում: Արդյո՞ք լեզուները ցածր, անպիտան հոգևոր պարզն է:
3. Ինչպե՞ս է միտքը կապված լեզուների հետ:
4. Ո՞րն է 22-րդ համարի խնդիրը:

5. Արդյո՞ք Կորնթոսի եկեղեցին պետք է օգտագործվի որպես ուղեցույց բոլոր եկեղեցիների համար:
6. Արդյո՞ք կանայք պետք է լռեն եկեղեցում: Բացատրեք ձեր պատասխանը՝ համեմատելով 11: 5 և 14:34:

1 ԿՈՐՆԹԱՑԻՍ 15

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Քրիստոսի հարությունը	Հարուցյալ Քրիստոսը, Հավատքի իրականությունը	Քրիստոսի մահվան և հարության Ավետարանը	Քրիստոսի հարությունը	Հարության փաստը
15:1-11	15:1-11	15:1-11	15:1-2 15:3-7 15:8-11	15:1-8 15:9-11
Մեռելների հարությունը	Հարուցյալ Քրիստոսը, Մեր հույսը	Հարության կարևորությունը մեզ համար	Մեր հարությունը	
15:12-19	15:12-19	15:12-19	15:12-19	15:12-19
15:20-28	15:20-28 Վերջին թշնամին կործանված է	15:20-28	15:20-28	15:20-28
15:29-34	15:29-34 Հարությունը մերժելու հետևանքները	15:29-34 (32բ-33)	15:29-32 15:33-34	15:29-34
Հարուցյալ մարմինը	Փառավոր մարմին	Հարության բնությունը	Հարուցյալ մարմինը	Հարության կերպը
15:35-41	15:35-49	15:35-41	15:35-38 15:39 15:40-41	15:35-38 15:39-44ա
15:42-49	Մեր վերջնական	15:42-49	15:42-49	15:44բ-49

	հաղթանակը			
15:50-58	15:50-58	15:50-57	15:50	15:50-53
	(55)	(54բ-55)	15:51-57 (55)	Հաղթանակի օրհներգը եզրակացություն
		15:58	15:58	15:54-57 15:58

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (*«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»*)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները (ընթերցանության շրջան #3): Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն և այլն

ԿՈՆՏԵՔՍՏՍՅՈՒՆ ՄՏՔԵՐ

Ա. Կոնտեքստից ակնհայտ է, որ Պողոսը արձագանքում է տեղի պոտենցիալ հերետիկոսությանը, որը հերքում էր մահացածների հարությունը (որի հետ հրեաների մեծամասնությունը համաձայն էր): Հնարավոր ծագման մասին պնդում են մի քանի տեսություններ.

1. սկսնակ գնոստիկ (տես Բառարան)գաղափարները, որոնք ընդգծեցին դուալիզմը հոգու (այսինքն, Աստված, որը բարի է) և նյութի միջև (այսինքն, նյութական բաներ, որոնք չար են)
2. նրանք պնդում էին, որ հարությունը արդեն տեղի է ունեցել (տես 2 Տիմ. 2:17-18):

Բ. Սա Նոր Կտակարանում Քրիստոսի հարության և հավատացյալների հարության մասին հստակ հատվածն է: Պետք է հիշել, որ այս հատվածը, հավանաբար գրվել է մինչև Ավետարաններից որևէ մեկի գրվելը:

Գ. Ակատի առեք Պողոսի հովվական շեշտադրումը, թե այս վարդապետական գլուխն ինչպես է ավարտվում, 1 Կոր. 15:58: Սա նման է 1 Թեա. 4:18-ին: Պողոսը միշտ վարդապետություն է բերում ամեն օր ապրելու և ծառայելու համար: Ճշմարտությունը տեղեկացնում է ապրելակերպի մասին:

Դ. Այն օգնում է տեսնել այս երկար գլխի ընդհանուր կառուցվածքը: Դոկ. Դեյվիդ Քինգը, Արևելյան Տեխասի Մկրտական համալսարանի գործընկերս, ունի իր դասարանային գրառումների լավ ուրվագիծ:

IV. Աճող հասուն քրիստոնյաները պահանջում են հարության մասին հավատքի հասկացողություն (1 Կոր. 15:1-58):

1. Ներածություն (1 Կոր. 15:1-11)

ա. Ավետարանը ինքնին հաստատ հիմնված է Հիսուսի հարության վրա (1 Կոր. 15:1-8):

(1) Ավետարանի հիմնական փաստերը (*Kerygma*) վերաբերում են Հիսուսի մահվանը, թաղմանը և հարությանը (1 Կոր. 15:3-4):

(2) Հարությունից հետո Հիսուսի հայտնվելը ապացուցում է, որ կասկածից վեր է, որ Հիսուսը հարություն է առել մեռելներից (1 Կոր. 15:5-7):

(3) Պողոսը մեծարում է Աստծո շնորհքը, որը թույլ է տալիս նրան լինել Հիսուսի հարության ականատեսների մեջ (1 Կոր. 15:8-11):

2. Մեր հարության վարդապետության հիմքը Հիսուսի հարությունն է (1 Կոր. 15:12-34):

ա. Ոմանք ասում են, որ Նա մեռելներից հարություն չի առել: Ո՞րոնք են դրա հետևանքները (1 Կոր. 15:12-19):

(1) Մեր քարոզչությունը արժեք չունի (1 Կոր. 15:12-14):

(2) Ձեր հավատքն ապարդյուն է (1 Կոր. 15:14 և 17):

(3) Մենք Աստծո ճշմարտության սուտ վկաններն ենք (1 Կոր. 15:15):

(4) Դուք դեռ ձեր մեղքերում եք (1 Կոր. 15:17):

(5) Այն հավատացյալները, ովքեր մահացել են, հավիտյան կորած են (1 Կոր. 15:18):

(6) Բոլոր հավատացյալները խղճալի են (1 Կոր. 15:19):

բ. Բայց Քրիստոսը (և կա) հարություն է առել: Ո՞րոնք են դրա հետևանքները (1 Կոր. 15:20-34):

(1) Նա գալիք հունձքի առաջին պտուղն է (1 Կոր. 15:20):

(2) Քրիստոս, մարդը, հաղթեց մահվանը, որը առաջին մարդը՝ Ադամը աշխարհի բերեց (1 Կոր. 15: 21-22, տես Հո. 5: 12-21):

(3) Հարությունը բաժանվում է երկու մասի՝ Քրիստոսի հարությունը և մյուսների հարությունը (1 Կոր. 15:23):

(4) Հարությունը կհաղթի մահվանը և բոլորը ենթակա կլինեն Աստծուն՝ ամենքի ստեղծողին (1 Կոր. 15:27-28):

(5) Հավատացյալները մկրտվում են հավատքի մեջ, հավատալով՝ թե հոգևոր և թե ֆիզիկական հարությանը (1 Կոր. 15:29):

(6) Մենք կարող ենք բոլոր վտանգների առաջ կանգնել առանց վախի, քանի որ եթե մահանանք, մենք կրկին ապրելու ենք և դատվելու ենք ըստ մեր գործերի (ենթադրվում է), որպեսզի մենք զգույշ լինենք, թե ինչպես ենք ապրում (1 Կոր. 15: 30-34):

3. Հավատացյալների հարության վարդապետությունը ողջամիտ է: Պողոսը պատասխանում է նրանց հարցերին (1 Կոր. 15:35-57):
- ա. Ինչպե՞ս են մահացածները հարություն առնում: Պատասխան. Աստծո զորությամբ, ինչպես որ Աստված սերմերից բույսեր է բարձրացնում (1 Կոր. 15: 35-38):
 - բ. Ինչպիսի՞ մարմին ունեն նրանք: Պատասխան. Ուրիշ տեսակի մարմին, որը հարմար է ուրիշ տեսակի կյանքին, և մենք ապրելու ենք հավիտենականության մեջ (1 Կոր. 15: 39-41):
 - (1) Աստված ստեղծել է ուրիշ տեսակի մարմիններ այս աշխարհի կյանքի համար (1 Կոր. 15: 39-41):
 - (2) Հարության մարմինը նոր տեսակի մարմին է (1 Կոր. 15: 42-44):
Անապականելին ապականության փոխարեն,
Անարգության փոխարեն փառավոր
Տկարի փոխարեն ուժեղ
Կենդանականի (կամ ֆիզիկական) փոխարեն Հոգևոր
 - (3) Հարության մարմինի բնույթը հակասում է բնական մարմնին, որը հակադրություն է տանում Պողոսը Ադամի և Քրիստոսի միջև (1 Կոր. 15: 45-49, տես Հռ. 5: 12-21):
 - գ. Ե՞րբ է տեղի ունենալու այս ամենը: Պատասխան. Երբ Հիսուսը կրկին վերադառնա (1 Կոր. 15: 50-57):
 - (1) Բոլորի համար անհրաժեշտ է փոփոխություն (1 Կոր. 15: 50):
 - (2) Մենք բոլորս մի ակնթարթում փոխվելու ենք (1 Կոր. 15: 51-52, տես 1 Թես. 4: 14-17):
 - (3) Դա կլինի այն ժամանակ, երբ Աստծո փողը հնչի (1 Կոր. 15: 52, տես 1 Թես. 4: 16):
 - (4) Երբ փոփոխությունը տեղի ունենա, մահվան նկատմամբ լիակատար հաղթանակը մերն է լինելու Հիսուս Քրիստոսում (1 Կոր. 15: 53-57):
4. Եզրակացություն. Այս վարդապետության հավատքի արդյունքն է ծառայության հաստատունությունը, քանի որ գիտենք, որ մեր ծառայությունը ապարդյուն չէ (1 Կոր. 15:58):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:1-2

¹Իմացնում եմ ձեզ, եղբարք, այն աւետարանը՝ որ աւետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի մէջ էլ կանգնած էք. ²Որով փրկվում էլ էք, այն բանով՝ որ ձեզ աւետարանեցի, եթէ ամուր բռնէք նորան. եթէ զուր տեղը չէք հաւատացել:

15: 1

Արևելահայերեն «Իմացնում եմ ձեզ»

Արևմտահայերեն «ձեզի կիմացնեմ»

NASB «Հիմա ես ձեզ հայտնի եմ»

NKJV «Ավելին, ես հայտարարում եմ ձեզ»

NRSV «Այժմ ես հիշեցնում եմ ձեզ»

TEV «Եվ հիմա ուզում եմ հիշեցնել ձեզ»

NJB «Ես ուզում եմ ձեզ հստակեցնել»

Պողոսը իր նամակը կազմել է մի քանի հարցերի շուրջ, որը Կորնթոսի եկեղեցին ուղարկել էր նրան (տես 1 Կոր. 7: 1,25; 8: 1; 12: 1; 16: 1) «հիմա այն բաների համար» արտահայտությունով (*peri de*): Գլուխ 15-ը սկսում է *de*-ով: Հնարավոր է արդյոք, որ հարության մասին այս բանավեճը խնդիր չէր, ինչի մասին հարցրել էր եկեղեցին, այլ մի իրավիճակ, որը Պողոսը տեղյակ էր և ուզում էր լուծել այն:

Սա հանդիսանում է *gnōrizō*- ի ներկա ներգործական սահմանական ձևը, որը նշանակում է հայտնի անել, բացահայտել կամ հայտարարել: Այնուամենայնիվ, Պողոսը նոր տեղեկություն չէր տալիս (տես 1 Կոր. 12:3), այլ վարդապետական ամփոփում, որի մեջ ներկայացնում է ավետարանը, որը ավելի վաղ քարոզել էր նրանց:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ KERYGMA
SPECIAL TOPIC: THE KERYGMA OF THE EARLY CHURCH

Քրիստոնեության մասին այնքան շատ տեսակետներ կան: Մեր օրերը կոչվում են կրոնական բազմակարծություն/պլուրալիզմ, ինչպես առաջին դարում: Անձամբ ես լիովին ներառում եմ և ընդունում բոլոր այն խմբերը, ովքեր պնդում են, որ ճանաչում և վստահում են Հիսուս Քրիստոսին: Մենք երբեմն չենք համաձայնվում այս կամ այն հարցի շուրջ, բայց հիմնականում քրիստոնեությունը ամբողջը Հիսուսի մասին է: Այնուամենայնիվ, կան խմբեր, որոնք պնդում են, որ քրիստոնյա են, որոնք թվացյալ են «կարծես թե» կամ «նորահավատ ակտիվիստ»: Ինչպե՞ս կարող եմ ասել տարբերությունը:

Լավ կան երկու եղանակներ.

Ա. օգտակար գիրք է *The Kingdom of the Cults* by Walter Martin իմանալու համար, թե արդի ադանդավորական խմբերն ինչի են հավատում (իրենց տեքստերից):

Բ. Վաղ եկեղեցու քարոզները, հատկապես Պետրոս և Պողոս առաքյալների, Գործքում, մեզ տալիս են հիմնական ուրվագիծ, թե ինչպես են առաջին դարի ներշնչված հեղինակները քրիստոնեությունը ներկայացրել տարբեր խմբերի: Այս վաղ «հռչակումը» կամ «քարոզելը» (որոնց ամփոփումն է Գործքը) հունարեն կոչվում են *kerygma*: Հիսուսի մասին ավետարանի հիմնական ճշմարտությունները Գործք Առաքելոց գրքից.

1. կատարում է շատ Հին Կտակարանյան մարգարեություններ - Գործք 2: 17-21,30-31,34; 3: 18-19,24; 10:43; 13: 17-23,27; 33: 33-37,40-41; 26: 6-7,22-23
2. ՅԱՀՎԵԻ կողմից ուղարկված, ինչպես որ խոստացել էր - Գործք 2:23; 3:26
3. կատարեց հրաշքներ, հաստատելու Իր ուղերձը և հայտնելու Աստծո գուրջը - Գործք 2:22; 3:16; 10:38
4. հանձնվել, մերժվել - Գործք 3: 13-14; 4:11
5. խաչված - Գործք 2:23; 3: 14-15; 4:10; 10:39; 13:28; 26:23
6. հարություն առավ- Գործք 2: 24,31-32; 3: 15,26; 4:10; 10:40; 13:30; 17:31; 26; 23
7. բարձրացվեց Աստծու աջ կողմը նստեց - Գործք 2: 33-36; 3: 13,21
8. կրկին կգա - Գործք 3: 20-21
9. նշանակված Դատավոր - Գործք 10:42; 17:31
10. ուղարկեց Սուրբ Հոգին - Գործք 2: 17-18,33,38-39; 10: 44-47
11. Փրկիչ բոլոր նրանց համար, ովքեր հավատում են - Գործք 13: 38-39
12. ուրիշ Փրկիչ չկա- Գործք 4:12; 10: 34-36

Ահա ճշմարտության այս առաքելական սյուների շարձազանքելու մի քանի եղանակներ.

1. Ապաշխարել - Գործք 2:38; 3:19; 17:30; 26:20
2. Հավատալ - Գործք 2:21; 10:43; 13: 38-39
3. Մկրտվել - Գործք 2:38; 10: 47-48
4. Ստանալ Հոգին - Գործք 2:38; 10:47
5. Բոլորը կարող են գալ դեպի- Գործք 2:39; 3:25; 26:23

Այս սխեման ծառայեց որպես վաղ եկեղեցու կարևոր հոչակումը, թեև Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ կարող են մի մասը թողնել կամ ընդգծել իրենց գրվածքներում այլ մանրամասներ: Մարկոսի ամբողջ Ավետարանը սերտորեն հետևում է *kerygma* -ի Պետրինի տեսանկյունին: Մարկոսը ավանդաբար համարվում է որպես Պետրոսի քարոզները կառուցող, քարոզված Հռոմում, գրված Ավետարանում: Մատթեոսը և Ղուկասը հետևում են Մարկոսի հիմնական կառուցվածքին:

▪ **«եղբարք»** Պողոսը հաճախ օգտագործում է այս խոսքը՝ նշելու իր թեմայի նոր հատվածը կամ թեմայի փոփոխությունը, ինչպես նա անում է այստեղ (տես 1 Կոր. 1: 10; 2: 1; 3: 1; 4: 6; 8:12; 10:1; 11:33; 12: 1; 14: 6,20,26; 15: 1,58; 16: 12,15):

▪ **«ավետարանը»** Պողոսը զուգահեռ է տանում «ավետարանի» գաղափարը, «այն խոսքը, որ ես քարոզեցի ձեզ» (1 Կոր. 15:2) արտահայտության հետ: Եբրայերեն մտածողության մեջ կար գործություն աստվածային խոսքի մեջ (օրինակ, Ծննդոց 1: 3,6,9,11,14,20,24; Սաղ. 33,6,9; Ես. 55:11; Հովհ.1: 1): Այս պատկերը Պողոսի քարոզչության բովանդակությունն էր, ոչ թե պարզապես ձայնայինացումին վերաբերող մի բան:

Այս համարն ունի համանման հայցական հոլով, բառացիորեն «ավետարանը, որը ես ավետել եմ ձեզ»:

Մրանք «ավետարանի» մասին իմ մեկնաբանություններից են *Gospel According to Peter*, հատոր 2 գրքից (տես առցանց www.freebiblecommentary.org):

«Մարկոսը, հավանաբար առաջին գրավոր Ավետարանը լինելով, սա *euangelion* տերմինի առաջին գործածումն է (տես Մարկ. 1: 14,15; 8:35; 10:29; 13:10; 14: 9) Ավետարանի հեղինակի կողմից (Պողոսի կողմից օգտագործված Գաղ. 2: 2 և 1 Թես. 2:9) ժամանակագրական առումով ավելի վաղ են): Դա բառացիորեն «բարի լուր» է կամ «բարի պատգամ»: Սա ակնհայտորեն արտացոլում է Ես. 61: 1 և հնարավոր է Ես. 40: 9 և 52:7: Նրա քերականական ձևը կարելի է հասկանալ՝ 1) Հիսուսի կողմից տրված պատգամ կամ 2) Հիսուսի մասին պատգամ: Թիվ 2-ը հավանաբար մտադրված իմաստն է: Այնուամենայնիվ, IVP- ի հրատարակած *the Dictionary of Jesus and the Gospels*, ասում է. «Մեռական հոլովը հավանաբար թե սուբյեկտիվ է և թե օբյեկտիվ; Հիսուսը հոչակում է ավետարանը իսկ այն հոչակում է իր պատմությունը» (էջ 285): *Jerome Biblical Commentary* ասվում է. «Մարկոսի «ավետարան» բառի օգտագործումը նման է Պողոսին, որտեղ դա կարող է նշանակել կամ հոչակելու գործողություն կամ հոչակվածի բովանդակությունը»:

▪ **«որն էլ ընդունեցիք»** Այս տերմինը օգտագործվում է հրեաների կողմից որպես «փոխանցվող ավանդույթներ» (տես 1 Կոր. 15:3; 11:23; 15:3; Մարկ. 7:4; Փիլ. 4:9; 1 Թես. 4:10; 2 Թես. 3: 6): Պողոսը փոխանցում էր այն, ինչ ընդունել էր (այսինքն, ավետարանը, տես 1 Կոր. 15:3) Քրիստոսից (տես Գաղ. 1: 12,16; Գործք 9: 1-22; 22: 3-16; 26: 7-18): Մինչ Պողոսի հեթանոսների Առաքյալ լինելը, նա ինքը ընդունեց ավետարանը: Սա ասորիստ ներգործական սահմանական է: Թեև Հիսուսը մահացավ բոլոր մարդկան մեղքերի համար, դա ակնհայտ է այս հատվածից և մյուսներից (տես Հովհ. 1:12; 3:16; Հռ. 10: 9-13), որ յուրաքանչյուր անձ պետք է անձամբ ընդունի Աստծո ձրի փրկության առաջարկը (տես 1 Կոր. 15:11): Ավետարանը (1) անձ է, որին պետք է ողջունել; (2) այդ անձի մասին ճշմարտություններ, որոնց պետք է հավատալ; (3) այդ անձին նմանվելու կյանք, որը պետք է ապրել:

▪ **«որի մեջ էլ կանգնած էք»** Սա վաղակատար ներգործական սահմանական է, որը նշանակում է ավարտված գործողություն անցյալում, որը դարձել է մշտական վիճակ: Այն խոսում է հաստատակամության անհրաժեշտության մասին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԳՆԵԼ (*histēmi*)

SPECIAL TOPIC: STAND (*histēmi*)

Այս հասարակ տերմինը օգտագործվում է Նոր Կտակարանում մի քանի աստվածաբանական իմաստներով

1. հաստատել
 - ա. Հին Կտակարանի Օրենքը, Հո. 3:31
 - բ. մարդու սեփական արդարությունը, Հո. 10: 3
 - գ. նոր ուխտը, Եբր. 10: 9
 - դ. մեղադրանքը, 2 Կոր. 13: 1
 - ե. Աստծո ճշմարտությունը, 2 Տիմ. 2:19
2. հոգևորապես դիմադրել
 - ա. Սատանային, Եփ. 6:11
 - բ. դատաստանի օրը, Հայտ. 6:17
3. դիմադրել կանգնելով գետնին հաստատ
 - ա. ռազմական փոխաբերություն, Եփ. 6:14
 - բ. քաղաքացիական փոխաբերություն, Հո. 14: 4
4. ճշմարտության դիրքը, Հովհ. 8: 44
5. վիճակ շնորհքի մեջ
 - ա. Հո. 5: 2
 - բ. 1 Կոր. 15: 1
 - գ. 1 Պետ. 5:12
6. վիճակ հավատքի մեջ
 - ա. Հո. 11:20
 - բ. 1 Կոր. 7:37
 - գ. 1 Կոր. 15: 1
 - դ. 2 Կոր. 1:24
7. ամբարտավանության դիրքորոշում, 1 Կոր. 10:12

Այս տերմինն արտահայտում է ինչպես ինքնիշխան Աստծո ուխտի շնորհքն ու ողորմածությունը, այնպես էլ այն փաստը, որ հավատացյալները պետք է արձագանքեն դրան և դրան հավատքով կառչեն: Երկուսն էլ աստվածաշնչյան ճշմարտություններ են: Նրանք պետք է միասին դիտվեն: Տես Հատուկ Թեմա: Ուխտ և Հատուկ Թեմա: Պարադոքսը Սուրբ Գրքում

15: 2 «Որով փրկվում էլ էք» Սա ներկա կրավորական սահմանական է, «փրկված» (տես 1 Կոր. 1:18; 2 Կոր. 2:15; 1 Պետ. 3: 21; 4:18): Փրկությունը գործընթաց է դեպի Քրիստոսանմանությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

SPECIAL TOPIC: GREEK VERB TENSES USED FOR SALVATION

Փրկությունը ոչ թե արդյունք է, այլ ամենօրյա առնչություն Աստծո հետ Քրիստոսի միջոցով: Այն չի ավարտվել, երբ մեկը հավատում է Քրիստոսին, այլ այն նոր է սկսվել (դարպաս, ապա ճանապարհ), տես Մատթ. 7: 13-14): Դա կրակից փրկվելու ապահովության քաղաքականությունն է, ոչ էլ երկնքի տոմս, այլ աճող Քրիստոսանման կյանք (տես Հո. 8: 28-29; 2 Կոր. 3:18; 7: 1; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 4:13; 1 Թես. 3:13; 4: 3,7; 5:23; 1 Պետ. 1:15): Ամերիկայում խոսք ունենք, որն ասում է, ինչքան երկար է զույգը ապրում միասին, այնքան ավելի շատ են սկսում նմանվել իրար: Սա է փրկության նպատակը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՕՐԻՍ)

- Գործք 15:11
- Հռոմեացիս 8:24

• 2 Տիմոթեոս 1: 9

• Տիտոս 3: 5

• Հռոմեացիս 13:11 (համատեղում է ԱՕՐԻՍՏԸ ապագա կողմնորոշման հետ)
ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐՊԵՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ)

• Եփեսացիս 2: 5,8

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ (ՆԵՐԿԱ)

• 1 Կորնթացիս 1:18; 15: 2

• 2 Կորնթացիս 2:15

• 1 Պետրոս 3:21

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (ԱՊԱԳԱ ԲԱՅԱԶԵՎ-ում կամ կոնտեքստում)

• Հռոմեացիս 5: 9,10; 10: 9,13

• 1 Կորնթացիս 3:15; 5: 5

• Փիլիպեցիս 1:28

• 1 Թեսաղոնիկեցիս 5: 8-9

• Եբրայեցիս 1:14; 9:28

• 1 Պետրոս 1: 5

Հետևաբար, փրկությունը սկսվում է նախնական հավատքի որոշմամբ (տես Հովհ. 1:12; 3:16; Հռ. 10:9-13), բայց դա պետք է երևա հավատքի ապրելակերպի մեջ (տես Հռ. 8:29; Գաղ. 2:19-20; Եփ. 1: 4; 2:10), որը մի օր կվերջանա (տես 1 Հովհ. 3: 2): Այս վերջնական վիճակը կոչվում է փառավորում (տես Հռ. 8: 28-30): Սա կարելի է պատկերել այսպես

1. սկզբնական փրկությունը - արդարացում (փրկվել մեղքի պատժից)
2. առաջնթաց փրկություն - սրբացում (փրկվել մեղքի ուժից)
3. վերջնական փրկություն - փառավորում (փրկված մեղքի ներկայությունից)

▪ **«Եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ նրանք պետք է «ամուր կառչեին» ավետարանի ճշմարտությունից, որը նա քարոզեց նրանց, սակայն պայմանական նշում է ավելացնում երկրորդ *«ei»* -ով (այսինքն, եթե միայն): Սա, կարծես, զուգահեռ է Հիսուսի Մերմնացանի առակին (տես Մաթ. 13) և Հովհաննեսի քննարկումներին, 1 Հովհ. 2:19-ում, ովքեր եղել էին հաղորդակցության մեջ, բայց հեռացել էին:

Կորնթոսում կային խմբավորումներ, որոնք իրենց գործողությունների, վերաբերմունքի և աստվածաբանության միջոցով ցույց տվեցին, որ նրանք երբեք չեն եղել հավատացյալ: Նրանք մերժեցին (1) Պողոսի ավետարանը, (2) Պողոսի առաքելական իշխանությունը, և (3) միաձուլեց ավետարանը հռոմեական մշակույթին, որով մշակույթը դարձավ դոմինանտ: Մշակութային քրիստոնեությունը միշտ թույլ է և երբեմն իսկապես քրիստոնեական չէ:

Այնուամենայնիվ, կոնտեքստում Պողոսը պնդում է իր ունեցած վստահությունն առ այն, որ Կորնթոսցի հավատացյալները ճշմարիտ հավատացյալներ են:

1. Աօրիստ ժամանակ, 1 Կոր. 15:1, «ստացաք, ընդունեցիք»
2. Վաղակատար ժամանակ, 1 Կոր. 15: 1, «որի մեջ կանգնած եք»
3. Առաջին կարգի պայմանական նախադասություն, 1 Կոր. 15: 2, «քանի որ ամուր կառչած եք»

▪ **«Եթե զուր տեղը չեք հաստացել»** «Եթե ամուր բռնեք...զուր»: «Զուր» բառը (*eikē*) նշանակում է «ոչ մի նպատակով» (տես Գաղ. 3: 4; 4: 11): Դա ակնհայտ է Մաթ. 13: 1-9,18-23 և Հովհ. 8: 31-59-ից, որ կեղծ խոստովանությունները կամ դավանանքը կրոնական կյանքի իրականություն են (տես ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆ(aphistēmi)): Այս արտահայտությունը ձևավորում է չորրորդ մասը, որը նկարագրում է քրիստոնեական կյանքի անհրաժեշտ տարրերը՝ ընդունում, դիրքորոշում,

առաջընթաց և շարունակություն: Փրկությունը մի գործընթաց է, որը ներառում է ապաշխարություն, հավատք, հնազանդություն (նախապես և ընթացիկ), ինչպես նաև հաստատակամություն:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:3-11

³Որովհետև ես առաջուց այն տուի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե Քրիստոս մեր մեղքերի համար մեռա՝ գրքերի համեմատ: ⁴Եւ թե թաղուեցաւ, եւ թե երրորդ օրը յարութիւն առաւ՝ գրքերի համեմատ: ⁵Եւ թե երեւեցաւ Կեփասին, յետոյ այն տասներկուսին: ⁶Յետոյ երեւեցաւ հինգ հարիւրից աւելի եղբայրներին մէկ անգամ, որոնցից շատերը մինչեւ հիմա մնում են, բայց մի քանիսն էլ ննջեցին: ⁷Եւ յետոյ երեւեցաւ Յակոբին, յետոյ բոլոր առաքեալներին: ⁸Ամենից յետոյ իբր թէ մի վիժածի՝ ինձ էլ երեւեցաւ: ⁹Որովհետև ես առաքեալների յետինն եմ. Որ արժանի չեմ առաքեալ կոչուելու. որովհետև Աստուծոյ եկեղեցին հալածեցի: ¹⁰Բայց Աստուծոյ շնորհքովն եմ ինչ որ եմ. Եւ նորա շնորհքն որ ինձանում է ունայն չ'եղաւ. այլ նորանց ամենիցն աւելի աշխատեցի. սակայն ոչ թէ ես, այլ Աստուծոյ շնորհքը որ ինձ հետ է: ¹¹Արդ թէ ես՝ թէ նորանք, այսպէս ենք քարոզում, եւ դուք այսպէս հաւատացիք:

15: 3 «եւ տուի ձեզ» Սա վերաբերում է (1) Քրիստոնեական վկայությանը, որը ստացավ Պողոսը (այսինքն, Ստեփանոսից, Գործք 7; Անանիայից, Գործք 9: 10-18; և հալածվող քրիստոնյաներից, Գործք 9: 1-2; 1 Կոր. 15:9) կամ (2) Տիրոջից ուղիղ հայտնությանը (տես 1 Կոր. 11:23; Գործք 9: 1-22; 22: 3-16; 26: 9-18; Գաղ. 1:12)

Պողոսը փոխանցեց ավետարանի ճշմարտությունները, որ նա ստացել էր: Պողոսը նորարար չէր, այլ հավատարիմ վկա, ով ավետարանի ճշմարտությունները կիրառեց նոր հեթանոսական իրավիճակներում:

▪ **«առաջուց»** Սա Նոր Կտակարանում միակ առաքելական ավետարանի ամփոփումն է: Մեր ժամանակակից ավետարանի ամփոփագրերը, ինչպես Հռոմեական ճանապարհը (այսինքն, Հռ. 3:23; 5: 8; 6:23; 10: 9-13), ժամանակակից ընտրություններն են, որոնք վերցված են ավելի մեծ ներշնչված գրքերից: Պողոսը ցանկանում է հիշեցնել նրանց ավետարանի կարևորների մասին (տես Հատուկ Թեմա: *Kerygma*):

Պողոսի ավետարանի համառոտ շարադրանքը.

1. Քրիստոսը մահացավ մեր մեղքերի համար
2. Քրիստոսը իսկապես մեռած էր և թաղված
3. Քրիստոսը հարություն առավ մեռելներից
4. Մենք գիտենք, որ սրանք ճշմարիտ են, քանի որ Նա շատ անգամ հայտնվեց տարբեր մարդկանց

▪ **«Քրիստոս մեր մեղքերի համար մեռաւ»** «Քրիստոս» տերմինը եբրայերեն «Մեսիա» տերմինի հունարեն թարգմանությունը է, որը նշանակում է օծյալ: Այս տերմինը, առանց սովորական «Հիսուս Քրիստոսի» կամ «Տեր Հիսուս Քրիստոսի» կամ «Քրիստոս Հիսուսի» ցույց է տալիս Պողոսի ավանդույթի նախնական ծագումը, որտեղ Հիսուսը հաստատվում է որպես Հրեական Մեսիա, Խոստացվածը (տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԵՄԻԱ 1 Կոր. 1:23): Ամենայն հավանականությամբ, Պողոսը դա ստացավ Անանիայից և ուրիշ հավատացյալներից Դամասկոսում իր ապաշխարությունից հետո:

Սա աօրիստ ներգործական սահմանական է: «Հիսուսը վճարեց պարտք, որը Իրենը չէր իսկ մենք պարտք ունեինք, որը չէինք կարող վճարել» (տես Գաղ. 3:13; 1 Հովհ. 4:10):

«Համար» (*hyper*) նախդիրը նշանակում է «անունից»; այն հաճախ օգտագործվում էր որպես հոմանիշ մեկ այլ հունարեն նախդիրի հետ *anti*, որը նշանակում էր «փոխարեն, տեղը»: Սա վերաբերում էր փոխանորդ հանդիսացող, փոխարինող քավությանը (տես Ես. 53; Մարկ. 10:45):

Քրիստոսի մահը Պողոսի գրվածքներում հերթական թեման էր: Նա օգտագործեց մի քանի տարբեր բառեր ու արտահայտություններ Հիսուսի փոխարինող մահվան մասին.

1. արյուն (տես 1 Կոր. 11:25, 27; Հռ. 3: 25; 5: 9; Եփ. 1: 7; 2:13; Կող. 1:20)
2. Ինքն իրեն տվեց (տես Եփ. 5:2, 25)
3. հանձնվեց (տես Հռ. 4:25; 8:32)
4. զոհաբերություն (տես 1 Կոր. 5: 7)
5. մահացավ (տես 5: 6; 8:34; 14: 9,15; 1 Կոր. 8:11; 15: 3; 2 Կոր. 5:15; Գաղ. 5:21; 1 Թես. 4:14; 5:10)
6. խաչ (տես 1 Կոր. 1:17-18; Գաղ. 5:11; 6: 12-14; Եփ. 2:16; Փիլ. 2: 8; Կող. 1:20; 2:14)
7. խաչելություն (տես 1 Կոր. 1:23; 2: 2; 2 Կոր. 13:4; Գաղ. 3:1)

▪ **«գրքերի համեմատ»** Սա վերաբերում է Հին Կտակարանին, քանի որ դեռ Նոր Կտակարանից ոչ մի բան չէր գրվել, բացի հնարավոր է Գաղատացիսից և Թեսաղոնիկեցիսից: Այս արտահայտության օգտագործումը 1 Կոր. 15: 3-4-ում հաստատում է Աստծո մարգարեական (տես Ղուկ. 24:27) և նախասահմանված փրկության ծրագիրը (տես Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29):

Այնուամենայնիվ, հնարավոր է, որ Սուրբ Գիրքը այստեղ վերաբերում է Ավետարաններից մեկին (կամ Հիսուսի խոսքերը, որոնք շրջանառվել են ուշ գրված Մինուպտիկներից առանձին): Անորոշ է, երբ են դրանք գրվել, և երբ են շրջանառվել վաղ եկեղեցիների մեջ: Եթե արտահայտությունը վերաբերում է Ավետարանի պատմությանը, ապա «երրորդ օրը» կարող է վերաբերել Հիսուսին, որ հարություն առավ Կիրակի օրը՝ շաբաթվա առաջին օրը, և հրեական հաշվարկով երեք օր:

15: 4 «թաղուեցաւ» Նա իսկապես մեռած էր:

▪ **«երրորդ օրը»** «Երրորդ օրվա» մասին չկա հստակ Հին Կտակարանյան վավերացում: Այնուամենայնիվ, դա *kerygma*-յի մի մասն էր (տես Մարկ. 10:34; Ղուկ. 24:46; Գործք 10:40, տես Հատուկ Թեմա 1 Կոր. 15:1): Ոմանք ասում են, որ դա վերաբերում է Հովնան 1:17 կամ Մաղ. 16:10-ին, սակայն Հիսուսի մեկնաբանությունները (տես Մատթ. 12:40) կարծես վերաբերում են Հովնանի փորձառությանը մեծ ձկան փորում:

▪ **«յարութիւն առաւ»** Սա վաղակատար կրավորական սահմանական է, որը շատ հաճախ օգտագործվում է այս գլխում (տես 1 Կոր. 15: 4,12,13,14,16,17,20): Այս հունարեն բայի ժամանակաձևը խոսում է Քրիստոսի շարունակական կարգավիճակի մասին՝ որպես «հարություն առած», իսկ կրավորական սեռը խոսում է Հայր Աստծո գործողությունների մասին՝ Նրան մեռելներից հարություն տալով: Սա հաստատում է Հոր հավանությունը Հիսուսի կյանքի, ուսմունքների և զոհաբերվող մահվան հանդեպ: Նոր Կտակարանը հաճախ փրկության գործերը վերագրում է Սուրբ Երրորդության բոլոր երեք անձերին.

1. Հայր Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13: 30,33,34,37; 17:31; Հռ. 6:4, 9; 10: 9; 1 Կոր. 6:14; 2 Կոր. 4:14; Գաղ. 1: 1; Եփ. 1: 20; Կող. 2:12; 1 Թես. 1:10)
2. Որդի Աստվածը հարություն տվեց Իրեն (տես Հովհ. 2: 19-22; 10: 17-18)
3. Սուրբ Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Հռ. 8:11)

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՀԱՂՈՒԹՅՈՒՆԸ

SPECIAL TOPIC: THE RESURRECTION

Աստվածաշնչում մահից հետ եկած միտքն ունի երեք իմաստ:

Ա. Նրանք, ովքեր չմահացան, այլ միացան Աստծուն (այսինքն, Ենովք, տես Ծննդ. 5: 24; Եղիան,

տես 4 Թագ. 2: 11), որը կոչվում է «փոխադրվեցին»:

- Բ. Ոմանք, Աստծո զորությամբ, մահվան դռներից հետ են գալիս դեպի ֆիզիկական առողջություն: Սա կոչվում է «վերակենդանացում»: Նրանք ապագայում ինչ-որ ժամանակ մահանալու են:
- Գ. Եղել է միայն մեկ հարություն (այսինքն, Հիսուսը): Նա մահացավ, բայց մեռելներից (*hades*) հարություն առավ և նոր մարմին ստացավ՝ Աստծո հետ հավիտենական կյանքի համար: Նա մահացածների առաջին պտուղն է (տես 1 Կոր. 15:20,23, «մահացածներից առաջին ծնվածը», տես Կող. 1: 15,17): Նրա շնորհիվ հավատացյալները հարություն կառնեն Երկրորդ Գալստյան ժամանակ (տես Մաղ. 49:15; 73:24; Ես. 26:19; Դան. 12:2; Մաթ. 22:31-32; Մարկ. 12: 26-27; Հովհ. 5: 25,28-29; 6: 39-40,44,54; Հռ. 8:11; 1 Կոր. 15; 1 Թես. 4: 13-18; 1 Հովհ. 3: 2):

Հարության ապացույցները

- Ա. Պենտեկոստեից հիսուն (50) օր հետո, հարությունը դարձավ Պետրոսի քարոզչության հիմնական նյութը (տես Գործք 2): Հազարավոր մարդիկ, ովքեր ապրում էին այդ տարածքում, որտեղ տեղի ունեցավ, հավատացին:
- Բ. Աշակերտների կյանքը արմատապես փոխվեց հուսահատությունից (նրանք չէին սպասում հարությանը) համարձակության, նույնիսկ մարտիրոսության:
- Գ. Պողոսը թվարկում է բազմաթիվ վկաների անուններ 1 Կոր. 15: 5-8, ներառյալ իրեն (տես Գործք 9):

Հարության նշանակությունը

- Ա. ցույց է տալիս, որ Հիսուսը Նա է, ինչ որ պնդում է իր մասին (տես Մաթ. 12:38-40, մահվան և հարության կանխատեսումը)
- Բ. Աստված հաստատեց Հիսուսի կյանքը, ուսմունքները և փոխանորդ մահը (տես Հռ. 4:25)
- Գ. Ցույց է տալիս մեզ բոլոր քրիստոնյաներիս տված խոստումը (այսինքն, հարուցյալ մարմինները, տես 1 Կոր. 15)

Խոսք Հիսուսից, որ Նա հարություն է առնելու մեռելներից

- Ա. Մաթ. 12: 38-40; 16:21; 17: 9,22, 23; 20: 18-19; 26:32; 27:63
- Բ. Մարկ. 8:31; 9: 1-10,31; 14: 28,58
- Գ. Ղուկ. 9: 22-27
- Դ. Հովհ. 2:19-22; 12:34; 14-16 գլուխները

Եվ Պետրոսը և Պողոսը պնդում են, որ Մաղ. 16-ը վերաբերում է Հիսուսին՝ Մեսիային

- Ա. Պետրոսը Գործք 2: 24-32
- Բ. Պողոսը Գործք 13: 32-37

Հետագա ուսումնասիրության համար

- Ա. *Evidence That Demands a Verdict* by Josh McDowell
- Բ. *Who Moved the Stone?* by Frank Morrison
- Գ. *The Zondervan Pictorial Encyclopedia of the Bible*, "Resurrection," "Resurrection of Jesus Christ"

15: 5 «Երեւեցաւ» Ստորև տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՀԻՍՈՒՍԸ ՀԱՅՏՆՎԵՑ

SPECIAL TOPIC: JESUS' POST RESURRECTION APPEARANCES

Հիսուսը ցույց տվեց Իրեն մի քանի մարդկանց՝ հաստատելու Իր հարությունը.

1. գերեզման եկած կանանց, Մատթ.28:9
2. տասնմեկ աշակերտներին Գալիլեայում, Մատթ.28:16
3. Սիմոնին, Ղուկ.24:34
4. երկու տղամարդկանց Էմմաուսի ճանապարհին, Ղուկ.24:15
5. աշակերտներին վերնատանը, Ղուկ. 24:36

6. Մարիամ Մագդաղենացուն, Հովհ.20:15
7. տասը աշակերտներին վերնատանը, Հովհ.20:20
8. տասնմեկ աշակերտներին վերնատանը, Հովհ.20:26
9. յոթ աշակերտներին Գալիլեայի ծովի մոտ, Հովհ.21:1
10. Կեփասին (Պետրոս), 1 Կոր.15:5
11. Տասներկու (Առաքյալներին), 1 Կոր.15:5
12. 500 եղբայրների, 1 Կոր.15:6 (Մատթ.28:16-17)
13. Հակոբոսին (Իր երկրավոր ընտանիքին), 1 Կոր.15:7
14. բոլոր առաքյալներին, 1 Կոր.15:7
15. Պողոսին, 1 Կոր.15:8 (Գործք 9)

Ակնհայտ է, որ սրանցից մի քանիսը միննույն դեպքին են վերաբերում: Հիսուսը կամենում էր, որ նրանք հաստատ համոզված լինեին, որ Նա ողջ է:

▪ **«Կեփասին»** Պողոսը, սովորաբար, կոչում է նրան այս անունով իր Կորնթացիս նամակներում (տես 1 Կոր. 1:12; 3:22; 9: 5; 15:50), բայց Գաղատացիս նամակում նա կոչում է նրան թե Կեփաս (տես 1 Կոր. 2: 9) և թե Պետրոս (տես 1 Կոր. 1: 18; 2: 7, 8, 11, 14): Պողոսը երբեք նրան չի դիմում Սիմոն:

Չարմանալի է, որ առաջին մարդը (գերեզմանի մոտ կանանց հանդիպելուց հետո), ում հանդիպեց հարություն առած Քրիստոսը, հենց նա է, ով երեք անգամ ուրացավ Նրան, նա, ով առաջին քարոզը քարոզեց Պենտեկոստե օրը Եկեղեցուն: Հիսուսը հատուկ ուշադրություն է դարձնում Մարկ. 16:7-ում, որտեղ առաքյալներին ասվում է հանդիպել Հիսուսին Գալիլեայում: Սա անշուշտ ցույց է տալիս Քրիստոսի սերը, հասկացողությունը, ներումը և վերահաստատող գործությունները: Հովհ. 21-ի մեծ մասը բնութագրում է Պետրոսի վերականգնումը առաջնորդության դերի մեջ:

▪ **«տասներկուսին»** Հունարեն ձեռագրերի արևմտյան ընտանիքը (այսինքն, MS D [Codex Bezae]), ինչպես նաև Վուլգատ ունեն «տասնմեկ» թիվը: «Տասներկու» տերմինը դարձավ տեխնիկական տերմին Առաքելական խմբի համար: Պողոսը երբեք այս խոսքը չի օգտագործել իր այլ գրքերում: Ումանք կարծում են, որ դա նշանակում է, որ 1 Կոր. 15: 3-7 գուցե վաղ եկեղեցու վարդապետական ամփոփագիրն էր:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹԻՎԸ

SPECIAL TOPIC: THE NUMBER TWELVE

Տասներկուսը միշտ եղել է խորհրդանշական (տես Հատուկ Թեմա: Խորհրդանշական թվեր Սուրբ Գրքում) թիվ կազմակերպության համար

Ա. Աստվածաշնչից դուրս

1. Կենդանակերպի տասներկու նշանները
2. տարվա տասներկու ամիսները

Բ. Հին Կտակարանում (BDB 1040 գումարած 797)

1. Հակոբի որդիները (հրեական ցեղերը)
2. արտացոլվում է
 - ա. խորանի տասներկու սյուները, Ելից 24: 4
 - բ. քահանայապետի լաջապանակի տասներկու քարերը (որոնք ցեղերն են), Ելից 28:21
 - գ. խորանի սուրբ վայրի տասներկու հացերը, Ղն. 24: 5
 - դ. Քանանի տասներկու լրտեսները, Թվոց 13 (յուր. ցեղից մեկական)
 - ե. տասներկու գավազանները (ցեղային ստանդարտները), Կորիսի ապստամբության ժամանակ, Թվոց 17: 2

- զ. Հեսուի տասներկու քարերը, Հեսու 4: 3,9,20
 - է. Մոդոմոնի վարչակազմի տասներկու վարչական շրջանները, 3 Թագ. 4: 7
 - ը. Եղիայի ՅԵՀՆՎԱ-յի գոհասեղանի տասներկու քարեր, 3 Թագ.18:31
- Գ. Նոր Կտակարանում
1. ընտրյալ տասներկու առաքյալները
 2. տասներկու կողով հացը (յուր. Առաքյալի համար մեկական), Մատթ. 14:20
 3. տասներկու գահերը, որի վրա ՆԿ աշակերտներն են նստելու (վկայակոչելով Իսրայելի 12 ցեղերը), Մատթ. 19:28
 4. հրեշտակների տասներկու գնդերը Հիսուսին փրկելու համար, Մատթ. 26:53
 5. Հայտնության սիմվոլները
 - ա. 24 երեցները 24 գահերին, 4: 4
 - բ. 144000 (12x12,000), 7: 4; 14: 1,3
 - գ. կնոջ թագի վրայի տասներկու աստղերը, 12: 1
 - դ. Տասներկու դռները, տասներկու հրեշտակներ՝ տասներկու ցեղերը, 21:12
 - ե. Նոր Երուսաղեմի տասներկու հիմնաքարերը և նրանց վրա տասներկու Առաքյալների անունները, 21:14
 - զ. տասներկու հազար ասպարեզ, 21:16 (նոր քաղաքի՝ Նոր Երուսաղեմի չափը)
 - է. պարիսպը 144 կանգուն, 21: 17
 - ը. մարգարիտե տասներկու դարպասները, 21:21
 - թ. ծառերը նոր Երուսաղեմում տասներկու տեսակի մրգերով (յուր. ամսվա համար մեկական) 22: 2

15: 6 «Երեւեցաւ հինգ հարիւրից աւելի եղբայրներին» Սա թերևս վերաբերում է Մատթ. 28: 16-20, հատկապես 1 Կոր. 15:17, ինչը ցույց է տալիս, որ Մեծ Պատվիրանը տրվել է ամբողջ եկեղեցուն, ոչ թե մի քանի առաջնորդների: Պողոսի շեշտը 1 Կոր. 15:6-ը հարության պատմական իրականությունն է: Եթե մեկը չէր հավատում, կային բազմաթիվ ականատեսներ, ովքեր պատրաստ էին վկայելու:

- **«մինչև հիմա»** Հիսուսը խաչվել է 30-ականների կեսերին, իսկ 1 Կորնթացիսը գրվել է 50-ականների կեսերին, ուստի այս քսան տարիների ընթացքում, ում վրա ազդեցություն էին թողել Հիսուսի խոսքերն ու գործերը, շատերը դեռ կենդանի էին և ականատես:
- **«ննջեցին»** Պողոսը հետևում է Հիսուսի օգտագործմանը (տես Մատթ. 27:52; Հովհ. 11:11,13) և Հին Կտակարանի օգտագործմանը (տես Դան, 12: 2), քունը որպես մահվան փոխարինող:

15: 7 «Յակոբին» Այս խոսքը վերաբերում է Տիրոջ եղբորը, ով հավատաց Նրան միայն հարությունից հետո (տես Մարկ. 3:21; Հովհ. 7: 5): Նրա ողջ ընտանիքը ներկա էր Վերնատանը (տես Գործք 1:14): Այս Հակոբոսին ճանաչում էին որպես Տիրոջ մարմնավոր եղբայր (տես Մատթ. 13.55, Մարկոս 6.3), որ տարբերեն Հակոբոս Առաքյալից, ներքին շրջանից, որը շատ վաղ է սպանվել (տես Գործք 12): Մի քանի սերունդների համար Երուսաղեմի եկեղեցին ուներ Հիսուսի ֆիզիկական բարեկամին, որպես առաջնորդ: Մի շարք աստվածաշնչյան հատվածներ (տես Գործք 12:17; 15:13; 21:18; 1 Կոր. 15:7; և Հակ. 1: 1) նշում են, որ Հակոբոսը Երուսաղեմի Եկեղեցու մեջ շատ կարևոր առաջնորդ էր: Պողոսը միակն է, որ նշում է հայտնվելը: Սա ցույց է տալիս, թե որքան մանրամասներ են բացակայում Նոր Կտակարանում Հիսուսի ուսմունքի և գործողությունների մասին: Մենք ունենք այն ամենը, ինչ մեզ պետք է Նրան վստահելու և Նրան հետևելու համար, սակայն բավարար չէ Նրա կյանքի ամբողջական պատմության համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱԿՈՒՑՈՒՆ՝ ՀԻՍՈՒՄԻ ՄԱՐՄՆԱՎՈՐ ԵՂԲԱՅՐԸ

SPECIAL TOPIC: JAMES, THE HALF-BROTHER OF JESUS

- Ա. Նրան կոչում էին «Հակոբոս Արդար» և հետագայում մականվանվեց «ուղտի ծնկներ», քանի որ մշտապես աղոթում էր իր ծնկների վրա (Հեգեսիպոսից՝ Եվսեբիոսի մեջբերմամբ *Hist. Eccl.* 2.23-24; 4-18):
- Բ. Հակոբոսը նախքան Հիսուսի հարությունը հավատացյալ չէր (տես Մարկ.3:21; Հովհ.7:5): Հարությունից հետո Հիսուսը անձնապես հայտնվում է նրան (տես 1 Կոր.15:7):
- Գ. Նա աշակերտների հետ ներկա էր Վերնաստանը (տես Գործք 1:14) և հավանաբար այնտեղ էր նաև այն ժամանակ, երբ Հոգին Պենտեկոստեին իջավ:
- Դ. Նա ամուսնացած էր (տես 1 Կոր. 9:5):
- Ե. Պողոսը նրան ներկայացնում է որպես Երուսաղեմի եկեղեցու պլուր (հավանաբար, որպես առաքյալ, տես Գաղ.1:19; տես Հատուկ Թեմա: Ուղարկել [*apostellō*]), սակայն նա Տասներկուսի մեջ չէր (տես Գաղ. 2:9; Գործք 12:17; 15:13բ; 21:18):
- Զ. *Antiquities of the Jews* 20.9.1. գրքում Յուսուֆուսն ասում է, որ նա մ.թ. 62-ին Սինեդրոնից Սադուկեցիների կարգադրությամբ քարկոծվում է, մինչ մեկ այլ ավանդություն (երկրորդ դարի հեղինակների կողմից՝ Ալեքսանդրիացի Կլեմենտի կամ Հեգեսիպոսի) ասում է, որ նրան Տաճարի պարսպից ցած են նետում:
- Է. Հիսուսի մահից հետո երկար տարիներ՝ սերնդեսերունդ Հիսուսի բարեկամներից որևէ մեկն էր նշանակվում Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը:
- Ը. Նա Նոր Կտակարանի «Հակոբոս Թղթի» հեղինակն էր և Նոր Կտակարանի «Հուդա Թղթի» հեղինակի եղբայրը (տես Հուդա 1):

▪ **«բոլոր առաքելներին»** Քանի որ Տասներկուսը նշվում է 1 Կոր. 15: 5, սա կարծես, վերաբերում է տերմինի ավելի լայն գործածությանը: Հակոբոսը, կարծես, «առաքյալ» է նույն իմաստով, ինչպես Բառնաբասը (տես Գործք 14: 4, 14); Անդրոնիկոսը և Յունիսարը (կամ Յունիա, տես Հռ.16:7); Ապոդոսը (տես 1 Կոր. 3:5); Եպափրոդիտոսը (Փիլ. 2:25); կամ Շիդան և Տիմոթեոսը (տես 1 Գործք 18: 5):
 Հնարավոր է պնդել, որ Կեփասը հիշատակվում է Տասներկուսից առանձին, ուստի «բոլոր Առաքյալները» կարող էին նաև Տասներկուսին վերաբերել:

15: 8

Արևելահայերեն «իբր թէ մի վիժածի»
Արևմտահայերեն «որպես թէ վիժածի մը»

NASB, NRSV, «անժամանակ ծնված մեկը»
NKJV, «որպես անժամանակ ծնված»
TEV, «թեև ես նման եմ այնպիսի մեկին, որի ծնունդը աննորմալ է»
NJB, «չնայած որ աննորմալ ծնված եմ»

Այս անգլերեն թարգմանությունները ցույց են տալիս այս հազվագյուտ տերմինի ընդհանուր իմաստը: Մեպտուագինդում այն օգտագործվում է միայն երեք անգամ (տես Թվոց 12:12; Հոբ 3:16; և Ժող 6: 3) վիժվածի համար: Տերմինը ենթադրում է վաղաժամ, վաղ ծնունդ: Սակայն, այս կոնտեքստում, Պողոսը, կարծես թե, նկարագրում է իր վերջին համալրումը առաքյալիների խմբին (այսինքն, Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած դարձը, տես Գործք 9):
 Հնարավոր է, որ դա Կորնթոսի մեկ կամ մի քանի խմբակցությունների խտրական դիտողություններից մեկն էր, որը մերժում էր Պողոսի հեղինակությունը (այսինքն, նա սովորական Առաքյալ չէր): Պողոսը ընդունում է Քրիստոսի շնորհքը, հանդիպելով նրան Եկեղեցու հալածանքների մեջ (տես 1 Կոր. 15:10; Գաղ. 1:23): Այնուամենայնիվ, նա դեռ շարունակում է մնալ ընտրյալների ցանկում, ում Քրիստոսը հայտնվեց Իր հարությունից հետո: Պողոսը նույնիսկ կարող է

պնդել, որ նա միակն է, ում հայտնվել է փառավորյալ (այսինքն, համբարձված) Քրիստոսը (տես Գաղ. 1: 15-16):

Հնարավոր է նաև, որ այդ տերմինն ուներ «հրեշ» երկրորդական իմաստ, որը վերաբերում էր Պողոսի արատավոր և կրկնվող հարձակումներին անմեղ հավատացյալների վրա (այսինքն, Գործք 9: 1-2, տես *Jerome Biblical Commentary*, էջ 273): Պողոսը, հնարավոր է, այս խոսքը ինքն է հորինել, քանի որ այն նկարագրում է իր հրեական հարստությունը մինչև դարձի գալը:

15: 9 «առաքելների յետինն են» Պողոսն այնքան խոնարհվեց Աստծո շնորհքով, նույնիսկ Հիսուսի եկեղեցու հավաճելու մեջ: Նա հաճախ նման արտահայտություններ է օգտագործում՝ իրեն նկարագրելու համար (տես 1 Կոր. 1: 1; 2 Կոր. 12: 11; Եփ. 3: 8; 1 Տիմ. 1:15):

▪ **«որովհետև Աստուծոյ եկեղեցին հալածեցի»** (տես Գործք 9: 1,13,21; Գործք 22: 4,19; Գործք 26: 10-11; Գաղ. 1: 13,23; Փիլ. 3: 6; 1 Տիմ. 1:13):

15:10 «Բայց Աստուծոյ շնորհքովն են ինչ որ են» «Շնորհքը» նախադասության սկզբում է շեշտադրման համար (տես Հռ. 12:3; Եփ. 2: 8-9): Բոլոր հավատացյալներն այն են, ինչ որ են Աստծո շնորհքով, սակայն ուշադրություն դարձրեք անհրաժեշտ հավասարակշռությունը նպատակային մարդու գործողությունների վրա (տես Փիլ. 2: 12-13):

▪ **«ունայն չ'եղաւ»** Սա տարբերվում է 1 Կոր. 15: 2-ի բառից: Փաստորեն, այս գլխում Պողոսն օգտագործում է երեք տարբեր տերմիններ, որոնք թարգմանվում են «ապարդյուն» կամ «դատարկ»:

1. *eikē*, 1 Կոր. 15: 2

2. *kenos*, 1 Կոր. 15: 10,14,48; 2 Կոր. 6: 1

3. *mataios*, 1 Կոր. 15:17; 1 Կոր. 3:20

Նրա տեսակետն այն է, որ Աստծո շնորհքը արդյունավետ էր գործում Պողոսի ծառայության մեջ, որի ապացույցն ու արդյունքն էր Կորնթոսի եկեղեցին:

▪ **«այլ նորանց ամենիցն աւելի աշխատեցի»** Կոնտեքստը թելադրում է, որ դա վերաբերում է մյուս Առաքյալներին (տես համար 9): Պողոսն իրեն համեմատում է Գաղատիայի ուրիշ առաքյալների հետ, քանի որ վիճարկվում էր իր առաքելական հեղինակությունը (տես 2 Կոր. 11:16-28): Հնարավոր է, որ մեկ կամ մի քանի խմբակցություններ նույն բանն էին անում Կորնթոսում: Պողոսը Տասներկուսի հետ վիճաբանություն չունեի: Նա պարզապես հասակորեն հաստատում է իր կոչումն ու իշխանությունը:

Տես Հատուկ Թեմա «ամենիցն աւելի» 2 Կոր. 2:7:

▪ **«սակայն ոչ թէ ես, այլ Աստուծոյ շնորհքը որ ինձ հետ է»** Պողոսի աստվածաբանության մեջ կա հավասարակշռություն կանչելու, պարզներով օժտելու և ծառայության միջև կապված Աստծո գերիշխանության հետ: Իրական արդյունավետությունը դիտելու այս երկու եղանակների միջև միշտ էլ կա ուխտի հավասարակշռություն: Պողոսը պնդում է, որ նա ավելի շատ է աշխատել, քան մյուս Առաքյալները, բայց նա նաև գիտեր, որ Աստված էր աղբյուրը, այլ ոչ թե ինքը: Այս նույն հավասարակշռությունը երևում է Հովհ. 15:5-ի (այսինքն, որթատունկ և ճյուղեր) և Փիլ. 2: 12-13; 4:13-ի միջև:

15:11 Պողոսը հստակորեն պնդում է, որ իր ստացած և քարոզած ավետարանը նույնն էր, ինչ որ քարոզում էին առաջին Առաքյալները: Այն փաստը, որ նա հայցում է, ցույց է տալիս, թե ինչպիսի ընդդիմություն էր նա դիմակայում Կորնթոսում: Ոմանք հերքեցին իր առաքելական իշխանությունը և, հնարավոր է, նրա ավետարանի բովանդակությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:12-19

¹²Բայց եթե Քրիստոսը քարոզվում է՝ թե մեռելներից յարութիւն է առել, ի՞նչպէս են ձեզանից ոմանք ասում, թե Մեռելների յարութիւն չ'կայ: ¹³Եթե մեռելների յարութիւն չ'կայ, ապա Քրիստոսն էլ չէ յարութիւն առել: ¹⁴Եւ եթե Քրիստոսը յարութիւն չէ առել, ուրեմն ունայն է մեր քարոզութիւնը, եւ ունայն է ձեր հաւատքն էլ: ¹⁵Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնվում, որ Աստուծոյ համար վկայեցինք, թե Քրիստոսին յարութիւն տուաւ, որին չ'յարուցրեց, եթե արդարեւ մեռելները յարութիւն չեն առնում: ¹⁶Որովհետեւ եթե մեռելները յարութիւն չեն առնում, ապա Քրիստոս էլ յարութիւն չէ առել: ¹⁷Եւ եթե Քրիստոս յարութիւն չէ առել՝ ունայն է ձեր հաւատքը. եւ դեռ ձեր մեղքերի մեջ էք: ¹⁸ Ուրեմն նորանք էլ, որ Քրիստոսումը ննջեցին, կորան: ¹⁹Եթե միայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վերայ, ամեն մարդկանցից աւելի ողորմելի ենք:

15:12 «եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ Քրիստոս էր քարոզվում (տես 1 Կոր. 15:11):

▪ **«ի՞նչպէս են ձեզանից ոմանք ասում, թե Մեռելների յարութիւն չ'կայ»** Հարության ժխտման աղբյուրը, հավանաբար, ծագում էր հունական փիլիսոփայության մեջ (այսինքն, Գնոստիցիզմ), որը կարծում էր, թե ֆիզիկական մարմինը չար էր: Տեքստը անորոշ է, արդյոք նրանք ժխտում էին Քրիստոսի հարությունը, թե՞ բոլոր հավատացյալների հարությունը: Սա միակ խնդիրը չէր վաղ եկեղեցում (տես 2 Տիմ. 2:18):

15:13 «եթե» Սա ևս մեկ առաջին կարգի պայմանական նախադասություն է: Այն հաճախ քերականության մասնագետների կողմից կոչվում է «պարզ» կամ «տրամաբանական» պայման (տես 1 Կոր. 15:13,14,15,16,17,19): Ակնհայտորեն այս համարում Պողոսը օգտագործում է այն իր գրական փաստարկը ամրացնելու և ոչ թե պնդելու համար, որ Քրիստոսը հարություն չի առել: Բայց այս հաջորդ մի քանի համարներում տրամաբանությունը հզոր է: Եթե Քրիստոսը հարություն չի առել, ապա

1. ընդհանրապես Հարություն չկա, 1 Կոր. 15: 13,16
2. մեր քարոզելը ապարդյուն է, 1 Կոր. 15:14
3. ձեր հավատքը ապարդյուն է, 1 Կոր. 15:14
4. նրանք սուտ վկաներ են, 1 Կոր. 15:15
5. ձեր հավատքը անարժեք է, 1 Կոր. 15:17
6. դեռևս ձեր մեղքերում էք, 1 Կոր. 15:17
7. նրանք, ովքեր մահացել են անցել գնացել են, 1 Կոր. 15:18
8. մենք բոլորս ամենքից ողորմելի ենք, 1 Կոր. 15:19

Քրիստոսի հարության այս աստվածաբանական խնդիրը փոքր հարց չէ: Նա կենդանի է կամ քրիստոնեությունը սուտ է: Սա շրջադարձային վարդապետություն է:

15: 14,17 «ունայն է» Այս երկու տարբեր տերմինները ենթադրում են դատարկ և անարդյունք: Առանց հարության, ավետարանի պատգամի պահանջները որևէ ազդեցություն չունեն:

15:19 «Եթե միայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վերայ» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Պողոսն ասում է, որ եթե Քրիստոսը հարություն չի առել, մենք միայն հույս ունենք (վերաարտահայտած վաղակատար ներգործական) այս կյանքում, և եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն մահից հետո կյանք չկա:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:20-28

²⁰Բայց հիմա Քրիստոսը յարութիւն է առել մեռելներից, ինքը ննջածների առաջինէկ եղաւ: ²¹Ուրեմն որովհետեւ մարդով եղաւ մահը, եւ մարդով էլ մեռելների յարութիւնը: ²²Քանզի ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են: ²³Եւ ամեն մէկն իր կարգումը: Առաջի պտուղը Քրիստոսը եւ յետոյ Քրիստոսիները նորա գալու ժամանակումը: ²⁴Եւ յետոյ վախճանը, երբ որ թագաւորութիւնը Աստուծուն եւ չօրը կ'տայ: Երբոր կ'խափանէ ամեն իշխանութիւնը եւ ամեն պետութիւնը եւ զօրութիւնը: ²⁵Որովհետեւ պէտք է որ նա թագաւորէ, մինչեւ որ բոլոր թշնամիներն իր ոտների տակ դնէ: ²⁶Յետին թշնամին՝ որ կ'խափանուի՝ մահն է: Վասնզի ամեն բան հնազանդեցրեց նորա ոտների տակ: ²⁷Բայց երբոր ասէ՝ թէ Ամեն բան հնազանդ է նորան, յայտնի է որ բացի նորանցից որ ամեն բան հնազանդեցրեց նորան: ²⁸Բայց երբոր ամենը կ'հնազանդի նորան, այն ժամանակ ինքը Որդին էլ կ'հնազանդի նորան՝ որ ամենը հնազանդեցրեց նորան: Որ Աստուած լինի ամենը ամենում:

15:20 «Բայց» Ինչպիսի կարևոր հակադրություն:

▪ **«Քրիստոսը յարութիւն է առել»** Այս գլուխը հաճախ կոչվել է «Հարության Գլուխ»: Քրիստոսի և Նրա հետևորդների հարությունը կրկնվող թեմա է: Սրա վճռականությունն ու երկարատև արդյունքները կարելի է տեսնել *egeirō* բայի մեջ, ինչը նշանակում է արթնանալ, բարձրանալ:

- h. 12, վաղակատար կրավորական սահմանական
- h. 13, վաղակատար կրավորական սահմանական
- h. 14, վաղակատար կրավորական սահմանական
- h. 15, աօրիստ կրավորական սահմանական (երկու անգամ)
- h. 16, վաղակատար կրավորական սահմանական
- h. 16, վաղակատար կրավորական սահմանական
- h. 17, վաղակատար կրավորական սահմանական
- h. 20, վաղակատար կրավորական սահմանական
- h. 32, վաղակատար կրավորական սահմանական
- h. 35, վաղակատար կրավորական սահմանական
- h. 42, վաղակատար կրավորական սահմանական
- h. 43, վաղակատար կրավորական սահմանական
- h. 44, վաղակատար կրավորական սահմանական
- h. 52, ապառնի կրավորական սահմանական

Ուշադրություն դարձրեք մշտական կրավորական սեռին: Սուրբ Երրորդությունը հարություն է տալիս մահացածներին: Վաղակատար ժամանակը խոսում է Հիսուսի անցյալի հարության մասին, որը դառնում է գոյություն ունեցող վիճակ: Հավատացյալները կիսում են Նրա հարությունը և հավատքով իրենց փրկության վստահությունը:

▪ **«ննջածների»** Սա վաղակատար չեզոք դերբայ է (տես Մաթ. 27:52), որը մահվան համար երբայերեն իդիոմա էր:

▪ **«առաջինէկ»** Այս Հին Կտակարանյան տարեկան զոհաբերության ծեսի մասին քննարկվում է Ղև. 23: 10: Հին Կտակարանում առաջին պտուղները կամ երախայրին, զարու բերքի հասած խուրձերն էին, որոնք թափահարվում էին Տիրոջ առաջ տաճարում, Զատիկի շաբաթի Ավագ Սուրբ շաբաթից հետո, որը կլինի Հարության Կիրակին: Դրանք տրվում էին ցույց տալու, որ Աստուծուն է ամբողջ բերքը: Սա Հին Կտակարանյան տիպն է բոլոր Քրիստոսի հետևորդների հարության խոստման համար: Պողոսը կրկին օգտագործում է այս տերմինը 1 Կոր. 16:15 նկարագրելու Աքայիայի առաջին հավատացյալներին: Նա նաև օգտագործում է այն Հռ. 8:23 նկարագրելով հավատացյալներին, ովքեր ստացել են Հոգին, բայց անհամբեր սպասում են հարությանը: Հիսուսն

առաջինն է հարություն առել (տես Կող. 1:18), սակայն ժամանակին Իր հետևորդները նույնն են փորձառելու: Հոգևոր իմաստով մենք արդեն ունենք հարուցյալ կյանք (տես Եփ. 2: 5-6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԴՐԱՆԻԿ
SPECIAL TOPIC: FIRSTBORN

Այս «անդրանիկ» (*prototokos*) բառը Աստվածաշնչում կիրառվում է մի քանի տարբեր իմաստներով:

1. Բառի ՀԿ-յան ծագումը վերաբերում է
ա. անդրանիկ գավակը պատկանում է ՅԱՀՎԵԻՆ (BDB 114, KB 131, տես Ելից 13:2,12; 22:29; 34:19; Թվոց 3:13)
բ. ընտանիքում անդրանիկ գավակի նախապատվությանը (տես 2 Օր. 21:17; Սաղ . 89:27; Ղուկ. 2:7; Հռ. 8:29; Եբր. 11:28)
2. Բառի կիրառությունը Կող . 1:15-ում խոսում է Հիսուսի վերաբերյալ որպես առաջին ստեղծագործության, որը հնարավոր է լինի ՀԿ-յան մի մեջբերում Առ. 8:22-31-ից կամ Աստծո գործակիցը՝ օգնականը, արարչագործության ժամանակ (տես Հովհ. 1:3; 1 Կոր. 8:6; Կող. 1:15-16; Եբր. 1:2)
3. Բառի կիրառությունը Կող. 1:15,18; 1 Կոր. 15:20,23; Հայտ. 1:5-ում վերաբերում է մեռելներից անդրանիկը լինելուն
4. Բառի կիրառությունը ՀԿ-ում Մեսիայի անվան հետ է կապված (տես Սաղ . 89:27; Եբր. 1:6; 12:23); սա մի անուն է, որը համախմբում է Հիսուսի առաջնահերթության և Նրա կենտրոնական դերի մի քանի առանձնահատկությունները:

5: 21-22 Սա Ադամ-Քրիստոս տիպաբանությունն է, որը շարունակվում է 1 Կոր. 15: 45-48 (տես Հռ. 5: 12-21; Փիլ. 2:6-11): Ադամով բոլոր մարդկությունը կրում է մեղքի հետևանքը (այսինքն՝ մահ): Քրիստոսով բոլոր մարդկությունն ունի շնորհքի տակ լինելու պոտենցիալ:

Այս երկիմաստ համարները, Հռ. 5: 18-19-ի հետ միասին, որոշ աստվածաբանների ստիպել են հաստատել վերջնական փրկությունը բոլոր մարդկանց համար: Մյուսները դա համարում են թե՛ փրկվածների, թե՛ կորածների հարությունը (տես Դան. 12: 2): Ադամով բոլորը մահանում են; Հիսուսով բոլորը հարություն են առնելու (այսինքն, ոմանք վարձատրվելու են, ոմանք դատապարտվելու, տես Մաթ. 25:46): Ինձ համար ակնհայտ է թվում, որ Պողոսի գրվածքները, կոնտեքստով ընդունված, պահանջում են զոջացող, ապաշխարության հավատքի արձագանք փրկվելու համար:

15: 23-25 Որոշ աստվածաբաններ պնդում են, որ այս համարները հաստատում են վախճանաբանության նախահազարամյայի գաղափարը: Սակայն այս տեքստը հազարամյակի քննարկում չէ, այլ հարության: Մահը պարտվեց դատարկ գերեզմանում, այլ ոչ թե գալիք ժամանակավոր իշխանությամբ: Մենք պետք է զգույշ լինենք մեր աստվածաբանական ծրագրերից հանելով մեկնաբանությունը կոնտեքստից: Պողոսը երբեք չի քննարկում հազարամյան, նույնիսկ հափշտակության մասին իր քննարկման ժամանակ (տես 1 Թես. 4: 13-18) ոչ էլ հակաքրիստոսի (տես 2 Թես. 2): Ոչ էլ Հիսուսն է երբևէ քննարկել հազարամյան, նույնիսկ Իր վերջին օրերի պատմություններում (տես Մատթ. 24; Մարկ. 13; Ղուկ. 21): Կան մի քանի լավ գրքեր, որոնք ներկայացնում են յուրաքանչյուր ներկա հազարամյակի վիճակագրության ամփոփագիրը և սա թույլ է տալիս, որ մյուս դիրքորոշումները մատնանշեն յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերը:

1. Robert G. Clouse (ed.), *The Meaning of the Millennium, Four Views*
2. C. Marvin Pate (ed.), *Four Views on the Book of Revelation*
3. Darrell L. Boch (ed.), *Three Views on the Millennium and Beyond*

Տեսեք Հայտնություն 20-ի իմ մեկնաբանությունը՝ www.freebiblecommentary.org կայքում

15:23 «նորա գալու ժամանակումը» Ստորև տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ
SPECIAL TOPIC: NT TERMS FOR CHRIST'S RETURN

Վախճանաբանական շեշտադրում հատուկ գալիք օրվա վրա, երբ մարդիկ կհանդիպեն Հիսուսին (որպես Փրկիչ և Դատավոր) մի քանի անուններով է հանդես գալիս:

1. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրը» (տես 1 Կոր. 1:8)
2. «Տիրոջ օրը» (տես 1 Կոր. 5: 5; 1 Թեա.5:2; 2 Թեա.2: 2)
3. «Տեր Հիսուսի օրը» (տես 2 Կոր.1:14; MS ռունի «Տեր Հիսուսի...» 1 Կոր. 5:5;)
4. «Հիսուս Քրիստոսի օրը» (տես Փիլ. 1: 6)
5. «Քրիստոսի օրը» (տես Փիլ.1:10; 2:16)
6. «Նրա օրը (Մարդի Որդին)» (տես Ղուկ.17:24)
7. «այն օրը, երբ Մարդու Որդին կհայտնվի» (տես Ղուկ.17:30)
8. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը» (տես 1 Կոր. 1:7)
9. «երբ Տեր Հիսուսը հայտնվի երկնքից» (տես 2 Թեա. 1:7)
10. «Տեր Հիսուսի ներկայությամբ Իր գալստյան ժամանակ» (տես 1 Թեա. 2:19)

Առնվազն չորս կերպ կա, որոնցում Նոր Կտակարանի հեղինակները խոսում են Հիսուսի վերադարձի մասին:

1. *epiphaneia*, որը վերաբերում է կուրացնող պայծառությանը, որը աստվածաբանորեն (թե ոչ ստուգաբանորեն) կապված է «փառքի» հետ: 2 Տիմ. 1:10; Տիտոս 2:11 և 3:4 վերաբերում է Հիսուսի առաջին գալստյանը (այսինքն, մարմնավորմանը) և Նրա Երկրորդ գալուստին: Այն օգտագործվում է 2 Թեա. 4: 8, որը ներառում է Երկրորդ Գալստյան բոլոր երեք հիմնական տերմինները. 1 Տիմ.6:14; 2 Տիմ. 4: 1,8; Տիտոս 2:13:
2. *parousia*, որը նշանակում է ներկայություն և ի սկզբանե վերաբերվում էր արքայական այցին: Սա ամենատարածված տերմինն է (տես Մատթ. 24:3,27,37,39; 1 Կոր.15:23; 1 Թեա. 2:19; 3:13; 4:15; 5:23; 2 Թեա.2: 1,8; Հակ.5: 7,8; 2 Պետ.1: 6; 3: 4,12; 1 Հովհ. 2:28):
3. *apokalupsis* (կամ *apocalypsis*), որը նշանակում է մերկացնել, ծածկոցը հանել՝ բացահայտելու նպատակով: Սա Նոր Կտակարանի վերջին գրքի անունն է (տես Ղուկ.17:30; 1 Կոր. 1: 7; 2 Թեա. 1: 7; 1 Պետ. 1: 7; 4:13):
4. *phaneroō*, որը նշանակում է թեթև կամ հստակ բացահայտում կամ դրսևորում: Տերմինը հաճախ օգտագործվում է Նոր Կտակարանում Աստծո հայտնության բազմաթիվ ասպեկտների համար: Սա, ինչպես *epiphaneia*, կարող է վերաբերվել Քրիստոսի առաջին գալստյանը (տես 1 Պետ. 1:20; 1 Հովհ. 1: 2; 3: 5,8; 4: 9) և Նրա երկրորդ գալստյանը (տես Մատթ. 24:30; Կող. 3: 4; 1 Պետ. 5: 4; 1 Հովհ. 2:28; 3: 2):
5. «Գալուստ» *erchomai* հասկացության ընդհանուր տերմինը երբեմն օգտագործվում է նաև Քրիստոսի վերադարձի համար (տես Մատ.16:27-28; 23:39; 24:30; 25:31; Գործք 1:10-11; 1 Կոր. 11:26; Հայտ. 1: 7,8):
6. Այն նաև օգտագործվում է «Տիրոջ օրը» արտահայտությամբ (տես 1 Թեա. 5:2), որը Աստծո օրվա օրհնության (հարության) և դատաստանի Հին Կտակարանյան անվանումն է:

Նոր Կտակարանը ամբողջությամբ գրված է Հին Կտակարանի աշխարհայացքի շրջանակներում, որը պնդում է

- ա. ներկայիս չարը, ապստամբ ժամանակաշրջանը
- բ. արդարության գալիք նոր դարաշրջանը
- գ. Մեսիայի (Օծյալի) կատարած գործի միջոցով Հոգու կողմից բերված ժամանակաշրջանը,

Պրոգրեսիվ հայտնության աստվածաբանական ենթադրությունը պարտադիր է, քանի որ Նոր

Կտակարանի հեղինակները թեթևակի կերպով փոխում են Իսրայելի ակնկալիքները: Մեսիայի զինվորական, ազգայնական (Իսրայել) գալստյան փոխարեն, երկու գալուստ կա: Առաջին գալուստը դա աստվածության մարմնավորումն է Հիսուս Նազովրեցու հասկացությամբ և ծնունդով: Նա եկավ որպես ոչ զինվորական, ոչ դատական «տառապող ծառ» Ես.53: Նաև էջի (ոչ թե պատերազմական ձիու կամ թագավորական ջորու) ավանակի վրա հեծած, Ջաք. 9: 9: Առաջին գալուստը սկսեց Նոր Մեսիական ժամանակաշրջանով՝ Աստծո Թագավորությունը երկրի վրա: Մի առումով Թագավորությունը այստեղ է, բայց, իհարկե, մյուս առումով այն դեռ հեռու է: Այս լարվածությունը, Մեսիայի երկու գալուստների միջև, որը, մի իմաստով, երկու հրեական ժամանակաշրջանների համընկնումն է, որը Հին Կտակարանում անտեսանելի էր, կամ, գոնե անհայտ: Իրականում, այս երկակի շեշտը ընդգծում է ՅԱՀՎԵԻ բոլոր մարդկությանը փրկելու պարտավորությունը (տես Ծննդ. 3: 15; 12: 3; Ելից 19: 5 և մարգարեների քարոզչությունը, հատկապես Եսայիա և Հովնան):

Եկեղեցին չի սպասում Հին Կտակարանի մարգարեության կատարմանը, քանի որ շատ մարգարեություններ վերաբերվում են առաջին գալուն (տես, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 165-166): Հավատացյալներն ակնկալում են հարուցյալ Թագավորների Թագավորի և Տերերի Տիրոջ փառահեղ գալուստը, արդարության նոր ժամանակաշրջանի ակնկալվող պատմական իրականացումը երկրի վրա այնպես, ինչպես երկնքում է (տես Մատթ. 6:10): Հին Կտակարանի ներկայացումները սխալ չէին, բայց ոչ էլ լիարժեք (տես [Հատուկ Թեմա: Ինչու՞ են Հին Կտակարանի Ուխտի խոստումները կարծես թե տարբերվում Նոր Կտակարանի Ուխտի խոստումներից](#)): Նա կվերադառնա այնպես, ինչպես որ մարգարեները կանխատեսել էին՝ ՅԱՀՎԵԻ իշխանությունով և գորությունով:

Երկրորդ գալուստը աստվածաշնչյան տերմին չէ, բայց գաղափարը ամբողջ Նոր Կտակարանի աշխարհայացքն է և շրջանակը: Աստված բոլորը ուղղելու է: Աստծո և Իր պատկերով ստեղծված մարդու միջև հաղորդակցությունը կվերականգնվի: Չարը դատապարտվելու է և հեռացվելու: Աստծո նպատակները ոչ, չեն կարող, չկատարվել:

Առաջին դարի եկեղեցին երկրպագում էր թե շաբաթ և թե շաբաթվա առաջին օրը (այսինքն, կիրակի, հարության օրը): Ժողովարանը դիմեց աճող քրիստոնեական շարժմանը՝ պահանջելով անդամներին մերժել Հիսուսին, որպես Մեսիա (այսինքն 18 օրհներգությունները): Այս պահին (70թ.) քրիստոնյաները հանդիպում են բացառապես կիրակի օրը:

15:24 «Թագավորությունը» Ջարմանալի է, թե որքան հաճախ է այս հասկացությունը օգտագործվում Հիսուսի կողմից, Մինուպտիկ Ավետարաններում: Այն Իր առաջին ու վերջին քարոզի թեման է, ինչպես նաև շատ առակների: Ջարմանալիորեն Հովհաննեսի Ավետարանում այն օգտագործվում է միայն երկու անգամ: Դա Աստծո թագավորությունն է հիմա հավատացյալ մարդկանց սրտերում, որ մի օր կավարտվի ամբողջ երկրի վրա:

Այն օգտագործվում է Հիսուսի կողմից, որպես Աստծո արքայության ներկա ներկայությունը, Իր անձնական ներկայության և ուսուցման մեջ և միջոցով (տես Մատթ. 3: 2; 4:17; 10: 7; 11:12; 12:28; Մարկ. 1: 15; Դուկ. 9: 9,11; 11:20; 21: 31-32): Այնուամենայնիվ, այն նաև կապված է Նրա վերադարձի գալիք փառահեղ իրականացման հետ (տես Մատթ. 6:10; 16:28; 26:64): Դա Ավետարանների «դեռևս / բայց դեռ ոչ» վախճանաբանական լարվածությունն է:

Պողոսի գրվածքներում, մասնավորապես «Թագավորության» մասին համեմատաբար հազվադեպ է խոսվում:

- Հռոմեացիս -14:17
- 1 Կորնթացիս -4:20; 6:9; 15: 24,50
- Գաղատացիս -5:21
- Եփեսացիս -5: 5
- Կոլոսացիս -1:13; 4:11
- 1 Թեսաղոնիկեցիս -2:12

▪ «Երբոր կ'իսափանէ ամեն իշխանութիւնը եւ ամեն պետութիւնը եւ զօրութիւնը» Այս խոսքը վերաբերում է այս ներկա չար ժամանակաշրջանի հրեշտակային զորութիւններին (այսինքն, *eons* գնոստիկ մտածողության մեջ) (տես Հռ. 8:38; Եփ. 1:21; 3:10; 6:12; Կող. 1:16; 2: 10,15): Այս ոչնչացումը տեղի է ունենում

1. աստվածաբանորեն՝ իսաչի և հարության ժամանակ
2. ժամանակի առումով՝ Քրիստոսի գալստյան ժամանակ

Եթե դա ճիշտ է, ապա 1 Թես. 4: 13-18-ը Պողոսի գրվածքների ամենամոտ զուգահեռն է: Ուշադրություն դարձրեք, որ հափշտակությունից հետո հավատացյալները հավիտյան Տիրոջ հետ են լինելու (տես 1 Թես. 4:17), որը Հոր հավիտենական թագավորությունն է (տես Դան. 7: 13-14):

Տես «Իշխանություն» ստորև.

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԿԻԶԲ/ՕՍԳՈՒՄ
SPECIAL TOPIC: ARCHĒ (ARCHĒ)**

Հունարեն *archē* տերմինը նշանակում է ինչ-որ բանի «սկիզբ» կամ «ծագում»:

1. ստեղծված կարգի սկիզբը (տես Հովհ. 1: 1; Եբր. 1:10)
2. ավետարանի սկիզբը (տես Մարկ. 1: 1; Փիլ. 4:15; 2 Թես. 2:13; Եբր. 2: 3; 1 Հովհ. 1:1)
3. առաջին ականատեսները (տես Ղուկ. 1: 2)
4. նշանների սկիզբը (հրաշքներ, տես Հովհ. 2:11)
5. սկզբունքների սկիզբը (տես Եբր. 5: 12)
6. հավաստիացում, հիմնված ավետարանի ճշմարտությունների վրա (տես Եբր. 3:14)
7. սկիզբը, Կող. 1:18; Հայտ. 3:14

Այն օգտագործվել է «կանոն» կամ «հեղինակություն» բառի համար,

1. մարդկային իշխանությունների համար
 - ա. Ղուկ. 12:11
 - բ. Ղուկ. 20:20
 - գ. Հռ. 13:3; Տիտոս 3:1
2. հրեշտակային իշխանությունների համար
 - ա. Հռ. 8: 38
 - բ. 1 Կոր. 15:24
 - գ. Եփ. 1:21; 3:10; 6:12
 - դ. Կող. 1:16; 2: 10,15
 - ե. Հուդա 1: 6

Հուդա գիրքի այս կեղծ ուսուցիչները արհամարհեցին բոլոր իշխանությունները՝ երկրային և երկնային: Նրանք անտիոնոմյան ազատամիտներ են: Նրանք իրենց և իրենց ցանկությունները դրեցին Աստուծոց, հրեշտակներից, քաղաքացիական իշխանություններից և եկեղեցական առաջնորդներից առաջ:

«Իշխանության, պետություն» տես Հատուկ Թեմա

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ (exousia)
SPECIAL TOPIC: AUTHORITY (exousia)**

I. Ղուկասն է օգտագործում- Հետաքրքիր է նայել Ղուկասի օգտագործած *exousia* (իշխանություն, զորություն, ուժ կամ օրինական իրավունք):

1. Ղուկաս 4: 6 – սատանան ակնարկում է, որ կարող է Հիսուսին իշխանությունը տալ:
2. Ղուկաս 4:32, 36- հրեաները զարմանում էին, թե ինչպես է Հիսուսը սովորեցնում,

օգտագործելով Իր անձնական հեղինակությունը:

3. Ղուկաս 9: 1- Նա տվեց Իր զորությունն ու իշխանությունը Իր Առաքյալներին:
4. Ղուկաս 10:19- Իր իշխանությունը տվեց յոթանասուն միսիոներներին:
5. Ղուկաս 20: 2,8- տրվում է Հիսուսի իշխանության հիմնական հարցը:
6. Ղուկաս 22:53 - չարին թույլատրված է դատապարտել և սպանել Հիսուսին:

Թեև ոչ Ղուկասում, Մատթեոսի Մեծ Պատվիրանում (Մատթ. 28:18), «ամեն իշխանություն ինձ է տրվել երկնքում և երկրի վրա», հրաշալի հայտարարությունն է Հիսուսի իշխանության մասին: Հիսուսը պնդում էր, որ Նա իշխանություն ունի, քանի որ

1. Աստված խոսեց Իրեն հետ
 - ա. մկրտություն (Ղուկաս 3: 21-22)
 - բ. այլակերպություն (Ղուկաս 9:35)
2. Հին Կտակարանյան իրականացած մարգարեությունը
 - ա. Հուդայի ցեղը (տես Ծննդ. 49:10)
 - բ. Հեսսեի ընտանիքը (տես 2 Թագ. 7)
 - գ. ծնված Բեթլեհեմում (տես Միքիա 5: 2)
 - դ. ծնված Դանիել 2-ի չորրորդ կայսրության ժամանակ (Հռոմ)
 - ե. օգնել աղքատներին, կույրերին, կարիքավորներին (Եսայիա)
3. Նրա դևեր հանելը բացահայտեցին Նրա զորությունն ու իշխանությունը սատանայի և նրա թագավորության վրա
4. Մահացածներին վերակենդանացնելը ցույց տվեց Իր զորությունը ֆիզիկական կյանքի և մահվան վրա:
5. Նրա հրաշքները բացահայտում են Նրա զորությունը և իշխանությունը ժամանակավորի, տարածականի և ֆիզիկականի վրա:
 - ա. բնություն
 - բ. կերակրելը
 - գ. բուժելը
 - դ. միտք կարդալը
 - ե. ձուկ բռնելը

II. Պողոսը քրիստոնյա կանանց հետ կապված կիրառեց «իշխանություն» բառը Իշխանության հարցը ևս քննարկվում է 1 Կոր.11-ում՝ կապվախ կնոջ գլուխը ծածկելու հետ: Հետևյալ գրառումներս են.

1 Կորնթ. 11:10 «Նորա համար պետք է, որ կինը շուք դնե գլխի վերայ հրեշտակների համար»: 1 Կորնթացիսի մեջ իշխանության օգտագործումը կարելի է հասկանալ մի քանի ձևով: Հիմնական ինդիքը (այս կոնտեքստում) այն է, որ «հեղինակություն» է ներկայացնում (*exousia*):

Նախ, պետք է նշել, որ *exousia* հաճախ կապված է *dunamis* (զորություն) հետ: Օտտո Բեթզը հետաքրքիր հոդված ունի *exousia* –ի վերաբերյալ *New International Dictionary of New Testament Theology*, հատոր 2, էջ 606-611: Ահա հինգ օրինակ.

«Հատկանշական է Նոր Կտակարանի համար, որ *exousia*- ն *ei dunamis*- ը երկուսն էլ կապված են Քրիստոսի կատարած գործի, տիեզերական ուժային կառույցների նոր կարգադրության հետևանքի և հավատացյալների զորացման հետ» (էջ 609):

«Հավատացյալների *exousia* : Քրիստոնյա հավատացյալի իշխանությունը հիմնված է Քրիստոսի իշխանության վրա և բոլոր ուժերի զինաթափման վրա, դա նշանակում է թե ազատություն և թե ծառայություն» (էջ 611):

«Նա ազատ է ցանկացած բան անելու համար (1 Կոր. 6:12; 10:23 *exestin*), այս պնդումը, որը սկզբնապես արվեց Կորնթոսի աղանդավոր էնտուզիաստների կողմից, գրավեց Պողոսին և ընդունվեց որպես ճիշտ» (էջ 611):

«Գործնականում, սակայն, այս տեսականորեն անսահմանափակ ազատությունը կառավարվում է այն հանգամանքով, թե ինչն է օգտակար մյուս անհատ քրիստոնյաների համար և ամբողջ համայնքի, հաշվի առնելով, որ լիակատար փրկագնումը դեռ զալու է (1 Կոր.6:12; 10: 23)»(էջ 611):

«Ամեն բան օրինաւոր է [*exestin*] ինձ, բայց ամեն բան օգուտ չէ. ամեն բան օրինաւոր է [*exestin*] ինձ, բայց ամեն բան շինութիւն չէ տալիս: Ոչ ով միայն իր անձի օգուտը չ'որոնէ, այլ ամեն մէկն ընկերինն էլ» (1 Կոր. 10: 23): Այս մեջբերումների միջի մեջբերումը հավանաբար Կորնթոսի ազատականների կարգախոսն է: Պողոսը համարում է նրանց, ընդունելով իրենց ճշմարտությունը, բայց ցույց տալով, որ այն ամբողջ ճշմարտությունը չէ»(էջ 611):

Պողոսը հաճախ օգտագործում է այս երկու տերմինները Կորնթոսի եկեղեցուն ուղղված իր նամակներում:

1. *exousia*, 1 Կոր. 7:37; 9: 4,5,6,12 (երկու անգամ), 18; 11:10; 2 Կոր. 13:10
2. *dunamis*, 1 Կոր. 1:18; 2: 4,5; 4: 19,20; 5: 4; 15: 24,43; 2 Կոր. 4: 7; 6: 7; 8: 3 (երկու անգամ); 12:9; 13: 4 (երկու անգամ)

Իրավունքներն ու իշխանությունը հիմնական խնդիրներն էին ինչպես օրինականների, այնպես էլ ազատամիտների համար: Պողոսը փորձում է գիծ գծել երկու ծայրահեղությունների միջև: Այս կոնտեքստում քրիստոնյա կանայք խրախուսվում են ընդունելու Աստծո տված ստեղծագործության կարգը (այսինքն, Քրիստոս-տղամարդ-կին), Թագավորության առաջխաղացման նպատակով: Պողոսը հաստատում է սկզբնական փոխհարաբերությունը (տես Ծննդ. 1: 26-27, 2:18), 1 Կոր. 11: 11-12: Դա աստվածաբանորեն վտանգավոր է

1. այս կոնտեքստում մեկ համար մեկուսացնել
2. կիրառել կոշտ սիստեմատիկ հարանվանական ցանց, յուրաքանչյուր դարում յուրաքանչյուր մշակույթի մեջ տղամարդկանց և կանանց / ամուսինների և կանանց հարաբերությունների կապակցությամբ
3. բաց թողնել Պողոսի հավասարակշռությունը քրիստոնեական ազատության և քրիստոնեական հավաքական ուխտի պարտավորությունների միջև

Որտեղի՞ց էին քրիստոնյա կանայք ստանում ազատությունը՝ մասնակցելու որպես առաջնորդ պաշտամունքի հավաքույթի ժամանակ (այսինքն տնային եկեղեցի): Անկասկած, ոչ ժողովարանից: Արդյո՞ք դա մշակութային միտում էր վերցված առաջին դարի հռոմեական հասարակությունից: Դա, անշուշտ, հնարավոր է, և իմ կարծիքով օգնում է բացատրել այս գլխի բազմաթիվ ասպեկտներ: Այնուամենայնիվ, հնարավոր է նաև, որ ավետարանի գործությունն է կորած «Աստծո պատկեր» վերականգնելու աղբյուրը: Մարդկային կյանքի և հասարակության բոլոր ոլորտներում ցնցող նոր հավասարություն կա: Բայց այս հավասարությունը կարող է վերածվել անձնական շահագործման լիցենզիայի: Պողոսը խոսում է այս անհամապատասխան ընդլայնման մասին:

F. F. Bruce, *Answers to Questions*, իսկապես օգնեց ինձ մտածել ժամանակակից արևմտյան քրիստոնեության եկեղեցական ավանդույթների հետ կապված բազմաթիվ հակասական հարցերի շուրջ: Որպես վերլուծաբան ես միշտ մտածել էի, որ կանանց ծածկվելը նախատեսված էր ցույց տալ Աստծո պարզեր (կամ Ծննդ. 1: 26,27 համահավասարությունը), ոչ թե նրա ամուսնու իշխանությունը: Այնուամենայնիվ, ես չէի կարողանում գտնել այս մեկնաբանությունը աստվածաշնչյան ռեսուրսների մեջ, որը ես օգտագործում եմ, հետևաբար, ես չէի ցանկանում մեկնաբանել այն, կամ քարոզել / ուսուցանել: Ես դեռ հիշում եմ այն հուզմունքը և ազատությունը, երբ ես զգացի, որ F. F. Bruce-ը նույն բանն էր մտածում (տես *Answers to Questions*, էջ 95): Կարծում եմ, բոլոր հավատացյալները կանչված են, լիիրավ, Քրիստոսի նվիրյալ սպասավորներ (տես Եփ. 4: 11-12):

Այս կոնտեքստը կարող է վերաբերել գնոստիկ *eons* -ին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՊՈՂՈՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ
SPECIAL TOPIC: ANGELIC LEVELS IN PAUL'S WRITINGS

Ռաբբիները կարծում էին, թե հրեշտակները նախանձում էին մեղավոր մարդկության հանդեպ ունեցած Աստծո սիրո և ուշադրության համար (այսինքն՝ Սինա լեռան վրա Իր օրենքը տվեց) և, հետևաբար, թշնամաբար էին վերաբերվում նրանց: Գնոստիկ կեղծ ուսուցիչները պնդում էին, որ փրկությունը հնարավոր է միայն գաղտնի գաղտնաբառերով թշնամական հրեշտակային ուղորդներում (տես Կողոսացիս և Եփեսացիս), որոնք հանգեցրին մինչև բարձր, լավ աստծուն:

George Eldon Ladd -ն ունի լավ եզրակացություն այն տերմինների մասին, որոնք օգտագործվեցին Պողոսի կողմից հրեշտակների համար «Նոր Կտակարանի Աստվածաբանություն» գրքում.

«Պողոսը խոսում է ոչ միայն լավ և վատ հրեշտակների մասին, սատանայի և դևերի մասին, այլ նաև օգտագործում մի խումբ բառեր՝ հրեշտակային հոգիների դասը նշանավորելու համար: Տերմինաբանությունը հետևյալն է.

«Իշխանություն» [*archē*], 1 Կոր. 15:24; Եփ. 1:21; Կող. 2:10

«Իշխանություններ» [*archai*; RSV, «տերություններ», Եփ. 3:10; 6:12; Կող. 1:16; 2:15; Հռ.8:38

«Իշխանություն» [*exousia*], 1 Կոր. 15:24; Եփ. 1:21; Կող. 2:10

«Իշխանություններ» [*exousiai*; RSV, «իշխանություն»], Եփ. 1:21

«Զորություն» [*dynamis*], 1 Կոր. 15:24; Եփ. 1:21

«Զորություններ» [*dynameis*], Հռ. 8:38

«Աթոռները» [*thronoi*], Կող. 1:16

«Տերություն» [*kyriotēs*; RSV, «տիրապետություն»], Եփ. 1:21

«Տերություններ» [*kyriotētes*], Կող. 1:16

«այս աշխարհի խավարի աշխարհակալների», Եփ. 6:12

«չար հոգիների հետ, որ երկնավորների մեջ են», Եփ. 6:12

«խավարի իշխանությունը», Կող. 1:13

«ամեն անունից վեր, որ անվանվում է» Եփ. 1:21

«Երկնավորների, երկրավորների և երկրի տակ լինողների», Փիլ. 2:10 » (Էջ 401):

15:25 «մինչև որ բոլոր թշնամիներն իր ոտների տակ դնեն» Սա ամբողջական հաղթանակի Հին Կտակարանյան իդիոմա է (տես Սաղ. 8: 6; 110: 1): Հին Կտակարանում թշնամիները շրջապատող հեթանոս ազգերն էին, իսկ Նոր Կտակարանում դրանք հրեշտակային, հոգևոր ուժերն են, որոնք թշնամի են Աստծուն և Իր Քրիստոսին: Այս չար ուժերը ազդում են մարդկանց վրա՝ բերելով անհավատություն և ապստամբություն: Հիսուսը լիովին պարտության է մատնել այդ ուժերին խաչի և Իր հարության միջոցով: Բոլոր հավատացյալների վերջնական հարությունը կնշանակի այս հաղթանակի ավարտը:

Կան երկու հետաքրքիր գրքեր, որոնք հստակ սահմանել, թե ինչ են այդ «ուժը/ուժերը»:

1. Hendricus Berkhof, Christ and the Powers
2. Oscar Cullmann, Christ and Time

15:26 «Յետին թշնամին՝ որ կ'խափանուի՝ մահն է» Սա նշանակում է «անվավեր դարձնել»: Մահը պարտված է (տես 2 Տիմ. 1:10; Հայտ. 21: 4): Մահը չէր Աստծո կամքը մարդկության համար, այլ Անկման արդյունքը (այսինքն, Ծննդոց 3): Անեծքը կվերցվի (տես Հայտ. 21: 3), քանի որ հիմա պարտված է:

«Խափանված» տերմինի համար 1 Կոր. 15:24 և 26, տես Հատուկ Թեմա: *katargeō* Կոր. 1:28

15: 27-28 ԴԵՐԱՆՈՒՆԻ- ի ծագումը միանշանակ չէ: Ակնհայտորեն դա վերաբերում է ներքին հարաբերություններին Սուրբ Երրորդության մեջ (տես 1 Կոր. 3:23; 11: 3): Քրիստոսը՝ Որդին, Հոր ենթակայության տակ է (բայց ոչ անհավասար, Կող. 3:11) Իր փրկարար գործունեության ծրագրում ժամանակի մեջ (տես Հռ. 11: 33-36):

15:27 Սա մեջբերում է Սաղ. 8: 6-ից ավելացված ակնարկով Սաղ. 110: 1-ին: «Ենթակայություն» տես 1 Կոր. 16:16.

15:28 «Բայց երբոր ամենը կ'հնազանդի նորան» Ե՞րբ է դա տեղի ունենում: Սա է հարցը: Այս պարբերության ընթացքում ակնհայտ ժամանակային ցուցանիշներ կան:

1. ն հետո (*epeita*), 1 Կոր. 15:23
2. ն հետո (*eita*), 1 Կոր. 15:24
3. երբ որ (*hotav*, երկու անգամ), 1 Կոր. 15:24
4. մինչև որ (*achri*), 1 Կոր. 15:25
5. երբ որ (*hostan*), 1 Կոր. 15:27
6. երբ որ (*hostan*), 1 Կոր. 15:28

Սա վերաբերում է

1. Հիսուսի մահվանը և հարությանը
2. Հիսուսի համբարձմանը
3. Հիսուսի վերադարձին / հափշտակությանը
4. հազարամյակի որոշ ասպեկտներին

Գոյություն ունի ակնհայտ ժամանակաշրջան, բայց Պողոսը չափազանց երկիմաստ է, ցանկացած թարգմանչի համար համոզվելու համար: Հաճախ մեր կանխակարծիքները և սիստեմատիկ աստվածաբանությունները այս հատվածը ձևավորում են ցանկացած ցանկալի ձևով:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:29-34
²⁹Ապա եթե ոչ, ի՞նչ կ'անեն մեռելների համար մկրտողները եթե արդարև մեռելները յարութիւն չ'առնեն. էլ ի՞նչու են նորանց համար մկրտվում: ³⁰Եւ մենք ի՞նչու ամեն ժամանակ վտանգի մեջ ենք: ³¹Երդնում եմ ձեր վերայ ունեցած պարծանքովս, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն ունիմ, թէ ես ամեն օր մեռնում եմ: ³²Եթէ մարդկօրէն Եփեսոսումը գազանների կռիւի մեջ մտայ, ի՞նչ օգուտ էր ինձ համար, եթէ մեռելները յարութիւն չեն առնում. ուտենք եւ խմենք, որովհետեւ էգուց կ'մեռնինք: ³³Մի խաբուիք. չար ընկերակցութիւններն ապականում են բարի վարքերը: ³⁴Արթուն կացէք արդարութեամբ եւ մեղք մի գործէք. որովհետեւ մի քանիսն Աստուծոյ մասին տգէտ են. այս ձեզ ամաչեցնելու համար եմ ասում:

15:29 Այս համարը մեկնաբանության մեջ մեծ խնդիրներ է առաջացրել: Սուրբ Գրքում զուգահեռ հատվածներ չունենք: Վաղ Եկեղեցու շրջանում այս գործունեության մասին այլ տեղեկություն չունենք, չնայած որ կան պատմական փաստեր, որոնք նույն կերպ կիրառվել են երկրորդ և երրորդ դարերի հերետիկոսների մեջ: Պետք է խոստովանենք, որ մենք պարզապես հստակ աստվածաշնչորեն չգիտենք, թե ինչին է սա վերաբերում: Որոշ տեսություններ են՝

1. նոր քրիստոնյաները մկրտվել են մահացած քրիստոնյաների տեղը
2. նորադարձները մկրտվել են ի հարգանս իրենց մահացած սիրելիի հանդեպ
3. մարդիկ կատեխիզմի մեջ, մահացած լինելով մինչև մկրտվելը, ունեին վստահված քրիստոնյաներ, ովքեր մկրտվում էին նրանց փոխարեն
4. նորադարձները մկրտվում էին մեծ քրիստոնյաների գերեզմանների վրա

Այս համարի մեկնաբանության համար հերմենևտիկորեն պետք է կիրառել մի քանի ենթադրություններ:

1. Դա հիմնականում հարության իրականության մի շարք օրինակների / պատկերացումների մեջ է:
2. Մարդը չի կառուցում աստվածաբանություն / վարդապետություն նկարագրողումների վրա:
3. Քանի որ կոնկրետ պատմական տեղեկության մասին հուշում չկա, այս տեքստը չպետք է ընդգծվի կամ կիրառվի և անպայման դառնա վարդապետություն (այսինքն Սոբրանիզմ)
4. Այն նույնիսկ կոնտեքստում անորոշ է, եթե Պողոսը հաստատում է այս պրակտիկան կամ ուղղակիորեն ակնարկում այն (տես TEV, NJB)

▪ **«Եթե»** Մա սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որն օգտագործվում է ուժեղ հակադարձելու համար: Հունարեն տեքստն ունի *holōs* բառ (իրականում) այս նախադասության մեջ: Տես ծանուցում 1 Կոր. 5: 1:

15:31

Արևելահայերեն «Երդնում եմ»

Արևմտահայերեն «Վըկայ կը բերեմ»

NASB, NKJV, Peshitta «Ես հաստատում եմ»

NASB (1970) «Ես բողոքեցի»

NRSV «Դա որոշակի է»

TEV «Ես հայտարարում եմ»

NJB, REB "Երդվում եմ»

Մա հունարենում չկա, բայց կոնտեքստում հետևյալ արտահայտությունը կարող է լինել երդման բանաձև: Պողոսը հաճախ օգտագործում է երդման ձևակերպումներ, որպեսզի հաստատի իր հայտարարությունների ճշմարտացիությունը (տես Հռ. 9:1; 2 Կոր. 1:18,23; 11:10-11,31):

▪ **«ձեր վերայ ունեցած պարծանքովս, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն ունիմ»** Պողոսը պնդում է, որ Կորնթոսի կատարած աշխատանքը Քրիստոսի հանդեպ իր աշխատանքի վկայությունն է: Նրա աշխատանքը արժեքավորում է այն (տես 2 Կոր. 3:1-2; 7:4; 9:2-3): Պողոսի եկեղեցիները վկայում էին նրա առաքելության և արդյունավետության մասին:

▪ **«Էս ամեն օր մեռնում եմ»** Այս արտահայտությունն առաջին է տեղադրված նախադասության մեջ շեշտադրման համար (տես 2 Կոր. 5:14-15; Գաղ. 2:20; 1 Հովհ. 3:16): 30-32 համարները վերաբերում են Քրիստոսին ծառայելու մեջ Պողոսի դիմագրաված դժվարություններին (տես 2 Կոր. 1:8-10, 4:8-12; 6:3-10; 11:23-27): Նա գիտեր, որ դա արժանի է այն բանի համար, որ նա անձամբ տեսավ փառավորված Քրիստոսին Դամասկոսի ճանապարհին (տես Գործք 9:1-22; 22:3-16; 26:9-18): Պողոսի աստուածաբանությունը հայտնվեց իր անձնական փորձառությամբ և անձնական հայտնագործությամբ (տես Գործք 9: 1-22; Գաղ. 1:11-12) և Հին Կտակարանի միջոցով (իր ռաբբիական ուսուցմամբ):

15:32 **«Եթե»** Պողոսն օգտագործում է երկու՝ առաջին կարգի պայմանական նախադասություններ, կետադրելու համար: Եթե չկա հարություն և չկա քրիստոնեական պարզեցում, ինչու էր Պողոսը պատրաստ ամեն օր տառապել ավետարանի համար:

- **«մարդկօրէն Եփեսոսումը զագանների կռիւի մէջ մտայ»** Պողոսը չի հիշատակում այս փորձառությունը 2 Կոր. 11:23-27 տառապանքների մէջ, և որովհետև Պողոսը հռոմեական քաղաքացիություն ուներ, նա չպետք է ստիպված լինէր պայքարել վայրի զագանների հետ: Սա պետք է լինի այն բարդ հոգևոր իրավիճակի փոխաբերությունը, որին Պողոսը հանդիպեց Եփեսոսում (տես 1 Կոր. 1:8-10): Ոմանք այս տեքստը բառացիորեն են ընդունում և հաստատում բանտարկությունը Եփեսոսում:

- **«ի՞նչ օգուտ էր ինձ համար»** Պողոսի աշխատանքը Քրիստոսի համար հոգևոր ազդեցություն չի ունենա, եթէ չկա Քրիստոսի հարությունը, և այդպիսով չկա հարություն Պողոսի համար: Նա աշխատում է ավետարանի համար, բայց եթէ ավետարանը ճշմարիտ չէ, չկա որևէ պարգև (այսինքն՝ ոչ փրկություն, ոչ հարություն, ոչ հավիտենական կյանք, ոչ մի հաղորդակցություն Աստծո հետ, ոչ մի վերամիավորում երկնքում սիրելիների հետ, տես 1 Կոր. 15:12-19):

- **«ուտենք եւ խմենք, որովհետև եզուց կ'մեռնինք»** Սա Էպիկուրի կարգախոսն էր: Դա նաև Ես. 22:13 մեջբերում է (տես Ես. 56:12; Ղուկ. 12:19): Սա նման է ներկայիս ասածին. «Դուք միայն մեկ անգամ եք ապրում այս կյանքում, այնպես որ կարող եք վայելել բոլոր բարիքները»: Բայց, ի՞նչ անել եթէ կա հարություն: Ի՞նչ անել, եթէ մենք կանգնելու ենք Սուրբ Աստծո առաջ՝ հաշիվ տալու կյանքի պարգևի համար (տես Դան. 12:2):

15:33 «Մի խաբուիք» Սա ժխտված ներկա կրավորական հրամայական է: Կորնթոսի եկեղեցին առաջնորդվում էր կեղծ աստվածաբանությամբ (տես 1 Կոր. 6:9):

- **«չար ընկերակցութիւններն ապականում են բարի վարքերը»** Սա, կարծես, մարգարէի, Menander's *Thais* կողմից մեջբերում է, որը վերաբերում է մարմնավաճառին: Կորնթոսի որոշ երկպառակտություններ հպարտանում էին իրենց (1) հունա-հռոմեական ժառանգությամբ կամ (2) սեռական ազատությամբ: Պողոսը խորացնում է իր քննադատությունը, մեջբերելով նրանց փիլիսոփաներից (տես 1 Կոր. 15:32 և 33): Պողոսը ապրում էր Տարսոսում, որը հայտնի էր իր հունական փիլիսոփայության դպրոցներով (տես Գործք 17:28 և Տիտոս 1:12): Նա յուրահատուկ կերպով սովորեց հռոմեական ռաբբիականության և աշխարհիկ հունական մտքի մէջ:

- **«ապականում են» տես Հատուկ Թեմա 1 Կոր. 15:42:**

15:34

Արևելահայերեն **«Արթուն կացեք»**

Արևմտահայերեն **«Արդարութիւնով զգաստացէ՛ք»**

NASB **«դարձիր խոհեմ»**

NKJV **«արթուն մնա արդարության համար»**

NRSV **«սթափ եղիր և ճիշտ մտքի»**

TEV **«վերադարձեք ձեր ճիշտ զգացմունքներին»**

NJB **«արթնացեք ձեր անզգա վիճակից, ինչպես որ պետք է»**

Սա աօրիստ ներգործական հրամայական է: Սա կարծես նշանակում է «վերադարձեք ձեր բարոյական իմաստներին մեկ անգամ և բոլորի համար»:

- **«մեղք մի գործեք»** Սա ներկա ներգործական հրամայական է, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողությունը: Ակնհայտ է, որ նրանք, ովքեր հերքեցին հարությունը, նույնպես

ապրում էին անասոված կյանքով: Պողոսն օգտագործում է նրանց անբարոյականությունը, որպես իրենց աստվածաբանական հավաստիության (այսինքն՝ չկա հարություն) կեղծ վավերականությունը ցույց տալու միջոց:

▪ **«Աստուծոյ մասին տգէտ են»** Անգլերենում սա «ագնոստիկ» տերմինն է: Սա շատ նուրբ հեգնական նկատառում էր նրանց, ովքեր բարձր են գնահատել գիտելիքները: Նրանց աստվածաբանությունը և գործողությունները հստակ ցույց տվեցին, որ նրանք չունեն ճշմարիտ գիտելիքներ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:35-41

³⁵Բայց մէկը կ'ասէ. Մեռելներն ի նչպէս յարութիւն կ'առնեն, եւ թէ ի՞նչ մարմնով կ'գան: ³⁶Ամբիտ, այն որ դու սերմում ես, չի կենդանանալ՝ եթէ չ'մեռնի: ³⁷Եւ այն որ սերմում ես, ոչ թէ այն մարմինն ես սերմում որ պիտի բուսնի, այլ մերկ հատր. Թէ ցորենի լինի, թէ ուրիշ սերմունքների: ³⁸Եւ Աստուած մարմին է տալիս նորան ինչպէս կամենում է, եւ սերմունքների ամեն մէկին իրանց մարմինը: ³⁹Ամեն մարմին միեւնոյն մարմինը չէ. Ուրիշ է մարդկանց մարմինը, ուրիշ է անասունների մարմինը. Ուրիշ է ձկների մարմինը, ուրիշ է թռչունների մարմինը: ⁴⁰Կան երկնաւոր մարմիններ էլ, երկրաւոր մարմիններ էլ. Բայց ուրիշ է երկնաւորների փառքը, եւ ուրիշ է երկրաւորների փառքը: ⁴¹Ուրիշ է արեգակի փառքը, եւ ուրիշ է լուսնի փառքը, եւ ուրիշ է աստղերի փառքը. Որովհետեւ մի աստղ միւսից զանազանվում է փառքով:

15:35 «Բայց մէկը կ'ասէ» Սա Պողոսի գրական տեխնիկական միջոցի օգտագործումն է, որը կոչվում է սուր քննադատություն: Այս հարց/պատասխան ձևաչափը երևում է նաև Հին Կտակարանում՝ Մադաքիայում և Նոր Կտակարանում՝ Հռոմեացիսում և 1 Հովհաննէսում: Գրական ստեղծագործության առարկան իրականացվում է գրողի և ենթադրյալ առարկություն անողի միջև երկխոսության միջոցով: Այստեղ փաստարկը տեղափոխվում է մի փոքր այլ թեմայի: Նախ, որոշ խիստ երկառակություններից ումանք հերքեցին Քրիստոսի հարությունը և այդպես նաև բոլոր հավատացյալների հարությունը: Այժմ Պողոսը դիմում է նրանց, ովքեր հարցնում են հարուցյալ մարմնի ձևը:

▪ **«Թէ ի՞նչ մարմնով կ'գան»** Հարուցյալ մարմնի վերաբերյալ հակամարտության մեկ աղբյուրը գալիս է հունական փիլիսոփայության որոշ դպրոցներից՝ ֆիզիկական մարմնի բացասական տեսակետից: Հույները հաճախ նյութը դիտում էին որպես չարիք (այսինքն, գնոստիցիզմ) և նույնիսկ ավելի վատ, ֆիզիկական մարմինը, որպես բոլոր մարդկանց մեջ հավիտենական աստվածային օջախ կամ հոգու տնային բանտ: Այս մշակութային և փիլիսոփայական ֆոնն անմիջականորեն հակասում էր ֆիզիկական, մարմնավոր հետկյանքի հաստատման Պողոսի եբրայական (այսինքն, փարիսեցիական) ֆոնին:

15:35-41 Պողոսն օգտագործում է մի շարք նկարագրումներ, որոնք ցույց են տալիս շարունակականությունը, և նույնիսկ առանձնահատկությունը, ֆիզիկական մարմնի և հոգևոր մարմնի միջև:

1. սերմն ընդդեմ հասուն բույսի, 1 Կոր. 15:37
2. մարդն ընդդեմ կենդանական մարմնի, 1 Կոր. 15:39
3. երկնային մարմինն ընդդեմ երկրային մարմինների, համար 40
4. գիշերային լույսերն ընդդեմ արևի լույսի, 1 Կոր. 15:41

15:36 «Ամբիտ» Մարդիկ, ովքեր պնդում են, որ ճանաչում են Աստծուն, բայց մտածում և գործում են ոչ պատշաճ ձևերով, հաճախ բնութագրվում են որպես խղճուկ մտածողներ: Պողոսի հեգնական

մեկնաբանությունները, որ հաճախ լինում են 1 և 2 Կորնթացիսում, բացահայտում են այս տեսակի մարդկանց: Նրանք այնքան համոզված էին, որ իրենք գիտելիքներ ունեին, որ չէին տեսնում և չէին ճանաչում ճշմարիտ գիտելիքները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՄԱՐ

SPECIAL TOPIC: FOOLISH

Այս վերաբերմունքը / անձը արտահայտվում է մի քանի Հին Կտակարանյան տերմիններով:

1. «Հիմար, խեղկատակ», «հիմար մարդ» (BDB 17, KB 21) – տես Հոբ 5: 2,3; Սաղ. 107:17; Առ. 1: 7 (և շատ ավելին); Ես. 19:11; 35:8; Եր. 4:22; Ովս. 9: 7
2. «Հիմար, Ինքնավստահ մեկը» (BDB 493, KB 489) - տես Սաղ. 49:10; 92: 6; 94: 8; Առ. 1: 22,32 (շատ ավելին); Ժող. 2: 14-16; 5: 1,3,4 (շատ ավելին)
3. «Դատարկ անձնավորություն» (BDB 614, KB 663) – տես 2 Օր. 32: 6,21; 2 Թագ. 3:33; 13:13; Հոբ 2:10; 30: 8; Սաղ. 14:1; 39: 8; 53: 1; 74: 18, 22; Առ. 17: 7,21; 30:22; Եր. 17:11
4. «Հաստազուլիս» (BDB 698, KB 754) - տես Ծննդ. 31:28; 1 Թագ. 13:13; 2 Թագ. 15:31; 24:10; 1 Մնաց. 21:8; 2 Մնաց. 16: 9; Ժող. 2:19; 10: 3,14; Ես. 44:25; Եր. 5:21

Հիսուսը հիմար, անմիտ մարդկանց նկարագրելու համար օգտագործեց երեք բառ.

1. *aphrōn*, Դուկ. 11:40; 12:20
2. *anoētos*, Դուկ. 24: 25
3. *mōros*, Մաթ. 5:22; 23: 17,19

Հիսուսի կողմից ամենաուժեղ հայտարարությունը մեկ անձի այս բնութագրությունը մեկ ուրիշի Մաթ. 5:22, որտեղ *mōros* արտացոլում է արամերեն *raca* բառը, ինչը նշանակում է՝ անգոր կյանք: Այս բաժինը չի խոսում թե ինչ կոնկրետ անուններ կարող է կամ չի կարող մի անձը տալ մեկ ուրիշի, այլ ենթադրյալ հավատացյալի վերաբերմունքը ուրիշների հանդեպ, հատկապես ուխտի եղբայրների:

Հունարեն *mōros* տերմինը թարգմանված «հիմար», նշանակում էր արտացոլել արամերեն *raca* տերմինը: Սակայն Հիսուսի բառախաղը ոչ թե հունարեն *mōros* բառի շուրջ էր, այլ հիմնականում եբրայերեն *mōreh* բառի, BDB 598, որը նշանակում էր «ապստամբել Աստծո դեմ» (տես Թվոց 20:10; 2 Օր. 21: 18,20; տես F. F. Bruce, *Answers to Questions*, էջ 42): Հիսուսը փարիսեցիներին հենց այս տերմինով կոչեց Մաթ. 23:17-ում: Ոչ միայն մեր գործողությունները, այլև մեր դրդապատճառները, վերաբերմունքը և նպատակները որոշում են մեղքը մեր մերձավորի հանդեպ: Սպանությունը, որքան Աստված է համարում, կարող է մտածմունք լինել: Մեր եղբոր կամ քրոջ ասելությունը հստակ ցույց է տալիս, որ մենք չենք ճանաչում Աստծուն (տես 1 Հովհ. 2: 9-11; 3:15 և 4:20): Հասարակական խոսքով, ասելության միտք ավելի լավ է, քան մահը, բայց հիշեք, որ Սուրբ Գրքի այս հատվածը նպատակ ունի կոտրել բոլոր ինքնարդարությունը և հպարտությունը սեփական բարության մեջ:

Պողոսը հետևում է Հին Կտակարանին և Հիսուսին, օգտագործելով մի քանի տերմիններ՝ նկարագրելու հիմար մարդկանց:

1. *aphrōn*, 1 Կոր. 15:36; 2 Կոր. 11: 16,19; 12: 6,11
2. *mōros*, 1 Կոր. 3:18; 4:10 և համապատասխան ձևը Հռ. 1:22

Մարդիկ, ովքեր պնդում են, որ ճանաչում են Աստծուն, բայց մտածում և գործում են ոչ պատշաճ ձևերով, հաճախ բնութագրվում են որպես խղճուկ մտածողներ: Պողոսի հեզնական մեկնաբանությունները, որոնք հաճախ են հանդիպում 1 և 2 Կորնթացիսում, բացահայտում են այդպիսի մարդուն: Նրանք այնքան համոզված էին, որ իրենց ունեցած գիտելիքը այն էր, որ չէին տեսնում և չէին ճանաչում ճշմարիտ գիտությունը:

15:36 «այն որ դու սերմում ես, չի կենդանանալ՝ եթե չ'մեռնի» Պողոսը կրկին հետևում է Հիսուսի խոսքերին (տես Հովհ. 12:24): Սա ֆենոմենոլոգիական լեզվի օգտագործումն է (այսինքն, հինգ

իմաստներով երևացող բաները): Մա ոչ թե գիտական հայտարարություն է, այլ բարդ, ըստ երևույթին մեռած սերմերից եկող նոր կյանքի գյուղատնտեսական փոխաբերություն:

«Եթե» տերմինը ցույց է տալիս երրորդ կարգի պայմանական նախադասություն, որը նշանակում է հնարավոր գործողություն:

▪ **«գուցե»** Մա թերի չորրորդ կարգի պայմանական է (տես 1 Կոր. 14:10): Պողոսը հավաստիացնում է տարբեր տեսակի հացահատիկային սերմերի հավանականությունը:

15:39-40 «Ուրիշ...ուրիշ» Առաջինն բառն օգտագործվում է չորս անգամ 1 Կոր. 15:39-ում և երեք անգամ 1 Կոր. 15:41, *allos* է, և հաջորդ «ուրիշ» բառն օգտագործվում է երեք անգամ 1 Կոր. 15:40-ում և *heteros* է: Երկուսի միջև այս տարբերությունը պարզ էր դասական հունարենում, բայց գրեթե անցած Կոյնե հունարենում: Այս կոնտեքստում տարբերությունը կարծես թե մնացել է՝

1. *allos*, նույն տեսակի ուրիշ (տես 1 Կոր. 15:39,41)
2. *heteros*, տարբեր տեսակի ուրիշ (տես 1 Կոր. 15:40)

15:40,41,43 «փառք» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ՝ ՓԱՌՔ (DOXA) 1 Կոր. 2:7-ում:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Կորնթացիս 15:42-49
⁴²Այնպես էլ մեռելների յարութիւնը. Մերմվում է ապականութիւնով, եւ յարութիւն է առնում անապականութիւնով: ⁴³Մերմվում է անարգութիւնով, եւ յարութիւն է առնում զօրութիւնով: ⁴⁴Մերմվում է շնչաւոր մարմին, եւ յարութիւն է առնում հոգեւոր մարմին. Կայ շնչաւոր մարմին, կայ եւ հոգեւոր մարմին: ⁴⁵Այսպէս էլ գրուած է, թէ Առաջին մարդն՝ Ադամը կենդանի շունչ եղաւ, եւ երկրորդ Ադամը կենդանարար հոգի: ⁴⁶Միայն թէ հոգեւորն առաջ չէ, այլ շնչավորը, եւ յետոյ հոգեւորը: ⁴⁷Առաջին մարդը երկրիցն է՝ հողէղէն. Բայց երկրորդ մարդն է Տէրը երկնքից: ⁴⁸Ինչպէս հողէղէնը, այնպէս էլ հողէղէնները. եւ ինչպէս երկնաւորը, այնպէս էլ երկնաւորները: ⁴⁹Եւ ինչպէս հողէղէնի պատկերը հագանք, երկնաւորի պատկերն էլ պիտի հագնենք:

15:42-49 Աստվածաշունչը կոնկրետ կամ ամբողջությամբ չի բացահայտում այն մասին, թե ինչ է տեղի ունենում կյանքից հետո: Քանի որ մենք չկարող ընկալել դրանք մեր ընկած, ժամանակավոր, երկրային վիճակում: Այս պարբերությունը քննարկում է հարուցյալ մարմինը՝ համեմատելով այն երկրային մարմնի հետ: Այնուամենայնիվ, դեռևս հստակ չէ: Այն ամենը, ինչ կարելի է ասել, այն է, որ մեր նոր մարմինները լիովին պատրաստ կլինեն կյանքին, հաղորդակցությանը, երկրպագությանը և մեր Աստծո ծառայությանը նոր դարաշրջանում: Այս լույսի ներքո ճշգրիտ ձևը տեղին չէ (տես Փիլ. 3:21; 1 Հովհ. 3:2):

15:42
Արևելահայերեն «ապականութիւնով... անապականութիւնով»
Արևմտահայերեն «ապականութիւնով... անապականութիւնով»

NASB, NRSV, NJB, REB «խոցելի ...անխախտ»
NKJV, Peshitta «կոռումպացված ...անխախտելի»
TEV «մահացու ...անմահ»

Հաճախ այս տերմինը օգտագործվում է նույն կոնտեքստում որպես դրա բացասական հակապատկեր (տես Հռ. 1:23; 1 Կոր. 9:25; 15:50,53): Դիտարկենք մեր երկրային ֆիզիկական մարմինների և մեր երկնային հավիտենական մարմինների միջև զուգահեռ հակադրությունները:

1. ապականությունն ընդդեմ անապականության, 1 Կոր. 15:42,50

2. անարգությունն ընդդեմ փառքի, 1 Կոր. 15:43
3. տկարությունն ընդդեմ գորության, 1 Կոր. 15:43
4. շնչավոր մարմինն ընդդեմ հոգևոր մարմնի, 1 Կոր. 15:44
5. առաջին Ադամն ընդդեմ երկրորդ Ադամի, 1 Կոր. 15:45
6. հողեղեն պատկերն ընդդեմ երկնավոր պատկերի, 1 Կոր. 15:49

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՈՐԾԱՆԵԼ, ԱՎԵՐԵԼ, ԱՊԱԿԱՆԵԼ (*phtheirō*)

SPECIAL TOPIC: DESTROY, RUIN, CORRUPT (*phtheirō*)

Այս *phtheirō* տերմինի հիմնական իմաստն է ոչնչացնել, կործանել, ավերել կամ փչացնել: Այն կարող է օգտագործվել

1. ֆինանսական գրկանք, կորուստ (հնարավոր է 2 Կոր. 7: 2)
2. ֆիզիկական ոչնչացում, կործանում (տես 1 Կոր. 3: 17 ա)
3. բարոյական ապականություն (տես Հո. 1:23; 8:21; 1 Կոր. 15: 33,42,50; Գաղ. 6: 8; Հայտ. 19: 2)
4. սեքսուալ գայթակղություն (տես 2 Կոր. 11: 3)
5. հավիտենական ոչնչացում, կործանում (տես 2 Պետ. 2:12,19)
6. մարդկանց ավանդույթների ապականությունը (տես Կող. 2:22)

▪ **«չ'սիրէ»** Սա հունարեն «*phileō*» բառն է: Պողոսը հաճախ չի օգտագործում այս տերմինը սիրո համար (Տիրոս 3:15): Այդ պատճառով շատերը ենթադրում էին, որ նա օրհներգի կամ գրական բանաձևի մեջբերում է անում: Դա նույն «համբուրի» արմատն է (*philēma*): Կոյնե հունարենում «*Phileō*»-ն «*agapaō*»-ի հոմանիշն է (տես Հովհ. 5:20; 16:27), սակայն երբեմն կարող է լինել կոնտեքստային տարբերություն (տես Հովհ. 21:15-17):

▪ **«անիծում»** «*Anathema*» հունարեն բառ է, որն արտացոլում է եբրայերեն «*herem*» տերմինը կամ Աստծուն նվիրված մի այնպիսի բան, որը հետագայում դառնում է սուրբ և պետք է ոչնչացվի (Jericho, Հեաու 6:17-19): Այն օգտագործվել է աստվածային անեծքի իմաստով (տես Գործք 22:12,14; Հռ. 9:31; 1 Կոր. 12:3; 16:22; Գաղ. 1:8-9): Այս ուժեղ հայտարարությունը կարող է արտացոլել Կորնթոսի կեղծ ուսուցիչների ներկայությունը (տես 1 Կոր. 12:3): Հնարավոր է, որ այն արտացոլում է Կորնթոսի ներկա սովորությունը: Ծանոթություն 1 Կոր. 12:3 տերմինի վերաբերյալ:

▪ **«մարան աթա»** Հիսուսն ու վաղ առաքյալները խոսում էին Արամերեն (ոչ թե եբրայերեն): Այն համընդհանուր լեզու էր դարձել Պարսկական կայսրությունից հետո: Նոր Կտակարանում արձանագրված են մի քանի արամերեն բառեր / արտահայտություններ:

1. *talitha kum*/Տալիթա կումի– Մարկ. 5:41
2. *ephphatha*/Եփփաթա– Մարկ. 7:34
3. *abba*/Աբբա – Մարկ. 14:36; Հռ. 8:15
4. *maranatha*/ մարան աթա – 1 Կոր. 16:22

Տես Հատուկ Թեման ներքևում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԱՆԱԹԱ
SPECIAL TOPIC: MARANATHA

Սա արամերեն արտահայտություն է, որն արտացոլում է վաղ պաղեստինյան եկեղեցու աստվածաբանական պաշտամունքային հաստատումը, 1) Հիսուսի աստվածությունը (Սաղմոս 110) կամ (2) Հիսուսի Երկրորդ Գալուստը (Գործք 3: 19-21): Դրա իմաստը կախված է նրանից, թե մարդն ինչպես է բաժանում տվյալ բառը:

1. «Մեր Տեր, է՛կ» (այսինքն, մարանա-թա), նման է հրամայական արտահայտության իմաստին Հայտ. 22:20: Հետևաբար թարգմանությունների մեծ մասը ենթադրում է այդ իմաստը 1 Կոր. 16:22: Եթե այդպես է, ապա դա կլինի աղոթք Հիսուսի վերադարձի համար:
2. «Մեր Տերը եկել է» (այսինքն, մարան-աթա) կլինի արամերեն ՎԱՂԱԿԱՍԱՐ: Սա այն թարգմանությունն է, որը նախընտրում է Ոսկեբերանը (345-407թթ.), որը խոսում է Հիսուսի մարմին ստանալու մասին:
3. «Մեր Տերը գալիս է», որը արտացոլում էր եբրայական ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՍԱՐ, որը շատերի կողմից օգտագործվում է քրիստոնեական ծառայության համար շարժառիթ դարձնելու համար: Երկրորդ Գալուստը միշտ էլ քաջալերանք է եղել հավատացյալների համար յուրաքանչյուր ժամանակաշրջանում:
4. Դիդարխեն (գրված երկրորդ կամ առաջին դարի վերջում) 10: 6-ում օգտագործում է այս նույն արտահայտությունը Տիրոջ Ընթրիքի կոնտեքստում, որտեղ Հիսուսի ներկայությունը և գալիք վախճանաբանական գալուստը երկուսն էլ ընդգծված են աղոթքներում:

16:23 «Տեր Հիսուսի շնորհը» Աստվածաշնչի թարգմանության առաջին քայլը օրիգինալ ձևակերպումներն է: Օգտակար ռեսուրսը սրա համար «Աստվածաշյան Ընկերության» *A Textual Commentary on the Greek New Testament*, by Bruce M. Metzger: Ցույց տալու համար, թե որքան օգտակար է այն, ես կարող եմ մեջբերել այս համարի պարբերությունը:

«The Textus Receptus-ը, հետևելով κ^c A C D F G K L M-ի առավելագույն փոքրատառերին, ներառյալ 6 424^c 920 1739, it^{d,g,r} syr^{p,h} cop^{8a,bo} arm eth, reads ̐ησοϋ Χρισκοϋ: Համառոտ ընթերցումը ̐ησοϋ, որն աջակցվում է κ^* B 2 33 35 226 356 442 823 1611 1908 2002 vg goth *al* կողմից, նախընտրելի է: Հաշվի առնելով երկար ընթերցման ներկայությունը (Հռ. 16:24; 2 Կոր. 13:13; Գաղ. 6:18; Փիլ. 4:23; I Թես. 5:28; 2 Թես. 3:18; Փիլիմոն 25), ինչպես նաև սրբազան անունը ընդարձակելու դպիրների բնական հակումը, թերևս ուշագրավ է, որ ցանկացած վկաներ պետք է դիմադրեին այդպիսի ճնշումներին» (էջ 570):

16:24 «Եւ իմ սերը ձեր ամենի հետ» Սա Պողոսի անձնական սիրո հազվագյուտ արտահայտություններից մեկն է: Ուշադրություն դարձրեք նրա ցուցաբերած սերը յուրաքանչյուրի հանդեպ բոլոր եկեղեցիներում, որտեղ մարդիկ երկպառակտող էին և ասելի:

- **«Ամեն»** Ծանոթագրություն 1 Կոր. 14:16:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Թվարկեք այն հարցերը, որոնք Կորնթոսի եկեղեցին էր գրել Պողոսին:
2. Որո՞նք էին Պողոսի տեղեկությունների տարբեր աղբյուրները ներկայիս պայմանների վերաբերյալ Կորնթոսի եկեղեցում:
3. Թվարկեք Նոր Կտակարանի տրամադրման ուղեցույցերը:
4. Ինչո՞ւ էր Պողոսն այդքան հետաքրքրված Երուսաղեմի եկեղեցու ներդրումով:
5. Ինչո՞ւ էր Պողոսը պահում հրեական տոները, իր փրկվելուց հետո:
6. Ինչպե՞ս է 16:15 հաշտվել Գործք 17:34-ի հետ:
7. Ովքե՞ր էին Ակյուղասը և Պրիսկիլան:
8. Ինչո՞ւ Պողոսը հունական եկեղեցուն ուղղված նամակում օգտագործեց արամերեն արտահայտություն:

2 ԿՈՐՆԹՈՍՅԻՍ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑՄԱՆ ԴՐՈՒԹՅՆԵՐ

- Ա. Այս գիրքը, ավելի քան Պողոսի ցանկացած այլ նամակ, մեզ ցույց է տալիս Առաքյալի սիրտը և միտքը հեթանոսներին: Սա է ամենամտքը, որ մենք գիտենք նրա հոգևոր / հովվական կենսագրությունից:
- Բ. Այս գիրքը կարող է լինել Պողոսի ամենահաջողված հռետորական աշխատանքը: Raymond E. Brown, *An Introduction to the New Testament*, ասում է. «Սա կարող է լինել Պողոսի բոլոր գրվածքների մեջ ամենահռետորականորեն համոզիչը» էջ 541: Այնուամենայնիվ, դա արվել է, որպեսզի հերքեն սոֆիստներին, որոնք եկել էին Կորնթոս և հարձակվել Պողոսի հրապարակային խոսքի մեթոդների վրա, ինչպես նաև նրա ավետարանի (այսինքն, նրա հարվածը իմաստության վրա 1 Կոր. 1-4-ում):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՖԻՍՏՆԵՐ

Հունարեն *sophia* բառը նշանակում է իմաստություն: Կապակցված տերմինը *sophistēs* նշանակում է «հմուտ» կամ «հռետորության մեջ կրթված» մեկը: Այն սովորաբար նշանակում է հանրային խոսող, հաճախ շրջիկ, որոնք գալիս էին քաղաք և փորձում դայրոց հիմնել՝ էլիտար դասի երեխաներին ուսուցանելու համար: Այսպիսի հրապարակային ելույթների շնորհիվ ծնողները կարող էին պարզել, թե ովքեր են նրանք, ում հրավիրում են իրենց երեխաներին հատուկ դասեր տալու կամ զբաղվելու նրանց լիարժեք կրթությամբ:

Այս «իմաստունների» միջև մեծ մրցակցություն էր նկատվում, կապված նրանց հեղինակության և աշակերտներին գրավելու ունակության հետ: Նախնական ելույթների համար նույնիսկ հաստատվել են հատուկ ուղեցույցներ: Նման պարտադիր ուղեցույցներից մեկը փիլիսոփային տրամադրած ժամանակն էր՝ թվարկելու իր հմտությունները, առանձնահատկությունները և գորավոր կողմերը:

Ակնհայտ է, որ Պողոսը, տեսնելով Կորնթոսի մեջ առկա խնդիրները, մտահոգված էր

1. խմբավորումները եկեղեցում, որոնցից յուրաքանչյուրը հավակնում էր իր սեփական ուսուցչին և առաջնորդին (1 Կոր. 1-4)
2. Հելլենիստական կրթություն և պատրաստվածություն ունեցող հրեա կեղծ ուսուցիչները Երուսաղեմից (2 Կոր. 10-13)

Պողոսի 1 Կոր. 1-4-ում «իմաստության» մասին հերքումը հիմք դրեց փիլիսոփայական, հռետորական վարպետության մեջ փառավորված և այդ չափանիշների լույսի ներքո ուրիշներին դատողների կողմից ենթարկվել հարձակմանը: Չարմանալի է, որ հրեա ուսուցիչները կարող էին պարծենալ փիլիսոփայական դասակարգերում, սակայն նախադեպը դրված էր հուդայականության մեջ Ֆիլո Ալեքսանդրիացու կողմից և, հավանաբար, Ապոդոս Ալեքսանդրիացու ուսուցման և ֆոնի վրա:

Պողոսը փայլուն հռետոր չէր: Դրա համար նա հարձակման է ենթարկվել: Նա հակադարձում է՝ գրելով փայլուն, հավասարակշռված, լավ կառուցված, հռետորական ձևով 2 Կոր. 10-13-ը: Նա օգտագործում է նրանց տերմինները, ձևերը և բացահայտում է նրանց սխալ վերաբերմունքը և ամբարտավանությունը: Տես Bruce W. Winter, *Philo and Paul Among the Sophists*.

- Գ. Այս գիրքը տարօրինակ համադրություն է, ինչպես Պողոսը, հոգևոր բարձունքների և անկումների, ազատ հոսող զգացմունքների, զայրույթից մինչև մեծ ուրախություն:

- Դ. Այս գիրքը իսկապես նամակ է, և որպես նամակ, գրույցի միայն մի կեսն է: Պողոսի պատասխանների ետևում գտնվող տրամաբանական հակասություններից և հանգամանքներից շատերը կորել են: Մա ճշմարտության լավ օրինակը է, որ Նոր Կտակարանի նամակները սկզբնապես գրվել են կոնկրետ կարիքներին համապատասխան, ոչ որպես անկախ աստվածաբանական դիսերտացիաներ:
- Ե. Այս գիրքը անտեսվել է աստվածաբանների կողմից և քարոզչության մեջ: 2 Կորնթացիսի վերաբերյալ ավելի քիչ մեկնաբանություններ կան, քան Նոր Կտակարանի որևէ այլ գրքի: Մա ցավալի է, քանի որ դա քրիստոնեական կյանքում տառապանքի վերաբերյալ Պողոսի ամենավճռական քննարկման աղբյուրն է:
- Զ. Հովիվների համար այս գիրքը առաջարկում է խորը ուղեցույցներ, թե ինչպես վարվել տեղական եկեղեցիների խնդիրների հետ: Պողոսը մեզ տալիս է բոլոր օրինակները անձնական հարձակումների և թյուրիմացությունների դեպքում հետևելու համար:

ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Նույնիսկ աստվածաշնչյան գրքերի ավանդական հեղինակության բոլոր ժամանակակից գիտական ժխտումների մեջ, այս գիրքը երբեք չի մերժվել, որ պատկանել է Պողոսին:
- Բ. Դա այնքան ինքնակենսագրական է և այնքան դժվար է հասկանալ այդ արտահայտություններից մի քանիսը, որ հնարավոր է, որ Պողոսին ինչ որ մեկը փորձել է նմանակել՝ գրելով գիրք, որը կարծես թե անչափ անհավանական է: Նամակի դժվարությունը և առանձնահատկությունը խոսում է իր ճշմարիտ լինելու մասին: Ճիշտ է, որ շատ Նոր Կտակարանյան գիտնականներ կարծում են, որ 2 Կորնթացիսը կոմպոզիցիոն նամակ է, որը միավորում է Պողոսի մի քանի առանձին նամակները: Ես համամիտ եմ դրա միասնությանը, քանի որ
1. Հունարեն հին ձեռագրերից որևէ մեկում անհամապատասխանություն չկա:
 - ա. Գրական բաժինների մեջ ոչ մի տարբերություն չկա
 - բ. Չկա մի ձեռագիր, որը չի պարունակում բոլոր տասներեք գլուխները:
 2. Չնայած, որ 2 Կոր. 13-ը ակնհայտորեն անհայտ էր հռոմեացի Կլեմենտին 96թ., այն մեջբերվում է Պոլիկարպի կողմից 105թ.-ին.
 3. Գիրքը հասկանալի է որպես մեկ ամբողջականություն: Թվում է, թե որոշակի թեմաներ կան, որոնք ցույց են տալիս այդ միությունը, ինչպես «տառապանքը»:
 4. Ներքին ապացույցները չափազանց սահմանափակ են պաշտպանելու 2 Կոր.-ի արմատական պատիժը:
- Գ. Պողոսը հաստատվում է որպես հեղինակ 2 Կոր. 1: 1 և 10: 1

ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. 2 Կորնթացիսի տարեթիվը անբաժանելիորեն կապված է 1 Կորնթացիսի և Գործք Առաքելոցի հետ:
- Բ. Գործք 18: 1-18 և 20: 2-3 կապված են Պողոսի Կորնթոսում գտնվելու հետ, բայց թվում է, որ առնվազն մեկ չարձանագրված ուղևորություն եղել է (2 Կոր. 2: 1, երբորդ այցելությունը նշված է 2 Կոր. 12: 14; 13: 1-2):

- Գ. Գլխավոր հարցը Պողոսի այցերի ու իր Կորնթացիս նամակների միջև ժամանակային կապն է:
- Դ. Կորնթոսին վերաբերող իրադարձությունների հետ կապված իրական խնդիրը այն է, որ մենք չունենք որևէ արտաքին վկայություն կամ տեղեկություն Գործք 18: 1-18 և Գործք 20: 2-3 –ի միջև, բացառությամբ Կորնթացիս նամակների անորոշ ներքին վկայությունը:
- Ե. Պողոսի կապերը Կորնթոսի եկեղեցու հետ՝ առաջարկվող վերակառուցումն է

ՏԱՐԵԹԻՎ	ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ	ՆԱՄԱԿ
50-52թթ. Պողոսի երկրորդ միսիոներական ճամփորդությունը	ա. Պողոսի երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ, նա մնաց Կորնթոսում ութ ամիս (տես Գործք 18:1-11)	
52թ. Գաղիոնը փոխանորդ բղեշխ էր 51թ.-ից (տես Գործք 18:12-17)		ա. 1 Կոր. 5: 9-11-ը, կարծես, վերաբերում է նամակին, եկեղեցում անբարոյական իրավիճակի մասին: Այս նամակի մասին ոչինչ հայտնի չէ, եթե հաշվի չառնենք (1) ոմանք ենթադրում են, որ 2 Կոր. 6: 14-7: 1-ը դրա մի մասն է կամ (2) այն 2 Կոր. 2: 3,4,9 նամակային աուրիստ են և վերաբերում է 2 Կորնթացիսին:
56թ. (Գարուն)	բ. Պողոսը Եփեսոսում իմանում է եկեղեցու խնդիրների մասին (1) Քղուէի ընտանիքից, 1 Կոր.1: 11 և (2) Ստեփանոսից, Փորտունասից և Աքայիկոսից, 1 Կոր.16: 17: Հնարավոր է, որ նրանք բերեցին նամակը Կորնթոսի տնային եկեղեցուց, որը հարցեր էր պարունակում:	
56թ. (Ձմեռ) կամ 57թ. (Ձմեռ)		բ. Պողոսը պատասխանում է այս հարցերին (տես 1 Կոր 7:1,25; 8:1; 12:1; 16:1,2) գրելով 1 Կորնթացիսը: Տիմոթեոս (տես 1 Կոր. 4:17)պատասխանը տանում է Եփեսոսից (տես 1 Կոր.16:8) Կորնթոս: Տիմոթեոսը չկարողացավ լուծել եկեղեցու խնդիրները:
	գ. Պողոսը հրատապ, ցավալի այց կատարեց Կորնթոս (Գործքում գրված չէ, տես 2 Կոր. 2: 1): Դա հաջողակ այց չէր, բայց խոստացավ անպայման վերադառնալ:	

		գ. Պողոսը գրեց իրատական նամակ (տես 2 Կոր. 2:3-4:9; 7:8-12) Կորնթոսի տնային եկեղեցիներին, որը հանձնվեց Տիտոսի կողմից (տես 2 Կոր 2:13; 7:13-15): Այս նամակի մասին ոչինչ հայտնի չէ, ինչպես ենթադրում են որոշները, դրա մի մասը գտնվում է 2 Կոր. 10-13.
	դ. Պողոսը պլանավորում էր հանդիպել Տիտոսին Տրովադայում, բայց Տիտոսը չէր եկել, այսպիսով Պողոսը գնաց Մակեդոնիա (տես 2 Կոր. 2:13; 7: 5, 13), հավանաբար Փիլիպեում (տես MSS B ^c , K, L, P):	
		դ. Նա գտավ Տիտոսին և լսեց , որ եկեղեցին արձագանքել է իր առաջնորդությանը և հետո նա գրեց 2 Կորնթացիսը՝ մեծ գոհությամբ (տես 7:11-16). Այն բերվել էր Տիտոսի կողմից:
57-58թթ. (Ձմեռ)	ե. Պողոսի վերջին արձանագրված այցը Կորնթոս կարծես հիշատակվում է Գործք 20: 2-3-ում: Թեև այն չի նշվում Կորնթոս անունով, այն ենթադրվում է: Նա ձմռան ամիսներին մնաց այնտեղ:	ե. 1-9 և 10-13 գլուխների միջև նշանավոր փոփոխությունը բացատրվում է որոշ գիտնականների կողմից, որ արդեն 1-9-րդ գլուխները գրելուց հետո, Կորնթոսից եկան նոր խնդիրներ (հնարավոր է, վերսկսվեց նախորդ ընդդիմությունները և ավելացան նորերը) Կորնթոսի տնային եկեղեցիներից հետո գրվեց 1-9 գլուխները (F. F. Bruce):

ՔԱՆԻ՞ ՆԱՄԱԿ Է ՊՈՂՈՍԸ ԳՐԵԼ ԿՈՐՆԹՈՍԻՆ

Ա. Ընդամենը երկու, 1 և 2 Կորնթացիս

Բ. Երեք, մի նամակը կորել է

Գ. Չորս, երկուսը կորել են

Դ. Որոշ ժամանակակից աստվածաշնչի գիտնականներ կորցրած նամակները տեսնում են 2 Կորնթացիսում

1. Նախորդ նամակ (1 Կոր. 5: 9) 2 Կոր. 6: 14-7: 1

2. Խիստ նամակ (2 Կոր. 2: 3-4,9; 7: 8-12) 2 Կոր. 10-13

- Ե. Հինգ, 2 Կոր. 10-13-ի հետ եղել հինգերորդ նամակը, ուղարկված Տիտոսի զեկույցի հետ հետագա վատ նորությունները
- Զ. Ես ընդունում եմ Գ. տարբերակը (տես նաև H. C. Thiessen, *Introduction to the New Testament*, էջ 209)
1. Նախորդ նամակը կորել է (1 Կոր. 5: 9)
 2. 1 Կորնթացիս
 3. խիստ նամակը կորել է (2 Կոր. 2: 1-11; 7: 8-12)
 4. 2 Կորնթացիս

ՊՈՂՈՍԻ ԹՇՆԱՍԻՆԵՐԸ ԿՈՐՆԹՈՍՈՒՄ

- Ա. 2 Կոր-ում խնդիրը կարծես մի քանի խմբավորումների հետ է, որոնք տիրում էին տարբեր տնային եկեղեցիներում (պարտադիր չէ, որ նույն խմբավորումները, ինչպես 1 Կոր., բայց հավանաբար):
1. հավատացյալների մի խումբ, որոնք աջակցում են ավանդական հռոմեական մշակույթին և սովորույթներին
 2. հավատացյալների մի խումբ, որոնք աջակցում են ավանդական հունական հռետորական ուսուցումը
 3. հավատացյալների մի խումբ, որոնք աջակցում են ավանդական հրեական մշակույթին և սովորույթներին
 4. հավատացյալների մի խումբ, անգոր և քաղաքացիության իրավունքներից զրկված հասարակությունից
- Բ. Պաղեստինից հրեա անհանգստություն պատճառողների ժամանումը լրացուցիչ հակասություն առաջացրեց (տես 2 Կոր. 10-13): Նրանք տարբերվում են Գաղատացիսի հուդայականներից և Կողոսացիսի հրեական / հունական օրինապաշտներից: Նրանք, հավանաբար, հռետորաբար վերապատրաստված էին, խարիզմատիկ ուսուցիչներ, որոնք նման էին Ապոլոսին:
- Գ. Ահա մի քանի մեղադրանքներ, որոնք ուղղված են Պողոսի դեմ, որոնց նա արձագանքում է:
1. Պողոսը փոփոխական էր (այսինքն, նրա ճանապարհորդական ծրագրերը փոխվում էին, տես 2 Կոր.1:15):
 2. Պողոսը հզոր գրող էր, բայց թույլ էր անձնական խոսքի մեջ (տես 2 Կոր. 10:10):
 3. Պողոսը փայլուն հռետոր չէր (տես 2 Կոր. 10:10; 11: 6):
 4. Պողոսը չընդունեց գումարները (տես 2 Կոր. 11: 7; 12: 13):
 5. Պողոսը ճշմարիտ Առաքյալ չէր (տես 2 Կոր 11:5,13; 12:4):
 6. Պողոսը ուղղափառ հրեա չէր (տես 2 Կոր. 11: 22):
 7. Պողոսը չունեւ ուղիղ հայտնություն և հոգևոր տեսիլքներ, ինչպես նրանք ունեին (տես 2 Կոր. 12: 1):

II ԿՈՐՆԹԻՑԻՍԻ ԱՌԻԹԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Շնորհակալություն եկեղեցու դրական արձագանքի համար Պողոսի ղեկավարության հանդեպ (տես 2 Կոր. 2: 12,13; 7: 11-16)

Բ. Պողոսի երրորդ այցելության նախապատրաստումը (տես 10:1-11): Նրա երկրորդը, ըստ երևույթին, ցավոտ էր և անհաջող: Ակնհայտ է 10-13-րդ գլուխների փոփոխված զգացմունքային տոնը: Ումանք պնդում էին, որ դա Պողոսի մի քանի նամակների արդյունք է Կորնթոսի եկեղեցուն ուղղված, որը միանում է 2 Կորնթացիսին: Հնարավոր է նաև, որ Պողոսը գրեց այն, երբ նա լսեց Կորնթոսի եկեղեցիներում առկա նոր հակազդեցության մասին: Սա զգացմունքային հավելում է:

- Գ. Հերքելով շրջիկ հրեա կեղծ ուսուցիչներին (տես 2 Կոր. 10-12), որոնք մերժել էին Պողոսի
1. անձը
 2. դրդապատճառները
 3. հեղինակությունը
 4. առաքման ոճը
 5. ավետարանի ուղերձը

ՀՆԱՐԱՎՈՐ ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

- Ա. Այս գիրքը ուրվագծելը չափազանց բարդ է, քանի որ կա
1. տրամադրության, եղանակի տատանումներ
 2. առարկաների, թեմաների բազմազանություն
 3. ընդլայնված փակագծեր (2 Կոր. 2: 14-7: 1 կամ 7: 4)
 4. տեղական իրավիճակի մասին մեր ունեցած սահմանափակ գիտելիքները
- Բ. Սակայն, ակնհայտորեն, երեք հիմնական թեմատիկ ստորաբաժանումներ կան.
1. Պողոսը պատասխանում է Տիտոսի ուղերձին և պատմում է իր ճանապարհորդական պլանների մասին, 1-7 գլուխներում (կա մի կարևոր փակագիծ, որը վերաբերում է Պողոսի առաքելական ծառայությանը, 2 Կոր. 2: 14-7: 1 կամ 7: 4)
 2. Պողոսի քաջալերանքը Երուսաղեմի եկեղեցու ներդրման ավարտի համար, գլուխ 8-9
 3. Պողոսը պաշտպանում է իր առաջնորդությունը, գլուխ 10-13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Սա սերտորդության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եր առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Սա սերտորդության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եր առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

Copyright ©2013 Bible Lessons International

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույն	Բարևներ	Ողջույն և գոհություն	Ողջույն	Դիմում և բարևներ
1:1-2	1:1-2	1:1ա 1:1բ 1:2	1:1ա 1:1բ 1:2	1:1-2
Պողոսի շնորհակալությունը սրտամտությունից հետո	Մխիթարություն տառապանքի մեջ		Պողոսը շնորհակալություն է հայտնում Աստծուն	Գոհություն
1:3-7	1:3-7	1:3-7	1:3-7	1:3-7
	Տառապանքից ազատված			
1:8-11	1:8-11	1:8-11	1:8-11	1:8-11
Պողոսի այցի հետաձգումը	Պողոսի անկեղծությունը	Եկեղեցու հետ վերջին հարաբերությունները (1:12-2:13)	Պողոսի ծրագրերի փոփոխությունը (1:12-2:4)	Ինչու Պողոսը փոխեց իր պլանները (1:12-2:11)
1:12-14	1:12-14	1:12-14	1:12-14	1:12-14
	Նուրբ վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ			
1:15-22	1:15-24	1:15-22	1:15-22	1:15-22
1:23-2:4		1:23-2:4	1:23-2:4	1:23-2:4

* Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Յուրաքանչյուր տարբերակ ընդգրկում է այդ թեման իր իսկ ձևով: Երբ դուք կարդում եք տեքստը, հարցրեք ինքներդ ձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացությանը:

Յուրաքանչյուր գլխում մենք պետք է նախ կարդանք Աստվածաշունչը և փորձենք որոշել թեմաները (պարբերությունները), ապա համեմատենք մեր հասկացողությունը ժամանակակից տարբերակների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանը և շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված- ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ փոփոխելու նրա պատգամը: Աստվածաշնչի ընթերցողները պատասխանատվություն են կրում ներշնչված ճշմարտությունը իրենց կյանքի մեջ կիրառելու համար:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

- Ա. 2 Կորնթացիսը գրվել է 1 Կորնթացիսի մոտ վեցից տասնութ ամիս հետո, Պողոսի Մակեդոնիայում մնալու ժամանակ, երբ Տիտոսը բերեց եկեղեցու արձագանքը ի պատասխանի իր հետ հաշտեցման նախկին փորձերի (տես 2 Կոր. 2: 12-13; 7:11-16):
- Բ. Սա շատ ինտենսիվ անձնական նամակ է: Պողոսի զգացմունքային վիճակը նույնիսկ կարելի է տեսնել քերականության մեջ (այսինքն, կապող բառերի բացակայությունն եւ անավարտ նախադասություններ):
- Գ. Պողոսը ենթարկվել էր խիստ հարձակման եկեղեցու փոքրամասնության կողմից: Փոքրամասնությունը թե Կորնթոսի տեղական եկեղեցուց էր, և թե շրջիկ հրեա խմբի: Նրանց մեղադրանքներն էին՝
1. Պողոսն ուներ պիղծ, անմաքուր շարժառիթներ, 2 Կոր. 1:12
 2. Պողոսն անկայուն էր, 2 Կոր. 1: 15
 3. Պողոսը թույլ էր, 2 Կոր. 10:10
 4. Պողոսը ֆիզիկապես տգեղ էր, 2 Կոր. 10:10
 5. Պողոսը լավ հոետոր չէր, 2 Կոր. 10:10; 11:16
 6. Պողոսը քարոզում էր փողի համար, 2 Կոր. 11: 7; 12: 13
 7. Պողոսը ճշմարիտ առաքյալ չէր, 2 Կոր. 11: 5,13; 12: 4
 8. Պողոսը ուղղափառ հրեա չէր, 2 Կոր. 11: 21
 9. նրանք ունեին ուղիղ հայտնություն, բայց Պողոսը ոչ, 2 Կոր. 12: 1

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:1ա

¹Պողոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովը, եւ Տիմոթէոս եղբայրը. Աստուծոյ եկեղեցուն որ Կորնթոսումն է՝ ամեն սուրբերի հետ որ բոլոր Աքայիայումն են.

1: 1 «Պողոս» Տարսնացի Սողոսը առաջինը անգամ անվանվում է Պողոս Գործք 13:9-ում: Հավանական է, սփյուռքի հրեաների մեծ մասն ուներ եբրայական անուն (Սողոս, Մավուդ) և հունական անուն (Պողոս): Եթե այդպես է, ապա Մավուդի ծնողները նրան տվեցին այդ անունը, ուրեմն ինչու՞ է «Պողոս» անունը հանկարծ հայտնվում Գործք 13-ում: Հնարավոր է 1) ուրիշները սկսեցին նրան կանչել այդ անունով, կամ 2) նա սկսեց ինքն իրեն անվանել «փոքր» կամ «նվազագույն» տերմինով: Հունարեն Պատուխ անունը նշանակում է «փոքր»: Մի քանի տեսություններ են առաջ բերվել հունարեն անվան ծագման մասին,

1. նրա ֆիզիկական չափը, երկրորդ դարի ավանդույթը, որ Պողոսը կարճահասակ էր, գեր, ճաղատ, ծուր ոտ, հաստ հոնքերով, և ուներ դուրս պրծած աչքեր, վերցված Թեսալոնիկեի *Paul and Thekla* անանուն գրքից, որը անվան հնարավոր աղբյուրն է,
2. Պողոսն իրեն անվանում է «սուրբերից ամենավերջինը, փոքրը», քանի որ նա հալածեց Եկեղեցին (տես Գործք 9: 1-2; 1 Կոր. 15: 9; Եփ. 3:8; 1 Տիմ. 1:15): Ոմանք այս «փոքրությունը» ընդունում են որպես ինքն ընտրած անուն: Մակայն Գաղատացիս թղթում նա ընդգծում է իր անկախությունը և հավասարությունը Երուսաղեմի Տասներկուսի հետ, որը քիչ հավանական է (տես 2 Կոր. 11:5; 12:11; 15:10):

▪ **«առաքեալ»** Այս արմատը «ուղարկել» (*apostellō*): Այս տերմինն ունի մի քանի աստվածաբանական օգտագործում:

2. Ռաբբիներն այն օգտագործել են որպես մեկ ուրիշի փոխարեն կանչված և ուղարկված պաշտոնական ներկայացուցիչ, մեր լեզվով ասած՝ «դեսպան» (տես 2 Կոր. 5:20):
2. Ավետարանները հաճախ օգտագործում են այս տերմինը որպես՝ Հայրն ուղարկեց Հիսուսին (տես Մաթ. 10:40; 15:24; Մարկ. 9:37; Ղուկ. 9:48): Հովհաննեսի Ավետարանում տերմինն ունի Մեսիական երանգ (տես Հովհ. 4:34; 5: 24,30,36,37,38; 6: 29,38,39,40,57; 7:29; 8:42; 10: 36; 11:42; 17: 3,8,18,21,23,25; 20:21): Այն օգտագործվում է, երբ Հիսուսն ուղարկում է հավատացյալներին (տես Հովհ. 17:18; 20:21):
3. Նոր Կտակարանը օգտագործում է աշակերտների համար:
 - ա. տասներկու աշակերտների ներքին շրջանակը (տես Ղուկ. 6:13; Գործք 1: 21-22)
 - բ. Առաքյալների օգնականների և գործընկերների հատուկ խումբը
 - (1) Բառնաբաս (տես Գործք 14: 4, 14)
 - (2) Անդրոնիկոս և Յունիա (KJV, Junia, տես Հռ. 16: 7)
 - (3) Ապողոս (տես 1 Կոր. 4: 6-9)
 - (4) Տիրոջ եղբայր Հակոբոսը (տես Գաղ. 1:19)
 - (5) Սիդուանոս և Տիմոթէոս (տես 1 Թես. 2: 6)
 - (6) հավանաբար Տիտոս (տես 2 Կոր. 8: 23)
 - (7) հնարավոր է Եպափրոդիտոս (տես Փիլ. 2:25)
 - գ. Եկեղեցում շարունակական պարզն (տես 1 Կոր. 12:28-29; Եփես 4:11)
4. Պողոսը նամակների մեծ մասում այս տիտղոսն օգտագործում է իր համար, որպես Աստծո կողմից տրված իշխանություն և որպես Քրիստոսի ներկայացուցիչ (տես Հռ. 1:1; 1 Կոր. 1:1; 2 Կոր. 1:1; Գաղ. 1:1; Եփ. 1:1; Կոր. 1:1; 1 Տիմ. 1:1; 2 Տիմ. 1:1; Տիտոս 1:1):

▪ **«Քրիստոսի»** Սա եբրայերեն *messiah* տերմինի հունարեն համարժեքն է, որը նշանակում է «օծյալ»: Սա նշանակում է «մեկը՝ կանչված և սպառազինված Աստծո կողմից կոնկրետ գործի

համար»: Հին Կտակարանում առաջնորդների երեք խմբեր են օծվել՝ քահանաները, թագավորները և մարգարեները: Հիսուսը կատարում է այդ երեք օծյալ պաշտոններից երեքը (տես Եբր. 1: 2-3):

▪ **«Յիսուս»** Եբրայերեն անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ փրկում է» կամ «ՅԱՀՎԵՆ բերում է փրկություն»: Այս անունը հրեշտակը հայտնել է ծնողներին (տես Մատթ. 1:21): «Հիսուս» բխում է եբրայերեն բառից, փրկության համար, *hosea*, որը լիովին համահունչ է Աստծո համար ուխտի անունին՝ ՅԱՀՎԵ: Սա նույնն է, ինչ եբրայերեն Հեսու անունը:

Հունարեն ձեռագրերը բաժանում են այս տերմինների հերթականությունը:

1. Հիսուս Քրիստոս, A, D, G, K, L (Peshitta, KJV, NKJV)
2. Քրիստոս Հիսուս, P⁴⁶, Ռ, B, M, P (NASB, NRSV, TEV, NJB, NIV)

Թվում է, այդ հերթականությունը աստվածաբանական նշանակություն չունի: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, տես 1 Կոր. 2: 8:

▪ **«Աստուծոյ կամքովը»** Այս նույն ներածական արտահայտությունն օգտագործվում է 1 Կոր. 1: 1; 2 Կոր. 1: 1; Եփ. 1: 1; Կող. 1: 1 և 2 Տիմ. 1: 1: Պողոսը համոզված էր, որ Աստված ընտրել էր իրեն որպես Առաքյալ: Այս հատուկ նշանակության կանչը սկսվեց Դամասկոս ճանապարհին դարձի գալուց հետո (տես Գործք 9: 1-22; 23: 3-16; 26: 9-18): Պողոսը հաճախ պնդեց Աստծու տված իշխանությունը և կոչ արեց հաստատել և ընդունել իր գրվածքները բացարձակապես Աստծուց (այսինքն, ներշնչված, տես 2 Տիմ. 3:16; 1 Կոր. 2: 9-13; 1 Թես. 2:13):

▪ **«Տիմոթեոս եղբայրը»** 1 Կոր. 1: 1 նշվում է «Սուրբենես»: Այստեղ Տիմոթեոսն անվանվում է, հավանաբար, որպես գործընկեր, համահեղինակ կամ դպիր: Հնարավոր է նաև, որ Պողոսը հիշատակեց Տիմոթեոսին, քանի որ այս եկեղեցին այնքան անպատասխանատու էր իրեն, երբ նա հանձնեց Պողոսի 1 Կորնթացիս նամակը նրանց:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՄՈԹԵՈՍ
SPECIAL TOPIC: TIMOTHY**

- Ա. Նրա անունը նշանակում է «մեկը, ով պատվում է Աստծուն»:
- Բ. Նա հրեա մոր և հույն հոր զավակ էր և ապրում էր Լյուստրիայում (տես Գործք 16: 1): Օրիգենի Հռ. 16:21 մեկնաբանության լատիներեն թարգմանությունը ասում է, որ Տիմոթեոսը Դերբեի քաղաքացի էր: Սա հնարավոր է Գործք 20:4-ից:
- Գ. Հրեական հավատքի (կամ քրիստոնեական հավատքի) մասին սովորեցրել են մայրը և տատիկը (տես 2 Տիմ. 1: 5; 3: 14-15):
- Դ. Նա, ըստ երևույթին, Քրիստոսին էր հավատացել և ընդունել Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես Գործք 14: 6-7):
- Ե. Նրան խնդրեցին միանալ Պողոսի և Շիղայի միսիոներական թիմին երկրորդ ճանապարհորդության ժամանակ (տես Գործք 16: 1-5), ըստ երևույթին, Հովհաննես Մարկոսի պարտականությունները վերցնելու համար: Նա հաստատվել է մարգարեությամբ (տես 1 Տիմ. 1:18; 4:14):
- Զ. Նա թլպատվեց Պողոսի կողմից, որպեսզի աշխատի թե՛ հրեաների և թե՛ հույների համար (տես Գործք 16:3):
- Է. Պողոսի նվիրյալ ուղեկիցն էր և դարձավ իր Առաքելական պատվիրակը: Նա անունով ավելի շատ է հիշատակվում, քան Պողոսի օգնականներից որևէ մեկը (17 անգամ 10 նամակներում, այսինքն, Հռ.16:21; 1 Կոր. 4:17; 16:10; Փիլ.1: 1; 2: 19,22; Կող.1: 5; 1 Տիմ. 1: 2; 2 Տիմ. 1: 2; Տիտոս 1: 4):

- Ը. Պողոսը սիրով նրան անվանում է «իմ իսկական զավակը հավատքի մեջ» (տես 1 Տիմ. «իմ սիրելի որդին» (տես 2 Տիմ. «իմ իսկական զավակը ընդհանուր հավատքի մեջ» (տես Տիտոս 1: 4): Նաև «իմ սիրելի և հավատարիմ զավակը Տիրոջմով» 1 Կոր. 4:17.
- Թ. Նա, ըստ երևույթին, Հռոմում էր, երբ Պողոսը բանտից ազատ էր արձակվել և ուղեկցեց նրան չորրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ (տես Կող.1:1; Փիլիմոն 1:1):
- Ժ. Նա կոչվում է «առաքյալ» 1 Թես. 2: 6, եկեղեցիներում շարունակական հոգևոր պարզևի իմաստով (տես Եփ. 4:11):
- Ի. Երեք Հովվական նամակներից երկուսը հասցեագրված են իրեն:
- Լ. Վերջին անգամ հիշատակվում է Եբր. 13:23 (բայց ժամանակագրականորեն 2 Տիմ. 1: 2):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:1բ

¹Աստուծոյ եկեղեցուն որ Կորնթոսումն է՝ ամեն սուրբերի հետ որ բոլոր Աքայիայումն են.

1: 1 «**եկեղեցուն**» Սա հունարեն *ekklesia* տերմինն է: Սա կազմված է երկու բառից «դուրս» և «կանչված», հետևաբար, տերմինը ենթադրում է Աստծո կողմից կանչվածներ: Վաղ եկեղեցին այս բառը վերցրել է աշխարհիկ օգտագործումից (տես Գործք 19:32,39,41) և Մեկատուագինդում այս տերմինի օգտագործումը Իսրայելի «համայնքի» համար (տես Թվոց 16: 3; 20: 4): Նրանք դա օգտագործեցին իրենց համար որպես Հին Կտակարանի Աստծո ժողովրդի շարունակություն: Նրանք նոր Իսրայելն էին (տես Հռ. 2: 28-29; Գաղ. 6:16; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6), Աստծո համաշխարհային առաքելության իրականացումը (տես Ծննդ. 3:15; 12: 3; Ելից 19:5- 6):

▪ **«Աստուծոյ որ Կորնթոսումն է»** Այս արտահայտությունը արտահայտում է երկու տարբեր իմաստները «եկեղեցու» մասին:

1. Այն վերստին ծնված, մկրտված հավատացյալների տեղական մարմինն է: Նոր Կտակարանում շատ տեղերում, *ekklesia* օգտագործվում է՝ արտացոլելու այս տեղական իմաստը:
2. Դա նաև Քրիստոսի մարմնի համընդհանուր արտահայտությունն է: Սա երևում է Մաթ. 16:18 (այսինքն, Հիսուսի կողմից այս տերմինի առաջին հազվադեպ օգտագործումը, տես Մատթ. 18:17 [երկու անգամ]): Գործք 9: 31 օգտագործում է եզակի թվով «եկեղեցի» Հրեաստանի, Գալիլեայի և Սամարիայի բոլոր տեղական համայնքների համար, և վերջապես, տերմինի օգտագործվելը Եփեսացիս թղթում, որը Փոքր Ասիայի եկեղեցիներում շրջանառվող նամակ է (տես 2 Կոր. 1:22; 3: 10,21; 5: 23-32):

Կա մի մեծ Քրիստոսի մարմին, որը կազմված է բոլոր հավատացյալներից (ոմանք հիմա մեռած են, իսկ ոմանք՝ կենդանի) և կան այդ տիեզերական մարմնի տեղական արտահայտությունները:

▪ **«ամեն սուրբերի հետ որ բոլոր Աքայիայումն են»** Այս ողջույնը ցույց է տալիս, որ նամակը ավելի լայն լսարանի համար էր, քան մեկ եկեղեցու (ինչպես Պողոսի բոլոր նամակները): Այն կարող է գործել որպես շրջանառվող նամակ ամբողջ տարածաշրջանում, ինչպես Գաղատացիսն ու Եփեսացիսը: Այնուամենայնիվ, դա բացառապես կենտրոնանում է Կորնթոսի խնդիրների վրա:

▪ **«սուրբերի»** Սա նշանակում է, որ նրանք սուրբ են հռչակվել Հիսուսի կատարած գործի շնորհիվ Սուրբ Հոգու միջոցով (տես 2 Կոր. 6:11): ԲԱՅՑ (*hagiazō*) կապված է «սուրբ» (*hagios*) և «սրբեր» բառերի հետ (այսինքն, «սրբերը» *hagioi*): Դա խոսում է մեր բաժանման մասին՝ Աստծուն

ծառայելու համար: Այստեղ այն վերաբերում է Նրանում ունեցած մեր դիրքորոշմանը 2 Կոր. 1: 3, բայց Նոր Կտակարանում այլ տեղերում հավատացյալները պետք է ձգտեն «սրբությանը»: Սա այն դիրքն է, որը պետք է ունենալ: Պողոսը քաջալերում է այս վիթխարի, հպարտ եկեղեցուն, կոչելով նրանց «սրբեր», անկախ նրանց թերություններից և մեղքերից: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲԵՆԸ, 1 Կոր. 1: 2:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:2

²Շնորհք լինի ձեզ եւ խաղաղութիւն՝ Աստուած մեր Հօրիցը, եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը:

1: 2 «Շնորհք լինի ձեզ եւ խաղաղութիւն՝ Աստուած» Հելլենիստական նամակների ավանդական բացումը կամ նախաբանը «ողջույններն» էր (տես Գործք 23:26; Հակ. 1: 1), այլ ոչ թե «շնորհք»: Պողոսը բառախաղ է անում «*chairein*» - ից «*charis*», ինչը դրան բացառիկ քրիստոնեական է դարձնում (տես 1 Թեա. 1: 1; Գաղ. 1: 3): Ոմանք պնդում են, որ «խաղաղությունը» արտացոլում է եբրայերեն «*shalom*» տերմինը (տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1: 3): Հնարավոր է, որ Պողոսը գիտեր տերմինների այս համադրությունը Ահարոնյան օրհնությունից Թվոց 6: 24-26: Հելլենիստական նամակների և Նոր Կտակարանի թղթերի մեծ մասը սկսվում է գոհաբանության աղոթքով, սակայն Պողոսի և այս համայնքի միջև եղած խնդիրների պատճառով շնորհակալության աղոթքն ուղղված է Աստծուն (տես 2 Կոր. 1: 3-7):

▪ **«Աստուած մեր Հօրիցը»** Սա շեշտը դնում է մտերմիկ ընտանեկան միջանձնային հարաբերությունների վրա (տես Մատթ. 6: 9): Հին Կտակարանում Աստված Իսրայելի հայրն է (տես Ես. 64:8; Ովս. 1-3; 11): Քանի որ Աստված անձ է, ամենալավ փոխաբերությունները՝ Նրա փոխհարաբերությունները Երրորդության մյուս անդամների և Իր ժողովրդի հետ նկարագրելու համար հրեական ընտանեկան տերմիններն են: Ինչպես Հայրը վերաբերվում է Հիսուսին, նույն ձևով Նա վերաբերվում է հավատացյալներին: Տես Հատուկ Թեմա: Հայր Աստված 1 Կոր. 1: 3:

Եվ «շնորհքը» և «խաղաղությունը» գալիս են Հորից և Որդուց: Հայրը և Հիսուսը կապված են քերականորեն որպես մեկ միավոր (այսինքն՝ մեկ ՆԱԽԴԻՐ, բայց երկու ՕԲՅԵԿՏՆԵՐ): Սա Նոր Կտակարանյան հեղինակների ընդհանուր ձևն է՝ Հիսուսի աստվածությունը հաստատելու համար (տես 1 Թեա. 1: 1; 3:11; 2 Թեա. 1: 2,12; 2:16):

▪ **«եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը»** Այս տերմինները «Տէր Հիսուս Քրիստոսի» լիարժեք անվան մասն են կազմում (տես 2 Կոր. 1: 2,3,7,8,9,10): Այս երեք (տես 2 Կոր. 1: 2, 3, 7, 8, 10, 10) անուններն ունեն անձնական նշանակություն:

1. «Քրիստոս» Եբրայերեն *Messiah* (Օծյալը) հունարեն թարգմանությունն է: Այն հաստատում է Հիսուսի Հին Կտակարանյան անունը, երբ Աստված խոստացավ ուղարկել Մեկին, ով կհաստատեր արդարության նոր դարաշրջանը:
5. «Հիսուս» անունը տրվեց երեխային Բեթլեհեմում հրեշտակի կողմից (տես Մատթ. 1:21): Այն բաղկացած է երկու եբրայերեն բառերից «ՅԱՀՎԵ»՝ Աստծո ուխտի անունը, և «փրկություն»(այսինքն, *hosea*): Այն նույն եբրայերեն անունն է, ինչ Հեսուն: Երբ մենակ օգտագործվում է, հաճախ նույնացվում է մարդու հետ, Մարիամի որդի Հիսուս Նազովրեցին (տես Մատթ. 1:16, 25; 2: 1; 3: 13,15,16):
6. «Տէր» (օգտ. է 2 Կոր. 1: 1, KJV) եբրայերեն *adon* տերմինի թարգմանությունն է, որը նշանակում էր «սեփականատեր, ամուսին, վարպետ կամ տեր»: Հրեաները վախենում էին արտասանել ՅԱՀՎԵ սուրբ անունը, որ չլինի թե զուր տեղը ասեն և զանց անեն Տասը պատվիրաններից մեկը: Երբ նրանք կարդում էին Սուրբ Գրքերը, նրանք ՅԱՀՎԵՆ փոխարինում էին *Adon*-ի հետ: Սա է պատճառը, որ անգլերեն թարգմանությունները Հին Կտակարանի ՅԱՀՎԵ - ի համար օգտագործում են ՏԵՐ ԲԱՐՁ ԲՈՂՐՐ մեծատառերով: Այս անունը փոխելով (հունարեն *kurios*) Հիսուսի, Նոր

Կտակարանի հեղինակները պնդում են Նրա աստվածությունն ու հավասարությունը Հոր հետ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:3-7

³Օրհնեալ լինի Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, գթութիւնների Հայրը եւ ամեն մխիթարութեան Աստուածը, ⁴ Որ մխիթարում է մեզ մեր ամեն նեղութիւնումը, որ մենք կարող լինենք մխիթարել նորանց որ ամեն տեսակ նեղութիւնում են՝ այն մխիթարութիւնովն որով մենք Աստուածանից մխիթարվում ենք: ⁵Որովհետեւ ինչպէս Քրիստոսի չարչարանքներն աւելանում են մեզանում, այնպէս էլ Քրիստոսի ձեռովը շատանում է մեր մխիթարութիւնը: ⁶ Եւ եթէ նեղութիւն ենք քաշում, այն ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է. Որ յաջողվում է այն չարչարանքների համբերութիւնովը, որ մենք էլ չարչարվում ենք. Եւ եթէ մխիթարվում ենք, այն ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է: ⁷Եւ մեր յոյսը ձեզ համար հաստատ է. որովհետեւ զիտենք թէ ինչպէս չարչարանքներին մասնակից էք, այնպէս էլ մխիթարութեանը:

1: 3 «Օրհնեալ լինի» Այս հունարեն բառը մենք ստանում ենք անգլերեն «eulogy/գովեստ, ներբող» բառը: Այս տերմինը (հետևելով Սեպտուագինդին) միշտ օգտագործվում է մարդկանց կողմից Աստծուն օրհնելու համար (տես Ղուկ. 1:68): Մարկոս 14:61-ում Աստծո անունը վերափոխվում է (այսինքն, «Օրհնյալը»): Պողոսն օգտագործում է տերմինը Հոր համար Հռ. 1:25; 9:5; 2 Կոր. 1: 3; 11:31; և Եփ. 1: 3:

- **«Աստուած»** Այս գովաբանության աղոթքը, 2 Կոր. 1: 3-11, նկարագրում է Աստծուն երեք ձևով:
 1. Նա Հիսուսի Հայրն է
 2. Նա ամեն ողորմության Հայրն է
 3. Նա ամեն մխիթարության Աստվածն էՀունարեն նամակի ընդունված ձևն էր՝ գոհության աղոթք նամակը ստացողների համար, բայց այս նամակում շնորհակալության աղոթքը ուղղված էր Աստծուն:

ՅԱՀՎԵՆ որպես *Yeshua*-ի Հայր (եբրայերեն Հիսուս անունը), հայտնի է միայն հայտնությամբ: Փիլիսոփայական անհրաժեշտությունից կամ դիզայնից որևէ փաստարկ չի կարող երբևէ տալ այս հարաբերական աստվածաբանությունը: Զգույշ եղեք «ապացույցներից» Աստծո համար, որը Սուրբ Գրքի փոխարեն հիմնված է տրամաբանության վրա, բայց նրանք օգնում են շատ մարդկանց, ովքեր հրաժարվում են ընդունել Սուրբ Գիրքը որպես ճշմարտություն: Տես Elton Trueblood, *The Logic of Belief*:

- **«գթութիւնների Հայրը»** Կան երեք հունարեն տերմիններ, որոնք կապված են «ողորմության» կամ «կարեկցանքի» հետ:
 1. *eleos*, որը սովորաբար վերաբերում է ողորմության կամ աստվածապաշտության զգացմունքներին (տես 2 Կոր. 4: 1; Հռ. 9:15, որը մեջբերում է Ելից 33:19-ից):
 2. *splanchna*, որը վերաբերում է գթասիրտության կամ ողորմության ենթադրյալ ֆիզիկական տեղակայմանը ստորին ներքին օրգաններում (տես Փիլ. 2: 1; Կող 3:12)
 3. *oiktirmos*, զգալ կամ արտահայտել ողորմության կամ կարեկցանքի իմաստ ուրիշի վիճակում (տես 2 Կոր. 1: 3,4-6, 12: 1)Այս տերմինը բնորոշում է Աստծո գործողությունները և զգացմունքները մեղավոր մարդկության հանդեպ: Սա մեր մեծ հույսն է՝ Աստծո անփոփոխ ողորմությունն ու շնորհքը:

Նոր Կտակարանը հաճախ օգտագործում է «Հայր» և գումարած ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ՝ նկարագրելու Աստծուն:

 1. Գթությունների հայրը (տես 2 Կոր. 1: 3)
 2. Փառքի Հայր Եփ. 1:17 (տես Գործք 7:2; 1 Կոր. 2:8)
 3. Ամենքի Հայրը (տես Եփ. 4: 6)

4. Հոգիների Հայրը (տես Եբր.12: 9; Հայտ. 22: 6)
5. Լույսի Հայրը (տես Հակ. 1:17)
6. կրկին ու կրկին Պողոսի գրվածքներում, «մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը»

1: 4-11 «մխիթարութեան» Այս տերմինը *paraklēsis*, իր տարբեր ձևերով, օգտագործվում է 10 անգամ 2 Կոր.1:3-11: Սա բանալի տերմինն է ամբողջ հատվածում և նաև 1-9 գլուխներում, որտեղ այն օգտագործվում է քսանհինգ անգամ: Այս բառը նշանակում է «կանգնել կողքին»: Այն հաճախ օգտագործվում էր իրավաբանական տեսանկյունից, որն ապահովում էր իրավաբանական օգնություն, հարմարավետություն և առաջնորդություն:

Այս կոնտեքստում այն օգտագործվում է խրախուսման և մխիթարության իմաստով: Կապված տերմինը, *paraklētos*, օգտագործվում է Սուրբ Հոգու համար Հովհ.14: 16,26; 15:26; 16:7; և Հիսուսի 1 Հովհ. 2: 1: Այս կոնտեքստում այն օգտագործվում է Հոր համար:

Parakaleō- ի բայական ձևը օգտագործվում է մի քանի իմաստներով:

1. Մեպտուագինդը
 - ա. հորդորել, 2 Օր. 3:28
 - բ. մխիթարել, Ծննդ. 24: 67; 37:35; Սաղ. 119: 50 (Մեսիական իմաստով, Ես. 40: 1; 49:13; 51: 3; 61: 2)
 - գ. գույթ ունենալ, 2 Օր. 32:36; Դատ. 2:18; Սաղ. 135: 14
 - դ. սփռվել, Ես. 35: 4
 - ե. ողորմություն, Ելից 15:13
2. Պողոսի գրվածքները Կորնթոսում
 - ա. հորդորել, 1 Կոր. 1:10; 4:16; 14: 30-31; 16: 15-16; 2 Կոր. 2: 8; 5:20; 6:1; 8: 4,6; 10: 1
 - բ. մխիթարություն, ուրախություն, 2 Կոր. 1: 4,6; 2: 7; 7: 6,7,13; 13:11
 - գ. կարեկցանք, մխիթարություն, 1 Կոր. 4:13
 - դ. խնդրել, աղերսել, պահանջել, 1 Կոր. 16:12; 2 Կոր. 9: 5; 12:18

1: 4 «որ մենք կարող լինենք մխիթարել նորանց որ ամեն տեսակ նեղությունում են» Այս կոնտեքստում կա երկու պատճառ, թե ինչու են քրիստոնյաները տառապում՝ 1) որ կարողանան մխիթարել մյուսներին, 2 Կոր. 1: 4 և 2) որ մեզանից կախված չլինենք, 2 Կոր. 1: 9: Հավատացյալներն ապրում են ընկած աշխարհում: Վատ բաներ լինում են, որոշները վիճակագրական են, որոշներն էլ անձնական չարիք են, բայց բոլորն էլ կարող են օգտագործվել (չի ուղարկել, բայց թույլ է տվել) Աստծո կողմից մեր հասունության և ծառայության համար (տես Հո. 8: 28-29): Տես John W. Wenham, *The Goodness of God*.

Տառապանք, նեղություն (*thlipsis*) տերմինը ստուգաբանորեն նշանակում է «սեղմել կամ փշրել» (ինչպես խաղողի վերամշակումը կամ ցորենի փշրելը այլուրի պատրաստման համար), բայց օգտագործվում է փոխաբերականորեն ֆիզիկական (տես 2 Կոր.1:6) կամ զգացմունքային (տես 2 Կոր. 2: 4; 11:28) վնասվածքի, տրավմայի համար (տես 2 Կոր. 4: 8; 7: 5):

Միայն մի կարճ անձնական մեկնաբանություն: Այս գրքում այնքան դժվար է իմանալ, թե ում մասին է Պողոսը խոսում օգտագործելով հոգնակի դերանուններ «մենք», «մեզ» և «մեր» բառերը: Այն կարող է վերաբերել (1) միայն իրեն, 2) իրեն և իր առաքելության թիմին, 3) իրեն և մյուս Առաքյալներին, կամ (4) բոլոր հավատացյալներին: Միայն կոնտեքստը կարող է որոշել և երբեմն դա միանշանակ է:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԵՂՈՒԹՅՈՒՆ(thlipsis)
SPECIAL TOPIC: TRIBULATION (thlipsis)
 Այստեղ պետք է աստվածաբանական տարբերություն լինի Պողոսի և Հովհաննեսի այս տերմինի (*thlipsis*) օգտագործման միջև:
 Ա. Պողոսի օգտագործումը (որը արտացոլում է Հիսուսի օգտագործումը)
 1. ընկած աշխարհի մեջ ներգրավված խնդիրները, տառապանքները, չարք

	ա.	Մաթ. 13:21
	բ.	Հռ. 5: 3
	գ.	1 Կոր. 7:28
	դ.	2 Կոր. 7: 4
	ե.	Եփ. 3:13
2.		անհավատների կողմից առաջացած խնդիրները, տառապանքները, չարությունը
	ա.	Հռ. 5: 3; 8:35; 12:12
	բ.	2 Կոր. 1: 4,8; 6:4; 7:4; 8: 2,13
	գ.	Եփ. 3:13
	դ.	Փիլ. 4:14
	ե.	1 Թեա. 1: 6
	զ.	2 Թեա. 1: 4
3.		վերջի ժամանակի խնդիրներ, տառապանքներ, չարիք
	ա.	Մաթ. 24: 21,29
	բ.	Մարկ. 13: 19,24
	գ.	2 Թեա. 1: 6-9
Բ.		Հովհաննեսի օգտագործումը
1.		Հովհաննեսը Հայտնության գրքում առանձնահատուկ տարբերություն է դնում <i>thlipsis</i> և <i>orgē</i> կամ <i>thumos</i> (բարկություն) միջև: <i>Thlipsis</i> այն է, ինչ անհավատները անում են հավատացյալներին, իսկ <i>orgē</i> և <i>thumos</i> այն է, ինչ Աստված է անում անհավատների հետ:
	ա.	<i>thlipsis</i> - Հայտ. 1: 9; 2: 9-10,22; 7:14
	բ.	<i>orgē</i> – Հայտ. 6: 16-17; 11:18; 16:19; 19:15
	գ.	<i>thumos</i> – Հայտ. 12:12; 14: 8,10,19; 15: 1,7; 16: 1; 18: 3
2.		Հովհաննեսն օգտագործում է նաև տերմինը իր Ավետարանում՝ արտացոլելու բոլոր ժամանակների հավատացյալների դիմագրավելու խնդիրները, Հովհ. 16:33:

1: 5 «Որովհետև ինչպես Քրիստոսի չարչարանքներն աւելանում են մեզանում» Հունարեն *pathēma* տերմինն այստեղ կիրառվում է Քրիստոսի տառապանքների համար (տես Ղուկ. 22:15) և 2 Կոր. 1: 6 և 7 հավատացյալների տառապանքների համար: Պողոսը տարբեր բառեր է օգտագործում միսիոներական թիմի տառապանքների / չարչարանքների համար (*thlipsis*) 2 Կոր. 1: 4:

Պողոսը մի քանի անգամ նշում է հավատացյալների համար որպես Քրիստոսի հետ չարչարվողներ (տես 2 Կոր. 4: 10-11; Հռ. 8:17; Փիլ. 3:10; Կող. 1:24): Ինչպես մենք կիսում ենք Նրա մահը և հարությունը, այնպես էլ մենք կիսում ենք Նրա տառապանքը և հալածանքները: Տառապող քրիստոնյաների գաղափարի մասին հաճախ խոսվում է (տես Գործք 14:22; Հռ. 5: 3-4; 8:17; Գաղ. 6:17; Փիլ. 1:29; 3:10; Կող. 1: 24; 1 Թեա. 3: 3-4; 2 Տիմ. 3:12; Եբ. 13:13; Հակ. 1: 1-4; 1 Պետ. 2:19-23; 3: 14; 4: 12-19): Սա նորմա է բոլոր քրիստոնյաների համար: Այս նյութը կարծես թե 2 Կորնթացիսի միավորող թեման է: Քրիստոսի բավարար լինելը նաև առատ է և հորդուն: Այո, հավատացյալները տառապելու են ընկած աշխարհում, քրիստոնյա լինելու համար, բայց մեր Աստվածը Քրիստոսով կկարողանա մեր ամեն մի կարիքը հոգալ ֆիզիկապես, էմոցիոնալ և հոգևոր կերպով: Քրիստոսի մահն ու հարությունը ոչ միայն երկնքի համար են, այլև ներկայիս:

- **«աւելանում, շատանում է»** 2 Կորնթացիսում Պողոսի գրական ոճը կարող է պատկերավոր արտահայտվել նրա «առատություն» բառի օգտագործմամբ:
 1. *perissos*, ավելի, ավելորդ (տես 2 Կոր. 2: 7; 9: 1)
 2. *perissoterōs*, առատորեն, ավելի (տես 2 Կոր. 2: 4; 7:13)
 3. *perisseuō*, ավելանում է, շատանում է (տես 2 Կոր. 1:5; 3: 9; 4:15; 8: 2; 9: 8)

4. *perisseauma*, ավելի քան բավարար (տես 2 Կոր. 8: 13,14)

5. *perisseia*, առավելություն (տես 2 Կոր. 8: 2; 10:15)

Երբ խոսքը վերաբերում է այն բանին, թե ինչ է Աստված արել Քրիստոսով հավատացյալների համար, այն միշտ «գերբնական» է, «շռայլ է», «առատ է, առավելագույնն է»: Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 2: 7:

1: 6 **«եթե ... եթե»** Սրանք երկու ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են: Այս մեղավոր աշխարհում քրիստոնյա առաջնորդները կտառապեն, կտանջվեն, բայց սա հարուստ օգնություն և փրկություն է տալիս նրանց, ովքեր լսում են: Տառապանքն ունի աստվածային նպատակը (տես 2 Կոր. 1:7):

▪ **«այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է»** Քանի որ մխիթարությունը կապված է փրկության հետ, կարծես այն հետևում է Հին Կտակարանյան *sosō* տերմինի իմաստին, որը նշանակում է ֆիզիկական փրկություն (տես Մաթ. 9:22; Մարկ. 6:56; Հակ. 5:20):

Կան մի քանի հունարեն ձեռագիր տարբերակներ կապված 2 Կոր. 1: 6-7-ի հետ: Առավել ակնհայտ պատճառն այն է, որ «մխիթարություն» բառը (*paraklēseōs*) 2 Կոր. 1: 6ա շփոթում են նույն 2 Կոր. 1: 6բ-ի ձևի հետ, որտեղ միջամտող տեքստը դուրս է մնացել: Բացթողմամբ, տեքստը հասկանալի դարձնելու համար դպիրներն ավելացնում են այլ բառեր:

▪ **«համբերութիւնովը»** Սեպտուագինդում այս տերմին օգտագործվել է հույսի կամ ակնկալիքի համար (տես Եր. 14: 8; 17:13; 50: 7): Պողոսի գրվածքներում այն ենթադրում է «ակտիվ, անսասան, կամավոր տոկունություն», որը միայն լինում է ավետարանի միջոցով պատճառած տառապանքների միջոցով՝ հավատալ, ապրել և հոչակել: Պողոսի գրվածքներում «հույսի» (տես 2 Կոր. 1: 7) և «համբերության» միջև կա միություն (տես Հռ. 5: 3-5; 8:25; 15: 4-5; և 1 Թե.1: 3; 1 Տիմ. 6:11):

1: 7 Պողոսի հույսը նրանց համար այսպիսին էր: Քանի որ հավատացյալները հալածանքներ են կրում, ինչպես Հիսուսը, նրանք նույնպես կհսում են Աստծո մխիթարությունը՝ ինչպես Հիսուսը:

Արևելահայերեն **«հաստատ»**

Արևմտահայերեն **«հաստատուն»**

NASB **«հաստատուն հիմնավորված»**

NKJV **«կայուն»**

NRSV **«անսասան»**

TEV **«երբեք չի սասանվում»**

NJB **«ապահով»**

Սա նույն տերմինն է (*bebaios*), որն օգտագործվում է 1 Կոր. 1: 8 և 2 Կոր. 1:21.

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԱՇԽԻՔ, ԳՐԱՎ

SPECIAL TOPIC: GUARANTEE (bebaios)

Սա հունարեն *bebaios* տերմինն է, որն ունի երեք նշանակություն:

1. այն, որ վստահ է, համոզված կամ կարող է ապավինել (տես Հռ. 4:16; 2 Կոր. 1: 7; Եբր. 2:20; 3: 6,14; 6:19; 2 Պետ. 1: 10,19):
2. այն գործընթացը, որի միջոցով ինչ-որ բանի հավաստիությունն է ցուցաբերվում կամ հաստատվում (տես Հռ. 15: 8; Եբր. 2: 2, տես Louw and Nida, *Greek-English Lexicon of the New Testament*, հատոր 1, էջ 340,377,670) .

3. պապիրուսում այն դարձավ տեխնիկական տերմին իրավական երաշխիքի համար (տես Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*, էջ 107-8):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:8-11

⁸Վասնզի չենք կամենում, եղբարք, որ դուք չ'զհտենաք այն նեղութիւնն որ Ասիայումը մեզ եղաւ. Որ մեր կարողութիւնիցն աւելի ծանրաբեռնուեցանք. Մինչեւ որ մեր կեանքի յոյսն էլ կտրել էինք: ⁹ Բայց հէնց մենք ինքներս մեզ վերայ մահուան վճիռն ունէինք. որպէս զի մեր անձերի վերայ յոյս չ'դնենք, այլ Աստուծոյ վերայ որ մեռելներին յարուցանում է: ¹⁰Որ այնպիսի մահից մեզ փրկեց եւ փրկում էլ է. ¹¹ Որին յոյս ունինք՝ թէ տակաւին կ'փրկել էլ ձեր մեզ համար արած աղօթքի օգնականութեամբը որ շատ մարդկանցից մեզ եղած շնորհքի համար շատերի ձեռովը գոհութիւն մատուցանուի մեզ համար:

1: 8 «չենք կամենում, եղբարք, որ դուք չ'զհտենաք» Պողոսը հաճախ օգտագործում է այս արտահայտությունը՝ ներկայացնելու նոր տեղեկատվություն կամ եզրակացություն (տես Հո. 1:13; 11:25; 1 Կոր.10: 1; 12: 1; 2 Կոր. 1: 8; 1 Թես. 4:13):

▪ «այն նեղութիւնն որ Ասիայումը մեզ եղաւ. Որ մեր կարողութիւնիցն աւելի ծանրաբեռնուեցանք.» Անորոշ է, թէ ինչ է Պողոսը խոսում այս ինտենսիվ արտահայտությամբ:

1. Դեմետրիոսի կողմից կատարված խոսվությունը Գործք 19: 23-41
2. Եփեսոսում վայրի զագանների դեմ պայքարելը 1 Կոր. 15:32
3. ազատագրվում, հնարավոր է, մահապատժի դատապարտմամբ (տես 2 Կոր. 1: 9-10)
4. որոշ տեսակի ֆիզիկական հիվանդության

Ինչ էլ որ լինէր, դա Պողոսի համար կենաց մահու փորձառություն էր (տես 2 Կոր. 1: 8-10) և, ըստ երևույթին, Կորնթոսի եկեղեցին լսել էր դրա մասին, և Պողոսը կարիք չունէր հայտնելու այդ մասին:

«Չափազանց, ավելի» (*hyperbolē*) համար տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Huper* նախդիրը բարդ բառեր կազմելու համար 1 Կոր.2: 1:

1: 9 «Բայց հէնց մենք ինքներս մեզ վերայ մահուան վճիռն ունէինք» Սա տարօրինակ հայտարարություն է: Նախ, «վճիռ» բառը օգտագործվում է միայն այստեղ բոլոր հին հունարեն գրվածքներում, միայն ավելի ուշ այն նշանակում է «մահապատիժ» (տես Հովսեփոսը, *Antiquities* 14: 10: 6): Պողոսը կարծես չի խոսում դատական որոշման մասին, այլ իր մոտալուտ մահվան մասին: Սա ստիպեց նրան և իր ընկերներին լիովին հուսալ Աստծո օգնությանը, գթասրտությանը և գործությանը:

Բայը վաղակատար ներգործական սահմանական է: Ոմանք դա համարել են հիվանդության մասին խոսելու միջոց, որը Պողոսն ու նրա միախոներ ուղեկիցը ունեցան, որոնք թողել էին շարունակական արդյունքներ: Այնուամենայնիվ, այն կարող է մեկնաբանվել որպես աօրիստ, նույն ձևը, ինչպես 2 Կոր. 2:13.

Այս ամենը ավելացնում է, որ այս արտահայտությունը դարձնի միանգամայն անորոշ շատ տարբեր մեկնաբանությունների հետ: Թեև կոնկրետ ֆիզիկական հանգամանքներն անորոշ են, Պողոսի հոգևոր իմաստը պարզ է՝ տառապանքը օգնում է հավատացյալներին ավելի լիարժեք և լիովին վստահել Աստծուն, Քրիստոսին:

▪ «որպէս զի մեր անձերի վերայ յոյս չ'դնենք» Ինչպես 2 Կոր. 1: 4-ը արտահայտում է քրիստոնեական տառապանքի առաջին նպատակը, այս համարն էլ արտահայտում է երկրորդ նպատակը: Այս նույն ճշմարտությունը կարելի է տեսնել Պողոսի «մարմնի մեջ խայթոց/փուշ» (տես 2

Կոր. 12: 7-9): Հոգևոր ոլորտում մարդկային թուլությունը հավատքով ուղեկցվում է Աստծո զորությամբ:

- **«այլ Աստուծոյ վերայ որ մեռելներին յարուցանում է»** Արդյոք Պողոսը մտածում է
 1. Հին Կտակարանի մարդկանց օրինակը, թե ինչպես Աստված վերադարձրեց ֆիզիկական կյանքին (տես 3 Թագ. 17: 17-22; 4 Թագ. 4: 32-37)
 2. Հին Կտակարանի աստվածաբանական մտքերը (տես 2 Օր. 32:39; 1 Թագ. 2: 6; 4 Թագ. 5: 7)
 3. Հարության վերաբերյալ նրա քննարկումները 1 Կոր. 15-ում

1:10 «Որին յոյս ունինք» Դերանունը վերաբերում է Հայր Աստծուն (տես 2 Կոր. 1:9; 1 Տիմ. 4:10): Ինչպիսի հրաշալի բնութագրական անուն Աստծո համար: Պողոսը հաճախ է Աստծո համար հզոր, հրաշալի, նկարագրական անուններ տալիս (տես ամբողջական ցանկը 2 Կոր. 1: 3), ինչպես օրինակ

1. «զթությունների Հայրը» (տես 2 Կոր. 1: 3)
2. «ամեն մխիթարության Աստվածը» (տես 2 Կոր. 1:3)
3. «Նա, ով կարող է» (տես Հռ. 16:25; Եփ. 3:20)

Բայը վաղակատար ներգործական սահմանական է, որը ենթադրում է անցյալի ավարտված գործողություն մնայուն արդյունքներով (տես 1 Կոր. 15:19; 1 Տիմ. 5: 5; 6:17):

- **«կ'փրկե էլ»** Այս տերմինն օգտագործվում է երեք անգամ 2 Կոր. 1:10: Սա հետևում է Հին Կտակարանի ֆիզիկական, սոցիալական, զգացմունքային, հոգևոր փրկության իմաստին: Պողոսը մի քանի անգամ օգտագործեց այս տերմինը (տես Հռ. 7:24; 11:26; 15:31; 2 Կոր. 1:10; Կոր. 1:13; 1 Թես. 1:10; 2 Թես. 2 Տիմ. 3:11; 4: 17-18): Նա իսկապես մտածում էր, որ մահանալու է Եփեսոսում (տես 2 Կոր. 1: 8-10):

Արևելահայերեն «այնպիսի մահից»

Արևմտահայերեն «այնպիսի մեծ մահուանէ»

NASB «մահվան այդքան մեծ վտանգից»

NKJV «այդքան մեծ մահից»

NRSV «այնքան վտանգավոր մահից»

TEV «մահվան նման սարսափելի վտանգներից»

NJB «նման մահից»

Կա հունարեն ձեռագիր տարբերակ եզակի «այդքան մեծ մահ» (այսինքն, MSS Ռ, A, B, C, D, F, G) և հոգնակիի միջն (այսինքն, MS P⁴⁶ և սիրիական թարգմանությունը, ինչպես նաև հունարեն տեքստը, որն օգտագործվում է Օրիգենի, Բասիլի, Քրիստոստոմի, Թիոդորեթի, Ջերոմի և Օգոստինոսի կողմից): Հոգնակին (տես TEV) առավել անսովոր և ամենահինն է: Այս հոգնակին կարելի է տեսնել Պողոսի արտաքին և ներքին խնդիրների ցանկի մեջ 2 Կոր. 4: 8-12; 6: 3-10; 11: 23-29: UBS⁴- ը հոգնակիին տալիս է «Բ» վարկանիշ (գրեթե որոշակի):

1:11

Արևելահայերեն «մեզ համար արած աղօթքի օգնականութեամբը»

Արևմտահայերեն «մեզի համար ձեր ըրած աղօթքին օգնութեամբը»

NASB «միանալով, օգնելով մեզ ձեր աղօթքների միջոցով»

NKJV «օգնում է միասին աղօթել մեզ համար»

NRSV «միանում է ձեր աղօթքներին օգնելու մեջ»

TEV «մեզ օգնում է ձեր աղօթքների միջոցով»

NJB «ձեր աղոթքները մեզ համար կնպաստեն սրան»

Մի քանի աստվածաբան գիտնականներ հավատում են, որ այս քերականական կառուցվածքը (Murry J. Harris *Expositor's Bible Commentary*, հատոր 10, էջ 322) օգտագործվում է պայմանական իմաստով (The Anchor Bible, հատ. 32, էջ 115): Եթե հավատացյալները չեն աղոթում, ինչ - որ կերպ Սուվերեն Տերը որոշել է չգործել (տես Հակ. 4: 2): Սա ցույց է տալիս բարեխոսական աղոթքի օգուտները (տես Եփ. 6: 18-20): Պողոսը կարծում էր, որ Աստծո ողորմածության հետ կապված քրիստոնյաների աղոթքները նրան փրկել են մահից, և շարունակում պաշտպանել և ազատել նրան: Աստծու կողմից Պողոսի փրկվելը ճանաչվելու և գնահատվելու էր շատերի կողմից, ովքեր օրհնվելու էին Պողոսի ծառայություններից:

▪ **«մարդկանցից»** Սա բառացիորեն նշանակում է «ղեմք» (այսինքն *prosōpon*), Պողոսը հաճախ օգտագործում է այս տերմինը 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 2: 10; 3: 7 [երկու անգամ], 13,18; 4: 6; 5: 12; 8:24; 10: 1,7; 11:20): Դա կարող է լինել Հին Կտակարանյան ակնարկ հրեական աղոթքի ստանդարտ ֆիզիկական դիրքի մասին՝ գլուխը բարձրացված, որը ճիշտ համապատասխանում է այս կոնտեքստին:

Պողոսըն այս տերմինը օգտագործում է մի քանի իմաստներով 2 Կոր-ում.

1. մարդկանցից, 2 Կոր. 1:11; 2:10; 4: 6
2. անձի դեմքին, 2 Կոր. 3: 7 (երկու անգամ), 2 Կոր. 13,18; 10: 1,7; 11:20
3. փոխաբերությունն նախ «առջև» իմաստով (այսինքն, դիրքորոշում, ոչ թե ժամանակ), 2 Կոր. 8:24
4. փոխաբերությունն արտաքին տեսքի համար (տես NRSV), 2 Կոր. 5:12

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:12-14
¹² Որովհետև մեր պարծանքը սա է՝ մեր խղճմտանքի վկայութիւնը, որ սրբութիւնով եւ Աստուծոյ պարգոութիւնովը եւ ոչ թէ մարմնական իմաստութիւնով, այլ Աստուծոյ շնորհքովը վարուեցանք աշխարհքի մեջ, եւ էլ աւելի դէպի ձեզ: ¹³ Վասնզի ուրիշ բաներ չենք գրում ձեզ, այլ միայն նա որ կարդում էք կամ հենց ճանաչում էք. Եւ յոյս ունիմ թէ մինչեւ վերջն էլ կ'ճանաչէք: ¹⁴ Ինչպէս էլ փոքր ի շատէ ճանաչեցիք մեզ. որովհետև ձեր պարծանքն ենք. ինչպէս դուք էլ մերը՝ Տէր Յիսուսի օրումը:

1:12 «մեր պարծանքը» Սյս հունարեն տերմինները *kauchaomai*, *kauchēma*, և *kauchēsis* օգտագործվում են մոտ երեսունհինգ անգամ Պողոսի կողմից և միայն երկու անգամ մնացած Նոր կտակարանում (երկուսն էլ Հակոբոսի մեջ): Դա հիմնականում օգտագործվում է 1 և 2 Կորնթացիսում:

Պարծանքի հետ կապված երկու հիմնական ճշմարտություններ կան.

1. ոչ մի մարմին չպարծենա Աստծո առաջ (տես 1 Կոր.1: 29; Եփ. 2:9)
2. հավատացյալները պետք է Տերովը պարծենան (տես 1 Կոր. 1: 31; 2 Կոր. 10:17, որը ակնարկ է Եր. 9: 23-24)

Հետևաբար, կա համապատասխան և անպատշաճ պարծանք (այսինքն, հպարտություն):

1. համապատասխան
 - ա. փառքի հույսով (տես Հռ. 4: 2)
 - բ. Աստծուն Տեր Հիսուսի միջոցով (տես Հռ. 5:11)
 - գ. Տեր Հիսուս Քրիստոսի խաչով (այսինքն, Պողոսի գլխավոր թեման, տես 1 Կոր. 1:17-18; Գաղ. 6:14)
 - դ. Պողոսը պարծենում է
 - 1) որ իր ծառայությունը առանց փոխհատուցման է (տես 1 Կոր. 9: 15,16; 2 Կոր. 10:12)
 - 2) որ իր իշխանությունը Քրիստոսից է (տես 2 Կոր. 10: 8,12)

3) նա չի պարծենում այլ մարդկանց աշխատանքով (ինչպես որոշները Կորնթոսում, կարդա 2 Կոր. 10:15)

4) նրա ռասայական ժառանգությունը (ինչպես շատերն էին անում Կորնթոսում, 2 Կոր. 11:17; 12: 1,5,6)

5) իր եկեղեցիներով

(ա) Կորնթոս (տես 2 Կոր. 7: 4,14; 8:24; 9: 2; 11:10)

(բ) Թեսաղոնիկե (տես 2 Թես. 1:4)

6) որ իր վստահությունը Աստծո մխիթարության և փրկության վրա է (տես 2 Կոր. 1:12)

2. անպատշաճ

ա. հրեական ժառանգությամբ (տես Հո. 2: 17,23; 3:27; Գաղ. 6:13)

բ. Կորնթոսի եկեղեցում ոմանք պարծենում էին

1) տղամարդկանցով (տես 1 Կոր. 3:21)

2) իմաստությամբ (տես 1 Կոր. 4:7)

3) ազատության համար (տես 1 Կոր. 5: 6)

3. կեղծ ուսուցիչները փորձեցին պարծենալ Կորնթոսի եկեղեցում (տես 2 Կոր. 11:12)

▪ **«մեր խղճմտանքի վկայությունը»** Պողոսը հաճախ օգտագործում է «խիղճ» բառը Կորնթացիս նամակներում (տես 1 Կոր. 4: 4; 8: 7,10,12; 10: 25,27,28,29; 2 Կոր. 1:12; 4: 2; 5: 11): Սա վերաբերում է այն բարոյական ներքին իմաստին, թե ինչն է պատշաճ և ինչը անպատշաճ (տես Գործք 23:1; Հո. 2:15): Խղճի վրա կարող է ազդել մեր անցյալը, մեր վատ ընտրությունները կամ Աստծո Հոգին: Այն անթերի ուղեցույց չէ (տես 1 Կոր. 4: 4; 8: 7; 1 Տիմ. 4: 2), բայց դա որոշում է անհատի հավատքի սահմանները (տես 1 Տիմ. 1: 5, 19): Հետևաբար, մեր խղճի ոտնահարումը, նույնիսկ եթե դա սխալ կամ տկար է, հավատքի մեծ խնդիր է:

Հավատացյալի խիղճը պետք է ավելի ու ավելի ձևավորվի Աստծո Խոսքով և Աստծո Հոգով (տես 1 Տիմ. 3:9): Աստված կդատի հավատացյալներին իրենց ունեցած լույսով, բայց բոլոր հավատացյալները պետք է ավելի ու ավելի բաց լինեն Աստվածաշնչի ու Հոգու առաջ ավելի շատ լույս ստանալու համար և շարունակեն աճել Տեր Հիսուս Քրիստոսի գիտության մեջ: Այս կոնտեքստում վերջնական դատաստանը երևում է (տես 2 Կոր. 1:13-14): Աստված դատելու է մարդկանց, իրենց հասկացողության և խղճի լույսի ներքո (տես Հո. 2: 15-16; 9: 1; 13: 5):

Պողոսի դրդապատճառներն ու գործողությունները խիստ քննադատության են ենթարկվել Կորնթոսի մի քանի կեղծ ուսուցիչների կողմից (տես 10-13 գլուխներ): Թվում է, թե երկու խումբ կար 1) տեղացի հակառակորդների խումբ, և 2) կեղծ ուսուցիչների շրջիկ Պաղեստինյան հրեական խումբ:

▪ **«սրբությունով»** Որոշ հունարեն ձեռագրեր ունեն «սրբություն» բառը (այսինքն P⁴⁶, ճ^{*}, A, B, C, K, P, և Ղպտի NASB, NIV, և NJB թարգմանությունները): Ուրիշները ունեն «պարզություն» բառը (այսինքն, ճ², D, F, G, և Վուլգատը, Peshitta, NKJV, NRSV, և TEV թարգմանությունները): Bruce Metzger in *A Textual Commentary on the Greek New Testament*, մեկնաբանում է, որ UBS³- ի թարգմանչական կոմիտեն նախընտրեց «պարզությունը» (*haplotēti*), սակայն այն տվեց «Դ» վարկանիշ, ինչը նշանակում է, որ շատ բարձր աստիճանի կասկած (էջ 575): Այնուամենայնիվ, UBS⁴ հրատարակությունը նրան տալիս է «Բ» վարկանիշ, ինչը նշանակում է գրեթե որոշակի (էջ 612): Այս աճող վստահությունը գալիս է այն փաստից, որ Պողոսը օգտագործում է «պարզություն» բառը 2 Կոր. 11: 3 (և նույն տերմինը թարգմանվել է «առատաձեռն, լիություն» 2 Կոր. 8: 2; 9: 11,13), բայց երբեք որևէ գրվածքների մեջ չի օգտագործում *hagiotēti*:

▪ **«պարզությունովը»** Այս տերմինն ուներ երկու նշանակություններ «առատաձեռն» կամ «անկեղծ»: Դա փոխաբերություն էր կապված տեսիլքի հետ: Հին Կտակարանում այքը օգտագործվել է

որպես փոխաբերություն շարժառիթի համար, երկու ձևով՝ (1) չար աչք (ժլատ, BDB 949, տես 2 Օր. 15: 9-10) և (2) բարի աչք (առատաձեռն, BDB 373 III, տես Առ. 22: 9): Հիսուսը հետևեց այս օգտագործմանը (տես Մատթ. 6:22-23; 20:15): Պողոսը այս տերմինն օգտագործեց երկու իմաստով:

1. «պարզություն, անկեղծություն, մաքրություն» (այսինքն, ոչ մի թաքնված միտք կամ կեղծ ապացույցներ, տես 2 Կոր. 1:12; 11:3; Եփ. 6: 5; Կող. 3:22)
2. «առատաձեռն, լիություն» (տես Հռ. 12:8; 2 Կոր. 8: 2; 9: 11,13)

▪ **«ոչ թե մարմնական իմաստությի՞նով»** Պողոսը լայնորեն քննարկում է աշխարհիկ իմաստությունը 1 Կորնթացիտում (տես 1 Կոր. 1: 18-31; 2: 1-16; և 3: 18-23 և հեզնանքով 2 Կոր. 4:10; 6: 5 և հնարավոր է 10:15): Պողոսը նմանատիպ արտահայտություններ է օգտագործում, որոնք վերաբերում են մարդկային իմաստությանը 1 Կոր. 1:17; 2:4,13-14: Այս պարբերությունում նա բառախաղ է անում աշխարհիկ իմաստության և այս աշխարհում շնորհքի մեջ ապրելու միջև: Պողոսի վկայությունը նրա առաջնորդության մասին ոչ միայն տրամաբանության կամ հռետորության մեջ է, այլև աստվածապաշտության և Աստծո առաջ մաքուր խղճմտանքի: Պողոսը պնդում է, որ գրել է նրանց պարզ, ակնհայտ, հեշտ հասկանալի տերմիններով: Եթե այդքան իմաստուն լինեին, նրանք պետք է արագ և հեշտությամբ հասկանային նրա խոսքերը, շարժառիթներն ու կենսակերպը, բայց ոչ:

Պողոսը այս «մարմին» տերմինը օգտագործում է մի քանի ձևով: Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 1:26.

1: 13-14 Այս համարները զուգահեռ կառուցվածք ունեն և կարծես վերաբերում են Կորնթոսի ուղղված Պողոսի նախորդ նամակներին (անհասկանալի է որ մեկին): Նա գրել է, որ հասկանալի լինի: Մակայն նրանց վերաբերմունքը և ապրելակերպը ցույց են տալիս, որ դրանք միայն մասամբ են հասկանալի:

Արդյոք *telous* տերմինը այս կոնտեքստում նշանակում է «ամբողջական» (TEV, NJB, NIV) կամ «վերջ» (NASB, NKJV, NRSV): Երկուսն էլ իմաստ ունեն: Եթե «ամբողջական, լրիվ»-ն է (այսինքն, ամբողջությամբ հակառակ մասամբին), այն կկապվի 2 Կոր. 1:14 առաջին մասի հետ: Եթե «վերջն» է՝ զուգահեռ է «մեր Տեր Հիսուսի օրը» 2 Կոր. 1:14-ի վերջին մասին:

▪ **«Ինչպես էլ փոքր ի շատե ճանաչեցիք մեզ. որովհետեւ ձեր պարծանքն ենք. ինչպես դուք էլ»** Կորնթոսի եկեղեցին Պողոսի առաքելական արդյունավետության հաստատումն է: Պողոսը ցանկանում է, որ նրանց խոսքը, դրդապատճառներն ու գործողությունները լինեն հպարտության աղբյուր և համապատասխան պարծանք, երբ Տերը վերադառնա դատելու (այսինքն, «մեր Տեր Հիսուսի օր», տես 1 Կոր. 1:8; 5:5; Փիլ. 1: 6,10; 2:16; 1 Թես. 5: 2; 2 Թես 2: 2):

1:14 «մերը՝ Տեր Յիսուսի օրումը» «Օրումը» արտահայտությունը Հին Կտակարանյան իդիոմա է: Տեսեր Ամովս 2:16-ում իմ մեկնաբանության նշումը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՆ ՕՐԸ
SPECIAL TOPIC: THAT DAY**

Այս արտահայտությունը «այն օրը» կամ «այդ օրը» ութերորդ դարի մարգարեների խոսելաձևն էր՝ Աստծո այցելության (ներկայության) մասին, ինչպես դատաստանի՝ այնպես էլ վերականգնելու համար:

Ովսէէ		Ամովս		Միքիա	
դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
1:11	1:5		1:14(2)		2:4
	2:3		2:16		3:6

2:15		3:14	4:6	
2:16	4:5	5:18 (2)		5:10
2:18	5:9	5:20		7:4
2:21	6:2	6:3	7:11(2)	
	7:5	8:3	7:12	
	9:5	9:11	8:9 (2)	
	10:14	8:10		
		8:13		

Այս օրինակը բնորոշ է մարգարեներին: Աստված ժամանակին մտադիր է հանդես գալ ընդդեմ մեղքի, սակայն Նա նաև առաջարկում է ապաշխարության և ներման օր նրանց, ովքեր փոխում են իրենց սրտերը և գործողությունները (ստանում են նոր սիրտ, նոր միտք և նոր հոգի, տես. Եզ. 36:22-27): Աստծո փրկագնման և վերականգնման նպատակը կավարտվի: Նա կունենա ժողովուրդ, ովքեր կարտացույցն Իր հատկանիշները: Արարչագործության նպատակը (հաղորդակցությունը Աստծո և մարդկության միջև) կիրականանա:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:15-22

¹⁵Եւ այս վստահութիւնովը կամենում էի առաջ ձեզ մօտ գալ, որ դուք երկրորդ շնորհք ընդունիք. ¹⁶Եւ ձեզանից գնալ Մակեդոնիա. Եւ դարձեալ Մակեդոնիայից ձեզ մօտ գալ, եւ ձեզանից ճանապարհ գցուիլ դէպի Հրէաստան: ¹⁷Արդ եթէ այս միտքն արի՛ մի՞ թէ թեթեւամտութիւն գործածեցի. Եւ կամ թէ այն որ խորհում եմ մարմնի՞ կերպով եմ խորհում. Որ իմ կողմանէ այոն այո լինի, եւ ոչը՝ ոչ: ¹⁸Եւ Աստուած հաւատարիմ է, որ մեր խօսքը դէպի ձեզ այո եւ ոչ չ'եղաւ: ¹⁹Որովհետեւ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը, որ մեզանով ձեր մէջ քարոզուեցաւ, ինձանով եւ Միղուանտով եւ Տիմոթէոսով, այո եւ ոչ չ'եղաւ. այլ այո եղաւ նորանում: ²⁰Որովհետեւ որքան Աստուծոյ խոստմունքներ որ կան՝ նորանում է այոն, եւ նորանում է ամենը Աստուծոյ փառքի համար մեզանով: ²¹Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսումը հաստատողը եւ մեզ օծողը Աստուած է. ²²Որ մեզ կնքեց էլ. եւ Հոգու գրաւը մեր սրտերի մէջ տուաւ:

1:15 «այս վստահութիւնովը» Տես ամբողջական նշումը 2 Կոր. 3: 4:

- «կամենում էի առաջ ձեզ մօտ գալ» «Եւ նպատակ ունեի, կամենում էի» ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, որը նշանակում է անցյալում կրկնվող գործողություններ, այստեղ մտքեր: 1 Կոր. 16: 2-8 Պողոսը նրանց պատմեց իր առաջարկած ճանապարհորդական ծրագրերի մասին: Նրանց գործողությունների պատճառով նա հետագայում փոխեց իր միտքը, քանի որ նա չէր ուզում գալ դատաստանով, այլ ուրախությամբ: Տեղի փոքրամասնությունը նրան մեղադրում էր ոչ միայն իր ճանապարհորդության ծրագրերում, այլև իր ավետարանում (տես 2 Կոր. 1: 18-20):

Արևելահայերեն «որ դուք երկրորդ շնորհք ընդունիք»
Արևմտահայերեն «որպէս զի դուք երկրորդ անգամ շնորհք ընդունիք»

- NASB «այնպէս, որ դուք երկու անգամ օրհնություն ստանաք»
- NKJV «որ դուք կարողանաք ունենալ երկրորդ օգուտը»
- NRSV «այնպէս, որ դուք կարողանաք ունենալ կրկնակի օգուտ»
- TEV «որպէսզի երկու անգամ օրհնյալ լինեք»
- NJB «այնպէս, որ դուք օգտվեք կրկնակի»

Այստեղ կա հունարեն ձեռագիր տարբերակ: Որոշ ձեռագրերում կան *charin*, որը առաջացել է *charis*, ինչը նշանակում է օգուտ կամ շնորհ, շահ (այսինքն, α^* , A, C, D, F, G, և սիրիական և հայերեն թարգմանությունները):

Այլ ձեռագրերում կա *charan*, որը առաջացել է *chara*, ինչը նշանակում է ուրախություն, ցնծություն (այսինքն, α^i , B, L, P): UBS⁴ հունարեն տեքստը *charin* տալիս է «Բ» (գրեթե որոշակի) վարկանիշ: Կոնտեքստում (այսինքն, 2 Կոր. 1:16) այն վերաբերում է Պողոսին, ով երկու անգամ եկավ Կորնթոս, նրանց հետ հնարավորություն ընձեռելով իր կարիքները բավարարելու համար (տես Gordon D. Fee, *To What End Exegesis?* էջ 99-104):

1:16 «Եւ ձեզանից ճանապարհ գցուիլ դէպի Հրէաստան» Պողոսը, մինչ նա ծառայում էր նրանց, Կորնթոսի եկեղեցուց որևէ գումար չէր վերցնի: Նա վախենում էր, որ ինքը հարձակման կենթարկվի այդ թեմայի պատճառով: Ինչպես պարզվում է, նա հարձակման է ենթարկվել՝ նրանցից գումար չվերցնելու պատճառով:

Այս արտահայտությունը ենթադրում է, որ նա պատրաստվում է թույլ տալ, որ այս եկեղեցին ապահովի իր միսիոներական ճամփորդության կարիքները (տես 1 Կոր. 16: 6; Հռ. 15:24): Սա կարող էր փորձել նրանց հավատարմությունը իրեն և ավետարանին և լռեցնել իր քննադատներին:

1:17 «Եւ կամ թէ այն որ խորհում եմ մարմնի՞ կերպով եմ խորհում» Այս արտահայտությունը կարող է արտացոլել Պողոսի քննադատներին (տես 2 Կոր. 10: 2-3; 11:18) կամ Պողոսը, ձգտելով Աստծո կամքը կատարել ամեն բանում, ներառյալ ճամփորդելը (տես 1 Կոր. 4:19; 16: 7; Գործք 18:21; Հռ. 1:10; 15:32):

Այն, որ երկրորդ տարբերակը համապատասխանում է այս կոնտեքստին լավագույնը, կարելի է տեսնել 2 Կոր. 1: 18 ա: Աստծո հավատարմությունը հերթական թեման է Պողոսի գրվածքներում (տես 1 Կոր. 1: 9; 10:13; 1 Թեա. 5:24; 2 Թեա. 3: 3):

«Մարմին» տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:26.

1:18 «Աստուած հաւատարիմ է» Հավատարիմ բառը առաջինն է դրված շեշտադրման համար: Պողոսի գրվածքներում սա դառնում է բնութագրող անուն Աստծո համար (տես 1 Կոր. 1: 9; 10:13; 1 Թեա. 5:24; 2 Թեա. 3: 3): Հին Կտակարանում հավատքը սովորաբար ընկալվում է որպես հավատարմություն: Սա Աստծո կարևոր հատկանիշն է (տես 2 Օր.7: 9; Ես. 49: 7): Նրա ողորմած, հավատարիմ բնավորությունն անփոփոխ է (տես Մաղ. 3: 6): Մարդկության հույսը ոչ թե մարդու կատարած գործի կամ նվիրվածության մեջ է, այլ Աստծո բնույթի և խոստումների (տես 2 Կոր. 1: 12,15,20):

1:19 «Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը» Պողոսը հաճախ չի օգտագործում «Աստծո Որդի» արտահայտությունը (տես Հռ. 1: 4; այստեղ և Գաղ. 2: 20): Այնուամենայնիվ, գաղափարը և դրա հետ կապված արտահայտությունը շատ տարածված է: Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 1: 9:

▪ **«Միդուանտով»** Շիդան կամ Սիվղանտը այն մարդն էր, ում Պողոս Առաքյալը ընտրեց իր հետ վերցնել երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ, երբ Բառնաբասը և Հովհաննես Մարկոսը վերադարձան Կիպրոս:

1. Նա առաջին անգամ հիշատակվում է Աստվածաշնչում Գործք 15:22-ում, որտեղ նա կոչվում է Երուսաղեմի Եկեղեցու եղբայրների մեջ գլխավոր մարդ:
2. Նա նաև մարգարե էր (տես Գործք 15: 32):
3. Նա Հռոմի քաղաքացի էր, ինչպես Պողոսը (Գործք 16: 37):
4. Նա և Հուդա Բարսաբան ուղարկվել են Անտիոք Երուսաղեմի Եկեղեցու կողմից՝ ստուգելու իրավիճակը (տես Գործք 15: 22,30-35):
5. Պողոսը նշում է նրան 2 Կոր. 1:19, որպես ավետարանի գործընկեր քարոզիչ:
6. Հետագայում նա նույնանում է Պետրոսի հետ 1 Պետրոս թղթում (տես 1 Պետ. 5:12):

7. Պողոսն ու Պետրոսը նրան կոչում են Միվդանոս, իսկ Ղուկասը նրան կոչում է Շիդա (արամեերեն ձևը՝ Սողոս): Հնարավոր է, որ Շիդան նրա հրեական անունն էր իսկ Միդվանոսը նրա լատինական անունը (տես F. F. Bruce, *Paul: Apostle of the Heart Set Free*, էջ 213):

1: 19-20 «այլ այդ եղաւ նորանում» 19 և 20 համարները աստվածաբանորեն կապակցված են: Պողոսը պնդում է, որ առաքելության թիմը (ինքը, Միվդանոսը և Տիմոթեոսը) քարոզեց Հիսուսին որպես Աստծո խոստումը կատարող, որպես Աստծո Որդի և որպես մարդկության միակ հույսը, որպես Հին Կտակարանի հայտնության գագաթը: Նրանք քարոզչությունը ցանկալի չէր, բայց հստակ էր (տես 2 Կոր. 1:18): Հիսուսը Հոր «այն» է յուրաքանչյուր խոստման, յուրաքանչյուր կարիքի, յուրաքանչյուր հույսի համար (այսինքն *ginomai* ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Հաստատելով Հիսուսին, նրանք փառք են տալիս Հոր դրսևորմանը:

Պողոսի առաքելական թիմի միջոցով է եղել Կորնթոսի ամբողջ եկեղեցու գիտությունը 1) Աստծո, 2) Նրա Որդու, 3) Նրա խոստումներից (տես Հո. 9: 4 և 4) և Նրա շնորհի մասին: Եթե նրանք սկսեն կասկածել Պողոսի շարժառիթները և պատգամը, նրանք կորցնում են ավետարանի վստահությունը:

1:20 «Ամէն/Այո» Տես լրիվ ծանուցումը 1 Կոր. 14: 16

- **«փառքի»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (ՆԿ) 1 Կոր. 2: 7:

1: 21-22 Այս երկու համարներում որոշակի կառուցվածք կա, որը նկարագրում է, թե ինչ է Աստված արել (այսինքն, «Մեկը Ով է»), սպառազինելու և հաստատելու միսիոներական թիմը:

1. Աստված հաստատում է մեզ, 2 Կոր. 1:21 (տես 1 Կոր. 1: 8): Սա ներկա ներգործական դերբայ է, որը ցույց է տալիս շարունակական գործողություն: Սա նշանակում է հաստատել, հիմնել, կայուն և անշարժ անել (տես 2 Կոր. 1: 7; Հո. 4:16): Այս տերմինը օգտագործվում է պապիրուսում, որը նշանակում է իրավական երաշխիք (տես Moulton and Milligan, էջ 107):
2. Աստված մեզ օժեց, 2 Կոր. 1:21 (տես 1 Հովհ.2: 20,27): Սա աօրիստ ներգործական դերբայ է: Ժամանակաձեւը ցույց է տալիս ավարտված, մեկանգամյա գործողություն: Տերմինն ինքնին արտացոլում է Աստծո Իսրայելի որոշ առաջնորդներին ծառայության համար ընտրելու և սպառազինելու Հին Կտակարանյան գաղափարը
 - ա. մարգարեներ, տես 3 Թագ.19:16 և, հավանաբար զուգահեռ է 1 Մնաց. 16:22; Սաղ. 105: 15
 - բ. քահանաներ, տես Ելից 40:15; Ղև. 4: 3; Սաղ. 105: 15
 - գ. թագավորներ, տես 1 Թագ. 9:16; Սաղ. 2: 2; 18:50; 20:6; Ամբ. 3:13
 Սա այն տերմինն է, որը հունարենում թարգմանվում է «Քրիստոս», երբ խոսվում է Մեսիայի մասին (այսինքն, Օծյալը): Հավատացյալները նույնպես ընտրված և սպառազինված են Աստծո կողմից՝ ծառայելու Նրա թագավորության նպատակներին:
3. Աստված կնքեց մեզ, 2 Կոր. 1:22 (տես Հովհ. 3:33; 6:27; Հո. 4:11; 15:28; 1 Կոր. 9:2; Եփ. 1:13; 4:30; 2 Տիմ. 2:19; Հայտ. 7: 3-8): Սա աօրիստ չեզոք դերբայ է, որը նշանակում է, ինչ-որ բան կամ մեկին նշել, որպես սեփականություն, կամ իրական կամ անվտանգ առաքում: Հավատացյալները պատկանում են Աստծուն:
4. Աստված մեզ Հոգին տվեց մեր սրտերում որպես գրավ, 2 Կոր. 1:22 (տես 2 Կոր. 5: 5; Հո. 8: 9-16,23,26-27; Եփ. 1: 13-14):

«Տրված» տերմինը ևս մեկ աօրիստ ներգործական դերբայ է, որը ենթադրում է ավարտված գործողություն: Աստված Իր զավակների համար լիովին հոգացել է:

1. սահմանում է (ներկա ժամանակ)
2. օձեց (աօրիստ ժամանակ)
3. կնքեց (աօրիստ ժամանակ)
4. Հոգին տվեց (աօրիստ ժամանակ)

Այս բոլոր դրույթները վերաբերում են Պողոսի վստահությանը 2 Կոր. 1: 15,19-20: Պողոսի վստահությունը Հոր և Որդու և Հոգու գործողություններն ու դրույթներն էին:

▪ **«Քրիստոսումը...Աստուած ... Հոգու»** Ուշադրություն դարձրեք, որ Սուրբ Երրորդությունը ակտիվ է մեր փրկության վստահության մեջ (տես Հատուկ թեմա): Չնայած «Երրորդություն» տերմինը չի հանդիպում Աստվածաշնչում, սակայն գաղափարը կրկնվում է (տես 1 Կոր. 12:4-6; 2 Կոր. 13:14): Քրիստոնեությունը մոնոթեիստական/մեկ Աստված հավատք է (տես 2 Օր. 6: 4): Սակայն, եթե Հիսուսն Աստված է իսկ Սուրբ Հոգին անձ, մենք ունենք երեք անձեր մեկ աստվածային էությամբ: Սուրբ Երրորդության միասնությունը: Տես Հատուկ թեմա 1 Կոր. 2:10:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: ASSURANCE

- Ա. Կարո՞ղ են քրիստոնյաներն իմանալ, որ իրենք փրկված են (տես 1 Հովհ. 5:13): 1 Հովհ. ունի երեք ստուգարք կամ փաստեր:
1. Վարդապետական (հավատք) (1 Հովհ. 1,5,10; 2: 18-25; 4: 1-6,14-16; 5: 11-12)
 2. Կենսակերպ (հնազանդություն) (1 Հովհ. 2: 2-3; 2: 3-6; 3: 1-10; 5:18)
 3. Սոցիալական (սեր) (1 Հովհ. 1: 2-3; 2: 7-11; 3: 11-18; 4: 7-12, 16-21)
- Բ. Փրկության վստահությունը դարձել է հարանվանական խնդիր
1. Ջոն Կալվինը վստահությունը հիմնավորում է Աստծո ընտրության վրա: Նա ասաց, որ այս կյանքում մենք երբեք չենք կարող վստահ լինել:
 2. Ջոն Ուեալին վստահությունը հիմնավորում է կրոնական փորձառության վրա: Նա հավատում էր, որ մենք ունակ ենք ապրելու վերը նշված մեղքից:
 3. Հռոմեական կաթոլիկները և Քրիստոսի Եկեղեցին վստահությունը հիմնավորում է հեղինակավոր Եկեղեցու վրա: Խումբը, որին պատկանում է, վստահության բանալին է:
 4. Ավետարանչականների մեծամասնությունը վստահությունը հիմնավորում է Աստվածաշնչի խոստումների վրա, կապված հավատացյալների կյանքում Հոգու պտուղի հետ (Քրիստոսանմանություն, տես Գաղ. 5: 22-23):
- Գ. Հավատացյալների հիմնական վստահությունը կապված է Երրորդության կերպարի հետ
1. Հոր Աստծո սերը
 - ա. Հովհ. 3:16; 10: 28-29
 - բ. Հռ. 8: 31-39
 - գ. Եփ. 2: 5, 8-9
 - դ. Փիլ.1:6
 - ե. 1 Պետ.1: 3-5
 - զ. 1 Հովհ. 4: 7-21
 2. Որդի Աստծո գործերը
 - ա. մահ մեր փոխարեն
 - 1) Գործք 2:23
 - 2) Հռ. 5: 6-11
 - 3) 2 Կոր. 5:21
 - 4) 1 Հովհ. 2: 2; 4: 9-10
 - բ. քահանայապետական աղոթք (Հովհ.17:12)
 - գ. շարունակելով բարեխոսությունը

- 1) Հո. 8:34
- 2) Եբր. 7:25
- 3) 1 Հովհ. 2: 1

- 3. Հոգի Աստծո ծառայությունը
 - ա. կանչել (Հովհ. 6:44,65)
 - բ. կնքել
 - 1) 2 Կոր. 1:22; 5: 5
 - 2) Եփ. 1:13-14; 4: 3
 - գ. վստահեցնել
 - 1) Հո.8: 16-17
 - 2) 1 Հովհ. 5: 7-13

Դ. Բայց մարդիկ պետք է արձագանքեն Աստծո ուխտի առաջարկին (սկզբում և շարունակաբար)

- 1. Հավատացյալները պետք է ետ դառնան մեղքից (ապաշխարություն) դեպի Աստծուն Հիսուսի միջոցով (հավատք)
 - ա. Մարկ.1:15
 - բ. Գործք 3:16, 19; 20:21
- 2. հավատացյալները պետք է ընդունեն Աստծո առաջարկը Քրիստոսում(տես Հատուկ Թեմա: Ի՞նչ է նշանակում ընդունել, հավատալ, խոստովանել/դավանել, կանչել)
 - ա. Հովհ. 1:12; 3:16
 - բ. Հո. 5: 1 (և նմանաբանություն 10: 9-13)
 - գ. Եփ. 2: 5, 8-9
- 3. հավատացյալները պետք է շարունակեն հավատքով(տես Հատուկ Թեմա: Համբերություն, երկայնատևություն)
 - ա. Մարկ. 13:13
 - բ. 1 Կոր. 15:2
 - գ. Գաղ.6:9
 - դ. Եբր. 3:14
 - ե. 2 Պետ.1:10
 - զ. Հուդա 20-21
 - է. Հայտ. 2: 2-3,7,10,17,19,25-26; 3: 5,10,11,21

Ե. Փրկության վստահությունը դժվար է քանի որ

- 1. հաճախ հավատացյալները փնտրում են որոշակի փորձառություններ, որոնք խոստացված չեն Աստվածաշնչում
- 2. հաճախ հավատացյալները լիովին չեն հասկանում ավետարանը
- 3. հաճախ հավատացյալները շարունակում են կամայականորեն մեղանչել (տես 1 Կոր. 3: 10-15; 9:27; 1 Տիմ. 1:19-20; 2 Տիմ. 4:10; 2 Պետ.1:8-11)
- 4. որոշակի անհատականության տեսակներ (այսինքն, պերՖեկցիոնիստները/կատարելության հավատացողները) երբեք չեն կարող ընդունել Աստծո անպայմանական ընդունումը և սերը
- 5. Աստվածաշնչում կան կեղծ խոստովանությունների օրինակներ (տես Մատթ. 13:3-23; 7:21-23; Մարկ. 4:14-20; 2 Պետ. 2:19-20; 1 Հովհ. 2:18- 19, տես Հատուկ Թեմա: Ուխտադրություն)

Տես Հատուկ Թեմա: Քրիստոնեական վստահություն այս վարդապետության այլ ուրվագծի համար:

1:22 «մեզ կնքեց էլ» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՆԻՔ, 1 Կոր. 9: 2:

- **«սրտերի»** տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 14:25:
- **«գրաւը»** Սա խոսում է ապագայում լիակատար վճարում կատարելու և ներկայում մասնակի վճարման խոստման մասին: Աստծո կանխավճարը Իր Որդու կյանքն էր և Իր Հոգու լիակատար ներկայությունը (տես Եփ. 1: 3-14): Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 5: 5:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 1:23-24
²³Բայց ես Աստուծուն վկայ եմ կանչում իմ անձի վերայ. որ ձեզ խնայելու համար միւսանգամ չ'եկայ Կորնթոս. ²⁴Ոչ թէ ձեր հաւատքի վերայ տիրապետում ենք՝ այլ ձեր ուրախութեանը գործընկեր ենք, որովհետեւ դուք հաւատքով հաստատ կանգնած էք:

1:23

Արևելահայերեն **«Բայց ես Աստուծուն վկայ եմ կանչում իմ անձի վերայ»**

Արևմտահայերեն **«Բայց ես Աստուած վկայ կը կանչեմ իմ անձիս»**

NASB **«Բայց ես Աստծուն եմ կանչում որպէս իմ հոգու վկա»**

NKJV **«Դեռ ավելին, ես Աստծուն կանչում եմ իմ անձի դեմ վկա»**

NRSV **«Բայց ես կանչում եմ Աստծուն, որպէս վկա իմ դեմ»**

TEV **«Ես Աստծուն եմ կանչում իմ վկա, նա գիտի իմ սիրտը»**

NJB **«Իմ կյանքի միջոցով ես կանչում եմ Աստծուն իմ վկան լինելու»**

Սա ճշմարտության երդում է: Պողոսը հաճախ օգտագործում է երդումներ՝ հաստատելու համար իր խոսքը (տես 2 Կոր. 11:11, 31; Հռ. 1:9; Գաղ. 1:20; Փիլ. 1: 8; 1 Թես.2:5):

- **«ձեզ խնայելու համար»** Պողոսի ճանապարհորդության ծրագրերի փոփոխությունը ոչ թե իր թուլության օրինակ էր, այլ նրա սիրո: Նա ընտրեց չվերադառնալ այնպիսի մթնոլորտի, որտեղ նրա միակ տարբերակը դատաստանն էր և հակասությունը: Կեղծ ուսուցիչները խոչընդոտեցին նրա շարժառիթներին ու գործողություններին: Պողոսը ուղիղ սահմանեց:

- **«միւսանգամ չ'եկայ Կորնթոս»** Շատ քննարկում կա, թե քանի անգամ է Պողոսը Եփեսոսից այցելել Կորնթոս, և թե քանի նամակ է գրել Կորնթոսի եկեղեցուն: Լրացուցիչ տեղեկությունների համար նայեք 2 Կորնթացիսի ներածությունը, Դ. կետը:

1:24 «Ոչ թէ ձեր հաւատքի վերայ տիրապետում ենք» Այստեղ մենք տեսնում ենք Պողոսը որպէս հեղինակավոր Առաքյալ 1: 1 և այս տեղական համայնքի ազատության հավասարակշռության միջև: Աստվածաշնչյան հավատքը, ուխտի հավատքը սկսվում և զարգանում է կամավոր ընտրությունների միջոցով, որոնք նախատեսված են ուրախություն, կայունություն և հասունություն բերելու համար:

- **«որովհետեւ դուք հաւատքով հաստատ կանգնած էք»** Պողոսը նշում է այս գաղափարը 1 Կոր. 15: 1 (տես Հռ. 5:2; 11:20): Սա կարող է ունենալ Հին Կտակարանյան ֆոն (տես Սաղ. 76: 7; 130: 3; Նաում 1: 6; Սաղ. 3: 2; տես Հատուկ Թեմա 1 Կոր.1: 9): Այն խոսում է Աստծո ներկայության մեջ վստահ հավատքի մասին: Կորնթոսի խնդիրների լույսի ներքո սա ցնցող դրույթ է: Կորնթոսի եկեղեցին այնքան չի տուժել էր կեղծ ուսուցիչների գալուց, որքան Գաղատիայի եկեղեցիներն են ունեցել: Տնային եկեղեցիներից մի քանիսը ուժեղ էին և մաքուր, զուլալ (այսինքն վաղակատար ժամանակ, «դուք եղել էք և շարունակում էք հաստատուն մնալ»): Տես Հատուկ Թեմա: Կանգնել (*Histēmi*) 1 Կոր. 15: 1.

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Եթե Պողոսը գրում է Կորնթոսի եկեղեցում առկա խնդրի մասին, ապա ինչու՞ պետք է նամակն ընթերցվեր Աքայիայում: (2 Կոր. 1: 1)
2. Որոնք են 2 Կոր. 1: 4 և 9-ում նշված տառապանքի երկու օգուտները:
3. Ի՞նչ էր պատահել Պողոսին Ասիայում, որը գրեթե սպանեց նրան: (հհ.8-10)
4. Ինչու՞ էր Պողոսը մեղադրվում իր զբոսաշրջային ծրագրերի փոփոխության համար: (1 Կոր. 16:1-8 և 2 Կոր. 1: 12-20)
5. Ինչու՞ ենք մենք հավատում Սուրբ Երրորդությանը:

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի այցի հետաձգումը	Փրկել եկեղեցին	Եկեղեցու հետ վերջին հարաբերությունները	Պողոսի ծրագրերի փոփոխությունը	Ինչու Պողոսը փոխեց իր պլանները
(1:12-2:4)	1:15-2:2	(1:12-2:13)	(1:12-2:4)	(1:12-2:11)
1:23-2:4	Ներել վիրավորողին	1:23-2:4	1:23-2:4	
Ներում անարգողի համար	2:3-11		Ներում անարգողի համար	
2:5-11		2:5-11	2:5-11	2:5-11
Պողոսի անհանգստությունը և օգնությունը	Հաղթանակ Քրիստոսում		Պողոսի անհանգստությունը Տրովադայում	Տրովադայից մինչև Մակեդոնիա, Առաքյալը. Դրա կարևորությունը
2:12-13	2:12-13	2:12-13	2:12-13	(2:12-4:6)
		Մեր ծառայությունը		
		(2:14-3:6)	Հաղթանակ Քրիստոսի միջոցով	
2:14-17	2:14-17	2:14-17	2:14-17	2:12-3:3

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

- Ա. Մեկնաբանների մեջ շատ քննարկում կա, թե քանի այցելություն և նամակներ է գրել Պողոսը այս եկեղեցուն: Այս գլուխն այս քննարկման էությունն է, քանի որ կարծես դա վերաբերում է նախորդ նամակին և ցավալի այցելությանը: Շատ անհասկանալի և երկիմաստ բաներ կան թե տեքստում և թե Պողոսի կյանքի մասին ունեցած մեր գիտելիքներում: Դոգմատիզմն անպատշաճ է:
- Բ. Այս գլխի մեջ ընդգրկված վիճաբանության մեկ այլ բնագավառ է, թե արդյոք ով է նշված օրինազանց մարդը, 2 Կոր. 2: 5 և 6
1. 1 Կոր. 5 ազգապիղծ, անպիտան մարդու հոմանիշները
 2. 1 Կոր. 1-4-ում խոսվում է երկպառակտություններից կամ տնային եկեղեցիներից մեկի առաջնորդի մասին
 3. Երուսաղեմից եկած կեղծ ուսուցիչների գլխավորը անձամբ Պողոսին մեղադրեց, հանդիմանեց այս ցավալի այցի համար, 2 Կոր. 10-13:
- Գ. Գլխի բաժանումը ակնհայտորեն անտեղի է: Գլուխ 2-ը միանշանակորեն կապված է Պողոսի ճանապարհորդական ծրագրերի քննարկման հետ, 2 Կոր. 1: 15.
- Դ. Կա խոշոր շեղում կամ միջանկյալ բառեր 2 Կոր. 2:14 սկզբում: Պողոսը չի վերադառնում իր քննարկումներին կապված Մակեդոնիայում Տիտոսի հետ հանդիպմանը մինչև 2 Կոր. 7: 5: Ես շնորհակալություն եմ հայտնում Աստծուն, քանի որ այն ցույց է տալիս մեզ Պողոսի սիրտը և նրա սերը Հիսուս Քրիստոսի հանդեպ:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 2:1-4

¹Բայց ես այս որոշեցի ինձանում որ դարձեալ տրտմութիւնով չ'գամ ձեզ մօտ: ² Որովհետեւ եթէ ես ձեզ տրտմեցնեմ, էլ ո՛վ է ինձ ուրախացնողը եթէ ոչ ինձանից տրտմողը: ³ Եւ հէնց այս գրեցի ձեզ, որ մի գուցէ ես եկած ժամանակը տրտմութիւն քաշեմ նորանցից որոնցից պէտք էր ինձ ուրախ լինիլ, վստահ լինելով ձեր ամենի վերայ, որ իմ ուրախութիւնն ձեր ամենինն է: ⁴ Որովհետեւ շատ նեղութիւնից սրտիս տազնապից գրեցի ձեզ շատ արտասուքով. ոչ թէ՛ որ տրտմիք, այլ որ իմ սերը գիտենաք, որն ես առատօրէն ունիմ ձեզ վերայ:

2:1

Արևելահայերեն «Բայց»

Արևմտահայերեն «Սակայն»

NASB, NKJV «Բայց»

NRSV, TEV,

NIV, REB «Այնպես որ»

NJB «ապա»

RSV «Քանի որ»

Կա հունարեն ձեռագիր տարբերակ «քանի որ» (այսինքն *gar*, տես P⁴⁶ և B) և «բայց» (այսինքն *de*, տես Խ, A, C, D, F, G) միջև: UBS⁴ տալիս է «Գ» «վարկանիշ», ինչը նշանակում է, որ նրանք չեն կարող որոշել: Հաճախ կապերը մեկնաբանության մեջ կարևոր են, բայց այս պարագայում նախադասության իմաստը որոշում է խնդիրը:

Արևելահայերեն «ես այս որոշեցի ինձանում»

Արևմտահայերեն «ես ինձմէ որոշեցի»

NASB «Ես որոշեցի դա իմ համար»

NKJV «Ես դա որոշեցի իմ մեջ»

NRSV, TEV,

NJB «Ես մտածում եմ»

Սա, կարծես, ենթադրում է, որ Պողոսը հատուկ առարկություն չունեցավ Հոգուց այս հարցում: Նա մի քանի անգամ նշում է, թե ինչպես է Հոգին առաջնորդել իր ճանապարհորդական ծրագրերը (տես Գործք 16: 9-10; 18:21; Հռ. 1:10; 15:32; 1 Կոր. 4:19) բայց այս անգամ նա կոնկրետ ուղղորդում չունի և որոշում է չգալ:

▪ **«որ դարձեալ տրտմութիւնով չ՛գամ ձեզ մօտ»** Պողոսը նշում է երրորդ անգամ Կորնթոս այցելելու մասին 2 Կոր. 12:14; 13: 1: Գործք Առաքելոց գիրքը չի արձանագրում այս երկրորդ ցավալի այցը: Նրա նախնական կեցությունը Կորնթոսում արձանագրված է Գործք 18:1-11-ում: Տեսեք աղյուսակը Ներածություն, Տարեթիվ, Ե. կես «այցելություն» Գ. Այն հավանաբար տեղի է ունեցել 1 և 2 Կորնթացիները գրելու միջև:

2: 2 «եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պողոսի երկրորդ այցելությունը տխրեցրեց եկեղեցուն: Ես հավանում եմ NJB- ի այս համարի թարգմանությունը, որտեղ ասվում է «քանի որ եթե ես ձեզ հուսահատեցնում եմ, ես վշտացնում եմ իմ միակ ուրախության աղբյուրին»: Պողոսին դուր չի գալիս իր առաքելական պատասխանատվության առճակատման ասպեկտը:

2: 3 «Եւ հէնց այս գրեցի ձեզ» Կան մի քանի տեսություններ, որոնք փորձում են բացատրել այս համարները:

1. ոմանք դա անվանում են նամակագրական աօրիստ, ինչը նշանակում է, որ վերաբերում է 2 Կորնթացիսին (տես NJB)
2. ոմանք կարծում են, որ դա վերաբերում է 1 Կորնթացիսին
3. Ոմանք կարծում են, որ դա վերաբերում է 1 Կոր. 5: 9- ում նշված նախորդ կորած նամակին:
4. Ոմանք կարծում են, որ սա վերաբերում է խիստ, կորած նամակին, որը, թերևս, մասամբ պահպանված է 2 Կոր. 10-13-ում

2: 4 Այս համարն այնքան հստակ է ցույց տալիս Պողոսի սիրտը և զգացմունքային ցավը, որ զգացել էր այն, ինչ կատարվեց իր ցավալի այցի ժամանակ: Այնուամենայնիվ, նա խոսեց ճշմարտությունը, ինչքան էլ ցավոտ լիներ: Ինչպես լավ բժիշկը, Պողոսը նույնպես գիտեր, որ երբեմն ցավը անհրաժեշտ է երկարատև բուժման համար:

Այս նախադասության մեջ Պողոսն օգտագործում է երկու ստորադասական բայեր, քանի որ երբեմն մարդիկ լավ չեն արձագանքում խրատին: Աստված ստեղծեց բոլոր մարդկանց ազատ կամքով, ինչը թանկ և վտանգավոր բան է: Այն պահպանում է ուրախության և վերականգնման կամ գայրույթի պոտենցիալը և շարունակական ապստամբությունը:

Արևելահայերեն «առատորեն»
Արևմտահայերեն չկա

NASB «հատկապես»
NKJV, NRSV «առատորեն»
NJB «որքան շատ»

Այս համարը ներառում է նաև Պողոսի բնորոշ տերմիններից մեկը, որը նա հաճախ օգտագործում է իր կորնթոսյան նամակներում (այսինքն, *perissoteros*): Տեսեք ամբողջական գրառումը 2 Կոր. 1: 5:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացի 2:5-11
⁵Ապա եթե մեկը տրտմեցրել է, ոչ թե ինձ է տրտմեցրել, այլ փոքր ՚ի շատե, որ չ՝ծանրացնեմ՝ ձեզ ամենիդ: ⁶Բաւական է այնպիսի մարդին համար այն խրատը, որ շատերիցը եղաւ: ⁷Այսուհետեւ ընդհակառակը՝ աւելի ներեցէք, եւ մխիթարեցէք: Մի գուցէ շատ սաստիկ տրտմութիւնից այնպիսին խեղդուի: ⁸Սորա համար աղաչում եմ ձեզ, որ սէրը հաստատէք նորա վերայ: ⁹Որովհետեւ նորա համար գրեցի էլ ձեզ, որ ձեզ փորձով գիտենամ, թէ արդեօք ամեն բանի մէջ հնազա՞նդ էք: ¹⁰Բայց եթէ դուք մէկին մի բան ներէք, ես էլ. Որովհետեւ ես էլ եթէ մի բան ներեմ, որին որ ներում եմ՝ ձեզ համար է Քրիստոսի առաջին: ¹¹Որ սատանան մեզ զրկանք չ՛անէ. Որ նորա խորհուրդներին անտեղեակ չենք:

2: 5 Այս համարը շատ դժվար է թարգմանել: Կարծում եմ, RSV և Phillips թարգմանության իմաստն ամենայն հավանականությամբ լավագույնն է. «Բայց եթե որևէ մեկը ցավ է պատճառել, ոչ թե միայն ինձ է արել, այլ ինչ-որ չափով (շատ խիստ չլինելու համար) բոլորիդ»: Սույն նախադասության մեջ նշված օբյեկտ չկա, հետևաբար, ոմանք դա համարում են (1) ամբողջ եկեղեցին (տես NKJV, NJB, RSV, Phillips, NIV, NEB) կամ (2) վիրավորող, մեղադրող անձը (տես KNOX թարգմանությունը):

Ով է այդ «նա»-ն, որ խնդիրներ էր առաջացրել: Մի քանի առաջարկներ են եղել,

1. այն վերաբերում է 1 Կոր. 5: 9 և այն մարդուն, ով իր հոր կնոջ հետ էր ամուսնացել
2. այն վերաբերում է երկպառակտություններից կամ տնային եկեղեցիներից մեկի առաջնորդին
3. այն վերաբերում է Պաղեստինցի ենթադրյալ «առաջնորդների» խմբի խոսնակին, որը մեղադրեց Պողոսին Կորնթոս վերադառնալու համար և, ըստ երևույթին, եկեղեցին չի պաշտպանել Պողոսին, ինչպես որ հարկն էր:

▪ **«եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Ինչ-որ մեկը տխրեցրել էր, ինչպես Պողոսին, այնպես էլ ամբողջ եկեղեցուն (վաղակատար ներգործական սահմանական) իսկ հետևանքները մնացին:

2: 6 «այն խրատը, որ շատերիցը եղաւ» Որոշումը միաձայն չէր: Երբ Պողոսը մեղադրվում էր և ենթարկվում հարձակման, նույնիսկ այդ ժամանակ հոգ էր տանում հարձակվողի համար (տես 2

Կոր. 2:7) և հոգևոր հետևանքների, որոնք հակասություն և հակադրություն կարող են առաջացնել (տես 2 Կոր. 2:11):

«Շատերի» մասին հիշատակումը ցույց է տալիս, թե ինչպես է Պողոսը եկեղեցական քաղաքականությունը դիտարկել: Նա իրեն համարում էր հեթանոսների Առաքյալ, բայց դա չի հեռացնում առաջնորդելու պատասխանատվության համայնքային ասպեկտը: Պողոսը մեծ հավասարակշռություն ունի իր նամակներում՝ հեղինակային հրամանների (այսինքն, Գաղատացիս և 1 Կորնթացիս 5) և տեղական առաջնորդության կարիքի միջև: Նոր Կտակարանն ունի քաղաքական բոլոր երեք ձևերը՝ առաքելական (այսինքն, եպիսկոպոսական); տեղական առաջնորդներ (այսինքն երիցական); և համայնքային (այսինքն, յուրաքանչյուր հավատացյալ): Գործք 15-ը ունի բոլոր երեք մակարդակները, որոնք ներգրավված են եկեղեցական գործընթացում: Հարց այն չէ, թե դրանցից որն է աստվածաշնչյան, նրանք բոլորն էլ: Այս հարցը աստվածահաճո հավատացյալների մասին է, որոնք առաջնորդվում են աստվածաշնչյան ուղեցույցներով, ոչ թե անձնական օրակարգով:

2: 7 «աւելի ներեցէք, եւ մխիթարեցէք» Սրանք երկուսն էլ աօրիստ ինֆինիտիվներ են: Եկեղեցու կարգապահությունը երբեք վրեժխնդրության համար չէ, այլ միշտ փրկող (տես Գաղ. 6: 1): Մեղքը պետք է բացահայտվի, նաև պետք է լուսաբանվի (այսինքն, ներված է Աստծո կողմից, ներված է եկեղեցու կողմից), դրան ենթարկվելուց հետո:

«Մխիթարություն» տես ամբողջական ծանուցումը 2 Կոր. 1: 4-11:

Արևելահայերեն «Մի գուցէ շատ սաստիկ տրտմութիւնից այնպիսին խեղդուի»
Արևմտահայերեն «որ չըլլայ թէ այնպիսին չափազանց տրտմութենէն ընկղմի»

NASB «կարող է ծանրաբեռնված լինել մեծ վիշտով»

NKJV «կույ կզնա շատ վշտի պատճառով»

NRSV «չի կարող ծանրաբեռնված լինել վշտի պատճառով»

TEV «այնքան տխուր է, որ ամբողջովին կթուլանա»

NJB «կարող է ծանրաբեռնված լինել իր դժբախտության աստիճանից»

Առաջին արտահայտությունը բառացիորեն նշանակում է « որ ավելի շատ վշտի պատճառով մարդը կույ կզնա»: Ստորև տես Հատուկ Թեմա:

Երկրորդ տերմինը, *katapino*, նույնպես ինտենսիվ փոխաբերություն է: Դա բառացիորեն նշանակում է «կույ տալ»: Այն օգտագործվում է դրական իմաստով 2 Կոր. 5: 4 (այսինքն, կույ տված կյանք): Բացասականորեն դա կարող է նշանակել ոչնչացնել, կործանել (տես 1 Կոր. 15:54; 2 Կոր. 2: 7; Եբր. 11:29; 1Պետ. 5: 8):

Պողոսի անձնական փորձառությունը և աստուածաբանական կրթությունը նրան խիստ տեղեկաված է դարձրել՝ մեղքի խորության, Աստծո շնորհքի և ողորմության բարձրության մասին: Նրա խոսքերի ընտրությունը ցույց է տալիս իր զգացմունքների խորությունը:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՌՍ (PERISEUŌ)

SPECIAL TOPIC: ABOUND (PERISEUŌ)

Այս տերմինը հիմնականում օգտագործվում է Պողոսի կողմից: Դա նշանակում է, որ գերազանցել ավելիով (այսինքն, դրական իմաստ):

1. Աստծո ճշմարտությունն ավելացավ Նրա փառքի համար, Հռ. 3: 7
2. Էլ ո՞րքան ավելի Աստծո շնորհքն ու պարգևը մեկ մարդի՝ Հիսուս Քրիստոսի շնորհքովն ավելացավ, Հռ. 5:15
3. Հավատացյալներն ավելանում են հույս, Հռ. 15:13

4. Աստված հավատացյալներին չի հրամայել ուտել կամ չուտել որոշ կերակուրներ, 1 Կոր. 8: 8 (տես Մարկ 7: 15,17-23)
5. Հավատացյալները առատորեն ավելանում են եկեղեցու շինության մեջ, 1 Կոր. 14:12
6. Հավատացյալները լի են Տիրոջ գործի մեջ, 1 Կոր. 15:58
7. Հավատացյալները առատորեն կիսում են Քրիստոսի տառապանքները և առատորեն Քրիստոսի մխիթարությունը, 2 Կոր. 1: 5
8. Արդարության ծառայությունը մեծանում է փառքով, 2 Կոր. 3: 9
9. Հավատացյալների շնորհակալությունը պետք է մեծանա Աստծո փառքի համար, 2 Կոր. 4:15
10. Հավատացյալների ուրախության առատությունը, 2 Կոր. 8: 2
11. Հավատացյալները ամեն ինչում ավելանում են (հավատք, խոսք, գիտություն, ջերմություն և սեր), ինչպես նաև Երուսաղեմի եկեղեցու պարզի մեջ, 2 Կոր. 8: 7
12. Բոլոր շնորհքները ավելանում են հավատացյալների մեջ, 2 Կոր. 9: 8
13. Հավատացյալների առատ գոհությունը Աստծուն, 2 Կոր. 9:12
14. Աստծո շնորհքի հարստությունը շատանում է հավատացյալների մեջ, Եփ. 1: 8
15. Հավատացյալների սերը կարող է ավելի ու ավելի շատանալ, Փիլ. 1: 9
16. Հավատացյալների վստահությունը Պողոսի հանդեպ ավելանում է Քրիստոսում, Փիլ. 1:26
17. Ունենալով առատություն, Փիլ. 4: 12,18
18. Հավատացյալների երախտագիտությունը հորդում է, Կոր. 2: 7
19. Հավատացյալների սերն իրար հանդեպ մեծանում և ավելանում է, 1 Թես. 3:12
20. Առատ լինել աստվածահաճո ապրելակերպի մեջ, 1 Թես. 4: 1
21. Ավելանալ սիրո մեջ հավատարիմ հավատակիցների համար, 1 Թես. 4:10

Պողոսի հասկացողությունը Քրիստոսի հանդեպ Աստծո շնորհքի մասին «ավելին և բարձր» էր, այնպես էլ հավատացյալների կարիքն է «ավելին և բարձր» շնորհքով և սիրով իրենց ամենօրյա կյանքում:

2: 8 «Սորա համար աղաչում եմ ձեզ, որ սերը հաստատեք նորա վերայ» Սա վերաբերում է վերականգնողական կամ իրավական գործողությանը եկեղեցու պաշտոնական քվեարկության միջոցով (տես տերմինի օգտագործումը Գաղ. 3: 15), որի շարժառիթը պետք է սերը լինի: Հնարավոր է, որ դա մի բանի իրականության փոխաբերությունն է (տես Louw and Nida, էջ 668):

2: 9 «գրեցի էլ» Տես նշում 2 Կոր. 2: 3:

- **«փորձով գիտենամ»** Սա վերաբերում է մետաղադրամները փորձելուն՝ համոզվելու համար դրանց իսկական լինելը: Թվում է, թե սա ունի լրացուցիչ իմաստ՝ Նոր Կտակարանում «փորձել հավանություն ստանալու համար»: Տես «Փորձել» Հատուկ Թեմա 1 Կոր. 3:13.

- **«արդեօք ամեն բանի մեջ հնազանդ էք»** Սա Պողոսի իշխանության հավատարմության փորձ էր նրանց կողմից: Սա էր խնդիրը (տես 2 Կոր. 7:15; 10: 6):

Կա հին ձեռագիր տարբերակ, որը վերաբերում է «արդյոք» բառին: Որոշ MSS ունեն

1. *ei* - Ռ, C, D, F, G
2. *η* - A, B
3. բաց թողնել, անտեսել - P⁴⁶

Թվում է, թե P⁴⁶-ը, չնայած շատ հին, շտապ կատարվեց և հաճախ խոսքեր կամ արտահայտություններ արեց: Ինչ վերաբերում է մյուս տարբերակներին, ապա դրանք նույնն էին: Հին հունարեն ձեռագրերի մեծ մասը կրկնօրինակվել է մեկ մարդու կողմից տեքստը կարդացվելով, իսկ

մի քանի ուրիշներ գրել են այն: Այսպիսով, նման տարբերակները, որոնք կապված են ձայնի հետ, ընդհանուր են: UBS⁴- ը # 1 տարբերակին տալիս է «Ա» վարկանիշ (որոշակի):

2:10 «ներեք» Այս տերմինը, *charizomai* (տես 2 Կոր. 2: 7,10; 12:13) առաջացել է *chairō* արմատից, որը նշանակում է ուրախանալ, ցնծալ: Այս կոնտեքստում դա նշանակում է բարեխղճորեն ներել կամ հանձնել (տես 2 Կոր. 2: 7,10 (երեք անգամ)):

Պողոսը խնդրում է, որ շատերը ներեն 2 Կոր. 2: 7 (աօրիստ չեզոք ինֆինիտիվ); 2 Կոր. 2:10 նա կրկնեց ընթացիկ խնդրանքը (ներկա չեզոք սահմանական); 2 Կոր. 2:10 նա հավաստիացնում է նրանց (այսինքն, անձնական դերանուն, *egō*) գթասիրտ և շարունակական ներում վիրավորողին (երկու վաղակատար չեզոք սահմանականներ):

▪ **«երթ»** Սա առաջին կարգի պայմանական նախադասությունն է: Պողոսը կրկնում է իր անձնական ներողամտությունը հանցագործի հանդեպ:

▪ **« ձեզ համար է Քրիստոսի առաջին»** Սա Պողոսի պնդումն է, որ մեղավորի վերականգնումը կգորացնի եկեղեցուն: Նա ինքը կարողանում է դա անել Քրիստոսի հանդեպ իր սիրո պատճառով:

2:11

Արևելահայերեն **«Որ սատանան մեզ գրկանք չ'անե»**

Արևմտահայերեն **«Որ չըլլայ թե գրկանք մը կրենք Սատանայէն»**

NASB **«Սատանայի կողմից որևէ առավելություն չվերցվեր»**

NKJV **«որ Սատանան չպետք է օգտվի մեզանից»**

NRSV **«որ մենք չենք կարող համապատասխանել Սատանայի կողմից»**

TEV **«որպեսզի Սատանան չկարողանա ձեռքը վեր բարձրացնել»**

NJB **«խուսափելու Սատանայի կողմից»**

Այս համարը հաստատում է մեր աշխարհում չարի անձնական ուժը, որը փորձում է խափանել Աստծո ծրագիրը: 2 Կորնթացիս թղթում Պողոսը նրան կոչում է մի քանի անուններով:

1. Սատանա 2 Կոր. 2:11; 11:14; 12: 7

2. «այս ժամանակի (աշխարհի) աստվածը» 2 Կոր. 4: 4

3. «Բելիար» 2 Կոր. 6:15

4. «օձը» 2 Կոր. 11: 3

«Մեզ» կարող է վերաբերել Պողոսին, կամ Պողոսին և Կորնթոսի եկեղեցուն: Հետաքրքիր է իմանալ, որ սատանան փորձում է թե չարության մեջ գցել և թե բարին խեղաթյուրել: Եկեղեցու կողմից անպատշաճ, անպատասխանատու, զայրացած կամ հպարտ վերաբերմունքը կարող էր դուռ բացել սատանայի համար՝ հաղորդակցությանը խանգարելու համար: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐԸ, 1 Կոր. 7: 5:

▪ **«Որ նորա խորհուրդներին անտեղեակ չենք»** Չարը է փորձում ազդել մեր կյանքի վրա (տես Եփ. 4:14; 6: 10-18): Հաճախ հավատացյալներն անտեղյակ են իր խորհուրդներից (այսինքն, *agnoeō*):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ, ՄՏՔԵՐ (Պողոսի գրվ.)

SPECIAL TOPIC: SCHEMES

Սա հունարեն *noēma* բառն է: Այն օգտագործվում է Պողոսի կողմից հինգ անգամ 2 Կորնթացիսում և միայն մեկ անգամ Փիլ. 4: 7: Դա գալիս է *nous* արմատից, որը նշանակում է «միտք» կամ «մտքեր»: Պողոսը սա զարգացնում է երկու ձևով:

- Ա. չար կամ կործանարար մտածելակերպ
1. սատանայի խորհուրդները, 2 Կոր. 2:11
 2. մտքերը կարծրացած և ծածկված են անհավատությամբ, 2 Կոր. 3:14
 3. մտքերը կուրացած են սատանայի կողմից (այս աշխարհի աստվածը), 2 Կոր. 4: 4
 4. սատանայի կողմից խաբված մտքերը (Եվայի նման) և մոլորեցնել, 2 Կոր. 11: 3
- Բ. աստվածահաճո մտածելակերպ
1. գերի ենք բռնում ամեն միտք Քրիստոսին հնազանդեցնելու համար, 2 Կոր. 10: 5
 2. Աստծո խաղաղությունը, որը վեր է ամեն մտքից (այսինքն, *nous*) կպահպանի ձեր սրտերը և ձեր մտքերը (այսինքն *noemata*)

Մարդկային մտածողությունը և լեզվի հմտությունները Աստծո պատկերի մասն են կազմում (տես Հատուկ Թեմա: Մարդկային խոսք): Այս հրաշալի պարզվածքները կարող են օգտագործվել բարու կամ չարի համար: Հավատացյալները պետք է հսկեն իրենց մտքերը և խոսքերը: Մեր միտքը կարող է խաբվել, կուրանալ և շահարկվել սատանայի կողմից (տես Հատուկ Թեմա: Սատանա և Հատուկ Թեմա: Հոգևոր պատերազմ): Նրանք կարող են նաև հրաշալիորեն զորանալ Աստծո կողմից Նրա փառքի և Նրա Թագավորության համար: Մենք մեր մտքերի, ծրագրերի և դրդապատճառների տնտեսներն ենք:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 2:12-13

¹²Բայց երբոր ես հասայ Տրովադա Քրիստոսի անետարանի համար, եւ դուռն ինձ համար բաց էր Տէրով, ¹³Իմ հոգու մէջ հանգստութիւն չ'ունէի. Որ իմ Տիտոս եղբօրն այնտեղ չ'գտայ. Այլ նորանցից հրաժարելով գնացի Մակեդոնիա:

2:12 «երբոր ես հասայ Տրովադա» Սա հետևում է 1 Կոր. 16: 5 ուղեցույցին (տես Գործք 16: 8-11): Պողոսը, թերևս, հարձակման է ենթարկվել որոշ մարդկանց կողմից Կորնթոսում, քանի որ նրա ճանապարհորդական ծրագրերը չեն իրականացվել: Պողոսը փորձում է բացատրել, թե ինչու:

▪ **«եւ դուռն ինձ համար բաց էր Տէրով»** Սա վաղակատար կրավորական դերբայ է, և ցույց է տալիս, որ Աստված բացեց այս հնարավորությունը ավետարանի համար և այն բաց է մնում: «Բաց դուռ» Պողոսի շատ սիրելի փոխաբերությունը (տես 1 Կոր. 16: 9; Կող. 4: 3, և նաև Գործք 14: 27 և Հայտ. 3: 8): Այս արտահայտությունն ընդգծում է Աստծո արդյունավետ ուժը, Մեսիայի փրկագնման կատարած ծառայության և Նրա Հոգու զորացման միջոցով, ավետարանչության և քրիստոնեական աշակերտության համար (տես Մատթ. 28: 19-20 և Գործք 15: 3-4,12; 21:19): Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 16: 9:

2:13 «Իմ հոգու մէջ հանգստութիւն չ'ունէի» Սա «հոգի» բառի օգտագործումն է որպէս հոմանիշ՝ անհատի կամ մարդկային ինքնության համար (տես 2 Կոր. 7: 13; 1 Կոր. 16:18): Պողոսը միշտ մտահոգված էր (վաղակատար ներգործական սահմանական) Կորնթոսի մասին (տես 2 Կոր. 7:5): Պողոսի երևակայությունը վայրի կերպով վազում էր; զգուշացեք ձեր համար: Նա Տրովադայում բաց դռներ թողեց՝ Կորնթոսի եկեղեցու մասին իր անհանգստության և վախի պատճառով: Պողոսը սիրում էր այս տարածայնող, հպարտ եկեղեցուն:

▪ **«Տիտոս չ'գտայ»** Պողոսը սկզբում Տիմոթեոսին ուղարկեց Կորնթոս, սակայն նա, ըստ երևութին, լավ չընդունվեց եկեղեցու կողմից, դրա համար էլ Պողոսը Տիտոսին ուղարկեց՝ մի ծանր, խիստ նամակով (տես 2 Կոր. 2: 3-4): Պողոսը նրանից տեղեկություն չունեի իր ակնկալած ժամանակին և շատ մտահոգվեց:

Տիտոսի մասին մի քանի անգամ հիշատակվում է 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 2:13; 7: 6,13,14; 8: 6,16,23; 12:18):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՏՈՍ
SPECIAL TOPIC: TITUS**

- Ա. Տիտոսը Պողոսի ամենավստահելի գործընկերներից էր: Սա վկայում է նրանով, որ Պողոսը նրան ուղարկեց Կորնթոսի և Կրետեի անհանգիստ վայրերը:
- Բ. Նա լիովին հեթանոս էր (Տիմոթեոսը կիսով չափ հույն էր), դարձի եկավ Պողոսի քարոզչության ժամանակ: Պողոսը հրաժարվեց թլփատել նրան (տես Գաղ. 2):
- Գ. Նա հաճախ հիշատակվում է Պողոսի նամակներում (տես 2 Կոր. 2:13; 7: 6-15; 8: 6-24; 12:18; Գաղ. 2: 1-3; 2 Տիմ. 4: 10) և շատ զարմանալի է, որ Ղուկասը չի նշում նրան Գործքում: Որոշ մեկնաբանություններ դա այսպես են բացատրում
 - 1. Նա, հավանաբար, Ղուկասի (հավանաբար եղբայր) բարեկամն էր և ընդգրկել նրա անունը, Ղուկասի կողմից կոդիկներ որպես մշակութային անպատշաճ գործողություն:
 - 2. Տիտոսը Ղուկասի հիմնական աղբյուրն է՝ Պողոսի կյանքի ու ծառայության մասին, և, հետևաբար, ինչպես Ղուկաս անունը, չէր նշվի
- Դ. Նա ուղեկցում էր Պողոսին և Բառնաբասին ամենակարևոր Երուսաղեմի Ժողովի ժամանակ, արձանագրված Գործք 15-ում:
- Ե. Տիտոսի գիրքը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչ խորհուրդ է տալիս Պողոսը Տիտոսին Կրետեում կատարվելիք աշխատանքի մասին: Տիտոսը գործում է որպես Պողոսի փոխնակ:
- Զ. Նոր Կտակարանում վերջին տեղեկատվությունը Տիտոսի մասին այն է, որ նա ուղարկվեց Դաղմատիա՝ աշխատելու համար (տես 2 Տիմ. 4: 10):

▪ **«գնացի Մակեդոնիա»** Պողոսի միտքը փակագծերում է մերցված մինչև 2 Կոր. 7: 5: Դա փառաբանություն է առ Աստված Քրիստոսի համար: Այս շեղումն այնքան գեղեցիկ և օգտակար է, որ մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն դրա համար: Պողոսի շատ հիշարժան մեջբերումներից շատերը գալիս են այս շեղումներից:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 2:14-17

¹⁴Բայց շնորհակալություն Աստուծուն՝ որ ամեն ժամանակ մեզ յաղթող է անում Քրիստոսումը եւ իր գիտութեան հոտը մեզանով յայտնվում է ամենայն տեղ: ¹⁵Որովհետեւ մենք Քրիստոսի անուշ հոտն ենք Աստուծոյ առաջին, փրկուածների մէջ եւ կորածների մէջ: ¹⁶Ոմանց համար մահուայ հոտ դէպի մահ. եւ ոմանց համար կեանքի հոտ դէպի կեանք. եւ այս բաների համար ո՛վ բաւական կ'լինի: ¹⁷Որովհետեւ շատերին պէս չենք, որ Աստուծոյ խօսքը խարդախում են. այլ ինչպէս պարգութիւնից, ինչպէս Աստուածանից՝ Աստուծոյ առաջին խօսում ենք Քրիստոսում:

2:14 «շնորհակալություն Աստուծուն» ստորև Տես Հատուկ Թեմա

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՂՈԹՔԸ ԵՎ ԳՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՈՒՆ
SPECIAL TOPIC: PAUL'S PRAYER, PRAISE AND THANKSGIVING**

Պողոսը փառաբանով, գովաբանող հոգի ուներ էր: Նա գիտեր չին Կտակարանը: Սաղմոսների առաջին չորս բաժիններից (այսինքն, գրքերից) յուրաքանչյուրը ավարտվում է փառաբանությամբ (տես Սաղ. 41:13; 72:19; 89:52; 106: 48): Մարդիկ, ովքեր ճանաչում են Աստծուն հաճախ փառաբանում և մեծարում են Նրան:

- 1. իր նամակներում բացող պարբերությունները
 - ա. բացման ողջույնները (տես Հռ. 1: 7; 1 Կոր.1: 3; 2 Կոր. 1: 2)
 - բ. բացման օրհնությունները (*eulogētos*, տես 2 Կոր. 1: 3-4; Եփ. 1: 3-14)

2. գովասանքի կարճ պոռթկումներ
 ա. Հռ. 1:25; 9: 5
 բ. 2 Կոր. 11:31
3. փառաբանության ֆորմուլան (բնութագրվում է [1] *doxa-* ի, այսինքն, փառքի և [2] հավիտյանս հավիտենից օգտագործմամբ)
 ա. Հռ. 11:36; 16: 25-27
 բ. Եփ. 3: 20-21
 գ. Փիլ. 4:20
 դ. 1 Տիմ. 1:17
 ե. 2 Տիմ. 4:18
4. գոհություն, շնորհակալություն (այսինքն, *eucharisteō*)
 ա. Նամակի բացման խոսքերը (տես Հռ. 1:8; 1 Կոր. 1: 4; 2 Կոր. 1:11; Եփ. 1:16; Փիլ. 1: 3; Կող. 1: 3,12; 1 Թես. 1: 2; 2 Թես. 1: 3; Փիլիմոն 1: 4; 1 Տիմ. 1:12; 2 Տիմ. 1:3)
 բ. կոչ է անում շնորհակալություն հայտնել (տես Եփ. 5: 4, 20; Փիլ. 4:6; Կող. 3:15,17; 4:2; 1 Թես. 5:18)
5. շնորհակալության կարճ պոռթկումներ
 ա. Հռ. 6:17; 7:25
 բ. 1 Կոր. 15:57
 գ. 2 Կոր. 2:14; 8:16; 9:15
 դ. 1 Թես. 2:13
 ե. 2 Թես. 2:13
6. փակելով օրհնությամբ, փառաբանությամբ
 ա. Հռ. 16: 20,24
 բ. 1 Կոր. 16: 23-24
 գ. 2 Կոր. 13:14
 դ. Գաղ. 6:18
 ե. Եփ. 6:24

Պողոսը ճանաչում էր Սուրբ Երրորդությանը աստվածաբանորեն և փորձառությամբ: Իր գրվածքներում նա սկսում է աղոթքով և գովաբանությամբ: Իր ներկայացումների կեսին նա գովում է և շնորհակալություն հայտնում: Իր նամակների եզրակացության ժամանակ նա միշտ հիշում է աղոթել, գովաբանել և շնորհակալություն հայտնել Աստծուն: Պողոսի գրվածքները շնչում են աղոթքով, գովաբանությամբ և շնորհակալությամբ: Նա գիտեր Աստծուն, նա գիտեր իրեն, և նա գիտեր ավետարանը:

▪ **«ամեն ժամանակ»** Աստված միշտ առաջնորդում է մեզ (1) Քրիստոսի միջոցով, 2) Քրիստոսի հաղթանակով և 3) վկայության նպատակով (այսինքն, «մեր միջոցով երևում է», ներկա ներգործական դերբայ, տես 2 Կոր. 2: 15-16):

Արևելահայերեն **«որ ամեն ժամանակ մեզ յաղթող է անում Քրիստոսումը»**
 Արևմտահայերեն **«որ միշտ մեզի յաղթութիւն կու տայ Քրիստոսով»**

NASB, NKJV **«ով միշտ մեզ առաջնորդում է Քրիստոսի հաղթանակում»**

NRSV **«ով Քրիստոսում միշտ առաջնորդում է մեզ հաղթական երթին»**

TEV **«առաջնորդվելով Աստծո կողմից որպես բանտարկյալներ Քրիստոսի հաղթանակի երթին»**

NJB **«որը միշտ մեզ տալիս է Քրիստոսում իր հաղթական երթին»**

Այս արտահայտությունը վերաբերում է հռոմեական ռազմական պրակտիկայում ընդունված Հռոմի փողոցներով հաղթական հրամանատարների լեգեոնի հաղթական երթին, որը կընդգծեր Քրիստոսը հաղթող լինելը (դերբայը եզակի է): Նա ոչնչացրել է բոլոր թշնամական ուժերը (տես Կող. 2:15, բայը հայտնվում է միայն Նոր Կտակարանի այս երկու համարներում): Հավատացյալները հետևում են նրան, ոչ թե որպես բանտարկյալներ (TEV, NEB, և REB սա բացահայտորեն թարգմանում է որպես «բանտարկյալներ», բայց սա հակասում է կոնտեքստի ակնհայտ հաղթանակին, եթե Պողոսը չի խոսում իր տառապանքների ու նվաստացումների մասին, որպես ավետարանիչ, համեմատած բանտարկյալների հետ հռոմեական շքերթում), այլ որպես գործընկեր զինվորներ: Մենք հաղթողներ ենք Նրա շնորհիվ և Նրա միջոցով: Մեր հաղթանակը հաղթելն է, բայց մենք պետք է ընտրենք այն պահանջել և ամեն օր քայլել դրա մեջ:

- **«մեզ»** Հոգնակի դերանունը 2 Կոր. 2: 14-17-ը վերաբերում է (1) Առաքյալներին, 2) Պողոսին և նրա միսիոներական թիմը, կամ (3) բոլոր հավատացյալները, ովքեր տարածում են ավետարանը: Ինձ համար # 2 տարբերակը ուշադրության կենտրոնում է, բայց ենթադրվում է թիվ 3 տարբերակը:

Ավետարանականները հաղթական են, բայց կա զին, որը պետք է վճարվի (տես 2 Կոր. 4: 7-12; 6: 3-10; 11: 23-30):

- **«այստնվում է»** Պողոսը շատ հաճախ օգտագործում է այս բառը 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 2:14; 3: 3; 4: 10,11; 5: 10,11 (երկու անգամ), 7:12; 11: 6):. Տերմինը նշանակում է հստակ ցուցադրել կամ հայտնի դարձնել: Պողոսի մեծ ցանկությունն էր ամբողջությամբ, հրապարակայնորեն և հստակորեն բացահայտել Աստծուն՝ հայտելով Քրիստոսի անձի և գործի միջոցով (այսինքն՝ ավետարանը):

- **«իր գիտութեան հոտը ամենայն տեղ»** Կորնթոսի եկեղեցին հպարտանում էր իր մտավոր ժառանգությամբ: Պողոսը հպարտ էր Քրիստոսի միջոցով Աստծո մասին ունեցած իր գիտելիքների համար: Գիտելիքը ոչ թե անձնական փառքի համար է, այլ ավետարանչության: Քանի որ մենք «միշտ» (այսինքն, *pantote*) հաղթական ենք Քրիստոսով, մենք ակնկալում ենք, որ հստակորեն հայտնվի (այսինքն, երևա) Քրիստոսի պատգամը «ամեն տեղ» (այսինքն, *panti*): Քրիստոսի համընդհանուր ավետարանը պետք է բաժնեկցվի իր հաղթական հետևորդների կողմից ամեն տեղ (տես Մատթ. 28:19-20, Ղուկ. 24: 47, Գործք 1:8):

Պողոսը հաճախ օգտագործում է այս փոքրիկ արտահայտությունը «ամեն տեղ» (տես 1 Կոր. 1: 2; 1 Թես. 1: 8; 1 Տիմ. 2: 8): Զարմանում եմ, թե արդյոք դա ենթադրություն չէ Մատթ.1:11, որը մարգարեանում է Աստծու Մեսիայի համաշխարհային երկրպագությունը:

2:15 «Որովհետև մենք Քրիստոսի անուշ հոտն ենք Աստուծոյ առաջին» Այս արտահայտությունն ունի երկու հնարավոր ծագում:

1. Հին Կտակարանում Աստծուն մատուցած զոհաբերության և խնկի ծուխը ընդունվեց որպես անուշ հոտ (տես Ծննդ. 8:21; Ելից 29: 18,25; Սեպտուագինդում Ղև. 1: 9,13, 17; 2: 2; ինչպես նաև փոխաբերականորեն Պողոսի կողմից Փիլ. 4:18)
2. առաջին դարում խունկը այրում էին հռոմեական ռազմական շքերթի Հռոմ մտնելու երթուղով: Ավետարանի տարածումը ՅԱՀՎԵԻ կողմից ընդունված փառաբանության զոհաբերությունն է: Հավատացյալները ընդունվում են Քրիստոսով, Քրիստոսի նման լինելու և Նրա ավետարանը բաժնեկցելու նպատակով:

- **«փրկուածների մեջ եւ կորածների մեջ»** Տարբերությունը կարծես թե սա է, նրանք, ովքեր կորչում են, կործանվում են իրենց կամքի շարունակական գործողությամբ (ներկա ներգործական դերբայ), և նրանք, ովքեր փրկվում են, փրկվում են Աստծո կամքով Քրիստոսի միջոցով (ներկա կրավորական դերբայ): «Ովքեր փրկվել են» աստվածաբանական նշանակությունը տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ), 1 Կոր. 3:15.

«Կործանում» այս գաղափարի լիարժեք աստվածաբանական քննարկումը տես 1 Կոր. 1:18, որը զուգահեռ է այս տեքստին:

Քրիստոսին չտեսնել Աստվածաշնչում նշանակում է վրիպել փրկությունը: Նոր Կտակարանը հռչակում է Քրիստոսի փառքը՝ ավետարանը: Հին Կտակարանը կատարվում և ավարտվում է Նրանով: Նա է անհրաժեշտ հիմքը, անկյունաքարը, գլխավոր քարը, վերին քարը: Նրան վրիպել նշանակում է խարխլված հավատք ունենալ:

▪ **«Աստուծոյ պատկերն է»** Հիսուսին տեսնել նշանակում է Հորը տեսնել (տես Հովհ. 1:18; 14: 8,9; Կող. 1:15; Եբր. 1: 3): Նոր Կտակարանը պնդում է, որ Հիսուսը մարմին է հագել՝ երեք նպատակների համար:

1. լիովին բացահայտելու Հորը

2. քավելու մեղքը
3. հավատացյալներին օրինակ տալու համար

4: 5 «մենք ոչ թե մեր անձերն ենք քարոզում» Փորձել մեկնաբանել Պողոսի նամակը, նման է կարծես հեռախոսագրույցի մեկ կողմը լսել: Պողոսի խոսքերից մենք ենթադրում ենք այն բաները, որոնք կարող պատճառ են հանդիսացել: Այստեղ, 3: 1 և 10-13 գլուխներից ակնհայտ է, որ Պողոսը Կորնթոսում էր, երբ հարձակվեցին իր և ավետարանի վրա: Պողոսը խստորեն հաստատում է Հիսուսի Տեր լինելը և Նրա ծառա լինելը (տես 1 Կոր. 3: 5-9): Նա պաշտպանում է միայն իրեն (այսինքն, «ինքներս» ընդգծված է) կամ մեծացնում է իր հավատարմագրերը (տես գլուխ 12), որպեսզի պաշտպանի իր ավետարանի վավերականությունը: Առաքելական իշխանության սահմանափակումների մասին հետաքրքիր քննարկումներ կան George Ladd's *A Theology of the New Testament*, էջ 382:

▪ **«Տեր Յիսուս Քրիստոսին»** Այս արտահայտությունը վաղ եկեղեցու հավատքի դավանությունն էր մկրտության ժամանակ (տես Հռ. 10: 9-13; 1 Կոր. 12:3; Փիլ. 2: 9-11): Այս բառակապակցության մեջ օգտագործվում են Նոր Կտակարանում օգտագործված բոլոր գլխավոր տերմինները, որոնք նշանակում են՝ Խոստացյալ, Տառապող Ծառա:

1. Քրիստոս - սա եբրայերեն *messiah* տերմինի հունարեն տարբերակն է, որը նշանակում է «օծյալ»: Դա նշանակում է «կանչված և սպառազինված Աստծո կողմից կոնկրետ գործի համար»: Հին Կտակարանում առաջնորդների երեք խմբեր են օծվել՝ քահանաները, թագավորները և մարգարեները: Հիսուսը կատարում է այս երեք օծյալ պաշտոնները (տես Եբր. 1: 2-3):

2. Հիսուս - Այս եբրայերեն անունը նշանակում էր «ՅԱՀՎԵՆ փրկում է» կամ «ՅԱՀՎԵՆ բերում է փրկություն»: Այն հայտնվեց իր ծնողներին հրեշտակի կողմից (տես Մատթ. 1:21): «Հիսուսը» բխում է եբրայերեն «փրկություն» բառից *hosea*, որը Աստծո ուխտի անունն է՝ «ՅԱՀՎԵ»: Դա նույնն է, ինչ եբրայերեն Հեսու անունը:

3. Տեր - «տեր» (*kurios*) տերմինը կարող է օգտագործվել ընդհանուր իմաստով կամ կոնկրետ աստվածաբանական իմաստով: Այն կարող է նշանակել «պարոն», «սըր», «վարպետ», «սեփականատեր», «ամուսին» կամ «կատարյալ Աստված-մարդ»: Այս տերմինի (*adon*) Հին Կտակարանի օգտագործումը եկել է հրեաների Աստծո ուխտի անունը հոչակել չկամենալուց, ՅԱՀՎԵ, որը առաջացել է եբրայերեն «լինել» ԲԱՅԻՑ (տես Ելից 3:14): Նրանք վախենում էին խախտել այն պատվիրանը, որը ասում էր, «Տիրոջ անունը զուր տեղը բերան չառնել, արտասանել» (տես Ելից 20:7; 2 Օր. 5: 11): Նրանք մտածում էին, որ եթե չարտասանեն այդ բառը, նրանք զուր տեղը չէին կարողանա արտասանել այն: Այսպիսով, նրանք փոխարինեցին եբրայերեն բառը, *Adonai*, որը ուներ նմանատիպ նշանակություն ինչ հունարեն *Kurios (Lord)* բառը: Նոր Կտակարանի հեղինակները օգտագործեցին այս տերմինը՝ նկարագրելու Քրիստոսի կատարյալ աստվածությունը:

Հիսուսին դավանող մի քանի արտահայտություններ կան:

1. Հիսուսը Մեսիան է / Քրիստոսն է - Գործք 5:42; 9:22; 17:3; 18: 5,28; 1 Կոր. 1:23
2. Հիսուսը Աստծո Որդին է - Գործք 9: 20; Հռ. 1: 3-4; Եբր. 4:14
3. Հիսուսը Տեր է- Գործք 2:36; 10:36; 11:20; Հռ. 10:9; 2 Կոր. 4: 5; Փիլ. 2:11; Կող. 2: 6

Այս իմաստով դրանք ամփոփում են Հիսուս Նագովրեցու մասին վաղ եկեղեցու պատկերացումները:

4: 6 «Որովհետև Աստուած որ ասեց թե խաւարիցը լոյս ծագէ» Մա ակնարկ է Ծննդ. 1: 3 և անձնական ակնարկ Պողոսի Դամասկոսի ճանապարհի փորձառությանը (տես Գործք 9: 1-22; 22: 3-16; 26: 9-18): Պետրոսի համար նույն զարմանահրաշ փորձառությունը եղավ Հիսուսի և լույսի հետ (այսինքն, փառք) Այլակերպության լեռան վրա (տես 2 Պետ. 1:19):

▪ **«սրտերի»** տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 14:25

▪ **«Աստուծոյ փառքի»** Սա կարծես վերաբերում է *Shekinah* փառքի ամպին, որը խորհրդանշում էր ՅԱՀՎԵԻ ներկայությունը Ելից գրքում (տես 2 Կոր. 3:17): Աստծո ներկայության այս խորհրդանիշը փոխանցվել է Ուխտի Տապանակին Հորդանան գետով դեպի Խոստացյալ Երկիր անցնելուց հետո: ՅԱՀՎԵՆ լիովին հայտնվում է ոչ թե որպես տեսանելի, ֆիզիկական օբյեկտ, այլ, Հիսուսով, աստվածության մարմնացումով: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ, 1 Կոր. 2:7:

▪ **«Յիսուս Քրիստոսի դեմքումը»** Սա շարունակական համեմատությունն է Մովսեսի քողի (տես 2 Կոր. 3:13) և Հիսուս Քրիստոսի կատարյալ արտացոլման միջև (տես Եբր. 1: 3): Հավատացյալները Քրիստոսի փառքը տեսել են ավետարանում (տես 2 Կոր. 3:18):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 4:7-12

⁷Բայց այս գանձն ունինք հողի անօթներում. որ զօրութեան գերազանցութիւնը Աստուծուը լինի, եւ ոչ թէ մեզանից: ⁸Ամեն բանի մեջ նեղուած ենք, բայց չենք ճնշուած. Կարօտ ենք, բայց չենք տարակուսել. ⁹Հալածուած, բայց երեսից չ'ընկած. վայր ընկած, բայց չ'կորած: ¹⁰Ամեն ժամանակ Յիսուսի մեռնելը մեր մարմնումը կրում ենք՝ որ Յիսուսի կեանքն էլ մեր մարմնումը յայտնուի: ¹¹Որովհետեւ մենք կենդանիներս միշտ Յիսուսի համար մահի ենք մատնվում. Որ Յիսուսի կեանքն էլ յայտնուի մեր մահկանացու մարմնումը: ¹²Այնպէս որ մահը մեզանում է զօրանում, եւ կեանքը ձեզանում:

4: 7 «Բայց այս գանձն ունինք» Սա խոսում է Աստծո բնակվող Հոգու մասին, որը մեծարում է, բացահայտում և ձևավորում է Քրիստոսի անձը մեր կյանքում (տես Հովհ. 16: 8-14; Հռ. 8: 9; Կող. 1: 27; 2 Պետ. 1: 3-4):

▪ **«հողի անօթներում»** Սա շեշտը դնում է մարդու մարմնի վրա (տես 2 Կոր. 4: 10,16; 5: 1; Ծննդ. 2: 7; 3:19; 18:27): Այս ամբողջ կոնտեքստը երկխոսություն է Պողոսի ֆիզիկական երկրային վիճակի և ավետարանի հսկայական հոգևոր զորության և նրա կյանքի մեջ բնակվող Սուրբ Հոգու միջև:

▪ **«զօրութեան գերազանցութիւնը»** *Huperbolē*, տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Huper* նախդիրը 1 Կոր. 2:1

4: 8-11 «Ամեն բանի մեջ նեղուած ենք, բայց չենք ճնշուած» 8-10 համարները պարունակում են ինը ՆԵՐԿԱ –ների շարք (հիմնականում կրավորական դերբայեր, որոնք Կոյնե հունարենում բառախաղեր են, որոնք նկարագրում են Պողոսի դժվարին ծառայությունը: Առաջին ութ դերբայերը հակասական զույգեր են: Առաջինը նկարագրում է Պողոսի ծառայության փորձառությունը, իսկ երկրորդը սահմանափակում է հետևանքները: Այս բառախաղի օրինակները հետևյալն են.

1. «վայր ընկած, բայց չ'կորած»
2. «Կարօտ ենք, բայց չենք տարակուսել»

Այս բաժինը կարելի է համեմատել 2 Կոր. 1: 6; 6: 4-10; 11: 23-28:

4: 9 «կորած» «Կորձանվել, կորած» հասկացության համար տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 8:11 իսկ քննարկումը 1 Կոր. 1:18.

4:10 «Ամեն ժամանակ Յիսուսի մեռնելը մեր մարմնումը կրում ենք» Սա վերաբերում է մեր Աստծո հետ կապված լինելու պարադոքսին, բայց ընկած աշխարհի պատճառով ֆիզիկական խնդիրների է ենթարկվում: Մենք ունենք հավիտենական կյանք, բայց մենք ֆիզիկապես մահանում ենք (տես 2

Կոր.1:8): Ինչպես Հիսուսը մերժվեց և հալածվեց (տես Հովհ.15:20), այնպես էլ հավատացյալներ են (տես 1 Կոր. 15: 31; Գաղ. 2: 20; Փիլ. 3:10; Կող. 1:24; 1 Պետ. 4: 12-19):

- **«որ Յիսուսի կեանքն էլ»** այսինքն, վերաբերում է
 1. հարություն առած Քրիստոսին, որը Պողոսի հույսն էր
 2. Հիսուսի հավատարմությունը հալածանքների ներքոՊողոսը ցանկանում էր ցուցաբերել Հիսուսի հավատարմությունը (տես 2 Կոր. 4:11) և մասնակցել Նրա հետևորդների հարությանը (տես 2 Կոր. 4:14; 1 Կոր. 15):

- **«մեր մարմնումը յայտնուի»** Սա աօրիստ կրավորական ստորադասական է: Կարդացեք Գաղ. 6:17, որը ակնհայտորեն վերաբերում է Պողոսի ֆիզիկական վախերին Հիսուսի ծառայության մեջ: Երբ մեր երկրային անոթը կոտրվում է, ներսի գանձը ավելի տեսանելի է (տես 2 Կոր. 12: 9-10):

Պողոսը օգտագործում է հունարեն *sarx* բառը (այսինքն, մարմին) մի քանի իմաստներով:

1. Մարդու մարմինը («մարմին» 2 Կոր. 4: 10 զուգահեռ է «մարմին» ինչպես 2 Կոր. 7: 5; 10: 3; 12: 7)
2. մարդու անձը (տես 2 Կոր. 5:16; 11:18)
3. մարդու սերունդը, ծագումը (այսինքն հայր - որդի, տես Հռ. 1: 3; 4: 1)
4. մարդկությունը որպես ամբողջություն (տես 1 Կոր. 1: 26,29)
5. մարդու մեղավորությունը (տես Հռ. 7: 5, 18; 8: 3,4,5,8,9,12,13; 2 Կոր. 7: 1; 10: 2)

4:11 «Որովհետև մենք կենդանիներս միշտ Յիսուսի համար մահի ենք մատնվում» Այս համարի աստվածաբանական պատկերացումները կարելի է տեսնել 1 Կոր. 4: 9, որտեղ Առաքյալները տեսարան եղան ինչպես հրեշտակներին, այնպես էլ մարդկանց: Հավատացյալները նաև տեսարան են կորած աշխարհին և հրեշտակային աշխարհին (տես Եփ. 2: 7; 3: 10):

«Անընդհատ» տերմինը (2 Կոր. 6: 10) զուգահեռ է «միշտ» 2 Կոր. 4:10: Ծառայության կանչը դա նշանակում է ամեն օր միտումնավոր մեռցնել «ես»-ը (տես 2 Կոր. 5: 14-15; Հռ. 6: 7; 1 Կոր. 15:31; Գաղ. 2: 20; Փիլ. 3:8,10; 1 Հովհ. 3:16): Այս վերաբերումնքը մարդկության անկման վերափոխումն է Օսնորոց 3. Այն ապացուցում է Քրիստոսանմանությունը, որը մարդկության մեջ Աստծո կերպարի վերականգնումն է:

«Մատնվում ենք» (*paranididōmi*) տերմինը օգտագործվել է Հուդայի համար Հիսուսին իշխանություններին հանձնելու համար (տես Մատ. 20: 18-19; Մարկ. 10: 33): Այն օգտագործվում է Հիսուսի կողմից մարգարեական իմաստով՝ Իր հետևորդներին նկարագրելու համար Մատ. 10:17; 24:9; Մարկ. 13: 11-12:

«Հիսուսի համար» արտահայտությունը պետք է հասկանալ որպես պատճառ: Մեր ծառայության բեռը օգուտ չէ Քրիստոսին, այլ մեզ համար են, որովհետև մենք հետևում ենք Նրան: Ինչպես Նրան հալածեցին, այնպես էլ մեզ են հալածելու: Այնուամենայնիվ, ճշմարիտ է, որ ինչի համար, որ մենք տառապում ենք, որպես Քրիստոսի հետևորդներ, դրանք այն բաներն են, որոնք կարող են օգնել մեզ ավելի ու ավելի շատ աճել Նրա նմանվելով:

Պողոսի նույնացումը Հիսուսի մահվան հետ աստվածաբանորեն գործում է մի քանի մակարդակներով:

1. սրբազան աստվածաբանություն (տես Հռ. 6: 3-5; Կող. 2:12; 3: 1,3-5)
2. Եկեղեցու վարդապետություն (տես 1 Թեմ. 4: 14-15)
3. անձնական փորձառություն (տես 2 Կոր. 4: 10-11; Գաղ. 2:20; Փիլ. 3:10)

- **«մահկանացու մարմնումը»** Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 1:26

4:12 «Այնպես որ մահը մեզանում է զօրանում, եւ կեանքը ձեզանում» Սա ներկա չեզոք (deponent) սահմանական է, որը անձնավորում է մահը: Սա վերաբերում է ֆիզիկական

հալածանքներին Պողոսի և նրա առաքելության թիմի համար (տես 2 Կոր. 4:16) և հոգևոր կյանք նրանց համար, ում նա քարոզում է ավետարանը:

Anchor Bible- ի մեջ 2 Կորնթացիս Վիկտոր Ֆուրնիշը համարում է, որ դա կրավորական սեռ է (էջ 257), քանի որ այդ ՄԵՌԸ գերակշռում է 2 Կոր. 4: 10-11, որտեղ հասկանալի թեման Աստծո գործությունն է (տես 2 Կոր. 4: 7): Մա ենթադրում է, որ Աստված օգտագործում է փորձությունները և հալածանքները, Քրիստոսի հետևորդների մեջ Քրիստոսանմանություն ստանալու համար: Առաջնորդների կյանքը գործություն է տալիս իրենց պատգամներին (տես 2 Կոր. 1: 3-11; 2 Տիմ. 2:10-10):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացի 4:13-15

¹³Բայց միեւնոյն հաւատքի հոգին ունենալով, ինչպէս գրուած է. Հաւատացի եւ նորա համար խօսեցի. Մենք էլ հաւատում ենք եւ սորա համար էլ խօսում ենք: ¹⁴Գիտենալով որ Տէր Յիսուսին յարուցանողը մեզ էլ Յիսուսի հետ կ'յարուցանէ, եւ ձեզ հետ իր առաջին կ'կանգնեցնէ: ¹⁵Որովհետեւ ամեն բան ձեզ համար է. որ շատացած շնորհքը շատերի գոհութիւնիցն՝ աւելանայ Աստուծոյ փառքի համար:

4:13 «միեւնոյն հաւատքի հոգին ունենալով» Այստեղ կարևորն այն է, որ այն հավատքը, որ Աստված մարդուն Իր հետ ուղիղ արեց Հին Կտակարանում (այսինքն, Սաղմոս 116-ի հեղինակը) նույն հավատքն է, որ մարդուն ուղիղ է անում Աստծո առաջ Նոր Կտակարանում (այսինքն, Աբրահամը Ծննդ.15: 6-ում, մեջբերված Պողոսի կողմից Հռ. 4: 3, 9, 22):

Պողոսը օգտագործում է «հոգի» տերմինը մարդու ինքնության, ես-ի իմաստով: Նա հաճախ օգտագործում է «հոգի», որպես մարդու ներքին հատկությունների մասին խոսելու ձև (տես, 2 Կոր. 4:21): Մա չի վերաբերում 1 Կոր. 12: 9 հայտնաբերված նմանատիպ արտահայտությանը, որը վերաբերում է այն Հոգուն, որը որպես պարզև տրվում է հավատացյալներին հավատքով: Մա վերաբերում է փրկարար հավատքին, ինչպիսին Աբրահամին է (տես Ծննդ. 15: 6): Հետաքրքիր է, *Word Studies in the New Testament*, հատոր 2, Մ.Ռ. Վինսենթն ասում է, որ «Հավատքի Հոգին, ոչ թե Սուրբ Հոգին է առանձին, և մյուս կողմից՝ մարդկային ուսուցումը կամ դրսևորումը, այլ մարդու հավատքը դա Աստծո Հոգու պարզևն է»(էջ 82):

Synonyms of the Old Testament, Robert Girdlestone-ը հետաքրքիր քննարկում է ունեցել Նոր Կտակարանում «հոգի» տերմինի գործածության մասին (էջ 61-63):

1. չար ոգիները
2. մարդկային հոգին
3. Սուրբ Հոգին
4. այն բաները, որոնք Հոգին առաջացնում է մարդու հոգիների մեջ և միջոցով
 - ա. «ոչ թե ծառայության հոգի, այլ որդեգրության հոգի» - Հռ. 8:15
 - բ. «հեզության հոգի» - 1 Կոր. 4:21
 - գ. «հավատքի հոգի» - 2 Կոր. 4:13
 - դ. «իմաստության և հայտնության հոգի՝ Իր գիտությունով» - Եփ. 1:17
 - ե. «ոչ թե երկչոտության, այլ գործության, սիրո և զգաստության հոգի» -2 Տիմ. 1: 7
 - զ. «խաբեության հոգի», «ճշմարտության հոգի» - 1 Հովհ. 4: 6

▪ **«ինչպէս գրուած է»** Մա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը օգտագործվում է Հին Կտակարանի հեղինակների կողմից՝ հղում կատարելով Սուրբ Գրքի պատշաճության և արդիականության համար (տես Մաթ. 5: 17-19):

▪ **«Հաւատացի եւ նորա համար խօսեցի»** Մա մեջբերում է Սեպտուագինից Սաղ.116:10, որը խոսում է Աստծո սուրբերին փրկելու մասին:

4:14 «որ Տէր Յիսուսին յարուցանողը» Այս արտահայտությունը հիանալի հնարավորություն է ցույց տալու, որ Նոր Կտակարանը հաճախ փրկագնման գործը վերագրում է Սուրբ Երրորդության բոլոր երեք անձերին:

1. Հայր Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռ. 6:4,9; 10: 9; 1 Կոր. 6: 14; 2 Կոր. 4:14; Գաղ.1:1; Եփ. 1: 20; Կող. 2: 12; 1 Թեա. 1:10)
2. Որդի Աստվածը հարություն տվեց Իրեն (տես Հովհ. 2: 19-22; 10: 17-18)
3. Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Հռ. 8: 11)

Կան մի քանի տարբերակներ, կապված «Տէր Հիսուս» արտահայտության հետ:

1. «Տէր Հիսուսը» - MSS x, C, D, F, G
2. «Տէր Հիսուս Քրիստոսը» - MS 436
3. «Տէր Հիսուսը մեռելներից» - MSS 104, 459
4. «Հիսուս» - MSS P⁴⁶, B

UBS⁴-ը թիվ 1 տարբերակն է տալիս «Բ» վարկանիշը (գրեթե որոշակի), սակայն Bruce Metzger-ը գերադասում է # 4 տարբերակը (ինչպես է NET Աստվածաշունչը): Ինչպես բազմաթիվ տարբերակներով, որոնցից մեկը բնօրինակն է, չի ազդում հատվածի ընդհանուր ծանրաբեռնվածության վրա:

▪ **«մեզ էլ...կ'յարուցանէ... իր առաջին կ'կանգնեցնէ»** Սրանք երկուսն էլ ապառնի ներգործական սահմանական են: Հավատացյալները հարություն են առնելու մեռելներից (*sun* Հիսուսի հետ) և ներկայանալու են Հորը (*sun* բոլոր հավատացյալների հետ):

Պողոսի հասկացությունը Երկրորդ Գալստյան ժամանակի մասին երկիմաստ է: Որոշ տեքստերում թվում է, թե նա ակնկալում է կենդանի է լինել այդ ժամանակ *parousia* (տես 1 Թեա. 4: 15,17; 1 Կոր. 15: 51-52; և Փիլ. 3:20; 4: 5), այլ տեքստեր նա կարծես ինքն իրեն նույնացնում է մահացած հավատացյալների հետ (տես 1 Կոր. 6: 14; 2 Կոր. 4:14; 5: 1-10): Միայն Հայրը գիտի Երկրորդ Գալուստի ժամանակը (տես Մաթ. 24: 36; Մարկ. 13: 32; Գործք 1:7): Երկրորդ գալուստը հավատացյալների յուրաքանչյուր սերնդի հույսն է, բայց միայն մեկ սերնդի իրականությունը: Հավատացյալները պետք է պատրաստ ապրեն, պատրաստ ակտիվ լինելով Քրիստոսի ծառայության մեջ:

4:15 Պողոսի սիրտն էր օգնել մեղավոր մարդկանց՝ հավատալու Քրիստոսին և գտնել ճշմարիտ խաղաղություն և ուրախություն և գովաբանել Աստծուն (տես 2 Կոր. 1: 11 և NASB, NRSV, TEV, NJB): NKJV-ը քիչ թե շատ բառացի է «մեծամասնությանը»: Սա կարող է վերաբերել Պողոսի կողմնակիցներին Կորնթոսի եկեղեցում: Դա հակառակն էր «որոշ»-ների (տես 2 Կոր. 3: 1; 10:12; 1 Կոր. 4:18; 6:11; 8: 7; 10: 7,8,9,10; 15: 6,12,34,35): 15-րդ համարը ակնհայտորեն փառաբանության ամփոփում է:

▪ **«Աստուծոյ փառքի»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ), 1 Կոր. 2:7

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 4:16-18
¹⁶Նորա համար չենք թուլանում. Այլ թե եւ մեր դրսի մարդը փճանում է, բայց մեր ներսի մարդն օրեցօր նորոգվում է: ¹⁷Որովհետեւ մեր այժմեան թեթեւ նեղութիւնը ամենագերազանց յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար, ¹⁸Որ այս երեւող բաներին չենք մտիկ անում, այլ աներեւոյթներին. Որովհետեւ երեւողները ժամանակաւոր են, իսկ չ'երեւողները յաւիտենական:

4:16 «Նորա համար չենք թուլանում» Սա Պողոսի գրվածքների հերթական թեման է (տես 2 Կոր. 4: 1; Գաղ. 6: 9; Եփ. 3:13; 2 Թես.3:13): Իրականում, ըստ հանգամանքների, մեր հոգևոր դաստիարակության և պտղաբերության ամրապնդման համար:

- **«Այլ թե եւ մեր դրսի մարդը փճանում է, բայց մեր ներսի մարդն օրէցօր նորոգվում է»** Սրանք երկուսն էլ ներկա կրավորական սահմանական են, որոնք նշանակում են շարունակական գործողություն: Կրավորական սեռը դժվար է թարգմանել և հասկանալ այս կոնտեքստում: Անգլերեն թարգմանությունների մեծամասնությունը դրանք թարգմանում են որպես ներգործական սեռ, սակայն նրանք կարող են նաև աստվածային գործողություններ օգտագործելով ֆիզիկական խնդիրներ և հալածանքներ, որպեսզի ամրապնդի և հասունացնի Հիսուսի հետևորդներին (տես Մաթ. 5: 10-12; Հովհ.15: 18-21; 16: 1-2; 17:14; Գործք 14: 22; Հռ. 5: 3-4; 8:17; 2 Կոր. 4:16-18; Փիլ. 1:29; 3:11; 1 Թես. 3:3; 2 Տիմ. 3:12; Եբր.5: 8; Հակ. 1: 2-4; 1 Պետ. 4:12-19): Եփ. 3:16 և 4:24 կա համեմատություն հին մարդու և նոր մարդու միջև, բայց հակադրությունը այստեղ մեր արտաքին ֆիզիկական մարմնի և մեր ներքին հոգևոր բնության միջև է:
- **«նորոգվում է»** Տես Հատուկ Թեմա ստորև

ՀՍՏՈՒՎ ԹԵՄԱ: ՆՈՐՈԳՎԵԼ (*anakainōsis*)
SPECIAL TOPIC: RENEW (*anakainōsis*)

Հունարեն այս տերմինը իր տարբեր ձևերով (*anakainōō, anakainizō*) ունի երկու հիմնական նշանակություն

1. «ինչ-որ բան նոր կամ տարբեր դարձնելու պատճառ հանդիսանալ» (այսինքն՝ ավելի լավ) – Հռ. 12:2; Կոր. 3:10
2. «դեպի նախկին ավելի նախընտրելի վիճակին վերադառնալու փոփոխության պատճառ հանդիսանալ» – 2 Կոր. 4:16; Եբր. 6:4-6 (վերցված է Louw and Nida Greek-English Lexicon, հատոր 1, էջ 157, 594): Moulton and Milligan, The Vocabulary of the Greek Testament գրքում ասվում է, որ այս տերմինը (այսինքն՝ *anakkainōsis*) հնարավոր չէ գտնել Պողոսից առաջ գոյություն ունեցած հունարեն գրականության մեջ: Հնարավոր է, որ Պողոսն ինքն է կազմել այս տերմինը (էջ 34):

Ֆրենկ Սթեգը, Նոր Կտակարանի Աստվածաբանություն (Frank Stagg, *New Testament Theology*) գրքում տալիս է մի հետաքրքիր մեկնություն.

«Վերածնունդն ու նորոգումը միայն Աստծուն է պատկանում: *Anakkainōsis* բառը «նորոգություն» տերմինի համար, գործողություն կատարող գոյական է և առկա է Նոր Կտակարանում բայի տարբեր ձևերի հետ համատեղ նկարագրելու շարունակական նորոգություն, ինչպես Հռ. 12:2-ում. «Ձեր մտքի նորոգությամբ նորոգվեք» և 2 Կոր. 4:16-ում՝ «Մեր ներքին մարդը նորոգվում է օրեցօր»: Կողոսացի 3:10-ը նկարագրում է «նոր մարդուն» որպես մեկի, որը «նորոգված է գիտությամբ՝ ըստ իր Արարչի պատկերի»: Այսպիսով «նոր մարդը», «կյանքի նորոգությունը», «վերածնունդը» կամ «նորոգությունը» ինչպես որ նախատեսված է եղել, հանդիսանում է Աստծո կողմից՝ որպես հավիտենական կյանք տվողի և ապահովողի, սկսած և շարունակելի գործը» (էջ 118):

- **«օրեցօր»** Պողոսը օգտագործում է եբրայերեն իդիոմա (տես Ծննդ. 39:10; Եսթեր 3: 4; Մաղ. 68:19) կրկնությունը 2 Կոր. 4:16, «օրեցօր» և նմանատիպ եբրայերեն կրկնություն 2 Կոր. 4:17, «չափից ավելի» (*hyperbolēn eis hyperbolēn*): Հիշեք, Նոր Կտակարանի հեղինակները (բացի Ղուկասի) եբրայերեն / արամերեն մտածողներ են, որոնք գրում են Կոյնե հունարենով: Կան շատ եբրայական իդիոմաներ և քերականական կառուցվածքներ, ինչպես նաև բազմաթիվ Հին Կտակարանյան հղումներ և մեջբերումներ Նոր Կտակարանում:

4: 17-18 17-րդ համարը շատ նման է Հռ. 8:18, իսկ 2 Կոր. 4:18 նման է Հռ. 8:24: Պողոսը գրեց Հռոմեացիներին Կորնթուից: Նա մտածում էր իր կոչման և դրա հետ կապված խնդիրների մասին: Իրականում, ոչ մի համեմատություն չի կարող լինել թեթևակի լարվածության և հավիտենական փառքի միջև: Սա աստվածաշնչյան աշխարհայացք է, որը պաշտպանում է Աստծո ժողովրդին այս ընկած աշխարհում: Նա մեզ հետ է, մեր կողմից է, և կրեքի մեզ Իր ներկայության մեջ մնալու հավիտյան:

4:17 «է գործում» Այս նույն բայը օգտագործվում է Հռ. 5: 3-4 և Հակ.1: 2-4-ը, որը նույնպես խոսում է տառապանքի և հալածանքի օգուտների մասին:

▪ **«յաւիտենական փառքի մեծութիւն»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ), 1 Կոր. 2:7

▪ **«ամենագերազանց»** *Huperbolē* Տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Huper*

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչպե՞ս է 2 Կոր. 4: 1 խոսում կեղծ ուսուցիչների մեթոդների մասին:
2. Արդյո՞ք վաղ եկեղեցու հայրերը արդարացված էին 2 Կոր. 4: 4 հունարեն տեքստը փոխելու մեջ՝ իրենց օրվա խնդիրը լուծելու համար:
3. Ի՞նչ է նշանակում, որ սատանան այս աշխարհի «աստվածն» է:
4. Ինչու՞ է Պողոսը այդքան ուշադրություն դարձնում իր ֆիզիկական խնդիրներին, և ոչ թե իր հոգևոր գործունեությունների վրա:

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ապրել հավատքով	Հարության ապահովումը	Վստահությունը մահվանը հանդիպելուց	Ապրել հավատքով	Առաքյալի դժվարությունը և հույսերը
(4:16-5:10)			(4:16-5:10)	(4:7-5:10)
4:16-5:5	5:1-8	5:1-5		5:1-5
5:6-10	Քրիստոսի ատյանի առաջ	5:6-10	5:6-10	5:6-10
Հաշտության ծառայությունը	5:9-11	Հաշտության Իր ծառայության հետագա պաշտպանությունը	Աստծո հետ բարեկամություն Քրիստոսի միջոցով	Առաքյալը գործողության մեջ
5:11-15		5:11-15	5:11-15	5:11-15
	Հաշտվել Աստծո հետ	(5:11-6:13)	(5:11-6:13)	
	5:12-21			
5:16-6:10		5:16-6:10	5:16-19 5:20-6:3	5:16-19 5:20-6:10

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#)) *Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով*

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն

4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՏՔԵՐ

Ա. Պողոսը քննարկում է իր մահը 2 Կոր. 5:1-10:

1. Նա օգտագործում է երկու փոխաբերություն՝
 - ա. երկրավոր վրանն ընդդեմ հավիտենականի, Աստծո կողմից կառուցված շինվածք
 - բ. հագածն ընդդեմ չհագածի (այսինքն, մերկ)
2. Շատ դժվար է հետևել Պողոսի նախորդ մտքերին: Արդյոք նա խոսում է
 - ա. Մենք հագնում ենք Քրիստոսին մկրտվելու ժամանակ (տես 2 Կոր. 5:2-4)
 - բ. Հոգու բնակվելը փրկության ժամանակ (տես 2 Կոր. 5:5)
 - գ. Քրիստոսի վերադարձի ժամանակ մեր նոր հոգևոր մարմիններ ստանալու մասին (տես 3 և 10 հհ.)
3. Այս տեքստը թարգմանելու Պողոսի լավագույն գուգահեռները Հռ. 8:18-25, 26-30 (այսինքն՝ ցնցում) և 1 Կոր. 15:53-54 (այսինքն՝ «ընկղմվեց»):
4. Ինչ-որ ձևով այս տեքստը պետք է վերաբերվի 4-րդ և 6-րդ գլուխների միջի տառապանքների Պողոսի քննադատությանը: Հավատարիմ, աստվածավախ ապրելը դժվարին հանգամանքների մեջ կրկնվող թեմա է:

Բ. Պողոսը 2 Կոր. 5:6 և 8 մեծ աստվածաբանական հաստատում է անում: Նախկինում հավատացյալները և անհավատները մահանալով գնում էին *Hades*, և սպասում դատաստանին (Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: Որտե՞ղ են մահացածները, 2 Կոր. 5:6): Ռաբբիական հուդաիզմը նույնիսկ հաստատում էր բաժանությունը այս պահվող վայրում մահից հետո (այսինքն, ՀԿ *Sheol*) արդարների և ամբարիշտների միջև: Պողոսը պնդում է, որ Հիսուսի հարության ժամանակ Իր հետ երկինք տարավ արդարին: Հիմա հավատացյալները չեն գնում *hades*, այլ Տիրոջ հետ են: Անկախ նրանից, թե դա ենթադրում է լիարժեք հաղորդակցություն կամ սահմանափակ հաղորդակցություն, դա անորոշ է: Աստվածաշունչը մանրամասն տեղեկություններ չի տալիս այն մասին, թե ինչպես է լինելու կյանքից հետո:

Դ. Պողոսը մեկ այլ զարմանալի հայտարարություն է անում 2 Կոր. 5:10-ում: Ակնհայտորեն բոլոր հավատացյալներն ու անհավատները կկանգնեն Քրիստոսի առջև որպես Դատավորի: Արդյոք սա գուգահեռ է Մաթ. 25-ի ոչխարի և այծի դատավճիռին, թե՞ Հայտնություն 20-ի «Մեծ սպիտակ աթոռի» դատավճիռին: Եթե հավատացյալների բոլոր մեղքերը ներվում են Քրիստոսով, ապա ինչի համար են նրանք դատվելու: Կրկին այս յուրահատուկ հարցերը չեն կարող պատասխանվել աստվածաշնչյան կերպով: Տրամաբանական ենթադրությունն այն է, որ նրանք պատասխանատու են

1. ավետարանի պատգամի համար
2. նրանց հոգևոր պարզների համար
3. ֆիզիկական ռեսուրսների օգտագործման համար
4. նրանց ծառայության մատչելիության համար

Բայց սա միայն ենթադրություն է, որը հիմնված է 2 կոր. 5:11-21-ի բովանդակության վրա:

- Գ. Հոգևոր պատասխանատվության Պողոսի քննարկումը 2 Կոր. 5:11-21-ում ակնհայտորեն արտացոլում է կեղծ ուսուցիչների եսասիրությունը, հնարավոր անբարո գործերը/ուսմունքները:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 5:1-5
¹Որովհետև գիտենք որ եթե մեր վրանի երկրաւոր շինուածքը քանդուի, Աստուածանից մի շինուածք ունինք՝ անձեռագործ մի տուն, որ յաւիտեանական է երկնքումը: ²Եւ հէնց սորանում հառաչում ենք ցանկանալով հագնել մեր այն բնակութիւնը որ երկնքիցն է: ³Միայն թէ՛ երբոր այն հագնենք, մերկ չ'գտնուինք: ⁴Որովհետև մենք այս վրանի տակ լինողներս հառաչում ենք ծանրութիւն կրելով. Որ չենք կամենում հանուիլ, այլ այն սորա վերայ հագնել. Որ մահկանացուն կեանքի մէջ ընկղմուի: ⁵Բայց այս բանը մեզ յաջողել տուողը Աստուած է. որ Հոգու գրան էլ տուաւ մեզ:

5:1 «Որովհետև գիտենք» Այս գրքում դժվար է իմանալ Պողոսի նախորդ հոգնակի դերանունները: Երբեմն նա դիմում է (1) ինքն իրեն; 2) իր ծառայության թիմին; կամ (3) բոլոր հավատացյալներին: Միայն կոնտեքստը պետք է որոշի, թե որն է ենթադրվում: Այստեղ ես ենթադրում եմ, որ դա #3 է:

- **«եթե»** Սա երրորդ կարգի պայմանական է, որը նշանակում է հնարավոր գործողություն: Եթե Երկրորդ գալուստը չլիներ սկզբում, ապա Պողոսի մահը հաստատ կլիներ: Նա մտածում էր, որ մահանալու էր Ասիայում (տես 2 Կոր. 1:8-10): Նրա կյանքը, որպես Առաքյալ, հեշտ չէր եղել կամ անցավ (տես 2 Կոր. 4:7-12; 6:3-10; 11:24-28): Պողոսը պարզապես չգիտեր իր մահվան ժամանակը կամ հանգամանքները: Նա կարող էր մտածել կամ հույս ունենալ, որ նա կենդանի կլինի, երբ Քրիստոսը վերադառնա (տես 1 Կոր. 15:51-52; Փիլ. 3:20; 1 Թեա. 4:15,17): Սակայն, այլ հատվածներում, նա ակնկալում էր, որ նա հարություն կառնի մեռելներից (տես 1 Կոր. 6:14; 2 Կոր. 4:14, լավ քննարկման համար տես F. F. Bruce's *Answers to Questions*, էջ 200-201): Քրիստոսի գալստյան ժամանակ ողջ լինելու հույսը յուրաքանչյուր հավատացյալ սերնդի հույսն է , սակայն իրականություն է միայն մեկ հավածվող սերնդի համար:
- **«վրան»** Սա մարդկային անցողիկ մարմնի (այսինքն՝ խոտ, խեցեղեն) համար մի քանի աստվածաշնչյան փոխաբերություններից է: Պողոսը գիտեր, որ իր մարմինը քանդվում է, ծերանում է: Նա փորձել է շատ վերանորոգել հին վրանը:

Արևելահայերեն **«քանդվի»**
 Արևմտահայերեն **«քակուի»**

NASB, TEV **«կործանվի»**
 NKJV, NRSV, Peshitta **«ոչնչացվել է»**
 NJB **«ծաված է»**

Սա աօրիստ կրավորական ստորադասական է: Պողոսը գիտեր, որ կյանքն ու մահը Աստծո ձեռքում էին (այսինքն, կրավորական սեռ): Նա գիտեր, որ մահանալու է, բայց նա չգիտեր, թե երբ է ինչպես (այսինքն, ստորադասական եղանակ):

Այս տերմինը ունի լայն իմաստաբանական դաշտ: Հին Կտակարանում և Նոր Կտակարանում *kataluma* օգտագործվել է բնակավայրի համար և *kataluō* ապրելու կամ բնակվելու կամ հանգստանալու վայրի համար: Այնուամենայնիվ, այն նաև ոչնչացման օգտագործումն է կամ ինչ-որ

մի բանի վերացումը (որը *luō*-ի փոխաբերական ընդլայնումն է, այսինքն, կորցնել, Մաթ. 24:2): Ես. 38:12 այն օգտագործվում է վրանը հանելու համար: Սա, կարծես, Պողոսի կիրառման ամենալավ գուգահեռն է այստեղ:

- **«Աստուածանից մի շինուածք ունինք»** Սա մշտական կառույց է (տես Հովհ. 14:2-3; Եբ. 11:10), համեմատած փոփոխական, ժամանակավոր վրանի հետ (տես Եբ. 11:9): Սա ներկա ժամանակ է: Պողոսը պատմում է մարգարեական ճշմարտության մասին, որը կարծես իրական իրողություն է:

- **«անձեռագործ մի տուն»** Մեր նոր մարմինները հոգևոր կլինեն (տես 1 Կոր. 15:35-49), ինչպես Հիսուսինը (տես Մարկ. 14:58; 1 Հովհ. 3:2):

- **«յալիտենական է երկինքումը»** Սա ուղղված է Աստծո բնակավայրին: «Երկինք» տերմինը հոգնակի է, քանի որ ռաբբիները բանավիճում էին թե քանի «երկինք» կա: Ծննդոց 1-ում երկինք տերմինը վերաբերում է երկրի վրա գտնվող մթնոլորտին: Այսպիսով, ռաբբիներն օգտագործեցին աստվածային թվաբանության վերաբերյալ իրենց գիտելիքները՝ հաստատելու երրորդ կամ յոթերորդ երկինքը, որպես մի վայր, որտեղ Աստված է բնակվում: Տես Հատուկ Թեմա՝ Երկինքներ 2 Կոր. 12:2-ում:

Երկինքը ոչ ինչ-որ մի տեղ վերևում է կամ ինչ-որ տեղից դուրս է: Դա, հավանաբար, մեկ այլ հարթություն է, առանց ժամանակի և տարածության: Հիսուսը կարողացավ հարությունից հետո հայտնվել և անհետանալ, ինչպես նաև տեղից տեղ շարժվել: Երբ ֆիզիկական տիեզերքի չափը հասկանալի է, հոգևոր թագավորության հանճարեղությունը ցնցող է:

5:2 «տրանում» Սա չեզոք սեռ է, որը վերաբերում է «տուն»-ին 2 Կոր. 5:1:

- **«հառաչում ենք»** Այս բառը ներկա ներգործական սահմանական է, հավատացյալները շարունակում են խորապես հառաչել Աստծո նոր կարգի և մեր նոր հոգևոր մարմինների համար (տես Հռ. 8:18-27; ստեղծագործական հառաչանքներ, 2 Կոր. 5:22; հավատացյալի հառաչանքը, 2 Կոր. 5:23; և Հոգու հառաչանքները, 2 Կոր. 5:26):

- **«ցանկանալով»** Սա ցանկության ուժեղ տերմին է (տես՝ 2 Կոր. 9:14): Գոյականի ձևը գտնվում է 2 Կոր. 7:7 և 11-ում է: Պողոսը ուժեղ զգացմունքների տեր մարդ էր:

5:3-4 «հագնենք» Պողոսը հաճախ օգտագործում է հագնվել տերմինը, որպես հոգևոր կյանքի փոխաբերություն: Հագուստը վերաբերում էր այստեղ ներքին կամ վրայի վերնաշապիկին (*ependutēs*, տես Հովհ. 21:7): Նա օգտագործում է հագնել տերմինը որպես մարդկային կյանքի ընտրություն: Կա հորդոր հավատացյալներին հանել հին կյանքը և մի կողմ դնել այդ հագուստը (տես 2 Կոր. 3:8,9; Եփ. 4:22,25,31; Հակ. 1:21; 1 Պետ. 2:1): Նրանք պետք է հագնեն Քրիստոսին (տես 2 Կոր. 3:10,12,14; Եփ. 4:24; Հռ. 13:14; Գաղ. 3:27): Այս հավատացյալները ժամանակին կառավարվում և գերակշռում էին իրենց չար ցանկությունների մեջ, բայց հիմա Քրիստոսի միջոցով նրանք կարող են դարձի գալ դրանցից (այսինքն Հռ. 5-6): Քրիստոսի վրա հիմնված այս տերմինաբանությունը կարող էր նույնիսկ կապված լինել վաղ եկեղեցու մկրտության արարողության հետ, որտեղ մկրտությունից հետո նոր ապաշխարածները մաքուր, սպիտակ հագուստ էին կրում: Պողոսը չէր ցանկանում ապրել մահվան և հարության միջև, այլ ցանկանում էր մասնակցել Երկրորդ Գալստյան հետ կապված իրադարձություններին (տես 1 Թեա. 4:15-17), որոնցից մեկը նոր հոգևոր մարմինն է:

Անմարմին կարգավիճակի աստվածաբանական գաղափարը հատուկ չի հաստատվում Սուրբ Գրքում, քանի որ գաղափարը օգտագործվել է հունական փիլիսոփայության մեջ՝ որպես մշտական վիճակ, որն ավելի լավ էր ֆիզիկական մարմնավորումից: *Word Pictures in the New Testament* A. T. Robertson աում է, որ «Պողոսը չի ցանկանում իր հոգևոր հագուստով սոսկ անմարմին

հոգի լինել» (հատոր 4, էջ 228): Ստորև բերված է իմ համառոտ մեկնաբանությունը, հատոր 7, 1 ԹԵԱ. 4:16 (տես www.freebiblecommentary.org).

«Եվ մահացածները Քրիստոսով հարություն կառնեն»: Այս արտահայտությունը խառնաշփոթ է առաջացնում այն մասին, թե որտեղ են մահացածները գնում մահվան և հարության օրերին: Այս համարը ենթադրում է, որ նրանք կմնան գերեզմանում (տես Մաթ. 27: 52-53):

Սակայն, 2 Կոր. 5:8-ը ենթադրում է, որ նրանք Տիրոջ հետ են: Այդ լուծումը կարող է լինել անմարմին կարգավիճակը մեկնաբանելու մեջ: Ֆիզիկական մարմինը մնում է գերեզմանում, կյանքը շարունակվում է Տիրոջ մոտ: Այստեղ շատ անպատասխան հարցեր կան: Աստվածաշունչը այս թեմայի վերաբերյալ հստակ ուսուցողական հատված չի տրամադրում:

Շատ թարգմանություններ թարգմանում են սա կարծես սուրբերը Աստծո/Հիսուսի հետ են և վերադառնում են Նրա հետ (տես NASB): Մեկ այլ տեսակետ հայտնվում է TEV-ում, «Նրանք, ովքեր մահացել են Քրիստոսին հավատալով, առաջինը հարություն կառնեն»:

5:3 3-րդ համարը, հավանաբար, միջանկյալ նախադասություն է: Դժվար է ճշմարտապես իմանալ, թե Պողոսն ինչ է ասում, որովհետև

1. տեքստը խառնում է փոխաբերությունները
2. անորոշությունը, թե ինչպես է «մերկը» կապնվում «հագնելուն»
3. կոնտեքստային հարաբերություն Առաքելական տանջանքներին (մահ) կամ ընդդիմությանը (կեղծ ուսմունքներ)
4. կա նաև տեքստային տարբերակի հավելյալ խնդիր: Լավագույն տեքստային վկայությունը հետևում է *eudusameno* («հանել», այսինքն, MSS P⁴⁶, D, C, B, x²), բայց շատ նման տերմին *ekdusameno* («հագնել», այսինքն, MS D⁸) դառնում է ավելի իմաստով այս կոնտեքստում: Եթե մեկը ընտրի տեքստային քննադատության չափանիշներով
ա. հին հունարեն ձեռագրերը ավելի լավ են
բ. առավել անսովոր տեքստը հավանաբար բնօրինակն է

Այնուհետև Պողոսը գրել է տաուտոլոգիա (այսինքն՝ «հանեք...մերկությունը»): UBS⁴-ը չի կարող որոշել («Գ» վարկանիշ), բայց տեքստում դնում է «հագնել»: The Net Bible նաև նախընտրում է #2 տարբերակը, «հագնել»:

▪ **«մերկ»** Այս բառը հաճախ օգտագործվում է հունարեն գրականության մեջ մահվան ժամանակ նախընտրելի անմարմին կարգավիճակի համար (տես Vincent, *Word Studies*, հատոր 2, էջ 822; Frank Stagg, *New Testament Theology*, էջ 322-324; George E. Ladd, *A Theology of the New Testament*, էջ 552-554): Հույները ցանկանում էին այս սկզբնական ազատության համար դուրս գալ ֆիզիկական մարմնից, սակայն քրիստոնեությունը, ինչպես բողոքախօսը, պնդում է, որ մենք միշտ կունենանք մարմնավոր արտահայտություն (հավատացյալներ և անհավատներ, տես Դան. 12:1-2; Մաթ. 25:46; Հովհ. 5:28-29): Հնարավոր է, Պողոսը կրկին հերքում է կեղծ ուսմունքը (այսինքն, սկզբնական Գնոստիցիզմը):

5:4 Այս կարճ և գաղտնի համարը պետք է մեկնաբանվի Հռ. 8:18-25, 26-30 լույսի ներքո (այսինքն, «հառաչանք») և 1 Կոր. 15:53-54 (այսինքն՝ «մահկանացու», «ընկղմվեց»): Թվում է, թե սա 2-րդ համարի վերաձևակերպումն է:

5:5 «հաջողել» Պողոսը հաճախ օգտագործում է այս բառը 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 4:17; 5:5; 7:10,11; 9:11; 12:12): Մեր կյանքերը չեն վերահսկվում բախտի, հնարավորության, ճակատագրի կողմից, այլ Աստծո կողմից: Նույնիսկ մեր փորձությունները կարող են լինել հասունության և ավելի մեծ հավատքի միջոց (տես Հռ. 8:28-30; Եբ. 5:8):

Հոգուց է տրված

1. նոր դարաշրջանի նշանի սկիզբը
2. անձնական փրկության վկայությունը

3. ծառայության միջոցները
4. հասունության միջոցները
5. երկնքի երաշխավորությունը

Արևելահայերեն «գրա»
Արևմտահայերեն «գրաական»

NASB, NJB, Peshitta, REB «գրավ»
NKJV, NRSV, TEV «երաշխիք»

Գրավի այս գաղափարը Հին Կտակարանյան նախադեպ է ունեցել (հիշեք, Նոր Կտակարանյան գրողները հրեա մտածողներ են, ովքեր գրում են Կոյնե հունարեն):

1. պարտքի մարման խոստումը (տես Ծննդ. 38:17,18,20, 2 Օր. 24:10-13)
2. ապահովություն տրամադրելու խոստումը (տես 1 Թագ. 17:18)
3. անձնական խոստումը (տես 4 Թագ. 18:23, Ես. 36:8)

Այս հունարեն տերմինը վերաբերում է «անկանխատեսելի» կամ վաստակած գումարներին (տես 2 Կոր. 1:22; 5:5): Ժամանակակից հունարենում օգտագործվում է նշանադրության մատանին, որը հանդիսանում է գալիք ամուսնության խոստումը: Հոգին արդարության նոր դարաշրջանի կատարված խոստումն է: Սա Նոր Կտակարանի «արդեն» և «դեռևս» լարվածության մի մասն է, որը երկու հրեական դարաշրջանի համընկնումն է Քրիստոսի երկու Գալուստների պատճառով (տես լավագույն քննարկումը *How to Read the Bible for All Its Worth* by Fee and Stuart, էջ 129-134): Հոգին այն գրավականն է, որն այժմ տրվում է ապագայում կատարվելու համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 5:6-10

Նորա համար ամեն ժամանակ համարձակություն ունինք, եւ գիտենք թէ այս մարմնումը կենալով՝ Տէրիցը օտարանում ենք: ⁷(Որովհետեւ հաւատքով ենք գնում, եւ ոչ թէ երեւոյթով): ⁸Բայց վստահ ենք եւ աւելի ընտրում ենք այս մարմնիցը դուրս գնալ եւ Տիրոջ մօտ մտնել: Նորա համար էլ ջանք ենք անում, որ թէ կենանք եւ թէ դուրս գնանք՝ հաճոյ լինենք նորան: ¹⁰Որովհետեւ մենք ամենս պէտք է յայտնի լինենք Քրիստոսի ատենի առաջին. որ ամեն մէկն ընդունի իր մարմնովն ինչ որ գործեց թէ բարի, եւ թէ չար:

5:6

Արևելահայերեն «համարձակություն»
Արևմտահայերեն «վստահություն»

NASB «լավ քաջություն»
NKJV, NRSV «վստահ»
TEV «քաջությունով լի»
NJB «վստահությամբ լի»

Այս տերմինը մի քանի անգամ օգտագործվում է 2 Կորնթացիսում երկու իմաստներով՝

1. վստահություն, ուրախություն (տես 2 Կոր. 5:6,8; 7:16)
2. համարձակություն (տես 2 Կոր. 10:1,2)

Մեր շարունակական վստահությունը (այսինքն, ներկա ներգործական դերբայ) Քրիստոսում մեզ համարձակություն է տալիս աղոթքի և ծառայության մեջ:

▪ «կենալով... օտարանում» Սա բառախաղ է այս երկու կապված տերմինների միջև (նաև 2 Կոր. 5:8, 9):

1. *endēmountes*, տանը լինելով (ներկա ներգործական դերբայ)
2. *ekdēmoumen*, մենք տանից հեռու ենք (ներկա ներգործական սահմանական)

Երբ դուք գիտեք, թե ով եք դուք Նրանում, դուք միշտ տանն եք նրա հետ, չնայած երկրի վրա, մենք ապրում ենք հավատքով (տես 7 հ.):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՊՏՆՎՈՒՄ ՄԱՀԱՑԱՄԵՐԸ

SPECIAL TOPIC: Where Are the Dead?

I. Հին Կտակարան

Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (գերեզման, դժոխք) (ստուգաբանությունն անորոշ է, BDB 1066), որը ձև է վկայակոչելու մահը կամ գերեզմանը, հիմնականում Իմաստուն Գրականության և Եսայի մեջ: ՀԿ-ում դա եղել է ստվերոտ, գիտակից, բայց տրտում վայր (տես Հոբ 10:21-22; 38:17. Սաղ. 107: 10,14):

Բ. *Sheol* -ը բնութագրվում է

1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ) 2 Օր. 32:22
2. կապված պատժի հետ, նույնիսկ մինչև Դատաստանի Օրը, Սաղ. 18: 4-5
3. կապված *abaddon* (կործանում), որի մեջ Աստված նույնպես ներկա է, Հոբ 26: 6; Սաղ. 139: 8; Ամովս 9: 2
4. կապված է «Pit»-ի հետ (գերեզման), Սաղ.16:10; Ես. 14:15; Եզեկ. 31:15-17
5. ամբարիշտը ողջ-ողջ իջնում է *Sheol*, Թվ. 16: 30,33; Սաղ. 55:15
6. հաճախ անձնավորվում է որպես մեծ բերանով կենդանի, Թվ. 16:30. Ես. 5:14; 14:9; Ամբ. 2: 5
7. այնտեղ մարդիկ կոչվում են *Repha'im*, Ես. 14: 9-11)

II. Նոր Կտակարան

Ա. Եբրայերեն *Sheol* թարգմանվում է հունարեն *Hades* (անտեսանելի աշխարհ)

Բ. *Hades* բնութագրվում է

1. վերաբերում է մահվանը, Մաթ. 16:18
2. կապված է մահվան հետ, Հայտ. 1:18; 6: 8; 20: 13-14
3. հաճախ համանման է մշտական պատժի վայրին (*Gehenna* Գեհեն), Մատթ. 11:23 (ՀԿ մեջբերում); Ղուկ.10:15; 16: 23-24
4. հաճախ համանման է գերեզմանին, Ղուկ. 16:23

Գ. Հնարավոր բաժանում (ռաբբիական)

1. արդարների մասը կոչվում է դրախտ (իսկապես երկնքի մեկ այլ անուն, տես 2 Կոր. 12: 4, Հայտ. 2: 7), Ղուկ. 23:43
2. ամբարիշտների մասը կոչվում է *Tartarus* տարտարոս, 2 Պետ. 2: 4, որտեղ պահվում են չար հրեշտակները (տես Ծննդոց 6; 1 Ենոք)

Դ. *Gehenna* Գեհեն

1. Արտացոլում է Հին Կտակարանյան արտահայտությունը «Հիննումի որդիների հովիտ», (Երուսաղեմից հարավ): Այն տեղը էր, որտեղ փյունիկիան կրակի աստվածը՝ Մոլոքին (*Molech* BDB 574) պաշտում էին երեխայի զոհաբերությամբ (տես 3 Թագ. 16: 3, 21: 6, 2 Մնաց. 28: 3, 33: 6), որն անթույլատրելի էր Ղև. 18:21; 20: 2-5.
2. Երեմիան այն փոխեց հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵ-ի դատաստանի վայրի (տես Երեմ. 7:32, 19: 6-7): Այն դարձավ կրակի, հավիտենական դատաստանի վայր I Ենոք 90: 26-27 և Սիբ. 1: 103.
3. Հիսուսի օրերում հրեաներն այնքան էին ցնցված իրենց նախնիների երեխայի

գոհաբերության հեթանոսական պաշտամունքից, որ նրանք այս տարածքը վերածեցին աղբանոցի Երուսաղեմի համար: Հիսուսի փոխաբերություններից շատերը հավիտենական դատաստանի մասին եկել է այս աղբանոցից (կրակ, ծուխ, որդեր, զարշահոտություն, տես Մարկ. 9: 44,46): Գեհեն տերմինը օգտագործվում է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ. 3: 6):

4. Հիսուսը օգտագործում է գեհենը
 - ա. կրակ, Մատթ. 5:22; 18: 9; Մարկ. 9:43
 - բ. մշտական, Մարկ. 9:48 (Մատթ. 25:46):
 - գ. Կորնթուսյան, ոչնչացման վայր (և հոգի և մարմինը), Մատթ. 10:28
 - դ. զուգահեռ է *Sheol* -ին, Մատթ. 5: 29-30; 18: 9
 - ե. ամբարիշտները բնութագրվում են որպես «գեհենի որդիք», Մատթ. 23:15
 - զ. դատական մեղադրանքի արդյունք, Մատթ. 23:33; Ղուկ.12: 5
 - է. Գեհենի գաղափարը զուգահեռ է երկրորդ մահվանը (տես Հայտ. 2:11, 20: 6,14) կամ կրակե լիճը (տես Մատթ. 13: 42,50; Հայտ. 19:20; 20:10, 14-15, 21:8): Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց մշտական բնակության վայրը (*Sheol*) և չար հրեշտակների (*Tartarus*, 2 Պետ. 2: 4, Հուդա հ. 6 կամ անդունդը, տես Ղուկ. 8:31; Հայտ. 9 : 1-11, 20: 1,3):
 - ը. դա նախատեսված չէր մարդկանց համար, այլ սատանայի և նրա հրեշտակների, Մատթ. 25:41
- Ե. Հնարավոր է, քանի որ համընկնում են *Sheol*, *Hades* և *Gehenna*, որ
 1. ի սկզբանե բոլոր մարդիկ գնում էին *Sheol/Hades*
 2. նրանց փորձառությունը (լավ / վատ) խորանում է Դատաստանի Օրից հետո, սակայն ամբարիշտների տեղը մնում է նույնը (սա է պատճառը, որ KJV թարգմանված *hades* (գերեզման) որպես *gehenna* (դժոխք):
 3. միակ նորկտակարանյան տեքստը, որը նշում է տանջանքի մասին մինչև Դատաստանը, դա հետևյալ առակն է Ղուկ. 16:19-31 (Ղազարոսը և հարուստ մարդը): *Sheol* նաև նկարագրվում է որպես պատժի վայր հիմա (տես 2 Օր. 32:22, Սաղ. 18: 1-5): Սակայն, չի կարելի հաստատել վարդապետություն առակի հիման վրա:

III. Միջանկյալ վիճակ մահվան և հարության միջև

- Ա. ՆԿ չի սովորեցնում «հոգու անմահություն», որը հանդիսանում է կյանքից հետո մի քանի հնագույն տեսակետներից մեկը:
 1. մարդկային հոգիները գոյություն ունեն մինչև իրենց ֆիզիկական կյանքը
 2. մարդկային հոգիները հավիտենական են ֆիզիկական մահից առաջ և հետո
 3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտվում է որպես բանտ ու մահ, որը ազատ է արձակվում նախագոյության վիճակին
- Բ. ՆԿ ակնարկում է անմարմին վիճակը մահվան և հարության միջև
 1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանության մասին, Մատթ. 10:28
 2. Աբրահամը կարող է ունենալ մարմին հիմա, Մարկ. 12: 26-27; Ղուկ. 16:23
 3. Մովսեսն ու Եղիան ունեն ֆիզիկական մարմին այլակերպության ժամանակ, Մաթ. 17
 4. Պողոսը պնդում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսին միացող հոգիները նախ կստանան իրենց նոր մարմինները 1 Թես. 4: 13-18
 5. Պողոսը պնդում է, որ հավատացյալները կստանան իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, 1 Կոր. 15: 23,52
 6. Պողոսը պնդում է, որ հավատացյալները չեն գնա *Hades*, բայց մահվան ժամանակ կլինեն Հիսուսի հետ, 2 Կոր. 5:6,8; Փիլ. 1:23. Հիսուսը հաղթել է մահին և

արդարներին Իր հետ երկինք տարել, 1 Պետ. 3: 18-22.

IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում օգտագործվում է երեք իմաստներով,

1. երկրից վեր մթնոլորտը, Ծննդ. 1: 1,8; Ես. 42: 5; 45:18
2. աստղազարդ երկինքը, Ծննդ. 1:14; 2 Օր. 10:14. Սաղ. 148: 4. Եբր. 4:14; 7:26
3. Աստծո գահի տեղը, 2 Օր. 10:14; 3 Թագ. 8:27; Սաղ. 148: Եփ. 4:10; Եբր. 9:24 (երրորդ երկինքը, 2 Կոր. 12: 2)

Բ. Աստվածաշունչը շատ բան չի բացահայտում հանդերձյալ կյանքի մասին, հավանաբար այն պատճառով, որ մեղավոր մարդկությունը անկարող է դա հասկանալ (տես 1 Կոր. 2: 9):

Գ. Երկինքը թե վայր է (տես Հովհ. 14: 2-3) և թե անձ (տես 2 Կոր. 5: 6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդ. 1-2; Հայտ. 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես Գործք 3:21; Հռոմ. 8:21; 2 Պետ. 3:10): Աստծո պատկերը (Ծննդ. 1: 26-27) վերականգնվել է Քրիստոսով: Այժմ Եդեմի պարտեզում մտերմիկ հարաբերությունը նորից հնարավոր է դարձել:

Այնուամենայնիվ, դա կարող է լինել փոխաբերական (երկինքը որպես մեծ, քառակուսի քաղաք Հայտ. 21: 9-27) և ոչ բառացի: 1 Կորնթացիս 15 նկարագրում է ֆիզիկական մարմնի և հոգևոր մարմնի տարբերությունը, ինչպես հասուն բույսի սերմ: Կրկին 1 Կոր. 2: 9 (մեջբերում Ես. 64: 4 և 65:17) մեծ խոստում է և հույս: Ես գիտեմ, որ երբ մենք տեսնենք Նրան, Նրան նման կլինենք (տես 1 Հովհ. 3: 2):

V. Օգտակար ռեսուրսներ

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter*

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door*

5:7 «Որովհետև հավատքով ենք գնում, եւ ոչ թէ երեւոյթով» Սա Նոր Կտակարանի հերթական թեման է (տես 2 Կոր. 4:18; Եբ. 11:1,10,27; 1 Պետ. 1:8): «Գնալ»-ը աստվածաշնչային փոխաբերություն է ապրելակերպի համար: Հավատացյալները ապրում են ֆիզիկական թագավորությունում, բայց հավատքով հասկանում և վստահում են անտեսանելի թագավորությանը:

5:8 Սա հրաշալի համար է քրիստոնյաների համար: Այն պնդում է, որ մենք որոշ իմաստով Տիրոջ հետ կլինենք մահվան ժամանակ: Սա հերքում է հոգու քնի գաղափարը: Թեև մեր հաղորդակցությունը այլ հավատացյալների հետ անորոշ է այս փուլում, և Տիրոջ հետ մեր հաղորդակցությունն ամենը չէ, դա կլինի այն բանից հետո, երբ մենք ստանանք նոր մարմիններ Հարության օրը, և մեծ վստահությունն այն է, որ մենք նրա հետ կլինենք: Այս ճշմարտությունը հստակ չի ուսուցանվում Աստվածաշնչի այլ համարներում, բացի Փիլ. 1:21-23, որը շատ էական նշանակություն ունի այս համարի համար: Այս ճշմարտության լույսի ներքո Պողոսն ու բոլոր հավատացյալները կարող են դիմակայել կյանքի ցանկացած իրավիճակում:

5:9 «Նորա համար էլ ջանք ենք անում...հաճոյ լինենք նորան» Սա ջանք ու շարժառիթ է հավատացյալների համար (տես Եփ. 5:8-10; Կող. 1:10):

«Լավ հաճելի» տերմինը հայտնաբերվել է մի քանի արձանագրություններում, նույնիսկ Պողոսի օրոք: Դա հավատարմության և նվիրվածության կարգախոսն էր հելլենիստական առաջին դարի մշակութային միջավայրում (տես Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*, էջ 259): Պողոսը հունարեն և եբրայերեն մտքի լավ գիտակից աստվածաբան գիտնական էր:

5:10 «ամենս պէտք է յայտնի լինենք Քրիստոսի ատեանի առաջին» Անմիջական կոնտեքստը գրված է հավատացյալներին; նույնիսկ հավատացյալները կկանգնեն Աստծո առաջ (տես Հռ. 14:10; 1 Կոր.

3:10-17): Ըստ երևույթին մենք դատվելու/վարձատրվելու ենք մեր շարժառիթների, հասանելիության և հոգևոր պարզների օգտագործման համար: Մեղքը և մեղքերը լիովին լուծվել են Քրիստոսի փոխարինող մահվան շնորհիվ, բայց աշակերտությունն է խնդիրը:

Հիսուսը որպես Դատավոր գաղափարը, այստեղ համառոտ նշվում է Հովհ. 3:17 իմ մեկնաբանությունից (տես՝ առցանց www.freebiblecommentary.org):

«Հովհաննես Ավետարանում կան մի քանի հատվածներ, որոնք պնդում են, որ Հիսուսը եկավ որպես Փրկիչ, այլ ոչ թե որպես Դատավոր (Հովհ. 3:17-21; 8:15; 12:47): Սակայն Հովհաննեսում այլ հատվածներ կան, որ պնդում են, որ Հիսուսը եկավ դատելու և կդատի (տես Հովհ. 5:22-23,27; 9:39; և Նոր Կտակարանի մյուս մասերում, Գործք 10:42; 17:31; 2 Տիմ. 4:1; 1 Պետ. 4:5):

Որոշ աստվածաբանական մեկնաբանություններ հերթականությամբ են՝ 1) Աստված տվեց դատաստանի գործը Հիսուսին, ինչպես Նա արեց ստեղծագործության և փրկության գործը՝ որպես պատվի նշան (տես Հովհ. 5:23); 2) Հիսուսն առաջին անգամ չէր եկել դատելու, այլ փրկելու (տես Հովհ. 3:17), այլ այն փաստով, որ մարդիկ մերժում են Նրան, նրանք դատում են իրենք իրենց; 3) Հիսուսը կվերադառնա որպես Թագավորաց Թագավոր և Դատավոր (տես Հովհ. 9:39):

Այդ թվացյալ հակասական հայտարարությունները նման են Հովհաննես Մկրտչի մասին՝ Եղիայի լինելու կամ չլինելու մասին հայտարարություններին»:

- **«ինչ որ գործեց՝ թե բարի, եւ թե չար»** Սա համընդհանուր սկզբունք է, որ մարդիկ պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների համար և հաշվետու են Աստծուն (տես Հոբ 34:11; Առ. 24:12; Ժող. 12:14; Եր. 17:10; 32:19; Մաթ. 16:27; 25:31-46; Հռ. 2:6; 14:12; 1 Կոր. 3:8; Գաղ. 6:7-10; 2 Տիմ. 4:14; 1 Պետ. 1:17; Հայտ. 2:23; 20:12; 22:12): Նույնիսկ հավատացյալները հաշիվ կտան Քրիստոսին՝ իրենց կյանքի և ծառայության համար (այսինքն, «հիշատակաց գիրքը»): Հավատացյալները չեն փրկվում գործերով, այլ մինչև գործերը (տես Եփ. 2:8-10; Հակ. և 1 Հովհ.): Տես Հատուկ Թեմա՝ Քրիստոնեական ազատությունն ընդդեմ քրիստոնեական պատասխանատվության 1 Կոր. 10:23:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 5:11-15
¹¹Արդ Տիրոջ ահաւորութիւնը գիտենալով, մարդկանց համոզում ենք. բայց Աստուծոյ առաջին յայտնի ենք. Եւ ես յոյս ունիմ՝ որ ձեր խղճմտանքումն էլ յայտնի ենք: ¹²Ոչ թէ դարձեալ մեր անձերը ձեզ յանձնարարում ենք. այլ պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ համար պարծենալու, որ մի բան ունենաք նորանց դէմ, որ պարծենում են աչքի առաջին եւ ոչ թէ սրտով: ¹³Որովհետեւ եթէ գծուած ենք՝ Աստուծոյ համար է. Եւ եթէ զգաստ ենք՝ ձեզ համար է: ¹⁴Վասնզի Քրիստոսի սէրը ստիպում է մեզ՝ որ սա ենք միտք անում, թէ եթէ մէկն ամենի տեղ մեռաւ, ուրեմն ամենը մեռած են. ¹⁵Եւ ամենի համար մեռաւ, որ կենդանի լինողները այլ եւս ոչ թէ իրանց անձերի համար կենդանի լինեն, այլ նորա համար՝ որ իրանց համար մեռաւ, եւ յարութիւն առաւ:

5:11 «Տիրոջ ահաւորութիւնը» Այս արտահայտությունը վերաբերում է Քրիստոսի աստեանին, որը նշված է 2 Կոր. 5:10: Կա հարգանք և վախ (տես Գործք 5:11; 9:31), տիեզերքի կենդանի Դատավորի հանդեպ (տես Եր. 10:31; 12:29; Հուդա 22-23): Հավատացյալները դրոշմված են ապրելու աստվածային կյանքեր և կիսելու ավետարանը այն գիտելիքով, որով յուրաքանչյուրը հաշիվ կտա Աստծուն:

«Տեր» կոչումը կարող է վերաբերել ՅԱՀՎԵԻՆ կամ Հիսուսին: «Տիրոջ ահավորությունը» արտահայտությունը հատուկ է Մեպտուազինդին, վերաբերելով ՅԱՀՎԵԻՆ: Այնուամենայնիվ, դա նաև հատուկ Նոր Կտակարանյան կոչում է, որը պատկանում է ՅԱՀՎԵԻՆ, սակայն Նա այն նվիրեց իր մարմնացյալ Որդուն:

- **«մարդկանց համոզում ենք»** Գոնտեքստում դա կարող է վերաբերել մարդկանց մի քանի կոնկրետ խմբերին՝

1. անհավատներ (տես 2 Կոր. 5:10)
2. կեղծ ուսուցիչներ (տես 2 Կոր. 5:12)
3. սկար հավատացյալներ (տես 2 Կոր. 5:11-12)

Պողոսի ծառայությունը կատարեց Մեծ Պատվիրանը ինչպես ավետարանչության մեջ (տես Մաթ. 28:19), այնպես էլ աշակերտության մեջ (տես Մաթ. 28:20):

- **«Աստուծոյ առաջին յայտնի ենք»** Սա վաղակատար կրավորական սահմանական է: Պողոսը համարձակորեն պնդում է, որ Աստված լիովին և ամբողջովին գիտի իր դրդապատճառները և մտադրությունները (տես 2 Կոր. 4:2) Տես ծանոթագրություն 2 Կոր. 2:14:
- **«մենք նաև դրսևորվեցինք ձեր խղճի մեջ»:** Սա վաղակատար կրավորական ինֆինիտիվ է: Պողոսը վերադառնում է 2 Կոր. 4:2 արտահայտված նախորդ մտքին: Նրա ծառայությունը նրանց հետ լիովին բաց էր և ազնիվ: Պողոսը ցանկանում էր, որ այս եկեղեցին հասկանա իր ծառայության դրդապատճառներն ու գործողությունները, ինչպես հստակ էր, որ Աստված գիտեր նրանց:
- **«խղճմտանքումն»** Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:12:

5:12 «մեր անձերը ձեզ յանձնարարում ենք» Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 3:1:

- **«որ մի բան ունենաք նորանց դեմ, որ պարծենում են աչքի առաջին եւ ոչ թե սրտով»** Ծառայության դրդապատճառները և մեթոդները շատ կարևոր են: Ըստ երևույթին, Պողոսը համեմատում է իրեն Կորնթոսի եկեղեցու մյուս առաջնորդների հետ (տես 2 Կոր. 4:2; տես նաև 1 Կոր. 3:10-15): Որոշ ղեկավարներ բոլորը ցուցադրական էին և ոչ մի իրականություն չկար նրանց մեջ:
- **«պարծենալու...պարծենում են»** Սրանք *kauchēma* բառի երկու ձևերն են: Կա համապատասխան պարծանք (այսինքն, եկեղեցին Պողոսի հպարտությունն է) և անպարկեշտ հպարտություն (այսինքն, կեղծ ուսուցիչների պարծենալը): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊԱՐԾԵՆԱԼ, 1 Կոր.5:6:
- **«աչքի առաջին»** Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:11-ում:

5:13 «եթե ... եթե» Սրանք երկուսն էլ առաջին կարգի պայմանական նախադասություններ են, ենթադրում են ճշմարտություն, որոնք հեղինակային տեսանկյունից են կամ իր գրական նպատակների համար:

Արևելահայերեն «գժուած ենք»
Արևմտահայերեն «խենդեցած ենք»

NASB, NKJV, NRSV «մեզանից բացի»
TEV «խկապես խելագար»
NJB «անխոհեմ»

Սա հունարեն «կանգնել» տերմինն է (*histēmi*, տես Հատուկ Թեմա: Կանգնել, 1 Կոր. 15:1) «ինչ-որ մի բանից դուրս» (*ek*) նախդիրով: Այն կարող է օգտագործվել

1. զարմանք (տես Մաթ. 12:23; Մարկ. 5:42)
2. վախ (տես Մարկ 16:8; Ղուկ. 5:26)
3. տրանս (տես Գործք 10:10; 11:5; 22:17)
4. զգայարանների կորուստ կամ խելագարություն (տես Մարկ. 3:21; 2 Կոր. 5:13)

Դժվար է ստույգ իմանալ, թե ինչ է դիմում Պողոսը: Շատ մեկնաբաններ վերագրում են այն 11:1,16; 12:11: Այնուամենայնիվ, տարբերվող բառ է օգտագործվում «հիմար»: Այս գլուխներում Պողոսը համեմատում է իր հոգևոր փորձառությունն ու որակները խարիզմատիկ կեղծ ուսուցիչների հետ: Հնարավոր է, սա մի մեկնաբանություն է, որ այս կեղծ ուսուցիչները վերաբերել են Պողոսին:

▪ **«Եւ եթէ զգաստ ենք՝ ձեզ համար է»** Պողոսն անշուշտ ունեցել է իր հոգևոր էքստազի պահերը (տես Գործք 9; 1 Կոր. 14:5,18; 2 Կոր. 12), սակայն ծառայության համար նա ապրել և ներկայացրել է ավետարանը հստակությամբ և խոհեմությամբ, համաձայն այն խմբի մշակութային ակնկալիքների, որին նա ծառայում էր (տես 1 Կոր. 9:19-23):

5:14 «Վասնզի Քրիստոսի սերը» Քերականորեն սա «Քրիստոսի սերը մեզ համար» է (այսինքն, ստորադասական սեռական) կամ «մեր սերը Քրիստոսի հանդեպ» (այսինքն, օբյեկտիվ սեռական): Այս կոնտեքստում #1 տարբերակը լավագույնն է:

Արևելահայերեն **«ստիպում է»**
Արևմտահայերեն **«կը ստիպե»**

NASB **«կատավարում է»**
NKJV **«հարկադրում է»**
NRSV **«փափագում է»**
TEV **«կատավարել»**
NJB **«զերակշռում»**

Այս տերմինը նշանակում է «սերտորեն համախմբել մեկտեղ»: Սերը ստիպում է մեր հնարավորություններին և գործողություններին: Ավետարանի մանդատների բնույթը համապատասխան գործողությունն է. այս դեպքում մահը Եսասիրության հավակնությունների և ապրելակերպի համար է:

▪ **«մեկն ամենի տեղ մեռաւ»** Աստծո համընդհանուր սերը երևում է Քրիստոսի մեջ, քանի որ Նա մահացել է հրեաների և հեթանոսների համար (տես Եփ. 2:11-3:13): Բոլոր մարդիկ կարող են փրկվել Քրիստոսով (տես 2 Կոր. 5:19; Հովհ. 3:16-18; 4:42; Հռ. 5:18; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14): 14-15 համարները զուգահեռ հարաբերություններում են: Քրիստոսի հաղթող քավությունը (տես Ես. 53) շեշտվում է երեք անգամ: Այս նույն ճշմարտությունը արտահայտված է Հռ. 5:12-21: Այն հաճախ կոչվում է Ադամ/Քրիստոս տիպաբանություն (տես 1 Կոր. 15):

▪ **«ուրեմն ամենը մեռած են»** Աստվածաբանորեն հավատացյալները միանում են Քրիստոսին մահանալով, իրենց մկրտության ժամանակ: Նրա մահը տալիս է մեզ թողություն և հավիտենական կյանք (տես Հռ. 6):

Ինչպես մենք նույնանում ենք Նրա մահով, մենք նաև պետք է նույնանանք ուրիշների համար զոհաբերած Նրա կյանքով (տես 1 Հովհ. 3:16): Եսասիրական, ինքնակենտրոն ապրելը պատշաճ չէ արյամբ գնված հավատացյալների համար (տես 2 Կոր. 5:15):

Synonyms of the Old Testament, Robert B. Girdlestone լավ քննարկումներ ունի «մահը» հավատացյալների համար նոր իմաստի հիման վրա:

«Մեր Տերն ասաց Իր աշակերտներին (Մաթ. 16:28), «այստեղ կանգնողներից կան ոմանք, որ մահ չեն ճաշակի, մինչև որ մարդի Որդուն տեսնեն իր թագավորությունովը գալիս»: Բառերը տրվում են տարբեր ձևերով Մուրբ Մարկոսի կողմից (9.1): «Այստեղ կանգնածներիցը կան ոմանք, որ մահ չեն ճաշակի, մինչև որ Աստծո արքայությունը տեսնեն»: Տես նաև Դուկ. 9:27:

Այս հատվածի նպատակն էր նախապատրաստել աշակերտների մտքերը այն մեծ ճշմարտության համար, որ մահը, որը մինչ այժմ աշխարհի ահաբեկչությունն է, ստիպված էր կորցնել իր *համը* կամ *խեղդելու հատկությունը* նրանց, ովքեր միացել են Տիրոջը հավատքով: Քրիստոսն Ինքն էր մեռնելու: Նա պետք է կրեր մահվան ցավերը, Նրա հոգին պետք է չափազանց տխրեր մինչև մահը և ազատեր նրանց, ովքեր մահվան վախի պատճառով իրենց ողջ կյանքը ենթարկել են ստրկության: Նա այդպիսով ներկայացրեց կյանքի և մահվան նոր տեսակետ, պատմելով Իր աշակերտներին, որ նա, ով խնայում է իր կյանքը, ժխտելով Տիրոջը՝ կկորցնի այն, իսկ նա, ով ցանկանում էր կորցնել իր կյանքը Տիրոջ համար, նա կփրկվի: Տերը մեկի համար ամաչելու է Մեծ Օրը, իսկ մի ուրիշին դավանելու է:

Նոր կյանք մտնելը, որը տեղի է ունենում Քրիստոսի հավատքի միջոցով, մեկ այլ իմաստով ներգրավում է մահ: Դա մարդկային բնությանը կտրում է իր հին ռեժիմներից և գոյության սկզբունքներից, այսինքն՝ մեղքի վարձքը մահն է: Ճիշտ այնպես, ինչպես ֆիզիկական մարմինը դադարում է զգալ, սիրտը զարկել, ձեռքերն աշխատել և ոտքերը քայլել, որպեսզի այս խորհրդավոր մահը մարմնին և նրա բոլոր անդամներին այլևս չճառայի մեղքի համար: Նույն խզումը կամ անդունդը պետք է կատարվի քրիստոնյայի և մեղքի միջև, ինչպես գոյություն ունի մահացած մարդու և արտաքին աշխարհի միջև, որտեղ նա ապրում էր, տեղափոխվում և գոյատևում: Այս մահը կապված է Քրիստոսի խաչելության հետ, ով «մահացավ մեղքի համար»: Հավատացյալը մկրտվում է Քրիստոսի մահվան մեջ, նա մահանում է Քրիստոսի հետ, կատարվում է իր մահվան համաձայն, խաչված է Քրիստոսի հետ (Հռ. 6. 5; 2 Կոր. 5.14; Գաղ. 2.19,20; Կող. 2.20; 3.3)" (էջ 285, 286).

5:15 15-րդ համարը զուգահեռ է և սահմանում է 2 Կոր. 5:14: Սա նույնպես կարևոր ճշմարտություն է: Փրկությունը ազատ է, բայց Քրիստոսանման կյանքը գնահատում է այն ամենը, ինչ որ կանք և ունենք (տես Գաղ. 2:20):

Արևելահայերեն «յարութիւն առաւ»
Արևմտահայերեն «յարութիւն առաւ»

NASB, NKJV «հարություն առավ»
NRSV, TEV,
NJB «համբարձվեց»

Սա աօրիստ կրավորական դերբայ է չարտահայտված մասնիկով: Նոր Կտակարանը հաճախ փրկության գործը վերագրում է Երրորդության բոլոր երեք անձանց:

1. Հայր Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռ. 6:4,9; 8:11; 10:9; 1 Կոր. 6:14; 2 Կոր. 4:14; Գաղ. 1:1; Եփ. 1:20; Կող. 2:12; 1 Թես. 1:10)
2. Որդի Աստվածը հարություն տվեց Ինքն իրեն (տես Հովհ. 2:19-22; 10:17-18)
3. Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես Հռ. 8:11)

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 5:16-19
¹⁶Ուրեմն այսուհետեւ մենք ոչ ոքին չ'զփտենք՝ մարմնի կողմանէ. Եւ թէւ Քրիստոսին էլ զփտինք՝ մարմնի կողմանէ, այլ հիմա այլ եւս չ'զփտենք: ¹⁷Ուրեմն եթէ մէկը Քրիստոսումն է՝ նոր ստեղծուած է. հիները անցան, ահա ամեն բան նոր եղաւ: ¹⁸Բայց այն ամենն Աստուածանից է. որ մեզ իրան հետ հաշտեցրեց Յիսուս Քրիստոսի ձեռովը. Եւ մեզ հաշտութեան պաշտօնը տուաւ: ¹⁹Որովհետեւ Աստուած էր Քրիստոսումը որ աշխարհքը հաշտեցրեց իրան հետ, եւ նորանց յանցանքները չ'համարեց նորանց եւ հաշտութեան խօսքը մեր միջումը դրաւ:

5:16 «Ուրեմն այսուհետև» Քրիստոսի կյանքն ու մահը նոր դարաշրջան են սկսել: Ամեն ինչ այլ է Նրա լույսի ներքո (տես Գաղ. 3:28; Կող. 3:11):

Արևելահայերեն «մենք ոչ ոքին չ'գիտենք՝ մարմնի կողմանե»
Արևմտահայերեն «մենք մեկը մարմնով չենք ճանչնար»

NASB «մենք չենք ճանաչում մարմնով»
NKJV «մենք ոչ ոքի չենք համարում մարմնի համաձայն»
NRSV «մենք մարդկային տեսակետից ոչ ոքի չենք համարում»
TEV «այլևս չենք դատում»
NJB «մենք որևէ մեկին չենք համարում մարդկային չափանիշներով»

Սա կարող է արտացոլել 1 Թագ. 16:7; Ես. 11:3; Հովհ. 7:24; 8:15: Հիսուսը փոխել է գնահատման բոլոր բնագավառները: Մարդու չափանիշները այժմ դատաստանի անբավարար միջոցն են (տես Հռ. 3:22; 1 Կոր. 12:13; Գաղ. 3:28; Կող. 3:11): Քրիստոսին ճանաչելը փոխում է մեզ (տես 2 Կոր. 5:17):

Սա կարող է արտացոլել, որ Կորնթոսի եկեղեցու ներսում որոշ մարդիկ փորձել են գնահատել Պողոսին, նրա ավետարանը և նրա ծառայությունը (տես գլուխ 4, 11 և 12):

Այս ամենը չի նշանակում, որ Պողոսը պատմական Հիսուսին համարում է ոչ կարևոր կամ նույնիսկ հակառակը, փառավոր Քրիստոսի հետ: Պողոսը հիշատակում է Հիսուսի երկրային կյանքը, ուսմունքը և փրկագնման գործողությունները (այսինքն, խաչը, հարությունը) հաճախ: Պողոսը վերաբերում է մարդկային գնահատմանը (այսինքն՝ իմանալով մարմնին): Փրկագնումը թույլ է տալիս հավատացյալներին դիտելու ողջ կյանքն ու պատմությունը Քրիստոսի նոր կենտրոնացած լույսի ներքո: Մարդկային պատմությունը վերածվում է փրկության պատմության: Մարդ Հիսուսը դարձավ Մեսիան, խոստացվածը: Նրա կյանքն ու ուսմունքները դառնում են ներշնչված Սուրբ Գիրք: Իսրայելի պատմությունը պետք է վերանայվի Նրա լույսի ներքո:

«Մարմին» տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:26:

5:17 «եթե» Սա մեկ այլ առաջին կարգի պայմանական նախադասություն է, ինչպես 2 Կոր. 5:13 և 16:

▪ **«Քրիստոսումն»** Սա քրիստոնեային նկարագրելու Պողոսի սիրած փոխաբերություններից մեկն է: Այն խոսում է Քրիստոսում մեր դիրքի մասին:

Արևելահայերեն «նոր ստեղծուած է»
Արևմտահայերեն «նոր ստեղծուած մըն է»

NASB «նոր արարած»
NKJV, NRSV,
NJB, NIV, «նոր ստեղծագործություն»
TEV «նորություն»

Պողոսը նաև մարմնավորում է արարչագործությունը Հռ. 8:18-25: Նա բնութագրում է Աստծո նոր ստեղծագործությունը, նոր դարաշրջանը, Հոգու դարաշրջանը 2 Կոր. 5:17 և Գաղ. 6:15: Հավատացյալները պետք է ապրեն նոր դարաշրջանի քաղաքացիների նման (տես Հռ. 6:4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: KTISIS
SPECIAL TOPIC: KTISIS

Այս տերմինը, *ktisis*, Նոր Կտակարանում օգտագործվում է տարբեր իմաստներով: Լուվի և Նիդի բառապաշարը թվարկում է հետևյալ հնարավորությունները:

1. արարչագործություն (ստեղծման գործողությունը, տես Մարկ. 13:19; Հո. 1: 20-22; Եփ. 3: 9)
2. արարած (որը ստեղծվել է կենդանի է, տես Մարկ. 10: 6; Հո. 1:25; 8:39; Կող. 1: 15; 23)
3. տիեզերք (այն ամենը, ինչ ստեղծվել է, տես Մարկ. 13:19; Հո. 8: 20; Եբր. 9: 11)
4. հաստատություն (տես 1 Պետ. 2:13, [42.39])
5. իշխանություն (տես 1 Պետ. 2:13, [# 37.47])

Պողոսը նաև նկարագրում է արարչագործությունը Հո. 8: 18-25: Նա բնութագրում է Աստծո նոր ստեղծագործությունը, նոր դարաշրջանը, Հոգի ժամանակաշրջանը 2 Կոր. 5:17 և Գաղ. 6:15-ում: Հավատացյալները պետք է ապրեն նոր դարաշրջանի քաղաքացիների նման (տես Հո. 6: 4):

▪ **«հիները անցան, ահա ամեն բան նոր եղա»** Նկատի ունենալով բայի ժամանակների նպատակային փոխանակումը՝

1. «հին բաներն անցան» Սա աօրիստ ժամանակ է սահմանական եղանակում հաճախ վերաբերում է անցյալում կատարված գործողությանը: Սա վերաբերում է փոխակերպմանը:
2. «նոր բաները եկան» Սա վաղակատար ժամանակ է, որը վերաբերում է անցյալում կատարված գործողությանը՝ անփոփոխ արդյունքներով: Սա վերաբերում է աշակերտությանը:

Կա հունական ձեռագրի տարբերակ, որն արտացոլում է «բոլոր բաները» վերջնական կետում (այսինքն, MS D²): Այս տեսակ պարզաբանող լրացումը սովորական է ավելի ուշ դպիրների համար: Ամենահին հունարեն ձեռագրերը (այսինքն, MSS P⁴⁶, ա, B, C, D *, F, G) ավարտվում է *kaina* հետ: UBS⁴ տալիս է այս ընթերցանությանը «Ա» վարկանիշ (որոշակի):

Այս «նոր» գաղափարը Հին Կտակարանյան տերմինաբանության մասն է՝ *eschaton* համար: Հին Կտակարանյան մարգարեները խոսեցին այս նոր դարաշրջանի մասին:

1. «նոր բաներ» (տես Ես. 42:9; 43:19; Եր. 31:22)
2. «նոր ուխտ» (տես Եր. 31:31-34)
3. «նոր սիրտ, նոր հոգի» (տես Եզեկ. 11:19; 18:31; 36:26)
4. «նոր անուն» (տես Ես. 62:2; 56:5; 65:15)
5. «նոր երգ» (տես Սաղ. 96:1; Ես. 42:10)
6. «նոր երկինք և նոր երկիր» (տես Ես. 65:17; 66:22)

Այս վախճանաբանական նորը եկել է Հիսուսով, բայց հինը դեռ ներկա էր: Նորը լիովին չի ավարտվել: Հրեական «երկու դարաշրջանների» համընկնումը Հիսուսի երկու Գալուստների միջոցով չէր երևում Հին Կտակարանյան մարգարեություններից, թեև նրանք ցույց էին տալիս, որ Մեսիան ցածր ծառայի տեսքով էր, ինչպես նաև հաղթական արքայական պայմաններում:

5:18 «Բայց այն ամենն Աստուածանից է» Սա Աստծո սերն է, որ ուղարկեց Որդուն աշխարհ (տես Հովհ. 3:16): Փրկությունը լիովին Աստծուց է (տես Հատուկ Թեմա 2 Կոր. 8:16-17, տես Հովհ. 6:44,65; Եփ. 1:4; 2:8-9), սակայն հավատացյալները պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել նոր ուխտին՝ ապաշխարության, հավատքի, հնազանդության և հաստատակամության մեջ:

▪ **«հաշտեցրեց»** Սա մեծ աստվածաբանական ճշմարտություն է: Խոսքը հիմնականում նշանակում է փոխանակել կամ փոփոխվել և դրանով համախմբել այն, ինչ հեռացվել է: Ապստամբ մարդիկ վերադարձել են Քրիստոսի միջոցով Աստծո հետ հաղորդակցվելու: Աստված փոխանակեց Քրիստոսի արդարությունը (տես 2 Կոր. 5:21) իրենց մեղքի համար: Քրիստոսը մահացավ մեր փոխարեն (տես 2 Կոր. 5:14,21):

Այս կոնտեքստը (այսինքն, 2 Կոր. 5:16-21) և Հո. 5:10-11-ը այս աստվածաբանական տերմինի վերջնական հատվածներն են: Մեղք գործողներն այժմ ընկերներ են, նույնիսկ ընտանիք, այն Սուրբի

հետ: Անկման վնասված հարաբերության վերականգնումը (տես Ծննդ. 3) ամբողջությամբ կատարվել է Քրիստոսով:

«Հաշտեցման» քննարկումը, որպես աստվածաբանական գաղափար, Frank Stagg's *New Testament Theology*, էջ 102-104, 142:

▪ **«Եւ մեզ հաշտութեան պաշտօնը տուաւ»** Աստվածաբանութեն սա զուգահեռ է 2 Կոր. 5:14-15-ին: Հիսուսը դարձավ հավատացյալների հաշտությունը, հիմա նրանք պետք է դառնան ուրիշների հետ ավետարանը տարածելու հաշտության միջոց: Հավատացյալները կիսում են Հիսուսի մահը և մենք կիսում ենք Նրա ծառայությունը (տես 2 Կոր. 5:19): Նպատակը Քրիստոսանման ծառայությունն է (տես 1 Հովհ. 3:16): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԾԱՌԱ ԱՌԱՋՆՈՐԴ 1 Կոր. 4:1:

5:19 «Աստուած էր Քրիստոսումը» Դա քրիստոնեության հիմնական խնդիրն է: Արդյո՞ք Աստված (այսինքն, Աստված՝ Հին Կտակարանի ՅԱՀՎԵՆ), Նազովրեցի Հիսուսով, աշխարհը հաշտեցնում է Իրեն հետ (տես Գաղ. 1:3-4): Եթե այո, ապա քրիստոնեությունը ճշմարիտ է, եթե ոչ, ապա դա կեղծ է: Արդյո՞ք Հիսուսը իսկապես Աստծո լիություն է (տես Հովհ. 1:1-14; Կող. 1:15-16; Փիլ. 2:6-11; Եբ. 1:2-3): Իսկապե՞ս Նա միակ ճանապարհն է հաշտության և թողության համար (տես Հովհ. 14:6): Եթե այո, ապա ավետարանը ամենակարևոր տեղեկությունն է, որ մարդիկ երբևէ կլսեն: Մենք պետք է ճշմարտությունն ասենք. մենք պետք է քարոզենք ավետարանը. մենք պետք է մեծարենք Քրիստոսին. մենք պետք է ձրի փրկություն առաջարկենք կորած աշխարհին:

▪ **«աշխարհքը»** Աստված սիրում է աշխարհը (տես Հովհ. 3:16): Աշխարհը կարող է փրկվել (տես 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9): Տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Kosmos*, 1 Կոր. 3:21բ-22:

▪ **«նորանց յանցանքները չ'համարեց նորանց»** Սա կարող է արտացոլել Սաղ. 32:2, որը մեջբերված է Հռ. 4:6-8: Օրենքից առաջ մեղքը չի դրվել անհատների վրա (տես Հռ. 4:15; 5:13-14; Գործք 17:30): Բայց այս տեքստն ավելի մեծ ճշմարտություն ունի: Մարդկային հայտնի ապստամբության դեմ թողություն կա Քրիստոսով: Հիսուսի արյունը մաքրում է բոլոր մեղքերից: Մեղքն այլևս արգելք է Աստծո և մարդկության միջև, բայց հիմա այն

1. անհավատություն է
2. Քրիստոսի հավատքի մերժում
3. անհնազանդություն է Աստծո առաջարկին արձագանքելը

▪ **«չ'համարեց»** Սա *logizomai* տերմինն է, որն օգտագործվում է երեսունչորս անգամ Պողոսի կողմից, սակայն երկու տարբեր իմաստներով: Առաջինը կարելի է տեսնել 2 Կոր. 3:5, «բավական»: Տեսեք ամբողջական գրառումը այնտեղ:

Երկրորդը «համարել» կամ «մեղադրել» է: Այս իմաստը հստակ երևում է Հռ. 4:3,4,5,6,8, 9,10,11,22,23,24 և Գաղ. 3:6: Այս աստվածաբանական օգտագործումը ենթադրում է ինչ-որ բան փոխանցել մեկ ուրիշի բանկային հաշվին:

Աստված մուտքագրում է Հիսուսի արդարությունը մեր հաշվին (տես 2 Կոր. 5:21): Աստված նաև հաշվի չի առնում մեղքը և չի մեղադրում մեզ մեղքի համար: Ինչ հիմանալի է Աստված: Ինչ արդյունավետ է Փրկիչը:

▪ **«հաշտութեան խօսքը մեր միջումը դրաւ»** Կորսված աշխարհը ոչ թե անգոր, անսեր Աստծո շեմին է, այլ անտարբեր, անզգա եկեղեցու շեմին: Մենք ունենք պատգամ. մենք ունենք Թագավորության բանալիները (տես Մատթ. 16:19; Հայտ. 1:18; 3: 7): Մենք ունենք Մուրբ Հոգին (տես Մաթ. 8:9,11; 1 Կոր. 3:16; 6:19; 2 Տիմ. 1:14): Մենք Հիսուսի ընթացքի հերթականությունն ունենք (տես Մաթ. 28:18-20): Ի՞նչ ենք անելու:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 5:20-21

20Արդ՝ Քրիստոսի կողմից պատգամաւորութիւն ենք անում, իբրեւ թէ Աստուած է յորդորում մեզանով. Ադաչում ենք Քրիստոսի տեղ հաշտուեցէք Աստուծոյ հետ: **21**Որովհետեւ Աստուած նորան, որ մեզ չ'գիտէր, մեզ համար մեզ արաւ. որ մենք Աստուծոյ արդարութիւնը լինենք նորանում:

5:20 «Քրիստոսի կողմից պատգամաւորութիւն ենք անում» Ու՞մ են «մենք» և «դուք» բառերը վերաբերում այս համարում: Արդյո՞ք Պողոսը խոսում է եկեղեցու հետ: Եթե այո, ապա «մենք» Պողոսն է և նրա միսիոներական թիւր իսկ «դուք» Կորնթոսի հավատացյալները: Այս մարդիկ կարիք չունեին փրկվելու, բայց նրանք պետք է վերադառնային միասնությանը:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չի ասում, որ հավատացյալները պետք է դեսպաններ լինեն, նրանք արդեն դեսպաններ են: Սա նման է Հիսուսի հայտարարություններին Մարթ. 5:13-16: Հավատացյալներն աղ և լոյս են: Հարցն այն է, թե ինչպիսի աղ և լոյս: Սա է այստեղի հարցը: Հավատացյալները Քրիստոսի ներկայացուցիչներն են, բայց ինչպիսի դեսպաններ են նրանք՝ երկպառակտո՞ղ, հերետիկո՞ւս, անսէ՞ր և այլն:

- **«Ադաչում ենք»** Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:4-11:
- **«հաշտուեցէք Աստուծոյ հետ»** Սա ներկա կրավորական հրամանայական է: Արդյո՞ք սա հրաման է կորսված մարդկանց կամ փրկված մարդկանց: Ավելի լայն կոնտեքստը պահանջում է պատշաճ ապրելակերպ հավատացյալներից: Հիսուսը փրկեց մեզ մեղքից և պայքարից. մենք փրկված ենք ծառայելու համար: Մենք կանչված ենք Քրիստոսի ծառայության, այլ ոչ թե անձնական օրակարգի համար:

Այս կոնտեքստը պատգամ ունի կորսված, կարիքավոր աշխարհի համար. Քրիստոսը մահացավ ձեզ համար (դիրքային արդարություն): Այս կոնտեքստը պատգամ ունի երկպառակտող, անսէր եկեղեցում համար. Քրիստոսը մահացավ ձեզ համար (առաջադեմ արդարություն):

Կրավորական սեռը կարող էր թարգմանվել այսպես՝ «թող Աստված հաշտեցնի քեզ Ինքն Իրեն», «թույլ տվեք հաշտվել» (տես *The Jerome Biblical Commentary*, էջ 281), կամ «թող Աստված քեզ թշնամիներից իր ընկերները դարձնի» (տես TEV): Հավատացյալները հռչակում են ճշմարտությունը, Հոգին դատապարտում է կորսվածին, Որդին տալիս է միջոցները, իսկ Հայրը կատարում է Իր կամքը նոր Ուխտի պատասխանի միջոցով:

5:21 Այս տեքստը մի քանի մեծ ճշմարտություններ ունի:

1. Աստված ուղարկեց Հիսուսին, մեզ համար մեռնելու (տես Հովհ. 3:16): Հիսուսը եկավ մեզ համար մեռնելու (տես Մարկ. 10:45):
2. Հիսուսը մեզ չգիտեր (տես Հովհ. 8:46; Եբ. 4:15; 7:26; 1 Պետ. 1:19; 2:22; 1 Հովհ. 3:5):
3. Նպատակն անձնական արդարությունն է, ծառայելով Քրիստոսանմանությամբ (տես Հո. 8:28-29; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1:4; 1 Թես. 3:13; 4:3; 1 Պետ. 1:15): Այնուամենայնիվ, առկա է պայմանական նշան (ստորադասական եղանակ): Բոլոր հավատացյալները լիովին չեն հասկանում Աստծո ամբողջական նպատակը փրկության մեջ: Դա կոչ է ծառայելու, կոչ՝ ինքնակառավարման ժխտման, կոչ՝ սրբության: Քրիստոնեությունը միայն սկսվում է այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը վստահում է Քրիստոսին: Հավատքը երկար ճանապարհորդության միայն առաջին քայլն է:

Արևելահայերեն «մեզ համար մեզ արաւ»

Արևմտահայերեն «մեզի համար մեղաւոր սեպեց»

NASB «մեզ գործեց մեզ համար»

NKJV «մեղք գործեց մեզ համար»

NRSV «մեղք գործեց»

TEV «կիսեց մեր մեղքը»

NJB «մեղքի հաղթող»

Ինչպես Աստված Հիսուսին մեղավոր դարձրեց: Մա կարող է հանդիսանալ Հին Կտակարանյան ակնարկ մեղքի ընծա բերելուն (տես Ես. 53, Հո. 8:3): Աստված առաջարկեց Հիսուսին որպես անմեղ գառ (տես Հովհ. 1:29,36):

Կարծում եմ, Հիսուսի խաչի վրայի խոսքերը, «Իմ Աստված, իմ Աստված, ինչո՞ւ թողեցիր ինձ» (տես Մարկ. 15:34), որը մեջբերում է Սաղ. 22-ից, արտացոլում է Հորը՝ Որդուց երեսը թեքելու հոգևոր իրականությունը, (այսինքն, խորհրդանշում է խավարը, տես Մարկ. 15:33), քանի որ Նա Իր վրա կրեց աշխարհի մեղքը: Մա աստվածաբանորեն զուգահեռ է Գաղ. 3:13, «մեզ համար անիծվեց»:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Մա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Արդյո՞ք այս գլուխն ուսուցանում է մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածը:
2. Արդյո՞ք 2 Կոր. 5:10 ենթադրում է, որ հավատացյալները նույնպես դատվելու են: Եթե այո, ապա ինչի՞ համար:
3. Թվարկեք Պողոսի երկու ավետարանչական շարժառիթները (2 Կոր. 5:11,14):
4. Բացատրեք, թե ինչու են 14-15 համարները կարևոր քրիստոնեական կյանքի ճիշտ ընկալման համար:

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 6:1-7:1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հաշտության ծառայությունը	Ծառայության նշանները	Հետագա պաշտպանություն Իր հաշտության ծառայության կողմից	Քրիստոսի միջոցով Աստծո հետ բարեկա- մություն	Առաքյալը գործողության մեջ
(5:11-6:13)		(5:11-6:13)	(5:11-6:13)	(5:11-6:10)
5:11-6:10	6:1-10			
	Սուրբ եղեք		6:3-10	Զգուշացում
6:11-13	6:11-7:1	6:11-13	6:11-13	6:11-13
Կենդանի Աստծո տաճարը		Անհավատների հետ հարաբերությունների հստակեցում	Զգուշացեք հեթանոսական ազդեցությունից	
6:14-7:1		6:14-7:1	6:14-7:1	6:14-7:1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

Ա. Այս գլխի 1-ին համարը ամբողջ գլխի մեկնաբանման էությունն է: Կոնտեքստը ներառում է Կորնթոսի եկեղեցու հավատացյալներին, և հետևաբար չի ներառում հավատուրացություն

(տես Հատուկ Թեմա 1 Կոր. 6:9) այլ ձախողել ապրել քրիստոնեական կյանքն արդյունավետ կերպով:

- Բ. Սկսած 4-րդ համարից կան մի շարք նախդիրներ՝
1. *en* տրական հոլովով, տասնութ անգամ, 2 Կոր. 6: 4-7
 2. *dia* սեռական հոլովով, երեք անգամ, 2 Կոր. 6:7-8
 3. *hōs* ներկա դերբայով, յոթ անգամ, 2 Կորնթ. 6:9-10
- Դրանք կարծես ներառում են Պողոսի ծառայության նկարագրությունը, թե՛ ներքին, և թե՛ արտաքին խնդիրներն ու ճնշումները, ինչպես նաև Աստծո համապատասխան շնորհքը:
- Գ. 2 Կոր. 6:8-10 եզրափակիչ պարադոքսները կարծես Պողոսի կյանքը նկարագրում է ինչպես քննադատների, այնպես էլ Աստծո տեսանկյունից:
- Դ. 6:14-7:1 բաժինը կարծես թե կոնտրաստից դուրս է: 7:2 համարը բարձրացնում է 2 Կոր. 6:13-ի տերմինաբանությունը և քննարկումը: Այս բաժինը բնույթով շատ հրեական է: Դա նախազգուշացում է հեթանոսական մշակույթի հետ նույնանալու դեմ: Նախազգուշացումները Հին Կտակարանյան բաժնից են (այսինքն, հրեաներն ընդդեմ հեթանոսների կամ Աստծո մարդիկ ընդդեմ կռապաշտության): Այնուամենայնիվ, Պողոսը նման ձևով օգտագործում է 1 Կոր. 10:14-33, որտեղ նա քննարկում է քրիստոնեայի մասնակցությունը հեթանոսական երկրպագության մեջ:
- Այս պարբերության թվացյալ անջատումը պատճառ դարձավ, որ 2 Կորնթացիսը Պողոսի մի քանի նամակներից կազմված նամակը ուղարկվի Կորնթոս:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 6:1-10

¹Եւ մենք գործակից լինելով նաեւ աղաչում ենք, որ դուք Աստուծոյ շնորհքը զուր տեղը չ'ընդունէք: ²Որովհետեւ ասում է. Ընդունելի ժամանակում լսեցի քեզ, եւ փրկութեան օրումն օգնեցի քեզ. Ահա հիմա է ընդունելի ժամանակ. Ահա հիմա է փրկութեան օր: ³Ոչ մի բանով ոչ մի գայթակղութիւն չենք տալիս, որ պաշտօնը չ'նախատուի. ⁴Այլ ամեն բանի մէջ մեր անձերը ընծայում ենք ինչպէս Աստուծոյ պաշտօնեաներ՝ շատ համբերութիւնով նեղութիւններում, վիշտերում, չարչարանքներում, ⁵Օժէժերում, բանտերում, խռովութիւններում, աշխատանքներում, հսկմունքներում, ծումերում, ⁶Մրբութիւնով, գիտութիւնով, երկայնատութիւնով, քաղցրութիւնով, Սուրբ Հոգով, անկեղծ սիրով, ⁷Ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւնով, արդարութեան զենքերովը աջ կողմից եւ ձախ կողմից. ⁸Փառքով եւ անարգանքով, պարսաւանքով եւ գովասանքով, ինչպէս մոլորեցնողներ՝ բայց ճշմարիտներ. ⁹Ինչպէս չ'ճանաչուածներ, բայց լաւ ճանաչուածներ. Ինչպէս մեռածներ, բայց ահա կենդանի ենք. Ինչպէս պատժուածներ, բայց չ'սպանուածներ, ¹⁰Ինչպէս տրտմածներ, բայց միշտ ուրախներ. Ինչպէս աղքատներ, բայց շատերին հարստացնողներ. Ինչպէս թէ ոչինչ չ'ունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ:

6:1 «գործակից լինելով» Սա ներկա ներգործական դերբայ է: Չկա սահմանված օբյեկտ, սակայն կոնտրաստը ենթադրում է «Աստծո հետ» (տես 2 Կոր. 5:20; 1 Կոր. 3:9): Պողոսը այս նույն տերմինն օգտագործում է ավետարանի մէջ՝ իր գործընկերներին նկարագրելու համար (տես 2 Կոր. 1:24; 8:23; 1 Կոր. 16:16; Հռ. 16:3,9,21), բայց այստեղ կոնտրաստը խորապես ենթադրում է Աստծուն: Ինչպիսի՛ հիանալի միտք, որ հավատացյալները գործընկերներ են Աստծո համար (տես 1 Կոր. 3:5-9):

▪ **«նաեւ աղաչում ենք, որ դուք»** Պողոսը նույն բայն օգտագործել է 2 Կոր. 5:20-ում: Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:4-11:

▪ **«Աստուծոյ շնորհքը զուր տեղը չ'ընդունէք»** Սա ինֆինիտիվ աօրիստ է, որը վերաբերում է քրիստոնյա հավատացյալներին, ովքեր ընդունում են Քրիստոսին: Բայց «զուր տեղը» խոսքը վերաբերում է փրկության նպատակին, որը պտուղ է բերում Թագավորության համար, ոչ թե անձնական փրկության համար: Պողոսը հաճախ օգտագործեց այս տերմինը՝ արտահայտելու այս սպասված Թագավորության ծառայությունը (տես 1 Կոր. 15:10,14,58; Գաղ. 2:2; Փիլ. 2:16; 2 Թե. 2:1; 3:5): Այս գաղափարը զուգահեռ է Պողոսի «քայլելու» օգտագործմանը Եփեսացիսում (տես Եփ. 4:1,17; 5:2,15):

6:2 «ասում է» որ Պողոսը մեջբերում է Իսրայելին վերաբերող Հին Կտակարանյան պատգամը, բայց այս ներկա ներգործական սահմանականի (այսինքն, ասում է) օգտագործմամբ, նա ցույց է տալիս, որ խոստումը համապատասխանում է բոլոր ժամանակներին և բոլոր ժողովուրդներին: Պողոսը այս մեջբերումն օգտագործում է որպես Աստծո ուղիղ խնդրանքը Կորնթոսի եկեղեցուն: Սուրբ Գիրքն ընթացիկ է և հարմար:

▪ **«Ընդունելի ժամանակում»** Սա մեջբերում է Սեպտուագինտից Ես. 49:8 (այսինքն, Ծառայի բանաստեղծություններից/երգերից մեկը), որը վերաբերում է Աստծուն, ով ողջունում և սպառազինում է (1) Մեսիային և (2) Մեսիական համայնքին: Ես. 40-53 հաճախ լարվածություն կա հավաքական (այսինքն, ազգային Իսրայել) և կատարյալ Իսրայելի թագավորի միջև (այսինքն, Մեսիա):

▪ **«ընդունելի ժամանակ...փրկութեան օր»** Առաջինը մեջբերում է Սեպտուագինտից Ես. 49:8 օգտագործելով *dektos*, սակայն Պողոսն օգտագործում է ավելի ուժեղացված ձև (այսինքն, *eurodektos*, տես Հռ. 15:16), երբ նա կիրառում է այս մարգարեությունը Կորնթոսյան իրավիճակում (տես 2 Կոր. 6:2բ): Մեսիան եկել է, և հիմա Աստծո կողմից լիովին ընդունված հրավերը նրանց է եկել: Նրանք պետք է պահը ըմբռնեն: Նրանք պետք է լինեն վախճանաբանական Մեսիական համայնք:

Ինչ-որ մեկի փրկության օրը հրաշալի է, սքանչելի իրադարձություն է, բայց դա հաճախ ուղեկցվում է հալածանքներով և դժվարություններով (տես 2 Կոր. 6:4-10):

Արևելահայերեն «Ահա»

Արևմտահայերեն «Ահա»

NASB, NKJV, Peshitta «Ահա»

NRSV «տես»

TEV «Լսիր»

NJB «լավ»

Սա հունարեն *idou* մասնիկն է, որը ծառայում է ուշադրություն հրավիրելու ճշմարտության հայտարարությանը: Պողոսը հաճախ էր օգտագործում այն 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 5:17; 6:2,9; 7:11; 12:14):

▪ **«Ահա հիմա է փրկութեան օր»** Այս վերջին նախադասությունը 2 Կոր. 6:2-ը Պողոսի մեկնաբանությունն է Եսայիայի մեջբերման մասին: Սա կարող է վերաբերել ինչպես անհատի հրավերին, ով արձագանքում է ավետարանին, այնպես էլ Մեսիական թագավորությանը ծառայելու կյանքին:

6:3 «Ոչ մի բանով ոչ մի գայթակղություն չենք տալիս» Սա հունարեն խիստ կրկնակի ժխտում է: Պողոսը վճռական էր, ինչպես իր անձնական կյանքում, այնպես էլ ծառայության մեջ, և խոչընդոտներ չէր դնում իր և ավետարանի լսողների միջև (տես 1 Կոր. 9:19-23): Նա իր կյանքն է օգտագործում երկու բան կատարելու համար՝ 1) նրանց օրինակ եղավ իրենց ծառայության մեջ և (2) հակազդելու կեղծ ուսուցիչների մեղադրանքներին (տես 2 Կոր. 11:12):

Միակ «գայթակղության քարը» Քրիստոսն Ինքն էր (տես 1 Կոր. 1:18-25): Ավետարանը մերժվեց

1. հրեաների կողմից տառապող Մեսիայի պատճառով
2. հեթանոսների կողմից հարության մարմնի պատճառով
3. Կորնթոսցի կեղծ ուսուցիչների կողմից, Պողոսի հռետորական ներկայացման պակասի պատճառով

Սատանայի կուրացման (տես 2 Կոր. 4:4) և ավետարանի պատգամի լարվածության պատճառով Պողոսը չէր ուզում որևէ բան անել, որ չլինի թե մարդիկ հրաժարվեին իր քարոզչությունից (տես 1 Կոր. 9:19-23, 24-27):

Արևելահայերեն «որ պաշտօնը չ'նախատուի»
Արևմտահայերեն «որպես զի մեր պաշտօնը չարատաւորուի»

- NASB «որպեսզի ծառայությունը չվարկաբեկվի»
- NKJV «մեր ծառայությունը չմեղադրվի»
- NRSV «այնպես, որ մեր ծառայության հետ որևէ մեղավոր չլինի»
- TEV «Մենք չենք ուզում, որ որևէ մեկը մեզ գտնի մեր աշխատանքի մեջ»
- NJB «որպեսզի որևէ մեկը չդիպչի մեր ծառայության աշխատանքին»

«Մեր» տերմինը (տես NKJV, NRSV, TEV, NJB) հունարեն տեքստում չէ, որը պարզապես ունի որոշիչ հոդ՝ «ծառայությունը»: Այս համարը աստվածաբանորեն վերաբերում է 1 Տիմ. 3:2-10-ը, որը պնդում է, որ ծառայողները չպետք է քննադատության ենթարկվեն: Հավատացյալները ապրում և ծառայում են Մեսիական Թագավորության առաջընթացի համար, ոչ թե անհատական ծագման կամ անձնական օրակարգերի համար (տես 1 Կոր. 9:12): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԾԱՌԱ ԱՌԱՋՆՈՐԴ 1 Կոր. 4:1:

6:4-7 Սա հունարեն *en* նախդիրի կողմից ներկայացված տերմինների շարք է: Այն կրկնվում է տասնութ անգամ ընդգծելու համար: Պողոսի գրվածքներում խնդիրների մի քանի ցանկ կա, որոնց հետ առնչվել է (տես 1 Կոր. 4:9-13; 2 Կոր. 7:5; 11:23-29): Նա հիշատակում է նրանց՝ դրդելու հավատացյալներին և արժեզրկելու կեղծ ուսուցիչների պահանջները: Տես Հատուկ Թեմա: Չար արարքներն ու առաքիչությունները Նոր Կտակարանում, 1 Կոր. 5:9:

ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ EN-ՈՎ

	NASB	NKJV	NRSV	TEV	NJB
<i>h.4, hupomonē</i>	շատ համբերություն	շատ համբերություն	մեծ համբերություն	համբերատար հարատևել	վճռական հաստատակամություն
<i>h. 4, thliphis</i>	նեղություններ	նեղություններ	տառապանքներ	դժվարություններ	դժվարություններ
<i>h. 4, anagkē</i>	վիշտեր	կարիքներ	դժվարություններ	դժվարություններ	բարդություններ

			ներ	ներ	ներ
<i>h.4, stenochōria</i>	չարչարանքներ	ցնցումներ	աղետներ	բարդություններ	ցնցում
<i>h. 5, plēgē</i>	ծեծեր	շերտեր	ծեծկոտուք	ծեծված	ճնշված
<i>h. 5, phulakē</i>	բանտարկություններ	բանտարկություններ	բանտարկություններ	բանտարկված	բանտ ուղարկել
<i>h.5, akatastasia</i>	խռովություններ	խռովություններ	խռովություններ	հավաքվել	հավաքվել
<i>h. 5, kopos</i>	աշխատողներ	աշխատողներ	աշխատողներ	ողոված	աշխատանք
<i>h.5, agrupnia</i>	հսկմունքներ	հսկմունքներ	անքուն գիշերներ	առանց քուն	անքնություն
<i>h. 5, nēsteia</i>	ծովեր	ծովեր	քաղց	առանց սնունդ	սոված
<i>h. 6, hagnotēs</i>	սրբություն	սրբություն	սրբություն	սրբություն	սրբություն
<i>h. 6, gnōsis</i>	գիտություն	գիտություն	գիտություն	գիտություն	գիտություն
<i>h. 6, makrothumia</i>	երկայնատևություն	երկայնատևություն	երկայնատևություն	երկայնատևություն	երկայնատևություն
<i>h. 6, chrēstotēs</i>	քաղցրություն	քաղցրություն	քաղցրություն	քաղցրություն	քաղցրություն
<i>h. 6, pneumatī hagiō</i>	Սուրբ Հոգի	Սուրբ Հոգի	հոգու սրբություն	Սուրբ Հոգի	Սուրբ Հոգի
<i>h.6, agatiē anuplkritō</i>	անկեղծ սեր	անկեղծ սեր	անկեղծ սեր	իրական սեր	սերը արհեստականությունից զերծ է
<i>h. 7, logō aletheias</i>	Ճշմարտության խոսքը	Ճշմարտության խոսքը	Ճշմարիտ խոսք	Ճշմարտության պատգամ	Ճշմարտության խոսքը
<i>h. 7, dunamei theou</i>	Աստծո զորությունը	Աստծո զորությունը	Աստծո զորությունը	Աստծո զորությունը	Աստծո զորությունը

6:4 «Այլ ամեն բանի մեջ մեր անձերը ընծայում ենք ինչպես Աստուծոյ պաշտօնեաներ» Սա է խնդիրը: Սա 2 Կոր. 6:1-ի «զուր տեղը» արտահայտության արտահայտչամիջոցն է: Պողոսը հաստատում է Թագավորության ծառայության գերակայությունը: Բոլոր հավատացյալները պարզներով օժտված (տես 1 Կոր. 12:7, 11) ծառայողներ են (տես Եփ. 4:12): Ավետարանն ունի անհատական կենտրոնացում (մասնավորապես անձնական փրկություն) և հավաքական կենտրոնացում (այսինքն, ավետարանի հռչակում և ավետարանի ծառայություն, տես 1 Կոր. 12:7): Տես Հատուկ Թեմա: Ծառա առաջնորդ, 1 Կոր. 4:1:

6:6 «Սրբութիւնով» Սա վերաբերում է կամ (1) այս տերմինի արմատային իմաստին, նպատակի ամբողջանը կամ (2) Պողոսի բարոյական, էթիկական կենսակերպին:

- **«երկայնատևութիւնով»** Այս տերմինը հաճախ օգտագործվում է համբերատար վերաբերմունք ցուցաբերելու մարդկանց, սակայն այն նաև օգտագործվում է Նոր Կտակարանում Աստծո հատկանիշը ցույց տալու համար (տես Հռ. 2:4; 9:22; 2 Պետ. 3:9,15):

▪ **«քաղցրութիւնով»** Այս տերմինը հաճախ թարգմանվում է որպէս «հոգու քաղցրություն»: Դա այն վերաբերմունքն է, որ անձը ավելի շուտ կվիրավորվի, քան ուրիշներին կվիրավորի, նախնարում է, որ ուրիշները լավ լինեն, քան ինքնը զգա:

▪ **«Սուրբ Հոգով»** The New English Bible թարգմանում է որպէս «Սուրբ Հոգու պարզներ»: *Jerome Biblical Commentary* ունի «սուրբ հոգով» է (էջ 282): Պատճառն այն է, որ նրանք փոխել են թարգմանության այն փաստը, որ Պողոսը համարում է Սուրբ Հոգու անձը մի շարք նկարագրական բառերի մեջ: Ես համաձայն եմ, որ խոսքը վերաբերում է Սուրբ Հոգու կողմից Պողոսի անձնական սրբության հոգուն, սակայն, այնուամենայնիվ, չի կարելի դոգմատիկ լինել Հռ. 9:1; 14:17; 15:16; 1 Կոր. 12:3; 1 Թեո. 1:5- ի պատճառով:

▪ **«անկեղծ սիրով»** Այս նույն արտահայտությունն օգտագործված է Հռ. 12:9-ում: Պողոսը օգտագործում է նույն ածականը՝ նկարագրելու հավատքը 1 Տիմ. 1:5 և 2 Տիմ. 1:5: Պետրոսը նույն ածականն է օգտագործում *agapē, philadelphia* հոմանիշի հետ, 1 Պետ. 1:22:

6:7 «Ճշմարտութեան խօսքով» Պետք է հիշել, որ եբրայական ֆոնը այս տերմինին ոչ թե «Ճշմարտություն ընդդեմ կեղծիքի» մեջ է, այլ «հավատարմություն և վստահություն», ինչպես միջանձնային հարաբերություններում (տես 1 Հովհ. 8:32; 14:6): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՂՈՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ, 2 Կոր. 13:8:

Հունարեն արտահայտություններ ներկայացված dia-ով

	NASB	NKJV	NRSV	TEV	NJB	NIV
v. 7, <i>hoplōntēs dikaiosunēs</i>	արդարութ-յան զենքեր	արդարությ-ան սպառա-զիւություն	արդարությ-ան զենքեր	արդարութ-յուն, որպէս մեր զենք	արդարութ-յան զենքեր	արդարութ-յան զենքեր
v. 8, <i>dozēs kai atimias</i>	փառք և անար-գանք	պատիվ և անարգանք	պատիվ և անարգանք	արժանապ-ատիվ և անպատվ-աբեր	պատվի և խայտառակ-ության ժամանակ-ները	պատիվ և անարգանք
v.8, <i>dusphēmiās kai ieuphēmiās</i>	պարսա-վանք և գովասանք	պարսա-վանք և գովասանք	վիրավո-րանք և գովասանք	վատ վարկանիշ և լավ հեղինա-կություն	մեղադրանք և գովա-սանք	պարսա-վանք և գովասանք

▪ **«արդարութեան զենքերովը աջ կողմից եւ ձախ կողմից»** Սա վերաբերում է Աստծո կանխատեսումներին մեր երկրային հոգևոր պատերազմի համար (տես 2 Կոր. 2:11; Հռ. 6:13; Եփ. 2:2; 4:14,27; 6:10-18; 1 Պետ. 5:8): Հնարավոր է, որ աջ ձեռքը վերաբերում է հարձակողական զենքին, իսկ ձախը վերաբերում է պաշտպանողական զենքին: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ, 1 Կոր. 1:30:

6:8 «անագնիվ» Այս տերմինը օգտագործվում է քաղաքացիության իրավունքի ռեզիդենտի կորստյան համար:

Հունարեն արտահայտություններ ներկայացված *hōs*-ով

	NASB	NKJV	NRSV	TEV	NJB
<i>v. 8, planoī kai alētheis</i>	ինչպես մոլորեցնողներ, բայց ճշմարիտներ	ինչպես մոլորեցնողներ, բայց ճշմարիտներ	ինչպես խաբեբաներ, բայց ճշմարիտներ	ինչպես ստախոսները դեռ խոսում են ճշմարտությունը	խաբեբաների համար, բայց իսկական
<i>v.9, agnooumenoi kai epigninōskomenoi</i>	ինչպես չճանաչվածներ, բայց լավ ճանաչվածներ	ինչպես չճանաչվածներ, բայց լավ ճանաչվածներ	ինչպես չճանաչվածներ, բայց լավ ճանաչվածներ	ինչպես չճանաչվածներ, բայց լավ ճանաչվածներ բոլորի կողմից	ինչպես չճանաչվածներ, բայց ճանաչված
<i>v.9, apothnēskontes kai idou zōmen</i>	ինչպես մեռածներ, բայց ահա կենդանի ենք	ինչպես մեռածներ, ահա կենդանի ենք	ինչպես մեռածներ, բայց ահա կենդանի ենք	ինչպես մեռածներ, բայց կենդանի ենք	մեռածներ, բայց ահա կենդանի ենք
<i>v.9, paideuomenoi kai mē thanatoumenoi</i>	ինչպես պատրժվածներ, բայց չսպանվածներ	ինչպես պատրժվածներ, բայց չսպանվածներ	ինչպես պատրժվածներ, բայց չսպանվածներ	չնայած պատժված ենք, բայց չենք սպանվել	սպանված, բայց չկատարված
<i>v.10, lupoumenoi aei de chairontes</i>	ինչպես տրտմածներ, բայց միշտ ուրախներ	ինչպես տրտմածներ, բայց միշտ ուրախներ	ինչպես տրտմածներ, բայց միշտ ուրախներ	չնայած տխուր ենք, բայց միշտ ուրախ	ցավի մեջ, սակայն միշտ ուրախ
<i>v. 10, ptōchoi pollous de ploutizontes</i>	ինչպես աղքատներ, բայց շատերին հարստացնողներ	ինչպես աղքատներ, բայց շատերին հարստացնողներ	ինչպես աղքատներ, բայց շատերին հարստացնողներ	մենք թվում ենք աղքատներ, բայց շատ մարդկանց հարստացնողներ	աղքատներ, բայց շատ մարդկանց հարստացնողներ
<i>v. 10, mēden echontes kai panta katechontes</i>	ինչպես թե ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ	ինչպես թե ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ	ինչպես թե ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ	թվում է թե ոչինչ չունենք, բայց ամեն բան ունենք	ոչինչ չունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ

6:8-9 «բայց...բայց լա» Հունարեն տեքստն ունի *kai*, որը սովորաբար նշանակում է «և», բայց որոշ տեքստերում դա կարող է նշանակել «և դեռ» (տես Հովհ. 20:29): Հիշեք, որ կոնտեքստը որոշում է իմաստը, ոչ թե բառապաշարը:

6:10 «Ինչպես տրամաձներ, բայց միշտ ուրախներ» (տես Հո. 5:3-5; Փիլ. 2:17-18; 3:1; 4:4; 1 Թես. 5:16):

▪ **«բայց ամեն բան ունեցողներ»** Այս պարադոքսերի շարքը, կարծես, հակադրեց աշխարհի հեռանկարին և Աստծո հեռանկարին: Հավատացյալները Քրիստոսի միջոցով բոլոր բաների ժառանգներն են (տես Հո. 8:17,32; 1 Կոր. 3:21):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 6:11-13
¹¹Մեր բերանը բացուած է դէպի ձեզ, ով Կորնթացիներ, մեր սիրտը լայնացած է: ¹²Դուք մեզանից նեղութիւն չ'ունիք, միայն թէ ձեր սրտերումն էք նեղվում: ¹³Եւ մի եւ նոյն հաստուցումը անելով, (ինչպէս թէ որդիների հետ եմ խօսում,) դուք էլ լայնացէք:

6:11 Երկու բայերն էլ վաղակատար ժամանակ են: Պողոսը տարածել է լրիվ, ամբողջական ավետարանի ճշմարտությունը և դրա հետևանքները Կորնթոսի հավատացյալների հետ լիարժեք անկեղծությամբ և ազնվությամբ:

▪ **«ով Կորնթացիներ»** Սա Պողոսի գրվածքների ընդամենը երեք տեղերից մեկն է, որ ինքը անձամբ է դիմում տվյալ եկեղեցուն, նա գրում է (տես Գաղ. 3:1; Փիլ. 4:15): Այս բոլոր հատվածները ցույց են տալիս Առաքյալի սրտի խորը ապրումները:

6:12

Արևելահայերեն « Դուք մեզանից նեղութիւն չ'ունիք»

Արևմտահայերեն « Դուք մեր կողմէն չէք նեղուիք»

NASB «Դուք չէք սահմանափակվում մեզանից»

NKJV «Դուք մեզանից չէք սահմանափակվում»

NRSV «Չկա սահմանափակում»

TEV «Մենք չեինք, որ մեր սրտերը փակեցինք»

NJB «Ցանկացած տառապանք, որը դուք զգում եք, մեր կողմում չէ»:

Այս բայի գոյականն օգտագործված է 2 Կոր. 6:4 և 12:10 (տես Հո. 2:9; 8:35): Այն բառացիորեն վերաբերում է մի բանի կամ ինչ-որ մեկին, որը միասին հավաքված են նեղ տեղում, և դրանով դառնում սեղմված: Այն օգտագործվել է փոխաբերականորեն՝ «նեղություն», «ցավ» կամ «տառապանք» համար (տես 2 Կոր. 4:8; 6:12):

Արևելահայերեն «սրտերումն»

Արևմտահայերեն «գութին»

NASB, NKJV, NRSV, Peshitta «կապվածություն»

TEV «փակեք ձեր սրտերը»

NJB «տառապանք»

Սա Հին Կտակարանյան փոխաբերություն է «աղիքներ»-ի համար: Անցյալում մտածում էին, որ ներքին օրգանները կամ գլխավոր օրգանները (այսինքն՝ սիրտը, լյարդը, թոքերը) հանդիսանում են զգացմունքների տեղը (տես Սեպտուագիա՛ Առ. 12:10; 26:22, Եր. 28:13,51; II Macc. 9: 5-6; IV Macc 10:8; Baruch 2:17): Պողոսը հաճախ է օգտագործում այս փոխաբերությունները (տես 2 Կոր. 6:12; 7:15; Փիլ. 1:8; 2:1; Կող. 3:12; Փիլիմոն 1:7,12,20):

6:13

Արևելահայերեն « Եւ մի եւ նոյն հատուցումը անելով»
Արևմտահայերեն «Ուստի անոր հատուցում ընելու համար»

NASB «Հիմա նման հատուցման մեջ»
NKJV «Այժմ հատուցումը նույնն է»
NRSV «Փոխարենը»
NJB «Արդար հատուցման մեջ»

Այս արտահայտության մեջ հիմնական բառը *antimisthia* է, որը *misthos* տերմինն է (այսինքն, հատուցումը, որը հիմնված է մարդու արժանիքների վրա, տես 1 Կոր. 3:8,14; 9:17-18; 1 Տիմ. 5:18) գումարած *anti* նախդիրը: Այս ձևը գտնվում է միայն այստեղ և Հռ. 1:27:

Այս տերմինը կարող է օգտագործվել դրական կամ բացասական իմաստով. կոնտեքստը պետք է որոշի: Հռ. 1:27-ում այն բացասական է, բայց այստեղ կարծես դրական իմաստով է օգտագործվում Գաղ. 4:12:

- **«որդիների»** Պողոսը, ինչպես Հովհաննեսը, դիմում է իր նորադարձներին որպես որդիներ (տես 1 Կոր. 4:14,17; Գաղ. 4:19; 1 Տիմ. 1:2,18; 2 Տիմ. 1:2; 2:1; Տիտոս 1:4; Փիլիմոն 1:10):
- **«դուք էլ լայնացեք»** Պողոսն ամբողջությամբ բացեց իր սիրտը նրանց համար լի հակասություններով, առձակատամբ և բաժանումով, անկեղծորեն ցանկանում էր և հույս հայտնում, որ նրանք փոխադարձ կպատասխանեն իրեն: Մա աօրիստ կրավորական հրամայական է: Ուշադրություն դարձրեք կրավորական մտքին, որ նրանք չեն կարող դա անել, բայց նրանք պետք է թույլ տան, որ Աստված դա անի:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 6:14-18
 14Անհաւատների հետ այլախառն լծակից մի լինիք. որովհետեւ ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ. Եւ ի՞նչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարի հետ: 15Եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոսը Բելիարի հետ. Կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալն անհաւատի հետ: 16Կամ ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կոտորելի հետ. որովհետեւ դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. Ինչպէս Աստուած ասեց թէ Նորանցում կ'ընակուեմ, եւ նորանցում ման կ'գամ. Եւ նորանց Աստուած կ'լինեմ, եւ նորանք իմ ժողովուրդ: 17Նորա համար՝ նորանց միջիցը դուրս գնացեք եւ բաժանուեցեք, ասում է Տէրը, եւ պիղծ բաների մի դպչիք: 18Եւ ես կ'ընդունեմ ձեզ, եւ ես ձեզ հայր կ'լինիմ. Եւ դուք ինձ որդիներ եւ աղջիկներ կ'լինիք, ասում է Ամենակարող Տէրը:

6:14

Արևելահայերեն «Անհաւատների հետ այլախառն լծակից մի լինիք»
Արևմտահայերեն «Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի ըլլաք»

NASB «Անհավատների հետ այլախառն լծակից մի եղեք»
NKJV «Անհավատների հետ անհավասար լծակից մի եղեք»
NRSV «Անհավատների հետ անհամատեղելի մի եղեք»
TEV «Մի փորձեք միասին աշխատել, անհավատների հետ ինչպես հավասարներ»
NJB «Անհավատաների հետ հավասար թիմում լծակից մի եղեք»
Peshitta «անհավատների հետ մի ամուսնացեք»

Պողոսը հաճախ օգտագործում է Հին Կտակարանյան գյուղատնտեսական մեջբերումներ, ցույց տալով քրիստոնեական ճշմարտությունները (տես 1 Կոր. 9:9; 1 Տիմ. 5:18) արտացոլելու 2 Օր. 22:10: Սա ներկա հրամայական է ժխտական մասնիկով, որը ենթադրում է, որ «նրանք կազմվում էին» այդ անհամապատասխան, մտերմիկ, միջանձնային փոխհարաբերություններով անհավատների հետ: Հունարեն «լծակից» (*zugeō*) տերմինը և «ուրիշ տեսակի այլ բան» (*heteros*, այսինքն, տարբեր տեսակի կենդանիներ) բաղադրությունն է: Այս համարն ապացուցող-տեքստ է եղել հավատացյալներին՝ անհավատների հետ ամուսնության կապակցությամբ: Այնուամենայնիվ, այս տեքստը, ըստ էության, չի վերաբերում հատուկ ամուսնությանը, չնայած, որ դա ընդգրկված է այս լայնածավալ հայտարարության մեջ: Հավատացյալները պետք է սահմանափակեն իրենց ամենամտերմիկ, անձնական հարաբերությունները հավատացյալ ընկերների հանդեպ: Սա օգնում է մեզ պայքարել Քրիստոսի կողմից ընկած մշակույթի հանդեպ: Հավատքը Հիսուսով և բնակվող Հոգին սուր և խոր պատճառ դարձավ ընտանիքների ներսում, բիզնեսում, հորքիներում, զվարճություններում, նույնիսկ եկեղեցիներում:

Պետք է հաշվի առնել հատվածները 1 Կոր. 5:9-13; 7:12-16; 10:27-ի նման՝ այս ճշմարտության աստվածաբանական հավասարակշռությունը ստանալու համար: Մենք պետք է հիշենք առաջին դարի հեթանոսական մշակույթի չարությունը: Սա ոչ թե վանական կյանքի հաստատում է, այլ ընկած աշխարհի համակարգով մտերմիկ անձնական փոխհարաբերությունները նվազեցնելու փորձ (տես 1 Հովհ. 2:15-17):

▪ **«որովհետև ի՞նչ մասնակցություն ունի արդարությունը անօրենութեան հետ»** Այս նույն ճշմարտությունը կրկնվում է Եփեսացիսի շրջանավոր նամակում (տես 2 Կոր. 5:7, 1): Պողոսի արդարության հակասությունը անօրենության հետ, ցույց է տալիս, որ այս կոնտեքստում արդարությունը չի վերաբերում ենթադրյալ արդարությանը (տես Հո. 4, Գաղ. 3), այլ արդար ապրելուն (տես Մաթ. 6.1): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ 1 Կոր. 1:30:

▪ **«հաղորդություն»** Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:9:

6:15

Արևելահայերեն «Բելիար»

Արևմտահայերեն «Բելիար»

NASB, NKJV, REB «Բելիալ»

NRSV, NJB «Բելիար»

TEV «Սատանան»

Սա երբայերեն տերմին է (այսինքն, *beli* և *ya'al*, տես BDB 116), որի ստուգաբանությունը մի փոքր կասկածի տակ է: *Beliar*-ը հրեական գրվածքներից ուղղագրության մի տարբերակ է: Հնարավոր ֆոնը հետևյալն է՝

1. անկայունություն (այսինքն, չար մարդկանց նկարագրությունը, 2 Օր. 13:13; 2 Թագ. 23:6; 3 Թագ. 21:10,13)
2. անօրենություն (տես 2 Թագ. 22:5)
3. վայր, որտեղից չկա վերելք (այսինքն, *Sheol*, տես Մաղ. 18:4)
4. սատանայի մեկ այլ տերմին (տես Նաում 1:15; Jubilees 1:20; 15:33; և Մեռյալ Ծովի մագաղաթները [ex. IQS 1:18,24; 2:5,19])

6:16 «Կամ ի՞նչ համաձայնություն ունի Աստուծոյ տաճարը կուռքերի հետ» Այս համարը պետք է համեմատվի 1 Կոր. 3:16 հետ, որտեղ տեղական եկեղեցին կոչվում է Աստծո տաճար: 1 Կոր. 3:16 չկա հոդ «տաճար»-ի հետ (այսինքն՝ *naos*, կենտրոնական սրբավայրը): «Դուք» դերանունը հոգնակի է, իսկ

«տաճարը» եզակի է, հետևաբար, այս կոնտեքստում «տաճարը» պետք է վերաբերի Կորնթոսի ողջ եկեղեցուն (տես Եփ. 2:21-22):

Հրեական հավատքի ուշադրության կենտրոնում հայտնվեց տաճարի ծեսը և պատարագը (տես, Եր. 7), ՅԱՀՎԵԻ անձնական հավատքի փոխարեն: Դա ոչ թե որտեղ, երբ, և ինչպես է երկրպագում, այլ ով է Աստծո հետ հարաբերության մեջ: Հիսուսը տեսավ Իր մարմինը որպես Աստծո տաճար (տես Հովհ. 2:21): Հիսուսն ավելի մեծ է, քան Հին Կտակարանի տաճարը (տես Մաթ. 12:6): Աստծո գործունեությունը սուրբ շինությունից տեղափոխվել է սուրբ (այսինքն, փրկված, սուրբ) հավատացյալների մարմին:

Կուռքերն ու հավատացյալները լիովին քննարկվում են 1 Կոր. 8 և 10:14-22: Սրանք պետք է լինեն փոխադարձաբար բացառիկ: Բոլոր ճանապարհները չեն տանում երկինք:

▪ **«կենդանի Աստուծոյ»** Հին Կտակարանյան Աստծո ուխտի անունը ՅԱՀՎԵ էր (տես Հատուկ Թեմա 1 Կոր. 2:8), որը «լինել» բայաձևն էր: Հին Կտակարանյան հեղինակները հաճախ օգտագործում են «կենդանի» ածականը՝ արտացոլելու երբևէ գոյություն ունեցող, ամենագոյ Աստծուն: Հին Կտակարանյան ակնարկը 2 Կոր. 6:16-18 պարունակում է ուխտի տերմինաբանություն, «Ես նրանց Աստվածը կլինեմ և նրանք իմ ժողովուրդը կլինեն» (Եզ. 37:27):

«Քայլել նրանց մեջ» արտահայտությունը գալիս է Ղև. 26:12: Հին Կտակարանյան տեքստերը 2 Կոր. 6:16-ում արտացոլում է այն նոր դարաշրջանը, երբ ՅԱՀՎԵՆ բնակվելու է Իր ժողովրդի մեջ, ինչպես նախատեսված էր Ծննդ. 2-ում և ժամանակավորապես և մասամբ տեղի է ունեցել անապատում թափառելու ժամանակաշրջանում, բայց լիովին կիրագործվի նոր երկնքում և նոր երկրում (տես Հայտ. 21-22):

▪ **«Աստուած ասեց»** Սա անփույթ համադրություն է Ղև. 26:11-12 և Եզ. 37:27 Սեպտուագիինդից: Այս կոնտեքստում Պողոսը սկզբում կիրառել է այս խոստումները, ուխտի Իսրայելը այն եկեղեցու հետ, որը հոգևոր Իսրայելն է (տես Հռ. 9:6; Գաղ. 6:16):

6:17 «դուրս գնացեք եւ բաժանուեցեք» Սրանք երկուսն էլ աօրիստ հրամայական են: Սրանք ակնարկ են Ես. 52:11 Սեպտուագիինդում: Աստծո ժողովուրդը պետք է զերծ մնա մեղավորներից և անհավատներից, որովհետև նրանք բռնվելու են իրենց դատաստանի մեջ (տես Հայտ. 18:4):

Այսօր հաճախ ես լսում եմ, որ այս համարը մեջբերվում, երբ մեկը հարանվանության հետ է կապվում: Թույլ տվեք մեջբերել F. F. Bruce in *Answers to Questions*, «Այս բառերի օգտագործումը արդարացնելու համար քրիստոնյաների միջև եկեղեցական բաժանումը անխուսափելի ձախողում է կարողալ նրանց իրենց կոնտեքստում» (էջ 103):

▪ **«եւ պիղծ բաների մի դայչիք»** Սա ներկա չեզոք հրամայական է: Հավատացյալները չպետք է մասնակցեն իրենց համապատասխան մշակույթների մեղքով լի գործողություններին: Որպես փրկվածներ մենք պետք է ցույց տանք և հայտարարենք Աստծո ժողովրդի նոր սիրտը և նոր միտքը: Ամեն ինչ փոխվել է Նրանով:

6:18 Այս համարն արտացոլում է շատ մարգարեների ճշմարտությունը, բայց առավելագույնս, Ովսեյին (կամ հնարավոր է, 2 Թագ. 7:14): Քրիստոնեությունը ընտանեկան գործ է:

▪ **«Ամենակարող Տէրը»** Այս արտահայտությունը արտացոլում է Հին Կտակարանյան տերմինը Աստծո համար, ՅԱՀՎԵՆ (տես Ելից 3:14) և *El Shaddai* (տես Ելից 6:3): Սեպտուագիինդում այն թարգմանում է «Ձորաց Տէր» արտահայտությունը: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՕՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ, 1 Կոր. 2:8:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 7:1

¹Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ, մեր անձերը սրբենք հոգու եւ մարմնի ամեն պղծութիւնիցը, սրբութիւնը կատարենք Աստուծոյ ահովը:

7:1 «այսպիսի խոստումներ ունենալով» Սա ներկա ներգործական դերբայ է: Պողոսը մեջբերեց Հին Կտակարանյան մարգարեական խոսքերը Աստուծոց, կարծես նրանք վերջերս դիմել են Կորնթոսցիներին (տես 2 Կոր. 6:2): Հին Կտակարանը նույնպես մեջբերված է 2 Կոր. 6:16-18- ում, ցույց տալով ՅԱՀՎԵԻ շարունակական ցանկությունը. ունենալ ժողովուրդ, ովքեր արտացոլում են Նրա բնավորությունը: Պողոսը փորձում է խրախուսել Կորնթոսի հավատացյալներին՝ ապրելու աստվածային, առանձին կյանքեր: Նրանք փորձառել են «ջնորհքը» (տես 2 Կոր. 6:1), այժմ նրանք պետք է ապրեն դրանով: Այս համարը Քրիստոսանման սրբության կոչ է անում (տես Եփ. 1:4; 2:10):

▪ **«սիրելիներ»** Այս արտահայտությունը օգտագործվում է Մաթ. 3:17 և 17:5 որպես Հիսուսի տիտղոս: Պողոսը այս նույն տերմինն օգտագործում է Հիսուսի հետևորդներին նկարագրելու համար (տես 2 Կոր. 12:19; 1 Կոր. 10:14; 15:58; Հռ. 12:19; Փիլ. 2:12; 4:1): Այս տերմինը խոսում է Աստծու կողմից հաստատված, հավատարիմ ուխտի սիրո մասին (եբրայերեն, *hesed*; հունարեն, *agapē*) մեզ համար Քրիստոսում, բայց այստեղ խոսում է Պողոսի սերը այս երկպառակտող, ամբարտավան, կործանարար եկեղեցու մասին:

▪ **«մեր անձերը սրբենք»** Սա աօրիստ ներգործական ստորադասական է: Աօրիստ ժամանակը այն ձևն է, որ Կոյնե հունարենը հաստատում է գործողությունը: Այն կարող է ունենալ բազմաթիվ տարբեր հետևանքներ (տես D. A. Carson, *Exegetical Fallacies*, 2nd ed., էջ 68-73): Այստեղ դա վճռական գործողությունների կոչ է (այսինքն, հորդորող ստորադասականը օգտագործվում է որպես հրամայական): Ստորադասական եղանակը տալիս է պատահականության տարր: Հավատացյալները պետք է համագործակցեն Աստծո հետ փրկության մեջ և հետո համագործակցեն հասունության մեջ:

▪ **«հոգու եւ մարմնի»** Սա խոսում է մեր ամբողջ մարդկության մասին: Բնօրինակ լինելով շատերը մերժեցին այս համարը, այլ կոնտեքստներում այս երկու տերմինների Պողոսի տեխնիկական օգտագործման պատճառով: Սակայն, 2 Կոր. 7:5, երբ կապվում է 2 Կոր. 2:13-ի հետ (այսինքն, Պողոսի ընդլայնված փակագծերի սկիզբն ու ավարտը), այս երկու տերմիններն օգտագործվում են հոմանիշներով: Պողոսը հաճախ օգտագործում է նույն տերմինները տարբեր իմաստներով (կարդա *A Man in Christ* by James S. Stewart, Harper and Row):

▪ **«սրբութիւնը կատարենք Աստուծոյ ահովը»** Սա ներկա ներգործական դերբայ է: Այն աստվածաբանորեն ճշմարիտ է, որ երբ մենք փրկվում ենք, մենք ակնթարթորեն թե՛ արդարացված և թե՛ սրբացված ենք (տես 1 Կոր. 1:30, տես նաև ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ՍՐԲԱՅՈՒՄ, 1 Կոր. 1:2): Սա խոսում է Քրիստոսի հետ ունեցած մեր դիրքի մասին: Սակայն մենք պետք է ապրենք մեր դիրքորոշման լույսի ներքո: Հետևաբար, մենք կոչ ենք անում կատարել մեր կոչումը առաջադեմ սրբացման կամ Քրիստոսանմանության մեջ (տես Հռ. 8:28-29; Եփ. 4:1): Սա շարունակական պայքար է (տես Հռ. 7): Ինչպես փրկությունն է ձրի պարզ և արժեքավոր նվիրում, այնպես էլ սրբացումը: Այս նույն գաղափարը վերաբերում է նաև հավատացյալների սուրբ կոչվելուն (սահմանկան) և սրբանալու կանչին (հրամայական): Ես չեմ հավատում այս կյանքում անմեղության հավանականությանը, բայց ես հավատում եմ հավատացյալների պատշաճ լինելուն, որ ավելի քիչ մեղք կգործեն: Սա աստվածաբանական և գործնական լարվածություն է, որը հիմնված է Թագավորության մեջ գտնվող հավատացյալների վրա, սակայն Թագավորությունը ավարտված չէ (տես, Fee, Stewart, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 131-134):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Արդյո՞ք 2 Կոր. 6:1-ը սովորեցնում է, որ կարող ենք կորցնել մեր փրկությունը:
2. Ինչպե՞ս կարող է քրիստոնյան ապրել, որպեսզի ոչ մի գայթակղության վեմ չդնի ուրիշների առջև:
3. Ինչո՞ւ էր Պողոսի կյանքն այդքան դժվար:
4. Ի՞նչ է նշանակում «լինել առանձին»:
5. Արդյո՞ք փրկությունը բացարձակապես ձրի է, կամ արդյո՞ք դա այն ամենն է ինչ մեզ պետք է:

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 7:2-16

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
				Նախագգուշացում (6:11-7:4)
Պողոսի ուրախությունը եկեղեցու ապաշխարության համար	Կորնթացիների արձագանքը	Պողոսի ուրախությունը	Պողոսի ուրախությունը	
7:2-4	7:2-12	7:2-4	7:2-4	7:2-4
				Պողոսը Մակեդոնիայում. Տիտոսը միանում է նրան
7:5-13ա		7:5-13ա	7:5-7 7:8-11 7:12-13ա	7:5-7 7:8-13ա
	Տիտոսի ուրախությունը 7:13-16			
7:13բ-16		7:13բ-16	7:13բ-16	7:13բ-16

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))
Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 7:2-4

²Տեղ արեք մեզ. Մենք ոչ ոքի վնաս չենք տուել, ոչ ոքին չենք փճացրել, ոչ ոքին չենք զրկել: ³Ոչ թե դատապարտելու համար եմ ասում. որովհետեւ առաջուց ասեցի, որ դուք մեր սրտերումն էք՝ ձեզ հետ միասին կենդանի լինելու եւ մեռնելու էլ: ⁴Իմ համարձակութիւնը շատ է դէպի ձեզ. շատ է իմ պարծանքը ձեզ վերայ. մխիթարութիւնով լիքն եմ. Ուրախութիւնով աւելացած եմ մեր ամեն նեղութիւնումը:

7:2 «Տեղ արեք մեզ» Այս պարբերությունը միտք է տալիս 2 Կոր. 6:13: Սա ասորիստ ներգործական հրամայական է, վճռական հրաման է, բայց շարունակական շեշտադրմամբ: Պողոսը նույն գաղափարը հիշատակում է 2 Կոր. 6:13: Նա օգտագործում է հասկանիչը 2 Կոր. 6:12 (այսինքն, գապել): Պողոսը ցանկանում է, որ իրենք իրենց բացեն, ինչպես ինքն իրեն բացեց նրանց:

«Միրտ» տերմինը 2 Կոր. 6:11 ինքն իրեն է վերաբերում: Պողոսը նույն բանն անում է «մարմնի» հետ 2 Կոր. 7:5 և «հոգին» 2 Կոր. 7:13բ: Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 7:5:

▪ **«Մենք ոչ ոքի վնաս չենք տուել, ոչ ոքին չենք փճացրել, ոչ ոքին չենք զրկել»** Սրանք բոլորը ասորիստ ներգործական սահմանական են: «Ոչ ոքի» կրկնվում է և դրված յուրաքանչյուր արտահայտության առջև՝ ընդգծելու համար: Սրանք վերաբերում են կեղծ ուսուցիչների գործողություններին կամ Պողոսի քննադատների կողմից նրա և նրա ծառայության դեմ արված մեղադրանքներին (տես 2 Կոր. 12: 17-18):

▪ **«Փճացրել»** Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 15:42

▪ **«զինուորութիւն»** Սա *strateuō* տերմինն է, որից մենք ստանում ենք անգլերեն ռազմավարություն տերմինը: Այն զինվոր բառի օգտագործումն է (տես 1 Կոր. 9:7; 2 Տիմ. 2:4) կամ հոգևոր ճակատամարտի փոխաբերությունը (տես այստեղ և 1 Տիմ. 1:18): Հոգևոր ոլորտում գոյություն ունի շարունակական հակամարտություն:

10:4-5 2 Կոր. 10:4-5 նշված մի շարք բաներ կան, որոնց Պողոսը հարձակվում է:

1. բերդեր քանդելու (*ochuroōma*)
2. խորհուրդներ ենք քանդում (*logizomai*)
3. բարձրություն ենք քանդում (*huphōma*)
4. գերի ենք բռնում ամեն միտք (*noēma*)

Այս բաները կարող են վերաբերել սոփիստի հռետորաբանությանը, որը Պողոսն արժեզրկեց 1 Կոր. 1-4-ում (տես Bruce W. Winter, *Philo and Paul Among the Sophists*, էջ 180-202):

10:4 «մեր զինուորութեան զէնքերը» Պողոսը ակնարկում էր այս վաղ հոգևոր պատերազմին 2 Կոր. 6:7: Հռոմեացիս գիրքը գրվել է Կորնթոսից նույն ժամանակ: Նա նաև հիշատակում է այս պատերազմը Հռ. 6:13 և 13:12: Պետրոսն օգտագործում է բայաձևը 1 Պետ. 4:1, որտեղ նա քաջալերում է հավատացյալներին իրենց մարմնավոր պայքարում:

Այս ոլորտում լավ աղբյուրի գիրքը *Three Crucial Questions About Spiritual Warfare* by Clinton E. Arnold հրապարակված Բեյկերի կողմից:

▪ **«բերդեր քանդելու»** Սա կարող է հանդիսանալ Առ. 21:22 ակնարկ (մեծ կոնտեքստ 2 Կոր. 10:13-31): Շատ քննարկումներ են եղել մեկնաբանների կողմից այս արտահայտության իմաստի մասին, բայց ակնհայտ է, որ 2 Կոր. 10:5 նկարագրում է, թե ինչ հոգևոր ամրոցներ նկատի ունի Պողոսը: Պարզվում է, նա դիմում է կեղծ ուսուցիչների կեղծ աստվածաբանությանը:

10:5

Արևելահայերեն «խորհուրդներ ենք քանդում»

Արևմտահայերեն «Մենք խորհուրդներ կը քակենք»

- NASB «խորհուրդներ է քանդում»
- NKJV «փաստարկներ է շարտում»
- NRSV «փաստարկներ ոչնչացնել»
- TEV «ներքև քաշել»
- NJB «գաղափարներ, որոնք մենք քանդում ենք»

Տես ծանուցում 2 Կոր. 3:5:

Արևելահայերեն «Եւ ամեն բարձրութիւն»
Արևմտահայերեն «բոլոր բարձր բաները»

- NASB «և ամեն մի բարձր բան»
- NKJV «և ամեն բարձր բան»
- NRSV «և ամեն հպարտ խոչընդոտ»
- TEV «ամեն հպարտ խոչընդոտ»
- NJB «բոլոր ամբարտավան պատկերացումները»

Սա «բարձր» բառի օգտագործումն է բարձրության, մարդկային մտածողության իմաստով: Սա արտացոլում է կեղծ ուսուցիչների ուշադրությունը՝

1. գիտելիքներ և մարդկային հիմնավորում (տես 1 Կոր. 1:18-25; Կող. 2:8)
2. օրինականություն (տես Կող. 2:16-23)

▪ **«Եւ գերի ենք բռնում ամեն միտք Քրիստոսին հնազանդեցնելու համար»** Բայը «նիզակ»-ի և «գերի վերցնել ճակատամարտում» խառնուրդն է: Այս կեղծ ուսուցիչները գրավում էին Կորնթոսի հավատացյալների մտքերը և մտադրությունները: Պողոսը «նորոգեց մեր միտքը» (տես Հռ. 12:2; Եփ. 4:23); պաշտպանեց մեր միտքը (տես Փիլ. 4:7): Փրկությունը ձրի է, բայց քրիստոնեական կյանքը բնորոշվում է հնազանդությամբ, ծառայությամբ, երկրպագությամբ և հաստատակամությամբ: Դրանք ուխտի պարտականություններն են: Կա շարունակական հոգևոր հակամարտություն:

Պողոսը հաճախ օգտագործում է «միտք» (*noēma*) բառը 2 Կոր. (տես 2 Կոր. 2:11; 3:14; 4:4; 11:3), բայց միայն մեկ անգամ Փիլ. 4: Կորնթացիների շեշտադրումը գիտելիքի վրա կարող էր տերմինի օգտագործման կրկնակի պատճառը դառնալ: *The Analytical Greek Lexicon Revised*, Harold K. Moulton, ed., թվարկել է մի քանի բառակապակցություններ (էջ 280):

1. միտքը, հասկացողությունը, ինտելեկտը - 2 Կոր. 3:14; 4:4
2. սիրտը, հոգին, կապվածությունը, զգացմունքները, տրամադրությունը - 2 Կոր. 11:3
3. մտքի, մտածմունքի, նպատակի, խորհրդի գաղափարը - 2 Կոր. 2:11; 10:5

10:6 Պողոսը նախագուշացնում է կեղծ ուսուցիչներին և նրանց հետևորդներին, որ իրենց հաշիվ տալու օրը մոտ է: Նրանք մեղադրեցին նրան տկար լինելու համար, բայց նրանք պարզապես սխալ են հասկացել իր համբերությունը նրանց հանդեպ (1) հանուն Քրիստոսի և (2) այս եկեղեցու հավաքական առողջության համար: Պողոսը զգուշացնում է, որ զբաղվեն եկեղեցու խնդիրներով՝ մինչև իր ժամանելը, կամ էլ նա կգրադվի նրանց հետ (տես 1 Կոր. 5:3-5):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 10:7-11
 7Երեսի՞ էք նայում. եթէ մէկն իր անձի վերայ վստահ է թէ Քրիստոսինն է, թող իր մտքումն այս էլ մտածէ, թէ ինչպէս որ նա Քրիստոսինն է, այնպէս էլ մենք ենք Քրիստոսինը: 8Որովհետեւ եթէ մի

աւելի բան պարծենալու լինեմ մեր իշխանութեան համար որ Տէրը տուաւ մեզ՝ ձեր շինութեան եւ ոչ թէ կործանման համար, չեմ ամաչիլ: ⁹Որ չ'երեւիմ իբր թէ վախեցնում եմ ձեզ այս թղթերովը: ¹⁰Որովհետեւ թղթերը՝ ասում են՝ ծանր են եւ սաստիկ. բայց մարմնի կերպարանքը սկար՝ եւ խօսքն էլ անարգ: ¹¹Այնպիսին թող սա միտք անե, թէ ինչպէս որ ենք հեռուանց խօսքով մեր թղթերովը, այնպէս էլ ենք մօտանց գործով:

10:7 «նայում էք» Հունարենում թեքված ձևը կարող է լինել հրամայական (տես NRSV, NJB) կամ սահմանական (տես NASB, TEV, NIV): NKJV և ASV թարգմանում են այն որպէս հարց:

Կորնթոսի եկեղեցին վերլուծում և քննադատում էր մարմնավոր/աշխարհիկ/ֆիզիկական մակարդակներով՝ ավետարանի ուշադրության փոխարեն:

▪ **«էթէ»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Կորնթոսի եկեղեցում կային որոշ մարդիկ, որոնք խաբեցին իրենք իրենց (տես 1 Կոր. 14:37), ինչպէս իրենց հոգևոր վիճակին և կանգունությանը (այսինքն, «վստահ է», վաղակատար ներգործական սահմանական):

▪ **«իր անձի»** Պողոսն օգտագործում է *eautou* այս տերմինը, երկու անգամ այս համարում: Այս կեղծ ուսուցիչները խաբեցին իրենք իրենց: Սա ամենադժվար հոգևոր վիճակն է, մտածելու կամ ազդելու համար:

▪ **«թէ ինչպէս որ նա Քրիստոսինն է, այնպէս էլ մենք ենք Քրիստոսինը»** Կեղծ ուսուցիչները պնդում էին իրենց հոգևոր իշխանությունը և կանգունությունը, բայց մերժում էին Պողոսինը:

10:8 «էթէ» Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է հնարավոր գործողություն (տես 2 Կոր. 11:1-12:13):

▪ **«պարծենալու»** Այս տերմինը (այսինքն, *kauchaomai* և նրա այլ ձևերը) հաճախ օգտագործվում են Պողոսի Կորնթացիս նամակների մեջ:

1. *kauchaomai* (փառք, պարծենալ, տես 1 Կոր. 1:29,31; 3:21; 4:7; 13:3; 2 Կոր. 5:12; 7:14; 9:2; 10:8,13,15,16,17; 11:12,16,18,30; 12:1,5,6,9)

2. *kauchēma* (տես 1 Կոր. 5:6; 9:15,16; 2 Կոր. 1:14; 5:12; 9:3)

3. *kauchēsis* (տես 1 Կոր. 15:31; 2 Կոր. 1:12; 7:4,14; 8:24; 11:10,17)

Տես բառի օգտագործման ամբողջական գրառումը 2 Կոր. 1:12: Հատուկ թեմա՝ 1 Կոր. 5:6:

▪ **«մեր իշխանութեան համար որ Տէրը տուաւ մեզ»** Սա վերաբերում է Պողոսի Դամասկոսի ճանապարհի փորձառությանը (տես Գործք 9:15,16; Հռ. 1:5; Գաղ. 2:9):

▪ **«ձեր շինութեան եւ ոչ թէ կործանման համար»** Պողոսը կրկնում է այս արտահայտությունը 2 Կոր. 13:10: Սա նման է Եսայիայի (տես Ես. 6) և Երեմիայի կոչմանը (տես Եր. 1), բացի սրանից, նրանք երկուսն էլ կանչված էին: Պողոսն օգտագործում է նույն բայը (այսինքն, *kathairesis*), որը նա օգտագործում էր 2 Կոր. 10:4 (երկու անգամ), մարդկային հիմնավորման ամրոցները ոչնչացնելու համար: Պողոսը կանչված է՝ ոչնչացնելու որոշ բաներ և գաղափարներ, բայց ոչ թե եկեղեցին: Նա կանչված է եկեղեցին պաշտպանելու և պահպանելու համար (տես 2 Կոր. 10:9): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇԻՆՈՒԹՅՈՒՆ, 1 Կոր. 8:1:

- **«չեն ամաչիլ»** Պողոսը պատրաստվում է պաշտպանել իր անձը, քանի որ կեղծ ուսուցիչները նրան հարց էին տվել: Նա պաշտպանում է իրեն՝ պաշտպանելու (1) իշխանությունը, որը տրվել էր, և (2) ավետարանը, որը քարոզել էր:

Սա կարող է արտացոլել Աստծո տված Հին Կտակարանյան խոստումները (տես Հո. 9:33 և 10:11, մեջբերելով Ես. 28:16), որտեղ նրանք, ովքեր վստահում են Աստծուն, չեն ամաչում կամ հիասթափվում: Պողոսը գիտեր, թե ում է վստահել:

Նույնիսկ եթե Պողոսը չափազանց շատ էր պարծենում իր կոչման և նշանակման մեջ (տես NRSV, TEV), դա ճշմարիտ էր և Աստված պաշտպանելու էր նրան: Նրանք, ովքեր մերժում են Պողոսի իշխանությունը՝ դատապարտված են (տես 1 Կոր. 14:37-38):

10:9 Պողոսի նամակները խթանելու էին նրանց ապաշխարությանը, ոչ թե բերելու էին դատապարտության (տես 2 Կոր. 7:5-13ա): Սակայն կեղծ ուսուցիչների համար դա այլ պատմություն էր (տես 2 Կոր. 10:8, 11; 13:10):

10:10 «Որովհետև...ասում են» «Նրանք ասում են» հետևում է MSS B, the Latin Vulgate, և the Peshitta (5-րդ դարի Սիրիայի թարգմանությունը): Հունարեն ձեռագրերի մեծ մասն ունեն «նա», որը կարող է վերաբերել կեղծ ուսուցիչների գլխավոր առաջնորդին (տես 2 Կոր. 10:7,11, 11:4):

- **«բայց մարմնի կերպարանքը տկար»** Պողոսի ֆիզիկական նկարագրության երկրորդ դարի ավանդույթը գալիս է Թեսաղոնիկեից, *Paul and Thecla* գրքի մի հատվածում: Այն ասում է, որ նա կարճահասակ էր, ճաղատ, ծուռ ոտք ունեցող, խիտ հոնքեր ու դուրս ընկած աչքեր ուներ: Պողոսը ֆիզիկապես գրավիչ մարդ չէր (տես Գաղ. 4:14): Այս ֆիզիկական հատկանիշներից ոմանք կարող են կապված լինել մարմնում խայթոց ունենալու հետ (տես 2 Կոր. 12:7), որը, կարծում եմ, աչքի խնդիրն էր, հավանաբար կապված իր «Դամասկոսի ճանապարհին» կուրացմանը:

Հնարավոր է, որ այս արտահայտությունը, ինչպես մյուսը, վերաբերում է Պողոսի հրապարակային խոսակցական հմտություններին, որոնք խիստ կարևոր մրցակցություն էին (տես 1 Կոր. 1:17): Այս արտահայտությունը հաճախ «բեմական ներկայացման» օգտագործումն էր (տես Bruce W. Winter, *Paul Left Corinth*, էջ 35):

- **«եւ խօսքն էլ անարգ»** Սա վաղակատար կրավորական դերբայ է: Սա հունարեն խիստ տերմին է (տես 1 Կոր. 1:28; 6:4; 16:11; Հո. 14:3,10): Պողոսը փայլուն հասարակական հոետոր չէր (այսինքն, հունական հոետորական ոճը, տես 1 Կոր. 1:17; 2 Կոր. 11:6): Ապողոսը բարձրաճաշակ, հոետորական պատրաստված քարոզիչ էր Ալեքսանդրիայից: Սակայն Պողոսը պնդում է, որ չնայած հմուտ չէր հոետորական ոճում (տես 2 Կոր. 11:6), նրա պատգամը և իշխանությունը Քրիստոսից էր:

10:11 Կեղծ ուսուցիչ(ներ)ը մեղադրում էին Պողոսին խիստ նամակներ ունենալու մեջ, բայց անձնականը տկար ներկայացնելու համար: Պողոսը հաստատում է, որ ուժը, որը նրանք հաստատեցին իր նամակների մեջ հավասար կլինի իր անձնական ներկայությանը, եթե նա ստիպված լինի անձամբ գալ և շտկել ամեն բան:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացի 10:12-18
¹²Որովհետև չենք համարձակում մեր անձը կշռել եւ բաղդատել ոմանց հետ՝ որ իրանց անձերը գովելով յանձնարարում են. Այլ նորանք իրանցով իրանց անձերը չափելով, եւ իրանց անձերը իրանց հետ բաղդատելով, չեն հասկանում: ¹³Բայց մենք չափից դուրս չենք պարծենում. Այլ այն կանոնի չափովը, որն Աստուած բաժանեց մեզ՝ հասնել մինչեւ ձեզ մօտ էլ, ¹⁴Որ ոչ թէ իբր թէ ձեզ մօտ չ'հասած մեր անձերը երկայնացնում ենք. որովհետև մինչեւ ձեզ մօտ էլ հասանք Քրիստոսի աւետարանովը: ¹⁵Եւ չափից դուրս չենք պարծենում՝ ուրիշների աշխատանքով, բայց յուսայով թէ ձեր հաւատքը

աճելիս՝ մենք էլ կ'մեծանանք ձեզանում մեր կանոնի չափովը՝ առաւելութեամբ: ¹⁶Որ ձեզանից այն կողմն էլ աւետարանը քարոզենք՝ եւ օտար կանոնով պատրաստուածների վերայ չ'պարծենանք: ¹⁷Եւ ով որ պարծենում է՝ թող Տէրովը պարծենայ: ¹⁸Որովհետեւ ոչ թէ իր անձը յանձնարարողն է ընտիր. այլ նա՛ որին Տէրն է յանձնարարում:

10:12 «Այլ նորանք իրանցով իրանց անձերը չափելով, եւ իրանց անձերը իրանց հետ բաղդատելով» Պողոսն ակնարկում էր մարդկային գովասանքը 2 Կոր. 3:1 (տես 2 Կոր. 10:18). Այժմ նա ընդարձակում է դա մարդկային համեմատություններով: Ակնհայտորեն այս կեղծ ուսուցիչները համեմատում էին Պողոսին այնպես, որ շեշտը դնէին իրենց դիրքորոշմանը և արժեգրկէին այն:

Պողոսը գիտեր Հին Կտակարանի իր ուսումնասիրությունից (տես 1 Թագ. 16.7, 21.2), թե որքան անպտուղ էր դա: Նա, հավանաբար, նաև ծանոթ էր Հիսուսի ուսմունքի հետ՝ այն մարդկանց մասին, ովքեր արդարացնում էին իրենք իրենց (տես Ղուկ. 10:29; 16:15; 18:9,14):

Այս համարում կա հեզնանքի նշում, ինչպես 2 Կոր. 10:1: Պողոսը հաճախ էր օգտագործում այս գրական ձևը հաճախ 1 Կորնթացիսում:

Ակնհայտ բառախաղ կա երկու աօրիստ ներգործական ինֆինիտիվի միջև՝

1. *egkrinai* (*en* և *krinō*), դատել, որպես նույն կատեգորիայի պատկանող
2. *sugkrinai* (*sun* և *krinō*), դատել համեմատելով

Bezae ձեռագրում (5-րդ դարի uncial MS) կա մի արտահայտություն դուրս գրված 2 Կոր. 10:12 վերջից և 2 Կոր. 10:13 սկզբից: Թվում է, որ դպիրի աչքը տեղափոխվեց 2 Կոր. 10:12 «*ou*»-ից դեպի «*ouk*» 2 Կոր. 10:13 և դուրս է եկել միջամտող խոսքերից («չեն հասկանում: Բայց մենք չենք»): Տես Տեքստային Քննադատության երկրորդ հավելվածը: UBS⁴ տալիս է արտահայտության ներառումը «Բ» վարկանիշ (գրեթե որոշակի):

- **«չեն հասկանում»** Սա շատ ցնցող հայտարարություն էր՝
 1. հույն փիլիսոփաներին, այն կկորցնէր իրենց վերադաս հոգևոր գիտելիքները
 2. եբրայեցի մտածողներին, դա կդառնար ակնարկ կենդանիներին

10:13 Պողոսը ակնարկում է իր աստվածային կոչմանը և մանդատին (այսինքն, իր «Դամասկոսի ճանապարհի» փորձառությունը, տես Գործք 9; 22:3-16; 26:9-18), որպես հեթանոսների Առաքյալ: Նա չէր համեմատում կամ գովում, այլ հայտարարում էր Աստծո կանչը:

Աստծո կանչը, որպես հեթանոսների հատուկ ներկայացուցիչ, նույնիսկ ներառում էր Կորնթոս եկեղեցին (տես 2 Կոր. 10:14-15):

- **«այն կանոնի չափովը, որն Աստուած բաժանեց մեզ»** NASB Study Bible (էջ 1701) ունի լավ մեկնաբանություն այս արտահայտության վերաբերյալ:

10:13 այն կանոնի չափովը, որն Աստուած բաժանեց մեզ: Հնարավոր է Պողոսը նկատի ունի սպորտային մրցույթի պատկերը, որի մեջ գծերը նշվում են տարբեր վագորդների համար: Այդ դեպքում «դաշտը» պետք է լինի «գոտու» վրա (նաև 2 Կոր. 10: 15-16): Ներթափանցելով Կորնթոս, կեղծ առաքյալները անցել էին Պողոսի գոտի, որը Աստված նշել էր, և նրան տեղափոխել էր Կորնթացիների մոտ, որպես նրանց ճշմարիտ առաքյալ: Նա մտադրություն չունի ներխուժել այլոց համար նախատեսված տարածքը և պնդել, որ նրանց աշխատանքը իր սեփականությունն է, ինչպես որ այդ կեղծ ուսուցիչներն էին անում: Մյուսները հասկանում են հունարեն բառը, որ վերաբերում է իշխանության նշանակված ոլորտին»:

10:14 «Որ ոչ թէ իբր թէ ձեզ մօտ չ'հասած» Սա մեկ այլ «*hyper*» բարդ է *hyperekteinō*: Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 2:1:

▪ «մեր անձերը երկայնացնում ենք. որովհետև մինչև ձեզ մօտ էլ հասանք Քրիստոսի աւետարանովը» Պողոսը Կորնթոսի եկեղեցու հիմնադիրն էր, սակայն կեղծ ուսուցիչները փորձում էին առիթից օգտվել (տես 2 Կոր. 10:18բ):

10:15 «Եւ չափից դուրս չենք պարծենում՝ ուրիշների աշխատանքով» Կեղծ ուսուցիչները օգտվում էին Կորնթոսի եկեղեցուց, որը Պողոսն էր հաստատել:

10:16 «Որ ձեզանից այն կողմն էլ աւետարանը քարոզենք» Սա կարծես վերաբերում է Պողոսի Հռոմ ն/կամ Իսպանիա գնալու ցանկությանը (տես Գործք 19:21; Հռ. 15:22): Նա ցանկանում էր եկեղեցիներ հիմնել, որոնք կօգնեին նրան Երուսաղեմի ներդրման համար և հնարավորություն կընձեռեին նրան ճամփորդել դեպի արևմտյան Միջագետք և շատ ավելի եկեղեցիներ:

«Այն կողմ», սա մեկ այլ «*hyper*» բարդ բառ է (*hyperekeinē*), տես Հատուկ Թեմա 1 Կոր. 2:1:

10:17 «Եւ ով որ պարծենում է՝ թող Տերովը պարծենայ» Սա մեջբերում է Սեպտուագիանից Եր. 9:23-24: Այն նաև մեջբերված է 1 Կոր. 1:31: Բոլոր մարդկանց պարծենալը հիմարություն է: Տես Հատուկ Թեմա՝ Պարծենալ 2 Կոր. 1:12:

10:18 Իրական հարցն այն է, թե որ երկպառակությունը, ուսուցիչը կամ աստվածաբանությունն է հավանություն տալիս Հիսուսին (տես 1 Կոր. 4:1-5):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Բացատրեք ակնհայտ բացը 9-րդ և 10-րդ գլուխների միջև:
2. Որո՞նք էին Պողոսի դեմ կեղծ ուսուցիչների մեղադրանքները:
3. Ինչո՞ւ Պողոսն օգտագործեց ռազմական տերմիններ, կեղծ ուսուցիչների դեմ իր պայքարը նկարագրելու համար:
4. Արդյո՞ք այս կեղծ ուսուցիչներն անկեղծ քրիստոնյաներ էին, ովքեր սխալ էին աստվածաբանության փոքր կետերում, կամ արդյո՞ք նրանք պաշտամունքի առաջնորդներ էին, ովքեր փորձում էին հեռացնել մարդկանց՝ ավետարանի ճշմարտությունից:

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 11

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսն ու կեղծ Առաքյալները	Մտահոգություն նրանց հավատարմության համար	Պողոսի պատասխանը հակառակորդներին	Պողոսն ու կեղծ Առաքյալները	Պողոսը առաջնորդվում է լսելու իր գովասանքը (11:1-12:18)
11:1-6	11:1-4 Պողոսն ու կեղծ Առաքյալները 11:5-15	11:1-6	11:1-4 11:5-6	11:1-6
11:7-11		11:7-11	11:7-11	11:7-15
11:12-15		11:12-15	11:12-15	
Պողոսի տառապանքը, որպես Առաքյալ	Դիմադրող պարծանք		Պողոսի տառապանքը, որպես Առաքյալ	
11:16-29	11:16-21 Տառապանք Քրիստոսի համար	11:16-21ա 11:21բ-29	11:16-21ա 11:21բ-29	11:16-21ա 11:21բ-29
11:30-33		11:30-33	11:30-33	11:30-33

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտորության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դա բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

- Ա. 2 Կորնթացիս 10-13-ը կազմում են գրական բաժին: Այս բաժնում, որն այնքան տարբերվում է 2 Կորնթացիսի նախորդ գլուխներից, Պողոսը պաշտպանում է իրեն կեղծ ուսուցիչների հարձակումներից: Նրանք Պողոսին դարձրել էին իրենց ծաղրի առարկան՝ նրա ավետարանը վարկաբեկելու փորձի մեջ:
- Բ. Պողոսը պատասխանում է իր քննադատողների մեղադրանքներին 2 Կոր. 11: 4,8,12-15,18-20 համարներում:
- Գ. Պողոսն օգտագործում է հեզնանք և սարկազմ՝ թարմացնելու Կորնթոսցի քրիստոնյաների հիշողությունը իր ծառայության հետ կապված (տես 2 Կոր. 11: 5, 7, 19, 20, 21):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 11:1-6
¹Երանի թե մի քիչ իմ անմտութեանը ներեիք. Բայց ներում էլ էք ինձ: ²Վասնզի ձեզ համար նախանձառոր եմ Աստուծոյ նախանձովը. որովհետեւ ձեզ մի մարդի նշանեցի՝ որ մի սուրբ կոյս կանգնեցնեմ Քրիստոսի առաջին: ³Բայց վախենում եմ՝ մի գուցէ ինչպէս օձն իր խորամանկութեամբը խաբեց Եւային, այնպէս էլ ձեր միտքն ապականուի այն միամտութիւնիցը որ Քրիստոսումն է: ⁴ Որովհետեւ եթէ մէկը գայ եւ ուրիշ Յիսուս քարոզէ՝ որ մենք չ'քարոզեցինք, կամ ուրիշ հոգի առնէք՝ որ չ'առաք, կամ ուրիշ անետարան որ չ'ընդունեցիք, լաւ կ'համբերեիք: ⁵Որովհետեւ կարծեմ թէ ոչ մի բանով պակաս չեմ քան թէ մեծամեծ առաքեալները: ⁶Թէեւ սզկտ լինիմ խօսքով, բայց ոչ թէ գիտութիւնով. այլ ամեն բանի մէջ բոլորովին յայտնուեցանք ձեզ:

11: 1 «Երանի թե...ներեիք» Սա անկատար չեզոք սահմանական է: Չեզոք սեռը համապատասխանում է 10-րդ գլխի ազդեցիկ անհատական ներածությանը: Անկատար ժամանակը կարող է նշանակել (1) կրկնվող գործողություն անցյալում կամ (2) գործողության սկիզբը:

Թիվ երկուսը լավագույնն է համապատասխանում այս կոնտեքստին: Տեսեք «կրել, տանել» մասին լրացուցիչ գրառումը 2 Կոր. 11: 4:

- **«մի քիչ իմ անմտութեանը»** Պողոսն ավելի վաղ հայտնել էր, որ ֆիզիկական համեմատությունը հիմարություն է, բայց կեղծ ուսուցիչները նրան օգտագործել էին որպես ծաղրուծանակի առարկա: Հետևաբար, նա օգտագործում է սոֆիստների հոետորական ոճը (այսինքն՝ պարծենալ) նրանց դեմ (այսինքն՝ սարկազմային պարողիա): Նա ստիպված էր պաշտպանել իրեն այս եկեղեցու առջև նրանց լավի համար: Նա հիմարություն էր համարում դա անելը, ինչպես 17 և 21-րդ համարներն են հաստատում:
- **«Բայց ներում էլ էք ինձ»** Սա կամ ներկա չեզոք սահմանական է (NASB, NKJV, NJB) կամ ներկա չեզոք հրամայական (NRSV, TEV): Կան երեք պատճառներ, որոնք նշված են 2 Կոր. 11: 2, 4, 5, թե ինչու նրանք պետք է լսեն: Այս պատճառներից յուրաքանչյուրը անգլերենով ներկայացվում է «for» (gar) բառով:

11: 2 «որովհետև ձեզ մի մարդի նշանեցի...Քրիստոսի առաջին» Պողոսը, որպես այս եկեղեցու հիմնադիր, գործում է որպես ծնող, նրանց նշանելով Քրիստոսի հետ (տես Եփ. 5: 22-33; Հայտ. 19: 9; 21: 2,9; 22:17): Աստուծո Հին Կտակարանյան գաղափարը, որպես ամուսին, գտնվում է Ես. 54:5; 62:5; և Ովսիա 1-3; 11: 1-4:

▪ **«որ մի սուրբ կոյս կանգնեցնեմ»** Սա ամուսնության արարողության համար Հին Կտակարանյան տերմինաբանությունն է: Պողոսը այս թեման կրկնում է Եփ. 5: 25-27: Պողոսը խորաթափանց կերպով սաստում է Կորնթոսցի քրիստոնյաներին, նույնիսկ ճանապարհորդող կեղծ ուսուցիչներին լսելու համար: Որոշ իմաստով նրանք, ովքեր աջակցում էին նրանց, հոգևորապես անհավատարիմ էին դարձել (այսինքն՝ հոգևոր շնություն):

11: 3 «մի գուցե ինչպես օձն իր խորամանկութեամբը խաբեց Եսային» Սա վերաբերում է Ծննդոց 3-ում գրված գայթակղությանը (տես 1 Տիմ. 2:14): Հիշեք, որ օձը Եվային հեռացրեց ՅԱՀՎԵԻՑ՝ փոքր քայլերով, տանելով ինքնահաստատող անկախությանը:

Նոր Կտակարանում «խաբված» (*exapataō*) տերմինն օգտագործվում է միայն Պողոսի կողմից (տես Հռ. 7:11; 16:18; 1 Կոր. 3:18; 2 Կոր. 11:3; 2 Թես. 2: 3; 1 Տիմ. 2:14): Ոչ խիստ ձևը, *apataō*, օգտագործվում է Մեպտուագինդում Ծննդ. 3:13-ում Եվայի համար: Պողոսը օգտագործում է այն Եփ. 5: 6 և 1 Տիմ. 2:14 (երկու անգամ): Խաբեությունը գալիս է թե առանց, թե ներսից: Հավատացյալները պետք է անընդհատ հսկեն իրենց:

Խաբեության (*panourgia*) տերմինը «բոլոր» (*pan*) և «աշխատանք» (*ergon*) բառերի բարդ ձևն է: Պողոսը երկու անգամ այն օգտագործել է իր Կորնթացիս նամակներում (տես 1 Կոր. 3:19; 2 Կոր. 4:2): Պողոսը հասկանում էր հոգևոր պատերազմը, որը հավատացյալները պետք է դիմագրավեին (տես Եփ. 4:14): Նա փաստում է մարդկության վրա չարի հետևանքները Հռ. 1-3 գլուխներում և Հռ. 7; Եփ. 6: 10-19-ում հավատացյալների վրա: Պողոսի աստվածաբանությունը սկսվում է հրեշտակային և մարդկային ապստամբությունից:

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: SCHEMES 2 Կոր. 2:11

▪ **«այնպես էլ ձեր միտքն ապականուի»** Բայը *phtheirō* աօրիստ կրավորական ստորադասական է: Մեկ այլ ենթադրություն Ծննդ. 3-ից, Պողոսը մի քանի անգամ օգտագործեց այս տերմինը «կործանում» կամ «փչացնել» բարոյական իմաստով (տես 2 Կոր. 7:2; 11:3; 1 Կոր. 3:17; 15: 33; Եփ. 4:22): Հավատացյալները կարող են խաբվել, մանիպուլյացվել և պարտվել չարով:

▪ **«պարզությունից»** Տես նշումներ 2 Կոր. 1:12.

▪ **«այն միամտութիւնիցը»** Կա հին ձեռագրերի տարբերակ, որն ավելացնում է «և մաքրություն»: Այն գտնվում է MSS P⁴⁶, 8*, B, և G (տես NASB, NRSV, TEV, NIV): Այն բացակայում է MSS 8^c, D^c, H, K, և P (տես NKJV, NJB, REB): MS D *-ը ունի նաև ավելի երկար կարդացվողը, սակայն տերմինները հակառակ կարգով են: Տեքստային զիտնականները բաժանվում են, թե որն է բնօրինակը: «Մաքրություն» ընդգրկված է 2 Կոր. 11: 2 և ընդգրկված է որոշ շատ լավ և աշխարհագրական տարբեր հնագույն ձեռագրերում:

Արևելահայերեն **«որ Քրիստոսումն է»**

Արևմտահայերեն **«Քրիստոսին վրայ»**

NASB **«Քրիստոսի նվիրվածություն»**

NKJV **«որը Քրիստոսում է»**

NRSV, TEV, NJB, NIV **«նվիրվածություն Քրիստոսին»**

Peshitta «անկեղծությունը, որ Քրիստոսում է»
REB «պարզ սրտով նվիրվածություն Քրիստոսին»

Ablative նախդիրը, *apo*, ներկայացնում է երեք լրացումներ:

1. պարզությունից
2. մաքրությունից
3. «Քրիստոսից»

Ինչ է նշանակում 2 Կոր. 11: 3-ը: Մի քանի անգլերեն թարգմանություններ ունեն «նվիրվածություն» բառը, սակայն դա կարող է վերաբերել «Քրիստոսին», որը Պողոսի Քրիստոսի անձնական հավատքի հայտնի արտահայտությունն է:

11: 4 «Որովհետև եթե մեկը գայ» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: «Մեկը» կարծես վերաբերում է 2 Կոր. 10: 7,10 –ում նշված գլխավոր սուտ ուսուցչին:

▪ **«Եւ ուրիշ Յիսուս քարոզէ՝ որ մենք չ'քարոզեցինք»** Այս սուտ ուսուցիչները արտահայտում էին իրենց անհամաձայնությունը ոչ թե ինչ որ աննշան, ձևակերպած հարցերում, այլ անչափ կարևոր հարցերի շուրջ, կապված Հիսուս Քրիստոսի անձի և գործի համար (տես 1 Կոր. 3:11): Ակնհայտ է, որ այդ սուտ ուսուցիչների մասին բոլոր ապացույցները միասին դնելով, պարզ է դառնում, որ նրանք հեթանոսների (ինչպես Գաղատացիս գրքում) և հելլենիստների (այսինքն՝ սոֆիստներ) խառնուրդ էին: Երուսաղեմից եկած այս վերոհիշյալ հայացքներ կրողները չէին բարձրացնում թլպատության հարցը, հավանաբար, Երուսաղեմի Խորհրդի որոշման պատճառով, որի մասին նկարագրված է Գործք 15-ում, սակայն նրանք շարունակում էին իրենց հրեական օրինականությունը, ինչ-որ կերպ գուգորդել կամ վերածել հելլենիստական (այսինքն, սոֆիստներ) մտածողության:

Հնարավոր է, որ Պողոսն օգտագործում է կեղծ ուսուցիչների մեղադրանքները: Նրանք, թերևս, մեղադրեցին նրան «քարոզելու այլ ավետարան»:

Մենք, ովքեր հավատում են, որ Աստվածաշունչը Աստծո ներշնչված խոսքն է, ունենք մի քանի հարց պատասխանելու:

1. Արդյո՞ք մենք՝ Նոր Կտակարանը կարողում ենք Հին Կտակարանի աչքերով, թե՞ Նոր Կտակարանն ունի մեկնաբանության գերակայություն:
2. Արդյո՞ք Պողոսի խոսքերը (կամ ցանկացած Նոր Կտակարանի հեղինակի) ներշնչված են ինչպես Հիսուսի խոսքերը:
3. Արդյո՞ք Նոր Կտակարանի հեղինակների շրջանում «որոշակի» բազմազանության առկայությունը ժամանակակից թարգմանիչների որոշակի հարցերում որոշ «մանրերևու տեղ» է տալիս: Արդյո՞ք մենք թույլ ենք տալիս նույն բանը վաղ եկեղեցու թարգմանիչների մեջ (այսինքն, հունական և լատինական եկեղեցու հայրերը, հետագայում եկեղեցու առաջնորդները [Օգոստինոս, Ակվինաս, Լյութեր, Կավլին և այլն]): Կամ, այլ կերպ ասած, ինչպես է մարդը հասկանում (սահմանում, սահմանափակում) օրթոդոքսիան:

▪ **«կամ ուրիշ հոգի առնեք՝ որ չ'առաք»** Ոմանք դա կապում են Սուրբ Հոգու հետ (տես Գաղ. 4: 6; TEV), բայց կարծես թե ավելի նախընտրելի տարբերակ է նկատվում (1) «վախի և ծառայության հոգին» (տես Հռ. 8:15; 2 Տիմ. 1:7) կամ էլ (2) «խաղաղության և ուրախության հոգին» (տես Հռ. 14:17): «Հոգու» մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար տես 1 Կոր. 2:11.

«Այլ կամ ուրիշ» տերմինը *heteros* է, որը նշանակում է այլ տեսակի: Պողոսը հակադրում է կեղծ ուսուցիչների և իր պատգամները (Գաղ. 1:6): Գաղ. 1: 6-9-ում հիշատակված խնդիրների միջև շատ նմանություն կա:

▪ **«առաք... ընդունեցիք»** Հունարեն *lambanō* և *dechomai* բայերը հոմանիշ են: Երկու հիմնական իմաստներն են՝ մի բան ունենալ: Louw and Nida's *Greek-English Lexicon*, հատոր 1, երկու օգտակար նշումներ կան

1. «ստանալ կամ ընդունել ինչ որ բան, կամ կամ նպաստի համար, որի համար նախաձեռնությունը տեղավորվում է նվիրատուի կողմից, սակայն փոխանցման ուշադրության կենտրոնում գտնվում է ստացողը» (էջ 572)
2. 31-րդ ծանոթագրությունը, «Դա կարելի է որոշել գոյություն ունեցող համատեքստերից» (էջ 572) .

Ինձ համար որպես ավետարանական քրիստոնյա, այս տերմինները կարևոր են ավետարանի պատշաճ արձագանքի համար (տես Հովհ. 1: 12): Աստծո խոստումներին, Քրիստոսի գործերին և Հոգու կանչին պետք է արձագանքել ինչպես նախապես, այնպես էլ շարունակաբար: Մա կազմում է հիմքեր ուխտի գաղափարի համար (այսինքն, Աստված նախաձեռնում է, բայց մարդիկ պետք է արձագանքեն):

Այս կոնտեքստում *Lambanō* կրկնվում է (տես 2 Կոր. 11: 4,8,20,24; 12:16):

Արևելահայերեն «լա կ'համբերեիք»

Արևմտահայերեն «այնպիսիներուն ալ աղէկ կը հանդուրժէիք»

NASB «դուք սա գեղեցիկ եք կրում»

NKJV «դուք կարող եք համակերպվել դրա հետ»

NRSV «բավականին հեշտությամբ կներկայացնի այն»

TEV «սիրով հանդուրժում եք»

NJB «և դուք միայն այդքան պատրաստակամորեն համակերպվել եք»

REB «բավականին լավ եք դնում»

Մա կամ ներկա չեզոք հրամայական է կամ էլ ներկա չեզոք սահմանական: Մա խայթող հեզնանք է, ուղղված Կորնթոսցի քրիստոնյաների պատրաստակամությանը՝ որոնք լսում էին այդ կեղծ ուսուցիչներին:

Պողոսն օգտագործում է այս տերմինը, *anechomai*, այս գլխում մի քանի անգամ (տես 2 Կոր. 11: 1,4,10,20): 2 Կոր. 11: 1-ը օգտագործվում է «տոկալ, համբերել» իմաստով (տես 1 Կոր. 4:12), բայց 2 Կոր. 11: 4,19,20 այն օգտագործվում է սարկազմիկ «հանդուրժել» իմաստով:

11: 5 «Որովհետև կարծեմ թե» Այս գրական բաժնում Պողոսը հաճախ է օգտագործում այս բայը, *logizomai*, (տես 2 Կոր. 10: 2,7,11; 11: 5; 12: 6): Հնարավոր է, դա կարճ բառ կամ հաճախ օգտագործվող տերմին է եղել սոփիստ կեղծ ուսուցիչների կողմից:

▪ **«ոչ մի բանով պակաս չեմ»** Այս արտահայտության մեջ բայը վաղակատար ներգործական ինֆինիտիվ է: Ոչ մի ժամանակ, անցյալում կամ ներկայում, Պողոսը իրեն չի համարել ավելի քիչ, քան Երուսաղեմի այդ հեղինակավոր ներկայացուցիչները (տես 2 Կոր. 12:11): Այս հեռանկարը նույնպես քննարկվում է Գաղ. 1: 11-2: 14, որտեղ Պողոսը նաև պաշտպանում է իր Առաքյալ լինելը:

Արևելահայերեն «քան թե մեծամեծ առաքեալները»

Արևմտահայերեն «ամենէն երեւելի առաքեալներէն»

NASB, NKJV «ամենաբարձր առաքյալներին»

NRSV «այս սուպեր առաքյալներին»

TEV «ձեր այսպես կոչված առաքյալներին»

NJB, REB «գերագույն առաքյալներին»

Peshitta «ամենահեղինակավոր առաքյալներին»

Այս սարկավազային նկարագրությունը երկու հունարեն տերմինների համադրություն է, *hyper* (այսինքն, վրա և վերը) և *lian* (այսինքն, մեծ կամ գերազանց): Այս նկարագրությունը հազվադեպ է, և Պողոսը օգտագործում է միայն այստեղ և 2 Կոր. 12:11-ում: 5-րդ համարը կոնտեքստային առումով և քերականորեն կապված է 2 Կոր. 11: 4-ի հետ, որը ակնհայտորեն վերաբերում է կեղծ ուսուցիչներին (տես 2 Կոր. 11:13-15): Պողոսն օգտագործում է «առաքյալներ» տերմինը սարկավազայնորեն իր երկու իմաստներով; (1) Տասներկուսը և (2) եկեղեցիներից ուղարկված սուրհանդակները (տես 2 Կոր. 11:13): Ըստ երևույթին, այդ կեղծ ուսուցիչները որոշակի կապեր ունեին Երուսաղեմի եկեղեցու հետ (տես 2 Կոր. 11: 22-ը ցույց է տալիս, որ նրանք պնդում էին, որ հրեական ծագում ունեն, 12: 1-ը, որ նրանք պնդում էին խարիզմատիկ փորձառությունները):

- **«մեծամեծ»** (*hyperlian*) Տես Հատուկ Թեմա: Պողոսի *Hyper*

11: 6 «Թէև» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Պողոսը խոստովանեց, որ հունական հռետորությունը իր ուժը չէր: Իր ուժը իր պատգամի ներշնչված բովանդակությունն էր:

- **«տգետ լինիմ խօսքով»** Այս տերմինը օգտագործվում է «անպատրաստ» կամ «ոչ պրոֆեսիոնալ» իմաստով (տես Գործք 4:13, որտեղ օգտագործվում է Պետրոսի և Հովհաննեսի համար, կամ 1 Կոր. 14, որտեղ օգտագործվում է նրանց համար, ովքեր տգետ են հոգևոր պարզների մեջ): Թվում է, թե Պողոսի խոստովանությունն այն է, որ հռետորության մեջ հմուտ չէր (տես 2 Կոր. 10:10; 1 Կոր.1:17):

Այս մեկնաբանությունը, ըստ երևույթին, կեղծ ուսուցիչներից է, ցույց է տալիս, որ նրանք պատվել են հռետորական խոսքը: Սա ենթադրում է հելլենիստական (այսինքն՝ սոփիստներ) ֆոն: Տես Bruce W. Winter, *Philo and Paul Among the Sophists*:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 11:7-11
⁷Կամ թե մե՞ղք գործեցի՝ որ իմ անձը խոնարհեցրի. Որ դուք բարձրանաք. որովհետև Աստուծոյ աւետարանը ձրի աւետարանեցի ձեզ: ⁸Ուրիշ եկեղեցիներ կողոպտեցի, եւ վարձք առայ ձեզ ծառայելու համար: ⁹Եւ երբոր ձեզ մօտ էի՝ մի բանի պակասութիւն քաշած ժամանակս էլ, ձեզանից մէկին ծանրութիւն չ'տուի. որովհետև իմ պակասութիւնը Մակեդոնիայից եկած եղբարքը լրացրին. եւ ամեն բանի մէջ իմ անձն առանց ձեզ ծանրութիւն տալու պահեցի, եւ կ'պահեմ էլ: ¹⁰Քրիստոսի ճշմարտութիւնն է ինձանում. որ այս պարծանքն Աքայիայի կողմերումը չի խափանուիլ ինձանից: ¹¹ Ի՞նչու համար. որովհետև ձեզ չե՞մ սիրում. Աստուած գիտէ:

11: 7 «մե՞ղք գործեցի՝ որ իմ անձը խոնարհեցրի. Որ դուք բարձրանաք» 7-րդ համարը հարց է, որը ակնկալում է «ոչ» պատասխան: Սա ևս մեկ օրինակ է Պողոսի սարկավազից, որը վերաբերում է Կորնթոսի եկեղեցուց դրամական վարձատրություն չընդունելու շարունակվող հակասությանը (տես 1 Կոր. 9: 3-18):

«Մեղք» բառը (*hamartia*) օգտագործվում է ոչ բարոյական իմաստով «ես սխալ եմ արել» կամ «սխալ դատողություն»: Հիշեք, կոնտեքստը, կոնտեքստը, կոնտեքստն է որոշում բառի իմաստը: Ուշադիր եղեք նախապես սահմանված բառերի աստվածաբանական սահմանումների հանդեպ, որոնք կարդացվում են ամեն մի դեպքում:

- **«Աստուծոյ աւետարանը»** Նկատի առեք, որ Քրիստոսի ավետարանը (տես 2 Կոր. 2:12; 9:13; 10:14), նանԱստծո ավետարանն է:

11: 8 «Ուրիշ եկեղեցիներ կողոպտեցի» Հույները և հռոմեացիները սովոր էին վճարել իրենց ճանապարհորդող ուսուցիչներին, սակայն Պողոսը գիտեր, որ դա կեղծ ուսուցիչների կողմից քննադատության աղբյուր կլիներ և հրաժարվեց դրամական օգնություն ընդունել այս եկեղեցուց (կամ որևէ այլ եկեղեցուց, մինչ նա աշխատում էր նրանց մեջ, տես 1 Թես. 2: 5-9; 2 Թես. 3: 7-9): Պողոսը ընդունեց Փիլիպպեի և Թեսաղոնիկեի օգնությունը, երբ նա հեռացավ նրանց մոտից (տես Փիլ. 4: 15-18 և հնարավոր 1 Թես. 3: 6): Ակնհայտ է, որ դա վնասում է այս եկեղեցու զգացմունքներին (տես 2 Կոր. 11:11; 12: 13,14; 1 Կոր. 9:12, 15, 18):

- **«եկեղեցիներ»** Տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:2
- **«ձեզ ծառայելու»** Տես Հատուկ Թեմա: Ծառա Առաջնորդ 1 Կոր. 4:1

11:10 «Քրիստոսի ճշմարտութիւնն է ինձանում» Սա ճշմարտության հաստատման կամ Պողոսի ներշնչման իմաստի իդիոմատիկ ձևն է (տես Հռ. 9: 1): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՂՈՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ 2 Կոր. 13:8

- **«որ այս պարծանքն Աքայիայի կողմերումը չի խափանուիլ ինձանից»** Սա ուժեղ հունարեն տերմին է, որը օգտագործվում է Սեպտուագինդում՝ գետի արգելման համար: Պողոսը հրաժարվեց գումար վերցնել Կորնթոսի եկեղեցուց, և, ըստ երևույթին, դա հայտնի դարձավ հրապարակայնորեն և հաճախակի: «Պարծենալ» տես 2 Կոր.1:12.

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 11:12-15
¹²Այն որ անում եմ՝ կ'անեմ էլ, որ պատճառ որոնողների պատճառը կտրեմ. Որ ինչով որ պարծենում են՝ նորանք էլ մեզ նման գտնուին: ¹³Որովհետև այնպիսիները սուտ առաքեալներ, նենգաւոր մշակներ, Քրիստոսի առաքեալների պէս կերպարանաւորներ են: ¹⁴Եւ զարմանալի էլ չէ. Որովհետև սաստանան ինքն էլ լոյսի հրեշտակի կերպարանքն իրան վերայ է առնում: ¹⁵Ուրեմն մեծ բան չէ որ նորա պաշտօնեաներն էլ կերպարանուին արդարութեան պաշտօնեաների նման. որոնց վերջը իրանց գործերին պէս կ'իինի:

11:12 Պողոսը ճանաչում էր իր հակառակորդներին: Նա փորձեց հեռացնել բոլոր հնարավորությունները՝ նրանց հարձակումների համար: Նա սահմանափակեց իր ազատությունն ու իրավունքները՝ ավետարանը պաշտպանելու և ընդլայնելու համար (տես Հռ. 14: 1-15: 13):

11:13 «Որովհետև այնպիսիները սուտ առաքեալներ» Այս քաղաքից դուրս գտնվող կրոնական առաջնորդները, հնարավոր է Երուսաղեմից, իրենց համարում էին իշխանություն: Պողոսը նրանց կոչում է սուտ-առաքյալներ և սուտ եղբայրներ (տես 2 Կոր. 11:26):

- **«նենգաւոր մշակներ»** Այս բառը գոյականից է առաջացել, որը նշանակում է «ձկնորսական խայծ»: Նրանք փորձում էին բռնել Կորնթացի հավատացյալներին իրենց նպատակների և հետազայում իրենց հեղինակության համար:
- **«Քրիստոսի առաքեալների պէս կերպարանաւորներ են»** Սրանք անկեղծ քրիստոնյաներ չէին, ովքեր մոլորվել էին: Սրանք հոգևորապէս կորսված մարդիկ էին (2 Կոր. 11:14), փորձելով բաժանել Աստծո եկեղեցին (տես 1 Կոր. 3: 10-15): Նրանք գայլեր էին ոչխարի կերպարանքով (տես Մատթ. 7: Գործք 20:29; 2 Պետ. 2: 1-22; Հուդա 1: 3-16):

«Խարդախություն» տերմինը (այսինքն, *metaschematizō*) օգտագործվում է 2 Կոր. 11: 13,14,15: Այն խոսում է ինչ-որ բանի կամ մեկի արտաքին փոփոխվող ձևի մասին (տես Փիլ. 3:21): Սրանք (այսինքն, կեղծ ուսուցիչներն ու սատանան), կարծես թե այն չեն, ինչ ցույց են տալիս:

11:14 «Որովհետև սատանան ինքն էլ լոյսի հրեշտակի կերպարանքն իրան վերայ է առնում» Սա ակնհայտ ճշմարտություն է, բայց ոչ մի տեղ Աստվածաշնչում չի հաստատվում այս տերմիններով: Դա կարող է լինել ռաբինական ավանդույթներից Ծննդոցի մասին (տես DSS cave 1, *Manual of Discipline* 3:20,24): Սատանայի գլխավոր հնարքը կեղծել ճշմարտությունը (տես Ծննդոց 3): Չարը միշտ փորձում է նմանակել կամ կեղծել բարին: Կեղծ ուսուցիչները միշտ գալիս են եկեղեցու ներսից (տես 2 Պետ. 2; 1 Հովհ. 2:18-19): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐԸ, 1 Կոր. 7:5:

11:15 «Էթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է: Կորնթոսի եկեղեցում սատանայական ներշնչված կեղծ ուսուցիչներ կային: Նրանք մեզ հետ են այսօր:

- **«արդարութեան պաշտօնեաների»** Պողոսը հաճախ չի օգտագործում «արդարություն» այն իմաստով, որն օգտագործում է այստեղ: Այստեղ այն ունի «բարություն» կամ «ուղղություն» իմաստը (տես Մատթ. 6:1), այլ ոչ թե հավատքով արդարացման աստվածաբանական իմաստով (տես Հռ. 4): Տես Հատուկ Թեմա: Արդարություն, 1 Կոր. 1:30: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԾԱՌԱ ԱՌԱՋՆՈՐԴ, 1 Կոր. 4:1:

- **«որոնց վերջը իրանց գործերին պէս կ'լինի»** Սա, կարծես, ակնարկ է Առ. 24:12: Դա նաև Աստվածաշնչի հիմնական ճշմարտությունն է: Տեսեք ամբողջական գրառումը 2 Կոր. 5:10:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 11:16-21ա

¹⁶Դարձեալ ասում եմ. Չ'լինի որ մէկն ինձ յիմար համարէ. Ապա թէ ոչ գոնեա յիմարի պէս ընդունեցէք ինձ որ ես էլ մի քիչ պարծենամ: ¹⁷Ինչ որ խօսում եմ, ոչ թէ Տիրոջ կամքի համեմատ եմ խօսում, այլ ինչպէս անմտութեամբ այս պարծանքի նիւթին նկատմամբ: ¹⁸Եւ որովհետև շատերը մարմնի կողմանէ պարծենում են, ես էլ կ'պարծենամ: ¹⁹Վասնզի յօծարութեամբ համբերում էք անմիտներին իմաստուն գոլով: ²⁰Որովհետև համբերում էք, եթէ մէկը ձեզ ծառայեցնէ, եթէ մէկը ձեր բանն ուտէ, եթէ մէկը բան առնէ, եթէ մէկը գոռոզանայ, եթէ մէկը ձեր երեսին զարկէ: ²¹Անարգանքի համար եմ ասում. իբր թէ մենք սկար էինք. ինչ բանով որ մէկը համարձակէ պարծենալ, անմտութիւնով եմ ասում, ես էլ եմ համարձակում:

11:16 «Չ'լինի որ մէկն ինձ յիմար համարէ... որ ես էլ մի քիչ պարծենամ» Պողոսը չէր հարմարվում իր անձնական պարծանքով (տես 2 Կոր. 11:1,17): Կեղծ ուսուցիչները ստիպել էին նրան օգտագործել իրենց մեթոդները (այսինքն, 10-13 գլուխների ոճը արտացոլում է հելլենիստական հռետորական ձևերի առանձնահատկությունները):

«Հիմար» տես Հատուկ Թեմա 1 Կոր. 15:36: «Պարծենալ» տես Հատուկ Թեմա 1 Կոր. 5:6:

- **«Թե»** Սա անավարտ առաջին կարգի պայմանական նախադասություն է (այսինքն, ոչ բայ): Այս Կորնթոսի հավատացյալները զարմացած էին Պողոսի նամակներով:

11:17 Պողոսը ակնարկեց Հիսուսի կյանքը և վերաբերմունքը 2 Կոր. 10: 1 (այսինքն, Քրիստոսի հեգությունը և խոնարհությունը), բայց երբ հասավ պարծենալուն կամ մարդկային համեմատություններին, Պողոսը պետք է ընդունի, որ Հիսուսի մեջ նախադեպը չկա:

11:18 «Եւ որովհետև շատերը մարմնի կողմանէ պարծենում են, ես էլ կ'պարծենամ» Սա 10-13 գլուխների հիմնական ուշադրությունն է: Կեղծ ուսուցիչները հարձակվել էին Պողոսի և նրա

ավետարանի վրա, համեմատելով նրա ժառանգությունը և հոգևոր պարզկները իրենց հետ (տես 2 Կոր. 11: 8): Պողոսը հուսահատված էր, որ եկեղեցին լսել էր նրանց և երկմտել նրանց փաստարկներով: Հետևաբար, նա որոշեց իջնել նրանց մակարդակին՝ այս եկեղեցուն հետ շահելու նպատակով, վերադառնալու իր առաջնորդության և իր ավետարանի վստահությունը:

11: 19-20 Սա խայթող հեզանք է Կորնթոսի եկեղեցու հանդեպ: Ամեն ինչում, ինչի մեջ որ կեղծ ուսուցիչները մեղադրում էին Պողոսին, նրանք գործում էին և եկեղեցին դրական էր արձագանքում դրանց:

- **«համբերում էք»** Տես նշում 2 Կոր. 11: 4:

11:20 «եթե մեկը ձեզ ծառայեցնէ» Սա սկսում է հինգ առաջին կարգի պայմանական նախադասությունների շարքը: Այս բայը (այսինքն, *katadouloō*) օգտագործվում է միայն այստեղ և Գաղ. 2: 4, որտեղ խոսում է հուդայականների մասին: Հուդայականները պնդում էին, որ մարդը պետք է դառնար լիարժեք հրեա, նախքան քրիստոնյա դառնալը: Ինչպես են այդ կեղծ ուսուցիչները վերաբերվում հուդայականներին, անորոշ է: Ճշգրիտ կանոնները կամ ծեսերը, որոնք Կորնթոսի կեղծ ուսուցիչները անհրաժեշտ էին համարում փրկության համար, նույնպես անորոշ են:

- **«եթե մեկը ձեր բանն ուտէ»** Պողոսը այս բայը օգտագործեց միայն երկու անգամ, այստեղ և Գաղ. 5:15, որը նաև նկարագրում է մի եկեղեցի, որը կոնֆլիկտի մեջ է կեղծ ուսուցիչների հետ:

Արևելահայերեն **«եթե մեկը բան առնէ»**

Արևմտահայերեն **«եթե մեկը ձեզմէ բան մը առնէ»**

NASB, NRSV, TEV **«օգտվում է ձեզանից»**

NKJV **«վերցնում է ձեզանից»**

NJB **«պահում է ձեզ իր պատվերների տակ»**

Սա հասարակ բայ է *lambanō*, բայց բառի փոխաբերական լայն իմաստով «պահել, բռնել»: Այստեղ նշանակում է շահարկել անձնական օգուտի համար:

Արևելահայերեն **«եթե մեկը գոռոզանայ»**

Արևմտահայերեն **«եթե մեկը ձեր վրայ հպարտանայ»**

NASB, NKJV **«բարձրացնում է իրեն»**

NRSV **«դրեց օդերում»**

TEV **«վերնից է նայում ձեզ վրա»**

NJB **«ինքն իրեն վեր է դասում»**

Պողոսն օգտագործեց այս նույն տերմինը 2 Կոր. 10: 5 նկարագրելու կեղծ ուսուցիչների փաստարկներն ու շահարկումների ամբարտավանությունը: Այս տերմինը պարզապես «բարձրացնել» բառն է (տես 1 Տիմ. 2: 8): Սակայն, 1 Կորնթացիսում այն ունի մարդկային հպարտության և ամբարտավանության բացասական նշանակությունը:

- **«եթե մեկը ձեր երեսին զարկէ»** Պողոսի խոսքերը պարունակում են սարկազմի կաթիլ (տես 2 Կոր. 11:21): Նա այդքան նուրբ և հեզ էր (տես 2 Կոր. 10:1) նրանց հետ, բայց նրանք մերժեցին իրեն; կեղծ ուսուցիչները այնքան եսասեր և մանիպուլատիվ էին, բայց նրանք սիրում են նրանց:

11:21 «Անարգանքի համար եմ ասում» Դա բառացիորեն նշանակում է «ըստ անարգանքի»: Պողոսը զգում էր, որ իր հեզությունը և նրբանկատությունը սխալ էր հասկացվել և չարաշահվել կեղծ ուսուցիչների կողմից: Սա կարող է լինել սարկազմի մեկ այլ օրինակ:

- «տկար» Տես Հատուկ Թեմա: Տկարություն, 2 Կոր. 12:9

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 11:21բ-29

²¹Անարգանքի համար եմ ասում. իբր թե մենք տկար էինք. ինչ բանով որ մեկը համարձակե պարծենալ, անստուգանքով եմ ասում, ես էլ եմ համարձակում: ²²Եբրայեցի՞ են, ես էլ. Իսրայելացի՞ են, ես էլ. Աբրահամի զուսկն են, ես էլ: ²³Քրիստոսի պաշտօնեանե՞ր են, յիմարութիւնով եմ ասում՝ թե էլ աւելի ես, մանաւանդ աշխատանքներով, ծեծերով էլ աւելի, բանտերի մէջ մանաւանդ, մահերով շատ անգամ: ²⁴Հրէաներիցը հինգ անգամ՝ քառասունից մեկը պակաս ծեծ ընդունեցի: ²⁵Երեք անգամ ձաղկով ծեծուեցայ. մեկ անգամ քարկոծուեցայ. երեք անգամ նաւակոծ եղայ. Մի ցերեկ ու գիշեր անդնդումը մնացի: ²⁶Շատ անգամ ճանապարհներում. Գետերից վտանգներ, աւազակներից վտանգներ, ազգիցս վտանգներ, հեթանոսներից վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ, ծովի մէջ վտանգներ, սուտ եղբայրներից վտանգներ: ²⁷Ձանքի մէջ եւ աշխատանքի մէջ. շատ անգամ արթնութիւնների մէջ. սովի եւ ծարաւի մէջ. Շատ անգամ ծովի մէջ. Տրտի եւ մերկութեան մէջ: ²⁸Բացի արտաքին նեղութիւնները, ինձ վերայ կիսովում է՝ ամեն օր ամեն եկեղեցիների հոգսը: ²⁹Ո՞վ կ'տկարանայ՝ եւ ես չեմ տկարանայ. Ո՞վ կ'գայթակղէ՝ եւ ես չեմ բորբոքուիլ:

11: 21բ Պողոսը պատրաստ է կրակի հետ կրակով կռվել: Նրանք ուզում են համեմատել լիազորությունները, թող այդպես լինի:

11:22 «Եբրայեցի՞ են, ես էլ» Այս չորս հռետորական հարցերից առաջինն է: «Եբրայեցիները» անուղղակիորեն անդրադարձան արամերեն խոսելու ունակությանը (տես Գործք 6:1), բայց իրական ռասայական հրեաների ենթադրությամբ: Սա ևս մեկ ապացույց է, որ կեղծ ուսուցիչների այս խումբը ուներ պաղեստինյան / հուդայական ծագում:

Այս «ես էլ»-ը (այսինքն, *kagō*) կրկնվում է 3 անգամ 2 Կոր. 11:22:

- «Իսրայելացի՞ են, ես էլ» Ըստ երևույթին, նրանք պարծենում էին, որ իրենք Հին Ուխտի Աստծո ժողովրդի մասն էին կազմում (տես Փիլ. 3: 5; Հովհ. 8: 31-59):

11:23 «Քրիստոսի պաշտօնեանե՞ր են» Պողոսը այստեղ չի հաստատում, որ նրանք քրիստոնյա են: Նա պարզապես հաստատում է, հանուն փաստարկի, որ նա ունի նույն հոգևոր հավատալիքները, որով նրանք պարծենում են: Նրանք նույնիսկ պնդում էին, որ հոգևոր առավելություն ունեն Պողոսից:

- «էլ աւելի ես» Պողոսն ուներ մի շարք համեմատություններ *en*-ի հետ
 1. մանավանդ աշխատանքներով, 2 Կոր. 11:23
 2. ծեծերով էլ ավելի, 2 Կոր. 11:23
 3. բանտերի մէջ մանավանդ, 2 Կոր. 11:23
 4. մահերով շատ անգամ, 2 Կոր. 11:23
 - ա. ծեծվել երեսուն ինը հարվածով (5 անգամ), 2 Կոր. 11:24
 - բ. ձաղկով ծեծվել (3 անգամ), 2 Կոր. 11:25
 - գ. քարկոծվել (մեկ անգամ), 2 Կոր. 11:25
 - դ. նավակոծության ենթարկվել (3 անգամ), 2 Կոր. 11:25

Նրանցից որոշները արձանագրված են Գործքում, բայց ոչ բոլորը: Իրականում մենք առաջին դարի եկեղեցու մասին քիչ բան գիտենք: Պողոսը վճարել էր ավետարանը խոսելու գինը:

11:24 «քառասունից մէկը պակաս ծեծ ընդունեցի» Սա վերաբերում է ժողովարանի ատյանի վարած պատիժին (տես 2 Օր. 25: 1-3): Հարվածները, հավանաբար, տրվում էին գավազանով (տես Ելից 21: 20; Առ. 10:13; 19:29; 26: 3) և դա արվում էր հանրության առաջ: Այս տեսակ պատիժը հայտնի էր և կիրառվում էր Ասորեստանում և Եգիպտոսում: Այն կիրառվել է Իսրայելում (տես Ես. 50: 6; Եր. 20: 2; 37:15):

Ռաբբիներն ավելի ուշ օրենքով համակարգեցին, որ այն պետք է լինի քառասուն հարվածից քիչ (այսինքն առավելագույն քանակը, տես Josephus, Antiq 4: 8: 21,23): Նրանք նշեցին, որ այսքան շատ հարված պետք է հասցվի ետևի և առջևի, ձախ և աջ ուսերի վրա (տես *Maccoth* 3: 10):

11:25 «ձաղկով ծեծուեցայ» Սա վերաբերում է հռոմեական դատական պատժատեսակին (*verberatio*), որը, հավանաբար, հրապարակայնորեն կատարվում էր քաղաքային դատարանի կողմից (տես Գործք 16:22-40; 1 Կոր.4:21):

▪ **«մէկ անգամ քարկոծուեցայ»** Գործք 14:19-ում նրան մեղադրողները կարծեցին, թե նա մեռած է: Սա կարող է լինել միջադեպը:

▪ **«երեք անգամ նաւակոծ եղայ»** Սա ցույց է տալիս, թե որքան սահմանափակ է Գործք Առաքելոց գրքի պատմությունը: Պողոսի նավաբեկությունը, ինչի մասին արձանագրված է Գործքում, տեղի է ունեցել պատմության մեջ այս դեպքից հետո: Գործքը ամբողջական պատմություն չէն, այլ ավետարանի աստվածաբանական պատմությունը, որը Պաղեստինից Հռոմ է տեղափոխվում, հրեաներից հեթանոսներին:

11:26

Արևելահայերեն **«Շատ անգամ ճանապարհներում»**

Արևմտահայերեն **«Շատ անգամ ճամփորդություններու մեջ»**

NASB **«Ես հաճախակի ճամփորդությունների մեջ եմ եղել»**

NKJV **«հաճախ ճամփորդությունների մեջ»**

NRSV **«հաճախակի ճամփորդությունների մեջ»**

TEV **«շատ ուղևորություններով»**

NJB **«շարունակաբար ճանապարհորդում եմ»**

Սա սկսում է տրական հոլովի հոգնակիների մեկ այլ ցանկ կամ ութ հոլովների համակարգ A. T. Robertson- ի նման, այսինքն՝ ներգոյական: 2 Կոր. 11: 26,27,28 չկա բայ, դերբայ կամ ինֆինիտիվ: Սա նկարագրում է Պողոսի ծառայությունը Քրիստոսի համար:

1. գետերից վտանգներ
2. ավազակներից վտանգներ
3. վտանգներ իմ հայրենակիցներից (երբ նա Կորնթոսում էր)
4. վտանգներ հեթանոսներից
5. վտանգներ քաղաքում
6. վտանգներ անապատում
7. վտանգներ ծովում
8. կեղծ եղբայրներից վտանգներ (երբ նա Կորնթոսում էր)

11:27 «Ես եղել եմ» Պողոսը սկսում է մեկ այլ ցանկ՝ օգտագործելով տրական/ներգոյական:

1. աշխատանքի մեջ
2. դժվարության մեջ
3. անքուն գիշերներում

4. սովի մեջ
5. ծարավի մեջ
6. ծոմապահության մեջ բազմիցս (գրկ. «հաճախ առանց սննդի»)
7. ցրտի մեջ
8. մերկության մեջ (գրկ. «անպաշտպան»)

Մենք բոլորս, ովքեր պնդում են, որ ավետարանի ծառաներն են, պետք է թողնենք տրտնջալը:

11:28 Պողոսին ամենօրյա ցավ պատճառող մեկ այլ բան էր հոգեբանական / հոգևոր մտահոգությունը եկեղեցիների առողջության և արդյունավետության համար, հնարավոր է, սա ամենավատ ցավն էր:

11:29 «Ո՞վ կ'սկարանայ՝ եւ ես չեմ տկարանալ» 29-րդ համարում կա երկու հոետորական հարց: Երբ Պողոսը տեսնում է եկեղեցիների ու հավատացյալների ցավը, այն ցավ է պատճառում իրեն և գայրանում է նրանց հանդեպ, ովքեր փոքր երեխաներին գայթակղեցնում են (տես Մատթ.18):

Արևելահայերեն «եւ ես չեմ բորբոքուիլ»
Արևմտահայերեն «ու իմ սիրտս չայրիք»

- NASB «ինտենսիվ մտահոգություն»
- NKJV «վրդովված է»
- NRSV «վրդովմունքը»
- TEV «հուսահատությամբ լցված»
- NJB «այրվում է տառապանքի մեջ»

Պողոսը օգտագործում է այս տերմինը, այրվել, մասնագիտական իմաստով իր Կորնթացիս նամակների մեջ: Դա բացասական կամ կործանարար չէ (տես Եփ. 6:16), այլ ինտենսիվ ցանկության համար փոխաբերություն (տես 1 Կոր. 7:9):

Արևելահայերեն «Ո՞վ կ'գայթակղէ»
Արևմտահայերեն «Ո՞վ կը գայթակղի»

- NASB, TEV «տարվում է մեղքի»
- NKJV, NRSV, «գայթակղեցնում է»
- NJB «ընկնելու պատճառ է դառնում»

Սա հունարեն *skandalon* տերմինն է, որը բառացիորեն վերաբերում է որոգայթ, թակարդ լարելուն (տես Հռ. 11: 9): Այն օգտագործվում է բարոյական ձախողման իմաստով (այստեղ և 1 Կոր. 8: 13) կամ, հնարավոր է, գայթակղվի «սուպեր առաքյալների» կեղծ աստվածաբանությամբ (տես 1 Կոր. 1:23; Գաղ. 5:11):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 11:30-33
³⁰Եթէ պարծենալ պետք լինի, իմ տկարութիւնովը կ'պարծենամ: ³¹Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը՝ որ յաւիտեան օրհնեալ է գիտէ որ սուտ չեմ ասում. ³²Դամասկոսումն Արեւտա թագաւորի ազգապետը Դամասկացիների քաղաքումը պահապաններ էր դրել որ ինձ բռնէ. ³³Եւ ես պատուհանիցը քրոցով կախուեցայ պարսպիցը, եւ փախայ նորա ձեռիցը:

11:30 «Եթէ» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է:

▪ **«իմ տկարութիւնովը կ'պարծենամ»** Պողոսի փորձությունները և քննադատությունները պատճառ հանդիսացան նրան գիտակցելու, որ իր ուժեղ կողմերը Աստուծոց են, իսկ թույլ կողմերը հնարավորություն Աստծուն փառք բերելու համար (տես 2 Կոր. 12:1-10):

11:31 «Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը» Այս համարը երդում է: Պողոսն օգտագործում է Աստծու անունը, հաստատելու իր հայտարարությունների ճշմարտացիությունը շատ հաճախ (տես Հռ. 1: 9; 2 Կոր. 1:18; 11: 10,11; Գաղ. 1:20; 1 Տիմ. 2: 7):

▪ **«յաւիտեան»** Սա բառացիորեն «մինչեւ դարեր» (տես Հռ. 1:25; 9: 5; 11:36; 16:27): Նույն արտահայտությունը, սակայն եզակի, գտնվում է 1 Կոր. 8:13 և 2 Կոր. 9: 9: Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 1:20:

11: 32-33 «Դամասկոսումն Արետա թագաւորի ազգապետը» Ոմանք ասում են, որ դա կուլմինացիոն չէ, բայց դա, ըստ երևույթին, ամենադժվար (այսինքն՝ թույլ) պահն է Պողոսի կյանքի: Դա կարող էր վերաբերել կեղծ ուսուցիչների մեկ այլ մեղադրանքին: Արետա արքան (այսինքն, *Harethath*) Նաբաթյան կայսրության թագավորն էր 9 մ.թ.ա մինչև 40մ.թ.: Նա Հերովդես Անտիփասի աներ-հայրն էր: «Արետա» տերմինը նման է «Փարավոն» տերմինին, որը Նաբաթյան բոլոր թագավորների տիտղոսն էր, որոնք ղեկավարում էին Պետրայում: «Ազգապետ» Դամասկոսում եղել է Արետայի պաշտոնական ներկայացուցիչն է եղել: Գործք 9: 23-25-ում կատարվածը մի փոքր այլ է: Հնարավոր է, կեղծ ուսուցիչները այս դեպքն օգտագործել են Պողոսի կերպարի վրա հարձակվելու համար:

ՔՆՆԱԲԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ինչու՞ է Պողոսը պաշտպանվում այս կեղծ ուսուցիչներից:
2. Արդյո՞ք 2 Կոր. 11: 3-ը վերաբերում է առաքելական իշխանությունից շնորհքից կամ գայթակղությունից ընկնելուն:
3. Ինչու՞ Պողոսը չընդունեց Կորնթոսի եկեղեցու գումարները:
4. Ովքե՞ր էին այդ կեղծ առաքյալները:
5. Նկարագրեք այդ կեղծ ուսուցիչների աստվածաբանությունը:
6. Ինչու՞ Պողոսի կյանքի նման դաժան դրսևորումը իր առաքելական իշխանության նշանն էր (տես 1 Կոր. 4: 9-13; 2 Կոր. 4: 8-12; 6: 4)

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 12

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Տեսիլքներ և հայտնություններ	Դրախտի տեսիլքը	Հետագայում պարծենալ. Ուժ տկարության մեջ	Պողոսի տեսիլքները և հայտնությունները	Պողոսն առաջնորդվում է իր գովասանքի ձայնով (11:1-12:18)
12:1-10	12:1-10	12:1-10	12:1-6 12:7-10	12:1-6 12:7-10
Պողոսի մտահոգությունը Կորնթոսի եկեղեցու համար	Առաքյալի նշանները		Պողոսի մտահոգությունը կորնթացիների համար	
12:11-18	12:11-13 Սերը եկեղեցու համար 12:14-21	12:11-13 Պողոսի ծրագրերը կրկին այցելել Կորնթոս (12:14-13:10)	12:11-13 12:14-15 12:16-18	12:11-13 12:14-15 12:16-18
		Կոչ՝ ինքնաքննության և փոփոխության համար (12:19-13:10)		Պողոսի վախերն ու մտահոգությունները (12:19-13:10)
12:19-21		12:19-21	12:19-21	12:19-21

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ [*«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»*](#)
Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

- Ա. Պողոսի հատուկ տեսիլքը և նրա ֆիզիկական խնդիրները, որոնք վերաբերում են նույն կոնտեքստին, հավանաբար երկուսն էլ տեղի են ունեցել 14 տարի առաջ Տարսուսում (42 կամ 43թթ.): Մա չի կարող վերաբերել 20 տարի առաջ տեղի ունեցած իր դարձի գալուն, թեև կարծում եմ, որ նրա «փուշը» այժմի խնդիրն էր, որը սկսել է Դամասկոսի ճանապարհին Հիսուսին հանդիպելու պահից (տես Գործք 9:22-26):
- Բ. Պողոսը շարունակում է խայթող հեզնանքը 2 Կոր. 12:11,13 և 15, ինչպես նա արեց 2 Կոր. 11:4-5,7,19-21: Ես հավատում եմ, որ 10-13 գլուխները գրված են հելլենիստական հռետորական ոճով՝ ցույց տալով պատրաստված հելլենիստական հրեա կեղծ անբարտավան ուսուցիչներին, որ նա նույնպես գիտեր և կարող էր օգտագործել իրենց նախընտրած գրական ոճը:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 12:1-10

¹Պարծենալը յիբաւի օգուտ չէ բերում ինձ. Բայց կ'գամ Տիրոջ տեսիլքներին եւ յայտնութիւններին:
²Մէկ մարդ գիտեմ Քրիստոսումը տասնէւչորս տարուց առաջ, թէ մարմնով էր՝ չ'գիտեմ, եւ թէ առանց մարմնի էր՝ չ'գիտեմ, Աստուած գիտէ. նա յափշտակուեցաւ մինչեւ երրորդ երկինքը: ³Եւ գիտեմ այնպիսի մարդին թէ մարմնով՝ եւ թէ առանց մարմնի էր՝ չ'գիտեմ. Աստուած գիտէ. ⁴Որ նա յափշտակուեցաւ դրախտի մէջ. Եւ անասելի բաներ լսեց՝ որ մարդի պէտք չէ նորանց խօսել:
⁵Այնպիսուն համար կ'պարծենամ. բայց իմ անձի համար չեմ պարծենալ, բայց միայն իմ տակարութիւններովը: ⁶Որովհետեւ եթէ կամենամ էլ պարծենալ անմիտ չեմ լինիլ. Որ ճշմարիտն եմ ասում. Բայց ինչայում եմ, որ մի գուցէ մէկն ինձ համար աւելի բան համարէ, քան թէ այն՝ որ ինձանում տեսնում է կամ ինձանից լսում: ⁷Եւ որ յայտնութիւնների առաւելութեամբը չ'հպարտանամ, մարմնիս համար խայթ տրուեցաւ ինձ՝ սաստանայի հրեշտակ, որ ինձ բռունցքով ձեծէ, որ չ'գոռոզանամ: ⁸Սորա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նորան հեռացնէ ինձանից:
⁹Եւ նա ինձ ասեց. Բաւական է քեզ իմ շնորհքը, որովհետեւ իմ զօրութիւնը տկարութեան մէջ է կատարվում. Արդ աւելի յօժարութեամբ իմ տկարութիւններովը կ'պարծենամ. որ Քրիստոսի զօրութիւնը բնակուի ինձանում: ¹⁰Վասնորոյ հաւանել եմ տկարութիւնների, թշնամանքների, վիշտերի, հալածանքների, եւ նեղութիւնների Քրիստոսի համար. որ երբոր տակարանում եմ, այն ժամանակ զօրանում եմ:

12:1 «Պարծենալը» Հունարեն *dei* տերմինը նշանակում է «անհրաժեշտություն»: Կեղծ ուսուցիչները հարձակվում էին Պողոսի վրա: Նա պաշտպանեց իրեն՝ իր պատգամը պահպանելու համար: «Պարծենալ» տերմինը շատ հաճախ օգտագործվում է 10-13 գլուխներում (տես 2 Կոր. 10:8,13,15,16,17; 11:12,16,18,30; 12:1,5,6,9, տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:12 և Հատուկ Թեմա 1 Կոր. 5:6), բնորոշելով առաջին դարում տարածված հռետորական ոճը: Պողոսն ամբարտավան կեղծ ուսուցիչներին ցույց տվեց, որ կարող էր խաղալ նրանց խաղը:

Այս նախադասությունը շփոթեցրեց հնագույն դպիրներին, ովքեր մի քանի ձևով ձևափոխեցին դրանք:

1. ոմանք ավելացնում են «եթե» (MSS α^2 , H)
2. ոմանք փոխեցին *dei* (պետք է) *de*-ի (բայց), (MSS α and D)
3. UBS⁴ ձևը աջակցում է MSS P⁴⁶, B, D², F, G («Ա» վարկանիշ)

Թիվ 2 և 3-ը ցույց են տալիս, թե որքան վաղ է հունարեն բնօրինակ տեքստերը փոփոխվել լավ մտադրություն ունեցող դպիրների կողմից:

Արևելահայերեն «յիրաւի օգուտ չէ բերում ինձ»

Արևմտահայերեն «իրացունէ անօգուտ է»

NASB «թէն դա շահութաբեր չէ»

NKJV «անշուշտ ոչ շահավետ»

NRSV «ոչինչ շահեկան չի լինի դրա կողմից»

TEV «թէն դա լավ բան չի անում»

NJB «դա լավ չի անում»

Եթե Պողոսի պարծանքը ոչ մի առավելություն չունի, ապա ինչու է դա արվում: Նա դա անում է հեզնանքով իր ազդեցության համար, օգտագործելով կեղծ ուսուցիչների շատ տերմիններ և մեթոդաբանություն (այսինքն, հռետորության վարժված սփյուռքի հրեա հավատացյալները, ովքեր ինչ-որ կերպ կապված էին Երուսաղեմի եկեղեցու հետ, նման էին Գաղատիայի հրեաներին և Փարիսեցիական տարրին Գործք 15 Երուսաղեմի խորհրդում):

▪ **«տեսիլքներին եւ յայտնութիւններին»** Այս երկու տերմինների միջև հավանաբար տարբերություն չկա, երկուսն էլ նկարագրում են ուղիղ հայտնության մի տեսակ (տես 1 Կոր. 2:10; 11:23; Գաղ. 1:12; 2:2; Եփ. 3:3): Կեղծ ուսուցիչները հավանաբար պահանջում էին հատուկ ուղիղ հայտնություն: «Հայտնություն» տերմինը նշանակում է *apocalypse*, որը նշանակում է «բացահայտում»: Կեղծ ուսուցիչները, անցյալում և հիմա, բնութագրվում են

1. սեռական շահագործմամբ
2. ֆինանսական շահագործմամբ
3. հատուկ և եզակի հայտնության պահանջով

▪ **«Տիրոջ»** Դա կարող է լինել ստորադասական սեռական հոլով, «հայտնություն Տիրոջից» կամ օբյեկտիվ սեռական հոլով, «Տիրոջ մասին»: Հետևյալ կոնտեքստն ենթադրում է «Տիրոջից» (կրավորական սեռ, 2 Կոր. 12:2,4,7):

12:2 «Մէկ մարդ գիտեմ» Սա ինքնաբերաբար խոսելու ռաբբիական ձև է: Պողոսը, կարծես թե, չի ցանկանում նույնիսկ հիշատակել միջադեպը, բայց դա անում է այն պատճառով, որ սիրում է այս եկեղեցին և կեղծ ուսուցիչների հոգևոր տեսիլքները:

▪ **«Քրիստոսումը»** Այս էր, որ քրիստոնյա լինելը Պողոսի սիրելի նշանակումն էր: Հավատացյալները նույնանում են Իր կյանքի / մահվան / հարության հետ (տես Հռ. 6): Հավատացյալի նպատակն է լինել Նրա նման (տես Հռ. 8:29; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1:4; 1 Թեա. 3:13; 4:3; 1 Պետ. 1:15):

George Ladd, *A Theology of the New Testament*, հետաքրքիր հայտարարություն է անում, որ «մարդը Քրիստոսի մեջ նույնպես Հոգու մեջ է: Եթե «Քրիստոսում» հակադիր է Ադամի մեջ լինելուն, ապա «Հոգու մեջ» հակադիր է «մարմնավոր լինելուն»: Կյանքը Հոգու մեջ նշանակում է վախճանաբանական գոյությունը՝ կյանքը նոր դարաշրջանում» (էջ 483):

- **«տասնեւչորս տարուց առաջ»** Սա հավանաբար, Պողոսի վաղաժամ ծառայության ժամանակ էր՝ Տարսնում, մինչ Բառնաբասը եկավ օգնելու նրան Անտիոքում (տես Գործք 11:25-26): Ուշադրություն դարձրեք, որ Պողոսի հասուկ տեսիլքները ամեն օր չէին լինում, բայց նա ունեցել է մի քանիսը (տես Գործք 9:4; 18:9; 23:11; 27:23):
- **«թե մարմնով էր՝ չ՛գիտեմ, եւ թե առանց մարմնի էր՝ չ՛գիտեմ»** Պողոսը նույնիսկ համոզված չէր, թե ինչ է կատարվել (արտահայտությունը կրկնվում է 2 Կոր. 12:2 և 3-ում): Դա, հավանաբար, նման էր Եզեկիելի փորձառությանը Եզ. 8 կամ նման էր Հովհաննեսի փորձառությանը Հայտնություն գրքում (տես Հայտ. 1:10; 4:2; 17:3; 21:10): Ուշադրություն դարձրեք, որ մարմինը չի վերանում երկնքից քրիստոնեության մեջ, ինչպես հունական փիլիսոփայության մեջ է:
- **«յափշտակուեցաւ»** Այս նույն տերմինն օգտագործումն է (1) Փիլիպոսը, Գործք 8:30; (2) «հափշտակություն», 1 Թես. 4:17; և (3) արու գավակը, Հայտ. 12:5: Նրա հիմնական իմաստը, որպես գիշատիչ, իր գոհը գրավելն է: Պողոսն անսպասելիորեն և արագ տեղափոխեց մարմնով կամ մտքով Աստծո ներկայության մեջ (տես 2 Կոր. 12:4):
- **«երրորդ երկինքը»** Տես Հասուկ Թեմա՝ ստորև

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԿԻՆՔՆԵՐԸ
SPECIAL TOPIC: THE HEAVENS AND THE THIRD HEAVEN

Հին Կտակարանում «երկինք» տերմինը սովորաբար ՀՈԳՆԱԿԻ է (այսինքն, *shamayim*, BDB 1029): Եբրայերեն տերմինը նշանակում է «բարձրություն»: Աստված բնակվում է բարձունքում: Այս գաղափարը արտացոլում է Աստծո սրբությունը և տրանսցենդենցիան:

Ծանոթոց 1: 1-ում ՀՈԳՆԱԿԻ «երկինքներ ու երկիր» դիտվում է որպես Աստծո ստեղծած (1) այս մոլորակի վերևում գտնվող մթնոլորտը կամ (2) բոլոր իրականությունը (այսինքն, հոգևոր և ֆիզիկական): Այս հիմնական հասկացությունից են այլ տեքստերը վերցրել, ասելով, որ երկնքի մակարդակներ կան «երկինքների երկինքը» (հմմտ.Սաղ. 68:33) կամ «երկինքը և երկինքների երկինքը» (տես 2 Օր. 10:14; 3 Թագ. 8:27; Նեեմ. 9: 6; Սաղ. 148: 4): Ռաբբիները մտածում էին, որ կարող է լինել

1. երկու երկինք (այսինքն, R. Judah, Hagigah 12)
2. երեք երկինք (Test. Levi 2-3, Ascen. of Ես. 6-7, Midrash Tehillim Սաղ. 114: 1)
3. հինգ երկինք (III Baruch)
4. յոթ երկինք (R. Simonb. Lakish; II Enoch 8; Ascen. of Ես. 9:7)
5. տասը երկինք (II Enoch 20:3, 22:1)

Այս բոլորը նախատեսված էր ցույց տալու Աստծո առանձնացումը ֆիզիկական արարչագործությունից և / կամ Նրա տրանսցենդենտ լինելը: Ռաբբիական հուդայականության մեջ ամենատարածված երկնային թիվը յոթն էր: A. Cohen, *Everyman's Talmud* (էջ 30) ասում է, որ դա կապված էր աստղագիտության ոլորտների հետ, բայց ես կարծում եմ, որ դա վերաբերում է յոթը կատարյալ թիվ լինելուն (այսինքն ստեղծագործության յոթ օրերը ներկայացնում են Աստծո հանգիստը Ծանոթ. 2:2):

Պողոսը, 2 Կոր. 12: 2-ում հիշատակում է «երրորդ» երկինքը (հունարեն *ouranos*), որպես Աստծո անձնական, փառահեղ ներկայության ճանաչման միջոց: Պողոսը անձնական հանդիպում ունեցավ Աստծո հետ:

12:3-4 Այս համարները նկարագրում են 2 Կոր. 12:2-ում նշված իրադարձությունը:

12:4 «Դրախտի» Սա պարսկերեն *loan* բառն է «ազնվականի պարտեզի» համար: Հունարեն բառը Մեպտուագինտում օգտագործվում է «Եդեմի պարտեզի» համար (տես Ծննդ. 2:8; 3:1; Եզ. 28:13; 31:18): Այս տերմինն օգտագործվում է Ղուկ. 23:43, որպես Hades կամ Sheol ճիշտ կողմի համար: *The Secrets of Enoch, or II Enoch*, 8-րդ գլուխը, օգտագործվում է երրորդ երկնքի կամ Աստծո ներկայության համար: Երրորդ երկնքը և դրախտը Աստծո ներկայության մասին խոսելու երկու եղանակներ են:

- **«Եւ անասելի բաներ լսեց, որ մարդի պէտք չէ նորանց խօսել»** Մարդկության հետաքրքրասիրությունը չի կարելի թեթևակի լինել ճշմարտության բոլոր ոլորտներում: Քանի որ Ղազարոսը չէր խոսում գերեզմանի իր փորձառության մասին, Պողոսը (այսինքն, նույնպես սուրբ) չի կարող (այսինքն, ոչ պատշաճ մարդկային բառապաշար), կիսվել այս փորձառությունով: Գոյություն ունի ակնհայտ բառախաղ՝ «անասելի». *arrētos*, «խոսք» և *hrētos*, կամ հնարավոր է, դա միստիկ կրոնի նախաձեռնության ծեսերի տեխնիկական իդիոմա է: Հնարավոր է, պարզապես մարդկային բառապաշարը չէր համապատասխանում այն ամենին, ինչը տեսել էր (տես 1 Կոր. 2:9):

12:5 Պողոսը չի պարծենում իր անձնական ձեռքբերումներով (տես ամբողջական գրառումը 2 Կոր. 1:12), այլ Աստծո հայտնությամբ, ինչպես անձնական փորձառությունների, այնպես էլ ավետարանի ճշմարտության միջոցով: Դրանք Պողոսի թերություններն են, որոնք թույլ են տալիս Աստծուն փառավորվել նրա մեջ (համեմատել Հովհ. 15:5-ը Փիլ. 4:13-ի հետ):

- **«տակարութիւններովը»** Տես Հատուկ Թեմա՝ 2 Կոր. 12:9:

12:6 «Էթէ» Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը նշանակում է հնարավոր գործողություն:

- **«անմիտ»** Տես Հատուկ Թեմա՝ 1 Կոր. 15:36:

- **«որ մի գուցէ մէկն ինձ համար աւելի բան համարէ, քան թէ այն՝ որ ինձանում տեսնում է կամ ինձանից լսում»:** Սա կաթեցնում է հեզնանքով: Այս կեղծ ուսուցիչները հակասում էին անցյալի բազմաթիվ փորձերին և լիազորագրերին, որոնց մասին Կորնթացիները միայն լսեցին: Պողոսը ասում է. «Մի համարեք ինձ այն, ինչ ես ձեզ չեմ ցուցաբերել, բայց այն, ինչ ես արել եմ, ձեր մեջ եղած ժամանակ: Նայեք իմ գրառմանը:

12:7 «Եւ որ յայտնութիւնների առաւելութեամբը» Այս արտահայտությունը կարող է քերականորեն կապված լինել 2 Կոր. 12:6-ի «մէկն ինձ համար ավել բան համարէ» կամ 2 Կոր. 12:7 «չհպարտանամ»: Եթէ *dio*-ն 2 Կոր. 12:7 բնագիր տեքստում է (տես MSS ա, A, B, F, G), ապա հավանաբար գնում է 2 Կոր. 12:6-ի հետ, սակայն *dio*-ն դուրս է մնացել հին հունարեն մի շարք ձեռագրերից (այսինքն, MSS P⁴⁶, D, և Vulgate, հայերեն, և Peshitta թարգմանություններ): UBS⁴ ներառում է «Գ» վարկանիշ (դժվարություն որոշման մեջ):

«Գերազանցել մեծությունը» համար (*hyperbolē*) տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 2:1:

- **«չհպարտանամ»** Այս նույն բառը օգտագործվում է 2 Թես. 2:4-ը նկարագրելու «մեղավոր մարդու» կամ հակաքրիստոսի հպարտ պարծանքը: Պողոսը կրկին հակադրում է իրեն կեղծ ուսուցիչների հետ: Իրենք հպարտացան իրենց սոփիստական հռետորական ոճով (որը Պողոսը նմանակում է 10-13 գլուխներում):

Պողոսը հավատում էր, որ Աստված (այսինքն, «տրվեց» կրավորական սեռ), տվեց այս «խայթը մարմնի համար» (այսինքն, *hina* կետ) ինչ-որ նպատակով: Սա կարող է լինել Հռ. 8:28 իմաստը: (այսինքն, որոշ հունարեն ձեռագրեր կարդում են «Աստված պատճառ է բոլոր բաների»), բայց լավ

այն է, որ Քրիստոսանմանությունը հստակ արտահայտված է Հռ. 8:29 (այսինքն, համապատասխանում է Նրա Որդու կերպարանքին): Մատանան ծառա է:

▪ **«մարմնիս համար խայթ տրուեցաւ»** «Խայթ» տերմինը կարող է նշանակել «ցից» (այսինքն, բառացիորեն «նշված լինել»): Դասական հունարենում այն օգտագործվել է սրածայր ցցի իմաստով, մինչդեռ Մեկտուագինտում այն օգտագործվել է բույսի փշերի համար (տես Թվոց 33:55; Եզ. 28:24; Հռ. 2:6): Որոշ տեսություններ, կապված Պողոսի մարմնի խայթի հետ, հետևյալն են

1. Վաղ եկեղեցու հայրերը, Լյութերը և Կալվինը, ասում են, որ դա հոգևոր խնդիրներ էր նրա մեղավոր բնության հետ (այսինքն, «մարմնի մեջ»)
2. Ոսկեբերանն ասում է, որ դա խնդիր է մարդկանց հետ (տես Թվոց 33:55, Դատ. 2:3)
3. ոմանք ասում են, որ դա էպիլեպսիա էր
4. Ուիլյամ Ռամսեյը ասում է, որ դա մալարիա էր
5. Կարծում եմ, որ դա օպտալմիա էր, հասարակ աչքի խնդիր (համեմատել Գաղ. 4:13-15 և 6:11) որը սրվեց կամ առաջացավ Դամասկոսի ճանապարհին՝ կուրանալու պատճառով (տես Գործք 9, հնարավոր է Հին կտակարանյան ակնարկ Հեսու 13)

«Մարմնի» համար տես Հատուկ Թեմա 1 Կոր. 1:26:

▪ **«աստանայի հրեշտակ»** Աստված թույլ է տալիս և օգտագործում է չարությունը (տես Հոբ 2:6, 1 Կոր. 5:5, 1 Տիմ. 1:20): «Պատգամաբեր» տերմինը կարծես վերաբերում է դիվային գործակալին: Եբրայերեն և հունարեն «սուրհանդակ» տերմինը կարող է թարգմանվել «հրեշտակ»: Եթե այո, ապա մենք տեսնում ենք, որ հավատացյալները կարող են վիրավորվել չարի կողմից, բայց նկատելի է, որ դա Աստծո նպատակների համար է: Աստված չարն օգտագործում է Իր արդար նպատակների համար:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՄԱՏԱՆԱ

SPECIAL TOPIC: SATAN

Այս թեման շատ բարդ է մի քանի պատճառներով.

1. Հին Կտակարանը չի բացահայտում բարու ոլերիմ թշնամու, այլ որպես այլ ՅԱՀՎԵԻ ծառա (տես A. B. Davidson, *OT Theology*, էջ 300-306), որն առաջարկում է մարդկությանը այլընտրանք և մեղադրում է մարդկությանը անիրավության մեջ: Կա միայն մեկ Աստված (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ), մեկ գործություն/իշխանություն, մեկ պատճառ Հին Կտակարանում՝ ՅԱՀՎԵՆ (տես Ես. 45: 7; Ամովս 3: 6):
2. Աստծո անձնական ոլերիմ թշնամու գաղափարը զարգացել է միջաստվածաշնչյան (ոչ կանոնական) գրականության մեջ, պարսկական դուալիստիկ կրոնների ազդեցության ներքո (գրահաղաշտական կրոն): Մա, իր հերթին, մեծապես ազդեց ուղեկական հուդայականության և էսսենական համայնքի վրա (այսինքն, Մեռյալ Ծովի մագաղաթները):
3. Նոր Կտակարանը զարգացնում է Հին Կտակարանյան թեմաները զարմանալիորեն սթափ, բայց ընտրովի, կատեգորիաներում:

Եթե մեկը չարի ուսումնասիրությանը մոտենում է աստվածաշնչյան աստվածաբանության տեսանկյունից (յուրաքանչյուր գիրք կամ հեղինակ կամ ժանր ուսումնասիրված և ուրվագծված է առանձին), ապա չարի տարբեր տեսակետներ են բացահայտվում:

Այնուամենայնիվ, եթե մեկը չարի ուսումնասիրությանը մոտենում է համաշխարհային կրոնների կամ արևելյան կրոնների ոչ աստվածաշնչյան կամ հավելյալ աստվածաշնչյան մոտեցումով, ապա Նոր Կտակարանյան զարգացման մեծ մասը ներկայացված է պարսկական դուալիզմի և հունա-հռոմեական սպիրիտիզմի տեսանկյունից:

Եթե մեկը ենթադրաբար հավատարիմ է Գրքի աստվածային հեղինակությանը (ինչպես էս

եմ), ապա Նոր Կտակարանի զարգացումը պետք է դիտվի որպես պրոգրեսիվ հայտնություն: Քրիստոնյաները պետք է հսկեն հրեական ժողովրդական բանահյուսությանը կամ արևմտյան գրականությանը (Դանտե, Միլթոն) թույլ չտալու հետագա ազդեցություն գաղափարի վրա: Հայտնության այս բնագավառում կա խորհուրդ և անորոշություն: Աստված ընտրել է չհայտնել չարի բոլոր կողմերը, դրա ծագումը (տես Հատուկ Թեմա: Արուսյակ), նրա զարգացումը, նրա նպատակը, բայց հայտնում է նրա պարտությունը:

Հին Կտակարանում «սատանա» կամ «մեղադրող» տերմինը (BDB 966, KB 1317) կարող է վերաբերել երեք առանձին խմբերի

1. մարդ մեղադրողներ (տես 1 Թագ. 29: 4; 2 Թագ. 19:22; 3 Թագ. 11: 14,23,25; Սաղ. 109: 6)
2. հրեշտակային մեղադրողներ (տես Թվոց 22: 22-23; Հոբ 1-2; Զաք. 3: 1)
3. դիվային մեղադրողներ (տես 1 Մնաց. 21:1; 1 Թագ. 22:21; Զաք 13:2)

Հետագայում միայն միջկտակարանյան ժամանակահատվածում Ծննդոց 3-ի օձը նույնանում է սատանայի հետ (այսինքն Իմաստության Գիրք 2.23-24; II Ենոք 31:3), և նույնիսկ ավելի ուշ դա դառնում է ռաբբիական տարբերակ (տես *Sot* 9 և *Sanh* 29): Ծննդոց 6-ի «Աստծո որդիները» հրեշտակ են դառնում I Ենոք 54:6: Ես սա նշում եմ, ոչ թե հաստատելու աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու նրա զարգացումը: Նոր Կտակարանում այս Հին Կտակարանյան գործունեությունները վերագրվում է հրեշտակային, անձնավորված չարին (տես 2 Կոր. 11:3; Հայտ. 12: 9):

Անձնավորված չարի ծագումը դժվար է կամ անհնար (կախված է ձեր տեսանկյունից) որոշել Հին Կտակարանից: Դրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ մոտոթեիզմն է (տես Հատուկ Թեմա: Մոտոթեիզմ, ինչպես նաև 3 Թագ. 22:20-22; Ժող. 7:14; Ես. 45:7; Ամովս 3:6): Բոլոր պատճառները (տես Ես. 45:7; Ամովս 3:6) վերագրվում են ՅԱՀՎԵԻՆ, ցույց տալու Նրա եզակիությունն ու գերակայությունը (տես Ես. 43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Հնարավոր տեղեկությունների աղբյուրներն են (1) Հոբ 1-2, որտեղ սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն, հրեշտակները) կամ 2) Եսայիա 14 և Եզեկիել 28, որտեղ հպարտ մերձավոր արևելքի թագավորներ (Բաբելոն և Տյուրոս) հնարավոր է, որ նկարագրում են սատանայի հպարտությունը (տես 1 Տիմ. 3: 6):

Ես այս մոտեցման վերաբերյալ խառը զգացումներ ունեմ: Եզեկիելը օգտագործում է Եդեմի պարտեզի փոխաբերությունը, ոչ միայն Տյուրոսի թագավորի համար, որպես սատանա (տես Եզ. 28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի համար, որպես Բաբելոնի և չարի գիտության ծառ (Եզեկիել 31): Այնուամենայնիվ, Եսայիա 14, հատկապես հհ. 12-14-ը, կարծես, նկարագրում է հրեշտակային ապստամբությունը հպարտության միջոցով: Եթե Աստված ուզում էր մեզ բացահայտել սատանայի բնությունը և ծագումը, սա շատ շեղունակ ձև և տեղ է դա անել: Մենք պետք է զգուշանանք սխտեմատիկ աստվածաբանության միտումը տարբեր կտակարանների, հեղինակների, գրքերի և ժանրերի փոքր, երկինաստ մասերը վերածելու և դրանք որպես մեկ աստվածային հանելուկ համադրելու:

Ես համաձայն եմ Ալֆրեդ Էդերսհայմի հետ (*The Life and Times of Jesus the Messiah*, հատոր 2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական հուղայականությունը մեծ ազդեցության ենթարկվել պարսկական դուալիզմի և դիվային շահարկումների կողմից: Ռաբբիները այս ոլորտում ճշմարտության լավ աղբյուր չեն: Հիսուսը արմատապես տարբերվում է այս բնագավառում ժողովարանի ուսմունքներից: Կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ ռիսերիմ թշնամու գաղափարը զարգացել է երկու պարսկական դուալիզմի բարձր չաստվածների, *Ahkiman* և *Ormaza* կողմից, և այնուհետև մշակվել ռաբբիների կողմից ՅԱՀՎԵԻ և սատանայի աստվածաշնչյան դուալիզմի մեջ:

Նոր Կտակարանում, անշուշտ, պրոգրեսիվ հայտնություն կա չարի անձնավորության, բայց ոչ այնքան ճարտար, որքան ռաբբիները: Այս տարբերության լավ օրինակն է «պատերազմը երկնքում»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, բայց մանրունքները հայտնի չեն (տես Հատուկ Թեմա: Սատանայի և Նրա հրեշտակների անկումը): Նույնիսկ այն, ինչ տրված է, ծածկված է

ապոկալիպտիկ ժանրի մեջ (տես Հայտ. 12: 4, 7,12-13): Թեև սատանան պարտված է Հիսուսով և արքայազնությամբ երկիր, նա դեռ գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես Մաթ. 4: 1; Ղուկ. 22: 31-32; 1 Կոր. 5: 5, 1 Տիմ. 1:20):

Այս ոլորտում մենք պետք է ընդլայնենք մեր հետաքրքրասիրությունը: Գոյություն ունի գայթակղության և չարի անձնական ուժ, սակայն կա միայն մեկ Աստված, և մենք դեռևս պատասխանատու ենք մեր ընտրությունների համար: Կա հոգևոր պատերազմ, փրկությունից առաջ և հետո: Հաղթանակը կարող է միայն գալ և մնալ Երրորդության միջոցով: Չարը պարտվել է և կվերցվի (տես Հայտն. 20:10):

▪ **«ՆՊՈՒՆՈՒՄԱՆԱՄ»** Սա ներկա ներգործական ստորադասական է: Խոսքը բառացիորեն նշանակում է «հարվածել բռունցքով»: Այս խնդիրը ցավոտ և կրկնվող էր:

▪ **«ՈՐ ՆՈՐԱՆ ԻՆՏԱՑՆԷ ԻՆՃԱՆԻՑ»** Սա նպատակի (այսինքն, *hina*) դրույթն է: Կեղծ ուսուցիչների հոգևոր պահանջները ընդգծել են իրենց եսասիրությունը: Պողոսը խոնարհեցրեց իրեն:

12:8 «ԱՊԱՅԵԳԻ ՏԻՐՈՉՐ» Կոնտեքստով դա կարող է վերաբերել (1) ՅԱՀՎԵԻՆ կամ (2) Հիսուսին (տես Հովհ. 14:13-14): Պողոսը սովորաբար աղոթում է Հորը: Քրիստոնյաները կարող են աղոթել Սուրբ Երրորդության երեք անձերից որևէ մեկին, թեև սովորաբար մենք աղոթում ենք Հորը, Որդու անունով, Հոգու միջոցով:

▪ **«ՍՈՐԱ ԽԱՄԱՐ»** Հնարավոր է, որ «սա» վերաբերում է (1) այս իրավիճակին, 2) այս հալածանքին; 3) Սատանայի այս հրեշտակին; կամ (4) այս ֆիզիկական հիվանդությանը:

▪ **«ԵՐԵՔ ԱՆՁԱՄ»** Հիսուսի աղոթքը Գերսեմանում կրկնվեց երեք անգամ (տես Մաթ. 26:42; Մարկ. 14:39,41): Երեք անգամյա կրկնությունը նշանակում է շեշտադրում: Սա ոչ թե վստահության պակաս էր, այլ ցույց է տալիս, որ մենք կարող ենք աղոթել ամեն ինչի մասին, որքան հաճախ ենք կարիք ունենում: Այս կրկնվող, ցավալի խնդիրը Պողոսին մեծ հոգևոր դաս սովորեցրեց (տես 2 Կոր. 12:9): Այստեղ պետք է ասեն, որ այս հաշիվ տալը լույս է սփռում մեր օրերում ավելի հստակությամբ, որ հավատքի բուժումը պայմանավորված է բուժման կարիք ունեցող մարդու հավատքի չափով: Ակնհայտ էր, որ Պողոսը հսկայական հավատք ուներ: Նաև, ցավալի ուսմունքը, որ Աստված ցանկանում է, որ յուրաքանչյուր հավատացյալ բուժվի և ամեն խնդրից ազատվի, որը հասցեագրված է այս պատգամում: Հիսուսի և Պողոսի պահանջները չէին պատասխանում այնպես, ինչպես նրանք էին ուզում: Աստված օգտագործում է խնդիրները և հիվանդությունները մեր կյանքերում Իր նպատակների համար (տես Հո. 8:17; 2 Կոր. 1:5,7; Փիլ. 3:10; 1 Պետ. 4:12-17): Մեր կարիքները Աստծո հնարավորություն են բացահայտելու Նրան և Նրա կամքը:

12:9 «ԵՆ ՆԱ ԱՍԵՑ» Սա վաղակատար ժամանակ է, խոսակցական «Նա վերջապես ասաց»:

▪ **«ԲԱՍԱԿԱՆ Է ՔԵՂ ԻՄ ՉՆՈՐԻՔՐ»** Աստծո բնույթն ու ներկայությունն այն ամենն է ինչի կարիքը Պողոսն ուներ: Կարծում եմ, Պողոսը մտածում էր 3 Թագ. 8:27: Սա Հին Կտակարանի տեղերից մեկն է, որտեղ օգտագործվում է «երկինք և երկնքի երկինք» արտահայտությունը, որը կարող է լինել Պողոսի «Երրորդ երկնքի» աղբյուրը 2 Կոր. 12:2: Սողոմոնի աղոթքը խոսում է թե՛ Աստծո «բարձրագույն երկնքի» տերության, և թե՛ տաճարում Նրա անբաժանելիության մասին: Պողոսը չէր բնակվում երրորդ երկնքի մեծության մեջ, այլ ամեն օր Աստծո ողորմածության և անձնական ներկայության մեջ:

▪ **«ԳՈՐՈՒԹԻՆՐ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է»** Սա ներկա կրավորական է: Աստծո գործությունը գործում է այլ չափանիշներով, քան մարդկության գործությունը: Աստված է ստանում փառքը, երբ մարդկային

անոթը տկար է և անգոր է իր կարիքները բավարարելու: Աստծո զորությունը Նրա անփոփոխ բնույթն է:

Այս արտահայտությունը կարող էր հիշեցնել Պողոսին 1 Կոր. 2:5 կամ 2 Կոր. 4:7 և պարզապես կապված չէ կեղծ ուսուցիչների հետ՝ շեշտը դնելով մարդու կատարման կամ արժանիքների վրա:

- **«իմ տկարություններովը կ'պարծենամ»** Տես Հատուկ թեմա՝ ստորև:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ (astheneō)

SPECIAL TOPIC: WEAKNESS (astheneō)

Կեղծ ուսուցիչները պարծենում են իրենց հավատարմագրերի և հռետորական ոճի համար, բայց Պողոսը գիտի «տկարության» (astheneō) գինը: Պողոսն օգտագործում է տկարության գաղափարը մի քանի տարբեր ձևերով:

1. Աստծո տկարությունը ավելի ուժեղ է, քան մարդկանց, 1 Կոր. 1:25
2. տկար աշխարհում, 1 Կոր. 1:27
3. Պողոսի տկարությունն ու վախը, 1 Կոր. 2: 3; 9:22; 2 Կոր. 11: 29,30; 12: 5
4. Պողոսը և նրա առաքելական թիմը, 1 Կոր. 4:10; 2 Կոր. 11:21
5. տկար հավատացյալ (տես Հռ. 14: 1-15: 13), 1 Կոր. 8: 7,9,10,11,12; 9:22
6. ֆիզիկական հիվանդություն, 1 Կոր. 11:30
7. մարդու մարմնի մասերը, 1 Կոր. 12:22
8. ֆիզիկական մարմին, 1 Կոր. 15:43
9. Պողոսի ֆիզիկական ներկայությունը կամ նրա հռետորական հմտությունները, 2 Կոր. 10:10
10. Պողոսի տկարության մեջ երևում է Աստծո զորությունը, 2 Կոր. 12: 9,10; 13: 4,9
11. Քրիստոսի պատգամը Պողոսի միջոցով, 2 Կոր. 13:3
12. Քրիստոսի ֆիզիկական մարմինը, 2 Կոր. 13: 4

- **«որ Քրիստոսի զորութիւնը»** Ուշադրություն դարձրեք, որ դա Աստծո զորությունն է: Դա Քրիստոսի զորությունն է: Քրիստոսն Աստված է:

Արևելահայերեն **«բնակուէ ինձանում»**

Արևմտահայերեն **«իմ վրաս հանգչի»**

NASB, NRSV **«կարող է մնալ իմ մեջ»**

NKJV, NJB **«կարող է հենվել ինձ վրա»**

TEV **«զգալ պաշտպանությունը ... ինձ մոտ»**

Սա հունարեն *episkēnoō* տերմինն է, որը *epi* գումարած *skēnē* է (շինվածք, տես 2 Կոր. 5:1), հետևաբար, փոխաբերական իմաստով ստվեր գցելն է կամ մնալը: Այս բառը գտնվում է միայն այստեղ Նոր Կտակարանում: Այս նույն արմատը կույսից ծնված Հիսուսի օգտագործումն է (տես Ղուկ. 1:35), Հիսուսի կերպարանքը (տես Մաթ. 17:5) և Առաքյալների ստվեր գցելն է մարդկանց և նրանց բժշկված լինելու վրա (տես Գործք 5:15):

Պողոսը գիտեր, որ անապատում թափառելու ժամանակաշրջանում ամպը (տես Ելից 40:35) ռաբբիների կողմից կոչվում էր «փառքի *shekinah* ամպ»: *Shekinah* նշանակում է «մշտապես բնակվել»: Պողոսը ցանկանում էր, որ Աստծո ներկայությունը լիովին և ամբողջությամբ դրսևորվի և մարմնավորվի Քրիստոսի մեջ, նրա հետ: Սա քրիստոնեության նպատակն է, այլ ոչ թե անձնական զորությունը, անձնական հեղինակությունը, հատուկ գիտելիքը կամ փորձը (այսինքն, «Որ Նրան ճանաչեմ տկարության և չարչարանքի միջոցով», տես Փիլ. 3:10):

12:10 «Վասնորոյ հաւանել եմ տկարութիւնների» Պողոսը գիտի անձնական փորձից (այսինքն՝ Դամասկոսի ճանապարհը), որ լավ մտադրությունները և անձնական ջանքերը բավարար չեն: Մենք շնորհքի կարիք ունենք (տես 2 Կոր. 12:9), այլ ոչ թե գործության: Ոչ մի մարդ չի կարող զավթել Աստծո փառքը (տես 1 Կոր. 1:29; Եփ. 2:9): Աստծո շնորհքը, գործությունը և փառքը շեշտված են զիջող, անբավարար մարդկային անոթների մեջ:

- **«Ես հաւանել եմ տկարութիւնների»** Համարի մնացորդում Պողոսը ներկայացնում է իր ծառայողական փորձությունների համառոտ ամփոփագիրը, որը նա նշեց նախկինում 2 Կոր. 4:7-11; 6:3-10; 11:24-28: Պողոսը լիովին գիտեր Մաթ. 5:10-12 Հիսուսի խոսքերի իմաստը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 12:11-13
¹¹Անմիտ եղայ պարծենալովս. Դուք ինձ բռնադատեցիք. Որ պետք էր ինձ վկայութիւն առնել ձեզանից. որովհետև ոչ մի բանով պակաս չ'եղայ քան թէ այն մեծամեծ առաքեալները, թէև ես ոչինչ եմ: ¹²Բայց առաքեալի նշանները ձեր մեջ գործուեցան՝ ամեն համբերութիւնով, նշաններով եւ հրաշքներով եւ զօրութիւններով: ¹³Որովհետև ի՛նչ է որ նորանով պակաս գտնուեցաք քան թէ ուրիշ եկեղեցիները. եթէ ոչ նորանով՝ որ ես ծանրութիւն չ'տուի ձեզ. ներեցէք ինձ այդ վնասը:

12:11 «Անմիտ եղայ» Սա վաղակատար ներգործական սահմանական է: Որոշ երկպառակտություններ (այսինքն, 1 Կոր. 1-4) կամ մի քանի ճանապարհորդող կեղծ ուսուցիչներ (այսինքն, 2 Կոր. 10-13) հարձակվել էին Պողոսի վրա, նրա ղեկավարությանը, իշխանությանը, խոսելաճին և Ավետարանին: Այսպիսով, Պողոսը պետք է պաշտպաներ իրեն: Նա արեց դա մի քանի ձևով՝

1. իր կյանքը համեմատեց նրանց կյանքերի հետ
2. կիրառեց իրենց հոետորդության ոճը, բայց խոնարհությամբ
3. օգտագործեց հեզնանք իր միտքը արտահայտելու համար

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԵՐՄԻՆՆԵՐ ՀԻՄԱՐ ԲԱՌԻ ՀԱՄԱՐ 1 Կոր. 15:36:

- **«Ես»** Ընդգծված «Ես» (այսինքն, *egō*) օգտագործվում է 2 Կոր. 12:11,13,15 և 16:
- **«վկայութիւն առնել»** Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 3:1:
- **«ոչ մի բանով պակաս չ'եղայ քան թէ այն մեծամեծ առաքեալները»** Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 11: 5:
- **«թէև»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որն օգտագործվում է գրական նպատակներով՝ ընդգծելու իր տեսակետը և ոչ թե իրականությունը: Պողոսը որևէ իմաստով նրանց չէր զիջում:
- **«եւ ոչինչ եմ»** Պողոսը գիտեր և հասկացավ իր դիրքը միայն շնորհքով է (տես 1 Կոր. 15:9; Եփ. 3:8, 1 Տիմ. 1:15): Նա գիտեր իր դիրքը որպես կանչված, պարզներով օժտված Առաքյալ (տես Գործք 8,22,26):
- **12:12 «նշաններով եւ հրաշքներով եւ զօրութիւններով»** Պողոսի ծառայությունը վկայում էր Աստծո գործության մասին (տես 1 Կոր. 2:4; 4:20; Հռ. 15:19): Սակայն, դա ոչ միայն հրաշքներով էր, այլ նաև նրա վերաբերմունքով և գործողություններով, որն ապացուցեց, որ նա Աստծուց է:

12:13 «ես ծանրութիւն չ'տուի ձեզ» Պողոսը թույլ չտվեց, որ այս երկպառակտող եկեղեցին օգնի իրեն: Նա թողեց Փիլիպոսում գտնվող եկեղեցիները (Փիլ. 4:15) և Թեսաղոնիկեում (1 Թես. 3:6), բայց միայն այն բանից հետո, երբ նա հեռացավ քաղաքներից: Այն ցան պատճառեց Կորնթոսի զգացմունքային եկեղեցուն (տես 2 Կոր. 12:13ա), սակայն Պողոսը չէր խստացնում իր սիրտը կեղծ ուսուցիչների մեղադրանքների պատճառով (տես 2 Կոր. 11:8-20): Սակայն Պողոսը աջակցում էր (որպես սկզբունք) ծառայողների համար եկեղեցու ֆինանսական օգնությանը (տես 1 Կոր. 9:3-18):

- **«եկեղեցիները»** Տես Հատուկ Թեմա՝ 1 Կոր. 1:2:
- **«ներեցեք ինձ այդ վնասը»** Սա խայթող հեգնանք է:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 12:14-18
¹⁴Ահա երրորդ անգամն է որ պատրաստ եմ ձեզ մօտ գալու, եւ ձեզ ծանրութիւն չեմ տալ. որովհետեւ ձեր բանը չեմ որոնում՝ այլ ձեզ. նորա համար որ ոչ թէ որդիքը հայրերի համար պէտք է գանձ հաւաքեն, այլ հայրերը որդկանց համար: ¹⁵Բայց ես յօժարութեամբ ձեր անձերի համար ծախք կ'անեմ, եւ ծախք կ'լինիմ. թէեւ աւելի սիրելով ձեզ՝ ես քիչ սիրուիմ: ¹⁶Բայց թող լինի. ես ծանրութիւն չ'եղայ ձեզ. Սակայն խորագետ լինելով՝ վարդապետութեամբ բռնեցի ձեզ: ¹⁷Մի թէ նորանց ձեռովը՝ որ ձեզ մօտ ուղարկեցի՝ մի բան քաշեցի ձեզանից: ¹⁸Աղաչեցի Տիտոսին՝ եւ նորա հետ այն եղբորն էլ ուղարկեցի, մի թէ Տիտոսը ձեզանից մի բան քաշեց. Չէ՞ որ մենք նոյն հոգով վարուեցանք. Չէ՞ որ նոյն ճանապարհով գնացինք:

Արևելահայերեն «Ահա»
 Արևմտահայերեն «Ահա»

NASB, NRSV,
 NJB «Այստեղ»
 NKJV «Այժմ»
 TEV

Սա հունարեն շեշտված *idou* մասնիկն է, որը հաճախ օգտագործվում է Ավետարաններում, սովորաբար թարգմանվում է «ահա»: Այն ծառայում է ուշադրություն հրավիրելու հետևյալ հայտարարության վրա: Պողոսը հազվադեպ է օգտագործում (տես Հո. 9:23 [Հին Կտակարանյան մեջբերում], 1 Կոր. 15:51; 2 Կոր. 5:17; 6:2 [Հին Կտակարանյան մեջբերում], 9; 7:11; Գաղ. 1:20):

- **«երրորդ անգամն է»** Գործք Առաքելոց գրքում արձանագրվում է երկու այցելություն Կորնթոս (տես Գործք 18:1; 20:2-3; 2 Կոր. 1:15; 13:1,2): Այնուամենայնիվ, Գործքն ամբողջական կամ մանրամասն պատմություն չէ, այլ աստվածաբանական փաստաթուղթ, որը ցույց է տալիս քրիստոնեության տարածումը մարդկանց խմբից դեպի ժողովուրդների խումբ, Պաղեստինից՝ Հռոմ:
- **«ձեզ ծանրութիւն չեմ տալ»** Սա վերաբերում է ֆինանսական փոխհատուցմանը (տես 2 Կոր. 11:9; 12:13; 1 Կոր. 9:12,18): Պողոսը հաստատեց ծառայողների իրավունքը՝ փոխհատուցում ստանալու համար, բայց անձամբ մերժեց այն, որովհետև (1) այս հարցի վերաբերյալ հարձակման ենթարկվեց կեղծ ուսուցիչների կողմից (տես 2 Կոր. 12:14բ) կամ (2) նախկինում իր վարդապետ լինելը բացառեց:
- **«այլ ձեզ»** Պողոսը չի ուզում նրանց գումարները, այլ նրանց հավատարմությունը և բարի կամքը:

- **«որդիքը հայրերի»** Պողոսն օգտագործում է ընտանեկան նմանությունը: Նա իրեն համարեց հոգևոր հայր (տես 1 Կոր. 4:14-15; Գաղ. 4:19):

12:15 «ծախք կ'անեմ» Այս հունարեն բառը կարելի է հասկանալ երկու ձևով՝ 1) բառացիորեն «գումար վաստակել» (տես Գործք 21:24) կամ (1) փոխաբերական իմաստով «ամբողջությամբ ծախսել» կամ «վճարել ամեն ինչ կամ որևէ բան» (տես Մարկ. 5:26): Պողոսը պատրաստ էր տալ իր ողջ ունեցվածքը և /կամ իրեն՝ Քրիստոսի համար Կորնթոսի հավատացյալների մեջ:

Ակնհայտ է, որ Պողոսը օգտագործում է բառախաղ գումարի համար: Նա չէր ուզում, որ նրանք գումար ծախսեն նրա վրա, այլ նա կծախսեր նրանց համար:

- **«ձեր անձերի համար»** «Անձեր» (այսինքն, *psychē*) օգտագործվում է անձանց իմաստով Պողոսի գրվածքներում, ինչպես «հոգին» (տես, *pneuma*, Փիլ. 1:27):

Սա մարդկության մեջ օնթոլոգիական երկչոտությունն է, այլ երկկողմանի հարաբերություններ այս մոլորակի և Աստծո հետ: Եբրայերեն բառը *nephesh* (BDB 659) օգտագործվում է ինչպես մարդկության, այնպես էլ կենդանիների համար Ծննդոց գրքում, մինչդեռ «հոգին» (*ruah*, BDB 924) օգտագործվում է բացառապես մարդկության համար: Սա փաստող տեքստ չէ մարդկության բնության համար, որպես երեք բաժիններից բաղկացած արարած: Մարդիկ հիմնականում ներկայացված են Աստվածաշնչում որպես միասնություն (տես Ծննդ. 2:7): Մարդկանց տեսությունների լավ եզրակացության համար, որպես տրիխոտոմուս, դիխոտոմուս կամ միասնություն, տես Millard J. Erickson's *Christian Theology* (երկրորդ հրատարակություն) էջ 538-557 և Frank Stagg's *Polarities of Man's Existence in Biblical Perspective*:

- **«թէւ»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է գրողի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

- **«աւելի»** Այս կապակցված տերմինների խումբը բնութագրում է Պողոսի հուզական և շոայլ գրական ոճը 2 Կորնթացիսում: Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 2:7:

- **«ես քիչ սիրուիմ»** Ինչքան շատ Պողոսը տվեց նրանց, այնքան ավելի քիչ հարգանքով և սիրով վերաբերվեցին նրան: Սա անհանդուրժողական իրավիճակ էր:

12:16 «Սակայն խորագէտ լինելով՝ վարդապետութեամբ բռնեցի ձեզ»: Սա կարող է վերաբերել Երուսաղեմի եկեղեցու նվիրատվությանը 8-9 գլուխներում: Կեղծ ուսուցիչները, հավանաբար, մեղադրեցին նրան, որ ուրիշներին ուղարկեն գումար հավաքելու (տես 2 Կոր. 12:17-18)

Պողոսի մեկնաբանությունն այստեղ խայթող հեզնանք է:

12:18 «Տիտոսին» Ջարմանակի է, որ Տիտոսը Գործք Առաքելոց գրքում երբեք չի հիշատակվում (հավանաբար նա Ղուկասի եղբայրն էր): Նա եղել է Պողոսի վստահված և հավատարիմ օգնականներից մեկը: Ակնհայտ է, որ Տիտոսն այս եկեղեցուց ոչ մի գումար չի ստացել, հետևելով Պողոսի օրինակին:

- **«նորա հետ այն եղբորն էլ»** Սա հավանաբար նույնն է, ինչ 2 Կոր. 8:18: Ոմանք կարծում են, որ դա Ղուկասն էր (այսինքն, Օրիգեն): Սա եկեղեցիների ներկայացուցիչների հետ միասին, Պողոսի ճանապարհին էր, զինաթափելու Երուսաղեմի եկեղեցու այս ներդրման հետ կապված մեղադրանքները:

▪ 17 և 18 համարները ունեն չորս հարց: Առաջին երկուսի քերականական ձևը ակնկալում է «ոչ» պատասխան, իսկ վերջին երկուսը ակնկալում են «այո» պատասխան: Հարցերի նպատակն է ցույց տալ, որ ոչ Պողոսը, ոչ էլ Տիտոսը որևէ կերպ չեն օգտվել դրանցից, ինչպես ոմանք մեղադրում էին:

▪ **«նոյն հոգով»** Սա վերաբերում է Տիտոսի փրկված մարդկային հոգուն, այլ ոչ թե Սուրբ Հոգուն: Պողոսը հաճախ օգտագործում է «հոգին» իրեն արտահայտելու համար (տես 2 Կոր. 2:13; 7:13; 1 Կոր. 2:11; 5:4; 16:18; Հռ. 1:9; 8:16; Փիլ. 4:23): Տես ծանոթագրություն 2 Կոր. 7:13բ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 12:19-21

¹⁹Դարձեալ կարծո՞ւմ էք թէ մենք խօսքով մեզ պաշտպանում ենք. Աստուծոյ առաջին Քրիստոսումը խօսում ենք. եւ ամեն բան, սիրելիներ, ձեր շինութեան համար է: ²⁰Որովհետեւ վախենում եմ, որ մի գուցէ իմ գալու ժամանակը ձեզ այնպէս չ'գտնեմ՝ ինչպէս կամենում եմ. եւ ես գտնուիմ ձեզ համար ինչպէս էլ դուք չէք կամենում. Որ չ'լինեն կռիւներ, նախանձներ, բարկութիւններ, գրգռութիւններ, չարախօսութիւններ, քսութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ: ²¹Որ մի գուցէ դարձեալ իմ գալու ժամանակ իմ Աստուածն ինձ ցածացնէ ձեզ մօտ, եւ սուգ մտնեմ շատերի համար որ առաջուց մեղք գործեցին, եւ ապաշխարած չ'լինին այն պղծութեան եւ պռոնկութեան եւ գիժութեան համար որ գործեցին:

12:19 «Դարձեալ» Պողոսն անդրադառնում է իր ներկայիս նամակին (այսինքն, 2 Կորնթացիս):

▪ **«կարծո՞ւմ էք թէ մենք խօսքով մեզ պաշտպանում ենք»** Սա հեզնական նշան է: Պողոսը լավ գիտեր այդ եկեղեցին: Նրանք ունեցել են սխալ գնահատական իրենց արժեքի և ազատության մասին:

▪ **«Աստուծոյ առաջին»** Պողոսն այս արտահայտությունն օգտագործեց 2 Կոր. 2:17, որտեղ նա Աստծո առաջ ճշմարտության երդում է տալիս:

▪ **«ձեր շինութեան համար»** Պողոսը նշում է իր հեղինակությունը, օգտագործելով այս տերմինը 2 Կոր. 10:8. Նա պաշտպանեց իրեն՝ պահպանելու և պաշտպանելու այս մոլորեցված եկեղեցուն: Նրա գործողությունները նրանց համար էին, այլ ոչ թե իր համար: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇԻՆՈՒԹՅՈՒՆ, 1 Կոր. 8:1:

▪ **«սիրելիներ»** Պողոսը դիմում է այս եկեղեցուն անկեղծությամբ, բայց մեծ սիրով: Սա քաղցրության տերմին էր (տես 1 Կոր. 10:14; 15:58; 2 Կոր. 7:1; 12:19):

12:20 Սա ճշգրտորեն արտացոլում է այս եկեղեցու 1 Կորնթացիսի նկարագրությունը միմյանց նկատմամբ և Պողոսի նկատմամբ:

▪ **«կռիւներ»** Տես ամբողջական գրառումը 1 Կոր. 2:11: Այս տերմինը և հաջորդը եզակի են (տես MSS P⁴⁶, 8, A), սակայն ցանկի մյուս տերմինները հոգնակի են:

▪ **«նախանձներ»** Այս կոնտեքստում այն վերաբերում է կուսակցությանը կամ երկպառակտող հոգուն (տես 1 Կոր. 3:3): Տես ծանոթագրություն 2 Կոր. 9:2:

▪ **«բարկութիւններ»** Այս խոսքը վերաբերում է կատաղության պոռթկմանը (տես Գաղ. 5:20; Եփ. 4:31; Կող. 3:8):

- **«գրգռութիւններ»** Այս տերմինը (այսինքն, *eritheia*) սկզբնապէս նշանակում էր «վազել վարձելու համար»: Այն օգտագործվել է արիստոկրատ ամբարտավանության դէմ, ովքեր ստիպված էին աշխատել ապրելու համար: Այս վերաբերմունքը համապատասխանում է 1 Կորնթացիսի հակառակ մրցակցությանը, հատկապէս 11-րդ գլխին: Այս տերմինը հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից (տես Հռ. 2:8; Գաղ. 5:20; Փիլ. 1:17; 2:3; և տես նաև Հակոբոսի օգտագործումը Հակ. 3:14,16):
- **«չարախօսութիւններ»** Այս խոսքը վերաբերում է մեկ այլ մարդու չարախոսելուն, նրանց արհամարհելուն (տես Հռ. 1:30; 2 Կոր. 12:20; Հակ. 4:11; 1 Պետ. 2:1, 12; 3:16): Այս գործունէությունը օգտագործվում է սատանայի գործունէությունը նկարագրելու համար:
- **«քսութիւններ»** Սա «շնջացող» տերմին է, որը վերաբերում է մասնավոր անձի ետևում գտնվող հորինվածքին:
- **«ամբարտաւանութիւններ»** Հունարեն *phusioō* տերմինը սկզբնապէս նշանակում էր արժեզրկել կամ շեղել ինչ-որ մի բանից (այսինքն, Robertson, *Word Pictures in the New Testament*, էջ 105 և Vincent, *Word Studies*, էջ 766, *phusa*-հեծեծել): Այն օգտագործվել է քրիստոնէական գրականության մէջ (հավանաբար Պողոսի կողմից), փոխաբերական իմաստով հպարտության կամ անբարտավանության համար: Սա Կորնթոսի եկեղեցու համար խիստ հոգևոր խնդիր էր: Պողոսը այս խոսքը օգտագործում է 1 Կոր. 4:6,18,19; 5:2; 8:1; 13:4; և 2 Կոր. 12:20 մեղքերի ցանկում: Այն օգտագործվում է միայն Կորնթացիս նամակների սահմաններից դուրս, Նոր Կտակարանում Գաղ. 2:18-ում, որտեղ նշված է հատուկ գիտելիքների գնաստիկ տեսիլքները:

Արևելահայերէն «խռովութիւններ»

Արևմտահայերէն «խռովութիւններ»

NASB «խանգարումներ»
 NKJV «տազնապներ»
 NRSV, TEV «խռովություն»
 NJB «խանգարումներ»

Տես ծանոթագրություն 1 Կոր. 14:33: Սա երկպառակտող եկեղեցի էր: Այս տերմինը օգտագործվում է նաև Հակ. 3:16-ում:

Պողոսի գրվածքներում մի քանի ցանկ կա (տես Հռ. 1:29-31; 1 Կոր. 5:11; 6:9; Գաղ. 5:19-21; Եփ. 4:31; 5:34; Կող. 3:5-9): Շատ դեպքերում նրանք զուգահեռներ են անցկացնում ստոիկյանների ցանկում: Քրիստոնէությունը պահանջում է բարոյական արձագանք: Հավիտենական կյանքը պահպանվող է, և ունի բարոյական հատկանիշներ:

12:21 Պողոսը մտահոգված էր, որ եթէ այս եկեղեցին չվերանայի, նա ստիպված կլինի իր Առաքելական իշխանությունը կիրառել, երբ վերադառնա (տես 2 Կոր. 13:2) Որոշ երկպառակտողներ (այսինքն, 1 Կորնթացիս) և կեղծ ուսուցիչներ (այսինքն, 2 Կորնթացիս) ակնհայտորեն առաջնորդում էին ինքնասիրության անաստված կյանքը:

Արևելահայերէն «ցածացնել»

Արևմտահայերէն «նկուն ընել»

NASB, TEV,
 NJB «նվաստացնել»

Պողոսը այս արմատային տերմինն օգտագործում է մի քանի իմաստներով, իր Կորնթացիսի նամակների մեջ (վերցված Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, էջ 397:

1. *tapeinos*
 - ա. ցածր իրավիճակում, ճնշված (2 Կոր. 7:6)
 - բ. սիրելի համեստորեն կամ առանց ավելորդությունների (2 Կոր. 10:1)
2. *tapeinōō*
 - ա. (չեզոք սեռ) խոնարհ վիճակում ապրելու համար (2 Կոր. 11:7)
 - բ. խոնարհ լինել հարգելով հույսերը և ակնկալիքները; ճնշված լինել հիասթափությամբ (2 Կոր. 12:21)

▪ **«սուղ»** Տես ծանոթագրություն 1 Կոր. 5:2:

▪ **«շատերի համար, որ առաջուց մեղք գործեցին»** Այս ամբողջ արտահայտությունը թարգմանում է մեկ հոդ և մասնիկ, որն օգտագործվում է միայն այստեղ և 2 Կոր. 13:2: Դա հունարեն *pro* նախդիրի վաղակատար ներգործական դերբայ է (այսինքն, նախկինում) և *hamartanō* (այսինքն, մեղք գործել): Ընդհանուր իմաստը այն է, ովքեր մեղք են գործել և շարունակում են մեղք գործել: «Անցյալի» գաղափարը ընդգրկված չէ, այլ թարգմանիչներն են ավելացրել: Ժամանակը միայն ընդգրկված է սահմանական եղանակում:

▪ **«ապաշխարած»** Այս համարը ակնհայտորեն վերաբերում է քրիստոնյաներին, ովքեր շարունակում են մեղք գործել: Ապաշխարությունը կարևոր է ոչ միայն սկզբնապես (տես Մարկ. 1:15; Գործք 2:38,41; 3:16,19; 20:21), այլ շարունակաբար (տես 1 Հովհ. 1:9): Ապաշխարությունը հավատացյալի համար վերականգնում է հաղորդակցությունը, այլ ոչ թե փրկությունը: Ապաշխարությունը Աստծո և մեր ինքնության նկատմամբ վերաբերմունք է, քան հոգևոր գործողությունների կամ քայլերի հատուկ խումբ: Տես ամբողջական գրառումը 2 Կոր. 7:8-11:

▪ **«պղծութեան և պոռնկութեան և գիճութեանը»** Մենք պետք է հիշենք անաստված, կիրքերով լի մշակույթը, որից դուրս էին եկել Կորնթոսի այս նոր հավատացյալները: Նրանք աստվածների անունով մեծացել էին սեռական ցանկություններով և խաբեությամբ: Այնուամենայնիվ, ուշադրություն դարձրեք, որ այս համարում նշվում է նաև այն միջոցները, որոնց միջոցով քրիստոնյաները մեղք էին գործում իրենց կյանքում, ապաշխարած լինելով (տես 1 Հովհ. 1:9; Մաղ. 19:12-14): Հավատքը և ապաշխարությունը ինչպես սկզբնական, այնպես էլ շարունակական հոգևոր փորձառություններ են քրիստոնեայի կյանքում:

Այս ցանկը կարող է արտացոլել կեղծ ուսուցիչների գործողությունները, ովքեր ընդգծեցին հունական հոետորական ոճը, ինչը կարող է ենթադրել, որ նրանք նույնպես ենթարկվել են գնոստիցիզմին, որը շեշտեց գիտելիքը, բայց արժեզրկեց էթիկական չափանիշները: Այս բոլոր տերմինները նշված են Պողոսի թվարկած մարմնավոր մեղքերում Գաղ. 5:19: Արդարացումը չպետք է/չի կարող առանձնացվել սրբացումից:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ինչո՞ւ է Պողոսը նշում իր հատուկ հայտնությունը, բայց այդ մասին մեզ չի պատմում:
2. Ինչո՞ւ է տկարությունը օգտագործելիություն բանալին:
3. Արդյո՞ք Աստված չարն օգտագործում է Իր նպատակին հասնելու համար:
4. Ինչո՞ւ էր Պողոսը այսքան շոշափում այս եկեղեցուց գումար ստանալու մասին (տես 2 Կոր. 12:20-21):

2 ԿՈՐՆԹԱՑԻՍ 13

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Վերջնական զգուշացումները և ողջույնները	Գալ իշխանությամբ	Կանչված ինքնաքննության և փոփոխության համար (12:19-13:10)	Վերջնական զգուշացումները և ողջույնները	Պողոսի վախերն ու մտահոգությունները (12:19-13:10)
13:1-4	13:1-6	13:1-4	13:1-4	13:1-4
13:5-10	Պողոսը նախընտրում է հեթանոսներին 13:7-10	13:5-10	13:5-10	13:5-10
	Ողջույն և օրհնություն	Եզրակացություն		Եզրակացություն
13:11-12	13:11-14	13:11-12	13:11 13:12ա 13:12բ	13:11 13:12
13:13		13:13	13:13	13:13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»](#))
Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՈՒ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 13:1-4

¹Այս երրորդ անգամն է որ ձեզ մօտ եմ գալիս. երկու եւ երեք վկաների բերանից ամեն բան կ'հաստատուի: ²Առաջուց ասեցի եւ առաջ էլ ասում եմ իբր մօտ լինող երկրորդ անգամ. Եւ հիմա հեռուանց գրում եմ այն առաջուց մեղք գործածներին եւ ամեն ուրիշներին. Որ եթէ դարձեալ գամ, չեմ խնայիլ. ³Քանի որ դուք ապացոյց էք որոնում թէ Քրիստոսն ինձանով խօսում է, նա որ ձեր միջումը տկար չէ, այլ զօրաւոր է ձեզանում: ⁴Որովհետեւ թէեւ խաչուեցաւ տկարութիւնից, բայց կենդանի է Աստուծոյ զօրութիւնովը. որ մենք էլ թէ եւ տկարանում ենք նորա համար՝ բայց կենդանի կ'լինենք նորա հետ Աստուծոյ զօրութիւնովը ձեզ համար.

13:1 «Այս երրորդ անգամն է որ ձեզ մօտ եմ գալիս» Սա տեքստային հավաստիացում է տալիս Կորնթոսի Պողոսի ցավալի այցի մասին 1 և 2 Կորնթացիների գրվածքների միջև (տես 2 Կոր. 12.14): Այս այցը չի արձանագրվել Գործք Առաքելոց գրքում:

- **«ամեն բան»** Սա սկսվում է 2 Օր. 19:15 մեջբերմամբ (տես Թվոց 35:30; Մարկ. 17:6; Մաթ. 18:16; 1 Տիմ. 5:19), որը վերաբերում է դատական ընթացակարգերին: Ինչի՞ն է այն վերաբերում այս գլխում: Կան երկու հնարավորություններ:
 1. Այն վերաբերում է Պողոսի եկեղեցու գնահատմանը: Նա երկու անգամ եղել է այնտեղ և կիսվել նրանց հետ: Նրանք պատասխանատու էին և պատասխանատվություն կստանային որպես ճշմարտության ունկնդիրներ:
 2. Այն վերաբերում է եկեղեցու կարգապահությանը, որը կապված է եկեղեցու ներսում գտնվող խմբի հետ:
 - ա. 1 Կոր. 1-4 երկպառակտող խումբը (տես 2 Կոր. 12:20)
 - բ. անբարո խումբը (տես 2 Կոր. 12:21)
 - գ. «սուպեր առաքյալները» կամ կեղծ ուսուցիչները՝ կապված Երուսաղեմի և հուդայականության հետ (10-13 գլուխները, հատկապես 11:13-15)

Արևելահայերեն «կ'հաստատուի»

Արևմտահայերեն «պիտի հաստատուի»

NASB «պետք է հաստատվի»

NKJV, REB «պետք է հաստատված լինի»

NRSV «պետք է կայուն լինի»

TEV «պետք է պահպանվի»

NJB «պահանջվում է»

Այս բայաձևը ապառնի կրավորական սահմանական է (տես NKJV), սակայն Barbara և Timothy Friberg, *Analytical Greek New Testament*, էջ 573, ասում է, որ այն գործում է որպես աօրիստ կրավորական սահմանական (տես NRSV, NJB): Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 15:1:

13:2 «այն առաջուց մեղք գործածներին եւ ամեն ուրիշներին» Սա կարծես վերաբերում է երկու խմբի: Առաջինը «նրանք, ովքեր անցյալում մեղք են գործել» (վաղակատար ներգործական դերբայ), պետք է անդրադառնա Կորնթոսի այն հավատացյալներին, ովքեր երկու անգամ լսեցին Պողոսին, սակայն ապստամբեցին նրա առաջնորդության դեմ: Դա կլինի 1 Կոր. 1-4-ի երկպառակտող խմբերը կամ անբարո խումբը (տես 2 Կոր. 12:20-21; 1 Կոր. 5):

«Եվ ամեն ուրիշները» արտահայտությունը կարծես թե վերաբերում է նրանց, ովքեր չէին ներկայանում երկու անգամ, հնարավոր է, Երուսաղեմից կեղծ առաքյալները և նրանց կողմնակիցները, ովքեր 10-13 գլուխների ուշադրության կենտրոնում էին: Այնուամենայնիվ, երկու

խմբերը/ բոլոր խմբերն ուշադրություն են դարձնում, որ Պողոսը ցանկանում է, որ նրանք զբաղվեն խնդիրներով, բայց եթե նրանք չանեն, ապա նա կանի դա:

- **«Եթե»** Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, բայց այն օգտագործվում է «երբ» իմաստով (տես Հովհ. 16:7 և 1 Հովհ. 3:2):
- **«չեմ խնայիլ»** Պողոսը այս տերմինն օգտագործում է դրական իմաստով 1 Կոր. 7:23 և 2 Կոր. 1:23, բայց դատական իմաստով՝ թե այստեղ, և թե 2 Կոր. 12:6 (տես 2 Կոր. 10:11):

13:3 «ապացոյց» Այս կոնտեքստում թեստավորման այս գաղափարը կրկնվող է: Կա կայուն բառախաղ՝ հունարեն երկու բառերի *dokimazō* և *peirazō* միջև:

1. h 3, ապացոյց – *dokimē* (տես 2 Կոր. 2:9; 8:2; 9:13; 13:3)
2. h 5, փորձէք – *peirazō* (տես 2 Կոր. 13:5)
3. h 5, քննէք – *dokimazō* (տես 2 Կոր. 8:8,22; 13:5)
4. h 5, անպիտան լինէք – *adokimos*
5. h 6, անպիտան չենք – *adokimos*
6. h 7, ընտիր – *dokimos* (տես 2 Կոր. 10:18)
7. h 7, անպիտան – *adokimos*

Ամբողջական բառի ուսումնասիրման համար տես Հատուկ Թեմա՝ 1 Կոր. 3:13:

- **«Թե Քրիստոսն ինձանով խօսում է»** Կորնթոսի որոշ անդամներ Պողոսի իշխանությունը վիճարկում էին: Նրանք «փորձում» էին Պողոսին: 2 Կոր. 13:5 Պողոսը «փորձում» է նրանց: Քրիստոսի ներկայությունը Պողոսի մեջ հաստատվել է (տես 2 Կոր. 12:12):

- **«տկար չէ»** Տկարությունը Աստծո հաղթանակն է, ինչպես պատկերված է Հիսուսի կյանքում (տես 2 Կոր. 13:4) և Պողոսի կյանքում (տես 2 Կոր. 10:1,11; 12:9; 13:9): Ոչ մի մարդ չի փառավորվի Աստծո առաջ հոգևոր ձեռքբերումների համար, որոնք ուղղակի արդյունք են, թե ով է Աստված, և ոչ թե ով ենք մենք: Դրանք Աստծո ռեսուրսներն են, որոնք կատարում են հոգևոր արդյունքներ: Հավատացյալները պետք է թույլ տան, որ Նրա գործությունն անցնի իրենց կարիքի և անօգնականության միջոցով: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ 2 Կոր. 12:9:

3-4 համարները հռետորաբար ամբարտավան կեղծ ուսուցիչների ամփոփիչ հակադրումն են: Նրանք պահանջում էին գերազանցություն

1. ռասայական ծագում
2. անձնական խարիզմատիկ փորձառություն
3. գերադաս սոֆիստիկ, հռետորական վերապատրաստում
4. անձնական համեմատություններ

- **«ձեր միջումը...ձեզանում»** Այս հոգնակի «ձեզ»-ը ցույց է տալի, որ Պողոսը խոսում է հավաքական փորձառության, այլ ոչ թե անձնական փորձի մասին (տես 2 Կոր. 13:5): Հնարավոր է, TEV- ի թարգմանությունը «ձեր մեջ», համ է տալիս:

13:4 «խաչուեցաւ» Պողոսն օգտագործում է մի քանի պայման՝ Հիսուսի մահը նկարագրելու համար.

1. մահ (տես Հո. 5:6; 8:34; 14:15; 1 Կոր. 8:11; 15:3; 2 Կոր. 5:15; Գաղ. 2:21; 1 Թեա. 4:14; 5:10)
2. արյուն (տես Հո. 3:25; 5:9; Եփ. 1:7; 2:13; Կող. 1:20)
3. խաչ (տես 1 Կոր. 1:17-18; Գաղ. 5:11; 6:12,14; Եփ. 2:16; Փիլ. 2:8; Կող. 1:20; 2:14)
4. խաչելություն (տես 1 Կոր. 1:23; 2:2; 2 Կոր. 13:14; Գաղ. 3:1)

▪ **«բայց կենդանի է Աստուծոյ զօրութիւնովը»** Դա այն արտահայտությունն է, որոնք քրիստոնեական հակասությունների պատճառ են դարձել վաղ եկեղեցում: Մի թե Հիսուսը նույն Աստվածը չէ: Արդյո՞ք մարդկային Հիսուսը ապրում է առանձին աստվածության զօրությունով (այսինքն, ՅԱՀՎԵ): Մեկը չի կարող կառուցել համակարգային հասկացությունը մի համարի կամ ընտրված համարների վրա, բայց պետք է փորձի միավորել բոլոր աստվածաբանական գաղափարները միասնական ամբողջությամբ: Տես Հատուկ Թեմա՝ Մոնոթեիզմ 1 Կոր. 8:4:

Սովորաբար այս համարի տերմինաբանությունը օգտագործվում է հաստատելու, որ Հայր Աստվածը, որպես հաստատման գործողություն, հարություն տվեց Որդուն (Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռ. 1:4; 6:4,9; 8:11; 10:9; 1 Կոր. 6:14; 2 Կոր. 4:14; Գաղ. 1:1; Եփ. 1:20; Կող. 2:12; 1 Թես. 1:10) Այնուամենայնիվ, կան նաև այլ ներշնչված տեքստեր, որոնք հաստատում են, որ (1) Հոգին հարություն տվեց Որդուն (Հռ. 8:11) կամ (2) Որդին ինքը հարություն առավ (տես Հովհ. 2:19-22; 10:17-18):

▪ **«որ մենք էլ թե եւ տկարանում ենք նորա համար՝ բայց կենդանի կ'լինենք նորա հետ»** Պողոսի քրիստոնեության հասկացությունը Հիսուսի կյանքի, մահվան և հարության մասին հավատացյալների նույնականացումն էր: Ինչպես նա ապրեց խոնարհ, մեղմ և անսխալ կյանքով, այնպես էլ մենք պետք է անենք: Ինչպես նա մահացավ ուրիշներին ծառայելով, այնպես էլ մենք պետք է անենք: Ինչպես Նա հարություն առավ, այնպես էլ մենք ենք հարություն առնելու (այսինքն, նոր կյանք հիմա) և կլինի (այսինքն, հարության մարմիններ Երկրորդ Գալստյանը):

Այս նույնականացման աստվածաբանությունն այնքան ակնհայտ է Հռ. 6: Պողոսը գրեց Հռոմեացիներին, մինչ նա աշխատում էր Կորնթոսի հետ: Պողոսի քրիստոնեության հասկացությունը (այսինքն, հռոմեացիներ) արտահայտիչ է, մինչ նա աշխատում էր այդ անգործունակ եկեղեցու հետ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 13:5-10
 5Փորձեցէք ձեր անձերը, թէ արդեօք հաւատքո՞ւմն էք. Քննեցէք ձեր անձերը. Կամ թէ չ'գիտէ՞ք ձեր անձերը՝ որ Յիսուս Քրիստոսը ձեզանում է. միայն եթէ անպիտան լինիք: 6Բայց յոյս ունիմ որ գիտենաք, թէ մենք անպիտան չենք: 7Եւ եւ աղօթում եմ դէպի Աստուած որ չար բան չ'անէք. Ոչ թէ որ մենք ընտիր երեւինք, բայց որ դուք բարին գործէք, եւ մենք անպիտանի պէս լինենք: 8Որովհետեւ մի բան չենք կարող ճշմարտութեան դէմ. Բայց ճշմարտութեան համար: 9Ուրախանում ենք, երբոր մենք տկարանում ենք եւ դուք զօրանում էք. որ հէնց դա էլ աղօթքով խնդրում ենք, այսինքն ձեր կատարելութիւնը: 10Նորա համար այս հեռուանց գրում եմ. Որ չ'լինի թէ իմ գալու ժամանակ սաստկութեամբ վարուիմ իմ իշխանութեան չափովը, որ Տէրը տուաւ ինձ շինելու եւ ոչ թէ քանդելու համար:

13:5 «Փորձեցէք ձեր անձերը Սա ներկա ներգործական հրամայական է: Սա *peirazō* բառն է, ինչը նշանակում է, «փորձել ոչնչացման տեսանկյունից»: Տես ամբողջական գրառումը 1 Կոր. 3:13: Նրանք փորձեցին Պողոսին, բայց այժմ նրանք պետք է փորձարկեն իրենց:

- **«եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է ճշմարիտ լինել: Պողոսը չի կասկածում նրանց հավատքին, այլ մարտահրավեր է նետում նրանց:
- **«հաւատքո՞ւմն էք»** Հունարեն «հավատք» (*pistis*) տերմինը թարգմանվում է անգլերեն՝ երեք տերմիններով՝ հավատք, հավատալ կամ վստահել: Հավատքն օգտագործվում է Նոր Կտակարանում երեք իմաստներով. (1) Հիսուսի անձնական ընդունումը որպես Քրիստոս Աստված; (2) ինչպես է հավատարմորեն ապրում Նրա համար; և (3) որպես ճշմարտությունների մարմին Նրա մասին (տես 2 Կոր. 13:3; Գաղ. 1:23; 3:23-25): Հասուն քրիստոնեությունը ներառում է բոլոր երեք իմաստները:

▪ **«Քննեցէք ձեր անձերը»** Պողոսը կրկնում է իր հրամանը (այսինքն՝ մեկ այլ ներկա ներգործական հրամայական), սակայն օգտագործում է մյուս տերմինը (այսինքն, *dokimazō*) փորձելու համար, որը ենթադրում է ստուգել հաստատման տեսանկյունից:

▪ **«չ'գիտէ՞ք»** Սա հունարեն *epignōskō* տերմինն է (այսինքն, ներկա ներգործական սահմանական), որը սովորաբար նշանակում է փորձառական լիարժեք գիտելիքներ:

▪ **«Յիսուս Քրիստոսը ձեզանում է»** Ինչպես 2 Կոր. 13:4 կենտրոնացած է հավաքական ասպեկտի վրա, այս արտահայտությունն էլ (օգտագործելով նույն նախդիրը և հոգնակի դերանունը) կարող է վերաբերել ավելի առանձին ասպեկտին: Քրիստոսը ոչ միայն Իր ժողովրդի մեջ է, այլ նաև Իր ժողովրդի յուրաքանչյուր անձի մեջ: Հիսուսի և Հոգու ծառայությունները այնքան սերտորեն են կապված, որ հաճախ Սուրբ Հոգին կոչվում է Քրիստոսի Հոգի (տես, Հո. 8:9; 1 Պետ. 1:11): Հիսուսը նույնիսկ ասել է, որ բնակվում է հավատացյալների մեջ (տես Հովհ. 14:23; Հո. 8:10; Կող. 1:27): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆ ԶԻՄՈՒՄԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ 2 Կոր. 3:17:

▪ **«միայն եթե անպիտան լինիք»** Այս արտահայտությունը զուգահեռ է 2 Կոր. 13:5 «եթե դուք հավատքի մեջ եք»: Պողոսը մի քանի ձևով հաստատել է (այսինքն, առաջին կարգի պայմանական նախադասություն 2 Կոր. 13:5 և *dokimazō* օգտագործումը), որ նա հավատում է, որ իր ընթերցողները հավատացյալներ են, բայց ոչ բոլորը: Կա կեղծ ուսուցիչների խումբ, որը չգիտի Քրիստոսին (տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆ ՈՒԽՏԱԴՐԺՈՒՄ (APHISTĒMI) 1 Կոր. 6:9: Այս կետը վերաբերում է նրանց:

Այս կետը չի վերաբերում մեղավոր հավատացյալներին, քանի որ Պողոսը դիմեց նրանց 2 Կոր. 12:20-21: Նրանք ապաշխարհության կարիք ունեն, բայց կեղծ ուսուցիչները Քրիստոսի կարիքն ունեն (Մաթ. 7):

Պողոսն այս նույն տերմինն օգտագործեց 1 Կոր. 9:27 քանի որ նա պայքարում էր Աստծո վերահսկողության տակ մնալու համար: Պողոսը չցանկացավ լինել «որակազրկված» կամ մերժված: Հավատացյալները վիճակված են քննելու իրենք իրենց (տես Փիլ. 2:12):

13:6 Պողոսը պնդում է, որ նա և իր օգնականները անցել են քննությունը (այսինքն, ոչ կեղծիքներ, *adokimos*, տես 2 Կոր. 13:7), հատկապես Կորնթոսի եկեղեցու նկատմամբ: Եթե նրանք ունեն բնակվող Քրիստոսին, ապա Պողոսի ծառայությունը արդյունավետ էր:

13:7 Որոշ իմաստով ուժեղ, ուղղափառ Կորնթոսի եկեղեցին հաստատում էր Պողոսի ղեկավարությունը և առաքելական հավատարմագրերը: Նա ավելի շատ մտահոգված է, որ նրանք ճշմարիտ և համապատասխան են Աստծո և ավետարանի պատճառով, ոչ թե ուղղակի ցույց տալու Պողոսի հավատարմագրերը կամ հաստատելու նրա ղեկավարությունը (տես 2 Կոր. 13:9):

▪ **«ընտիր...անպիտանի»** Պողոսը շարունակում է այս բառախաղը *dokimos* և *adokimos* վրա:

13:8 Այս կոնտեքստում ճշմարտությունը վերաբերում է ավետարանին որպես անձ (այսինքն, Հիսուս Մեսիային), որպես ուղերձ (այսինքն, Հիսուսի մասին ավետարանը) և որպես ապրելակերպ (այսինքն, Հիսուսի կյանքի մրցումը):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆ: «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈՂՈՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ
SPECIAL TOPIC: "TRUTH" IN PAUL'S WRITINGS**

Պողոսի կողմից օգտագործված այս տերմինը և դրա հետ կապված ձևերը վերցված է դրա համարժեք բառից *emet*, որը նշանակում է վստահելի կամ հավատարիմ (BDB 53, տես Հատուկ Թեմա: Հավատալ, հավատք, վստահություն և հավատարմություն Հին Կտակարանում): Միջկտակարանյան

հրեական գրվածքներում այն օգտագործվել է ճշմարտության համար, ի տարբերություն կեղծիքի: Գուցե ամենամոտ զուգահեռը կլինի Մեռյալ Ծովի մագաղաթները «Շնորհակալության օրհներգերը», որտեղ օգտագործվում է բացահայտված վարդապետությունների համար: Էսսեն համայնքի անդամները դարձան «ճշմարտության վկաներ»:

Պողոսը տերմինն օգտագործում է որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին խոսելու միջոց:

1. Հռոմեացի 1:18,25; 2: 8,20; 3: 7; 15: 8
2. 1 Կորնթացի 13:6
3. 2 Կորնթացի 4: 2; 6: 7; 11:10; 13: 8
4. Գաղատացի 2: 5,14; 5: 7
5. Եփեսացի 1:13; 6:14
6. Կողոսացի 1: 5,6
7. 2 Թեսաղոնիկեցի 2: 10,12,13
8. 1 Տիմոթեոս 2:4; 3:15; 4: 3; 6: 5
9. 2 Տիմոթեոս 2:15,18,25; 3: 7,8; 4: 4
10. Տիտոս 1: 1,14

Պողոսը նաև օգտագործում է այդ տերմինը՝ իր խոսքը ճշգրտորեն արտահայտելու համար

1. Գործք 26:25
2. Հռոմեացի 9: 1
3. 2 Կորնթացի 7:14; 12: 6
4. Եփեսացի 4:25
5. Փիլիպեցի 1:18
6. 1 Տիմոթեոս 2:7

Նա նաև օգտագործում է այն՝ իր դրդապատճառները 1 Կոր. 5: 8 և ապրելակերպը (նաև բոլոր քրիստոնյաների համար) Եփ. 4:24; 5: 9; Փիլ. 4:8 նկարագրելու համար: Նա երբեմն այն օգտագործում է մարդկանց համար:

1. Աստված, Հռ. 3: 4 (տես Հովհ. 3:33; 17:17)
2. Հիսուս, Եփ. 4:21 (նման Հովհ.14:6)
3. Առաքյալ վկաներ, Տիտոս 1:13
4. Պողոս, 2 Կոր. 6: 8

Պողոսը օգտագործում է ԲԱՅԱԶԵՎԸ (*alētheō*) միայն Գաղ. 4:16 և Եփ. 4:15, որտեղ դա վերաբերում է ավետարանին: Հետագա ուսումնասիրության համար խորհրդակցում ենք Colin Brown (ed.), *The New International Dictionary of New Testament Theology*, հատոր 3, էջ 784-902:

13:9 «Ուրախանում ենք, երբոր մենք տկարանում ենք եւ դուք զօրանում էք» Սա Պողոսի պարադոքսն է: Նա գիտի, որ հոգևոր զորությունը ազատվում է մարդկային տկարությունից (տես 2 Կոր. 12:10; 13:4): Հետևաբար, նա ցանկանում է տկարանալ: Սակայն, որպեսզի Կորնթոսի եկեղեցին զորանա, նա նույնպես պետք է դառնա տկար: Սա շատ հակադիր ձև է, որ մարդիկ գնահատեն կյանքը: Կեղծ ուսուցիչները զորություն են հաստատել կրթության, հարստության, փորձի միջոցով, բայց Պողոսը զորությունը հաստատում է Քրիստոսի օրինակով (տես 2 Կոր. 13.4):

▪ **«այսինքն ձեր կատարելութիւնը»** Այս տերմինի գոյականի ձևը գտնվում է միայն Նոր Կտակարանում: Բայը նշանակում է «միասին համախմբել»: Պողոսը բայաձևն օգտագործեց 1 Կոր. 1:10, որը կոչ է անում Կորնթոսի եկեղեցուն վերջ դնել իր երկպառակտող բաժանումներին: Այժմ 2 Կորնթացիսի վերջում նա վերադառնում է այս մանդատին (այսինքն, միասնություն, որը կհանգեցնի հոգևոր հավասարակշռության):

Louw and Nida, *Greek-English Lexicon of the New Testament*, հատոր 1, էջ 680, հավաստում է այդ *artios* (այսինքն՝ լիարժեք, համապատասխան, ամբողջովին հագեցված հանձնարարության համար), իր բոլոր տարբեր նախադրյալին բաղադրությամբ (այսինքն՝ *epi* և *kata*) բոլոր հոմանիշներով (տես Ղուկ. 6:40; 2 Կոր. 13:9, 11; Եփ. 4:12; 2 Տիմ. 3:17):

Պողոսը ցանկանում է գործող, միասնական, սիրող եկեղեցի Կորնթոսում (տես 2 Կոր. 13:11): Դրա համար պետք է լինի ներողամտություն, հաշտություն և եկեղեցական կարգապահություն (տես Գաղ. 6:1):

13:10 Պողոսը չէր ցանկացել մեկ այլ ցավոտ այց կատարել Կորնթոս (տես 2 Կոր. 2:3-4): Նա չէր ուզում գալ իր Առաքելական իշխանությամբ, այլ ծնողական սիրով: Սակայն եկեղեցու պատասխանը որոշեց, թե ինչպես նա պետք է գործի:

- **«իշխանութեան չափովը, որ Տէրը տուաւ ինձ»** Այս ճշգրիտ արտահայտությունը գտնվում է 2 Կոր. 10:8: Այս առաքելական իշխանությունը, անկախ անձնական ներկայությունից կամ հեռավորությունից (տես 1 Կոր. 5:4), ունի Քրիստոսի իշխանությունը (տես 2 Կոր. 12:19; 13:3): Այս իշխանությունը տրվել է Պողոսին Դամասկոսի ճանապարհին հանդիպման ժամանակ (տես Գործք 9,22,26):

- **«շինելու»** Տես Հատուկ Թեմա, 1 Կոր. 8:1:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 13:11-12
¹¹Վերջապէս, եղբարք, ուրախ եղէք, կատարեալ եղէք, մխիթարուեցէք, միաբան եղէք, եւ խաղաղութիւն արէք. եւ սէրի եւ խաղաղութեան Աստուածը ձեզ հետ լինի: ¹²Իրար բարեւ տուէք սուրբ համբոյրով. Բարեւ են տալիս ձեզ բոլոր սուրբերը:

13:11 «Վերջապէս» Սա բառացիորեն «մնացածի համար» է (տես Գաղ. 6:17): Սա հատկանշական եզրակափակող արտահայտություն է Պողոսի համար (տես Եփ. 6:10; Փիլ. 3:1; 4:8; 2 Թեմ. 3:1): Այն սովորաբար նշանում է փակման կետին անցնելը:

- **«եղբարք»** Ինչպիսի գեղեցիկ և հարմար միջոց է փակել այս խնդրահարույց եկեղեցու դժվարին նամակը: Այն նաև գործում է որպես գրական ապարատ՝ ազդելու նոր թեմայի անցնելուն:

- Գոյություն ունի ներկա հրամայականի հինգ շարք՝
 1. «ուրախ եղէք» (ներկա ներգործական հրամայական): Պողոսը հաճախ օգտագործում է այս տերմինը 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 2:3; 6:10; 7:7,9,13,16; 13:9,11): Այս տերմինը կարող է նշանակել «հաջողություն» (տես Փիլ. 3:1; 4:4), բայց դա չի համապատասխանում հրամայականի շարքին:
 2. «կատարյալ եղէք» (ներկա կրավորական հրամայական): Սա խոսում է միասնության և ծառայության մասին (տես հ. 9):
 3. «մխիթարվէք» (ներկա կրավորական հրամայական): Պողոսը հաճախ օգտագործում է այս տերմինը 2 Կորնթացիսում (տես 2 Կոր. 1:4,6; 2:7,8; 5:20; 6:1; 7:6,7,13; 8:6; 9:5; 10:1; 12:8,18; 13:11):
 4. «միաբան եղէք» (ներկա ներգործական հրամայական): Այս հունարեն տերմինը շատ լրացուցիչ իմաստներ ունի (տես Louw and Nida, հատոր 2, էջ 259), սակայն այս կոնտեքստում զուգահեռ է «կատարյալ եղէք»-ին: Սա վերաբերում է միասնությանը հանուն Ավետարանի: Սա չի հաստատում, որ հավատացյալները պետք է համաձայն լինեն յուրաքանչյուր հարցի շուրջ, այլ որ նրանք պետք է համաձայնվեն սիրով և

Ավետարանը միշտ պետք է առաջնահերթ լինի անձնական կարծիքներում կամ նախասիրություններում:

5. «ապրել խաղաղության մեջ» (ներկա ներգործական հրամայական): Դա անշուշտ արտացոլում է 1 Կոր. 1-4 և 2 Կոր. 10-13: Անորոշ է, թե ինչպես են այդ խնդիրները վերաբերում, բայց երկուսն էլ առաջացրել են անհամապատասխանություն և հակասություն: Պողոսը պատվիրում է խաղաղ լինել, ոչ թե փոխզիջմամբ, այլ Քրիստոսով: Խաղաղության Աստվածը (տես 2 Կոր. 13:11) կօգնի մեզ մեր տկարության մեջ:

- **«սերի եւ խաղաղութեան Աստուածը»** Ինչպիսի հրաշալի նկարագրական կոչում է ՅԱՀՎԵԻ համար: ՅԱՀՎԵՆ հաճախ կապված է «խաղաղության» հետ (տես Հո. 15:33; 16:20; 1 Կոր. 14:33; Փիլ. 4:9; 1 Թեա. 5:23, Եբ. 13:20): Նա կոչվում է «խաղաղության Տեր» 2 Թեա. 3:16: Սերը և խաղաղությունը երկուսն էլ հիշատակված են Եփ. 6:23:

Հավատացյալները պետք է նախանձավոր լինեն այս հասկանիչներին միմյանց հետ եղած փոխհարաբերություններում:

13:12 «բարեւ տուէք» Սա կարելի է թարգմանել «հրաժեշտ» (տես Գործք 20:1; 21:6): Այն փոխանցում է ընդունման և համագործակցության վերաբերմունք: Հակառակ վերաբերմունքը արտահայտված է Մաթ. 5:47:

Պարզապես մեկնաբանություն այս վերջին երկու համարների համարակալման մասին: Որոշ անգլերեն թարգմանություններ միավորում են 2 Կոր. 13:12-13 (TEV, NJB, RSV, NRSV), իսկ մյուսները կոտրում են այն երկու համարներով (KJV, NKJV, NASB, NIV):

- **«սուրբ համբոյրով»** Այս սովորույթը (այսինքն, ընտանիքի անդամների և ընկերների միջև) հետագայում դադարեցվեց հեթանոսական թյուրիմածության պատճառով (այսինքն, էրոտիկ համբույր): Վաղ եկեղեցում տղամարդիկ համբուրում էին տղամարդկանց, իսկ կանայք համբուրում էին կանանց (այսինքն՝ հետևելով ժողովարանի սովորությանը, տես Հո. 16:16; 1 Կոր. 16:20; 1 Թեա. 5:26): Ծանոթագրություն 1 Կոր. 16:20:

Սա հրամայական է: Արդյո՞ք դա նշանակում է, որ քրիստոնյաները պետք է միմյանց ողջունեն այս կոնկրետ ձևով: Այստեղ կա լավ օրինակ, թե ինչպես մշակույթը և ապագա իրավիճակները պետք է ազդեն մեկնաբանության վրա: Ձեր խնդիր չէ, այլ վերաբերմունք: Հավատացյալները մեկ ընտանիք են:

13:12 «բոլոր սուրբերը» Այս արտահայտությունը վերաբերում է ոչ միայն Պողոսին և նրա միսիոներական թիմին, այլ նաև «բոլոր սուրբերին» (այսինքն, Պողոսի մյուս բոլոր եկեղեցիները): Կորնթոսի և այս մյուս եկեղեցիների միջև լարվածությունն առաջացավ: Այս եկեղեցու մասին գերադասություն եղավ: Պողոսն այս հարցին անդադարձավ մի քանի անգամ հիշատակելով բոլոր եկեղեցիներում սովորեցրած չափանիշները (տես 1 Կոր. 4:17; 7:17; 11:16,34; 14:33): Կորնթոսը պետք է լինի ընտանիքի մի մասը, այլ ոչ թե արտոնյալ, էլիտար անդամ: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ՝ ՍՈՒՐԲԵՐ 1 Կոր. 1:2:

Ընթացիկ ճգնաժամում Պողոսից սկսված բոլոր ժողովները ուղարկեցին իրենց ողջույնները, որը ենթադրում է հաղորդակցություն, մտահոգություն, համագործակցություն, աղոթք և ընդունում:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Կորնթացիս 13:13
¹³Տեր Յիսուս Քրիստոսի շնորհքը, եւ Աստուծոյ սէրը, եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեր ամենի հետ. Ամէն:

13:13 Պողոսը միշտ եզրափակել է իր նամակները աղոթքով կամ գոհությամբ, բայց սա եզակի է: Այն միավորում է Աստծո բնույթի երեք ասպեկտները Երրորդության երեք անձանց հետ: Անսովոր է նաև, որ առաջինը հիշատակվեց Հիսուսը: «Երրորդության» մասին ամբողջական գրառումների համար տես Հատուկ Թեմա՝ 1 Կոր. 2:10:

Աստծո երեք ասպեկտները՝ շնորհքը, սերը և հաղորդակցությունը, Կորնթոսի «բոլոր» հավատացյալների համար են: Սա աղոթքի կարևոր մասն է: Պողոսը ցանկանում է վերականգնել միասնությունը հավատացյալների միջև, սակայն դեռևս ճանաչում և մերժում է կեղծ հավատացյալներին:

Պողոսը գրագիր է օգտագործել իր նամակը գրելու համար, բայց հավանաբար գրիչը անձամբ վերցրեց վերջին աղոթքը գրելու համար (տես 2 Թես. 3:17): Պողոսը սիրում էր այս եկեղեցուն:

- **«Սուրբ Հոգու հաղորդութիւնը»** Տես Հատուկ Թեմա՝ 1 Կոր. 1:9 և 12:11:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ինչպե՞ս են հավատացյալները քննում իրենց:
2. Ինչո՞ւ է Պողոսն այդքան հաճախ խոսում իր տկարության մասին 11-13 գլուխներում:
3. Ինչպե՞ս է վստահությունը վերաբերվում հաստատակամությանը:
4. Ինչպե՞ս կարող է Աստված միաժամանակ լինել մեկ և երեք անձ:

ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն, Միջերկրական աշխարհում ընդունված բարբառն էր՝ Ալեքսանդր Մակեդոնացու աշավանքներից հետո (Ք. Ա. 336-323) մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (Ք. Ա. 300- մ. թ. 500): Այն պարզապես պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի մի նոր ձև, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրական աշխարհի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը ինչ որ առումով բացառիկ էր, որովհետև այն գործածողների հիմնական լեզուն բացի Ղուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամերենն էր: Ահա թե ինչու նրանց գրքերում առկա էին արամերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում կատարում Սեպտուագինտայից (ՀԿ-ի հունարեն թարգմանությունը), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել են հրեա դպիրները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա մեզ հիշեցնում է, որ մենք չենք կարող դիտարկել ՆԿ-ը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և ՆԿ-յան Կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոցն էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք համատեքստով: Բառերն իմաստավորվում են միայն համատեքստում, հետևաբար քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) ըստ հեղինակի հատուկ ոճի և (2) ըստ հատուկ համատեքստի: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայերով հարուստ լեզու է: Հաճախ մեկնության բանալին բայածանցյալների տեսակը և ձևն է: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) համատեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՄԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. Կատարյալ ժամանակները կենտրոնանում են գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ գագաթնակետի մասին:

2. Անկատար ժամանակները կենտրոնանում են գործողության շարունակական ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և սաստկացնող:

Բ. Ժամանակները կարող են դասակարգվել համաձայն հեղինակի կողմից գործողության ընթացքի դիտարկման:

1. Այն տեղի ունեցավ = անորոշ կատարյալ

2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = կատարյալ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում և հետևանքները շոշափելի են, սակայն ոչ հիմա = գերակատար
4. Այն տեղի է ունենում = ներկա
5. Այն տեղի էր ունենում = անկատար
6. Այն տեղի կունենա = ապառնի

Որպես օրինակ, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանության մեջ, կվերցնենք «փրկել» տերմինը: Այն կիրառվում էր մի քանի տարբեր ժամանակներով՝ ցույց տալով թե՛ դրա ընթացքը, թե՛ կուլմինացիան:

1. Անորոշ կատարյալ - «փրկված» (տես Հո. 8:24)
2. Կատարյալ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (տես Եփ.2:5,8)
3. Ներկա - «փրկվում են» (տես 1 Կոր.1:18; 15:2)
4. Ապառնի - «կփրկվեն» (տես Հո. 5:9,10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով բայի ժամանակներին, թարգմանիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել տվյալ ժամանակաձևը: Ստանդարտ «առանց ավելորդությունների» ժամանակաձևը՝ անորոշ կատարյալն էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» բայի ձև է: Այն կարող է կիրառվել տարբեր կերպերով՝ կախված համատեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Անցյալ ժամանակձևն ընդունում էին միայն սահմանական եղանակով բայերը: Եթե որևէ այլ ժամանակ էր կիրառվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. Կատարյալ ժամանակ. Այն արտահայտում է կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Ինչ-որ առումով դա անորոշ կատարյալի և ներկա ժամանակների գուգորդություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփ.2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակում եք փրկվել»:
2. Գերակատար ժամանակ. այն նման է կատարյալին, սակայն շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դոսան մոտ կանգնած էր» (Հովհ.18:16):
3. Ներկա ժամանակ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ով մնում է Նրա մեջ, մեղք չի գործում» «Ով որ Աստուծոց է ծնված, մեղք չի գործում» (1 Հովհ.3:6 և 9):
4. Անկատար ժամանակ. Այս ժամանակաձևի կապը ներկա ժամանակի հետ ուղիղ համեմատական է կատարյալի և գերակատարի միջև կապին: Անկատարն արտահայտում է անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել է ներկա պահին կամ էլ անցյալում գործողության հենց սկզբում: Օրինակ՝ «Այդ ժամանակ նրա մոտ էին գնում Երուսաղեմից» (Մատթ.3:5):
5. Ապառնի ժամանակ. Այն արտահայտում է մի գործողություն, որը տեղի կունենա ապագայում: Շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք...» (Մատթ.5:4-9):

II. ՍԵՌ

- Ա. Մեռը ցույց է տալիս բայի գործողության և դրա ենթակայի միջև եղած կապը:
- Բ. Ներգործական սեռը նորմալ, սպասված և չէշտադրված միջոցն է, որը ցույց է տալիս, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:
- Գ. Կրավորական սեռը նշանակում է, որ ենթական կրում է բայի արտահայտած գործողությունը, որը կատարվել է արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ նախդիրները և հոլովները հունարեն ՆԿ-ում:
1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* բացառական հոլովով (տես Մատթ.1:22; Գործք 22:30):
 2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* բացառական հոլովով (տես Մատթ.1:22):
 3. Անորոշ գործող անձ՝ սովորաբար կիրառվող *en* գործիական հոլովով:
 4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն գործիական հոլովով:
- Դ. Չեզոք սեռը նշանակում է, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է բայի գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուր հետաքրքրվածության սեռ: Այս քերականական կառուցվածքը ուժեղացնում է ենթակայի նշանակությունը նախադասության մեջ: Անգլերենում նման քերականական կառուցվածք գոյություն չունի: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի մի քանի օրինակներն են՝
1. Անդրադարձ – ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «ինքն իրեն կախեց» (Մատթ.27:5):
 2. Ինտենսիվ – ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ կերպարանափոխվում է լուսի հրեշտակի» (2 Կոր.11:14):
 3. Փոխադարձ – երկու ենթակաների փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մատթ.26:4):

III. ԵՂԱՆԱԿ

- Ա. Կոյնե հունարենն ունի չորս եղանակ: Դրանք ցույց են տալիս բայի կապը իրականության հետ, սակայն համաձայն հեղինակի սեփական տեսանկյան: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (սահմանական) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ստորադասական, հրամայական և ըղձական):
- Բ. Մահմանական եղանակը արտահայտում է ստանդարտ եղանակ, որը ցույց է տալիս առնվազն հեղինակի տեսանկյունից տեղի ունեցած գործողություն: Սա միակ հունարեն եղանակն է, որն արտահայտում է որոշակի ժամանակ, եթե անգամ այդ ասպեկտը երկրորդական է:
- Գ. Ստորադասական եղանակն արտահայտում է ապագայում հնարավոր գործողություն: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություններ ունի ապառնի սահմանականի հետ: Տարբերությունն այն է, որ ստորադասականն արտահայտում է որոշ աստիճանի տարակուսանք: Անգլերենում հաճախ այն արտահայտվում է *could*, *would*, *may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

- Դ. Ըղձական եղանակն արտահայտում է ցանկություն, որը տեսականորեն կարող է ի կատար ածվել: Ստորադասականի հետ համեմատած այն դիտարկվում է իրական գործողությունից մի քայլ առաջ: Ըղձական եղանակն արտահայտում է գործողության հնարավորությունը որոշ հանգամանքների ներքո: ՆԿ-ում ըղձական եղանակը հազվադեպ է հանդիպում: Այն շատ հաճախ կիրառվում է Պողոսի հայտնի արտահայտության մեջ՝ «քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (տե՛ս Հռ. 3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11; 1 Կոր.6:15; Գաղ.2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Ղուկ.1:38, 20:16; 8:20 և 1 Թեո.3:11:
- Ե. Հրամայական եղանակը ցույց է տալիս հրաման, որի կատարումը հնարավոր է, սակայն շեշտը դրվում է խոսողի մտադրության վրա: Այն հաստատում է միայն կամային հնարավորությունը և պայմանավորված է մեկ այլ անձի ըտրությամբ: Հրամայական եղանակը հատկապես օգտագործվում է աղոթքներում և երրորդ անձի խնդրանքներում: ՆԿ-ում այս հրամաններն ունենին միայն ներկա և անորոշ կատարյալ ժամանակաձևեր:
- Զ. Մի քանի լեզուների քերականության մեջ ածական դերբայները դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն ՆԿ-ում և սովորաբար սահմանվում էին որպես բայաձանցյալներ: Դրանք թարգմանվում են գլխավոր առնչվելի բայի հետ միասին: Ածական դերբայները թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Դիտարկվել է լավագույն տարբերակը և հաշվի առնվել Աստվածաշնչյան մի քանի թարգմանություններ: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել Բեյքերի Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով ձեռնարկը (The Bible in Twenty Six Translations, Baker):
- Է. Ներգործական սեռի սահմանական եղանակի անորոշ կատարյալն օգտագործվում է որպես գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ մեկնության համար ուներ որոշակի նշանակություն, որը հեղինակն էր ուզում հաղորդել:
- IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, որոնք չեն տիրապետում հունարենին.
- Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, Հունարեն Վերլուծական Նոր Կտակարան /Frieberg, Barbara and Timothy, Analytical Greek New Testament, Grand Rapids: Baker, 1988/:
- Բ. Ալֆրեդ Մարշալ, Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն /Marshall, Alfred, Interlinear Gree-English New Testament, Grand Rapids: Zondervan, 1976/:
- Գ. Ուիլյամ Դ. Մաունս, Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան /Mounce, William D. The Analytical Lexicon to the Greek New Testament, Grand Rapids: Zondervan, 1993/:
- Դ. Ռեյ Սամերս, Նոր Կտակարանի Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները /Summers, Ray, Essentials of New Testament Greek, Nashville: Broadman, 1950/:
- Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուլիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը գոյականի խոնարհվող ձևն է, որը ցույց է տալիս դրա կապը բայի և նախադասության մյուս անդամների հետ: Կոյնե հունարենում նախդիրները ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովի ձևը կարող էր վկայել մի քանի տեսակ կապերի մասին, նախդիրներն օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով.

1. Ուղղական հոլովն օգտագործվում էր առարկաններն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ գոյականները և ածականները «լինել» կամ «դառնալ» օժանդակ բայերի հետ:
2. Սեռական հոլովն օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ առնչվում էր: Պատասխանում էր «ի՞նչպիսի» հարցին: Այն հաճախ արտահայտվում էր անգլերենի «of» նախդիրի օգնությամբ:
3. Բացառական հոլովն ուներ սեռական հոլովի նույն խոնարհված ձևը, սակայն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Ընդհանրապես այն արտահայտում է ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի անջատում: Անգլերենում այն հաճախ կիրառվում է from նախդիրի օգնությամբ (հայերենում՝ -ից վերջածանցով):
4. Տրական հոլովն օգտագործվում էր անձնական հետաքրքրությունը նկարագրելու համար: Մա կարող էր մատնանշել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ այն անուղղակի լրացումն էր: Թարգմանվում է անգլերենի to նախդիրի օգնությամբ:
5. Ներգոյական հոլով ուներ տրականի նույն խոնարհված ձևը, սակայն նկարագրում էր դիրք կամ տեղանք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Հաճախ թարգմանվում է անգլերեն in, on, at, among, during, by, upon և beside նախդիրների օգնությամբ:
6. Գործիական հոլովն ուներ տրական և ներգոյական հոլովների նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Հաճախ թարգմանվում էր անգլերեն by և with նախդիրների օգնությամբ:
7. Հայցական հոլովն օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: Գոյականն այս հոլովում հիմնականում օգտագործվում էր որպես ուղիղ լրացում: Այն պատասխանում է «որքա՞ն», «ի՞նչ աստիճանի» հարցերին:
8. Կոչական հոլովն օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊՆԵՐ ԵՎ ԿԱՊԵՐ

Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, քանի որ ունի շատ կապեր: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը հաճախ մեկնաբանության համար շատ նշանակալի է լինում: Փաստացի այս շաղկապները և կապերը մատնանշում են հեղինակի մտքի

ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու, թե ինչ է փորձում հաղորդել հեղինակը:

Բ. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բոռերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Ի. Դանայի և Ջուլիուս Բ. Մենթեյի Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Ձեռնարկ գրքից /H. E. Dana and Julius K. Mantey's A Manual Grammar of the Greek New Testament/):

1. Ժամանակի կապ
 - ա. *epei, epeid ē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) – «երբ»
 - բ. *heōs* – «մինչդեռ»
 - գ. *hotan, epan* (ստ. եղ.) – «երբ էլ որ»
 - դ. *heōs, achri, mechri* (ստ. եղ.) – «մինչև որ»
 - ե. *priv* (անորոշ) – «նախքան»
 - զ. *hōs* – «ի վեր», «երբ», «այն ժամանակ, երբ»
2. Տրամաբանական կապ
 - ա. Նպատակ
 - (1) *hina* (ստ. եղ.), *hopōs* (ստ. եղ.), *hōs* – «որպեսզի», «որ»
 - (2) *hōste* (անորոշը հայցական հոդով) – «որ»
 - (3) *pros* (անորոշը հայցական հոդով) կամ *eis* (անորոշը հայցական հոդով) – «որ»
 - բ. Հետևանք (նպատակի և հետևանքի քերականական ձևերի միջև սերտ կապ կա)
 - (1) *hōste* (անորոշ, սա ամենատարածվածն է) – «որպեսզի», «այսպիսով»
 - (2) *hiva* (ստ. եղ.) – «այնպես որ» «որպեսզի»
 - (3) *ara* – «այնպես»
 - գ. Պատճառ
 - (1) *gar* (պատճառ-հետևանք կամ պատճառ-եզրահանգում) – «քանի որ», «որովհետև»
 - (2) *dioti, hotiy* – «որովհետև»
 - (3) *epei, epeidē, hōs* – «քանի որ»
 - (4) *dia* (հայցական հոլովով) և (անորոշ հոդով) – «որովհետև»
 - դ. Եզրակացություն
 - (1) *ara, poinun, hōste* – «հետևաբար»
 - (2) *dio* (ամենաուժեղ հետեվանքային շաղկապը) – «ինչի կապակցությամբ» «ինչի համար», «ուստի»
 - (3) *oun* – «ուստի», «այսպիսով», «այն ժամանակ», «արդյունքում»
 - (4) *toinoun* – «համապատասխանաբար»
 - ե. Ընդդիմական կամ հակադրություն
 - (1) *alla* (խիստ ընդդիմական) – «բայց», «բացառությամբ»
 - (2) *de* – «բայց», «սակայն», «բայց և այնպես», «մյուս կողմից»
 - (3) *kai* – «բայց»
 - (4) *mentoi, oun* – «սակայն»
 - (5) *plēn* – «այնուամենայնիվ» (հիմնականում Դուկասում)
 - (6) *oun* – «սակայն», «համենայն դեպս»
 - զ. Համեմատություն

- (1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)
 - (2) *kata* (բաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)
 - (3) *hosos* (Եբրայեցիսում)
 - (4) *ē* – «քան»
- է. Շարունակական կամ հաջորդական
- (1) *de* – «և» «հիմա»
 - (2) *kai* – «և»
 - (3) *tei* – «և»
 - (4) *hina, oun* – «որ»
 - (5) *oun* – «այն ժամանակ» (Հովհաննեսում)
3. Էմֆատիկ (շեշտված) կիրառություն
- ա. *alla* – «անշուշտ», «այո», «իրականում»
 - բ. *ara* – «իրապես», «անշուշտ», «իսկապես»
 - գ. *gar* – «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»
 - դ. *de* – «իսկապես»
 - ե. *ean* – «նույնիսկ»
 - զ. *kai* – «նույնիսկ», «իսկապես», «իրապես»
 - է. *mentoi* – «իսկապես»
 - ը. *oun* – «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Պայմանական նախադասությունը պարունակում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառուցվածքը օգնում է մեկնաբանությանը, քանի որ տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու է հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի ունենում կամ տեղի չի ունենում: Գոյություն ունեւ պայմանական նախադասությունների չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահղացման տեսանկյունից մինչև ցանկալին:
- Բ. Առաջին կարգի պայմանական նախադասությունն արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտադրության տեսանկյունից, թեև արտահայտվում էր «եթե» շաղկապով: Որոշ համատեքստերում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «ապա» (տես՝ Մատթ.4:3; Հռ.8:31): Սակայն սա չի նշանակում, որ առաջին կարգի պայմանական նախադասությունները պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած դեպքեր: Դրանք հաճախ կիրառվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (տես՝ Մատթ.12:27):
- Գ. Երկրորդ կարգի պայմանական նախադասությունը հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ ընդունվել որպես փաստ: Օրինակներ.
1. «Այս մարդը, եթե մարգարե լիներ (որ չէր), կիմանար (իսկ նա չգիտեր), թե ով և ինչպիսի կին է սա, որ դիպչում է Իրեն, որովհետև նա մեղավոր մեկն է» (Ղուկ.7:39):

2. «Քանի որ, եթե դուք Մովսեսին հավատայիք (իսկ դուք չեք հավատում), Ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում)» (Հովհ.5:46):
3. «Եթե մարդկանց հաճեցնեի (իսկ ես դա չեմ անում), ապա Քրիստոսին ծառա չեի լինի» (Գաղ.1:10):

Դ. Երրորդ կարգի պայմանական նախադասությունը խոսում է ապագայում հնարավոր գործողության մասին: Հաճախ այն ենթադրում է գործողության հավանականությունը, իսկ սովորաբար ակնարկում է դրա պատահականությունը: Հիմնական բայով արտահայտված գործողությունը պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ 1 Հովհ.1:6-10; 2:4,6,9,15,20, 21,24,29; 3:21; 4:20; 5:14,16:

Ե. Չորրորդ կարգի պայմանական նախադասությունն ամենահեռուն է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում ՆԿ-ում: Փաստացի գոյություն չունի լիարժեք չորրորդ կարգի պայմանական նախադասություն, որտեղ գլխավոր և ստորադասական նախադասությունները համապատասխանում են իրենց սահմանմանը: Մասնակի չորրորդ կարգի պայմանական նախադասության օրինակ է 1 Պետ.3:14-ի բացման խոսքը: Մասնակի չորրորդ կարգի պայմանական նախադասության մեկ այլ օրինակ է Գործք 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. Ներկա հրամայական եղանակը *mē* մասնիկի հետ հաճախ (բայց ոչ միայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են «ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա...» (Մատթ.6:19), «հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար...» (Մատթ.6:25), «և ձեր անդամները անիրավության գործիք մի՛ ընծայեք մեղքին...» (Հռ.6:13), «և մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին...» (Եփ.4:30), «և մի՛ արբենաք զինով...» (Եփ.5:18):

Բ. Անորոշ կատարյալը ստորադասական եղանակով *mē* մասնիկի հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Մի քանի օրինակներից են՝ «Մի՛ կարծեք ...» (Մատթ.5:17), «հոգս մի՛ արեք ...» (Մատթ.6:31), «ամոթ մի՛ համարիր...» (2 Տիմ.1:8):

Գ. Կրկնակի ժխտումը ստորադասական եղանակի հետ շատ խիստ ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Մի քանի օրինակներից են՝ «Նա մահ չի տեսնի հավիտյան» (Հովհ.8:51), «ես հավիտյան միս չեմ ուտի» (1 Կոր.8:13):

IX. ՀՈԴ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստը, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Դրա հիմնական ֆունկցիան բառի, անվան կամ արտահայտության վրա ուշադրություն հրավիրելու միջոց հանդիսանալն է կամ դրանք «մատնացույց» անելը: Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ տարբեր կերպերով են այն կիրառում: Որոշիչ հոդը կարող էր կատարել նաև հետևյալ ֆունկցիան.

1. որպես առանձնացում, ըստ հակասության սկզբունքի, ինչպես որ ցուցական դերանունը
2. որպես նշան, ավելի վաղ հիշատակված ենթակայի կամ անձի
3. որպես միջոց, նախադասության մեջ որոշելու ենթական իր հետ կապված բայի հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ.4:24, «Աստված լույս է» 1 Հովհ.1:5, «Աստված սեր է» 4:8,16:

- Բ. Կոյնե հունարենը չի ունեցել անորոշ հոդ, ի տարբերություն անգլերենի: Որոշիչ հոդի բացակայությունը կարող էր նշանակել.
 - 1. առարկայի առանձնահատկությունների կամ որակի շեշտադրություն
 - 2. առարկայի դասակարգման շեշտադրություն
- Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպերով էին կիրառում հոդը:

X. ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

- Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է ՆԿ-ի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ հեղինակները Ղուկասը և Եփրայեցիս թղթի հեղինակներն են:
- Բ. Ավելի շուտ նշեցինք, որ ներգործական սեռի սահմանական եղանակի անորոշ կատարյալը ստանդարտ է և չի շեշտադրվում, մինչ ցանկացած այլ ժամանակաձև, սեռ կամ եղանակ մեկնության համար իրենց նշանակությունն ունեն: Իհարկե դա չի նշանակում, որ ներգործական սեռի սահմանական եղանակի անորոշ կատարյալը հաճախ չէր կիրառվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռոմ.6:10 (երկու անգամ):
- Գ. Բառային հաջորդականությունը Կոյնե հունարենում
 - 1. Կոյնե հունարենը ճկուն լեզու էր, որ ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառերի ստանդարտ հերթականությունը, որպեսզի արտահայտեր
 - ա. ինչ էր ուզում հեղինակը ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր ըստ հեղինակի զարմացնել ընթերցողին
 - գ. հեղինակի համար թանկ և կարևոր բաները
 - 2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Սակայն, ենթադրվում է, որ բառային ստանդարտ հաջորդականությունը սա է՝
 - ա. Կապող բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) լրացում
 - բ. անցողիկ բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) ուղիղ խնդիր
 - (4) անուղղակի խնդիր
 - (5) նախդիրով արտահայտություն
 - գ. գոյականական արտահայտությունների համար
 - (1) գոյական
 - (2) որոշիչ
 - (3) նախդիրով արտահայտություն
 - 3. Բառային հաջորդականությունը կարող է մեկնաբանության համար խիստ կարևոր լինել: Օրինակներ
 - ա. «Աջ ձեռք տվեցին ինձ և Բառնաբասին հաղորդակցության համար» (Գաղ.2:9 /հունարենի հաջորդականությամբ/): «Աջ ձեռք հաղորդակցության համար» արտահայտությունը կիսվել է և դրվել սկզբում և վերջում, ցույց տալու դրա կարևորությունը:

- բ. «Քրիստոսի հետ» (Գաղ.2:19) դրված էր առջևում /հունարենում՝ «Ես Քրիստոսի հետ խաչված եմ»/: Նրա մահը կենտրոնական իրադարձությունն էր:
- գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր.1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե հենց հայտնության փաստը:

Դ. Սովորաբար շեշտադրման համար նաև կիրառվում էր՝

1. Դերանվան կրկնությունը, որն արդեն առկա էր բայի խոնարհված ձևում: Օրինակ՝ «Ես Ինքս ձեզ հետ եմ...» /հայ.՝ «Եվ ահա Ես ձեզ հետ եմ»/ (Մատթ.28:20):
2. Սպասված շաղկապի կամ մեկ այլ կապերի, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ շաղկապը պետք է լիներ, հետևաբար դրա բացակայությունը կարող էր ուշադրություն գրավել իր վրա: Օրինակներ՝
 - ա. Երանելիները, Մատթ.5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)
 - բ. Հովհ.14:1 (նոր թեմա)
 - գ. Հռ.9:1 (նոր բաժին)
 - դ. 2 Կոր.12:20 (շեշտադրվում է հերթականությունը)
3. Տրված համատեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի գովասանքի համար» (Եփ.1:6,12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր շեշտադրելու Սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:
4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի կիրառությունը
 - ա. Մեղմասույթները թաքույի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել» մահ բառի փոխարեն (Հովհ.11:11-14) կամ «ոտքեր» տղամարդու սեռական օրգանի փոխարեն (Հռուբ 3:7-8; 1 Թագ.24:3):
 - բ. Շրջաբանությունները Աստծո անվանը փոխարինող բառեր են, ինչպես օրինակ՝ «Երկնքի թագավորություն» (Մատթ.3:21) կամ «ձայն Երկնքից» (Մատթ.3:17):
 - գ. Փոխաբերություններ
 - (1) անվանական չափազանցություններ (Մատթ.3:9; 5:29-30; 19:24)
 - (2) մեղմ չափազանցություններ (Մատթ.3:5; Գործք 2:36)
 - (3) անձնավորում (1 Կոր.15:55)
 - (4) հեզնանք (Գաղ.5:12)
 - (5) բանաստեղծական հատվածներ (Փիլ.2:6-11)
 - (6) բառախաղ
 - (ա) «եկեղեցի»
 - (i) «եկեղեցի» (Եփ.3:21)
 - (ii) «կոչում» (Եփ.4:1,4)
 - (iii) «կանչված» (Եփ.4:1,4)
 - (բ) «ազատ»
 - (i) «ազատ կին» (Գաղ.4:31)

- (ii) «ագատություն» (Գաղ.5:1)
 - (iii) «ագատել» (Գաղ.5:1)
- դ. Բարբառային լեզու՝ մի լեզու որը բնորոշ է տվյալ մշակույթին կամ լեզվին:
- (1) «Կերակուր» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.4:31-34)
 - (2) «Տաճար» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.2:19; Մատթ.26:61)
 - (3) Կարեկցանքի երբայերեն բարբառը «ատել» է (Ծննդ.29:31; 2 Օր.21:15; Ղուկ.14:36; Հովհ.12:25; Հռոմ.9:13):
 - (4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայի 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռոմ.5:18 և 19:
5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության կիրառություն: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»
6. *Autos* բառի կիրառումը՝
- ա. հողի հետ (որոշիչ) այն թարգմանվում էր որպես «նույն»
 - բ. առանց հողի (ստորագյալ) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:
- Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն լեզուն, կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ.
- 1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:
 - 2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հասկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դինամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Ձեզ նաև մեծապես կօգնի Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով Բեյքերի հրատարակության գիրքը (The Bible in Twenty-Six Translations, Baker):
 - 3. Օգտվելով Ջոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ Հատուկ Շեշտադրումն Աստվածաշնչում (the Emphasized Bible, Joseph Bryant Rotherham /Kregel/, 1994):
 - 4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.
 - ա. Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ (The American Standard Version, 1901):
 - բ. Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Ըստ Յանգի (Young's Literal Translation of the Bible /Gardian Press/, 1976):

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է կիրառել դոգմատիկ և ոչ ձկուն կերպով, այլ որպես մի քայլ ՆԿ-յան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են ՆԿ-ի հատուկ սերտողությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականությունը հասկանալ ծայրահեղ կարևոր է, սակայն մեզ նաև օգնում են պատմական և գրական համատեքստերը, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և զուգահեռ տեքստերի կիրառման մասին իրազեկությունը:

ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին՝

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:
- III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար:

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնստանստ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված ռաբբի Աքիբայի կողմից մ. թ. 100-ին: Ձայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր մագորեթներ էին: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիտտան և Վուլգատան:
2. Մեպտուազինտա (LXX) – Ավանդույթն ասում է, որ Մեպտուազինտան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում, Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (Ք. Ա. 285 – 246): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեոսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն այլ տեքստային ավանդության վրա, համեմատվելով ռաբբի Աքիբայի (MT) տեքստի հետ:
3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) – Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում (Ք. Ա. 200- մ. թ. 70) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարբեր մասերից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն այլ տեքստային ընտանիքի չտարբերվելով MT և LXX:
4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու համար.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆՐԱ վրա»
 - (2) MT, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵԶ վրա»
 - (3) դատելով Ես.52:15-ից ճիշտ տարբերակը LXX-ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր ապշեն Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգերի Նա զարմացնում է»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես.21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա եմ կանգնել Ես...»

- (2) MT, Ես. 21:8, «Առյո՛ւծ, ո՛վ Տերս, ցերեկը շարունակ կանգնում եմ դիտանոցի վրա»
- գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես.53:11-ը
 - (1) LXX և DSS, «Իր անձի աշխատությունից հետո նա կտեսնի լույսը և կբավարարվի»
 - (2) MT, «Իր անձի աշխատության պտուղը պիտի տեսնի ու պիտի բավարարվի»:

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունցիալ): Ավելի ուշ, մոտավորապես մ. թ. 9-րդ դարում հայտնվեցին գրչագիր ձեռագրերը (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Գոյություն ունեն մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:
2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով ՆԿ-ի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են մ. թ. 2-րդ դարին, սակայն մեծամասնությունը մ. թ. 3-րդ և 4-րդ դարերին: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում ՆԿ-ն ամբողջությամբ: Եվ չնայած, որ նրանք հանդիսանում են ՆԿ-ի ամենահին օրինակները, դա ինքնուրուից չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ օրինակներից շատերը արվել են հապճեպ՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդքան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:
3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու (Codex Sinaiticus), որը հայտնի է երբայերեն ա) aleph) տառով կամ (01), գտնվել է Թիսշենդորֆի կողմից Մինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է մ. թ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն ՆԿ-ի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Alexandrinus), որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Եգիպտոսի Ալեքսանդրիայում:
5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Vaticanus), որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է մ. թ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Ephraemi), որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
7. Բիզայի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Bezae), որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա հանդիսանում է «Արևմտյան Տեքստ» կոչվող ձեռագրի հիմնական տարբերակը: Այն պարունակում է բազմաթիվ հավելումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը անգլերենի KING JAMES թարգմանության ժամանակ:
8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ:

- ա. Ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P 75, P66, (մոտ մ.թ. 200), պարունակում են Ավետարանները
 - (2) P 46 (մոտ մ.թ. 225), պարունակում է Պողոսի նամակները
 - (3) P 72 (մոտ մ.թ. 225-250), պարունակում է Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ մ.թ. 325), ընդգրկում է ՀԿ և ՆԿ ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ MSS ձեռագրեր, որտեղ այս տեսակի տեքստ են ներկայացնում, հետևյալն են՝ ճ, C, L, W, 33
- բ. Արևմտյան տեքստ՝ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի՝ Տերտուլիանոսի, Կիպրիանոսի մեջբերումները, և հին լատիներեն թարգմանությունը
 - (2) Իրենեոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանությունը
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բիազայի՝ այս տեսակի տեքստ
- գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) Այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները՝ Կապադովկացիներ, Ոսկեբերան և Թերոդորթ
 - (3) Հին ձեռագրերի ժողովածու A (Codex A), միայն Ավետարաններում
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու E (Codex E), 8-րդ դար՝ ամբողջ ՆԿ-ը
- դ. Չորրորդ հնարավոր տեսակը «Կայսերական» է Պաղեստինից
 - (1) հիմնականում հանդիպում է միայն Մարկոս Ավետարանում
 - (2) մասամբ կարելի է գտնել P 45 և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (շատ դեպքերում՝ մեծամասամբ)

